Յայնժամ ֆռանկացն դատաւորք եդանձնայ և եկեղեցականք մոլորեցան ։ Զառաջ յայնժամ՝ հայր ասա 'ի բայդլուան. որպ թէ եղեալ էր, 'ի լսել եդովմայեցւոց և մովաբացւոց՝ զոր արար ած Եւ եգիպտացիս՝ զահի հարան. և դատաւորք և իշխանք նց ատագնապեալ փութացան հնարս գտանել ազատուե առ անկասկած անձանց յերեսացն իլի ։ Բայց ոչ անհնարին լով այսմ՝ ըմբռնեցան 'ի զարհուրանս. ուստի յերբ, և յասոր, և յարաք" դնի զարհուրեցան կմ երկեան, կմ Եւ
լաս"

լատ՝՝ խռովեցան ։ Եբր՝՝ փնկ դասաւորք դնե-լոյ՝ հազարաւորք գրի․ բայց այնու ցուցանի բազ-մութն իշխանաց և մեծամեծացն եդովմայ․ զորս առաւելապ կալաւ երկիւղ մեծ․ և առ-այս յարէ, և ասէ ։

Կալաւ զնս դողումն ։ Փոխանակ երկիւղի՝ դո-ղումն դնէ, որ պատճառի 'ի սաստիկ երկիւղէ․ զի յերկնչիլ մարդոյ մեծապ՝ 'ի ներքս ժողովե-լով ջերմութեն՝ սկսանի մարմինն ցրտանալ, և 'ի ցրտութէ դողալ․ և ըստ այսմ մարգարէն դո-ղալ կի դողումն դնելով ցուցանէ զսաստկութ երկնչելն մովաբացւոց ։ Եւ քանզի առաւել քան զայլս երկեան բնակիչք քանանացւոց, վնկ յաւելու ասել մարգարէն ։

Հալեցան ամ բնակիչք քանանացւոց ։ Այս կրկնութե բանի ցուցանէ զսաստկութ երկիւղին՝ զոր կ-րեցին նոքա․ յոր միտ կամի ասել․ որպ եդով-մայեցիք և մովաբացիք դողացան յերկիւղէ իբր 'ի ցրտութէ, նոյնպէս և քանանացիք ամ բնակիչք պաղեստինոյ հալեցան 'ի բոցոյ զարհուրանաց, որպ հալի մոմ 'ի ջերմութէ հրոյ․ կամ ըստ լա-տինացւոց՝ նոքա եւս սառեցան, և ըստ ասոր՝՝ բեկան ։

Խորհրդաբար՝ այսոքիւք նշանակին չորեքին ազգք Թշնամեաց նորոյս Իսրլի ։ Փղշտացւոցն, զորս յիշեաց 'ի համարն 16, նշանակին հրեայք մերժեալք յքի․ ըստ որում բառս փղշտացի Թարգմանի Թօթափեալ ։ Դարձեալ նոյն փղշ-տացւոցք ըստ որում ասին քանանացիք՝ նշանակին մո-լեգին հեթանոսք՝ որք հարստահարեն զքրիստո-նեայս՝ կամելով հաւանեցուցանել կի վաճա-ռել նց զաղանդ իւրեանց․ ըստ որում քանան Թարգմանի վաճառօղ և հարստահարօղ ։ Մո-

Փղշտացւոցն , ըստ որս և Ամմոնացւոցն , որք էին 'ի Ղովտայ՝ նշանակեն հերետիկոսք և հերձուածողք , որք թէպէտ և էին ժողովուրդք Այ՝ ծնեալք յաւազանէ մկրտութեան , բայց զարտուղեցան 'ի Ճշմարտութենէ հաւատոյ , և կամ բաժանեցան յեկեղեցւոյ · որոց կարէ յարմարիլ ստուգաբանութիւն այսոցիկ անուանց ըստ տառքին միճակի նոցա · ըստ որում Ամմոն թարգմանի ժողովուրդ նոցա · իսկ Մովաբ թարգմանի 'ի հօրէ · զի ժողովուրդ նոցա գոլով և իբր որդիք , հեռացան 'ի նմանէ : Եդովմայեցիքն նշանակեն չար քրիստոնեայք · որք թէպէտ և ունին հաւատս , բայց չար վարուք իւրեանց ապականեալ են , և են ներքին թշնամիք եկեղեցւոյ · և ինքեանք իբր կարմրախառն ինչ · ըստ որում Եդովմ թարգմանի շիկակարմիր : Սոքա ամենքին ըստ իւրեանց կարգի զինեցան և զինին ընդդէմ եկեղեցւոյ · բայց յամենայնի ամենակարող զօրութեան՝ նուաճեալ ընկճեցան և ընկճին · և հանդերձեալ են ևս կրկին նուաճիլ , և յերկիւղէ նորա տագնապիլ և վտանգիլ · ոպս եղև թշնամեացն Իէլի · զորմէ գրէ 'ի յաջորդ հմրն՝ ասելով ·

19 · Անկցի 'ի վերայ նոցա ահ և երկեաղ · և 'ի զօրութենէ բազկի քո քարացցին ·

Ահ և երկիւղ թէպէտ և զնոյն նշանակեն , բայց երկոքումբք կարեն տարբերիլ · մի՝ զի ահն ցուցանէ զառաւելութիւն երկիւղի · և մի ևս՝ զի ահն որոշակի առնէ առաւել պատկանի բանական մասին քան զզգայականին · իսկ երկիւղն առաւել հայի 'ի զգայական մասն քան 'ի բանականն : Այլ մարգարէն զերկոսին ևս 'ի մէջ բերելով ասէ ·

Զնկէց 'ի վ՟ր նոցա ահ և երկեւղ ։ Կամի ասել . 'ի մերձենալ ի՟ն՟ցւոց յերկիրն աւետեաց , և 'ի տագնապիլ բնակչաց տեղւոյն՝ անկցի 'ի վ՟ր այնոցիկ բնակչաց սարսափումն անհնարին ։

Զնկէց ասելով՝ ցուցանէ զմեծութի ահի և երկիւղի՝ զոր ազդէր 'ի նոս ահեղութի սպանալեացն ն՟յ . մինչև յիմարիլ նոցա և ընդարմանալ . և առ այս յաւէ ։

Եւ 'ի զօրութե բազկի քո քարասցին ։ Նմանդ քարասցին՝ յերկու ինչ ակնարկէ ասա . մի՝ 'ի ներքին պակուցումն քանանացւոց . յոր միտ կամի ասել . յանհնարին երկիւղէ այնչափ կծկեսցին և համրասցին , մինչև լինել ն՟ց իբրև զքար . յոր միտ յեբր՛՛ դնի * 'ի մեծութե բազկի քո լռեսցեն ո՟ղ քար ‖ . և յարաբ՛՛ դնի . * 'ի մեծութե կարողութե քո համրասցին ո՟ղ քար ‖ ։ Երկրդ՝ հայի յարտաքին տկարութի ն՟ց . յոր միտ կամի ասել . 'ի մտանել ի՟ն՟ցւոց յերկիրն քանանացւոց՝ ամենազօր բազուկ քո այնպ՟է կաշկանդեսցէ զն՟ս , մինչև ոչինչ կարել ն՟ց առնել ը՟դդէմ ի՟ն՟ցւոց . ո՟ղ թէ էին քարինք անշարժք . ը՟ս որոյ 'ի լատ՛՛ դնի * 'ի մեծութե բազկի քո եղիցին անշարժք ո՟ղ քար ‖ . իսկ յասոր՛՛ . * ընկղմեսցին ո՟ղ քարինք ‖ ։

Հայելով 'ի կետադրութի այլոց ոմանց 'ի թարգմանութեց մարթ է ասել՝ թէ աստ բառքդ 'ի զօրութե բազկի քո՝ հային յայն՝ զոր ասաց , անկցի 'ի վ՟ր ն՟ց ահ և երկիւղ . այլ այս չէ ինչ . զի ո՟ղ և դիւրի՝ դիտումն բանին է ցուցանել ըննուաճումն թշնամեացն ի՟լի , և նովին յայտնել զնուաճումն թշնամեաց նր. եկեղեցւոյ ։ Եւ քանզի 'ի յընկճիլ անդ թշնամեաց համարձակ կարէին մտանել որդիքն ի՟լի յերկիրն խոստացեալ , 'ի այն հայելով յաւէ զնի , և ասէ ։

Մ՛ին-

20 . Մինչեւ անցցէ ժողովուրդ քո Տէր . մինչեւ անցցէ ժողովուրդ քո այս . զոր ընտրեցեր .

Այս կրկնումն անցից յերկու ինչ ակնարկէ . մի՛ 'ի ստուգութիւն անցանելոյ որդւոցն Իսրայէլի յերկիրն քանանացւոց . և մի ևս՝ յանկասկած պաշտպանութեան նոցա . և յայս իսկ վստահութիւն իմն առաջի դնէ մարգարէն զայս բան՝ ասելով .

Մինչեւ անցցէ ժողովուրդ քո Տէր . մինչեւ անցցէ ժողովուրդ քո այս . զոր ընտրեցեր ։ Այդ անցանել՝ առեալ լինի աստ պարագրաբար , որ 'ի մէջ բերելով և զմնացեալսն . որպէս թէ եղեալ էր . 'ի զարհուրելն շրջակայ ազգաց , և 'ի քարանալ քանանացւոց՝ անցցէ և մտցէ ժողովուրդ քո այս յերկիրն՝ զոր խոստացար ։ Ուր գերանուանդ այս՝ ցուցանէ զորոշումն իւրեանց 'ի հեթանոսաց՝ լինելով նոցա ժողովուրդ Տեառն . յոր սակս իսկ յաւելու ասել . զոր ընտրեցեր . որպէս թէ ասէր . քո է ժողովուրդս այս . զի դու ընտրեցեր զսոսա , և դու սեփհականեցեր զսոսա քեզ . ուստի քոյին պաշտպանութեամբ ունին մտանել յերկիրն յայն՝ զոր դու խոստացար նոցա ։

Այլաբանօրէն՝ անցք նշանակէ մուտ ժողովրդոյ յեկեղեցի սուրբ . և վերածաբար՝ մուտ արդարոց յարքայութիւն երկնից . ուր ունի Աստուած բնակեցուցանել զնոսա . և առ այս յարէ զկնի , և ասէ ։

21 . Տարեալ տնկեսցես զնոսա 'ի լեառն ժառանգութեան քո . 'ի պատրաստութեան բնակութեան ժառանգութեան քո .

Լերամբ իմացեալ լինի աստանօր բոլոր Հրէաստան հանդերձ Երուսաղէմաւ . զի որում լեռնային է այն երկիր ։ Երկրորդ՝ 'ի մասնաւորի իմացեալ լի-

նի լեառն սիոն . ուր եդաւ տապանակն տն , եւս և լեառն ամօրհա . ուր շինեցաւ տաճարն սողոմոնի ։ Նոյնպ և բաւական ժառանգութեան տի_րանիս նշանակի աստ այն՝ զոր կոչեաց լեառն . է որում այն լեառն ընտրեցաւ յայ՝ լինել ժա_ռանգելի յիւրմէ 'ի ձեռն պաշտամանց և այլոց սրբազան իրաց . ուստի և ժառանգութիւն տն կոչե_ցաւ ։ Մարթ է եւս ժառանգութե իմանալ աստ զժողովուրդն իւր , որ 'ի բազում տեղիս 'ի գրոց ժառանգութիւն այ ասի ։ Արդ քանզի խօսեցաւ մարգարէն զմտից ժողովրդեան 'ի յիշատա_կեալ լեառն , այժմ կամելով ցուցանել զբնա_կանալ նոցա 'ի նմին ասէ ։

Տարեալ տնկեսցես զնոսա 'ի լեառն ժառանգութեան քո ։

Կամի ասել . դու ինքն տարցիս զժողովուրդ քո զայս 'ի տեղին՝ զոր ընտրեցեր քեզ 'ի ժա_ռանգութիւն . և անդ բնակեցուսցես զնոսա ։ Այլ առ ցուցանելոյ զհաստատութիւն բնակութեան նոցին՝ դնէ զբառդ տնկեսցես . իբրզի որպէս հաստատուն պահի ծառ տնկեալ 'ի հող , սոյնպէս հաստա_տուն պահեսցին իւրեք յերկրի անդ . և որպէս ծառ տնկեալ 'ի պարարտ երկրի՝ աճէ , սոյն_պէս աճեսցեն և նոքա անդ ։ Այլ առ առաւել ստուգելոյ զպատուցեալսն՝ յաւէ զկնի , և ասէ ։

'Ի պատրաստութեան բնակութեան ժառանգութեան քո ։ Բառդ պատրաստութիւն որ դնի 'ի վերագրեալն՝ առեալ լինի աստ փխկ թանձրացելոյ . ոչ թէ եղեալ էր . տնկեսցես զնոսա 'ի պատրաստեալ տեղւոջ բնա_կութեան քո , և եւս բնակութեան ժողովրդեան քո . կամ որ նոյն է , տնկեսցես զնոսա 'ի լերինն յայն՝ զոր պատրաստեցեր քեզ 'ի բնակութիւն , և ժողովրդ_եան քո 'ի ժառանգութիւն ։ Աստի յետ՝ դնի .

* 'ի

* 'ի պատրաստ բնակութիւն քո ‖ · յայս հայի և ա-րարացոյն · ուր եբր՛՛ դնի · * 'ի տեղւոջ բնա-կելոյ քո ‖ · և 'ի լատ՛՛ դնի · * 'ի հաստատուն բնակարան քո ‖ · կամ ըստ ասոր · * հաստատուն
'ի պէտս բնակութեան քո ‖ ։

Այլաբանորէն՝ լեռան ժառանգութեան ասէ է նոր եկեղեցի, զոր պատրաստեաց Աստուած 'ի բնակութիւն իւր և 'ի բնակութիւն հաւատացելոց իւրոց, 'ի հին վիճակէ 'ի նորս անցուցանելով, և իբրև զարմատենիս տնկելով, ոռոգէ 'ի ձեռն նր խորհրդոց, և զարդարէ 'ի ձեռն վարդապետութեան հաւատոյ և ուղիղ վարուց, և ամրացուցէ 'ի ձեռն անխախտելի պաշտպանութեան իւրոյ ·

Վերածաբար՝ նշանակի սովու արքայութիւն երկնից յոր կամեցաւ Աստուած ածել զսիրելիս իւր իբրև 'ի պատրաստեալ ժառանգութիւն իւրոյ, զոր պատրաստեաց 'ի սկզբանէ · զորմէ խօսի 'ի յաջորդ համարն ասելով ։

22\. Զոր պատրաստեր 'ի սրբութեան Տր · պատրաստեր սրբութի · զոր պատրաստեցին ձեռք քո · Տր Թագաւոր յաւիտեանս յաւիտենից · և ևս ։

Բառդ սրբութեան՝ դնի աստ փոքր ինչ որոշելոյ ինքեան զլեառն ժառանգութեան, զոր յիշեաց 'ի վերոյ · կամ փոքր ինչ առնելոյ զայն ինքեան՝ 'ի սրբութի, այս 'ի լինել սեփականեն ինքեան · ըստ որոյ յելից ժե · 22 · դնի · * զոր արարեր Տր (քեզ) սրբութի ‖ · և որ առն միակի աւանդի, աստ կրկնակի դնի՝ յասելն ·

Զոր պատրաստեր 'ի սրբութեան Տր · պատրաստեր սրբութի ։ 'Ի սկզբանէ ասելն թէպէտ կարէ հայիլ 'ի սկիզբն ժամանակի, բայց որում 'ի սկզբանէ ասէ՝ նա և 'ի յաւիտենից որոշեալ էր Աստուած զլեառն ժա-

ժառանգութիւն իւրոյ, բայց տիրապէս Հայի 'ի ժամանակ խոստմանն իւրոյ, յայն՝ յորում ուխտեաց աբրահամու՝ տալ զերկիրն զայն 'ի ժառանգութիւն որդւոց նորա. և յայս միտ կամի ասել. դու 'ի ժամանակէ անտի խոստման քո սեփականեցեր քեզ զերկիրն զայն՝ զոր ստացար սրբութեամբ, այսինքն սրբելով քեզ. որ է ասել. արարեր լինել քո. զի ոչ ստացաք այլուր, բառդ սրբութի՝ բղխի ուրեք 'ի սուրբ գիրս այսու նշանակութեամբ վարի ։

Յեբր" և յայլս ոչ գտնի բառդ 'ի սկզբանն. բայց քանզի զօրութեամբ իմացեալ լինի այն՝ թարգմանիչք մեր ներգործութեամբ եդին 'ի սաղմոսի ևեթ, զի յեբրայեցւոցն ոչ գտնի ։ Պարզ յեբր" և յայլս, այլ և յեբրայեցւոցն մերում կրկնի բառդ նոր. և բառդ սրբութեան կամ այլոց սրբարան՝ յարի 'ի բառդ տէր. զի յեբր" գրի այսպէս. * (զոր) գործեցեր տէր, սրբարան տէր ‖ ։ Յեօթ" գտնի * զոր գործեցեր տէր՝ սրբութի տէր ‖. սոյնպէս է և յայլս ։ Նաև միտ բանին նոյնանայ ընդ մերումս. զի կամի ասել. ստացար կամ արարեր ձեռն տէր զլեառն ժառանգութեան քո 'ի սրբարան կամ 'ի սրբութի քո տէր, այսինքն 'ի սուրբ բնակութի քո ։ Նաև քանզի իբր ձեռամբ արար զայս աստուած, և ունէր և ևս յարդարել, վասնորոյ յարէ և ասէ ։

Զոր պատրաստեցին ձեռք քո ։ Որ ձեռամբք տէրամբն իմացեալ լինին խնամքն իւր. այսինքն որում աստուած բարւոք խնամովք պատրաստեաց, մանաւանդ թէ հանդերձեալ էր պատրաստել և զարդարել զայն տեղի առ 'ի լինել յարմարաւոր բնակութի ներկայութեան իւրոյ. այսինքն որոյ բայց պատրաստել՝ յաւէտ յապագայն Հայի քան յանցելն. զի յասել մովսէսի զայս՝ թէպէտ

և

և ուրախեալ էր ած զտեղիս զայն , բայց տակաւին ներգործութի չէր պատրաստեալ · իսկ մինչեւ առ 'ի ցուցանել զատուգութիւն լինելեացն՝ 'ի կատարեալն խօսի ։ Եւ յաւարտ հաստուցեալ զբանն օրհնութեն իւրոյ՝ փառս տայ այ , որ անկարօտ և ինքնաբաւ գոլով , և ինքնիշխան տիրելով 'ի վր ամի՝ հաճեցաւ ընտրել յերկրի իւր տեղի բնակութե զեդեմ , և առնել իւր զաղգն ինն , առ 'ի գալ յազգէ սմանէ առ ազգս մարդկան ։

Այլաբանօրէն , այս ստացուի և այս պատրաստութիւն հայի 'ի նորոգումն հնութեն մերոյ՝ զոր արար տր մեր ձեռամբ իւրով , յո տարածելով զձեռս իւր 'ի խաչին , յանձն առեալ վն մեր զմահ · յոր վերածէ և շարական մեր զայս բան 'ի կան · Ձին ։ Իսկ զի ինքն՝ որ եցոյց մեզ զայս բարերարութիւն , թգրէ յաւիտեան , սմին իրի յաւելու ասել մարգարէն ։ Տր թգր յաւիտեանս յաւիտենից , և այլն ։ Այսինքն թէ այս տր՝ զոր մեք ած խոստովանիմք՝ թգրէ յամ յաւիտեանս · զորմէ տես 'ի սաղ · ղբ · 1 ։ 'Ի բնաբանի աստ երիցս կրկնի յածաշնչի մերում բառդ Տր , և տայ հայիլ 'ի միութի երեքսրբեան ածութեն · այն ինքն է ամենասուրբ երրորդութեն · որ ինքնաբաւ թագաւորէ յաւիտեան և յաւիտեանս ։

Իսկ բառդ և և՝ ոչ ցուցանէ զգոյութիւն իրիք արտաքոյ յաւիտենականութեն , իբր թէ անդր ք զյաւիտենականութին կայցէ և այլ տևողութի · այլ 'ի մէջ բերէ նախ՝ զկատարելութի յաւիտենականութեն այ · երկր՝ զգերազանցութի այնր յաւիտենականութե · և երրդ՝ զանսպառութի նորին ։

Ըստ կատարելութեն ցուցանէ , թէ յաւիտենա-

կարութիւն ո՛յ զոր յիշէ, ոչ է անկատար, այլ ամենևին կատարեալ բովանդակիչ ամ՛ եղանակաց տևողութե. Ո՛ր առ ՚ի բարուոք իմանալ՝ արժան է գիտել. զի յաւիտենական տևողութիւն Հիմն յանփոփոխութե. եթէ անփոփոխութին մտածեսցի սոսկ ը՛ գոլոյն, առ յառաջկայ մշտնջենաւորութի. որպէս է յաւիտենականութի անապական իրաց, ըստ Հրեշտակաց, բանական հոգւոց, և երկնային մարմնոց. զի թէպէտ և անփոփոխ են ը՛ գոլոյն, բայց կախին զանփոփոխութէն ո՛յ. և ՚ի գործելն փոփոխին ։ Եթէ մտածեսցի սոսկ ը՛ գործելոյն, առ հաղորդեալ յաւիտենականութի. որպէս է յաւիտենականութի տեսութե՛ն ո՛յ, զոր անփոփոխա՛ ունին երանեալ հոգիք ։ Իսկ եթէ մտածեսցի ը՛ գոլոյն և ը՛ գործելոյն, առ էական յաւիտենականութի ամենակատար. որպիսի է յաւիտենականութին ո՛յ. ուստի որչափ յաւիտենականութիք կայցեն, նոյն և նա է, ըստ ամենևին կատարեալ. յոր միտ բառդ Նա նա, դնի առաջ փոխկ

բառիս ամենևին.

Ըստ գերազանցութե՛ն ցուցանէ, թէ յաւիտենականութին ո՛յ է ՚ի վեր քան զամ՛. այնպէս զի եթէ Հրեշտակք ՚ի յաւիտենից ստեղծեալ էին, և յաւիտեան տևէին, յաւիտենականութի նց ոչ հաւասարէր յաւիտենականութե՛ն ո՛յ. զի այն և ևս է. ըստ ՚ի վեր քան զյաւիտենականութի նց. յոր միտ բառդ Նա նա՝ դնի փոխկ բառիդ ՚ի վեր քան, կի՛ փոխկ բառիս գերազանց.

Ըստ անսպառութե՛ն ցուցանէ, թէ զորինչ տևողութի մտածեսցես, և զոր ինչ յայն յաւելուցուս, Նա նա է. զի անդր է քան զամ՛ տևողութի, և է անսպառելի ։ Յոր միտ ՚ի լաւ դնի և անդր.

անդր. Յայսպիսում անձնակատար, յամենա-գերազանց և յանսպառ տեւողութեան ասէ թագաւորէ Տր յաւիտեանս յաւիտենից։ Յերբ" և յայլս բաց յեօթանասնից ոչ գտանի բառդ Եւ եւս կից և անդր. բայց զօրութիւն բանին տայ իմանալ զնոյն. և դուցէ անկեալ իցէ 'ի բաց. ապա թէ ոչ՝ եօթանասունք ոչ դնէին զայն։ Արդ յայս բան աւարտէ մարգարէն զօրհնութիւն իւր, առ կատարումն նորին առաջի առնէ համառօտիւ իմն զառիթ օրհնութեան՝ զոր եդ 'ի սկզբան. և կրկնելով զնոյն ասէ։

23. Զի եմուտ փարաւոն կառօք և երիվարօք ընդ իւր զօրագլխօք 'ի մէջ ծովուն։

24. Եւ ած 'ի վր նոցա Տր զջուրս ծովուն. և որդիքն Իղի գնացին ընդ ցամաք 'ի մէջ ծովուն։

Այս բանք չկարօտին մեկնութե. զի յայտնի են. և բացատրին ևս 'ի գրեթէ 'ի վերոյ։ Բայց կայ և սատքննելի ինչ՝ զոր պատշաճ գտանիմ դնել առաջի. իբր զի յաւանդել Մովսէսի զպատմութիւն մտանելոյ եգիպտացւոց 'ի ծովն կարմիր, յաւելու ասել, թէ Տր * կապեաց զանիւս կառաց նց. և վարէր զնս բռնութբ ‖. (Ելից. ժդ. 25.). Իսկ թէ յո՞ հայիցի աստ բայս վարէր՝ կրկին կարծիք են. առաջինն է այս՝ թէ այդ հայի յՏր. և Տր այսպէս կամի ասել. 'ի պնդիլ եգիպտացւոց զկնի որդւոցն Իղի, և 'ի մտանել նց 'ի ցամաքեալ տեղի ծովուն, իբրև տեսին նք թէ ջուրք ծովուն զեղուն 'ի վր իւրեանց՝ փութացան դառնալ յետս. բայց Տր կապեաց զանիւս կառաց նց, և ոչ եթող յետս դառնալ, այլ առա-

առաւել ևս վարելով զնս 'ի խորս՝ էած զջուրս ծովուն 'ի վր նց , և կորոյս զնս ։ Երկդ կոչածիքն է՝ թէ բայց վարել՝ հայր 'ի բազմունին եգիպտացւոց · և ՟ը այսմ կամի ասել · 'ի մտանել եգիպտացւոց 'ի ծովն կարմիր՝ կապեաց ՟տր զանիւս կառաց նոցա · ՟ք այնչափ արար՝ զի խրեսցին անիւք նց և ոտք երիվարաց նոցին · ոչ զի մի հասցեն իսրայէլացւոց · և զայն տեսեալ եգիպտացւոց՝ սկսան բռնութբ վարել զերիվարսն և զկառսն · և իբրև մտին ՟մէջն , և մերձեցան յայնկոյս ծովուն , ջուր ծովուն՝ որ իբրև պարիսպ կանգնեալ էր յաջմէ և յահեկէ՝ փլաւ 'ի վր նց · և որք մերձ էին 'ի ցամաք՝ իբրև աճապարեցին ելանել արտաքս՝ թօթափեաց և զնս ՟ած 'ի ջուր անդր · և ծածկեաց զնս ՟ը ջրով · իսկ որդիքն ՟իլի գնացին հանդարտեամբ ։ Սրով ( ոչ ասացաք բղձ անդամ ) նշանակի ընկղմումն իշխանութե անմարմին փարաւոնի , և անցք փրկութե ժողովրդեան ՟տն ։

Այլ աստ գիտել արժան է · զի բովանդակ բանք այսր օրհնութե ծայրէ 'ի ծայր կարեն ասիլ յերկից դիմաց ևս · որպէս յայտ է 'ի գրելոցդ ։

Այլաբանօրէն առեալ՝ ասին 'ի դիմաց ազգի մարդկան · զի 'ի մտանիլ նց 'ի ծառայութի բռնութե անմարմին փարաւոնի , և յաղաղակել առ ՟ած՝ առաքեաց ՟ած զորդի իւր · որ ազատեալ զնս 'ի ծառայութե անտի՝ անցոյց ՟ը ծովն կարմիր , ՟ք ՟ը ջուրն մկրտութե 'ի ձեռն հոգւոյն ՟սրբ · և 'ի պնդիլ ՟սատնյի և դիւաց նց զհետ՝ ընկղմեաց զնս խաչիւն իւրով · ոչ գրի 'ի շարականի յաւագ օրհնութեանն ։ Լուան ազգք և բարկացան , պատերազմեցան զամս բղձս ·

և

և ոչ ինչ կարացին առնել . այլ նուաճեցան և ինքեանք , ոմանք 'ի հնազանդութի՛ւն և ոմանք 'ի դատապարտութի՛ւն :

Մերածաբար աւե՛տ ասին 'ի դիմաց երանելեայց . որք զերծեալք 'ի բանտէ դիւաց , և անցեալք ընդ ծով կենցաղոյս , և փութացեալք զճանապարհն փրկութե՛ան առանց կասկածելոյ յանհաւան ազգաց' ժամանեցին 'ի լեառն ժառանգութե՛ան յարքայութի երկնից . ուր թագաւորեն ընդ թագաւորեցելոյն յաւիտեանս յաւիտենից :

Նորոյաց աւե՛տ ասին 'ի դիմաց առն արդարոյ որ յապաւինիլ իւրում առ ած՛ գտանէ նոյնազազատութի 'ի պէսպէս ախտից և 'ի մեղուց . յոր միտ 'ի փարաւոն օրինակի հպարտութին . իսկ այլ ախտք 'ի զօրս նր , 'ի հեծեալս և 'ի հետևակս , 'ի կառս և յերիվարս . և փորձուեքն օրինակին 'ի ջուրս կարմիր ծովուն : Յայսպիսի փոմնդս 'ի կարկառել այ զձեռն օգնականութե իւրոյ' կարէ մարդ անվնաս անցանել . և ընկղմել ախտից զկնի նորա' ինքն սեամբ ամպոյ շնորհաց հոգւոյն սբյ առաջնորդեալ , և 'ի գայթակղութէ չարաց պահպանեալ' ժամանէ ուրախութբ 'ի լեառն կատարելութե փառաց . յորում պարապի յօրհնութիս այ Թգին յաւիտենից :



ՕՐ-

# ՅԱՒԵԼՈՒԱԾ.

Ի վախճան այսր օրհնութեան արժան համարիմ 'ի մէջ մուծանել և զօրհնութիւն Մարիամու քեռ Ահարոնի, զոր աւանդէ Մովսէս 'ի վերջ օրհնութեան իւրոյ, ասելով (Ելից ԺԵ. 20. 21:)

Եւ էառ Մարեամ մարգարէ քոյրն Ահարոնի զթմբուկն 'ի ձեռին իւր. և ելին ամենայն կանայք զհետ նորա թմբկօք և պարուք: Եւ յառաջէր Մարեամ և ասէր. Օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս ընկէց 'ի ծով:

Մարիամ թարգմանի նախ զմուռն ջուրց կամ դառնութիւն ջրոյ. երկրորդ թարգմանի իշխանուհի կամ տիրուհի ծովու. երրորդ թարգմանի աստղ ծովային: Ըստ առաջնոյն գիտելի է, զի 'ի ծնանիլ Մարիամու՝ 'ի ժամանակի անդ սկսաւ դառնագոյն հրամանն փարաւոնի ընկեցիկ առնել զնորածին տղայս եբրայեցւոց 'ի ջուր. վասն որոյ և յարմարութեամբ իմն եդաւ նմա անունս Մարիամ. թէպէտ և ծնօղք նորա ոչ իմանային: Զանցանել ապա որդւոցն Իսրայէլի ընդ դառնութիւն ջուրցն՝ սա քաղցրանուագ բանիւք յառաջէր 'ի մէջ կանանց երգելով. * Օրհնեսցուք զՏէր. զի փառօք է փառաւորեալ ||:

Ըստ երկրորդին գիտելի է, զի այս անունս որ յազգմանէն որոյ եդաւ նմա՝ գուշակութիւն իմն եղև գործոց նորա. վասնզի 'ի մէջ կանանցն Իսրայէլի նա եղև իբր տիրուհի կամ իշխանուհի ծովու, որպէս բազմութեան ժողովոյ կանանց. Իսկ որում 'ի սուրբ գիրս բազմութիւն ժողովրդոց օրինակի 'ի ծով կամ 'ի ջուր:

Ըստ

Ուստի և իբր իշխանութեան նոցա յետ անցանելոյ նոքօք համդերձ ընդ ծովն կարմիր՝ խորախուսելով զնա՝ ցնծալից գոչէր ․ * օրհնեսցուք զՏր, զի փառօք է փառաւորեալ ||․

Բաց երգին գիտելի է, զի 'ի խաւարի անդ ծառայութեան եգիպտոսի՝ ոչ մովսէս և ահարոն 'ի մէջ արանց, նոյնպէս և սա 'ի մէջ կանանց գտաւ աստղ ծովու, ըստ մարգարէութեան իւր ․ ըստ որում և ասէ * մարիամ մարգարէ քոյրն ահարոնի ||: Գտաւ ևս պայծառ 'ի ձեռն կուսութեան, ոչ ցուցանեն գիրք ․ և այս հաստատի նաև յոմանց անտի նոյն գրոց, որ ոչ յիշէ թէ՝ որոյ կին էր ․ որ եթէ ամուսնացեալ էր ընդ այլում, գիրն յայտնի ուսուցանէր ասելով, կին այսր կամ այնր ․ և ոչ սոսկ քոյր ահարոնի ։ Եւ յայլինի գոլով նր՝ յաղագս լինելոյ 'ի ծովէ՝ ինքն իբր աստղ ծովային 'ի մէջ կանանց փայլեցաւ յերգս օրհնութեան 'ի թմբկահարութեան անդ ․* օրհնեսցուք զՏր, զի փառօք է փառաւորեալ ․ զերիվարս և զհեծեալս ընկէց 'ի ծով ||:

Ոքիմբք նախագուշակ օրինակ եղև սոյն այս մարիամ ամենօրհնեալ կուսին մարիամու ․ որ զդառնութիւն ջուրց արտմութեան եւայի 'ի քաղցրութի փոխադրեաց ․ և կարգեցաւ իշխանուհի և արքայուհի ծովու, ըստ հրեշտակաց և մարդկան, որք օրինակին 'ի ծովս ․ և եղև լուսապայծառ աստղ նաւակոծելոց 'ի խաւարային ծովու աշխարհիս ։

Եւ այլ աստ գիտել արժան է, զի որովհետև այս երգ մարիամու զնոյն զօրութի և զնոյն սկզբնաւորութի ունի ընդ այնմ զոր երգեաց մովսէս, համարեալ լինի 'ի բազմաց պատասխանական իբր զի 'ի գոչել անդ մովսէսի * օրհնեսցուք զՏր՝

զո՞ր՝ զի փառօք է փառաւորեալ. և 'ի պճնել ծննդեան զնոյն, մարիամ ևս կրկնեալ իցէ, և զհետ նո՛ր կանայքն իւր. զի սմին և զհետևեալ բանին: Եւ զայս յայն սակս այսպէս համարին բազումք, զի բառդ յառաջել՝ որ դնի 'ի մերումս, յեբրայականն պատասխանել դնի՝ յասելն * Եւ պատմէ նոյ միրեամ Ա. այսինքն մարիամ. սոյնպէս է և յարաբ: Բայց համանախանագոյն ևս է ասել, թէ յաւարտել սրանց զերգն զայն ընդ մովսէսի՝ սկսաւ մարիամ զնոյն նուագել, շարժեալ 'ի հոգւոյն սրբոյ. ուստի 'ի մերումս եղեալ է յառաջէր. և յեօթ՟ կանխէր, կամ դասապետէր, կամ ընդ լսա՟նախանուագէր: Որով ընդ ասելոյ քերթողահօրն 'ի գիրս պիտոյից. Թ. Ձ. ոչ մովսէս պարագլուխ եղև սրանց յայսմ օրհնութե, նոյնպէս և մարիամ՝ կանանց 'ի փառաւորել զփառաւորեալն յաւիտեան:

Օրհ.

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ. Բ.

Պօղոսեանուն առ ում էր ճշմարիտ և արդար ըն-ծելոյ նր ՚ի գործս իւր․ մանկանց և ծերացելոց ձայն առ որդիսն ԾԼԵ է ապերախտութեան իւրեանց ընդդէմ այնչափ մեծամեծ բարերարութեանց այ, զոր ետես նոյա ընտրելոյն լնս իւր ՚ի ժառանգութի, և խոստացելոյն յանապատի։

Օրհնութիւն մեծին մովսեսի ածատես մրգրէի․
(՚ի սաղմոսն․ լԲ։)

1․ Յայտնեցարուք երկինք և խօսեցայց․ լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ։

2․ * Ընդունելի լիցի ոպս անձրեւ բարբառ իմ․ և իջցէ ոպս ցօղ պատգամք իմ։

3․ * Որպէս զանձրեւ ՚ի վր սիզոյ․ և որպէս փաթիլ ՚ի վերայ խոտոյ․ զի զանուն տն կարդացի․ և տուք օրհնութիւն տն այ մերոյ։

4․ * Այ որոյ ճշմարտութի են գործք նր, և ամ ճանապարհք նր իրաւամբք են։

5․ * Այ հաւատարիմ է․ և ոչ գոյ ՚ի նմա անիրաւութի․ արդար և ճշմարիտ է տր։

6․ * Մեղան և ոչ նմա որդիքն արատոյ․ ծնունդք խոտորեալք և թիւրեալք։

7․ * Ով այդ այն է՝ զոր տն հատուցանէիք դուք ժողովուրդք յիմարք և ոչ իմաստունք։

8․ * Ոչ ապաքէն նա է հայր քո․

որ

Օրհնեալ Մովսէսի բոց եղելոյ յԵգիպտոսէ․
(Է․ օր․ լԲ․ 1 = 21։)

1․ Յայտնեցարուք երկինք և խօսեցայց․ և լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ։

2․ * Ակնկալցի իբրեւ զանձրեւ բարբառ իմ․ և իջցէ իբրեւ զցօղ պատգամք իմ։

3․ * Իբրեւ զանձրեւ ՚ի վր սիզոյ․ և իբրեւ զձեանաշաղ ՚ի վերայ խոտոյ․ զի զա-նուն տն կարդացի․ տուք օրհնութիւն այ մերոյ։

4․ * Այ որոյ ճշմարիտ են գործք նր, և ամենայն ճանապարհք նր իրաւամբք։ Այ հաւատարիմ, և ոչ գոյ ՚ի նմ անիրաւութի․ արդար և անարատ է տր։

5․ * Մեղան և ոչ նմա որդիք արատոյ․ ազգ թիւր և խոտորեալ։

6․ * Զայդ տն հատուցանէք այդպէս ժողովուրդ յիմար, և ոչ իմաստուն։

Ոչ նա է հայրն՝ որ ստա-

ցաւ

որ ստացաւ զքեզ. արար և ստեղծ զքեզ:

9. * Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից. իմացարուք զամս ազ_գաց մինչև յազգս:

10. * Հարցջի՛ր զհայր քո, և պատմեսցէ քեզ. զծերս քո, և ասասցեն քեզ:

11. * 'Ի ժամին որպ բաժանեաց բարձրեալն զազգս ամ. որ սփ_ռեաց նա զորդիսն ադամայ:

12. * Կացոյց սահմանս հեթա_նոսաց ըստ թուոյ հրեշտակաց այ:

13. * Եղև բաժին տն ժո_ղովուրդ իւր յակոբ. և վիճակ ժա_ռանգութեան իւրոյ իէլ:

14. * Բաւական եղև նմա յա_նապատի 'ի ծարաւ տօթոյ յանջր_դոյ պաշտպանեաց նմա:

15. * Խրատեաց և պահեաց զնա որպ բիբ ական. որպ զարծուի 'ի թևս իւր ընկալաւ զնա. որպ 'ի վր. ձագաց իւրոց գթացաւ:

16. * Տարածեաց զթևս իւր ընկալաւ զնա. և բարձեալ բերէր զնա 'ի վերայ միջնողաց իւրոց:

17. * Տէր միայն ածէր զնս. և ոչ գոյր ընդ նս ածն օտար:

18. * Եհան զնս 'ի զօրու_թեն երկրի. և կերակրեաց զնոսա արդեամբք անդաստանաց:

19. * Դիեցոյց նոցա մեղր 'ի վիմէ. և իւղ յապառաժ 'ի վիմէ:

20. * Կոգի կովուց և կաթն մա_քեաց ճարպով հանդերձ խոյոց որ_թոց ցլուց և նոխազաց:

21. * Զպարարտութն երիկամանց ցորենոյ և զարիւն խաղողոյ արբ գինի:

22. * Եկեր յակոբ և յագեցաւ. և անկուշեաց սիրելին:

23. * Գիրացաւ, ստուարացաւ,

ցաւ զքեզ. արար զքեզ, և հաստատեաց զքեզ:

7. * Յուշ լիցին քեզ աւուրքն յաւիտենից, խելամուտ լերուք զամն ազգաց յազգս. Հարց զհայրն քո. և պատմեսցեն քեզ. և զծերս քո և ասասցեն քեզ:

8. * Յորժամ բաժանեաց բարձրեալն զազգս ամ որ սփռեաց զորդիսն ադամայ: Կացոյց սահմանս ազգաց ըս թուոյ որդւոց այ:

9. * Եղև բաժին տն ժողովուրդ իւր յակոբ. և վիճակ ժառանգութեն իւրոյ իէլ:

10. * Բաւական եղև նմ յանապատի. 'ի ծարաւ տօթոյ յանջրդի պաշտպանեաց զնա:
Եւ խրատեաց և պահեաց զնա
11 իբրև զբիբ ական * իբրև զարծուի 'ի ծածկել զբոյն իւր. և 'ի ձագս իւր գթայ:
Տարածեաց զթևս իւր և ըն_կալաւ զնա. և բարձեալ բերէր զնա 'ի վերայ միջ_նողանց իւրոց:

12. * Տէր միայն ածէր զնս. և ոչ գոյր ըն նս ած օտար:

13. * Եհան զնս 'ի զօրութն երկրի. կերակրեաց զնս արդեամբք անդաստանաց: Դիեցոյց նս մեղր 'ի վիմէ. և իւղ յապառաժ վիմէ:

14. * Կոգի կովուց և կաթն մաքեաց. հնդձ ճարպով գա_ռանց խոյոց, որդւոց ցլուց և նոխազաց,
Ընդ ճարպոյ երիկամանց ցո_րենոյ. և զարիւն խաղողոյ ըմպէին գինի:

15. * Եկեր յակոբ և յագե_ցաւ. յօրացաւ և անկուշեաց սիրելին:
Գիրացաւ, ստուարացաւ և

լայնացաւ . եթող զտէր ած զա-
րարիչ իւր . և յետս եկաց յայ
փրկչէ իւրմէ ։
24 . * Բարկացուցին զնա օտարո-
տեօք իւրեանց . և կռովք իւ-
րեանց դառնացուցին զնա ։
25 . * Զոհեցին դիւաց և ոչ
այ . դիցն զոր ոչ գիտէին .
նորք և առ ժամայնք՝ զորս բնա-
ւ ծանուցին հարք նոցա ։
26 . * Թողին զտէր՝ որ ծնաւ
զնա . մոռացան զած՝ որ կերակ-
րեաց զնա ։
27 . * Ետես տր և նախանձե-
ցաւ . սրտմտեցաւ 'ի վր ուստերաց
և դստերաց նոցա . և ասէ ։
28 . * Դարձուցից զերեսս իմ 'ի
նոցանէ . և ցուցից նոցա զինչ լի-
նելոց իցէ յաւուրս վախճանին ։
29 . * Զի ազգ մի թիւր են նո-
ցա , և որդիք անհաւատք . նոքա
նախանձեցուցին զիս 'ի չաստ-
ուածս իւրեանց , և բարկացուցին
զիս 'ի կուռս իւրեանց ։
30 . * Եւ ես նախանձեցու-
ցից զնոսա յազգ անզգամ . և
անմիտ ազգաւ զայրացուցից զնս ։

լայնացաւ . և եթող զտէր
ած զարարիչն իւր . և ապըս-
տամբեաց յայ փրկչէ իւրմէ ։
16 . * Բարկացուցին զիս
օտարոտեօք , և գարշելեօք
իւրեանց դառնացուցին զիս ։
17 . * Զոհեցին դիւաց և ոչ
այ . դից զորս ոչ գիտէին .
նորք և առժամայինք եկեալ ,
զորս ոչ գիտէին հարքն ձեր ։
18 . * Թողեր զած՝ որ ծնաւ
զքեզ . մոռացար զած որ
կերակրեացն զքեզ ։
19 . * Ետես տր և նախան-
ձեցաւ . և սրտմտեցաւ վա
բարկութե ուստերաց և դըս-
տերաց իւրոց ։
20 . * Եւ ասաց , դարձու-
ցից զերեսս իմ 'ի նոցանէ ,
և ցուցից նց զինչ լինելոց
իցէ 'ի վախճանի աւուրց ։
Զի ազգ թիւր են . որդիք՝
21 յորս ոչ գոն հաւատք ։ * Նք
նախանձեցուցին զիս չաստ-
ուածովք . և բարկացու-
ցին զիս կռովք իւրեանց ։
Եւ ես նախանձեցուցից զն
ոչ ազգաւ . և անմիտ ժողո-
վրդեամբ բարկացուցից զնս ։

# Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

## Օրհնութիւն մեծին մովսէսի աստուածատեսի մարգարէի ։

Այս օրհնութիւն մովսէսի է երկար յոյժ . և սակայն 'ի սաղմոսարանի մերում բաժանեալ է յերիս , բովանդակեալ 'ի 64 համարս ։ Առաջինն՝ որ է առաջինկայդ , և դնի 'ի սաղ . լէ . գնայ մինչ 'ի 30 համարն . կամ ԶԾ տրոհմանն ամաչնչին՝ 'ի 21 համարն ։ Երկրորդն՝ որ սկըսանի . Օչ հոր բարերերեցէք . և դնի 'ի սաղ

ծէ. գնայ 'ի 31 համարոյ մինչև 'ի 54 համարն, կամ ըստ ա̄ծաշնչին 'ի 22 համարոյ մինչև 'ի 38. Երրորդն՝ որ սկսանի Ունկնդրեա՛ք և տեսէք, գնայ 'ի 55 համարոյ մինչև 'ի 64 համարն. կամ ըստ ա̄ծաշնչին 'ի 39 համարոյ մինչև 'ի 43: Պատճառ այսր բաժանման յերկուց կարէ լինել. մի՝ յայլևայլութէ նիւթոյ բանիցն միքան զմի գերազանցելոց. և մի ևս՝ 'ի ընուլ զթիւ օրհնութեց 'ի տասունս:

Գերապանծ իմն փայլէ այս օրհնութի Մովսէսի ոչ միայն ըստ վայելչութեն, այլև ըստ պարագրելոյ յինքեան համառօտիւ զգրեալսն 'ի նմանէ 'ի հինգ գիրս. որոյ վ̄ս յեբրայեցւոց կոչի հանգամանակ օրինաց:

Զառաջին օրհնութիւն՝ զոր երգեաց Մովսէս, այն է. * օրհնեսցուք զտ̄ր, զի փառօք է փառաւորեալ ‖. ասաց 'ի սկիզբն ճանապարհորդութե որդւոցն Իղի՝ յանցանել նց ըստ ծովն կարմիր. իսկ զսա ասաց իբր 'ի վախճան ճանապարհորդութեն, և 'ի կատարած կենաց իւրոց. և որպէս աւանդեն բղ̄ք, զայն զայս ուսաւ Մովսէս առանձինն 'ի տ̄նէ առ տապանակաւն (ըստ որում կարէ տեսանել 'ի գիրս երկրորդ օրինաց 'ի գլ. ժդ̄, և ժե̄.) որ և եկեալ առ ժողովուրդն՝ խօսեցաւ յունկն նց:

Այս բանք Մովսէսի և որք զհետ յարին՝ օրհնութիք կոչին, ոչ միայն ըստ բարեբանելոյ զա̄ծ, որպ է տեսանել 'ի համարն 3. 4. և 5. այլ և ըստ յայտ առնելոյ զեղեալսն և զլինելոցսն. ըստ որում տեսանի 'ի համարն 6. մինչ 'ի վերջն. և այս նշանակութի չէ ինչ անդէպ. զի որպ գրէ վարդան 'ի գիրն եօթնէ՝ բառս օրհնութի կամ ըստ յունականին եւլոգիա՝ 'ի մէջ բերէ

նաև

Նաև զնշանակութիւն յայտնաբանութեն ։

Արդ յայսմ օրհնութեն առաջի արարեր մարգա_րէին զբարերարութիւնս այ՝ գուշակէ և զապե_րախտութիւն իղի՝ զոր հանդերձեալ էին ցուցանել առ այնչափ երախտիսն այ . և այն՝ մինչև 'ի լրումն ժամանակին, յորում 'ի մերժել նոցա իս_պառ զքս՝ որ եկն առ նս , իսպառ մերժե_ցան 'ի նմանէ . և ժառանգութիւն նոցա փոխադ_րեցաւ 'ի հեթանոսս ։

# Բ․ Ա․ Ն

1 . Լսայեցարո՛ւք երկինք , և խօսեցայց . լուիցէ եր_կիր զպատգամս բերանոյ իմոյ ։

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ։

Որովհետև մեծամեծս ունէր խօսել , և ծա_նունս գուշակել զայդէն երբայեցւոց , զեր_կինս հրաւիրէ նախ , և զերկիր՝ ունկն դնել , առ 'ի լինել վկայ՝ միանգամայն և դատաւոր ասացելոց իւրոց . ոչ զի երկինք զաչս ունին 'ի տեսանել , և երկիր՝ զունկն 'ի լսել , այլ զի մեծ են , և մնան յաւիտեան . վասն և կոչումն նոցա 'ի վկայութի և 'ի դատաւո_րութիւն ցուցանէ մեծ լինել այնմ՝ յորոյ վն կոչին , և անայլայլելի . որպս զի եթէ առ յա_պայն այլազգ ինչ ցուցցի , երկինք և երկիր իւրեանց անզգալի բարբառովն յանդիմանես_ցեն , որպս յանդիմանն արասցեն , թէ պարտ էր այսպս լինել և ոչ այնպս՝ որ կոչելոյ իւրեանց 'ի վկայութի ։ Նու յայս միտ սոյն այս մովսէս մարգարէ 'ի խօսիլն առ որդիսն իղի՝ ասէր . * ունիմ ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր ‖,

Է · օրին · Հ · 19 ։ Սոյնպէս և եսայի փոխէր ա-
սելով · * լուր երկին, և ունկն դիր երկիր · զի
Տր խօսեցաւ Եա · Եսայ · Ա · 2 ։ Իսկ դրծ այս-
պիսի հրաւիրումն ցուցանէ՝ թէ երկինք և
երկիր և այլ անզգայ տարերք առաւել ան-
սան պատգամացն այ, քան թէ որդիք մարդ-
կան · կամ Ը դրեւոյն վարդանայ, զայս դը-
նէ՝ առ 'ի ցուցանել՝ թէ * դիւրին է անըզգ-
,, այից և անբանից լսել այ և առնել
,, զբան նր Ք զգայնոց և բանականաց · որպ
,, եղև յասելն եղիայի ցյիսնապետն, իջցէ
,, հուր յերկնից, և կերիցէ զձեզ · զի զհետ
,, եկն վաղվաղակի բանիցն նր գործն . . . .
,, որպ և բանալ երկրի բանիւ մովսէսի և
,, կլանել զդադան և զաբիրոն Ա · Ը այսո-
ցիկ տեսանեմ առաջի առնէ մարգարէն զայս
բան ։ Իսկ զի ինքն եղև առաջին, որ խօսեցաւ
զարարչութէ երկնից և երկրի՝ համարձակա-
գոյնս բարբառի առ նա, ասելով ։

"Նայեցարուք երկինք և խօսեցայց · լուիցէ երկիր
զպատգամս բերանոյ իմոյ ։ "Նայեցարուք ասելով
տայ իմանալ և զլսել · Ը որոյ յերբ" և յառաջ"
և յորում, եւ և 'ի լսա" դնի, ունկնդիր ·
տայ իմանալ և զուշ դնելն · ուստի յեօթ"
դնի, ուշ դիր · մանաւանդ զի բառս նայիլ Ը մե-
րում լեզուի ցուցանէ՝ հայելով ուշ դնել
կամ զննել ։ Յայս միտ առեալ՝ կամի ասել ·
լուարուք և ուշ դիք ով երկինք՝ բանիցս, զոր
ունիմ ասել · և լերուք դատաւորք ձերոյդ
մեծութ, և վկայք ձերոյդ անեղր տէրութ ·
լուիցէ և երկիր՝ զամն պատգամս ունիմ բարբա-
ռել, և լիցի վկայ՝ թէ Աստուծոյ է՝ զոր ասեմ ։
Զսոյն զայս բան մարգարէին յերգս առեալ
եկե-

եկեղեցւոյ՝ սովին մասամբ յօրհնութ փրկչին իւ
րոյ ասելով 'ի շար ձիթ. * նայեցարուք եր
,, կինք, և խօսեցայց. և վերօրհնեսցէ զ[illegible]
,, փառաց Թ[illegible]րն ||.

Փոխաբերաբար՝ 'ի ձեռն երկնից նշանակին
բնակիչք նո՛ր, որ հրեշտակք՝ զորս եւս մով
սէս. գուցէ և տեսանելով զնոսին խօսէր զայս.
յոր մեր 'ի վեր առեալ զարական մեր զայս
բանս հաղեցուցանել զնոյէն առ զկնեբրուն իւ
երկնից՝ 'ի նայիլ նոյ 'ի անօրէնութիւն քնի, յա
սելն 'ի կան ձկն. * նայեցան զկնեբրունք
,, երկնայինք յանհաւ որ՝ անօրէնութ քո խոր
,, հուրդ. և փառաւորեցին զանկարաւութ սքան
,, չելիս քո մաղզաւորութ ||. և այս հայի
յայն՝ զոր ասէ առաքեալն եփես. գ. 10. Թէ
'ի ձեռն եկեղեցւոյ ուսան երկնայինք զբազ
մապատիկ իմաստութիւն աստուծոյ 'ի անօրէ
նութեն քնի:

Այսպէս և 'ի ձեռն երկրի փոխաբերաբար
նշանակին աստ բնակիչք երկրի. յոր մեր
զայս բան 'ի բերանոյ նոյ առաջի ասելէ հա
րական մեր 'ի կան ձկն. իբր յայտարար
փրկութ արարածոց ասելով. * Իւ ծ խօսեցա
,, 'ի բարձանց՝ լուարուք բնակիչք երկրի,
,, որ եկն և փրկեաց զմեզ արարածս. զի
,, զանուն նոյ կարդասցուք. և տացք օրհնութի
,, 'ի բարձունս ||.

Գուարճեալ 'ի ձեռն երկնից այլ իմն նմանութ
նշանակին արդարք. և 'ի ձեռն երկրի երկրա
սէրք, առ որս բարբառի մարգարէն լսել պատգա
մաց իւրոց: Նարոյամ 'ի ձեռն երկնից նշա
նակի հոգին, և կամ միտքն. իսկ 'ի ձեռն
երկրի մարմինն, կամ զգայութիք, զորս զարգ ուե

ունկն դնել բանից աստուծոյ ։

Յայլաբանօրէն՝ այլ ինն խորհրդով 'ի ձեռն երկնից իմացեալ լինի հին եկեղեցի կամ ժողովուրդն իսլի ։ Իսկ 'ի ձեռն երկրի՝ նորս լինել ․ քն որում 'ի հնոյ անտի ցոլեցան պատգամք 'ի նորս ․ և քն այսմ շարականն յորդոր լինելով 'ի կան Ձղէ․ ասէ ․ * Նայեցարուք ժղվրդք
,, ( իսլի ) 'ի սքանչելիս այ մերոյ ․ ունկնդիր
,, լերուք հւտուցեալք քնի ․ և 'ի միտ առէք
,, զարդարուն Ճշմարտուն ․ զի նա է յոյս հա-
,, ւատացելոց ։

Գերազանցութ իմն 'ի ձեռն երկնից շարական մեր այլաբանէ զտնօրէնութի այն մերոյ․ և 'ի ձեռն երկրի զսքանչելիս օրինաց նորա զն վարդապետութեց և խորհրդոց աւանդելոց 'ի նմանէ 'ի հին և 'ի նոր օրէնս ․ ուստի խօսելով 'ի դիմաց եկեղեցւոյ՝ և յառաջինն ակն արկելով ասէ 'ի կան Ձին ․ * Նայեցայ ես
,, յամենայնը 'ի քո տնօրէնութիդ ․ և եղ իւ-
,, զիս փառաւորեցից զքեզ քս ։ ․ և յերկրորդն
ակն արկելով ասէ 'ի կան Ձղէ ․ * 'ի յերկ-
,, նից իմանարհեցար ․ և նայեցաք 'ի սքանչե-
,, լիս օրինաց քոց տր , կենդանութեց տաւօղ-
,, աղբի մարդկան ։ Որդ առաջին եղեալ մարգարէին զնայիլն երկնից 'ի բանս իւր , և զունկն դնել երկրի 'ի պատգամս իւր՝ 'ի մէջ բերէ այժմ զպատգամսն զայնոսիկ նմանութք ցօղոյ և անձրևի , զորս երկինք հեղուն , և երկիր ընդունի ․ ուստի ասէ ։

2 ․ Ընդունելի լիցի որպէս անձրև բարբառ իմ ․ և իջցէ որպէս ցօղ պատգամք իմ ․

3 ․ Որպէս զանձրև 'ի վր սեզոյ , և որպէս մա-
րախ․

բանէ ՚ի վե՛ր խօսից · զի զանուանս ա̄յ̄ նկարագրեմք · և
տա՛նք օրինակ ա̄ն̄ ա̄յ մերոյ ։

Ընդունելութե̄ բանից յերկս կատարի, ՚ի հաճութե̄, ՚ի յարգութե̄ և յօգտակարութե̄ ․ ՚ի սոսա հայելով՝ զերկս տարիցս ՚ի մէջ բերէ և տեսէ ։

2 · Ընդունելի լինի որպէս անձրև բարեբեր էմ · և Եղջէ որպէս ցօղ պտղաբեր էմ ։ 3 ։ Որպէս զանձրև ՚ի վերոյ ասացի, և որպէս առ բանէ ՚ի վերոյ խօսից ։

Կամի ասել · Թէ զոր օրինակ ցօղ և արատ (որ է յորդահոս անձրև) իջեալ ՚ի վերայ ծարաւ հողոյ և ցամաքեալ սփղոյ և Թարշամեալ խոտոյ՝ լինին ընդունելի, կամ առատից հաճոյ՝ ՚ի զովացուցանել, և յարգոյ՝ ՚ի անուցանել, և օգտակար՝ ՚ի ծաղկեցուցանել և ՚ի հաստուցանել զսերմն, Այնպէս առէ հաճոյ և յարգոյ և օգտակար լիցին որդւոցն իմ և ա̄մ լսողաց՝ բանք իմ զորս խօսիմ · Իբրզի ՚ի լսելն ն̄ց զայն՝ հաճուք ընկալցին յականջս, յարգութք պահեսցեն ՚ի հոգիս, և օգտութք ծաղկեցուսցեն ՚ի գործս, զգուշանալով ՚ի չարեաց՝ զորս ուսնիմ գուշակել, և զհետ լինելով բարեաց՝ զորս ուսնիմ առաջի ն̄ց դնել ։

Կարէր մարգարէն զայլ ինչ բերել յարացոյց, զ̄բ զքաղցրութի մեղու, զանուշութի հոտոյ, և̄ն · բայց Թողեալ զայսս՝ բերէ զկաԹիլս անձրևոյ, տարափոյ և ցօղոյ վ̄ս երկուց · մ̄ի վ̄ս ցուցանելոյ Թէ որպէս անձրև և ցօղ ցանկալի է և փափաքելի ծարաւեալ երկրի, այնպ̄ս ցանկալի և փափաքելի լիցին պատգամք իմ որդւոցն իմ և ա̄մ մարդոյ, յընդունելն զայնս սիրով, և ՚ի տօգորելն ՚ի նոյն հաւատով · յոր միտ յեօԹ" դնի * առըն.

կալեալ լիցի որպէս անձրև առաւօտն (իմ||) . որոյ
փոխան յամենայնի մերում եղեալ է անձկալե-
ցի . որով ոչ նշանակի ակնունելի լինելն , այլ
առընկալելի լինելն . մինչև կարծել ոմանց թէ մրր-
պակաւ փոխեալ իցէ գիրդ ռ 'ի կ , իբր զի փո-
խանակ գրելոյ առընկալեսցի , կամ առընկա-
լեալ լիցի՝ եղեալ իցէ ակնկալեսցի : Արդ՝
զայս բերէ մեզ ցուցանելոյ , թէ ոչ կոմթիւք
թեթևս և կակուղ իմն են , բայց 'ի հասին
կամ 'ի կոխելն անդրհասա 'ի վերայ ասպա-
ռած վիմի՝ ներգործեն , և փոս գործեն ,
Այնպէս և բանք իմ և բանք այլոց մար-
գարէից՝ որք են պատգամք այ , ցօղեալ յա-
պառած սիրտ մարդոյ՝ թափանցեսցեն 'ի ներքս
և պտղաբերեսցեն . յոր մեր յեբր" և յասար"
կամեսցէ դնի , իսկ յասար" ցօղեսցէ , ուր 'ի
լաւ" դնի թանձրասցի . ղն թէ խոտ յոր-
դեսցէ :

Իսկ կրկնումն բառից՝ զոր դնէ աստ մարգա-
րէն , ոչ այլ ինչ 'ի մէջ բերէ՝ եթէ ոչ զհա-
ստատութի պատգամացն : Արժ է և ասել ,
թէ այս է ըն ոճոյ եբրայեցւոցն . զի եբրայե-
ցիք 'ի յօրինելն զոտանաւոր բանս՝ սովոր են
զնոյն բան այլովք բառիւք կրկնել զկնի .
որպէս յաճախ տեսանի այս 'ի սաղմոսի . և
այժմ՝ առ 'ի զարթուցանել զընթերցօղն և ըղ-
լսօղն 'ի քննութի բազմապատիկ իմաստից մի և
նոյն աստուածոյ սէ գրոց . ըն այսմ առնէ և
աստ մարգարէն : Իսկ քնի յանունիլ մարդոյ
'ի հողի իբր զբանս այ իբրև զցօղ՝ բերի
յօրհնութի նր , յայս խրախուսելով մարգա-
րէին զժողովուրդն իւր՝ յարել զկնի և առն :
3 . Զ . է զանուն տն կարդացի . և տուք օրհ-
նու-

ութեն Տն Տր մերոյ ։ Շաղկապդ զի` ունի աստ
զզօրութիւն բանիս` և արդ ․ որպէս թէ եդեալ
էր ․ և արդ արէք որդիք իմ , և զօրաջիք ,
զի 'ի միասին հոչեսցուք զանունն տն ․ և տա_
լով նմ զշնորհն` խոստովանեսցուք զնա տծ
ճշմարիտ , տծ բարերար , տծ ամենակարող ․
և զնա միայն պաշտեսցուք յամ սրտէ , յամի և
յամ ժամ ,

Զայս առաջին հատուած այսր համարոյ եզա_
կի դնի ․ որպէս և յածաշնչի մերում յասելն ,
* Շէ զանուան Տն կարդայց ‖ ․ որպէս թէ եդեալ
էր ․ յիշմանել բանից իմոց 'ի սիրտս իմացուց`
կարդացի զանունն տն , և զնա ինքն փառա_
ւորեցի ․ ամքին ասիս 'ի միասին մեծացու_
ցուք զնա ․ յոր միտ յայլս փոխէ ասելդ ․ փառ_
օրհնութեն Տն Յյ մերոյ ․ գրի * տուք զմեծութիւն
այ մերոյ ‖ ․ սոյնպէս դնի և 'ի միում ձե_
ռագրի , և 'ի մեկնութե վարդանայ ․ այլ այս են
զնոյն նշանակէ , զի է տալ զօրհնութի այ` մե_
ծացուցանելով զնա ․ քզի յղունիլ մարդոյ
զբանն այ իբրև զցօղ` որպէս ասացաք այժմ ,
փափաքի մեծացուցանել զնա ․ զորոյ զդերա_
պանծ օրինակն տեսանեմք 'ի սբ տծածինն ,
որ յղանալն յինքեան զնոյն ինքն զբանն տծ`
մեծացուցանէր զնա ասելովն ․ * մեծացուսցէ
անձն իմ զտր ‖ ։

Խորհրդաբար , այս իջումն պատճառաց իբր
ցօղոյ` հայի նախ յիջումն բանին այ յերկնից
'ի յարգանդ կուսին իբրև զցօղ ․ և զայս ա_
ռաջի առնէ շարական մեր 'ի կոմն ձն այս_
պէս ․ * Նայեցարուք ժողովուրդք 'ի սքանչե_
„ լիս փրկութե մերոյ ․ որ մարդասիրաբ բանն
„ 'ի հօրէ որպէս ցօղ խոնարհեալ յերկից ․
„ տուք

,, տուք օրհնութիւն ած այ մերոյ ‖ : Յայս վերա_
ծի և այն, զոր ասէ 'ի կամս Ձիր . * Նայե_
,, ցարուք 'ի բարեպաշտ մարգարէին և 'ի պատ_
,, գամս կենդանիս' որ քարոզեաց մեզ զշաւղն
,, կենաց (զբանն ած) 'ի յերկնից ‖ : տես 'ի
սաղ. հտ. 6 : Հայր երկդ' 'ի ցողումն աղբե_
րաց արեան 'ի կողից ած մերոյ, ևս և 'ի
հեղումն շնորհաց նր 'ի հոգիս մեր յարբու_
ցումն հոգևոր կենաց . յոր միտ առնու շարա_
կան մեր 'ի կամս Ձին յասելն . * 'ի խաչին
,, քո մեռուցեր զմահ . և յաղբերէ կողի քո
,, տիեզերաց արբուցեր զանմահութիւն ‖ . և 'ի
կամս Ձին յայլ իմն նմանութիւն վերածելով ասէ .
* 'ի վիմէն կենդանութեն ճաշակեցաք, զի քաղցր
,, է ար . և յիւղ սրբութեն օծաք հաւատով .
,, զի զանուն ան կարդացաք . և տուք օրհ_
,, նութիւն 'ի բարձունս ‖ :

Որպէս այս կարէ այլով իմն բանիւ հայիլ և
յիջումն քի 'ի գերեզմանն . յոր միտ 'ի վեր
առնու շարական մեր զայս բան յասելն 'ի
կամս Ձիզ . * եղուն անեղ անբաժանելի բանն
,, ած կամաւորութբ յանձն էառ զմահ խաչի,
,, և թաղեցաւ 'ի նոր 'ի գերեզմանի, և յա_
,, րութբ իւրով շնորհեաց մեզ կենդանութիւն ‖ :
Իսկ քի այս ամ' զոր ասաց ար մեր' Ճշմար_
տութբ և իրաւամբք եղեն, յայն հայելով
մարգարէին' 'ի մէջ բերէ զճշմարտութիւն այ
և զարդարութիւն նր ասելով .

**4 . Որոյ ճշմարտութբ են գործք նր, և ամ ճանապարհք նր իրաւամբք են :**

Բառքդ գործք և ճանապարհք այ' յայլ և այլ
միտս կարեն պատշաճ լինել 'ի սբ գիրս . բայց
թուի

Թուի թէ աստ գործքն հայի 'ի առնել ինչ , իսկ ճանապարհն 'ի նախախնամել՝ . կմ մին հայի յայն ամ , զորս գործեաց և գործէ ած , և միւսն յայն ամ՝ զորս ասաց և ասէ .

Յառաջինն հայելով դնէ .

ԱՀԾ՝ որոյ ճշմարտութ էն գործք նր . Կամի ասել . զոր ած խոստովանիմք , է այնպիսի՝ որոյ ամենայն գործք ճշմարտութ են , զի այնպիսի կատարելութ՝ յորում չիք պակասութի ըղձեմ ճանաչման կմ ըղձեմ իրիք կարգի . Իսկ յայս սակս յեօթն , 'ի լատ , և 'ի քաղդ" դնի * կատարեալ են գործք նր || . և յասոր" դնի . * անարատ են գործք նր || . և յարաբ" դնի . * որոյ ամբողջ է գործ || . իսկ յեօթ" ըն մեկնումս դնի * ճշմարիտ են գործք նր || . Այլ եթէ երևեսցի 'ի գործս անդ նր պակասութի ինչ , այն ոչ վերաբի յայն՝ որ է նր . այլ յայն՝ որ է գործք . զի թէ այն պակասութի ոչ է յայնմանէ որ գործէ , այլ՝ յայնմանէ՝ որ գործի . զի 'ի գործս այլ որ ինչ պակասութի տեսանի՝ այն ոչէ յնմ , այլ 'ի պակասութ գոլոյ ստեղծուածոց . Հայելով ապա և յերկրդն ասէ .

Իսկ ամ ճանապարհք նր իրաւամբք են . կմ ըն այլոց՝ դատաստանք են . Այսինքն թէ՝ այն ամ զորս ասաց և ասէ ած՝ որով ցուցանէ մեզ զճանապարհս իւր՝ իրաւամբք են ասացեալ , և անսխալելի դատաստանաւ են կշռեալ . Իսկ դրծլ՝ զայն ամ՝ զորս առնէ ած նախախնամութ իւրով՝ որով իբր ճանապարհաւ առաջնորդէ 'ի վախճանն՝ զոր դիտէ՝ արդար դատաստանաւ առնէ . և ամն իրաւացի են . և չիք 'ի նմ անիրաւութի ինչ .

Ամենայն աստանօր գործովք և ճանապարհօք զնոյն

իմա

խմանան. իբր թէ զոր ինչ առնէ ած, զնոյն ճշմարտութբ և իրաւամբք առնէ: Զոր յաւելուն այլք, թէ որովհետև այս բանք ասին հայելով յորդիսն իլի, բարքդ գործք և ճանապարհք՝ վերածին 'ի խոստմունս և 'ի խնամս այ; զոր արար և եցոյց առ նս. յոր միտ կամի ասել. զոր ինչ խոստացաւ իլի ած, առհասարակ անարատ են և դիւրակատարելի. և զոր ինչ եցոյց նց իբրև զճանապարհ առ փրկութի, արդարութբ են և իրաւամբք: Խորհրդաբար, այս բանք հային 'ի գործսն քնի և 'ի շնորհս նր. մանաւանդ զի յերբ" 'ի սկիզբն այսր համարոյ փոխէ այ՝ վէմ դնի, որ է հզօր, քս որում մեկնէ թարգմանութին քաղդէական. իսկ վիմով իմացեալ լինի նա ինքն քս: Ըստ քս այսմ գործովք ճշմարտութե կնի կատարելութե նշանակի այն ամ՝ զոր արար նա 'ի վր երկրի, մինչդ գործն այն մեծ՝ որով փրկեաց զմեզ. իսկ շնորհօք իրաւանց նշանակի այն ամ՝ զորս եցոյց մեզ՝ եթէ օրինակ տալով, և եթէ քարոզելով. այն է ճանապարհ խոնարհութե և հեզութե, շնորհս սրբութե և զգաստութե, ճանապարհ համբերութե և անոխակալութե. Եա. յանի ցուցեալ զինքն հաւատարիմ, արդար և ճշմարիտ. և դաւանանէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն՝ ասելով:

5. Աստուած հաւատարիմ է, և ոչ գոյ 'ի նմա անիրաւութիւն. արդար և ճշմարիտ է Տր:

Անբաւ են կատարելութիւնքն նր. բայց յառաջիկայդ զերիս եւեթ 'ի մէջ բերէ մարգարէն. այսինքն լինել նր հաւատարիմ, արդար և ճշմարիտ. հաւատարիմ 'ի խոստմունս. ար-

դար

գոր 'ի հատուցմունս , և ճշմարիտ կամ անա-
լատ 'ի տեւչութիւս ( Է · որ · ԼԲ · 3 · ) յորս յաւե-
լու և զբացասութի անիրաւութե ասելով ։
ԱԾ հաւատարիմ է · և ոչ գոյ 'ի նմ անիրաւութի · ար-
դար և ճշմարիտ է տր ։ Այսինքն թէ զոր ինչ
խոստանայ ած՝ հաւատարմութբ կատարէ · և
'ի հատուցանելն՝ արդարութբ գործէ · զի ոչ
հայի յերեսս մարդոյ · և զոր ինչ առնէ բաց
յայտնանէ՝ ճշմարտութբ առնէ · զի թէ համա-
ձայն իւրում անբաւ իմաստութե · զի ճշմա-
րիտ այն ասի՝ որ համաձայնի ուղիղ ճանաչ-
ման ։ Յայս ամ իբր պատճառ յաւելու՝ թէ
մն զի ոչ գոյ 'ի նմ անիրաւութի , ոչ 'ի խոստա-
նալն , ոչ 'ի հատուցանելն , և ոչ 'ի նախա-
խնամելն ։

Յայլս այլով իմն կարգաւ գնի այս բան ։
Յեբր" գրի · * ած ճշմարտութի , և ոչ ( գոյ
'ի նմ ) անիրաւութի , արդար և ուղիղ ինքն
( միայն ) ‖ ։ Յեօթ" գնի · * ած հաւատա-
րիմ · և ոչ է ( 'ի նմ ) անիրաւութի · արդար
և սբ տր ‖ ։ 'Ի լատ գնի · * ած հաւատարիմ
և առանց անիրաւութե · արդար և ուղիղ ‖ ։
Յասոր" գնի · * ած է հաւատարիմ , և ոչ
բնաւ անիրաւ , արդար և ուղիղ ‖ ։ Յարաբ"
գնի · * ամենազօր է , հաւատարիմ · չիք
ինչ թիւրութի առ նմ · ինքն է ամենարդար՝
ամենուղիղ 'ի գործն ‖ · Իսկ յածաշնչի մե-
րում փոխն ճշմարիտ գնի անարատ ։ Այլ
ամքին 'ի նոյն հային · և զն նախագրելոցդ
մեկնին ։

Արդ զայս յառաջ բերէ մարգարէն մն եր-
կուց · մի՝ վասն քաջալերս տալոյ որդւոցն
իլի , զի զօրացին ծռյել ան · երկր՝ մն
եր-

երկեցուցանելոյ զնա, զի զգուշասցին յօտա-
րանալոյ 'ի նմէն. եւս՝ վ՟ս զսպելոյ զապս-
տամբ բարս նց՟, զի մի յանդգնեսցին մե-
ղանչել նմ՟. որպէս և յանդգնեցանն իսկ. զոր-
մէ 'ի մատնաւորի խօսի 'ի յաջորդ համարն
ասելով.

6. Մեղան և ոչ նմա որդիքն արատոյ. ծնունդք խոտորեալք և թիւրեալք.

Աստի սկսանի մովսէս կուտել զմեղադրանս 'ի վ՟ր նց՟. մինչև 'ի համարն 8. և անտի սկիզբն առնէ խօսելոյ զբարերարութեանցն աստուծոյ մինչև 'ի համարն 21. և ապա դարձեալ բուռն հարկանէ զնախատանաց: Իսկ զի սկիզբն և պատճառ մեղադրելի լինելոյ նց՟ էր մեղանչել նոցին, վ՟յդ զայնմանէ սկսանելով խօսի և ասէ:

Մեղան և ոչ նմա որդիք արատոյ: Այս բան բազմապատիկ կարէ մեկնիլ. մի՝ տեղափոխութ՟բ բառիս ոչ. ը՟ որոյ կամի ասել. մեղան այ՟ այնոքիկ իէ՟լացիք, որք ոչ գտան հաւատարիմ որդիք, կմ՟ որք ոչ մնացին յորդէգրութեն այ՟, այլ եղեն որդիք արատոյ, ա՟յ՟ որդիք մեղաց, կամ որդիք աղտեղի որթոյն՝ զոր արարին և պաշտեցին. 'ի սոյն կարէ ա՟ն-արկել և թարգմանութիւն լատինական յասելն. * մեղան նմ՟ և ոչ որդիք նր՟ (շաղախելով) յաղտս ‖: Իտրկդ՝ փոփոխմամբ հոլովոյն դերանուանդ նմ՟. ը՟ որոյ կամի ասել. մեղան այ՟՝ ոչ որդիք նր՟, այլ որդիքն արատոյ. Թուի թէ յայս հայի և բնագիրն. ուր ասի. * յանցուցեալք 'ի նա ոչ որդիք նր՟, (այլ) արատաւորքն նց՟ ‖. կմ՟ ը՟ թարգմանելոյ այլոց.

* ապա-

* ապականեալք ինքեանն ոչ որդիք նր. արատա-
նց ‖ : Երրդ՝ է անխրատ պաշտաման. է որոյ
կամի ասել. մեղան՝ պաշտօն մատուցանելով՝
ոչ նմա, այլ կռոց՝ որդիքն արատոյ. այսինքն
նք որք արատաւորեցին զանձինս անխրատ պաշ-
տամամբ : Չրդ՝ է ոչ եւս լինելոյ նոյ. յոր
միտ կամի ասել. որովհետեւ մեղան նք՝ ոչ եւս
համարին լինել նր. զուցէ յայս հայելով
ասի ՚ի Թարգմանութե սամարացւոց. * ապա-
կանեցին զանձինս (մեղօք). ոչ վերաբերին
առ նա որդիք խառնակութե ‖ : Հինգերդ՝ է
չարաչար յանցանելոյ. յոր միտ կամի ասել.
մեղան որդիքն արատոյ՝ ոչ եթէ ընդդէմ օրի-
նացն նր եւեթ, այլեւ ընդդէմ բնական օրի-
նաց. կարէ ՚ի սոյն վերածիլ եւ Թարգմա-
նութի եօթ" յասեալն, * մեղան ոչ նմա (այլ
ընդդէմ բնական օրինաց) որդիք արատաւորք ‖ :
Վեցերդ՝ է նշանակութե վնասու՝ յոր միտ կա-
մի ասել. որդիքն իւր լինելով որդիք արա-
տոյ, իբր ծառայելով մեղաց՝ այնու մեղան
իբր վնասեցին՝ ոչ նմա, այլ ինքեանց. այսմ
նպաստէ մեկնաբանութին քաղդէական. զի գրի
անդ այսպէս. * ապականեցին ոչ զնա, այլ զին-
քեանս՝ այն որդիք որք ծառայեցին կռոց ‖. ՚ի
սոյն վերածի եւ Թարգմանութի ասորւոց եւ ա-
րաբացւոց. յոր միտ մեկնէ եւ վարդան. զի
որ մեղանչէ՝ ոչ վնասէ նմա, այլ ինքեան.
Այսոքիւք որդւովք ՚ի մանկաւորի առեալ
նշանակին տիրապան հրէայքն, որք բազում
իրօք գտան որդիք արատոյ, յամենայնի խո-
տորեալք եւ թիւրեալք. վն որոյ յարէ զկնի՝
խօսելով առ որդիսն իւր, եւ ասէ.

Ազգ խոտորեալ եւ թիւրեալ. Կամի ասել.

այ

այդու գործով ցուցանէք, թէ իցէք ազգք խոտորեալք՝ որք յետս կացեալք 'ի ճշմարտէն այ, և թիւրեալք՝ որք մտեալք 'ի ճանապարհ ապստամբութեան և անօրէնութեան. որպիսի եղեն և տիրասպանքն. որոյ վն յանդիմանէ զնս, և ասէ:

7. Ազգ այն է, զոր ոչ ուղղեաց զսիրտ իւր ընդ Աստուծոյ հոգի իւր և ոչ հաւատարմացաւ:

Բաւելի ք զայս մեծ նախատինք ոչ կարէր լինել ազգին իւրն 'ի յանդիմանիլ նոցա, թէ զկնի յետ տեսանելոյ նց յամս զերախտիս այ՝ յամս ապերախտ գտան առ նա, մինչդ 'ի պաշտել նց զորթն յանապատի. զն որ և մարգարէն զարմանայ, և տաղտկալով իւր խօսի առ ազգն ապաշնորհ, և ասէ:

Ազգ այն է, զոր ոչ ուղղեաց զսիրտ: Կամի ասել. ո՞չ ապաքէն այդ գործ ապերախտութեան ձերոյ է այն չար հատուցումն, զոր հատուցանէիք, և հատուցանէք, և հատուցանելոց էք բարերարին ձերում Տն այ. ո՞չ նախատինք է ձեզ՝ զայդ հատուցանել այնմ՝ որ հատոյց ձեզ զբարիս: Եւ այս յատկապէս հայի 'ի տիրասպան հրէայսն, որք զայնչափ բարիս և զսքանչելիս տեսեալ 'ի Տնէ մերմէ՝ հատուցումն մահու հատուցին նմա: Եւ զի այս գործ նց էր գործ յիմարութեան և անզգամութեան, վն յաւելու ասել:

Ընդ Աստուծոյ հոգի իւր և ոչ հաւատարմացաւ: Յիմար ասի նա՝ որ գործէ զգործս անհամեմատս բանականութեան, կմ որ խոտորի 'ի բանականութենէ: Իսկ ոչ իմաստուն ասի նա՝ որ պակասի յիմաստութենէ, ևս և որ պակասի յիմանա-

լոյ. այն որոյ նշանակէ և անզգամ. զի կամա-
ւորապ ոչ իմացող զարժանն. այլ եղեն իշխա-
ցիք, որք 'ի բարերարելն 'ի տնէ, մինչդ 'ի գալ
նր առ նա 'ի փրկել զնոսա, Թէպէտև յայտնի
տեսին, բայց խոտորեցան 'ի Ճանաչմանէ իւր-
եանց. և 'ի բղխ իւրս կամաւորապէս անզգայ
գտան: Նա զի բղխ իւրօք ապերախտ և ապա-
շնորհ երևեցան առ այնչափ բարերարութիւն նր,
յեբր" փոխ յիմարի՝ ապաշնորհ դնի: Իսկ Թէ
զինչ բարերարութիւնք էին այնոքիկ՝ զորս եցոյց
նոցա Ած, կարգաւ գրէ մարգարէն. և նախ
ասէ:

8. Ո՞չ ապա ինքն է հայր քո՝ որ ստացաւ զքեզ. արար զքեզ, և ստեղծ զքեզ:

Որչափ մեծ պատիւ եղև իւրեանց ունիլ իւր-
եանց հայր զԱծ, այնչափ անարգանք եղև նոցա
խոտորիլն 'ի նմէ. վն աւաղելով զնս ասէ:
Ո՞չ ապա ինքն է հայր քո՝ որ ստացաւ զքեզ. արար
զքեզ, և ստեղծ զքեզ: Կամի ասել. ապաքէն նա
ինքն Ած՝ եղև և է քեզ 'ի տեղի հօր, և այն-
պիսի հօր՝ որ ստացաւ և արար և ստեղծ
զքեզ: Այս բառք պարզապ առեալք Թէպէտ և
կարեն հայիլ 'ի ստեղծագործութիւն, բայց ու-
րապէս հային նախ յազատութիւն իւրեանց՝ 'ի
փրկել զնս այ 'ի ծառայութէ եգիպտացւոց. յոր
միտ դնէ՝ ստացաւ զքեզ, իբրև Թէ 'ի ծառայ-
ութէ գնելով: Երկրդ՝ հային յընտրութի ժա-
ռանգութէ. այն որում Ած ընտրեաց զնս, և
արար իւր ժողովուրդ. որոյ համգէս կատարե-
ցաւ 'ի սինա. յոր միտ դնէ՝ արար զքեզ: Երրդ՝
հային 'ի հաստատուն իշխանութէ. այն որում հաս-
տատեաց զնս Ած յառանձին իշխանութի և 'ի յա-

տուկ թագաւորութիւն. յոր միտ դնէ՝ ստեղծ զքեզ. այ թէ կացոյց զքեզ ազգ առանձին իշխանութ՟. ըստ որոյ է օրին լ՟ . 6 . ըստ եբր՟ դնի. * հաստատեաց զքեզ ||:

Այս բան տիրապէս հայի յորդին Ա՟յ ; որ եղեւ եղբայր եւ հայր մեր. ըստ որում փրկելով զմեզ 'ի գերութենէ թշնամւոյն՝ ստացաւ զմեզ , տուեալ զարիւն իւր իբրեւ զգին փրկանաց. արար զմեզ եւս իւր իբրեւ զեղբայր եւ իբրեւ զհայրսն. եւ ըստեղծ զմեզ՝ նորոգելով զհին մարդն զապականեալն մեղօք, եւ առնելով նոր. իսկ թէ որպէս կարգաւ արար զայս Ա՟ծ 'ի սկզբանէ անտի առաջի առնէ մարգարէն, 'ի մէջ բերելով զեղեալսն, եւ ասէ:

9. Յիշեցէ՛ք զաւուրսն յաւիտենից. իմացարո՛ւք զամս՝ ազգաց մինչեւ յազգս:

Ասէ մինչեւ 'ի 21 համարն 'ի մէջ մատուցանէ մարգարէն՝ թէ զիարդ Ա՟ծ նախ ստեղծ զմարդիկ , եւ զիարդ բաժանեաց զնոսա եւ որոշեաց յազգս. եւ յետ այնորիկ զիարդ 'ի միջոյ այնչափ ազգաց ընտրեաց զիւրացիս. եւ զկնի ընտրութե՟ պաշտպանեաց զնոսա եւ խնամարկեաց. մինչեւ տարաւ զնոսա 'ի պատրաստեալ տեղին՝ զոր խոստացաւ հարց նոցա. եւ նախ՝ 'ի սկիզբն հայելով ասէ:

Յիշեցէ՛ք զաւուրսն յաւիտենից. իմացարո՛ւք զամս ազգաց մինչեւ յազգս: Աւուրք յաւիտենից ասելով ոչ իմանայ զանսկիզբն տեւողութիւն յաւիտենականութե՟. զի այսպիսի տեւողութիւն ոչ զաւուրս ունի, եւ ոչ 'ի միտ առնել լինի. այլ իմանայ զաւուրսն՝ որք . սկսան 'ի ստեղծմանէ աշխ՟ի , եւս եւ 'ի ջրհեղեղէ. եւ ըստ այսմ կամի ասել. եթէ կա-

կամիք իմանալ՝ զոր ասացի և զոր ունիմ ասել, նախ առաջին յիշեսջիք զօրն՝ յորում ստեղծ ա՟ծ զաշխ՟ս և զմարդ. յիշեսջիք ապա և զաւուրսն՝ յորս եցոյց զմեծամեծս առ հարս ձեր. 'ի միտ առէք և ես՝ թէ զիա՛րդ խնամարկեաց հետզհետէ զազգ մարդկան. և 'ի ձեռն հարց յայտ արար՝ թէ հանդերձեալ է գալ 'ի փրկել զաշխ՟։ Եւ զի զայս ճշմարտութի՟ն ունէին եբրայեցիք յանդ՟հատ աւանդութե՟ն հարց իւրեանց, այսմ իրի ասէ մարգարէն ։

10 · Հարցջի՛ր դու ցհարս քո, և պատմեսցեն քեզ. զծերս քո, և ասասցեն քեզ ։

'Ի խօսիլ մովսէսի զայս բան՝ երկու ծերագոյնք կային 'ի մէջ իս՟րլի, ո՟ր են քաղէբ և յեսու. իսկ այլք առ առաւելն՝ էին իբր վաթսնամեայք. վ՟ս զի ելեալքն յեգիպտոսէ 'ի քսանամենից և 'ի վեր՝ մեռան յանապատի. և զի քառասուն ամ տևեաց ճ՟պհորդութի՟նն, ամք կենաց նոցին ոչ կարէր լինել աւելի ք՟ զվաթսուն. իսկ բանք մարգարէին հայէին առ առաւելն ծերագոյնս. ուստի և վերածին առ այնոսիկ՝ որք ծնալոց էին 'ի մէջ իս՟րլի. և զի ո՟ք կարէին 'ի հարց իւրեանց՝ և ն՟ք յառաջնոց տեղեկանալ աւուրց ստեղծագործութե՟ն ա՟յ և բաժանման ազգաց, վ՟յ առ ն՟ս ածէ մարգարէն զորդիսն իս՟րլի և ասէ ։

Հարցջի՛ր դու ցհարս քո, և պատմեսցեն քեզ. զծերս քո, և ասասցեն քեզ ։ Այսինքն, եթէ ոչ հաւատայք ինձ՝ հարցջի՛ք զծերս ձեր, զորս համարիք ձեզ հարս. և նոքա զորս գիտեն յաւանդութե՟՝ ասասցեն ձեզ, և կարգաւ պատմեսցեն զեղեալսն ։

Զայս կարեմք ասել և մեք առ հաւատացեալ քրիստոնեայս. Հարցջի՛ք դուք ցհարս ձեր, և ցծերս, թէ զիա՞րդ եղև փրկութի՛ւն ազգի մարդկան. և նոքա պատմեսցեն ձեզ՝ ոչ զորս 'ի քմաց իւրեանց առեղծին, այլ զորս լուա՛ն 'ի հարց իւրեանց, և նոքա յառաջնոց անտի, և նոքա 'ի Ք̃սէ. և 'ի լսել ձեր՝ տեղեկասջի՛ք՝ թէ զիա՞րդ ազգք և ազինք բարոզութ̃ առաքելոց և սքանչելագործութեբ նոցա դարձան 'ի կրօնս ա̃ծպաշտութե՛ն ընդ ա̃մ տեղիս:

Երբ" և յայլս եղանակի դնի բարդ հայր՝ յասելն. * Հա՛րց զհայր քո, և պատմեսցէ քեզ. զծերս քո, և ասասցեն քեզ ‖. բայց նոյն է և այս. զի որովհետև իւրաքանչիւր ոք մի հայր ունէր, և զբզ̃մ ծերս, յասելն Հարցջի՛ր, կարգբանին պահանջէ զհայրն դնել եզակի, և ըզծերսն յոգնակի. Իսկ՝ 'ի հարցանել հարց և ծերոց՝ թէպէտև բզ̃մ ինչ ունէին նոքա ասել, բայց զանց արարեալ մարգարէին զբազմօք՝ զբաժանիլն ազգաց 'ի մէջ բերէ նախ, և ասէ:

11. 'Ի ժամանակին՝ յոր բաժանեաց Բարձրեալն զազգս ամ̃. որպէս սփռեաց նա զորդիսն ադամայ:

Ժամանակս այս հայի յայն՝ յորում խառնակեաց ա̃ծ զլեզուս մարդկան. որով որոշեցան 'ի միմեանց, և եղեն առանձին ազգք. ո՛պ̃ի եղեն հայք, պարսիկք, յոյնք, ևն̃. որք սփռեցան յայլևայլ տեղիս. յայս հայելով ասէ:

'Ի ժամանակին՝ որպէս բաժանեաց ( յ̃ յորժամ բաժանեաց ) Բարձրեալն զազգս ամ̃. որպէս սփռեաց նա զորդիսն ադամայ: Նախ ասել. 'ի քննել և 'ի հարցա-

ցանել ձեր՝ տեղեկասջիք, թէ երբ և զիարդ խառնակեաց ած բարձրեալն զլեզուս մարդկան. և բաժանեաց զիւրաքանչիւր ազգս յատուկ լեզուօք. և արար՝ զի իւրաքանչիւր ազգք որովհետև ոչ կարէին կալ 'ի միասին 'ի միում տեղւոջ, սփռեսցին յայլևայլ կողմանս երկրի, մեսորայիմ իւրայովքն յեգիպտոս, յորմէ և տեղին կոչեցաւ միսր. սեամ իւրայովքն 'ի մուտս արևու, յորմէ յաւանք կոչին յոյնք. հայկ 'ի կողմն արարատայ, յորմէ հայք. նոյնպէս և այլ ազգք՝ մինչև 'ի ժամանակս աբրահամու, զոր իւրայովքն որոշեաց ած 'ի հեթանոսաց՝ սահմանելով տալ նմա պիտանի տեղի. և զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարն ասելով.

12. Սահմանեաց սահմանս հեթանոսաց, ըստ թուոյ հրեշտակաց այ։

Աւանդեն եբրայեցիք, թէ ած 'ի բաժանելն զմարդիկ՝ յայնքան լեզուս և յայնչափ ազգս որոշեաց զնոսա՝ որքան էին որդիքն իլի՝ որք մտին յեգիպտոս, այսինքն ոգիք եօթանասուն. ըստ որոյ ասի աստ թէ ած կացոյց զսահմանս հեթանոսաց ըստ թուոյ որդւոցն այ, այսինքն ըստ թուոյ որդւոցն իլի, որք ասին որդիք այ, ևս և հրեշտակք այ։ Բայց այս դնի ըստ յարմարական մեկնութեան, և ոչ ըստ ճիշտ տեսութեան. զի միտ մարգարէին յայլ ինչ կարգի 'ի ցուցանել զորոշումն սահմանաց՝ եթէ հեթանոսաց և եթէ որդւոցն իլի. զի 'ի սոյն հայելով՝ ասէ։

Սահմանեաց սահմանս հեթանոսաց՝ ըստ թուոյ հրեշտակաց այ։ Կամի ասել. յորժամ ընտրեաց ած զորդիսն իլի և արար իւր ժողովուրդ, որոշեաց զնոսա 'ի հեթանոսաց. և 'ի կացուցանել իւրաքանչիւր հեթանոս ազ-

դաց չափահմանս , հանձեցաւ տալ որդւոյն իւր զերկիրն քանանու ըստ թուոյ հրեշտակաց , ըստ թուոյ երկոտասան ցեղիցն իւր , որք հան-դերձեալ էին բաժանել:

Զորդիսն իւր կոչէ հրեշտակս իմ , որպէս է և 'ի թարգմանութեան եօթանասնից . կամ որպէս դնի յանձանձիլ որդիս իմ . զի իբրև զհրեշտակս , և իբրև զորդիս սիրելիս ընտրեցան : Նոյնց մարթ է և ասել , թէ 'ի թարգմանութեան եդեալ է այդ-պէս . զի յերբ" և 'ի քաղդ" և յասոր" և յարաբ" և 'ի լատ" դնի որդիք իւր . որպէս դնի և 'ի հին օրինակս ինչ յունաց . և այս այլայլութիւն մնացեալ է վասն հոմաձայն հնչման եբրայական բառիցն:

Ոմանք աստանօր հեթանոսօք իմանան զազգս մարդկան . ըստ որոյ յայլս դնի ժողովուրդ կամ ազգք . որպէս է և յանձանձիլ մերում . իսկ հրեշտա-կօք իմանան զբուն հրեշտակսն : Նաև զայս այսպէս իմանալով ասեն , թէ ըստ առաջիկայ բանիցդ այնքան մարդիկ հանդերձեալ են մտանել յար-քայութիւն , որքան հրեշտակք մնացին անդ . ըստ որում արքայութիւն երկնից լրանալոց է 'ի բաղ-մութէ հրեշտակաց և մարդկան : Ոմանք և ասեն , թէ Աստուած իւրաքանչիւր ազգաց կացոյց հրեշտակս թուով 'ի պահպանութիւն նոցա . ըստ որում որպէս իւրաքանչիւր մարդ ունի իւր պա-հապան հրեշտակ , նոյնպէս և իւրաքանչիւր ազգ . և յայս միտ պարտ է ասեն իմանալ զառաջի-կայ բանդ . իբր թէ եդեալ էր . կացոյց սահ-մանս ազգաց . և ըստ թուոյ նոցա զհրեշտակս 'ի պահպանութիւն նոցա : Յայս կարծիս են ոմանք հարք . ըստ որս և սբ լուսաւորիչն մեր յաղագս" . երես 136 :

Նաև ասեն և այլք , թէ Աստուած այնքան մարդիկ ունի ածել յարքայութիւն , որքան հրեշտակք անկան յերկ-

յերկնից, և զի այսմ ասի աստ, թէ կայոյց սահմանս մարդկան փրկելոց զի թուոյ հրեշտակաց անկելոց։ Այս կարծիք չէ մերժելի. բայց դիտումն առաջիկայ բանիս ուղղակի ոչ հայի յայդ և ոչ յայլ նախակարգեալ կարծիսդ. այլ որպ ասացաք այժմ՝ յորոշումն և յընտրութիւն որդւոցն Իէլի և սահմանաց նց. զորմէ որոշակի ևս խօսի 'ի յաջորդ համարին ասելով։

13. Եղև բաժին Տն ժողովուրդ իւր յակոբ, և վիճակ ժառանգութեան նորա իէլ։

Բաժին ասի այն ինչ՝ որ 'ի բոլորէ իմեքէ իւր մասն որոշի ումեք. և այս՝ կամ առ 'ի լինել ինքեան, կամ առ 'ի լինել այլում, թէ՛ ժառանգելի իցէ 'ի նմին, և թէ ոչ։ Իսկ ժառանգութի, զի ժառանգելի կամ ժառանգեալ ասի այն ինչ՝ որ սեփհականի ումեք 'ի վայելել՝ կամ յունիլ միշտ իւր։ Այս զի յայսպիսի վիճակ ընտրեցաւ ազգն իէլի հայելով առ ած, սմին իրի ասէ;

Եղև բաժին Տն ժողովուրդ իւր յակոբ. և վիճակ ժառանգութեան նորա իէլ։ Յակոբ և իէլ ասելով իմանայ զեբրայեցիս, որք յանուն հօր իւրեանց կոչեցան յակոբ և իէլ. զի որում զայսոսիկ երկուց անուանս ունէր նա, Արդ ասէ 'ի բաժանել և յորոշել ոյ զազգս ած՝ էառ ինքեան իբրև բաժին և իբրև վիճակ ժառանգութե զազգս զայս. և իբրև թէ լարաբաժին առնելով սեփհականեաց զսա ինքեան. զի որոյ յեբր, յասոր, յեօթ, և 'ի լատ" դնի լար ժառանգութե, զի լարիւ վիճակեալ ժառանգութի իբրև զպատուական և զսեպհական ինչ. զոր և ինքնին պահպանեաց և խնա-

մարդկեաց . և ոչ սոսկ 'ի ձեւսն հրեշտակաց , որպէս զոյլ ազգս : Այլ այս կրկնումն բանից ցուցանէ զառուգութի և զհաստատութին իւրն . զի որում այլուր ասացաք :

Խորհրդաբար , այս բանք հային 'ի վիճակ նորոգութե հեթանոսաց . զորս խոստացոյց որդին այ . և կացոյց զսահմանս նոյ յեկեղեցի նոր զի դասակարգութե հրեշտակաց . որ և կոչեցաւ նոր իէլ . զի որ ուրախ լեալ ցնծամք և երգեմք ասելով 'ի շար . ճի . * նոր իէլ կո-
,, չեցաք 'ի քս . եղեաք բաժին այ և ժա-
,, ռանգակիցք քի . զի զանուն այ կարդա-
,, ցուք . և տուք օրհնութի 'ի բարձունս || :

Արդ եղեալ մարգարէին զորոշումն այսպիսի վիճակի ժառանգութեն իւրո առաջի առնէ այժմ զոր յետ այնր ասաց ընդ նա այ . և նախ ասէ :

14 . Նախաչափն եղև նմա յանապատի . 'ի ծարաւ տօթոյ յանջրդաւոր պաշտպանեաց զնա :

Ած թէպէտև 'ի սկզբան անդ 'ի յընտրութեն իւր եղև նմա բաւական , բայց քզի յելանել նոյ յանապատ՝ սիրապէս արար զնա իւր . և բզի իրօք բաւականութի եցոյց նոյ , յայն հայելով ասէ :

Նախաչափն եղև նմա յանապատի . 'ի ծարաւ տօթոյ յանջրդաւոր պաշտպանեաց զնա : Բաւական լինելն ցուցանէ սաստ զհաճելն այ զի որդին իւր , և հաճելովն լնուլ զամ պէտս նոյ յանապատի անդ . ոչ և արարն իսկ ըստ այսպէս իրօք : Այլ՝ զի հովանի լինելով նոյ սեամբ ամպոյ՝ զովացոյց զնս : Նորին՝ զի յանջրդին անապատի անդ 'ի ծարաւիլ և 'ի քաղցնուլ նոյ պաշտ-

պա-

պահեաց զն̃ա՝ տալով նց̃ ջուր և կերակուր ·
եւս և զզգեստս՝ անմաշելի պահելով զայնս ։
Եւրդ՝ յապստամբիլ նց̃ խրատեաց զն̃ա , եւս
և պահեաց և խնամարկեաց զնոսին ։

Եբրայականն մ̃թին դնի այս բան · զի գրի
այսպէս · * գտցէ զնա յանապատ երկրի , և
յամայութ̃ գոչման եէշիմոն · պատեսցէ զնա ‖ ·
զոր լատինք թարգմանեալ են այսպ̃ · * եգիտ
զնա յերկիր անապատ՝ 'ի տեղի արհաւրաց ,
և ամայի առանձնութ̃ · շուրջ պատեաց զնա ‖ ,
Յասորւոց թարգմանութե̃ դնի * եգիտ զնա
յերկրի առանձնութ̃ · և յանապատն ասիմոն
( կամ ըստ եբր" եէշիմոն ) ժողովեաց զնա ‖ ։
Այս գտանելս ոչ 'ի մէջ բերէ զնորոգ գիւտ ,
այլ զգտեցելոյն պահպանութի̃ , բաւականլինե-
լով նմա յանապատի անդ · և շրջապատելով
ըստ պաշտպանելով զնա 'ի տեղին եէշիմոն , ըստ
յանապատի ( անջրդի ) · եւս և զօրացուցա-
նելով զնա և կազդուրելով · յոր միտ 'ի թարգ"
սամարացւոց դնի · * զօրացոյց զնա յերկիր
անապատ ‖ ։

Իսկ որ յեբր" դնի · * յամայութե̃ գոչման ա-
ռանձնութե̃ ‖ , կամ գոչումն անապատի , հայի
յայն գոչումն եբրայեցւոց , որով գոչեցին նք̃
առ ած̃ 'ի ծարաւիլ իւրեանց յանապատի անդ ·
և ած̃ ետ ջուր 'ի ծարաւ նց̃ · որով և պաշտ-
պանեաց զն̃ա , և ուրախ արար · դուցէ յայս
հայելով դնի 'ի թարգ" սամարացւոց 'ի յաջորդ-
բանն , թէ * ձայնիւ ցնծութե̃ պարարտս կազ-
դուրեաց զնա ‖ · մարթ է 'ի սոյն վերածել
և զթարգմանութի̃ արաբացւոց ։

Խորհրդաբար՝ այս ամ̃ նկարագրէր յինքեան
զայն՝ զոր արար որդին աստուծոյ ընդ ազգս
մարդ ·

մարդկան. զի 'ի մոլորիլ նոցա յանապատի աշխարհիս, և 'ի տապիլ նոցա 'ի ծարաւ անտից՝ եկն առ նոսա՝ լեալ իբրև զնոսա մարդ ճշմարիտ բաց 'ի մեղաց. և բաւական եղև նոցա՝ հաստուցանելով վասն նոցա ըստ բաւականին և առաւել քան զբաւականն. և զինչոյց զծարաւ աղետից թշուառութեան նոցա պատուական արեամբ իւրով. և և զօրացոյց և զուարճացոյց զնոսա, պաշտպանեաց և խնամարկեաց բազում իրօք. զոր և զօրինակն եցոյց առ ազգն Իսրայէլ. և զայս տարացուցին իմն առաջի առնէ մարգարէն և ասէ.

15. Խրատեաց և պահեաց զնա որպէս բիբ ական. որպէս արծուէ 'ի բոյն իւր ընկալաւ զնա. և որպէս 'ի վերայ ձագուց իւրոց փափագեաց:

16. Տարածեաց զթևս իւր և ընկալաւ զնա. և բարձեալ բերէր զնա 'ի վերայ թիկանց իւրոց:

Ր. յոքնիկ օրինակք 'ի մէջ բերէն և յանդիմանեն զամենամեծ գութն՝ զոր եցոյց Աստուած առ Իսրայէլ՝ եթէ 'ի խրատելն, եթէ 'ի զգուշանալն զնոքօք, և եթէ 'ի խնամարկելն. յառաջինն և յերկրորդն հայելով ասէ:

Խրատեաց և պահեաց զնա որպէս բիբ ական: Այ-մի ասել. ոչ հայր 'ի տեսանել զորդի իւր խեռիլ՝ խրատէ զնա, սոյնպէս արար և Աստուած առ որդիսն Իսրայէլի: Այլ ոչ մարդիկ առաւել քան զամենայն զգուշանան՝ զի մի ինչ անկցի յաչս, կամ դիպեսցի ինչ 'ի բիբ ական, սոյնպէս զգուշացաւ Աստուած զորդւովքն Իսրայէլի. որպէս տեսանի յԱստուածաշնչի. հայելով և յերրորդն ասէ.

Որպէս արծուէ 'ի բոյն իւր ընկալաւ զնա, և որպէս (16) 'ի վերայ ձագուց իւրոց փափագեաց: * Տարածեաց զթևս

իւր

Իւր և ընկալաւ զնա. և Եարբեալ Եղեւ զնա 'ի Վէ
մէլնողաց Եարեաց ։ Ընտիր են յատկութիւնք արծուոյ. բայց երևելի իմն է այն՝ զի ըստ աւանդելոյ բազմաց առաւել է փութ նո՛ր առ ձագս իւր քան զայլ թռչնոց. Ջգի 'ի բարձր և յանմատչելի տեղիս եդեալ զբոյն իւր՝ յորում բերէ զերկուս ձուս միայն, պէսպէս օրինակաւ պահպանէ 'ի նմա զձագսն 'ի վնասակար իրաց. և 'ի վեր քան զամ 'ի հնարից օձի. յոյր սակս ըստ ասելոյ ոմանց՝ դնեալ զսուտակ ակն՝ դնէ 'ի մէջ ձագուցն առ 'ի թափել զթոյն օձիցն ։ Իսկ մինչև իցեն զօրացեալ ձագք նո՛ր՝ հովանաւորութ թևոց իւրոց պաշտպանէ յանձրևոյ և 'ի տապոյ արեգական. և ապա 'ի զօրանալ և 'ի թևաւորիլ նոցա՝ տարածէ զթևս իւր ընդ նոքօք. և առեալ զնա 'ի թիկնամէջսն՝ վերանայ ուղիղ, և սլանայ յարեգակն կոյս՝ առ մարզելոյ զնա՝ թռչիլ 'ի բարձունս, և զօրաւորիլ յազդեցութենէ արևու ։ Իսկ եթէ իցեն 'ի ձագուց՝ որք ոչ կամիցին հայիլ յայն՝ ընկենու զնա իբրև զօտար ։

Օայսպիսի խնամս և առաւել քան զայսպիսիս եցոյց ած առ որդիսն իւր. զի 'ի ծնանիլն զնա՝ եդ զբոյն նոցա 'ի բարձունս, այսինքն 'ի բարձրագոյն խորհուրդս, նոյն և 'ի նշանս և 'ի սքանչելիս. և պաշտպանեաց 'ի հնարից օձին՝ ըստ փարաւոնի ։

Եդ զսէր իւր 'ի նմա իբրև զսուտակ ակն ։ Հովանի եղև նոցա սեամբ ամպոյ և հրոյ իբր թևօք ։ Իսկ 'ի զօրանալ նոցա՝ էառ զնոսա խնամովք իւրովք. և եդ զնոսա 'ի թիկնամէջ իւր, ըստ յամենակարող զօրութ իւր. և ապա թռոյց և տարաւ յերկիրն խոստացեալ ։ Իսկ որք ոչն

կա-

կամեցան հայիլ յայն՝ 'ի բաց եթող զնա։
Յայլ իմն փոխաբերութ վերածէ վարդան զա-ռաջիկայ բնաբանդ. բիբ ական դնէ զմով-սէս, և ակն զիսրայէլ. և միջնորդք իմանայ զբանսն՝ որք գրեցան յերկուս տախտակսն քա-րեղէնս։ Մարթ է և յայլ իրս փոխաբերել. և սակայն անդէպ երևի մեզ տարապայման տարածել զբանն։

Յերբ" փենիկ ասելոյ. * որպէս զարծուի 'ի բնա-կոյ ընտրելոյ զնա ||, դնի. * իբրև արծուի զարթուցէ (կամ զրգռեսցէ) զբոյն իւր ||. 'ի լատ" դնի. * իբրև արծուի խրախուսեալ զձագս իւր 'ի թռչիլ ||. յասոր" դնի. * ով արծուի՝ որ թռչի 'ի վր բունոյ իւրոյ ||. այլ յեօթ" դնի. * իբրև արծուի ծածկեսցէ զբոյն իւր ||. որպէս դնի և յիմաստնոյն մե-րում, յասելն. * իբրև զարծուի 'ի ծածկել զբոյն իւր ||. Եւ ըստ այսմ բայդ ընկալաւ՝ որ դնի աստ 'ի համարն 15, հայի 'ի ծածկել թևօք և 'ի զօրացուցանել, կամ 'ի զգուշանալ արծուոյն 'ի վր ձագուցն՝ ըստ նախակարգեալ մեկնութեդ.

Բ. Այլաբանօրէն, զայս եցոյց որդին աստուծոյ առ ազգս մարդկան. զի եդ զեկեղեցի իւր իբրև զբոյն 'ի բարձրագոյն խորհուրդս. և ապրեցոյց 'ի սատանայէ, խորտակելով զզօրութիւն նր. և տարածեալ զթևս իւր 'ի խաչին՝ էառ և էած զնա 'ի փրկութի յաւիտենական. նաև յիջա-նելն 'ի դժոխս՝ էառ և անտի զարդարսն. և տարաւ ընդ իւր յերկինս, թողեալ զանյոյսսն 'ի բաց։ Ի սոյն միտս երգէ եկեղեցի 'ի շա-րականն զայս բան 'ի կանոնին ԶՂ. ասելով. * որ զանարատ թագուհս իւր միածինն տա-

,, րա-

,, ըմպեաց 'ի վր խաչին . և զբաժանեալ որ-
,, դիսն ադամայ ժողովեաց ը Թեւօք իւրովք .
,, տուք օրհնութի այ մերոյ ‖ . և բացա-
յայտ ես առաջի ամնէ զոյն 'ի կամս . ՃԼԷ .
ասելով . * զինջումն քո քս դուշակեաց մեզ
,, մարգարէն , և զկամաւոր չարչարանս խա-
,, չին գուշէր ասելով . տարածեաց զԹեւս իւր .
,, ընկալաւ զնա . և բարձեալ բերէ 'ի փըր-
,, կուԹի ձի ‖ : Նաև զնոյն իսկ զփայտ խա-
չին՝ յոր տարածեաց զձեռս իւր և ետ 'ի պաշտ-
պանուԹի և 'ի պահպանուԹի կենաց համօրէն
ձի , սովին բանիւ առաջի ամնէ շարականն
'ի կամս ՃԼԸ :

Աստեփաննոս քերԹող զսոյն զայս բան յայլ իմն
գերազանց միտս տարածէ . միջնորդամբ իմա-
նայ զանշփոԹ միաւորուԹին 'ի քս յերկուց
Թեւոց այ ածուԹե և ըստ մարդկուԹե . իսկ
բանք քերԹողին են այս . * որպէս կենդա-
,, նի մարմինն 'ի վր ոտից հաստատուն կայ
,, (ասէ) , և Թռչունք 'ի վր Թեւոց , (սոյնպէս)
,, և գոյք այ 'ի վր միջնորդանն բնի . որ է
,, մի միաւորուԹի այ երկուց Թեւոց ածուԹե և
,, մարդկուԹե , ոչ բաժանեալ (այ Թեւոցն) ,
,, այլ խառնեալ ը բանին մարմինն . . . ան-
,, տեսն տեսանելեաւն տեսաւորեալ . ( ԲՖ ) որ
,, ետեսն զիս՝ ետես զհայր , այս է խառնուած
,, միջնորդանն ‖ : Զսոյն զայս օրհնակաւ իմն
եցոյց ած առ իէլ . մինչև էած զնոսա՝ ուր
կամէր տանել . զորմէ խօսի մարգարէն 'ի յա-
ջորդսդ ասելով :

17 . Տէր միայն առաջնորդէր զնա . և ոչ գոյր ընդ նմա
աստուած օտար :

Յելանելոյ անտի որդւոցն Իղի յեգիպտոսէ մինչև 'ի մուտս նց յերկիրն աւետեաց՝ գրեթէ ամ ազգք ընդդէմ դարձան ընթացից նոցա՝ ամենք կռուելով, և ոմանք 'ի պաշտօն չնծց խաբեանց խոտորեցուցանելով զնս : Նա սակայն ամ յամի պաշտպան լինելով իւրեանց, և երբեմն եւս խրատելով ինքնին եած զնս. վնկ ասէ :

Տէր միայն ածէր զնս . և ոչ գոյր ընդ նս ածօտար :

Այսինքն թէ տէր ինքն միայն իւրով հզօր զօրութբ առաջնորդեալ տանէր զնս . և ոչ որ եղև նց օգնական 'ի չնծց օտար ազգաց : Խորհրդաբար, սոյն այս ածեր հայի յայն՝ զոր արար Քս մեզ որդւոյն ամ . զի յոչ կարէր ումեք առաջնորդել մեզ 'ի բարին, նա ինքն միայնակ առաջնորդեաց եած զմեզ 'ի գործս երկրի, քանզի եած զմեզ 'ի բազում արքայութ իւր՝ զորս եդ յերկրի աստ յեկեղեցւոջ իւրում. և զայսմանէ դրէ մարգարէն 'ի յաջորդում միւսև 'ի Հաւանութն 22 . 'ի մէջ բերելով զբարիս երկրին աւետեաց . և նախ ասէ :

18 . Եծ նստն զնս 'ի զօրութն երկրի . և կերակրեաց զնս արդիւնքս անդաստանաց :

Աստի և անդր զոր ինչ խօսի մարգարէն վերածի յայն ամ՝ որ եղև 'ի մտանել իւրեանց յերկիրն աւետեաց . քանզի թէ զորս հանդերձեալ էր լինել 'ի կատարեալն գնէ, այն հայի 'ի Քրիստոսական լինելեացն որք աւետեաց այլոց. Քս որոյ խօսի և պատմեսցուք :

Եծ նստն զնս 'ի զօրութն երկրի, և կերակրեաց զնս արդիւնքս անդաստանաց : Իսկ զօրութն յերկրի անդ ասէ ասա . մի 'ի ցո ցանել զզօրաւորութի

ծի զհաստատուն երկրին ամրհացուց , և զա-
նաւիկն լինել . երկդ՝ 'ի ցուցանել զարդարա-
ւորութի կամ զպտղաբերութի հովտացն . երրդ՝ 'ի
ցուցանել զբարձրութին . ը որում բարձր լե-
ռամբք զարդարեալ է երկիրն այն . յոր մեզ
յեբր" և 'ի լառ" և 'ի սամար" . բարձունք
գնի . որոյ մն խիկ և մարգարէն եհան ասէ ,
կամ ը եբբ" և ը արաբ" ձիաւորեաց . կմ ը
պամար" և ը եօթ" վերացոյց : Իւր յետ հա-
նելոյ զնս անդ՝ կերակրեաց զնս արդեամբք
անդաստանաց՝ լինալով մնուցանելով զնս բե-
րիւք և պտղովք , զորս տային անդաստանք
տեղւոյն : Խօսելով ապա և զայլոց կերակրոց՝
ասէ :

19. Ծծեցոյց նոցա մեղր 'ի վիմէ , և իւղ յապառաժ վիմէ :

'Ի պաղեստին բազում գոլով մեղուաց՝ հարկ լի-
նի նց բնակել նաև 'ի վէմս բարձր լերանց ,
կամ աստցից 'ի քարեայ լերինս , որոց 'ի խո-
ռոչսն իբրև 'ի փեթակս կազմեն զմեղր : Այնպ
և ձիթենիք յաձախ բուսանին անդ . մինչև
ինքնին ծառանալ ոմանց յապառաժ տեղիս .
յորոց ելանէ ձէթ ոչ սակաւ . 'ի սոսին հա-
յելով ասէ :
Ծծեցոյց նոցա մեղր 'ի վիմէ . և իւղ յապառաժ վի-
մէ : Այսինքն թէ 'ի տանիլ ած զորդիսն իլր
'ի պաղեստին՝ զլերինս տեղւոյն արար նոցա
իբրև զստինս՝ 'ի դիեցուցանել նց 'ի լերանց
անտի զմեղր , զոր մեղուք ինքնին գործեն 'ի
նոսին . և զիւղ ձիթենեաց՝ զոր բերեն ապա-
ռաժ լերինք այնոցիկ կողմանց : Արթ է
ասել , թէ զայս գնէ փոխաբերութ՝ 'ի ցու-
ցա-

ցանել զառատութիւն մեղու և ձիթենւոյ և այ-լոց կերակրոց երկրին այնորիկ, որք լինէին նաև յապառաժուտ տեղիս :

Այլաբանօրէն՝ այս բանք և որք զհետ սո-րա՝ սահմանագրեն զգործողութիւն խնամոց փրկ-չին մերոյ՝ մանաւանդ յայսմ զոր ասէ * դիե-ցոյց նմ մեղր 'ի վիմէ ||. զի ինքն գոլով վէմ կենդանի՝ դիեցոյց մեզ յիւրմէ զմեղր ամ բարեաց, և զիւղ օծութե հոգւոյն սրբ : Ուստի երգէ եկեղեցի 'ի շար ձինէ. ասելով * 'ի վիմէն կենդանութե ճաշակեցաք՝ զի քաղցր ,, է տր և յիւղ սրբութե օծաք հաւատով|| :

Բարոյապէս՝ այս բանք հային 'ի վիճակ կրօ-նաւորութե. յորում նա ինքն ամ առաջնորդէ այնոցիկ՝ զորս ընտրէ. և դիեցուցանէ նոցա մեղր քաղցրութե հոգւոյն սրբ, և իւղ սրբութե վարուց յանդորրութե խղճի մտաց : Զայս ե-դեալ մարգարէին՝ խօսի ապա և զսնուցա-նելոյն այ զիսրայելացիս կթովք հօտից և այծ :

20. Իւղ կովուց և կաթն մաքեաց ճարպով հանդերձ խոյոց որթոց և նոխազաց :

Իւղ կովուց ասելով՝ իմանայ զայն՝ որ ելանէ 'ի կաթանէ կովուց. որպիսի է կոգին և սերն (թք՝ սրդար իւղն և թերէ եաղին). ըստ որոյ յանձաշնչի կոգի դնի : Իսկ կաթամբ մաքեաց իմացեալ լինի կաթն ոչխարաց, և որ ինչ 'ի կաթանէ նմ կազմի : Ճարպով խոյոց՝ կէս որ-պէս դնի յանձաշնչի եւ և յերբ" և յեօթ" և 'ի լաւ" ճարպով գառանց՝ իմացեալ լինի պա-րարտ իւղն հանեալ 'ի գառանց ոչխարաց : Նոյն-պէս և ճարպով որթուց ցլուց կամ որդւոց

ցլուց իմացեալ լինի պարարտ իւղն հանեալ յորթուց կովուց, որոց արուք որք չիցեն մալեալք, ցուլք կոչին. ըստ այսմ և ճարպով որդւոց նոխազաց իմացեալ լինի իւղն հանեալ յայծից, որոց արուք նոխազք կոչին։ Նաև իւղ ասելով պարտ է իմանալ ոչ միայն զայնս՝ որք ուտին, այլև զայնս՝ որք 'ի գործ ածին յայլ իրս ևս։ Արդ մարգարէն զայսոսիկ յառաջ բերելով՝ կամի ցուցանել, թէ ա̃ծ զա̃մ ինչ լիալիր ետ իւրայնոց. ուստի և պարարտ

բանիւք խօսի ասելով։

Իւղ կովուց և կաթն մաքեաց ճարպով հանդերձ խոյոց, որթուց ցլուց և նոխազաց։ Կամի ասել. 'ի տանիլ այս զորդիսն Իլի 'ի խոստացեալ երկիրն՝ զա̃մ պարարտ ուտելիս ետ նց, ևս և զա̃մ որինչ 'ի գործ ածելի էր նց։ Նաև կարգշարադրութե̃ն պարզի այսպէս. ետ նոցա ա̃ծ զիւղ կովուց և զկաթն մաքեաց հանդերձ ճարպով գառանց խոյոց, և ճարպով որթուց ցլուց, և ճարպով որդւոց նոխազաց. որ է ասել, ետ նոցա զիւղ և զկաթն և զճարպ։ Յեբր″ և 'ի լատ″ փոխ ցլուց դնի բասանու՝ յասելն. * հանդերձ ճարպով գառանց և խոյոց՝ որդւոց բասանու ‖. ցուցէ վասն պարարտութե̃ գառանցն. ըստ որում պարարտ լինին անդ գառինք և խոյք. բայց քանզի եօթանասունք ցուլ թարգմանեցին, յայն պարտ է վերածել զնշանակութի̃ եբրայական բառին։ Նաև զի որդիք ցլուց որթք կոչին, 'ի թարգմանութե̃ մերում՝ որ 'ի սաղմոսի, որթուց ցլուց դնի. թէպէտ և յերկս ձեռագիրս՝ որդւոց դնի ըստ թարգմանութե̃ ա̃ծաշնչին։ Խօսելով ապա և զհացէ և զգինւոյ ասէ։

21. Զպարարտութիւն երիկամանց ցորենոյ, և զարեան խաղողոյ արբէք գինի.

Պարարտութը բանից խօսի. զի փոխկ ասելոյ ետ նոցա ցորեան պարարտ, և գինի զօրեղ՝ ասէ։

Զպարարտութիւն երիկամանց ցորենոյ, և զարեան խաղողոյ արբէք գինի։ Յայտնիքն է. ետ նոցա ուտել զցորեան առոք և աճողական. զառոք լինելն յայտնէ բառիւս պարարտութ. կամ ըստ ամենայնին, և ըստ եբր՛ և եօթ՛ բառիւս ճարպ. և կամ ըստ լատ՛ և արաբ՛ բառիւս ուղեղ. իսկ զաճողական լինելն յայտնէ բառիւս երիկամանց. զի երիկամունքն են սկիզբն աճողութեան և ծննդեան։

Սոյնպէս ասէ ետ նոցա ըմպել զարիւն խաղողոյ գինի. զգինին կոչէ արիւն խաղողոյ, առ ՚ի ցուցանել զզօրեղութիւն գինւոյն՝ իբրև զզօրեղութիւն կենդանի արեան. եւս և զառատութիւն կարմրութեան գունոյն. ուստի յեբր՛ և ՚ի լատ՛ փոխանակ գինւոյ անապակ դնի. բայց քանզի յեօթ՛ և յասոր՛ և յարաբ՛ գինի դնի, վսն և թարգմանիչք մեր գինի եդին. մանաւանդ զի անապակն եւս ՚ի գինի ակնարկէ։

Խորհրդաբար՝ այսոքիկ ամենքն ցուցանեն զպէսպէս բարիս՝ զորս արար նոցա Տէր որդւոցն իւր. մանաւանդ ՚ի տալ նոցա զինքն մեզ իբրև զհաց անմահութեան, և իբրև զբաժակ բերկրութեան։ Եւս զի մատակարար այսմ եղև անապականն կոյսն Մարիամ՝ ծնանելով զնա յիւրմէ, այնր իրի զայս բան մարգարէին առեալ եկեղեցի ՚ի նա վերաբերէ ՚ի շար. ճչ. և դաւանելով զնա աստուածածին՝ երգէ զնմէ, և ասէ. * զանապականն կոյսն Մա-

„ ըստ ամածին խոստովանի ՚ոք եկեղեցի ․
„ ուստի առեալ հացն անմահութեն և բաժակ
„ մեզ ուրախարար ․ տուք օրհնութիւնս հոգևոր
„ երգով ։ Արդ եդեալ մարգարէին զբազմա-
պատիկ բարիսն զորս եցոյց ած առ որդիսն իւր,
առաջի առնէ այժմ զապերախտութիւն նոցա առ բա-
րերար իւրեանց , և ասէ ։

22 ․ Եկեր Յակոբ և յագեցաւ ․ և անհնազանդեաց սիրել-
ին ։

23 ․ Պարարտացաւ , ստուարացաւ , լայնացաւ ․ եթող զա-
ծ զարարիչն իւր ․ և յետս եկաց յայ փրկչէ
իւրմէ ։

Օ չարաչար զեղխիլն իւրեանց ՚ի բարութիւնս երկրին աւետեաց ՚ի հինգ խօսս բաղադրեալ է ․ որ է ՚ի յուտել , ՚ի յագենալ , ՚ի գիրանալ , ՚ի ստուարանալ և ՚ի լայնանալ ․ ( և թէպէտ Բ ․ օրին ․ ԼԲ ․ 15 ․ յաւելեալ լինի և յորանալն , բայց այն իբր բացատրութի դնի յագենալոյն ․ ) Իսկ ըստ հնգապատիկ զեղխութեն նոցա առաջի առնէ զհնգապատիկ զմեղս նոցին Մովսէս այս ․ նախ յանկուշելն ․ երկրորդ՝ ՚ի թողուլն ․ երրորդ՝ ՚ի յետս կալն ․ չորրորդ՝ ՚ի բարկացուցանելն ․ և հինգերորդ՝ ՚ի դառնացուցանելն ․ որք դնի ՚ի համարս 24 ․ որոց զպատճառն տայ զկնի ։ Օ այսպիսի այսոց կարգելովն՝ զմի ինչ միայն դիտէ ցուցանել , որ է թէ յորչափ բարիս այ վայելեցին իւրեանք , զայնչափ չարիս հատուցին այ ․ և առ ՚ի զայն զգալի ցուցանել՝ յաճախելով զբառսն խօսի , և ասէ ։

Եկեր Յակոբ և յագեցաւ ․ և անհնազանդեաց սիրելին ։
23 ․ Պարարտացաւ , ստուարացաւ , լայնացաւ ։ Յաւելու ՚ի յուտելն զյագենալ ․ զի ոչ ամեն ուտէ՝ յա-

դի · իսկ ինքն զոր եկեր՝ նովին լիանք յագեցաւ · յաւելոյ և զգիրանալն · զի ոչ էած որ յագի՝ գիրանայ · իսկ ինքն ոչ միայն յագեցան , այլ և գիրացան · եւս և ստուարացան , քք հաստատնդեցան · նաև լայնացան · քն որում զոր ուտեին՝ ոչ մնայեր նց , այլ բարւոք մնուցանելով պարարտացուցանէր զնոսա ։

Նշորքին կարէն ասել լինել և 'ի փոխաբերական միտս , 'ի ցուցանել՝ թէ ինքն քն ամն 'ի յանդորրական կեանս վայելէին · բայց յառաւելն փափկանալ՝ անկուշեցին զախրեալն · քք աքացեցին զնա՝ որ սիրեաց զնա · որով ցուցանի ապստամբիլ նց յայ և յԸդեմ դառնալ · որպէս գազան անզուսպ գիրացեալ՝ Ըդեմ դառնայ տածողին իւրոյ ։ Ոայս աքացելս ինն կամելով պարագայիւք իմն բացատրել՝ յաւելու · Նման զոր ած զուարակ եալ · և յետս եկաց յայ ետեւէ եարե ։ Նաւասրդ զուարակ՝ թէպէտ կարէ նշանակել արարչագործող կամ ստեղծող , բայց առաւելս նշանակի աստ արարող ժողովրդեան · քն որում նա ինքն ած զորդիսն իւր արար իւր ժողովուրդ ։ Այսնք և բառիւս ետեւէ՝ ցուցանի մասնաւորանք փրկող լինելնց ինն 'ի ծնդյուէ եգիպտոսի և յայլ բզմ չարեաց ։ Ոայսպիսի բարերարէր ասէ եթող ինքն , և թիկունս դարձուցեալ յետս եկաց 'ի նմանէ · և յարեցաւ յոտս օտարս ։ Նյս արարք ինքնութեան նկարեր յինքեանս զյետին յիմարութիւն իւրեանց՝ զոր մոլեգնեցան Ըդեմ ածն մերոյ ։

Նստանօր 'ի համարն 22 , ուր դնի անկուշեաց զախրեալն , զբառդ սիրելի՝ եօթնասունքն թարգմանեն յուղղական հոլովն այսնք · * անկուշեաց սիրելին ‖ · ուր դնի և յանձանշնչի մերում

քն

ըն ձեռագրաց ։ Նա ևս Թէոդէտ վայելչապէս
դնի առաջի, բայց հայելով 'ի կարգ բանին՝
բարւոք ևս երևի դնել 'ի հայցականն. որ է
* անկուշեալ զխրելին, եթող զաղաւրիչ իւր,
և յետս եկաց յոյն փրկէ իւրմէ ‖. Մեկնդ. զի
երբրայականն կարէ և 'ի հայցականն թարգ-
մանիլ. զի գրի անդ այսպէս. * գխրացաւ ուղիղն,
և անկուշեալ (զխրելին). գխրացար, ստանա-
րացար, յորացար, ( կամ ծածկեցեր, կամ ըն
սամար" ծածկեցար ). և եթող զնծ՝ ( որ )
ուրար զնա. և անդամնեաց զվէմն փրկութե իւ-
րոյ ‖ ։ Յայս հայի և Թարգմանութին լատինացւոց
և ասորւոց և այլոց. և յամի մեր բանին ըն նա-
խագրելոցդ բացատրի ։

Նա գործ յիմարութե որդւոցն էլի անբարոյէս
ակնարկէ 'ի յետին յայն չարութե իւրեանց, որով
անկուշեցին զորդին ոչ. թողին զնա, և իս-
պառ յետս կացին 'ի նմանէ իբրև 'ի փրկչէ իւ-
րեանց. և յարեցան յաստ օտարս, որ 'ի կայ-
սերս և յիշխանս Ձի. որով յանհնարին բար-
կացուցին և դառնացուցին զնա ։ Յայսպիսի
չարութի ոչ հայելով մարգարէին զատարացայց
այսր գործոյ՝ զոր յառաջն գործեցին, առաջի
մատուցանէ, և ասէ ։

24. Ներհայեցողութիւն նորա թարգմանեան Երբեայց. և
կամ Երբեայց փառաւորեալոցն նորա ։

Նպերախատութին էլի Թէոդէտե մեծ եղև 'ի
թողուլ նոյ զնծ, բայց առաւել ևս ծանրացա-
մեծութի նորին 'ի յարել նոյ 'ի չնծն օտար աս-
տուած, յորս ոչ դոյր ինչ յարգոյ՝ արժանի պաշտա-
ման, այլ անարգութի և դարշութի. 'ի սոսին
հայելով ասէ ։

Նուաղեցուցին զիս օտարոտեալ երեանց · և հալածեալ ե-րեանց դառնացուցին զիս ։ Կամի ասել · տեսէք զինչ գործ գործեցին որդիքն իմ · յետ գտանելոյ յինէն զազգ բարիս՝ Թողին զիս, և պաշտեցին զաստուածս օտարս · որով և բարկացուցին զիս · և յետ տեսանելոյ յինէն զգութ և զսէր, հեռացան յինէն, և մոռացուցին ինքեանց զկուռս գարշելիս · որով դառնացուցին զիս · մանաւանդ կարի իմն մեծապէս բարկացուցին զիս, և զքաղցրութիւն իմ՝ զոր ցուցանէի առ նոսա՝ փոխարկեցին 'ի դառնութիւն ։

Գիտել արժան է, զի մարգարէն ոչ դնէ՝ օտարոտիք հեթանոսաց կամ կուռք օտար ազգաց, այլ իւրեանց · որով կամի յայտ առնել՝ թէ այնքան յարեցան նոքա 'ի չաստուածսն, մինչև իւրացուցանել ինքեանց զնոսա, և իբրև զիւրեանց յատուկ աստուածս պաշտել զայնպիսիս · զորս ոչ գիտէին՝ ոչ ինքեանք, և ոչ հարք նոցա · ըստ որում դնէ 'ի յառաջորդ համարն ։

Եբր" դնի · * նախանձեցուցին զիս յօտարս (այս է յօտար աստուածս) · և 'ի գարշութիւնս (իւրեանց) զայրացուցին զիս ‖ · 'ի Լատ" դնի · * դրդռեցին ‖ · 'ի սոսին վերածին և այլ թարգմանութիւնք · այլ յարմի միտ բանին 'ի նախակարգեալ հային ։

Որքիմբք նշանակի և վիճակ ամբարշտաց, մանաւանդ չարակամ քրիստոնէից · որք յետ ճանաչելոյ յԱստուծոյ զայնքան բարիս՝ Թիկունս դարձուցանեն 'ի նմանէ, և ծառայեն ախտից իւրեանց իբրև չաստուածոց, զորս ոչ ճանաչէին նախնիք հարք նոցա · և զայսմանէ 'ի մասնաւորի խօսի 'ի յաջորդ համարն՝ հայելով 'ի գործս ինչուոց, և ասէ ։

Օ ։

25. Զոհեցին դիւաց և ոչ այ. դիցն՝ զորս ոչ գի-տէին. նորք և առժամայնք՝ զորս բնա-ւ ոչ ճանաչէին հարք նոցա.

Կուռք հեթանոսաց դևք կոչին, ևս և դիք. որով նշանակին դիւաք, յդ ածիկք, իբր թէ չար ածք. այլ են և նոքին խակ դևքն, որք 'ի սկզբանէ անտի զհետ եղեն ազգի մարդկան պաշտիլ 'ի նոցա իբրև զած. ոչ զի հատուսցեն նոցա զբարիս, այլ զի կորուսցեն զնոսա 'ի բա-րեաց. Այսպիսի չածց յաւէտ կամեցան պաշ-տօն մատուցանել որդիքն իղի քան այ կենդան-ւոյ՝ իւրեանց բարերարի. վասն գանգատի մար-գարէին ասելով.

Զոհեցին դիւաց և ոչ այ. դիցն՝ զորս ոչ գիտէին. նորք և առժամայնք, զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նոցա. Այսինքն թէ որդիքն իղի չարաչար անիրաւե-ցան յած. զի փոխանակ պաշտելոյ զնա՝ որ այն-չափ բարիս եցոյց նց պաշտեցին զսուտ ածս, յորս բնակէին դևք. և զոհեցին նց զոհս գար-շելիս. Նաև յանցանք նց ծանրացաւ յոյժ, զի զոր ճշմարիտ ած ճանաչէին՝ զնա թողին. իսկ զորս ոչ ճանաչէին՝ իբրև զած ընկալան, նա՛ զի՝ զոր 'ի հարց անտի իւրեանց գիտէին լինել ած կենդանի՝ յետս դարձան 'ի նմանէ, և զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նց իբրև յածս հարց իւրեանց մոլեցան. Յերբ՞ փոխէ ասելոյ. * զորս բնաւ ոչ ճանաչէին հարք նց ‖. կամ ըստ ած-աշնչին. * զորս ոչ գիտէին հարքն ձեր ‖. գրի. * ոչ խորշեցան 'ի նց հարքն ձեր ‖. Բայց գի-տելի է՝ զի եբրայական բառդ լօ շէարուում, կամ լօ շաառուում, նշանակէ նաև ոչ պաշտել. ուստի այլ ամ թարգմանիչք եդին, * զորս ոչ պաշ-

տեղւոյն հայրք նոյ ‖ . կին իւր եօթն" * զոր ոչ գի-տացին հայրք նոցա ‖ . զի նոքա պաշտէին զած կեն-դանի և ոչ զսուտ ածս :

Զայսպիսի ածս կոչէ մարգարէն նորս և առ-ժամայինս եկեալս : Նորս, զի ոչ էին ՚ի սկզբանէ, այլ նորոգ կարգեալք ՚ի տեղի ածոց : Առժամայինս, զի ՚ի մօտ ժմկաց հնարեցան . ոչ գնի յերբ" և յայլ թարգմանութիւն . նա զի չունէին և ոչ տևել, այլ էին առ ժամանակ մի . մի զի ոչ նոր հնարե-ցաւ պաշտօն նոցա , այլ նոյնպէս և վաղ վերջացելին յորդք անուանց նոցա : Արդ՝ թէպէտ և ամ մարդոյ յանցանք մեծ համարին՝ զայսպիսիս պաշտել, բայց առաւել քան զառաւել յան-ցանք մեծ էր Իսրայելացւոց՝ այսպիսեաց պաշտօն մա-տուցանել , թողեալ ՚ի բաց զճշմարիտ ած իւրեանց . և զի թողուլս այս ծանր էր յոյժ , սորին իրի կրկնելով իմն խօսի Մարգարէն և ասէ :

26 . Թողին զՏր՝ որ ծնաւ զնս . մոռացան զած՝ որ կերակրեաց զնս :

՚Ի համարն 8 մարգարէն կոչեաց զած՝ հայր որդւոց Իսրլի՝ յասելն . * ոչ սա է հայր քո՝ որ ստացաւ զքեզ ‖ . իսկ աստ մօր նմանեցու-ցանէ զնս իւր ծնանելոյ և ըստ սնուցանելոյ . ըստ որում նա ինքն ած յինքն էառ զազգն զայն և ծնաւ , իբր արար իւր որոշեալ եկե-ղեցի . և սնոյց զնս օրինօք և խնամովք իւ-րովք իբր կաթամբք . Այլ նք ոչ թողին զնա ՚ի տածիլն իւրեանց ՚ի նմանէ իբրև ՚ի հօ-րէ՝ ըստ զոր ասաց ՚ի համարն 23 , սոյնպէս թողին և ՚ի փայփայելն ՚ի նմանէ իբրև ՚ի մօ-րէ . վն այս ասէ .

Աս-

Թողէն զմր՝ որ ծնաւ զնա · նորացուն զած՝ որ նե-րկերեաց զնա ։ Սովին բանիւ քան զամ կենդա-նիս ապերախտ և անօրէն ցուցանէ մարդա-րէն զազգն Իլի · զի և անբանք 'ի սնանիլն կաթամբ ծնողաց իւրեանց՝ ոչ թողուն զնա · իսկ Իլացիք ոյք ծնեալք եղեն յայ՝ 'ի սնա-նիլն անդ 'ի նմանէ՝ թողլին զնա · և յետ այն-չափ սքանչելի սննդեան մոռացան զամ զոր արար նա · և անձնատուր եղեն յամենաչար թշնամատոյցս, այ 'ի կուռս · մինչև տաղտ-կացուցին զնա 'ի վե իւրեանց ։

Յածաշնչի մերում և յեբր՝ և յայլ թարգ-մանութիս յերկրորդ դէմս դնի այս բան յա-ւելն · * Թողեր զած՝ որ ծնաւ զքեզ · մոռա-ցար զած՝ զկերակրիչն քո ‖ · բայց 'ի նոյն հայի և այս ։ Այլ գիտելի է, զի յեբր՝ փոխ թողլոյ՝ մոռանալ դնի · և փոխ կերակրողի երկնող · և դրծլ փոխ այ՝ վէմ · և բանն գրի այսպէս · * վէմ ծնաւ զքեզ, մոռանաս · և 'ի մոռացօնս դարձուցանես զած զերկնողն քո ‖ · Այլ իմաստ բանին 'ի նախադրեալդ վերածի 'ի ցուցանել՝ թէ թողլին նոքա զած, որ իբր երկամբք ծնաւ զնա, և սնոյց · իսկ բառդ վէմ փոխ հզօրի դնի, որպէս և յայլ բազում տե-ղիս ։

Հոգևորապէս՝ վիմիւ նշանակի աստ որդին այ հզօրն յամի, զոր թողլին և լքին որդիքն Իլի յայնպիսի ժմկի և յայնմ առթի՝ յորում երկնեաց նա 'ի ծնանիլ զնոսա յորդիս այ · և ոչ միայն թողլին զնա, այլ և կամաւորա-պէս 'ի մոռացօնս արկին՝ զորս արար նա վասն նց ։ Այլ և նա մերժեաց զնա · որպէս դնի 'ի յաջորդ համարն ։ Սոյնն նկարագրի և չար վի-

վիճակ այնոցիկ քրիստոնէից, որք փնկ յարե_լոյ ՚ի վէմն քս՝ մոլին յախտս իւրեանց. որով և ՚ի նախանձ բարկութե շարժեն զնա. որպէս արարին որդիքն իղի. զորմէ խօսի ՚ի յետա_ գայդ ասելով.

27. Ետես տր և նախանձեցաւ. սրտմտեցաւ ՚ի վր ուստերաց և դստերաց նոցա. և ասէ:

Ըստ ասելոյ մեր ՚ի վերոյ՝ մարգարէն ՚ի հա_մարն 8, հօր նմանեցոյց զած. և ՚ի նախըն_թաց համարս՝ մօր. իսկ աստ լռելեայն իմն նմանեցուցանէ առն կամ փեսայի. արդ՝ որ_պէս այրն ՚ի տեսանելն զկին իւր՝ այլում լեալ, նախանձի, և վրէժս խնդրէ, սոյնպէս և ած՝ հայելով յորդիսն իղի. զի սմին ահա խօսե_լով մարգարէին՝ ասէ:

Ետես տր և նախանձեցաւ. սրտմտեցաւ ՚ի վր ուս_տերաց և դստերաց նոցա: Կամի ասել. յետ բա_զում բարերարութեց՝ զորս եցոյց ած առ որ_դիսն իղի, և յետ բազում չարեաց՝ զորս նոքա հատուցին նմ, տեսեալ թէ նոքա կամեցան լինել յաւէտ այլում քան ինքեան, ՚ի նա_խանձ շարժեցաւ, և սրտմտեցաւ, և եհեղ զպատիժ բարկութե իւրոյ ՚ի վր նոցա, եւս և ՚ի վր ուստերաց և դստերաց նոցին. և այս՝ ոպ դնի յածաշունչն՝ վս բարկութե նոցա, զի վասն բար_կացուցանելոյ նց զած՝ ոչ ինչ պակաս քան զհարս իւրեանց:

Եբր՞ փնկ նախանձելոյ՝ դնի հերքեաց. սոյն_պէս դնի և յարաբ. իսկ յասոր, և ՚ի լատ՞ դնի բարկացաւ. միայն յեօթ՞ դնի նախան_ձեցաւ. ամքին եւս ՚ի նոյն հային. զի այն նախանձայուզութի շարժէր ՚ի բարկութի առ՚ի հեր_

հերքել զնա ։ Իսկ բառդ բարկութի որ ըստ թարգմանութե այլոց ազգաց հայի յուստերս և 'ի դստերս , ոչ և մեկնեցաք , յերբ" վեր_ածի յինձ , յասելն ․ * Հերքեաց առ սրտ_մտութեն զուստերս իւր և զդստերս իւր ‖ ․ բայց նոյն է և այս ․ զի 'ի բարկացուցանել_ նոց զնա , նա ևս բարկութբ մերժեաց զնա ,

Այս նախանձ և բարկութի նոց մասնաւորա_պէս հայի 'ի վատթար քրիստոնեայս , և մանաւանդ յանդգնութս և 'ի զրկօղս ․ զորոց զգործս տե_սեալ նոց շարժի 'ի նախանձ , և սրտմտութբ յարձակի 'ի վր նոց ․ և երբեմն 'ի պատիժ մե_ղաց նոց թափէ զբարկութի իւր 'ի վր ուստե_րաց և դստերաց նոցա , և ( բարոյապէս ) 'ի վր ներքին և արտաքին գործոց նոց ․ և դար_ձուցանէ զերեսս իւր 'ի նոցանէ ․ որպ արար Իղացւոց ․ զորմէ խօսի 'ի յաջորդ համարն՝ ասե_լով ․

28 . Դարձուցից զերեսս իմ 'ի նոցանէ ․ և ցուցից նոցա զինչ լինելոց է նոցա յապայ ժամա_նակի ։

Դարձուցանել կամ թաքուցանել նոյ զերեսս իւր՝ եթէ 'ի չարեաց իցէ , նշանակէ անտես առնել , և ոչ յիշել՝ ըստ * Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց ‖ ․ իսկ եթէ 'ի մարդկանէ՝ նշանակէ անխնամ թողուլ , կամ լքանել , կմ ամփոփել զօգնութի իւր ։ Զայս միտ խօսելով ասէ ։

Դարձուցից զերեսս իմ 'ի նոցանէ ․ և ցուցից նոցա զինչ լինելոց իցէ յապայ ժամանակի ։ Այսինքն , յետ ցուցանելոյ իմ զայնքան բարերարութիս՝ որով_հետև նոքա թողլին զիս , թողից և ես զնս 'ի ձե_ռաց

ռուց խնդրոց · և անխափանելից զխնամս և զողորմու-
թիւն 'ի նոցանէ · և այժմէն եւս ցուցից նոցա՝ թէ
յոր թշուառութիւն անկանելոց են նոքա յապայ
ժամանակի · կամ ՃԼ երր" տեսից , կամ երևե-
ցուցից , զինչ կատարածս լինելոց են · կամ զինչ եղե-
ցի 'ի փախճանի աւուրց · որպէս գնի յայտ և յանձ-
ռնյցի ։ Իսկ փոխճանս , կամ կատարածին ,
կամ այս ժամանակաւ կարէ իմանալ լինել
նախ՝ ժամանակ դատաստանաց , յորում բաղում
անգամ տարընտրեցան որդիքն Իլի 'ի հարստա-
հարողաց իւրեանց ։ Երկրորդ՝ ժամանակ գե-
րութեան բաբելացւոց ։ Իսկ երրորդ՝ տիրապես ա-
նուն՝ ժամանակն այն՝ յորում 'ի մերժելն յին-
քեանց զորդին այն՝ մերժեցան իսպառ , և մատ-
նեցան 'ի յետին թշուառութիւն · զորմէ խօսի
մովսէս 'ի յաջորդ հատուածն , 'ի մէջ բերելով
զթիւրութիւն և զանհաւանութիւն նոյ , և ասէ ։

29\. Ծածուկք Տեառն Աստուծոյ մերոյ են , նոքա և որդւոց անհասանելիք ·
Նոքա նախախնամողութեան էին 'ի ծածուկ խորհրդոց ,
և տնօրինողութեան էին 'ի յայտնի խորհրդոց ։

Այս բանք հայրին 'ի յաստատութիւն վիճակի եբ-
րայեցւոց , 'ի ցուցանել՝ թէ ոչինչ իր օգտե-
լոց է նոցա 'ի բարերարութեան նոյ · և յոյժ օգ-
տակար իմն՝ մնալ նոյ մատնիլ յանդարգանս և յա-
տելութի այլոց ազգաց · իսկ թէ ընդէր՝ տայ
զպատճառն ասելով ։
Ծածուկք Տեառն Աստուծոյ մերոյ են , նոքա և որդւոց անհասանելիք ։ Այսինքն
ասէ այն՝ որ խոստացեալ է յուղղութեան · այլ ՄՌ գա-
ւազան թիւր՝ ջերմացեալ 'ի հրոյ՝ ուղղի ձնշե-
լով , այնպէս և ազգն Իլի թիւր գոլով՝ երբեմն
հրով տառապանաց և գերութ ձնշեալ՝ գայր
յուղղութի ։ Այլ ՁՅԼ 'ի լերինս այնչափ ունէին
խստու-

խստանալ , մինչև ոչ ևս ուղղել զմտ ոչ հաւա-
նելոյ նոցա ազգապարուն խիթք , որպէս և այժմ
տեսանեմք , վասն արձակապէս թիւր և անհա-
ւան կոչէ զնս · արդարև թիւրք և 'ի թիւրութ
խստացեալք իբրև զաղխս 'ի հնոցի , անհաւանք
և յանհաւանութ ստացեալք · խորամանկք 'ի
չարիս և 'ի մոլար մտածմունս , և կոյրք 'ի տե-
սանել զբարին և յընտրել զանմոլար խորհս ,
մոլեգնեալք և ցնորեալք 'ի բանս կեղծաւորա-
տիրս · ապստամբք և չարաչար հեստեալք 'ի
Ճշմարտութ ածային յայտնութեանց · Յայսպիսի
միտս աղա և յայսպիսի գործս շուայտելով նքս
յաւելուն շարժեցին զածն , որպէս ասէ :

Նոքա նախանձեցուցին զիս 'ի չաստուածս իւրեանց · և դառ-
նացուցին զիս 'ի կռապաշտս իւրեանց : Այն է այս բանն
Է այնմ զոր ասաց 'ի համարն 24 · այլ զոր անդ
եդ՝ բարկացուցանել , աստ դնէ նախանձեցու-
ցանել · բստ որում որպէս ասացաք՝ որդիքն իւր՝
որք գրեթէ խոտեցեալ էին նոյ՝ սուտ ածոց ծա-
ռայելով շարժեցին զածն 'ի նախանձ առ 'ի խնդ-
րելոյ վրէժ 'ի նոցանէ · որովհետև այսու գոր-
ծովք իւրեանց յայժ դառնացուցին զնա · վասն ո-
րոյ և ածն կրկին և կրկին սպառնայ նոցա ասե-
լով :

30 · Եւ ես նախանձեցուցից զնս յազգ անազգաւ ·
և անմիտ ազգաւ բարկացուցից զնս :

Այս հատուցումն թէպէտ և ոչ երևի հաւասար
մեծութ չարեաց որդւոցն իւր , բայց համեմատ
է պարծանաց նց , և յարմար եղանակի գործոց
նոցին · զի որչափ մեծ պարծանք էր նց ընտրիլն
յայլ քան զամ ազգս , այնչափ մեծ նախատինք
էր նց թողեալ լինելն յայլ քան զամ ազգս : Նաև

զի

զի յայլս յարեցան՝ ած եւ յարամարտապէս այ-
լովք սպառնայ նուաճել զնոսա նախանձու յա-
ւէլն ։

**Արդ եւ ես նախանձեցուցից զնս յազգ անազգաւ. եւ անմիտ ազգաւ շնձեցուցից զնս ։** Այսինքն թէ ոչ 'ի նմին բարկութե փրդուեցին զիս որդիքն իմ, նոյնպէս փրդուեցից եւ ես զնս 'ի նախանձ չար, քն թէ այնպէս արարից ընդ նոսա, զի լցցին չարի եւ խեղդիչ նախանձու. եւ այս յազգ անմտան. քն յայնմանէ զոր նոքա չազգ համարէին. իբր զի թողեալ զնոսա՝ բարձրացուցից փառօք զայս զե-ւի անմտան ազգս ։ եւ նոքա հայելով 'ի սոսա հաչեսցին եւ մաշեսցին նախանձու յանձինս իւ-րեանց ։ Յարուցից ապա եւ զանմիտ ազգս 'ի վր նոցա՝ որք յերեսս նոցա հարկանելով զառիս՝ զոր կորուսին՝ եւ զչարիսն զոր գտին՝ զկծեցու-ցեն եւ երգիծուցանիցեն զնս, եւ խարշատեց-ցեն զսիրտս նոցա, եւ իբր թէ տաղեսցեն ։ Այ-ամանթերի լցաւ յիսրայէլացիս, զի մերժեալ յայս՝ մերժեցան եւ մերժին յամս ազգաց. իսկ զորս նոքա հմրէին ազգ անմտան եւ անմիտ՝ քն են հեթանոսք՝ ընտրեալ յայս 'ի տեղի նց՝ աքան-չելի փառօք պատուեցան ։

Յայսպիսի կիրս կաշկանդեալ նոցա՝ յայլ իմն նախանձ տոչորեցան, տեսեալ թէ զիարդ զոր իւրեանք մերժեցին՝ ընկալան հեթանոսք իբրեւ զճշմարիտ ած. եւ զոր իւրեանք պաշտէին՝ մեր-ժեցին հեթանոսք ։ Ընդ այս զարմեալ նց՝ իւ-րեանք եւ յետս կացին 'ի պաշտելոյ զսուտ ածս, եւ սկսան պաշտել զած, զոր ոչ երբեք կամին թողուլ, ոչ մն յարելոյ 'ի նա, այլ մն նախան-ձելոյ ընդ մեզ. զի մք երեւեսցին 'ի վայր քն զմեզ, եւ անարգ քան զամենն ։ Ի սոյն միտս մեկնէ

զայս

զայս բան ՚ըզ յակոբ Մծբնայ Հայրապետ ՚ի Ճառն ԺԵ . յամէն յերեսս 360 . * Նախանձե-
,, ցան Է մեզ (հրէայք), և վն մեր ոչ պագա-
,, նեն երկիր կռոցն օտարաց . զի մի՛ նախատեցին
,, և զարտուղիցին և անարգիցեն ՚ի մէնջ . զի մեք
,, Թողաք զկուռս և զպատկերս . և անուա-
,, նեցաք զնոսա ստուերս՝ զորս Թողլին մեզ հար-
,, քն մեր . (ուստի) և սրտաբեկ երկնծեալք
,, (են) ՚ի նախանձ նախանձու . զի մնաք և եղ-
,, եաք ժառանգ որդք փոխանակ նոցա . . . (և ա-
,, հա) մեօք նախանձեցուցց զնա (ած) ||.

Տարակոյս մեր ՚ի կամ . Ձա . զայս բան յայլ-դէմս շրջելով յարմարեցուցանէ այսմ վեճաբանութեան զոր արար տէր մեր ՚ի նախանձեցուցանել և ՚ի զկծեցուցանել նր զրանսարկուն ՚ի վե խաչին, և ՚ի բարձրացուցանել զազգս անպիտանս, ըստ զհեթանոսս յեկեղեցի ոը . Այլ Թէ որչափ և զիարդ զօրէր ուժգնութի այսր ածային վեճաբանութեն որ իբրև բոց վառեցաւ, զայն յայտ առնէ մարգարէն ՚ի սկիզբն յաջորդ օրհնութեն .

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Գ.

## Սպառնալիք այ ընդդէմ ամպարշտաց 'ի դէմս որդւոցն իէլ ·

Օրհնութէ մովսէսի մարգարէի ·
('ի սաղ · ծը :)

1 · Որ հուր բորբոքեցաւ 'ի բարկութենէ իմմէ · այրեսցէ և իջցէ մինչև 'ի դժոխս ներքինս ,
2 · * Կերիցէ զերկիր · և զամբոյս երկրի նոցա · հալեսցին հրով · բորբոքեսցին հիմունք լերանց նոցա :
3 · * Կուտեցից չարիս ամ 'ի վր նոցա · և նետիւք իմովք սպառեցից զնս :
4 · * Մաշեսցին և հիւծեսցին 'ի սովոյ · գազանաբեկ եղեւ անկեալ ամ թռչնոց երկնից :
5 · * Լուր առանց բժշկութէ · առաքեցից 'ի վր նոցա զգազանս անտառի , որք այրն և անդր թագաւորեսցեն զնս ընդ երկիր :
6 · * Արտաքոյ մանկահասակս արասցէ զնոսա սուր · և 'ի ներքոյ 'ի շտեմարանաց նոցա անկի ահաւորք ահի :
7 · * Զերիտասարդս կուսանօք հանդերձ · և զծերս հասակաւ ընդ ծերովք հանդերձ :
8 · * Ասացի թէ ցրուեցից զնոսա · և դադարեցուցից զյիշատակս նոցա յաւուրց :
9 · * Թէ ոչ վս բարկութէ թշնամեացն · զի մի երկայնակեաց լինիցին : և մի բարձ

բա

Սոյն օրհնութէ մովսէսի ըստ թարգմանութէ աշխարհիկ ·
(Է · օրէն · ԼԲ · 22 ·)

22 · Որ հուր բորբոքեալ է 'ի բարկութենէ իմմէ · այրեսցէ մինչև 'ի դժոխս ներքինս : Կերիցէ զերկիր և զարմտիս նր · բորբոքեսցէ զհիմունս լերանց :
23 · * Կուտեցից 'ի նոսա չարիս , և զնետս իմ սպառեցից 'ի նոսա ,
24 · * Մաշեալք սովով և կերակրով թռչնոց :

Լարս առանց բժշկութէ · և ժանիս գազանաց առաքեցից 'ի նոսա , սրտմտութբ քարշելոց զնոսա ը երկիր :
25 · * Արտաքուստ անզաւակեսցէ զնոսա սուր · և 'ի շտեմարանաց երկիւղ :

Զերիտասարդն հանդերձ կուսիւն և զստնդիացն հանդերձ հաստատելով ծերով :
26 · Ասացի՝ բամ , ցրեցից զնոսա , դադարեցուցից 'ի մարդկանէ զյիշատակս նց :
27 · * Թէ ոչ վս բարկութէ թշնամեաց · զի մի երկայնակեաց լինիցին · և զի մի

Ղ

բարձ

բարձրասցին հպարտասցին թշնամիքն և ասասցեն .
10 . * Թէ յեռն մեր բարձր է, և բազուկ մեր հզօր . և ոչ Տէր Աստուած արար զայս ամ .
11 . * Զի ազգ մի խորհրդակորոյս են նոքա . և ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն . և ոչ խորհեցան 'ի միտ առնուլ զայս ամ . և արդ ընկալցին զամօթ յանցանս իւրեանց .
12 . * Զորման մի մեծ այս էր . զիարդ մի զհազարս հալածեսցէ , կամ երկուք զբիւրս չուեցուցեն .
13 . * Թէ ոչ էր Աստուած վաճառեալ էր զնոսա . և փակեալ իցէ զնոսա 'ի ձեռս թշնամեաց նոցա .
14 . Զի ոչ են Տէրք նոցա որպէս Աստուած մեր . այլ թշնամիք մեր են դատաւորք .
15 . * Յայգեաց Սոդոմայ էր որթ նոցա . և փառն նոցա 'ի Գոմորայ .
16 . * Խաղող նոցա խաղող դառնութեան . և ողկոյզ նոցա 'ի դառնութեան լեղւոյ .
17 . * Արտասուաց բարկութեան վիշապաց գինի նոցա . որդնաթափութիւն իժից անձնարկքն առանց բժշկութեան .
18 . Ո՛չ այս ամ ժողովեալ է առ իս . և կնքեալ պահի 'ի գանձս իմում .
19 . * Յաւուր վրէժխնդրութեան հատուցից նոցա , 'ի ժամանակի՛ յորում հարցի չարէ ոտն նոցա .
20 . * Մերձ է օր կորստեան նոցա . հասեալ է պատրաստութիւն Տր 'ի վր նոցա .
21 . * Դատի Տէր զժողովուրդ իւր . և 'ի ծառայս իւր մխիթարի .
22 . * Զի տեսցէ զնոսա լքեալս , և մաշեալս 'ի գե-



բարձրասցին հակառակորդքն և ասիցեն .
Թէ ձեռն մեր բարձր . և ոչ Տէր արար զայս ամենայն .
28 . * Զի ազգ խորհրդակորոյս են . և ոչ գոյ 'ի նոսա
29 իմաստութիւն . * և ոչ խորհեցան 'ի միտ առնուլ զայս . արդ ընկալցին առ յապայ ժամանակս .
30 . * Զիարդ հալածեսցէ մի զհազարս , և երկուք չուր ժեսցեն զբիւրս .
Եթէ ոչ Տր վաճառեաց զնոսա .
31 . * Զի ոչ են իբրև զՏր մեր Տէրք նոցա . և թշնամիք մեր վատախորհուրդք .
32 . * Զի յորթոյ սոդոմայ է որթ նոցա . և ուռ նոցա 'ի գոմորայ .
Խաղող նոցա խաղող լեղի . և ողկոյզ նոցա դառնութեն .
33 . * Սրտմտութն վիշապաց գինի նոցա . և սրտմտութն իժից առանց բժշկութե .
34 . * Ո՛չ ապաքէն այս ամ ժողովեալ է առ իս . և կնքեալ կայ 'ի գանձս իմում .
35 . * Յաւուր վրէժխնդրութե հատուցից , 'ի ժամանակի յորում սխալեսցի ոտն նոցա .
Զի մերձ է օր բարկութե նոցա . և հասեալ պատրաստեալ կայ ձեզ .
36 . * Զի դատեսցէ Տր զժողովուրդ իւր . և 'ի ծառայս իւր մխիթարեսցի .
Զի եսես զնոսա լուծեալս և լքեալս . և մաշեալս 'ի

բաւթէ :
23 . * Եւ ասասցէ Տէր . ո՞ւր են
դիքն յեր . յորս յուսացեալ էին
դոքա 'ի նոսա . զորոց զճարպ
զոհիցն ուտէին . և ըմպէին
զգինի զոհիցն .
24 . * Արդ յարիցեն , օգնեսցեն .
և եղիցին ձեզ թիկունք :

գերութէ .
37 . * Եւ ասասցէ . ո՞ւր են
աստուածք նոցա . յորս յուսա-
38 ցեալ էին 'ի նոսա . * զո-
րոց զճարպ զոհից նոցա ու-
տէիք . և ըմպէիք զգինի
նուիրաց նոցա :
Յարիցեն օգնեսցեն ձեզ . և
եղիցին ձեզ թիկունք .

# Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

## Օրհնութիւն Մովսէսի մարգարէի .

Այս օրհնութիւն է երկրորդ մասն նախընթաց օրհնութեան Մովսէսի . յորում սպառնայ Ած թափել զմեծամեծ և զարհուրելի պատուհաս 'ի վր որդւոցն Իղի , և 'ի վր ա՛ և իցէ ամպարշտի . և առ հաստատութիւն ստուգութեան այսր' 'ի ձեռագիրս ինչ մեր Ածատես կոչմամբ դնի անուն հեղինակին 'ի վերնագրի . զի որ ընթերցցի կամ երգեսցէ զերգս զայս , տեսցէ թէ հեղինակ սորա Ածատես ոմն է 'ի մարգարէս , մի ինչ երկբայեսցի . այլ անտարակուսելի հաւատալով երկիցէ յոյժ , և նմա միայն ծառայեսցէ : Աւերեւս հարցանիցէ ոք՝ թէ ընդէր զայսպիսի սպառնալիս երգս առաջի անէ Մովսէս առ որդիսն Իղի : Արժան է այսմ պատասխանել , թէ որպ զի ծանուսցէ եբրայեցւոց զհանդերձեալսն՝ զգուշասցին . բայց քանզի կարի իմն դառն են սպառնալիքն՝ 'ի ձև օրհնութեան երգոց 'ի մէջ մատուցանէ զբանն :

## Բ Ա Ն :

1 . Զի հուր բորբոքեցաւ 'ի բարկութենէ իմմէ . այրեսցէ և իջցէ մինչ 'ի դժոխս ներքինս :

2. Մերեցէ զերկիր և զամ բոյս երկրի նոցա. Հաւատացէն հրով. Բարեբանեցէն հեմանտ ըերանց նոցա.

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Այս բանք և որք զհետ այսր փոխակերպութիւնք են և չափազանցութիւնք. փոխակերպութիւնք՝ զի զայլ ինչ հնչեն, և զայլ ինչ ցուցանեն. չափազանցութիւնք՝ զի զառաւելն ասելով՝ զառաւելագոյնն տան իմանալ. և պատճառ այսպիսեաց խօսելոյ մարգարէին է՝ զի հայեցեալ 'ի վրէժխնդրութիւն այ, և տեսեալ թէ ոչ կարէ զսաստկութին նորին իւիք յայտնել, այսպիսի բանիւք ջանայ զնոյն ցուցանել. համեմատելով զգործ վրէժխնդրութեան այ՝ ներգործութեան բորբոքեալ հրոյ, և արձակման նետից, սովու և սրոյ, եւ և գիշերոյ գազանաց և արհաւրաց, ևն. Իսկ նախ համեմատութ ներգործութե հրոյ խօսելով ասէ.

Զի հուր բորբոքեցաւ 'ի բարկութենէ իմմէ. այրեսցէ և իջցէ մինչ 'ի դժոխս ներքին։ Ըաղկապս զի՝ տալ հայիւ յայն այմ՝ զոր եդ 'ի նախնմնեաց օրհնութե. իբրթէ ասէր. այս այմ անշուշտ կատարեսցի, զի հուր բորբոքեցաւ 'ի բարկութէ իմմէ. Իսկ հրով այս յայտ է 'ի նախագրելոյդ, իմացեալ լինի սաստ ներգործութի վրէժխնդրութեն այ. և բորբոքումն ցուցանէ զպատրաստել այնր և զսաստկանալ. յր մտո կամի ասել. պատրաստեալ է վրէժխնդրութի իմ իբրև զհուր բորբոքեալ. և այնչափ սաստկացեալ է, մինչև հասանել և անցանել ընդ այմ, եւ և ընդ դժոխս ներքինս, և այրել զայմ։

Ու ասէ՝ հուր բորբոքեցաւ յինէն, այլ 'ի բար-

տութենէ իմմէ. զի ինքն բարի գոլով բնութ՟՝ ոչ բոր-բոքի՝ չար առնել ումեք ։ Այլ սակայն 'ի մե-ղանչել մեր ընդդէմ նր՝ բորբոքի բարկութիւն նր ըստ վրէժխնդրութեան նորին. բայց և 'ի բորբոքիլն անդ՝ առ ժամայն ոչ պատուհասէ. զի է գրե-ցելում, բարկանայ, և ոչ մեղանչէ, ըստ ոչ պատժէ. այլ երկայնամիտ լինի. իսկ իբրև տե-սանէ՝ թէ չէք յոյս դարձի մերոյ, սպառնայ թափել զյաւիտենական բարկութիւն իւր մինչ 'ի դժոխս ներքինս ։ Այլ առ 'ի ցուցանել, թէ ոչ սոսկ սպառնալիք են այն իւր սաստք, եր-բեմն յերկրի աստ ևս արձակէ զմեծամեծ պա-տիժս. զի 'ի պատժոց անտի իբր 'ի սոտ՛երոց կամ իբր յառհաւատչէից ծանիցուք զյետին սոս-կալի պատուհասն ։ 'Ի սոյն աչս ակնարկելով մարգարէին՝ առաջի առնէ աստ զայնմիկ սպառ-նալիս իւր. և կամելով առաւել սաստիկ ցու-ցանել զներգործութիւն նորա՝ յարէ զկնի, և ասէ ։

2. Կերիցէ զերկիր և զամ բոյս երկրի նորա. Վառես-ցէն հրով. բորբոքեսցէն հիմունք լերանց նոցա ։ Այ-սինքն թէ՛, սաստկութիւն բարկութեան իմոյ պատ-րաստ է այրել և մաշել զերկիր համօրէն այնո-քիւք՝ որք են յերկրի, եթէ բոյսք իցեն, և եթէ կենդանիք. ևս և որք են 'ի ներքոյ լե-րանց՝ եթէ հողմոտք իցեն, և եթէ ստորոտք, յորս իբր 'ի հիմունս հաստատեալ կան լերինք ։ Այլ այս ոչ այլ ինչ ցուցանէ՝ բայց եթէ անպի-տան կացուցանել զերկիր, և զորս են յեր-կրի ։

Սոքիմբք նշանակի և սաստկութիւն վրէժխնդ-րութեան իւր 'ի վր թշնամեաց իւրոց, մինչդ 'ի վր որոց դատապարտեալ են 'ի հուրն դժոխոց. յորում ունի

ունի այրել և մաշել զնմ աշխարհաւէրս իբրև զերկիր, և զնմ հպարտս իբրև զհիմունս լե-րանց :

Փոխաբերաբար՝ այս բանք ակնարկեն 'ի ժա-մանակ աւերմանն երուսաղեմի առ գերութն բաբելացւոց. զի բարկութին այ իբր հուր բոր-բոքեալ՝ էջ յանժամ 'ի վր իւրեցւոց. աւերեաց և զեղէմ 'ի ձեռն նաբուգոդոնոսորայ . և այր-եաց զտաճարն ձեռամբ նաբուզարդանայ դահ-ճապետի. և եկեր, որ սպականեաց զօրգիսն իւ-րեանց զփոքունսն իբրև զխոյս, և եթէ զմեծա-մեծսն իբրև զհիմունս լերանց . զորս և վար-եաց 'ի գերութիւն, որ 'ի բաբելոն : Այլ այս կա-րէ հայել և 'ի յետին աւերած հրէաստանի 'ի ձեռն վեսպասիանոսի և տիտոսի :

Նմանաբանօրէն այսու հրով չարաչար մեր խմա-նայ նախ զբանն ած . որ էջ յորովայն կուսին, և մարմնացեալ 'ի նմանէ՝ աւերեաց զդժոխս : ուստի 'ի կան ձրէ խրախուսելով զհեթանոս երգէ և ասէ . * ծանիք հարէք ած հեթանոսք,
„ և օրհնեցէք զած . զի հուրն ած բանն մարմ-
„ նացաւ 'ի կուսէն . աւերեաց զդժոխս . և
„ զզօրութի մահու եղծ || : Նորին՝ խմանայ զզօ-րութի որդւոյն այ յայրելն զաւնուի դժոխոց և զմահու, յասելն 'ի կան ձրն . * հրով
„ (որ զօրութ) աստուածդ քո Քս այրեցեր զդրունս
„ դժոխոց, և լուծեր զմահ . և զանմահութի
„ պարգևեցեր ազգի մարդկան || : Սոյն եր-գէ և 'ի կան ձրը, ասելով . * հրով աստուածդ
„ քո Քս իջեր 'ի ստորին վայրս մահու . և զնիգս
„ դժոխոցն այրեցեր հզօրեղաբ . զքեզ բարե-
„ բանեմք Բ հրեղէն օրհնաբանոն || : Իսկ այսմ երգէ և 'ի կան ձրթ, ասելով . * աստուածային

,, հուր կենդանի զօրութ՟ն որ հոգւոյն այրեաց
,, զգրուանս դժոխոց. և զարգելեալսն 'ի նմա
,, կորզեաց 'ի կեանս. և պայծառեաց մեզ կեն_
,, դանութի ‖ ։ Յայս հայի և այն՝ զոր ասէ 'ի կան
ՃԻԷ. * սքանչելի հուր ա՟ծութե քո որ տարածե_
,, ցաւ առհասարակ ը՟ տիեզերս. և հրդեհ_
,, եալ բոցակիզեաց զպատրանս նախաստեղծին.
,, զի զա՟մսին վերակոչեաց 'ի մահուանէ յան_
,, մահութի ‖ ։ Երգ՝ իմանայ զբարկութին ա՟յ,
յոր սակս ասէ 'ի կան ՃԼ՟Ա. * ա՟ծային բար_
,, կութ՟ հրոյ քո ք՟ս կիզէր զդժոխս. և զստո_
,, րինս արձակեցեր զըմբռնեալսն առ 'ի նմա_
,, նէ. զքեզ օրհնեմք թագաւոր յաւիտենից ‖ ։
Յայս հայի և այն՝ զոր երգէ 'ի կան ՃԼ. ասե_
լով. * որ զհուր ա՟ծութե քո ք՟ս բորբոքեցեր
,, ը՟ տիեզերս ա՟մ. բոցակիզեալ զբռնութի
,, թշնամւոյն ‖ ։ Որդ՝ 'ի Բանայ զաղդոնութի
կամ զուժգնութի չարչարանաց և խաչելութեն ք՟սի
'ի խորտակել զբռնութի սատանայի 'ի վ՟ր երկրի.
ուստի երգէ 'ի կան ՃԻԴ. ասելով. * հուր բոր_
,, բոքեցաւ 'ի զօրութէ խաչի քո ք՟ս՝ կիզելով զթշ_
,, նամին 'ի վ՟ր երկրի. որ հակառակէր ստեղծ_
,, ուածոց ձեռաց քո. իջանելով քո 'ի դժոխս
,, դերապանծ իշխանութ՟ն յաղթեցեր մահու
,, հզօր զօրութ՟, կենադործելով զըմբռնեալսն
,, առ 'ի նմանէ ‖ ։

Նորոյապէս՝ 'ի մեկնել մարդոյ՝ բարկութին
ա՟յ իջեալ 'ի հոգի ն՟ր իբրև 'ի դժոխս՝ լափէ
զհոգևորական կեանս նորա՝ և այրէ զհիմունս
լերանց, ա՟յ զա՟ծային նպաստս, յորս իբր 'ի հի_
մունս հաստատէին լերինք, ա՟յ մեծամեծ գործք
առաքինութեց ։ Զայս եդեւ՝ առաջի առնէ և
զհամեմատութի գործոց վրէժխնդրութեն ա՟յ ը՟

ներ_

ներգործութիւնս արձակման նետից՝ և ասէ :

3. Ժողովեցից զչարիս ամ՛ ի վր նոցա . և նետս իմ սպառեցից ի նս :

Արձակել կմ հատուցանել մարդոյ զչարիս՝ կարէ լինել կմ անցողաբար և կմ մնայորէն . և ևս՝ կմ միակի , և կմ բազմաւորակի . զի հարկանել զոք գաւազանաւ սուսերաւ՝ է հատուցանել զչար անցողաբար , և իբր միակի . իսկ յաւելուլ 'ի վր հարուածոյ զբանտարկութի , և 'ի բանտարկութե զհիւանդութի , և 'ի հիւանդութե զպարտս , և 'ի պարտաւորութե զնախատինս , և այլն՝ որ 'ի կարգի , է հատուցանել նմ զչար իբր մնայորէն և բազմաւորակի . զի առանց անցանելոյ միոյն դիզի միւսն 'ի վր : Այլ զի ներգործութի այրեցուե հրոյ մնածի իբր անցողական , զայն եդեալ մարգարէին՝ զմնայորէնն ևս առաջի մատուցանէ բառիւս կուտեցից . զի որում կուտեն է դիզել 'ի վր եղելոյ կմ մնացելոյ . և այսու կամի ցուցանել զյաւելուլ ներգործութե վրէժխնդրութեն այ . ըստ որոյ ասէ :

Ժողովեցից զչարիս ամ՛ ի վր նոցա . և նետս իմ սպառեցից ի նս : Այսինքն թէ որչափ պատիժք կայցեն՝ թափեցից 'ի նս իբրև զնետս . մինչև ոչ ևս մնալ իրիք տեսակի պատժոյ՝ զոր ոչ արձակեցից 'ի նս : Այլ զայս դնէ ըստ ձևոյ չափազանցութե , առ 'ի ցուցանել զբազմապատկութի պատժոցն և զսաստկութի նոցին . յոյր սակս յեբր , և յեօթ , որպէս և յածաշնչի մերում գրի * և զնետս իմ սպառեցից 'ի նս ‖ . որոյ փոխան աստ եդեալ է * նետիւք իմովք սպառեցից զնս ‖ . որով կամի ասել , թէ 'ի սպառել նետիցս՝ սպառեցից և

'ի վերջ հասուցից զինմ պարծանս և զինմ՝ վայ-
ելչութիւնս նոյ.

Սորին եւ ը՛ նախագրելոցդ հայլին նախ յանցս աղետից՝ որք անցին յաւերմանն երուսաղէմի. Երկրորդ՝ 'ի յետին պատիժս դատապարտելոց. և խորհրդաբար 'ի գործս վերծխնդրութեան զոր եցոյց քո՛ ը՛ դէմ դժոխոցն. զորս իբրև մաշեալս և հիւծեալս՝ մեռեալ թէ իբրև զգեցեալ ընկէց 'ի բաց. և առ այս յարէ, և ասէ.

4. Մ`աշեալք և հիւծեալք 'ի սովոյ. փաղանաբէնէ կէր
անկեալ են բնաշխոց երկնից.

Սուր տիրէ առ մաշիլն մարդիկ և հիւծիլն. մաշիլն առ 'ի դատանել զկերակուր. հիւծիլն՝ զի կեր սակաւ գտեալ՝ ոչ կարեն յագիլ, և կեր բնաւ չգտեալ՝ մեռան նուաղեալք. որով և լինին կերակուր գազանաց. յայս վիճակ նմանութե նկարէ մարգարէն զլինելս եւ և զամբարիշտս, ասելով. Մ`աշեալք և հիւծեալք 'ի սովոյ. փաղանաբէնէ կէր անկեալ են բնաշխոց երկնից. Կամի ասել. ոչ միայն կոտորեցից զչարիս 'ի վերայ նոցա, այլև զուրկ կացուցից զնո 'ի բարեաց՝ որ զամենայն, որք իցեն հաշեալք և հիւծեալք. և դք որք 'ի սովու ոչ գտանելով կերակուր՝ կիսամեռ անկանին յանցս ճանապարհաց, և գազանաբեկ լինին, և գէշք նոցա լինին կերակուր թռչնոց, այսպէս լիցին ասէ և իմացեալք. իբրզի 'ի սովոյ մեծային նպատակ կիսամեռ լեալք՝ կե' ը հոգւոյ մեռեալք, 'ի թշնամեաց իւր 'ի գազանաց պատառոտեսցին, և 'ի դիւաց՝ որք օրինակին 'ի թռչունս երկնից՝ լափեսցին. Այսպէս լինիցի և իմ ամպարիշտ մարդոյ, և առաւել եւ դատապարտելոցն 'ի դըժոխս.

Այն

Սոյն այս անձք անցին և Է դևս , որք 'ի ջանալն ձեռամբ հրեից 'ի մահ մատնել զորդին ած , զօրութ՟ մահու նորա մատեցան 'ի բանտակալութե՟ խաւարանց . և հիւծեցան 'ի չարութե՟ . և անկան ներքև գեհ առաջի Թռչնոց երկնից , ըստ առաջին հրեշտակաց ։

Յերը" և յայլս յետին հատուած այսր համարոյ փոքր մի այլազգ դնի՝ վս համաձայնութե՟ եբրայական բառիս ռեշեֆ . զի այս բառ 'ի հասարակի նշանակէ Թռչող ինչ այլեցող . ըստ այլեցողութե՟ 'ի Թարգ" ասմարացւոց եդեալ է խարոյկ , և յարաբ" տապ ջերմութե՟ . ըստ Թռչելոյն՝ յեօթ" եդեալ է Թռչուն , և 'ի լատ" հաւ . յայսցանէ յաւելմամբ իմն եդեալ է 'ի մերումս * գազանաբեկ գեհ անկեալ առ Թռչնոց երկնից ‖ ։ Իսկ զի բառդ ռեշեֆ նշանակէ և այս չար , յասոր" եկիւրանչիւրն ևս է եդեալ , ըստ որիք չարք և Թռչուն . այլ ըղԹարգմանութե՟ սոցա տես 'ի յաջորդ համարն . բայց ամէքին ևս հայլին 'ի պատիժ պատուհասի . զոր առաջի եդ ասա մարգարէն . և յաւելլով 'ի նոսա զայլս ևս՝ ասէ ։

5 · Ի նրս տաւոնց բծշխուէ ։ Ի հրձակեցից 'ի վը՟ նոցա դժողնոն անհնարին . որք այսր և անդր թափաշնուցէն զնոսա ընդ երկիր ։

Այս սպառնալիք պատժոց առաւել երևի քան զայլսն . ըստ որում անբժշկելի դնէ՝ յասելն ։ Ի նրս տաւոնց բծշխուէ ։ Իբրև Թէ ասէր . առաքեցից 'ի նոսա լոյս , այսինքն Թէ արձակեցից 'ի լարից աղեղան իմոյ զդժնդակ նետս . որոց խոցուածն անբժշկելի միայ . յաւիտեան . փոխաբերաբար՝ լաւիմ կարէ նշանակիլ ասա

ըստ

ըստ վարդանայ ուղղուի և անսխալութիւն անմե-րելի դատաստանացն իւր․ որով իբր լուսի՛ արհեստականաց չափեալ զշարունի գործոց իւ-րաքանչիւրոց՝ հատուցանէ նոցա ըստ արդեանց նոցին, յաւելեալ պատիժս ՚ի վե՛ր պատժոց․

ըստ որում դնէ ՚ի յաջորդ բանսդ ։

Այլ աստ գիտելի է՝ զի այս հատուածս բա-նի՝ ըստ է լուրս ——— Եծչլուե՝ հայելով յեբր" և յասոր՝ համարի իբր մասն նախընթաց հա-մարոյ․ զի յեբր" ՚ի միասին առեալ՝ դնի այսպ․ * այրեցեալք սովով և ձարակեալք (կամ կե-րեալք) խարուկաւ և դառն հարուածով ‖ ․ ՚ի Թարգ" սամարացւոց դնի․ * առ սովու հա-ցի նորա զխարոյկս կործեսցէ դառնութեց ‖ ․ ՚ի լաւ" դնի * ծախեսցին սովով և ձարակես-ցեն զնոսա հաւք դառն խածուածով ‖ ․ յեօթ" դնի․ * մաշեալք սովով, և կերակուր լինե-լով թռչնոց․ և յետնակապ անբժշկելի ‖ ․ ըստ կապ կամ ախտ կաշկանդիչ ձեռաց ՚ի յետս առանց ազատութե ։ Իսկ ըստ այսմ յանելն ՚ի մեզ՝ լուրս առանց բժշկութե, այս բառք նախ-դրի՛ն իմն յարին ՚ի նախընթացն այսպէս․ մա-շեալք և հիւծեալք եղիցին ՚ի սովոյ, գազա-նաբեկ գէշ անկեալ ում թռչնոց երկնից, և կաշկանդեալք ՚ի լուրս կապանաց առանց բը-ժըշկութե ։

Իսկ ՚ի Թարգ" արաբ" երկոքին համարքդ ևս ՚ի մի յարին այսպէս․ * զգորբոքումն սովու և զտապ ջերմանե և զմահ դառն և զժանիս գա-զանաց առաքեցից ՚ի նոսա հանդերձ արտմը-տութբ զեռնոց հողոյ ‖ ․ յասոր" դնի․ * խոշ-վեսցին սովով․ և տացին նոցա ոգիք չարք․ և թռչնոյ տայց զնոսա․ և զգազան ժանեայ գըր-

գուե-

դնեցից 'ի նոսա հանդերձ սրտմտութբ օձից բըռ-ղայց զհող || · Նմանաև յանդի գիտութեան բանին 'ի նոյն ակնարկէ , 'ի ցուցանել զաստկութիւն և զյա-ձախութի պատժոյն ։

Մարդան վիշապ՝ տեսեալ թէ յարաք" 'ի վերջոյ զեռուն դնի , և յասորւոյն օձ , յայն վերածէ նշանակութիւն բառին լար · դուցէ հայելով և 'ի նշանակութիւն եբրայական բառիս ռեշէֆ՝ որ դնի 'ի նախընթացն հիմն · զի այս բառ սողուն և ս նշանակէ · զոր ոմանք օձ թարգմանեն · և ըստ այսմ առմամբ խօսելով վարդանայ՝ ասէ · * տեսակ է այս օձից , որ լար կոչին բարակք , „ որք թռչմամբ և շաչմամբ հարկանեն զդէմս „ երեսաց · և թիւնալից արարեալ անդէն ( սպա-„ նանեն ) · յորս ոչ մտանեն թովչութիւնք և ոչ դեղք „ բժշկութե || · Օրպիսի և կայծին նմանս արտաքոյ ոմն արձակել 'ի վր հրացոց և այ-լոց ամպարշտաց ։ Զորս յաւելեալ և զգազանն ասէ ։

Արձակեցից 'ի վր նոցա գազանս անապատի · որք այսր և անդր քարշեսցեն զնոսա ընդ երկիր ։ Նմանապէս զայն-պիսի գազանս արձակեցից 'ի վր նոցա՝ որք չա-րաչար տագնապեսցեն զնոսա · և ժանեօք իւ-րեանց այսր և անդր ը երկիր քարշելով տան-ջեսցեն զնոսա · որպէս պատահեցաւ յերկրին սամարացւոց յարս ասորեստանեայց · ( դ թագ · ժէ · 25 ։ )

Զատուածաշնչի մերում այս բան գրի այսպէս · * և ժանիս գազանաց առաքեցից 'ի նս ( հանդերձ ) սրտմտութ || · ուր փոխ սրտմտութե՝ 'ի սաղմոսա-րանի եդեալ է անապատ · յայլ մտօ առեալ զեբրայական բառն ։ Նաև այս բառ ոչ վերածի 'ի բարկութիւն այ , այլ 'ի կատաղութիւն գազանացն ·

որ-

որպէս թէ եղեալ էր · արձակեցից 'ի վ̄ր նոցա զժամնիս գազանաց կատաղելոց : Նաև հայելով յեբր" և 'ի թարգ" ասորւոց և արաբացւոց՝ վէրամբի 'ի կատաղութի սողնոց կամ զեռնոց · զի յասոր" որպէս տեսանի 'ի վերոյ՝ դնի · * հանդերձ սրտմտութ̄բ օձից բրողաց զհող || · և յարաբ" · * հանդերձ սրտմտութ̄բ սողնոց հողոյ || : Իսկ յեբր" փոխ սրտմտութեն՝ թոյն դնի , յասեր · * հանդերձ թունիւ զեռնոց երկրի || : Այլ զի զեռնոց և սողնոց է այսր անդր շարժելով տարուբերիլ 'ի սաղմոսարանի մերում եղեալ է բառդ այսր և անդր :

Նաև յանի դիտումն բանին կարգի 'ի յայտարարութի թշնամութե պատժոցն , յորս հանդերձեալ էին մատնիլ իսրայէլացիք : Բայց առաւել ևս 'ի ցուցանել զխստագոյն հանգամանս պատժոց դատապարտեցելոցն 'ի դժոխս , 'ի մատնիլ նոցա 'ի ձեռս անմարմին գազանաց · և բարոյապէս՝ 'ի ցուցանել զթշնամութի վիշապի ամպարշտաց , որք մատնեալ 'ի ձեռս ախտից իւր 'ի ձեռս գազանաց՝ ձգին և քարշին չարեաց 'ի չարիս : Նաև կամելով մարգարէին ցուցանել , թէ յո՞ր կողմանց հանդերձեալ են նոքա նեղիլ՝ յարէ զկնի , և ասէ :

6 · Արտաքուստ մանկազուրկ արասցէ զնոսա սուր · և 'ի ներքուստ 'ի շտեմարանաց նոցա ահաւէ արհաւերք ահէ :

7 · Զերիտասարդս կուսանօք հանդերձ · և շաղայս հաստատելովք ծերովք հանդերձ :

Զայս հարուած հարան իսրայէլացիք՝ նախ 'ի ժամանակի գերութեն բաբելացւոց · զորմէ գրէ և երեմիա յողբս իւր · և ապա 'ի ժամանակս

հռով

հռովմայեցւոց. զորմէ գրեն արտաքին պատմիչք։ Իսկ մարգարէն կամելով սաստիկ ցուցանել զսոյն՝ ձեւով իմն խօսի, յասելն։

**Արտաքուստ մանկազուրկ արասցէ զնոսա սուր։** Իսկ

յն թէ թշնամիքն ինձ հասեալ ՚ի վ՟ր նոցա՝ կոտորեսցեն զմանկունս նոցին. եւ զայս դնէ լինել արտաքուստ. վ՟ղի հարուած որոյ յայտ է թէ արտաքուստ գայ. բայց պատճառ զարտաքուստն դնելոյ՝ է ցուցանել զմեծութի հարուածոյն։ Իսկ քանզի ՚ի մանկակոտոր լինել նոցա անզաւակ ձայնին, յեբր", եւ յեօթ", եւ յասոր" դնի * արտաքուստ անզաւակեսցէ սուր ‖. յայս հայի եւ արաբացւոցն։ Հայելով ապա եւ ՚ի ներքինն՝ ասէ։

**Եւ ՚ի ներքուստ ՚ի շտեմարանաց նոցա ահոյ արհաւիրք ահէ։** Շտեմարանօք երկու ինչ մարթ է իմանալ աստ. մի՝ զխորտս. բ՟ որում սիրտն է շտեմարան շարժմանն կրից. եւ յայս միտ կամի ասել. ՚ի պաշարիլ որդւոցն իւր յարտաքին վշտաց՝ ցոլասցին ՚ի սրտից նոցա արհաւիրք ահի, զ՟ի սարսափելի մտածմունք ահացուցիչք եւ զարհուրեցուցիչք. եւ կամ ՚ի փախչել եւ յամփոփիլ նոցա ՚ի շտեմարանս եւ յայլ ծածուկ տեղիս կամ ՚ի փակարանս, երկիւղ անհնարին պաշարեսցէ զնոսա ՚ի ներքս անդ. յոր միտ յեբր" եւ յասոր" փակարան դնի։ Երկրորդ՝ մարթ է շտեմարանօք իմանալ աստ զներքին թշնամիս իւրացւոց. որք էին արդարեւ շտեմարանք չարեաց. յորոց հոսեցին արհաւիրք ահի. որպէս տեսանի ՚ի պատմութե՟ առմանն եղ՟մի. յորում անհնարին արհաւիրք տիրեցին հրէից, ոչ այնչափ յօտարաց՝, որչափ յընտանի թշնամեաց նց՟. ըստ որոյ յարաբ" այնպէս բադնի, զոր բազումք թարգմանեն ՚ի ներքնոց. որով

որով և արտաքին թշնամիք հարին զնա առանց խնայելոյ. զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով.

7. Զերիտասարդս կուսանօք հանդերձ. և զտղայս հաստատելովք ծերովք հանդերձ: Այս հարուած թէպէտ կարէ հայիլ յայլևայլ ժամանակս, բայց տիրապէս հայի 'ի ժամանակն յայն՝ յորում գերեցաւ Երուսաղէմ 'ի Նաբուգոդոնոսորայ. և այրեցաւ տաճարն. զորս բազմապատիկ ողբովք առաջի առնէ Երեմիա, յողբսն նր, թէ զիարդ անողորմ հարին թագաւորացն զերիտասարդս իւր և զկուսանս, զտղայս և զծերս հաստատեալս, որք հասեալս 'ի յետին հասակ կենաց: Յեբր՛՛ փոխ երիտասարդի՝ ընտիր դնի. և բառքդ կուսանք և տղայք ևս, եղակի դնին. բայց ըստ թարգմանելոյ այլոց առ հասարակ՝ բառիս ընտիր՝ երիտասարդ նշանակի աստ. իսկ եղակի դնելն ոչ ինչ վնասէ մտաց բանին. զի գոլով հասարակ անուանք՝ հային յամենեսին յայնոսիկ՝ զորս եհար սուր բարկութեան այ: Իսկ թէ 'ի լինել այսր՝ զինչ խորհէր ած 'ի վր Իսրայէլացւոց, յայտ առնէ զայն 'ի յաջորդ համարսն ասելով.

8. Ասացի թէ ցրուեցից զնոսա. և դադարեցուցից զյիշատակս նոցա յազգաց:

9. Թէ ոչ վս բարկութեան սրտմտութեան թշնամեացն. զի մի՛ երկայնակեաց լինիցին. և մի՛ բարձրացուցեն հպարտացեալ թշնամիքն, և ասասցեն:

10. Թէ ձեռն մեր բարձր է, և բազուկ մեր հզօր. և ոչ Տր Ած արար զայս ամ:

Այս հայի յայն՝ զոր ասաց ած 'ի մերձենալ ամաց գերութեան բաբելացւոց. 'ի Դ գիրս Թագ. իա.

խ՟ն · 13 · * Ջնջեցից զԵ՟ղմ · · · եւ մերժեցից զմ-
,, նացորդս ժառանգութեան իմոյ · եւ մատնեցից զնո-
,, սա ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց Ի՟Ա ‖ · այլ եւ
եղեւն իսկ · զ՟ի որում պատմի անդ ՚ի գլ․ ի՟ե ։
Օ՛ սոյն ահա եւ աստ իբր 850 ամօք յառաջ խօ-
սեցաւ բերանովն Մովսիսի՝ յասելն ։

Ասացի թէ ցրեցից զնոսա · եւ դադարեցուցից զյիշա-
տակս նոցա յազգաց ։ Կամի ասել · յետ այսչափ գոր-
ծոց տեսեալ իմ թէ ոչ ուղղին որդիքն ի՟լի ,
ասացի · ՚ի զուր է կալ դոցա ՚ի ժառանգութեան
իմում · այլ զ՟ի եւ ժողովեցի զդոսա իբրեւ
զձագս հաւուց , եւ արարի ինձ ժողովուրդ , սոյն-
պէս եւ ցրեցից զդոսա · եւ յանարգութենէ հա-
սուցից զյիշատակս դոցա յազգաց · զ՟ի արարից
զի եւ ոչ մի ազգ ծանիցէ կամ յիշեսցէ զդոսա
իբրեւ զժողովուրդ ա՟յ ։ Այլ զայս սպառնալիս՝
հայելով ՚ի թշնամիսն ի՟լի՝ սկսանի մեղմել ա՟ծ ·
վ՟յ ասէ ։

9 · Եթէ ոչ վ՟ն բարկութեան սրտմտութեան թշնամեացն · զի մի՛
երկայնակեաց լինիցին · եւ մի՛ յարձակեսցին հակառակեալ
(10) թշնամիքն , եւ ասասցեն ։ * Ձեռն մեր բարձր է, եւ
բազուկ մեր հզօր · եւ ոչ տ՟ր ա՟ծ արար զայս ա՟մ ։ Կամի
ասել · զոր խորհեցայ եւ ասացի՝ անշուշտ կատա-
րէի · սակայն՝ ոչ կամիմ զ՟ամ ՚ի գործ դնել վ՟ն
բարկութեան սրտմտութեան թշնամեացն · ուր բառդ վ՟ն
առ երկուս կարէ մերձեցուցանել զբարկութիւն ·
մի՝ առ ա՟ծ · իբր թէ ասէր · վ՟ն բարկացուցա-
նելոյ զիս թշնամեացն ի՟լի՝ ոչ տաց զնոսա ՚ի ձեռս
նոցա իսպառ ։ Իսկ մի եւս՝ հայելով յեբր՝՝ եւ յա-
սոր՝՝ եւ յարաբ՝՝ մերձեցուցանէ առ նոսին իսկ
թշնամիս · որպէս թէ ասէր · թշնամիք ի՟լի բար-
կութ՟բ եւ յանդգնութ՟բ կամեցան յարձակիլ ՚ի վ՟ն
նոցա , համարելով թէ իւրեանց զօրութ՟բ կարե-
ցին

ցեն յաղթել նոցա, և ջնջել զնոսա. այլ ևս ոչ ներեցից նոցա առնել զայս. զի մի՛ 'ի սպառել նոցա զկեանս իւրայոց՝ ինքեանք զկեանս երկայնս ունիցին. զի թէ կեցցեն և մնասցեն երկար՝ իւրեանց չարութեամբ. և այնու բարձրասցին և հպարտասցին. և պարծելով ասասցեն, թէ մեք հարաք զիէլացիս. մեք կոտորեցաք, և մեք ջնջեցաք զնոսա. և ոչ թէ տէր ա՛ծ յաջողեաց մեզ առնել այսպէս. զի ձեռն մեր բարձր է, և բազուկ մեր հզօր ։ Ապա յերաւի իսկ՝ եթէ ա՛ծ խնայառ թողուլ տայր նոցա, նոքա այսպիսի պարծանօք ճոխանային. որպէս սպառին երբեմն. և ոչ խորհէին՝ թէ ա՛ծ է որ թողլ տայ նոցա առնել զայս վասն անզգամութե՛ն որդւոյն իւր ։

Յերբ" փոխ ասելոյ. * զի մի՛ երկայնակեաց լինիցին. և մի՛ բարձրասցին հպարտացեալ թշնամիքն ‖, գրի. * զի մի՛ օտարացուսցեն զինքեանս թշնամիք նոցա ‖. 'ի նոյն հայի և այս. զի կամի ասել. ոչ թողացուցի թշնամեաց նոցա ջնջել զիէլացիս. զի մի՛ կարծեսցեն, թէ կարեն օտարացուցանել կամ հեռացուցանել զինքեանս 'ի ջնջմանէ, և կեալ երկար. որով և հպարտասցին յանձինս իւրեանց ։ 'Ի լատ" ոչ գնի բառդ. երկայնակեաց լինել. իսկ յասոր" փոխան այնր գնի այժ ստանալ. որ հայի յերկարութի կենաց ։

Խորհրդաբար՝ այս բանք հային 'ի վիճակ մարդկային բնութե. զի որում 'ի մեղանչել նր 'ի սկզբանն անտ՝ ա՛ծ ընկէց զնա յերեսաց, ասելով, ցրեցից զազգ մարդկան, և բարձից զյիշատակ նց ։ Այլ զայս յիրաւի առնէր, եթէ չէր խնայեալ 'ի նմ զի բարկութե թշնամւոյն սատանայի. որ նա-


խան-

խանձու յորձակեր 'ի վե՛ր մարդոյն իբր 'ի վե՛ր ձեռակերտի ինչ՝ մեղուց և մեռոյց զնա . և 'ի կամիլ իւր պարծիլ՝ խնդրեաց ինչ զվրէժ՝ ոչ 'ի մարդոյն՝ այլ 'ի Թշնամւոյն , ազատելով զմարդն 'ի ձեռաց նորա ։ Եւ սակայն ապաշնորհ ազգք մարդկան զայսպիսի գութ տեսեալ յԱյ՝ ապերախտ գտան առ նա . և Թելադրութեան Թշնամւոյն անսալով՝ փոխանակ յարելոյ 'ի բարերար իւրեանց՝ յարեցան 'ի Թշնամին՝ ծառայելով հաճոյսն նր , վա՛յ նախատէ զնա ած 'ի դէմս որդւոցն իւրի , և ասէ ,

11 . Զի ազգ մի խորհրդակորոյս են նոքա . և ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն . և ոչ խորհեցան 'ի միտ առնուլ զայս ամ . և արդ ընկալցին զամօթ յանցիցն իւրեանց ։

Երրեակ էր յիմարութիւն ազգին իւրի . անզգայութիւն ըստ անզգուշութեան . անմտածութիւն ըստ Թանձրամտութեան . և անզգամութիւն ըստ չարամտութեան . զի նախ առաջին ըստ անզգայութեան՝ զոր ինչ խորհուրդեան յԱյ՝ ոչ զգաց և ոչ պահեաց , և իբրև Թէ կորոյս զայն անզգուշութբ , երկրորդ՝ ըստ անմտածութեն իւրում ոչ երևեցոյց յինքեան զիմաստութի ինչ առ խորհուրդս ինչ , այլ զծանր Թանձրամտութի . երրորդ՝ ըստ անզգամութեն իւրում ոչ կամեցաւ 'ի միտ առնուլ՝ զոր ած խորհեցաւ և արար նմ . այլ չարամտութբ վարեցաւ . որով ատելի եղև նմ . յայսոսիկ հայելով ասէ ։

Զի ազգ մի խորհրդակորոյս են նոքա . և ոչ գոյ 'ի նոսա իմաստութիւն . և ոչ խորհեցան 'ի միտ առնուլ զայս ամ ։ Այսինքն Թէ այնպիսի ազգք են որդիքն իւր՝ մինչ զի 'ի զուր է խորհուրդ առ նս . զի կամ կորուսանեն զայն , վն զի ոչ պահեն . կամ ոչ իմանան , վն զի ոչ ունին զիմաստութի ածային . և կամ մերժեն ,

վ՛ զի չարութիւնք ոչ թողուն նոցա խորհել զորինչ արար նք ՟ոձ ։ Սեր զօրութք իմացեալ լինի ասել. երանի թէ խորհէին եւ իմանային. ուստի յեբր՛՛ եւ 'ի լատ՛՛ գնի. * երանի թէ իմաստունք լինէին ‖. իսկ յասոր՛՛ եւ յարաբ՛՛ գնի * եթէ իմաստնանային ‖ ։ Նաեւ զի պակասեցան նք յայսմ՝ վասն այսորիկ ունէին ամաչել. սմին իրի յաւելու ասել ։

Նա արդ ընկալցին զամօթ յանձինս իւրեանց ։ Կամի ասել. որովհետեւ այսչափ յիմար գտան իմացեալք առ բարերարութին նոյ՝ փոխ բարերարութեանցն ընկալցին զամօթ յանձինս իւրեանց 'ի ժամանակին՝ յորում կրեսցեն զնախատանաց պատուհաս ։ Յեբր՛՛ եւ յասոր ոչ գնի բառդ ամօթ. այլ իմանալ յասելն. * իմանային զայս, (որով եւ) իմանային 'ի կատարածի իւրեանց ‖. կամ զկատարած իւրեանց. որպէս գնի յասոր, եւ յարաբ, եւ ս. եւ 'ի լատ. իսկ յեօթ՛՛ եւ [illegible] մերում գնի. * ընկալցին զայսոսիկ յապա ժամանակի ‖. 'ի նոյն վերածին եւ սոքին. քն որոյ եւ մեր բանին առաջի գնի այսմ. յիրաւի ոչ խորհեցան եւ ոչ իմացան իմացեալք՝ զորինչ արարի նոցա. բայց զկնի ժամանակաց եւ 'ի կատարածի իւրեանց կամայ եւ ակամայ խորհեսցին եւ իմասցին որով եւ զամօթ կրեսցեն ։

Սմանք զայս բանս առ թշնամիսն իւր վերածեն. եւ սակայն կարգ բանին առ իէլ այս հայիլ. քն արտում վկայեն եւ երեւելի մեկնիչք. նաեւ այսպէս պահանջեն եւ յաջորդ բանքն. որովք յորդորէ մարգարէն զիէլ ճանաչել՝ թէ 'ի պաշտպանել այ զնա՝ պահպանեցին, եւ 'ի թողուլ նորա՝ վտանգին. որպէս փախստեայ երբեմն. զորմէ գրէ 'ի յաջորդ համարն՝ ասելով ։

Զիար

12 · Զարմանք մի մեծ այս էն · զիարդ մի զհազարս հա-
լածեսցէ · կամ երկուք զբիւրս շարժե-
ցեն ։

13 · Թէ ոչ Տն տյ մատնեալ էր զնոսա , և փոխեալ
էղէ զնոսա ՚ի յետս թշնամեաց նոցա ։

Հեգնական է այս զարմանք · զի ուր յայտնի է պատճառ իրին՝ զարմանալն ընդ այն՝ է հեգնել և ծաղր առնել · արդ՝ զոր ասէ մարգարէն՝ զպատճառն ևս գիտէ , և առաջի իսկ դնէ զայն · ուրեմն հեգնելով խօսի զայս թէ ; * զիարդ հալածեսցէ , եա ‖ · որով եգիպտացւոց ազգին մեծա- մէս նախատեսլի յացանէ , յասելն ։

Զարմանք մի մեծ այս էն · զիարդ մի զհազարս հալածեսցէ · կամ երկուք զբիւրս շարժեսցեն ։ Իսկ մի ասել · ուր ոչ գիտէն զպատճառն՝ մեծապէս զարմանան , թէ զիարդ մին ՚ի թշնամեաց հալածեսցէ զհազարս որս իսրայէլացւոց , և երկուքն զբիւրաւորս նոցին · այլ ես ոչ ինչ զարմանամ, զի յայտնի տեսանեմ զպատճառն ։ Ոչ թէ այլ ինչ յայլմ ոչ դնի այդ · այլ նոքին է · * զարմանք մի մեծ այս են ‖ · և ոչ յանձաչափ մերում · բայց քանզի երբայեցւոց բարձն՝ որոյ փոխանակ դնի բառս զիարդ ՚ի մէջ բերէ զմեծութի զարմացման , թարգմանիչք մեր յաւելին դնել · * զարմանք մի մեծ այս են ‖ · և առաքացիք եդին * և է զի ասիցեն · զիարդ հալածիցէ մին զհազարս եա ‖ ։ Իսկ թէ զինչ այն էր , յորոյ վերայ պարտ էր զարմանալ, առաջի դնէ՝ ասելով ·

13 · Թէ ոչ Տն մատնեալ էր զնոսա · և փոխեալ էղէ ՚ի յետս թշնամեաց նոցա ։ Այսմի ասել · վասն այսորիկ մին ՚ի թշնամեաց հալածեաց զհազարս իսրայէլացւոց, զի ինքն Տր , կամ բատ երբ" ինքն վաճառ՝ Տր հզօրն

որ պահէր զինչ մատնեաց և վաճառեաց զնոսա ՚ի ձեռս նոցա. ապա թէ ոչ՝ զխորդ կարէին յաղթել նոքա, և պարծիլ ՚ի չածս իւրեանց՝ թէ յաղթօղք լիցին ։

Բարոյապէս, հայելով ՚ի թշնամութիւն ամպարիշտ մարդկան՝ մարթ է ասել. զարմանք մի մեծ այս են, թէ զխորդ մխիրատուր բարերարութիւնք այ, և հազարաւոր նպաստաւորութիւնք շնորհաց նորա՝ այնքան ոչ ներգործեն ՚ի նոսա, որքան ներգործեն մի կամ երկու թելադրութիւնք մարմնոյ կամ սատանայի, և հալածեն զզօրութիւն այնչափ ազդարարութեանց. Բայց չէ ևս արժան զարմանալ ըն այս. զի թողլով նոցա զած՝ թողեալ լինին յայ. և տուեալ լինին ՚ի ձեռս մարմնոյ և սատանայի ՚ի ծառայել պէսպէս ախտից և մոլութեանց իբրև անձց. Այլ թէ որպիսի լիցին նոքա, զայնմանէ խօսի ՚ի յաջորդ համարն, ՚ի մէջ բերելով զսուտ ածս թշնամեաց՝ յասելն ։

14. Ո՛չ է ուր են դիք նոցա որպէս զած մեր. այլ թշնամիք մեր վատախորհուրդք ։

Այս բան ոչ ՚ի մէջ բերէ զհամեմատութիւն ինչ ըն չածս հեթանոսաց և ընդ Ճշմարիտ ածն խաբայելոցուց, զի * զինչ հաւասարութիւն է լուսոյ ըն խաւարի‖. ըն ասելոյն պօղոսի. (Բ. կոր. Զ. 14.) այլ յայտ առնէ զամենևին աննմանն լինել. զի զայս ցուցանէ ասելն ։

Ո՛չ է ուր են դիք նոցա որպէս զած մեր. Այսինքն թէ չածք հեթանոսաց ամենևին աննմանն են այ մերում. զի են յամի տկար. իսկ ած մեր յամի կարող. նք յամի անարգ. իսկ ած մեր յամի փառաւոր. նոքա յամի պիղծ. այլ ած մեր յամի սբ. իսկ թէ իբրև ածք պաշտին, այն է ՚ի յիմարութէ պաշ-

պաշտողացն . սմին իրի յարէ զկնի, և ասէ :
ԱՀ. Ուշ. մեր կատարելապէս ։ Այսինքն թէ թշնամիք մեր ունելով զխորհուրդս թիւրս և վատթարս, պիղծս և չարս, զզարշելի կուռս ածս համարին . և կարծելով թէ նոքիմբք յաղթեն իսրայէլացւոց՝ ՚ի նոսին պարծին .

Այս յետին բան այլազգեաս կարէ մեկնիլ իբր Է հակառակն . Է որոյ բառդ կատարելապէս՝ կամ ըստ վարդանայ՝ վասն խորհրդով, առեալ լինի իբր ներգործաբար ՚ի ճանաչել նոցա զվատ խորհուրդս իւրեանց . յոր միտ կամի ասել . թշնամիք մեր կարծեցին՝ թէ հզօր են ածք իւրեանց . բայց զփորձ առեալ՝ թէ տկար են նք, և միայն ած մեր է հզօր, ծանեան և վճռեցին, թէ վատ է և սուտ՝ խորհուրդ իւրեանց, զոր ունէին ըղկռոցն . գուցէ յայս միտ յեբր" և յասոր" և ՚ի լատ" դնի . * թշնամիք մեր դատաւորք || . իբր թէ ինքեանք եւս դատեն թէ այնպէս իցէ . յայս վերածի և թարգմանութիւն արաբացւոց :

Իսկ թէ իսրայէլացիք պաշտելով զած ճշմարիտ՝ յաղթեցան ՚ի թշնամեաց անտի, այն էր վասն յանցանաց նոցա, ած վասն յետս կալոյ նց յայնպիսի տեառնէ, և յարելոյ ՚ի տկար և յանարգ կուռս . որով և վայրենի գտան, և անարգ եղեւեցան . ոչ և ամենայն ամպարիշտք . և զայս տառաջի առնէ մարգարէն այլև այլ անարգ օրինակօք, և ասէ :

15. Յայգւոյն սոդոմայ էր որթ նոցա . և տունկ նոցա ՚ի գոմորայ .

16. Ողկոյզ նոցա ողկոյզ դառնութեան . և ողկոյզ նոցա ՚ի դառնութեն լեղւոյ .

՚ի կործանել ած զսոդոմ և զգոմոր՝ խոպա-

անպիտանացաւ երկիր նոցա . և եղև անպտուղ , մանաւանդ թէ չարապտուղ . զի ասէ գիր . (Ծնն. ԺԹ . 25 .) * կործանեաց զքաղաքսն զայնոսիկ ,
,, և զամ կողմանսն , և զամ բնակիչս քաղա_
,, քացն , և զամ բոյս երկրին ‖ . որով ոչ ևս բուսանէր յայնոսիկ տեղիս պիտանացու ինչ , այլ անպիտան և վնասակար . որոց նմանեցու_ ցանէ Մովսէս զիսրայէլացիս , և ասէ ։

Յայգեստանն սոդոմայ էր որթ նոցա . և ոստանք նոցա ՚ի գո_ մորայ ։ Կամի ասել . թէպէտ իբրև զայգի վայե_ լուչ տնկեաց ած զազգն իւր , բայց նոքա այնպի_ սի որթ երևեցան , որպէս թէ բուսեալ իցեն ՚ի սոդոմայ . և այնպիսի ոստունք կամ ուռ եղեն , որպէս թէ ՚ի գոմորայ իցեն . որով կամի ցուցա_ նել՝ թէ ոչինչ պտուղ բարի ելանէ՛ ՚ի նոցանէ ։ Զայս իսկ սոյն այս Մովսէս ՚ի կարգելն անդ_ րանս անիծից ՚ի վերայ եբրայեցւոց ( Բ . օրին . ԻԹ . 23 . ) ասաց . * մի սերմանեսցի , և մի բուս_
,, ցի , և մի ելցէ ՚ի վերայ նորա ամենայն դեղ
,, դալար . որպէս կործանեցան սոդոմ և գո_
,, մոր ևն ‖ . Այլ եթէ բուսանէր ևս ՚ի նոսա պտուղ ինչ , դառն էր և չար . վասն որոյ յարէ զկնի ասելով ։

16 . Ողկոյզ նոցա խաղող դառնութեան . և ողկոյզ նոցա ՚ի դառ_ նութենէ լեղւոյ ։ Ողկոյզ ասելով իմանայ զգործս նո_ ցա որոշ որոշ առեալ . իսկ ողկոյզ ասելով իմա_ նայ զգործս նոցա համանգամայն առեալ . ըստ որում ողկոյզն ունի զմիաւորութիւն բազմութե հա_ տից խաղողոյ ։ Զամենեսին զասս , է որս առ_ հասարակ և զամենայն ամպարիշտս կոչէ լեղի դառն ։ Որ լեղեաւ խմացեալ լինի անօթ լեղ_ ւոյն . որով կամի ցուցանել , թէ որպէս այն անօթ լցեալ է դառնութ մաղձի , այնպէս և

խաղող Նոյացւոց , որ գործ նց̄ լցեալ է գաղտնեալ դառնութ̄բ՝ ամենևին մտաւորսն , մանաւանդ թէ թշնամութիւն , յոր մտ յեբր" և յոյնք" փոխ լեզ_ւոյ՝ թոյն դնի յասելն ․ * խաղողք թունոյ (և) ողկոյզք դառնինք (են) նոքեանց ‖ ․ յեօթ" և 'ի լատ" բառդ լեղի՝ դնի 'ի վերայ խաղողոյ , յու_նելն ․ * խաղող նոցա խաղող լեղւոյ , ողկոյզք դառնութե ‖ ․ իսկ յասոր" դնի ․ * խաղողք նոցա խաղողք դառնինք ․ և ողկոյզք նոցա լեղի են նո_ցա ‖ ;

Գտանելի է և՝ զի նախընթաց համարն յեբր" և յայլս փոփոխումբ ինչ բառից դնի ․ զի յեբր" և յեօթ" և յասոր" և յարաբ" առաջին համա_ռաձայն դնի այսպէս ․ * զի յորթոյ սոդոմայ որթ նոցա ‖ ․ իսկ 'ի լատ" դնի ․ * յայգւոյ սոդոմայ_ւոց այգի նոցա ‖ ; Այնպէս և երկր համա_ռաձայն յեբր" դնի * և յարտից գոմորայ խա_ղողք նց̄ ‖ ․ յեօթ" դնի ․ * և ուռ նոցա 'ի գոմո_րայ ‖ ․ 'ի լատ" դնի ․ * և յարուարձանաց գոմո_րոց ‖ ․ յասոր" * 'ի տնկոյ գոմորայ ‖ ․ յարաբ" * 'ի չուոյ գոմորայ ‖ ․ ամենեքեան և 'ի մի ինչ հային, 'ի ցուցանել զանարգութ̄ի գործոցն իւր , և զանպիտանութ̄ի նց̄ , և զապականելի գոլ նոցին ․ Որոյ վասն և ա̄ծ եթող զնոսա ․ զի դառնացաւ 'ի ճաշակելն զայսպիսի չար պտուղս նոցա ․ և փոխ նց̄ հաստատեաց յերկրի զնորս եկեղեցի իբրև զայգի նոր ․ յորում տնկեցաւ իբրև որթ Ճշմա_րիտ ք̄ս որդին ա̄յ ․ որ և իբրև ողկոյզ ճմլեցաւ 'ի խաչին ․ յոր մտս փոխաբերէ շարական մեր զայս բան 'ի կան․ ծնն․ ․ ասելով ․ * որ տնկեցար յերկ_
,, րի որթ Ճշմարիտ ․ և ճմլեցար 'ի խաչին ողկոյզդ
,, անապակ յուրախութ̄ի ամենայն արտմեցելոց ․
,, զքեզ բարեբանեմք Տ̄ր հրեղէն օրհնաբանս ; ‖

Յայսմ այգւոյ ճաշակեալ ս՟բ առաքելոց՝ արբու-
ցին և մեզ ամնտի . ըստ որում երգէ շար՛՛ 'ի կան
Ձ՟Է . ասելով . * 'ի յայգւոյն անմահութեն եդեմայ
,, ճաշակեցին դասք առաքելոց զբաժակ կենաց
,, քոց տէր . և մեզ արբուցին ‖ ։ 'Ի սոյն յաւե-
լու 'ի կան Ձ՟Ը . և ասէ . * ընկալեալք զբաժակն
,, ուրախութեն յայգւոյն անմահութեն դասք առաքե-
,, լոցն , որք ընդհանուր ընթացան ընդ տիեզերս .
,, լուսաւորեցին՝ հրաւիրելով ( յայգին երկնա-
,, յին , այսինքն ) յերկնից արքայութիւն ‖ ։ Ըստ
այսմ երգէ և 'ի կան Ձ՟Թ . ասելով . * յայգւոյդ
,, անմահութեն ճաշակեցին ս՟բ առաքեալքն . և
,, լցին զտիեզերս աւետեօք ս՟բ յարութեն . զի ընդ
,, նոսին վայելեսցուք յանվախճան ուրախու-
,, թեան ‖ . Ք՟ս յայնոսիկ ուրախութիւն , որք են յի-
մանալի այգւոյն արքայութե ։ Նու ասա 'ի կան .
Ձ՟Ի . 'ի գլխոյ հաստատեցելոց խօսելով ասէ .
* յայգւոյդ անմահութեն ճաշակեսցուք և տե-
,, սաք , զի քաղցր և ուղիղ ես տէր . և վասն
,, ամենայն փրկութեն եկիր յաշխարհ ‖ ։ Հայր ասա
'ի տունկն դառնութեն 'ի ծառն գիտութեն բարւոյ և
չարի , և 'ի տեղի այնր առաջի առնէ զկենարար
խաչն քրի՝ ասելով 'ի կան Ձ՟Ժ . * որ փոխէ դառ-
,, նութեն տնկոյն եդեմայ զխաչ քո ետուր մեզ
,, ք՟ս . և արբուցեր 'ի կողահոս աղբերէդ զան-
,, սպառ և զանվախճան ուրախութի ‖ ։ Նու 'ի
կան Ձ՟Թ . Ընդդիմադրեալ այսմ այգւոյ զկորուստ
դառնագին այգւոյն սոդոմայ յօրինակ այլմանն
դատապարտելոցն՝ ասէ . * յանմահական 'ի
,, յայգւոյն ճաշակեցին ս՟բ առաքեալքն . և
,, զհրաբաժակ դառնութեն այլմանն ընկալեալ
,, սոդոմ 'ի յաւուրն տոչորման ‖ ։ Դառնայ ապա
միւսեւս խօսիլ զառաւելութե դառնութե խորշելե-
եան

եանն այդուոյն․ և առ զօրաւոր կացուցանելոյ ըզ-
քանն՝ բերէ զդժնդակ օրինակս, և ասէ ։

17․ Սրտմտութիւն բարկութեան վիշապաց գինի նոցա․ սրտ-
մտութիւն իժից անհնարին առանց բժշկութեան ։

Սրտմտեալ թոյնք վիշապաց և իժից ժանտ են
յոյժ, և առանց բժշկութե, մանաւանդ յոր
ժամ սրտմտութբ թափեն զայնս, յայն նմա-
նութի մերձեցուցանելով զգործս Իէլացւոց,
ասէ ։

Սրտմտութիւն բարկութեան վիշապաց գինի նոցա․ սրտմտութիւն է
իժից անհնարին առանց բժշկութեան ։ Նմանապէս սրտմտութիւն գինի
աստ փոխանունութե ձևով փոխել գործոյ սրտմը-
տութե վիշապաց և իժից․ զի փոխ դառն թունոյ
նոցա, ուստի յեբր՝՝ թոյն դնի, և ՚ի յոյն՝՝ լեղի,
եա և թոյն ։ Իսկ գինեաւ նշանակի աստ ամե-
նամոլար խորհուրդ Իէլացւոց․ կամ որ նոյն է՝
ամենայնիմար վրդպութի նոցա, որ զի խստութեն
ոչլաբանի աստ ՚ի սրտմտութի․ և զի վնասակա-
րութեն փոխաբերի ՚ի թոյն վիշապաց․ իսկ զի
յամառութեն, կամ զի անընկճելի դոլոյն հանդի-
սանայ ՚ի գլուխ իժից, որպէս դնի յեբր՝՝ և յա-
սոր․ իբրզի որպէս գլուխ իժի ՚ի մնանել ՚ի
ներքս ուրեք՝ ոչ ձգի արտաքս, սոյնպէս տեսանի
և թիւր խորհուրդ մոլար վրդպութեն հրէից․ քզի
զի գլխոյ իժի սևեռեալ կայ ՚ի նոսա․ որպէս և
աչօք իսկ տեսանեմք ։ Իսկ զի այսմ միտք բնա-
բանից առաջի դնի այսպէս․ ազգն Իէլի որ դար-
ձաւ յայգի սոդոմայ և գոմորայ, եղև որթ ժան-
տաբեր․ և եա խաղողս գործոց դառնութե․ ե-
բեր ապա զայնպիսի գինի, այսինքն զայնպիսի
խորհուրդս և զայնպիսի վրդպութիս, որ է իբրև
զդառն թոյն վիշապաց և իժից՝ թափանցեալ
սրտ-

սրտմտութ՟ ՚ի նեղչս՝ անելանելի , և անբժշ-կելի ։

Նարոյապէս , այր մեղաւոր թէպէտև երևի լի-նել իբրև որթ , բայց է որթ սոդոմայ և գոմո-րայ , ոստք դժոխոց և կորստեան . խաղող գործոց նորա դառն առաջի այ , և խորհուրդ նորա որ-պէս զթոյն անմարմին վիշապաց և իժից , որ ե-թէ ունակացի՝ լինի անբժշկելի ։

Դարձեալ՝ սուրն առաջի դնի և եղբ կորգի մե-ղաց . զի որպէս յորթոյ ժամանաբեր ողկուզոյ ե-լանէ խաղող ժամու , և ՚ի խաղողոյ անտի գինի դառն , նոյնպէս ՚ի մեղաց սրտի ելանէ ժամու մեղք բերանոյ , և անտի ամենաթոյն մեղք գոր-ծոյ ։ Զայսոսիկ եդեալ մարգարէին՝ յայտ առ-նէ այժմ , թէ այսր ամի լինելոց է վրէժխնդ-րութի ՚ի ժամանակի իւրում , և առ ստուգութի այսր՝ ասէ նախ ։

18. Ո՛չ այս ամ ժողովեալ է առ իս . և կնքեալ պահի ՚ի գանձս իմում ։

Ա՟ծ որ զա՟մ ինչ տեսանէ , ՚ի տեսանելն անդ ՚ի մեղաւորն զճշմարիտ դարձումն ՚ի մեղաց լոտ ամի՝ ոչ ևս տեսանէ զմեղս նորա , և ոչ յիշէ զայնս . իսկ եթէ ոչ նշմարեսցէ զդարձ ճշմա-րիտ՝ պահէ զայնս , և ՚ի ժամանակի իւրում յան-դիման կացուցանէ մեղաւորին ։ Զսոյն սպառ-նայ ա՟ծ որդւոյն Ի՟ղի . և առ ցուցանելոյ զսաս-տկելոյն իւրին , ծանր բանիւք խօսի և ասէ ։

Ո՛չ այս ամ ժողովեալ է առ իս . և կնքեալ պահի ՚ի գան-ձս իմում ։ Կամի ասել . միթէ իբրև զմարդ կար-ծէք զիս , որ յանցանել ժամանակաց մոռանայ զգործսն . ոչ այդպէս . այլ զա՟մ չարիս ձեր պա-հեալ եմ և պահեմ անմոռաց , և ոչ զմին թո-ղեալ

դնել 'ի բաց · զի ժողովեալ են առ իս, որպէս թէ բովանդակ գումարեալ են առաջի իմ, և զգուշութիւն պահեալ · իբր թէ 'ի գանձարանի փակեալ լինելին հանդերձ կնքով · որպէս զի մի ինչ 'ի բաց ընկեսցի անտի · մինչև հասցէ ժամանակ հատուցմանն · զորմէ խօսի 'ի յաջորդ համարն՝ ասելով ։

19 · Յաւուր վրէժխնդրութեան հատուցից նոցա · 'ի ժամանակի՝ յորժամ գայթակղեսցի ոտն նոցա ։

Այս բան յայտնի ցուցանէ, թէ ո՞չ պահի վրէժխնդրութիւն սահմանեալ ժամանակաւ · ուստի յեբր'' դնի · * ինձ (պահի) վրէժխնդրութիւն և հատուցումն նոցա || · իսկ յասոր'' և 'ի լատ'' կա և յաբրաբ'' դնի · * իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից նոցա || ։ Սոյն շարադրութեամբ բերէ և պօղոս զայս բան (հռովմ · ժբ · 19 ·) յասելն · * քանզի գրեալ է · իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից ասէ տէր || · որ 'ի մերումս յաւելեալ է ըստ եօթ'' և բառդ յասուր՝ յասելն ։

Յաւուր վրէժխնդրութեան հատուցից նոցա ։ Արդ ասէ · երկայնամիտ լինիմ, մինչև եկեսցէ սահմանեալ օրն վրէժխնդրութեան, որ պահեալ է ինձ · և յայնմ աւուր հատուցից թշնամեաց իմոց ըստ չարեաց նոցին ։

Զսոյն զայս բան յառաջ բերէ շարականն մեր 'ի կանոնս, 'ի դիմաց հաւատացելոց, յաղաչել նոցա զնա, խնայել յինքեանս, և մի դատապարտել · այլ փոխ դատապարտելոյ՝ վերածել 'ի տեղի անկեալ հրեշտակաց, բարեխօսութեամբ սրբոց ծնողինն · ասելով · * յաւուր „ վրիժուց հատուցման ամպարշտաց վերածե„ ցես զմեզ ընդ հոգեղինաց դասս 'ի տեղի անկ

„ անկելոց հրեշտակաց՝ բարեխօսութ͞բ սրբուհ-
„ ւոյ ա͞ծածնին ‖ ։ Մ․յլ ͞է զի և յերկրի աստ
պատուհասէ ա͞ծ զամպարիշտս , յայն հայելով
մարգարէին՝ յարէ զկնի , և ասէ ։

'Ի ժամանակի՝ յորժամ հարցէ ոտն նոցա ։ Ն․ախնիքն
թէ 'ի ժամանակի փորձանաց կա՛մ պատերազմի ,
յորում ունին վտանգ իւր խորշելոցիք և այլ ամ-
պարիշտք , փոխկ օգնելոյ նոցա՝ վրէժս խնդրեսցի
'ի նոցանէ ։ Օ վտանգիւ նոցա առաջի դնէ նմա-
նութ͞բ հարկանելոյ զոտն զքարի ․ իսկ այս ոտն ,
որ դնի 'ի մերում թարգմանութ͞ն 'ի սաղմոսա-
րանի՝ ցուցանէ՝ չարի պատահիլ ͞ը երկուց ․ մի՛
͞ը մոլորելոյ ոտից մարդոյ , ͞մ ըստ սխալելոյ և
սասանելոյ ընթացից կենաց նորա , որովք իբր
ոտիւք գնայ ․ յոր մտ յանձաշնչի մերում դնի
͞ը եօթ" սխալիլ ․ և 'ի ըստ" և յորսա" սասա-
նիլ ․ և յերբ" և յասար" գամնգանել ։ Երկրորդ՝
͞ը հանդիպելոյ խիստ և դժնդակ չարի՝ իբրև
խստագոյն քարի , 'ի խորտակել զոտն , ͞մ զըն-
թացս հասանելոյ յաջողութ͞ն և 'ի փրկութ͞ն ․
տես և 'ի մեկն ․ սաղ ․ ͞Ղ ․ 12 ․ ուր ասի ․ * մի՛
երբեք հարցես զքարի զոտն քո ‖ ։ Յու զի ցուց-
ցէ՝ թէ չէ յապաղելոց այս վրէժխնդրութի , յա-
րէ զկնի և ասէ ։

20 ․ Մերձ է օր կորստեան նոցա ․ հասեալ է պատրաստութ͞ն ͞տր 'ի վ͞ր նոցա ։

Օ որ յառաջն կոչեաց օր վրիժուց , աստ զնոյն
անուանէ օր կորստեան ․ ͞ը որում յոր վրէժխնդ-
րութ͞ն ͞նց պատահի կորուստ նոցին ․ զորոյ զհաս-
եալ գոլն ազդ առնէ , և ասէ ։

Մերձ է օր կորստեան նոցա ․ հասեալ է պատրաստութ͞ն ͞տր 'ի վ͞ր նոցա ։ Ն․ախնիքն մերձ է օրն այն՝ յորում
հա-

հատուցանելոյ է տ̄ր որդւոյն ի̄լի և ա̄մ ամպա-
րշտաց ը̄ չարեաց ն̄ց, և կորուսանելոց է զն̄ո.
և օրն այն պատրաստեալ կայ 'ի տ̄նէ. և ինքն
իսկ հասեալ է 'ի վ̄ր ն̄ց. ը̄ թէ ամենեւին պատ-
րաստ է՝ պատուհասել:

Այլս, ոչ և յանձաշնչի մերումս դնի բառս
տ̄ր. ուստի և պատրաստութին, կ̄մ ը̄ այլոց՝ վաղ-
վաղուցն՝ ուղղակի հայի ըստ յօրն կորստեան,
կամ 'ի պատուհասն. բայց ք̄զի տ̄ր է որ պատ-
րաստեալն է զայն՝ 'ի նա վերածէ սաղմոսարան
մեր: Նա զի ցուցցէ մարգարէն՝ թէ արդար դա-
տաստանաւ հանդերձեալ է տ̄ր առնել զայս,
յարէ զԿնի, և ասէ:

21. Վասն ո̄ր զխորհուրդս իւր. և 'ի ձեռաց իւր
մխիթարի:

Սաղմոսոր բառդ դատել՝ նշանակէ արդար դա-
տաստանաւ առնուլ վրէժ 'ի յանցաւորէն, և
պատժել զյանցանս ն̄ր. զորմէ տես 'ի մեկնութ
սաղմոսի 'ի ցանկն, 'ի բառդ դատել. և զի զայն
հանդերձեալ էր ա̄ծ ցուցանել առ որդիսն ի̄լի,
վսկ ասէ:

Վասն ո̄ր զխորհուրդս իւր: Այսինքն թէ արդար
իրաւամբք ուղղելոց է ա̄ծ զդատաստան իւր. և
խնդրելոց է զվրէժ 'ի ժողովրդենէ ի̄լի, պատ-
ժելով զն̄ո ը̄ մեղացն նոցին. իսկ զվրէժխնդրութ
արդարոց խօսի 'ի հետեւեալ բանդ՝ ասելով:

Նա 'ի ձեռաց իւր մխիթարի: Բառդ մխիթարիլ՝
յայսպիսի տեղիս դնի փ̄ոկ շատանալոյ վրէժ-
խնդրութ. յոր միտ կամի ասել. 'ի տեսանել ա̄յ
'ի ձեռս իւր զյանցանս ինչ՝ ոչ առնէ անտես.
այլ պատժէ. և 'ի պատժելն դադարի 'ի բար-
կութէ. և իմ̄կորէն խօսելով իբր թէ զովանայ.

(կ̄մ

( կամ տեառն աստուծոյ , պաղատողական սիրտ իւր ) .
Ոչ զի կամի ած՟ զի ծառայք իւր անպատրաստ գտցին առաջի իւր . ուստի 'ի տեսանելն զնս՟ արտաս_ ուելոյ` ոչ հաճի , կմ՟ թէ աստուցից , ոչ տանի սիրա նր՟ . իսկ յորժամ պատժովք սրբէ զարատս նց՟ , այնու չարչարանայ 'ի նս՟ . որով դրեթէ սփոփի և մխիթարի 'ի վր՟ նց՟ :

Յայս մին յառաջ բերին մեկնաբայեցիք զայս բան 'ի մատնիլ իւրեանց 'ի տանջանս . զի յոր_ ժամ սկսան սանձել զառաջին որդին չարունեայ սկսան եղբարքն հանդերձ մորբն զայս բան 'ի վերայ առնուլ և ասել . * քաջուք՟ մեռցուք , „ զանուն և զօգիս ժառանգեսցուք . հայր մր՟ ած՟ „ 'ի ձգնութի սրբոց մերոյ , և 'ի ծառայս իւր մխի_ „ թարի . որպէս յայտ յանդիմանութբ՟ ասաց մով_ „ սէս յօրհնութե իւրում . և 'ի ծառայս իւր մխի_ թարեսցի || . ( բ՟ . մակաբ . է . 6 : )

Իսկ զի այս գործ մյ՟ յողորմութե նորա վերաբերի , 'ի չար" և յարմար" ողորմիլ գնի , և յերբ" սովոր_ ջանալ կմ՟ խղճել , յասելն . * և 'ի վր՟ ծառայից իւրոց խղճեսցէ || . բ՟ որում 'ի պատժել մյ՟ զծա_ ռայս իւր` տեսեալ զնոսին դարձեալս և ուղ_ ղեալս` ամրջանայ կմ՟ խղճէ 'ի վր՟ նց՟ , և զինքն առ նս՟ ողորմութբ՟ , և իբրև թէ սփոփի 'ի նո_ սին :

Օ այս խիղճ և ողորմութի ցուցանէ ած՟ և առ_ այնոսիկ` որք 'ի թշուառութե իցեն և հեծեն , 'տեսեալ զինքեանս հեռացեալս յայս մեղօք , և մտանեալս յողորմելի վիճակ . ոչ պատահեցաւ ինչ ոլ բզիմանդումատ դստատորք , մանաւանդ առ գերութին բաբելացւոց . և զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարն ասելով :

Օէ

## 22. Օ[illegible] ի Գերութենէ :

Տաղկապատ են վայս բանս մրմնջեցուցանէ առ որդիսն իւր ի Հասարակէն՝ եթէ առ ամպարիշտսն, եւ եթէ առ բարիսն · եւ զի ամենքին նոքա ի մատնիլ խուժանաց ի գերութի՝ յոգւոյ հանելով տառապելոյն՝ յիշեաց զնա զնա, եւ հայեցաւ ի նա յոյս ողորմութեան, զի եթէ դարձցին նոքա առ նա, ինքն եւս դարձցի ի կողմն նոցա, եւ օգնեսցէ նոցա · յայս անկանելով առնէ :

Օ[illegible] ի Գերութենէ : Կամի ասել · որպէս վարեցան որդիքն իւր առ նա, այնպէս ոչ վարեցաւ Ած ընդ նոսա · այլ կամեցաւ գթալ ի նոսա · զի եթէ թէ ոչ էին իւր ժողովուրդ՝ մատնեցեն ի գերութի օտարաց · եւ ի գերութեանն լքեալ էին, այլ թողեալ էին ի խնամոց եւ ի մխիթարութեանց · եւ լուծեալ էին, այլ պակասեալ էին ի զօրութէ, եւ ի գործելոյ զգործս բարիս · եւ ոչ ոք է որ օգնէ նոցա :

Ո բառդ փեսանէ՝ ամենք յեկեղեցականէն թարգմանեն յառաքելոյն, որպէս լաւինք եւ որբացեալք · խոսեալք ի կատարելէն · որպէս եօթանասունք եւ ասորիք, եւ որս եւ թարգմանիչք մեր · եւ պատճառն է, զի ոչ ասացեր է մեր ի մեկնութէ սաղմոսաց՝ առ եբրայեցիս համաձայն է առաքելոյն եւ կատարելէն · ուստի ոչ ասեմ, նոյնպէս եւ յայլ թղթոց ամենայն յառաքելոյն թարգմանեն, եւ ամենք ի կատարելէն :

Ու՛ սա կայ եւ այլ տարբերութի յայլս, որպէս եւ յեբր · ուր գրի այսպէս · * Վն զի տեսցէ (կամ եօտես), զի ի բաց մեկնեցելէ ձեռն, եւ իբր ոչինչ փակեցեալ, եւ լքեալ Ա · ի սոյն վերածի եւ թարգմա-

մանուկն լաւ" և ասուր" և աւրաք . բայց ամենին ևս զնոյն նշանակեն , 'ի ցուցանել թէ 'ի բաց բարձեալ էր յիւրացուց ձեռն պաշտպանութե , և ինքեանք ոչինչ ինչ պատսպարել լինէին . կամ թէ իբրև ոչինչ՝ փակեալ կային ի գերութե . որոյ վն լքեալ և լուծեալ էին . և ոչ գտանէին օգնութ ինչ 'ի դիցն՝ յորս ապաւինեցան . վն յանդիմանելոյ նոցին խօսի Ը նն ած , և ասէ :

23 . Եւ ասացէ տր . ո՞ւր են դիքն ձեր . յորս յուսացեալ էիք դուք 'ի նս . զորոց զճարպ զոհանդիցն ուտէիք . և ըմպէիք զգինի նուէրիցն :

24 . Յարիցեն , օգնեսցեն , և եղիցին ձեզ ըն-կոյնք :

Այս ասելն որոշեալ յայտ ժամանակս հայէր , վնկ աստանօր 'ի մերում յապաւէնին դնի . որ է և յերբ , և 'ի լատ , և յասոր . և զի ստոյգ եր՝ 'ի կատարելն դնի յածաշնչի մերում . որպէս և յեօթ" եկյարաք : Այլ արդ՝ թէպէտ և բերանով մարգարէից և այլոց ծառայից իւրոց հանդերձեալ էր ասել ած զայսպիսի բանս , բայց քանզի իւր էին բանքն , վնկ ասէ :

Եւ ասացէ տր . ո՞ւր են դիքն ձեր . յորս յուսացեալ էիք դուք 'ի նս . զորոց զճարպ զոհանդիցն ուտէիք . և ըմպէիք զգինի նուէրիցն : Այսինքն թէ 'ի տեսանել այ զիղացիս 'ի թշուառութե՝ ասելոց է նց . դուք թողիք զիս . և զյոյս ձեր եդիք 'ի կուռս օտար ազգաց . և զոհելով նց ուտէիք զպարարտ մասունս զոհիցն . և յուտելն ձեր՝ նաև զգինին՝ զոր նուիրէիք նոցա՝ ըմպէիք 'ի պատիւ նց . արդ ո՞ւր են նոքա , զի ոչ փրկեն զձեզ 'ի տառապանաց ձերոց : Այսմ . ո̄ է * ո՞ւր են նոքա || ոչ ցուցանէ զտեղի կուոցն , այլ զոչնչութի նց և զփրկութի նոցին :

Ոմանք սատանայ զբաղդ ձայրդ յատկանչ առել ասեն, թէ ինչպէս նաև զձայրդ զոհից կառոյն ուտէին․ զոր չէր օրէն ուտել ՚ի պաշտաման Տն, ոչ և չէր օրէն զգինին նուիրել ըմպել նուիրողաց․ վսյ նախատէ զնս այսու բանիւ, և զպաշտօն նոցին անարգ ցուցանէ, և զկուռսն նց մերժելի․ Նա առ զկծեցուցանելոյ զնս՝ հեգնելով խօսի․ զինչ օգտեցայք աստ ՚ի կռոց անտի, որոց զայսպիսի պաշտօն մատուցանէիք․ Ընդէ՞ր ոչ օգնեն ձեզ․

և առ այս յարէ և ասէ ։

24․ Յարիցեն, օգնեսցեն, և եղիցին ձեզ Թիկունք ։ Կամի ասել․ դուք ապաքէն զկուռսն իբրև զկենդանի ածս պաշտեցիք․ և արարիք զնս ձեզ ապաւէն ՚ի նեղութե, և օգնական ՚ի գործս արութե, եթէ յիրաւի այնպիսի են նք, ապա յարիցեն և օգնեսցեն ձեզ․ հասցեն ձեզ ՚ի թիկունս, և ապրեցուսցեն զձեզ, կամ տացեն ձեզ՝ անվիշտ տանիլ նեղութե ձերում և լիցին պաշտպան և ապաւէն․ յոր միտ յեբր՛՛ դնի ծածկոյթ, և յայլս հովանի ։ Այս բանք առ մեղաւորս և առ այնս որք թողել զած պաշտեն զախտս իւրեանց․ ոմն զախտ հեշտութե․ ոմն զախտ ագահութե․ ոմն զախտ փառասիրութե․ և այլք զայլ ախտս ։ Նոցա ասի ՚ի մահուանն իւրեանց ՚ի յետին թշուառութի՝ հնչեսցէ սիրտ նց, ուր են այն կուռքդ՝ զորս պաշտեցիք․ զինչ օգուտ եղև ձեզ ՚ի պաշտելոյ զնս․ Ընդէ՞ր ոչ փրկեն զձեզ և ոչ օգնեն ձեզ ։ Այս հնչումն խղճի մտաց եթէ ազդեսցէ ինչ ՚ի նս՝ բարի է․ ապա թէ ոչ՝ տանջեսցէ զնս միշտ իբրև որդն անքուն․ և ՚ի յուսահատութե կործանեսցէ զնս ։ Ո՜չ լաւ էր նց թողլով զայնպիսի գարշելի պաշտամանսն՝ ծառայել Այ կենդանւոյ, և օգնել ՚ի նմէ, և ժամանել առնա, և վայելել ՚ի փառս երանութե նր յաւիտեան ։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Դ.

Յայտարարութիւն գոյութեան ճշմարտին Այ կենդանւոյ, միանգամայն և սպառնալիք սաստիկք առ ամպարիշտս ՚ի դէմս եբրայեցւոց. և հրաւիրումն երկնի և երկրի և հեթանոսաց յուրախութեն երկրանէ.

Նորին մնացուած (օրհնութեն).

(՚ի սաղմոսն ծզ:)

1. Ծանիրո՛ւք և տեսէ՛ք. զի ես եմ. և ոչ գոյ այլ ած բաց յինէն:
2. * Ես սպանանեմ և ես կեցուցանեմ. հարկանեմ և ես բժշկեմ. և ոչ ոք իցէ՝ որ հանիցէ զձեզ ՚ի ձեռաց իմոց:
3. * Համբարձից յերկինս զձեռս իմ. երդուայց աջով իմով. և ասացից թէ կենդանի եմ ես յաւիտեան:
4. * Սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ. և ՚ի խնդիր վրէժուց արկանիցից զաջ իմ.
5. * Հատուցից զհատուցումն թշնամեաց իմոց. և ատելեաց իմոց հատուցից զհատուցումն նոցա նոցին:
6. * Արբեցուցից զնետս իմ յարենէ նոցա. և սուր իմ կերիցէ միս՝ յարենէ վիրաւորելոց գերելոց գլխոց իշխանաց՝ թշնամեաց նոցա:
7. * Ուրա՛խ եղիցին երկինք նո_ մաւ. և երկիրպագեսցեն նմա ամ որդիք Այ:
8. * Ուրա՛խ եղիցին հեթանոսք

Դարձեալ օրհնութիւն Մովսէսի ըստ Եօթանասնից:

(Բ. Օրէն. ԼԲ. 39.)

39. Տեսէք տեսէք. զի ես եմ. և չիք այլ ոք բաց յինէն:
Ես սպանանեմ և ես կեցուցանեմ. հարկանեմ և բժշկեմ. և ոչ ոք իցէ՝ որ հանիցէ ՚ի ձեռաց իմոց:
40. * Զի ամբարձից յերկինս զձեռս իմ. և երդուայց յաջ իմ. և ասացից. կենդանի եմ ես յաւիտեանս:
41. * Զի սրեցից իբրև զփայլակն զսուսեր իմ. և կալցի զդատաստանս ձեռն իմ:
Եւ հատուսցից վրէժս թշնամեաց իմոց. և ատելեաց իմոց հատուսցից:
42. * Արբեցուցից զնետս իմ յարենէ. և սուր իմ կերիցէ միս յարենէ վիրաւորաց և գերութեն ՚ի գլխոց իշխանաց՝ թշնամեաց:
Ուրա՛խ լերուք երկինք հանդերձ նովաւ. և երկիրպագցեն նմ ամ որդիք Այ:
43. * Ուրա՛խ լերուք ազգք ընդ
ժո_

նաւք ընդ ժողովրդեան նորա . և զօրացուսցեն զնա ամ հրեշտակք այ ։

ժողովրդեան նորա . և զօրացուսցեն զնա ամ հրեշտակք այ ։

9 . * Խնդրելով խնդրեսցէ վրէժ արեան որդւոց նորա . հատուցանէ թշնամեաց նորա հատուցումն նորա ։

Զի խնդրի վրէժ արեան որդւոց նորա . և խնդրեսցէ վրէժ . և հատուսցէ դատաստանս թշնամեաց ։

10 . * Հատուցանէ ատելեաց նորա հատուցումն նորա . սրբեսցէ Տր զերկիր ժողովրդեան իւրոյ ։

Եւ ատելեացն հատուսցէ . և սրբեսցէ տր զերկիր ժողովրդեան իւրոյ .

## Մ Ե Կ Ն Ա Գ Ի Ր

### Նորին Մովսէսի ( օրհնութիւն Է ։ )

Այս օրհնութիւն է երրորդ մասն երկուց նախընթացից օրհնութեանց՝ զոր ասաց Մովսէս 'ի գիրս Բ . օրինաց . գլ . լԲ . որոյ 'ի 39 համարոյ սկսանի սա ։ Աստի և յասելն 'ի վերնագրիդ Նորին Մովսէսի ոչ ցուցանի , թէ այս օրհնութիւն իցէ առանձինն ասացեալ 'ի Մովսիսէ , այլ թէ է վերջին մասն օրհնութեան նորա . որ 'ի կարգի սաղմոսարանին մերոյ եդեալ է իբր որոշ օրհնութիւն ։ Յայսմ օրհնութեան ցուցանէ Աստուած բերանով Մովսէսի , թէ ինքն է միայն Ճշմարիտ Աստուած , և տէր կենաց և մահու . և հաստատէ ևս երդմամբ՝ թէ կենդանի է յաւիտեան ։ Նաև ազդ սպառնայ առ որդիսն Իսրայէլի զմեծամեծ պատուհաս ։ Նաև յետ այնորիկ հրաւիրէ զերկինս և զերկիր , ևս և զհեթանոսս՝ ուրախ լինել 'ի վերայ փրկութեան Իսրայէլի , և 'ի վերայ հատուցման պատժոյն , զոր հատոյց թշնամեաց նոցա ։

## Բ Ա Ն .

1 . Տեսէք տեսէք . զի ես եմ . և ոչ գոյ այլ Աստ բաց յինէն ։

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Իւ ո՛ խօսի՝ ոչ որոշէ . բայց որովհետեւ նախ-ընթաց բանքն էին զի՛ էլուցանող՝ երեւի թէ առ նա ուղղէ եւ զայս ։ Իսկ բանիւ 'ի դիմաց ո՛յ կարգէ զբանն , իբրեւ բերանն նորա յառաջին դէմս բաւ-բառի ասելով ։

Դարձարուք եւ տեսէք . զի ես եմ . եւ ոչ գոյ այլ ած բաց յինէն ։ Կամի ասել . ով որդիք Իլի՝ դուք որք 'ի կուռս մերձեցայք , ծաներուք մօք , եւ տեսէք այժմ , զի ոչ են նոքա ած ճշմարիտ , այլ ածք սուտք եւ անարգք . Ես միայն եմ ած ճշմարիտ . զի չէ հնար թէ իցէ եւ այլ ած բաց յինէն . զի թէ լինէր եւ այլ , այն ոչ լինէր ած , այլ չած , եւ կամ հաղորդեալ ածային իմիք կատարելութե . վն զի որովհետեւ ած է ծայրագոյն յանսահմանութե գոլոյ եւ կատարելութե՝ եթէ լինէր եւ այլ ած՝ ոչ լինէր ծայրագոյն յայնմ , զի չունէր զմիւսոյն , եւ մնայր անկատար . որով եւ ոչ լինէր յանսահմանութե գոլոյ եւ կատարելութե . եւ այսպէս ոչ լինէր նա ած ։

Գիտել արժան է սա . զի յեբր" եւ յայլս բաց յեօթանասնից ոչ կրկնի բառս ծաներուք կամ տեսէք . այլ դնի այսպէս . * տեսէք արդ . զի ես ես ինքն . եւ ոչ (գոն այլ) ածք ընդ իս ‖ . կամ ըստ լսա . * տեսէք , զի ես եմ միայն . եւ ոչ է այլ ած բաց յինէն ‖ , Այլ բանզի մեծ էր ասացեալն , եօթանասունք առ ահեղ ցուցանելոյ՝ կրկնութե եդին ասելով . * տեսէք տեսէք , զի ես եմ . եւ ոչ գոյ ած բաց յինէն ‖ . ըստ որոյ յանձանչի մերում դնի . * տեսէք տեսէք , զի ես եմ . եւ չիք այլ ոք (ած) բաց յինէն ‖ . եւ առ բացարութի այսր 'ի սաղմոսարանի մերում եդեալ է .

* ծա-

* ծաներուք և տեսէք , զի ես եմ , և ոչ գոյ այլ
ա͞ծ բաց յինէն ։ Իսկ այլևայլութիւնք բառիցս
ոչինչ իւիք այլայլեն զմիտս բանին . զի 'ի
նոյն հայրին ամենեքին ։

Աստանօր շարական մեր զբառդ ծանէրու-
յայլևայլ դէմս դարձուցանելով՝ վերածէ յայլ
և այլ խորհուրդս ըստ այլևայլ տնօրէնութեան
փրկչին մերոյ ։ Իսկ նախ՝ 'ի դիմաց հաւատա-
ցելոց խօսելով՝ առաջի դնէ զխոնարհիլն նորա 'ի
հայրական ծոցոյ , և ասէ 'ի կան ԺԷ ։ * Ծա-
,, նեաք զքեզ տէր էակից հօր և հոգւոյն . որ
,, վասն մեր խոնարհեցար 'ի յերկնից . ծանեաք
,, ոչ այլ ա͞ծ բաց 'ի քէն . ծանեաք զքեզ ք͞ս ,
,, որ 'ի խաչին բևեռեցար , և հեղմամբ արեանդ
,, քո փրկեցեր զաշխարհս , ծանեաք ոչ այլ ա͞ծ
,, բաց 'ի քէն ։ Նայելով ապա և 'ի խորհուրդ
ամենասր͞բ երրորդութեան կրկնէ զայն 'ի կան ԺԹ .
և ասէ . * 'ի սր͞բ երրորդութեան ծանեաք՝ որ յա-
,, ռաջ քան զյաւիտեանս բանն ա͞ծ՝ 'ի հայրա-
,, կան ծոցոյ խոնարհեալ վասն մեր . և ոչ ոք
,, իցէ այլ ա͞ծ բաց 'ի նմանէ ։ զայն կրկնէ և
'ի կան ԺԹ ։ Իսկ ապա 'ի կան Ժ͞Ը . առ փա-
ռակցութիւն երից անձանց հայելով՝ յաւելմամբ
ինն՝ ասէ . * ծանեաք զքեզ ք͞ս փառակից հօր և
,, հոգւոյն նախապատմեալ մարգարէից զխոնար-
,, հիլն քո յերկնից . ծաներուք և տեսէք , զի
,, սքանչելիս արար տէր ։ Իսկ յետոյ զբառդ
ծանուցանէն յերկրորդ դէմս դարձուցեալ ասէ
'ի կան ԻԵ . * որ յանսկզբնական հօրէ ծնեալ
,, նախ քան զյաւիտեանս որդի . և ծանուցար
,, մարգարէիւք ա͞ծ ը͞ հօր գոլով (և ը͞ հոգւոյն
,, ա͞նդ ելով՝ դու միայն և ոչ այլ ոք) . զքեզ օրհ-
,, նեմք զեկեղց 'ի փրկութ աշխարհածոյ քոյ տ͞ր ։

Ապա գերագոյն իմն բանիւ մատուցեալ 'ի գաղտնութի անբաժանելի միութե երից անձանց և զբանդ ես եմ 'ի նոյն վերածեալ ասէ 'ի կանոն ձլն. ※ որ հոգւովդ քով սբով ծանուցար քո
,, առաքելոցս, որ էնդ, և եսդ, և էդ ած ||. ուր էնդ հայր 'ի հայր. եսդ յորդի, և էդ 'ի հոգին սբ. Յետ այսր 'ի մէջ բերելով զծանուցանել որդւոյն այ զմեռանիլ մահու՝ ասէ 'ի նմին կան ձլն. ※ տեսեալ զքեզ մահու լուծա-
,, և դժ. խոց սարսեալ դողային, որ զմահ մա-
,, հու ծանուցեր մահ ||. որով բանիւ խոստովանի զորդին այ տէր կենաց միանգամայն և տէր մահու. Քս որում նա միայն կարէ մեռուցանել և կեցուցանել. զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարին 'ի բերանոյ տեառն, և ասէ.

2. Ես սպանանեմ և ես կեցուցանեմ. հարկանեմ և ես բժշկեմ. և ոչ ոք իցէ՝ որ հանիցէ զձեզ 'ի յձեռաց իմոց.

Սպանանելն է բառնալ զկեանս յումեքէ. իսկ կենդանացուցանելն է տալ ումեք զկեանս. այլ կեցուցանելն է պահել յումեք զկեանս. (Թէպէտ այս բառ կարէ նշանակել և զկենդանացուցանելն). Արդ մարդիկ կարեն բառնալ զկեանս թոյլտուութբն այ. բայց ոչ կարեն տալ. կարեն պահել զկեանս նպաստիւք այլոց իրաց, բայց ոչ կարեն՝ որչափ կամին. և ամենքին կախին զանկանարկուէն այ. Որ այսպիսի է ասէ և ած. այլ ինքնիշխան յամի և ամենատէր. վասն որոյ 'ի դիմաց այ խօսելով՝ ասէ.

Ես սպանանեմ և ես կեցուցանեմ. հարկանեմ և ես բժշկեմ. և ոչ ոք իցէ՝ որ հանիցէ զձեզ 'ի յձեռաց իմոց. Այսինքն թէ 'ի ձեռին իմում է բառնալ զ-

կեանս

կեանս և տալ, պահել, և երկարել. կարեմ որ-
պէս և կամիմ՝ հարկանել, և զհարուածեալս
բժշկել. և զձեզ ևս՝ որք ոչ կամիք հնազանդիլ
ինձ՝ նուաճել ՝ի ձեռին իմում. և վասնզի ոչ գոյ
որք հաւասար իմ, ով կարիցէ հանել զձեզ ՝ի
ձեռաց իմոց:

Յերբ" առաջին հատուած այսր հիրոյ յապա-
նին դնի. ը̅ն որոյ եդեալ է և ՝ի լատ. բայց նոյն է
և այս. զի բանն ոչ միայն ՝ի ներքոյ հայի, այլ
և յապառնին: Վարձեալ յերբ" փոխկ առելը
հարկանեմ՝ դրի. բժշկեցի կամ սպանեցի.
այլ այս բառ ևս ՝ի նոյն հայի. ը̅ն որում բաւե-
ալըն հարկանելով լինի. ուստի և այլ ամենայն
Թարգմանութիւնք եդին հարկանել ը̅ն մերում:
Խորհրդաբար՝ այս բան հայի յիրաւունս տէրու-
թեն քնի, որ մեռոյց զմահ և կեցոյց զմեռեալս
իբրև իշխան մահու և կենաց ը̅ն յիշելոյ մեր ՝ի
վերոյ. յոյր սակս երգէ եկեղեցի ՝ի շար. Ճիծ.
առելով. * Ծանեաք զքեզ ք̅ո Թագաւոր յաւի-
,, տենից. և տեսաք զքեզ իշխան մահու և կե-
,, նաց. զի դու ես տէր. և չիք այլ որք բաց ՝ի
,, քէն ||: Նա որ զարմանալինն է՝ զայս արար մահ
ուամբ իւրով, ՝ի բառնալ անդ զդատապար-
տութի անիծից մերոց, և ՝ի շնորհել մահացելոցս
մեզ զկեանս. յոր միտ վերածէ եկեղեցի զայս
բան ՝ի շար. Ճիթ. առելով. * անճառ տնօրէ-
,, նու̅թ ՝ի միշտ կուսէն զանիծիցն բարձեր զդա-
,, տապարտութի. և կամաւոր խաչելու̅թ ք̅ո տէր
,, կեանս շնորհեցեր անոխակալ փրկիչ. առա-
,, ւել վերօրհնեմք և երկրպագեմք. որ ուրա-
,, խութ ես երկնի և երկրի ք̅ո ա̅ծ ||: Նա առ
՝ի ցուցանել՝ թէ ոչ առ ժամանակ մի, այլ միշտ
և յաւիտեան կարող է շնորհել կեանս, զյա-

ւիտենական կենդանութի նորա 'ի մէջ բերէ մարգարէն, և ասէ :

3. Համբարձի յերկինս զձեռն իմ. երդուայ աջով իմով. և ասացի թէ կենդանի եմ ես յաւիտեան :

Սաղմոսականն ասացուածք են սոքին. զի յա̃ծ ոչ ձեռն գոյ, և ոչ աջ. բայց քանզի որք երդնուն՝ համբառնան զձեռս, կամելով ցուցանել զստուգութիւն երդմանն՝ 'ի մէջ բերէ զհամբարձումն ձեռին և աջոյ, ասելով :

Համբարձի յերկինս զձեռն իմ. երդուայ աջով իմով. և ասացի թէ կենդանի եմ ես յաւիտեան : Կամի ասել. մի կարծէք թէ ես իբրև զմարդ հեղձամնոտաց առժամանակեայ ինչ իցեմ. այլ կենդանի եմ յաւիտեան. և յայս իսկ համբառնամ զձեռս իմ յերկինս, և երդնում յաջ իմ, որ յամենակարող զօրութի իմ և 'ի կենդանութի իմ. և նովին վկայեմ զոր ասացի, որ է թէ յաւիտեան կենդանի եմ ես. և որ ինչ կայ՝ ինև կայ՝ եթէ 'ի ժամանակեայս, և եթէ 'ի յաւիտենականսն : Իսկ թէպէտ յեբր" և յասոր" և յարաբ" և 'ի լատ" փոխանակ երդնլոյ՝ ասել դնի, բայց և այն յերդնուլ վերածի. ուստի և եօթանասունք երդնուլ եդին :

Փոխաբերաբար, աջով՝ կամ ըստ այլոց՝ ձեռամբ իմացեալ լինի աստ որդին ա̃յ, և կենդանեաւ՝ կենդանարար հոգին. որովք երդնու հայր, թէ իցէ յաւիտեան ը̃ որդւոյ և ը̃ սբ̃յ հոգւոյն : Խորհրդաբար այս բան ասի 'ի բերանոյ որդւոյն ա̃յ խաչեցելոյ վասն մեր. քանզի համբարձեալ զձեռս իւր 'ի խաչին 'ի վեր յերկինս՝ նովին համբարձմամբ՝ իբր երդմամբ եցոյց՝ թէ ինքն որ մեռանի 'ի վերայ խաչին՝ կենդանի է յաւիտեան,

տեան, եւ ՚ի մահուն անմահ · եւ զի անճառելի ին ցուցանէ այս առ այնոսիկ՝ որք նախագուշակ եղեն մահու նորա, որպիսի եղեն մարգարէք, շարականն մեր ցնծալից ին յառաջ բերէ զայն այլով ին բանիւ՝ ՚ի կան ձին · ասելով · * Դու
,, ես ած (որ ՚ի մահու անմահ մնալով) անճառ
,, ճառեցար մարգարէից · եւ միայնոյ քեզ ձայնը
,, ի եւ անմահի մեզ երկրպագեն ամենայն հա-
,, ւատացեալք || ·

Նոյն խօսեցեալ մարգարէին զյաւիտենական կենդանութիւն այ, եւ թէ նա միայն կարէ տալ զկեանս իբրեւ տր, դարձուցանէ զբան իւր ՚ի ցոյց վրէժխնդրութեան նորա ընդդէմ թշնամեաց իւրոց, եւ ասէ ·

4 · Սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ · եւ ՚ի խնդիր վրէժուց արձակեցից ձեռն իմ ·

5 · Հատուցից զհատուցումն թշնամեաց իմոց · եւ ատելեաց իմոց հատուցից զհատուցումն նոցա նոցին ·

Յայտնութիւն բանիցս ցուցանէ զսաստկութիւն վրէժխնդրութեան այ · եւ այս ոչ այնչափ առ հեթանոսս՝ որչափ առ իւրայինս · զի հեթանոսք ոչ գոլով այնչափ տեղեակ ածային քաղցրութեան՝ որչափ տեղեակ էին իւրայինք, նուազ է զի իւրայինս դատանեին պարտաւոր պատժոց · իսկ իւրայինք որովհետեւ ճաշակելով զայն՝ դառնացուցին զնոյն, վաղ եւ ած առանց խնայութեան ցուցանէ նց զդառնութիւն բարկութեան իւրոյ · ուստի եւ զսաստկութիւն այնր այլ եւ այլ սաստկագին նմանութիւնք առաջի առնէ · եւ նախ ասէ ։

Սրեցից որպէս փայլակն զսուսեր իմ · եւ ՚ի խնդիր վրէժուց արձակեցից ձեռն իմ ։ Սուսեր այ է վրէժխնդրութիւն նր · սրեցից ասէ զայն՝ առ յաջ՚ղ հաստատելոյ ·

զի

զի սուր որէն յաջող հատանէ ։ Իսկ յետ այսր սրաղուեն՝ 'ի կողմանէ ոչ մտածեն է արտաքուստ նր, եւ և անհնարակարող զօրութե նորին. այլ 'ի կողմանէ մարդկան մտածեն է մեղք նց. մին իբր խնդրող վրիժուց, և միւսն իբր գրգռիչ՝ առ 'ի հատանել ։ Իսկ զի ցուցցէ թէ արագութ իցէ հատանելոց, դնէ իբրև զփայլակն սրէն, 'ի խնդրել զվրէժ 'ի նցէ ։ Իսկ դարձեն՝ առ 'ի ցուցանել զանհնահանջելի լինելն՝ յաւելու և զաջն. ոչ թէ եղեն էր. սաստկութ բարկութե իմոյ աջով ամենակարողութես արձակեցի 'ի վր ապերախտ ժողովրդեանդ. և առցէ 'ի նցէ զվրէժ իմ. փոխ զի չարաչար յետս կացին յինէն. ես թողեալ զօտար ազգս՝ ընկալայ զդոսա իբրև զբարեկամ և իբրև զսիրելի. և դք դարձան ինձ թշնամի և ատելի. վոյ և ես հատուցից դց ըստ չարեաց դոցին.

և առ այս յարէ և ասէ ։

5. Հատուցից զհատուցումն թշնամեաց իմոց. և ատելեաց իմոց հատուցից զհատուցումն նոյնանոյն ։ Այս կրկնուի բանից յայտնի ցուցանէ, թէ անհնարին սաստկութ վրէժ խնդրելոց էր առ յորդւոցն իւր իբրև 'ի թշնամեաց և յատելեաց իւրոց. որպէս և զիարդ արժանի իցեն վրիժուց ։

Յանձնչի մերում յաւելեալ լինին և այլ բանք այլով իմն կարգաւ յասելն. * զի սրեցից իբրև
,, զփայլակն զսուսեր իմ. և կալցի զդատաստանաց
,, ձեռն իմ. և հատուցից վրէժս թշնամեաց
,, իմոց. և ատելեաց իմոց հատուցից ‖ ։ Իսկ այս
համաձայն են եղանէ բնագրին. ուր գրի այսպ
* զի սրեցի զփայլակն սրոյ իմոյ. և բուռն եհար
,, զդատաստանէ ձեռն իմ. հատուցից զվրէժ
,, նեղչաց իմոց. և ատելեաց իմոց հատուցից
,, (կամ փոխարինեցից) ‖. սոյնպ դնի և յայլս ։

Իսկ

Իսկ թէ փայլակն որոյ ասի, այդ հայի ՚ի հան-
գամանս լեզուի. որ ՚ի մեզ թարգմանի * իբրև
զփայլակն զսուր իմ‖. և յոյժ իմաստ բանին ՚ի
նախադրելոց հայի, ՚ի խնդրել ա՛յ զվրէժ ՚ի
թշնամեաց իւրոց.

Օ այս վրէժխնդրութիւն եցոյց տ՛ր մեր առ թշնամիս
հոգւոց մերոց, արձակելով ՚ի նոսա զնետս բանաւոց
խաչին իւրոյ. ուստի երգէ եկեղեցի ՚ի շար.
Ձ՛ի. ՚ի մէջ բերելով և զհաստատուն հաւատա-
ցելոցն ՚ի ք՛ս, յասելն. * որ զօրութ՛բ բազկի քո
„ խնդրեցեր զվրէժս յատելեաց. և հաստատե-
„ ցեր զհաւատացեալս ՚ի քեզ. նշանաւ խաչին դ-
„ ադատեցեր յաւիտենից ՚ի մահուանէն‖ ։ Եւ
՚ի կան Ձ՛ի. յաւելմամբ իմն ասէ. * որ բարձրա-
„ ցել բազկաւ ՚ի վ՛ր խաչին խորտակեաց զա-
„ պստամբ զթշնամին. իջանելով ՚ի ստորինս
„ ազատութ՛ն շնորհեաց նստելոցն ՚ի խաւարի. և
„ ոչ ոք իցէ այլ ա՛ծ բաց ՚ի նմանէ‖ ։

Եւ զի մարգարէն յիշէ աստ զփայլակն ևս,
շարականս մեր ՚ի մերձաւորութ՛ն և ՚ի յարմարութ՛ն
բանիցն հայելով ՚ի մէջ բերէ զփայլակնիլ ս՛բ
զփայլիլ տ՛ն մերոյ իբրև զարեգակն՝ բազմել՝ ՚ի
խաչին իբր ՚ի կառս ամպոց փայլատակմանց ՚ի
վրէժխնդրութ՛ն թշնամեաց մերոց. ա՛ն որոյ ասէ ՚ի
կան. Ձ՛ի. * յարևելից մեզ փայլեաց արեգակն
„ արդարութ՛ն. իշխանութ՛բ բազմեալ տեսաք զնա
„ ՚ի կառս խաչին. ծանեաք և տեսաք, զի
„ զքանչելիս արար տ՛ր‖ ։ Արդ զորս եդ մարգա-
րէն վ՛ն բանի հաւատացման՝ ոչ կարելով իւիք բա-
ցատրել զդառնութ՛ն այնր՝ ՚ի մէջ մատուցանէ
զնոյն խստագոյն օրինակօք, և ասէ ։

6. Արբեցուցից նետս իմ յարենէ նոցա . եւ սուր իմ կերիցէ միս՝ յարենէ վիրաւորելոց գերելոց գլխոց իշխանաց՝ թշնամեաց նոցա .

Արբեցուցանել զնետս՝ է նետիւք վիրաւորել . բազում արեամբ այսու թաթաւխին , եւ իբր թէ արբենան նետք յարեան . այնպէս եւ ուտել սրոյ զմիս՝ է խոցել սրոյ զմարմինս . Օ այսպիսի փոխաբերական բանս առաջի առնելով մարգարէին՝ կամի ցուցանել զառաւելութ սաստկութ բարկութեան նր . Եթէ սոսկ նետ կոչէր կամ սուսեր , այն բաւական էր ցուցանել՝ թէ սաստկապէս զայրացեալ է բարկութիւն նր . բայց 'ի յաւելուլն զարբեցումն նետից եւ զուտումն սրոյն՝ ցուցանէ թէ յանչափս է զայրացեալ . 'ի սոսին աշա ակնարկէ առաջիկայ բանդ՝ զոր ասէ .

Արբեցուցից նետս իմ յարենէ նոցա . եւ սուր իմ կերիցէ միս . Կամի ասել . արձակեցից զբարկութիւն իմ իբրեւ զնետ , եւ յանհնարինս խոցեցից զանօրէնս եւ զապերասան զազգն զայն . մինչեւ արբեսցի բարկութիւն իմ , այսինքն մինչեւ բաւականասցի .

Եւ սուր իմ կերիցէ միս . Այսինքն բարկութիւն իմ իբր սուր հարցէ զթշնամիսն իմ , եւ իբրեւ թէ կերիցէ զմիսս . մինչեւ յագեսցի յարենէ նոցա . եւ առ այս յարէ եւ ասէ .

Յարենէ վիրաւորելոց գերելոց գլխոց իշխանաց՝ թշնամեաց նոցա . Այս բանք թէպէտ եւ մթին են , բայց վերամբերելով յորդիսն Իղի՝ բացայայտին այսպէս . բարկութիւն իմ իբրեւ նետ եւ իբրեւ սուր հարցէ եւ վիրաւորեսցէ զիսրայէլացիս . եւ յարենէ նց իբր յարենէ սպանելոց յագեսցի . եւ 'ի միս նց կերիցէ , 'ի գերելն նոցա եւ զգլխոց նոցին՝ քհյ իշխանաց

նոցա նոցին, և յանկանել նոցա 'ի ներքոյ թշնամեաց իւրեանց։

Իսկ հայելով 'ի թշնամիսն իւր՝ կարէ քաջասրտել այսպէս. սուր իմ խնդրեսցէ զվրէժ արեան որդւոցն իւր 'ի թշնամեաց նց, ուր գերեցին զնոսա 'ի քաղաքէն. որով և զրկեցին զնոսա 'ի գլխոյ նոցին, այս 'ի թագաւորէ, և յիշխանաց։

Յերբ՛՛ գնի. * սուր իմ կերիցէ զմիս յարենէ սպանելոյն. և զգերութի 'ի գլխոյ մերկութեց թշնամեացն‖. այսինքն թէ սուր իմ առցէ վրէժ 'ի թշնամեացն իւր՝ վասն սպանանելոյ նոցա զբազումս 'ի նոցանէ, և 'ի գերութի վարելոյ զմնացեալսն, և մերկացուցանելոյ զնոսա 'ի գլխոյ նոցին. կամ վասն գլխիքաց վարելոյ զնոսա նաբուգոդոնոսորայ, որ էր գլուխ թշնամեացն իւր. Ի այն վերածին և այլ թարգմանութիք. ամենին մի քան զմի մթին և անիմանալի. իսկ դիտումն բանին է ցուցանել զաստուածն վրէժխնդրութին ոյ հայելով առ իւր, կամ մանաւանդ առ թշնամիսն իւր։

Խորհրդաբար՝ այս բանք հային 'ի վրէժխնդրութին քնի, որ հեղլով զարիւն իւր 'ի խաչին արբոյց զնետս իւր՝ այս զսարկուի իւր յարեան սատանայի վասն գերելոյ նորա զմեզ. Յայս միտ երգէ եկեղեցի զայս բան 'ի չար չչ, ասելով. * որ 'ի խաչին մարմնով պատարագեալ հեղեր
» զարիւն քո սբ. և արբուցեր զնետ քո յարեան
» խաւարախողին մերոյ. զքեզ օրհնեմք զեկեղեցի
» 'ի փրկութիւն արարածոց քոց տէր‖. Ի այն հայի և այն՝ զոր ասէ 'ի կան չին. * աջով քո
» բարձրելոյ առցես զվրէժս 'ի թշնամեացն. և
» նետք քո արբցեն զարիւն նորա. (այս թէ մե-
» ռուսցեն զզօրութի նորա). զի դու ես տէր. և

» չիք

,, չիք այլ ոք բաց 'ի քէն Ա: Աստանօր աւարտի երկրորդ մասն այսր օրհնուե՟, և սկսանի վերջին մասն՝ աւետաւորութ՟. երկնի և երկրի և ամենայն ազգաց՝ յասելն:

7. Ուրախ եղիցին երկինք նովաւ. և երկիրպագեսցեն նմա ամ որդիք այ:

Յետ ազգի ազգի թշնամանաց և պատժոց՝ որովք չարչարեաց ա՟ծ զի՟էլացիս վասն թողլոյ նոցա զնա, եցոյց նոցա և զփրկութի իւր. նախ՝ առ գե_ րութ՟ն բաբելացւոց, և ապա գալով ինքնին առ նոսա: Յերկոսին 'ի սոսա հայելով ասէ:

Ուրախ եղիցին երկինք նովաւ. և երկիրպագեսցեն նմա ամ որդիք այ: Որպէս 'ի սկզբան զերկինս և զերկիր կոչելով՝ եցոյց մարգարէն զմեծութի ասացելոցն, նոյնպէս և աստ զնոսին հրաւիրելով յուրախութի՝ ցուցանէ մեծ իմն լինել այնմ՝ զորմէ խօսի. որ_ պէս թէ եղեալ էր. երկինք և երկիր տեսեալ թէ ա՟ծ փոխանակ կորուսանելոյ զիսրայելացիս՝ գթացաւ 'ի նոսա, և եցոյց նոցա զփրկութի իւր, ուրախ լիցին 'ի վերայ նոցա. և այս՝ նովաւ, յս՟ ա՟վ, կամ 'ի փառս ա՟յ. Նմանապէս և որդիք ա՟յ՝ յս՟ այն արդարք՝ որք գտանին 'ի մէջ ի՟ղի, ևս և հրեշտակք՝ ցնծութ՟ պաշտեսցեն և փառաւորես_ ցեն զնա: Զայլոց թարգմանուե՟ց տես 'ի յա_ ջորդ համարն:

Այս ուրախութի երկնից առաւելեօք իմն հայի 'ի փրկութն յայն՝ զոր եցոյց մեզ որդին ա՟յ. է՟ որ ուրախ եղեն երկինք, յս՟ բնակիչք երկնից, որք են հրեշտակք. ուրախ եղև և երկիր, յս՟ բնա_ կիչք երկրի. և ըստ այսմ տէրն մեր եղև ուրա_ խութի երկնի և երկրի. որպէս դնի 'ի նա_ խայիշէն չար ձիթ յասելն. * առաւել վերօրհ_ ,, նեմք

„ նեմք և երկրպագեմք՝ որ ուրախութիւն եւս երկ-
„ նի և երկրի քն ած ։ Նաև զի յայս ուրախութիւն բազմօք վայելեցին հեթանոսք, սմին իրի գոչէ առ նոսա մարգարէն և ասէ ։

8. **Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նր. և զօրացուսցեն զնա ամ հրեշտակք այ ։**

Այս հրաւիրումն հեթանոսաց քանզի աւանդելոյ առաքելոյն (Հռոմ. ԺԵ. 15.) ակնարկէ 'ի փրկութիւն նց. զի յայսմ էր ուրախանալ նոցին. իսկ քանզի նկարագրին հայի յուրախակցութիւն փրկութեն հրէից. ըստ որոյ ասէ ։

**Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա ։**

Կամի ասել. ով ազգք հեթանոսաց՝ տեսեալ ձեր զփրկութիւն ազգին իւրի՝ յուրախանալ նց քանզի այն՝ դուք ևս քանզի նմ ուրախասջիք ։ Օ այս ասէ՝ ոչ զի հեթանոսք ուրախանալոց էին քանզի փրկութի նց, այլ զի ցուցցէ, թէ մեծ եղև ուրախութի փրկութե ազգին իւրի. մինչև հեթանոսաց ևս վայելէր ուրախանալ քանզի այն. ով հրաւիրումն երկնի և երկրի յուրախակցութի ոչ ցուցանէ զուրախանալ նոցին իրաց, այլ զմեծութի առաթի ուրախութեն ։ Իսկ յապագայն հայելով՝ ք 'ի փրկութիւն յայն, զոր ժառանգելոց էին հեթանոսք քանզի ժողովրդեան նն, ճշմարտութե էր ուրախանալ նց ։ Նաև զի այսպիսի ուրախակցութե ունէին զօրացուցանել զինէլ, վասն յարէ զկնի, և ասէ ։

**Եւ զօրացուսցեն զնա ամ հրեշտակք այ ։** Եթէ 'ի հասարակի մտածեսցի այսպիսւն, բաւիճ հրեշտակք այ՝ իմացելն լինին նոքա՝ որք իբր յայս շարժեալ ուրախանալոց էին քանզի փրկութի որդւոցն իւրի. յոր միտ կամի ասել. որք միանգամ ուրախանան քանզի փրկութեն իւրի իբրև հրեշտակք այ, ք իբրև պատ-

գա

գամաւորք Այ կմ իբրև աւետաւորք Այ , Նոքա զօրացուսցեն զնո հաստատուն մնալ 'ի փրկու֊ թեն անդ ։ Իսկ եթէ 'ի մասնաւորի մտածեսցի , բաժնեալ Հրեշտակք Այ՝ իմացեալ լինին նախ նո֊ քին իսկ Հրեշտակք . երկիր արդարք . յոր մտ յօրի֊ նակս ինչ եօթն" դնի որդիք Այ . ըստ ընդ հակա֊ ռակն 'ի նախընթաց համարն՝ ուր 'իմեր և 'ի հասարակ օրինակս եօթն" դնի որդիք Այ , յայլ օ֊ րինակս ինչ դնի Հրեշտակք Այ . որովք նշանակին եթէ Հրեշտակք երկնից և եթէ որդորք . և յայս մտ կամի ասել . 'ի գտանել ինչ զփրկութն՝ զօրացուսցեն և հաստատեսցեն զնա 'ի փրկութե նորա Հրեշտակք երկնից , և որդարք՝ որք գտա֊ նին 'ի մէջ նորա ։

Այլ եթէ յապագայն հայեսցուք , հրեշտակօք իմացեալ լինին աստ առաքեալքն և որք եկին զկնի նոցա . զի 'ի փրկել Այ զազգ մարդկան՝ առաքեալքն իբրև Հրեշտակք Այ զօրացուցին զնա 'ի փրկութե անդ ։

Այլ գիտելի է՝ զի յեբր" և յայլս բաց յեօթա֊ նասնից պակասի աստ ոչ միայն նախընթաց հա֊ մարն , այլ և յետին բան այսր համարոյ , այն զոր ասէ . * և զօրացուսցեն զնա ամ Հրեշտակք Այ ‖ . բայց պարտ է ասել , թէ անկեալ են այս բանք 'ի բնագրէ անտի . յորմէ թարգմանեալ են ասորւոցն և լատինացւոցն . գուցէ և արա֊ բացիք յայն հայելով ոչ են եդեալ 'ի թարգ֊ մանութե իւրեանց ։ Այլ ոչ գոյ ասել՝ թէ եօթա֊ նասունք յիւրեանց յաւելլին զայդոսիկ , ապա թէ ոչ՝ զգոյն գործէին և յայլ տեղիս՝ որ է ան֊ տեղի ։ Արեւմնկային այդոքիկ բանք գտնէ յօրի֊ նակն յայն՝ յորմէ թարգմանեցին նք ։

Աստանօր յետ հրաւիրելոյ մարգարէին զհե֊

թանոսս, եւս և զերկինս և զերկիր՝ ուրախանալ 'ի վ՟ր փրկութեանն իւրոյ՝ 'ի մէջ բերէ այժմ և զարտաքին առիթ ուրախանալոյ ն՟ց, 'ի տեսանել ն՟ց զվրէժխնդրութիւն ի՟ւր 'ի վ՟ր թշնամեաց ազգին իւրոյ, և ասէ ։

9․ Խնդրելով խնդրեցաւ վրէժ արեան որդւոց նո-
ցա․ հատուցումն թշնամեաց նոցա հատուցանէ
նոցա ։

10․ Հատուցումն ատելեաց նոցա հատուցանէ նոցա․
քաւեսցէ Տ՟ր զերկիր ժողովրդեան իւրոյ ։

Այս բանք են բանիցն կշռեալք՝ երեւի թէ հայցին յորդւոցն իւրոց․ բայց են ներքինն նշանակութեան հայցին 'ի թշնամիս ն՟ց․ որպ՟ յայտ է յայլոց թարգմանութեանց, եւս և 'ի բանից ամենաշնչին՝ զոր եդաք 'ի սկզբան․ յորս այս վրէժխնդրութիւն անկանի 'ի վ՟ր թշնամեացն իւրոց․ և յայս միտ խօսելով ասէ ։ Խնդրելով խնդրեցաւ վրէժ արեան որդւոց նոցա․ հատուցումն թշնամեաց նոցա հատուցանէ նոցա ։ Այսինքն թէ 'ի չարչարել թշնամեաց զհաւատացեալսն, և 'ի հեղուլ զարիւն որդւոց նոցա, կամ են երբ" և ասոր" և լաւ" և արար", ծառայից ն՟ց, զվրէժ այնր ամ՟ն խնդրեաց ած՟ 'ի նոցանէ․ և հատոյց ն՟ց զհատուցումն նոցին ։ Իսկ են այսմ կարգ բառից այսր համարոյ են երկրորդ հատուածոյն առաջի դնելի է այսպէս․ հատուցումն հատուցաւ թշնամեաց ն՟ց․ որ պատիժ պատուհասի տուեան ն՟ց ։ Ասացի և դերանունդ նոցա՝ որ երկիցս դնի աստ 'ի համարն 9․ սոյնպէս և 'ի յաջորդ համարն՝ համարելի է իբր զարդ, և կամ իբր բացայայտելի․ իսկ բառդ թշնամեաց՝ իբր բացայայտիչ ։ Հաւանական եւս թուի ասել՝ թէ յանգէտ գրագրաց իցէ յաւելեալ այն․ զի ոչ գտանի 'ի

զբաղմանց , կամ տրտմագին խորհրդոց՝ ցան_
կայ կանխել և առաւօտանալ առ ա̃ծ՝ և փա_
ռաւորել զնա ։ Զայս հայեցեալ ասէ շարակնին
'ի դիմաց հաւատացեալ քրիստոնէի 'ի կամ ձ̃ին ․
* 'ի գիշերաց կանխեցից փառաւորել զանդ

,, Ա͞ծ, որ վ͞ն իմ խոնարհեցար 'ի յերկնից. ապաքէն ,, զխաղաղութի 'ի յերկինս և 'ի յերկրի ‖ : Իսկ ապա յայլ իմն տեսութի վերաբերեալ զբանն, զլուսափայլ առաւօտ յարութեն քո՛ առաջի առնելով, և 'ի միջնորդութի պատուական խաչի նր ապաւինելով մաղթէ 'ի կան Ձրիզ. որպ զի 'ի կանխել իւրում առ նա՝ նա ևս կանխեսցէ երևեցուցանել զերեսս իւր. ուստի ասէ, * քոյով պատուական ,, խաչիւ քո ա͞ծ, և հրաշափառ քո առաւօտու ,, յարութբ երևեցո ինձ զերեսս քո ‖ . Իսկ ձ͞զի այսպիսի կանխումն հոգւոյ առ ա͞ծ՝ կախի զլուսոյ նր, յայն հայելով մարգարէին՝ ասէ :

2. Զի լոյս են հրամանք քո 'ի վ͞ր երկրի. արդարութիւն ուսանիջիք բնակիչք երկրի :

Մարդիկ հասարակօրէն 'ի ծագել զգալի լուսոյ յառնեն. իսկ մարգարէն փութայ կանխել 'ի ծագել իմանալի լուսոյ ա͞ծային պատգամաց ասելով :

Զի լոյս են հրամանք քո 'ի վ͞ր երկրի : Կամի ասել. մ͞բ զարմասցին մարդիկ, թէ ես ոչ սպասեմ ծագման լուսոյ առ 'ի յառնել, այլ գիշերայն կանխեմ առ քեզ. վ͞ն զի իմ լոյս հրամանք քո է. նովաւ լուսաւորիմ. նովաւ զուարթանամ. և նովաւ բերկրեալ՝ զգիշերն ոչ համարիմ ինձ խաւար, և ոչ զմութն մութ :

Արդ այսու լուսով հրամանի իմացեալ լինին նախ այն ա͞մ պատգամք՝ զոր ա͞ծ ետ մարդկան՝ ծագիլ ը͞ն ամենայն երկիր ըստ այլևայլ յայտնութեց և հանգամանաց : Իսկ զի յայսոսիկ պատգամս ա͞յ յայտնին դատաստանք նր և խոստմունք նորին, յեբր" և յասոր" և 'ի լատ" դատաստանք դնի : Երկրորդ՝ իմացեալ լինի լուսաւորութի նոր օրինաց,

նաց , կամ նոյն իսկ նոր օրէնքն՝ զորս ետ մեզ Տէրն մեր ․ և յայս միտ շարականն մեր զայս բան առաջի դնէ 'ի կան Ձ՛ին Թ ․ ուր նաև զառաւօտ առնելն փոխանակ փառաւորելոյ իմանալով ասէ ․ * Հոգի իմ յամ ժամ զքեզ փառաւորէ Տէր ․
,, վն զի լոյս են հրամանք քո 'ի վր երկրի ‖ ։

Երրորդ՝ իմացեալ լինի լոյսն այն Ածային , որ տպաւորեալ է 'ի սիրտս մդն ․ զի սոյն այս մի-
բոպէս կարէ առնել լոյս 'ի վր մր երկրի ։

Չորդ՝ իմացեալ լինի առաջին հրամանն այն՝ որով հաստեցան երկինք և երկիր ․ ըստ որում յայնմ պահու ազդեցուի հրամանի նր իբրև լոյս յայտ արար զիմ իւրաց զկարգ և զսահման ․ յայս միտ առէ 'ի շար Ձ՛լ ․ * որ բանիւ հրամանի քո հաս-
,, տատեցեր զերկինս և զերկիր՝ արարիչդ մր
,, եղանուեց ․ վն զի լոյս են հրամանք քո 'ի վր
,, երկրի ‖ ։

Այլաբանորէն՝ այսու լուսով նշանակի Տէրն մեր ․ որ լոյս եկն յաշխ ․ (Յովհ ․ Գ ․ 19) ․ ինքն լոյս , և հրամանն նր ևս լոյս ․ յայս իսկ աղաղակէ առ նա եկեղեցի 'ի շար Ձ՛Լ ․ ասելով ․ * լոյսդ՝
,, որ էր յօր նախ քան զյաւիտեանս , եկիր լու-
,, սաւորել զխաւար մեղաց մի՝ ծագել 'ի սմա
,, զլոյս հրամանի ․ առ քեզ հոգի իմ առաւօտէ ‖ ։

Իսկ սմին բարբառելով առ նա 'ի կան Ձ՛իՁ խոնդրէ 'ի նմանէ՝ իբրև լոյս Ճշմարիտ լուսաւորել զմիքն յերկրի աստ ․ և 'ի ձեռն առաւօտու յարութե իւրոյ՝ ևս և 'ի ձեռն խաչելութե երևեցուցանել ինքեան զերեսս իւր ․ ուստի ասէ ․ * լոյս
,, Ճշմարիտ քն մծ՝ առ քեզ հոգի իմ առաւօ-
,, տէ ․ 'ի յերկրի երևեցո ինձ զերեսս քո ․ քոյով
,, պատուական խաչիւ քն մծ՝ և հրաշափառ քո
,, առաւօտու յարութեմբդ երևեցո ինձ զերեսս
,, քո ‖ ։

,, քո ‖ ։ Այլ արդ խոստովան լինելով, թէ լու-
սով նորին լուսաւորեցաք՝ 'ի լուծանել նր̅ զիշ-
խանութի խաւարի, ասէ 'ի կանձին. * լուսա-
,, ւորեցաք 'ի հրամանաց քոց Թգ̅ւ Թգ̅ւաց իմ
,, որ զմահու լուծեր զիշխանութի. (վն̅ զի) յանձն
,, առեր զմ̅հ, և խաչի համբերեցեր ‖ ։ Դար-
ձեալ ըս̅ այլ իմն տեսութե չար՛ մեր այսու լուսով
իմանայ զլուսաւորութի նորին իսկ կենարար խա-
չին քո. յոր միտ ասէ 'ի կանձըն. * որ 'ի
,, ձեռն փրկական խաչի քո լուսաւորեցեր զսբ̅
,, զեկեղեցի. և ետուր պարիսպ ամրութե հաւա-
,, տացելոց. վն̅ զի լոյս են հրամանք քո 'ի վերայ
,, երկրի ‖ ։

Աստանօր մարգարէն զերկիր 'ի մէջ բերելով յայտ առնէ՝ թէ միայն երկիրս էր կարօտ այնմ լուսոյ. ըս̅ որում խաւար անհնարին պաշարեալ էր զնա. և չարութի առ հասարակ տարածեալ էր 'ի նմա. և նոյն ինքն սատանայ իբրև մառախուղ աղջամղջին բռնացեալ էր ըս̅ ծագս նորա համայն ։ Այլ զի երկրաւ տիրապէս առեալ ոչ իմացեալ լինի աստ զանզգամ հողս, այլ որք բնակեն 'ի նմա, առ նս̅ դարձուցեալ մարգարէին զբանն իւր՝ ասէ ։

ՈՒՍԱՐՈ՛ՒՔ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԻ՛ՉՔ ԵՐԿՐԻ ։ Մարթ է զայս բան ըս̅ հարցն վերածել 'ի վրէժխնդրութին ա̅յ, սրով եհար զասորեստանեայս, և այնու եցոյց թէ արդարութե դատէ զա̅մ. ըս̅ որոյ յորդորէ մարգարէն զբնակիչս երկրի՝ ուսանիլ անտի և 'ի միտ առնուլ զոր գործէ ա̅ծ ըս̅ արդարութե. բայց ըս̅ կարգի բանին զայս դնէ մարգարէն իբր հետեւութի. ոչ թէ ասէր. որովհետեւ հրամանն ա̅յ լոյս է ամ̅ցն՝ որք բնակեն 'ի վ̅ր երկրի, ապա արժան է ձեզ բնակչացդ երկրի ուսանիլ զայն ։

Օ հրա-

Օ Հրամանն ո̄չ կոչէ արդարութիւն, զի արդա- րութ̄ լի է, և յարդարութեն առաջնորդէ ։
Յեբր" և ա̄ծ հետևութեն գնի՝ յասեղն · * զի յոր-
,, ժամ (երևեցան) դատաստանք քո յերկրի,
,, զարդարութիւն ուսան բնակիչք տիեզերաց || ։
Յասոր" ե̄ս հանդիսութեն գնի՝ յասեղն · * զի ո՞րի են դատաստանք քո 'ի վ̄ր երկրի, (զայսպիսի) արդարութիւն ուսցին բնակիչք տիեզերաց || ։ Ի լատ" գնի · * յորժամ առնիցես զդատաստանս քո յերկրի՝ զարդարութեն ուսցին բնակիչք տիե- զերաց || ։ Իբր թէ ասացեալ էր, 'ի դատելդ արդարութ̄՝ որով փառաւորես զծառայս քո 'ի վ̄ր երկրի, և պատուհասես զամպարիշտս, 'ի միտ առնուն ամենայն բնակիչք երկրի զարդա- րութի̄ քո ։

Ա.յլ ներքին իմաստ բանին վերածի 'ի նախա- կարգեալ մեկնութիւնդ · որպէս թէ եդեալ էր · 'ի յայտնիլ հրամանաց քոց իբրև լոյս՝ բնակիչք երկրի ուսանին զարդարութի ։ Իսկ թէ դատաս- տան կոչէ զհրամանն ո̄չ, այն հայի 'ի հանգամանս հրամանին · զորմէ տես 'ի մեկնութեն սաղմոսաց · ճժը̄ · 'ի սկզբան · յորում չորից դատաստան կոչի օրէնքն ո̄չ, կամ ա̄ծ եբր" միափաղ՝ զոր եօ- թանասունքն ը̄ որս և արաբացիք ըստ մերումս թարգմանեալ են ասա հրամանն՝ յաւերժամը- լուսոյ, յորդորելով զմ̄ծմնին՝ ուսանիլ զնոյն ։ Այլ քանզի ամպարիշտն յետս կայ յուսանելոյ զայն՝ կշտամբելով իմն խօսի զնմանէ մարգա- րէն և ասէ ։

3 · Վախճանեցաւ ամպարիշտն · և այլ ոչ ևս ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան ։

Ա.յս է յետին չար վիճակ ամպարշտի · զի յամ- պա-

պարշտութեն անդ իբր ՚ի խորութեն ջուրց ընկղ-մեալ՝ ոչ կամի և ոչ իսկ յօժարի կամիլ առնուլ զշունչ արդարութե, որ առնուլ զուսումն արդարութե, յայս ակնարկելով ասէ ։

Այրեսցէ ամպարիշտն. և այլ ոչ եւս ուսցէ առնել ճշմարիտ արդարութիւն ճշմարտութեան ։ Նոյդ կարկեցաւ՝ դնի աստ միւսն փակեալ լինելոյ բերանոյ հոգւոյն. որպէս թէ եղեալ էր. ամպարիշտն ՚ի լսել անդ՝ թէ լոյս են պատգամքն իմ, և թէ պարտ է ուսանիլ զայն՝ փակեաց զբերան հոգւոյ իւրոյ. զի մի ինչ խօ-սեսցի զայնմանէ. գուցէ ըմբռնեսցի բանիւք բերանոյ իւրոյ՝ ուսանիլ զայն և առնել. որպէս մի հրաժարի ես ՚ի լսելոյ զայն. յոր միտս յասոր" դնի. * մեկնի ամպարիշտն, զի մի ուսցի զդա-
,, տաստան ‖. և յարաբ" դնի. * ամպարիշտն յետս
,, ձգեսցէ զանձն. (զի) մի ուսցի զարդարութի ‖ ։

Նու որովհետև յայսպիսի կամս հաստատեալ կայ, բնաւ երբեք ոչ ուսանի. և եթէ ուսցի, կամ ու-սեալ ես իցէ զնոյն, այն է անգործունեայ ու-սումն. զի ոչ առնէ զոր ուսանելոյն. քզի որպէս և տեսանեմք, բազումք կան յամպարշտաց՝ որք ուսեալ են, և կամ ուսանին զարդարութի. բայց ոչ առ-նեն. ուստի և ուսումն նոցա ոչ է ուսումն ճշմարիտ արդարութե, այլ սոսկ արդարութեն. միայն իրի յաւելու մարգարէն և զբառդ ճշմարտութեան ։

Ապաքէն յուդայ և այլ առաքեալք ուսան ՚ի քրիստոսէ զարդարութի. բայց յուդայ առանց ճշմար-տութե. իսկ այլք ճշմարտութբ. զի թէպէտ և նո-րայն էր ճշմարիտ, բայց գործն անհամաձայն ու-սմանն և արդարութե. իսկ ուր է անհամաձայնութի գործոյ ընդ ուսման, անդ ոչ գոյ ճշմարտութի. զի ճշմարտութիւն ՚ի համաձայնութե է ։

Սոյն այս հատուած բանի, որ է * և այլ ոչ

ես

եւ ուսցի առնել յերկրի զարդարութիւն Ճշմար-
տութէ ‖ · յամենայնի մերում եւ 'ի թարգմանութէ
եօթ" այլով իմն սոյնմանաւ ընթերցեալ լինի ·
այս է · * ամենայն որ ոչ ուսանի զարդարութի
յերկրի, ոչ արասցէ զճշմարտութի ‖ · իբր թէ
որ ոչ կամի իմանալ՝ թէ զինչ է արդարութի,
այնպիսին ոչ գործէ զճշմարտութի, զի ոչ գործէ
զայնպիսի գործ՝ որ իցէ համաձայն ածայնին Ճա-
նաչման · բայց 'ի նոյն գլուխ եւ այս ·

Ոմանք աստանօր, ընդ որս եւ Գէորգ վրդպտ
զայս բան վերածեն առ բանսարկուն, եւ ոմանք
առ ռափսակ, որք կարկեցան յանձինս՝ հեռա-
նալով յայ, եւ յետս կալով յարդարութէ · Իմ
ոյս առի զն յարմարական մեկնութե · ըստ որոյ
մարթ է աստանօր ամպարշտաց իմանալ զայլս
եւ · Նախ՝ զհրէայս՝ որք ոչ կամեցան ուսանիլ
զարդարութին զայն՝ զոր արար Ճշմարտութին յա-
ւիտենական · երկրդ՝ զհեթանոսս մոլորեալս,
որք զեղխին զհետ մոլար վրդպտե, 'ի բաց թո-
ղեալ զուսումն արդարութեն քնի · երրդ՝ զյամառ
հերետիկոսս, որք զինին ընդդէմ արդարութե
ուղղափառ հաւատոյ · չրդ՝ զմ եւ իցէ մոլի մարդ
'ի հասարակի ·

Ոչ կարեն ոք ջատագովել զինքեանս վն ոչ ու-
սանելոյ զարդարութին · զի յամենեսին պարտ
է ուսանիլ եւ առնել · եւ շնորհեալ է ժամանակ
ուսանելոյ, եւ միջոց առնելոյ · իսկ թէ ամպա-
րիշտն ոչ ուսանի, իւր է յանցանքն · զի ինքն ոչ
կամի · յայս միտ թերեւս յեբր" դնի · * շնորհ
եղեւ ամպարշտի · (բայց նա) ոչ ուսաւ զարդա-
րութի · (այլ) յերկրի ուղղութե չարաչար գոր-
ծէ ‖ · կամ յապառնին թարգմանելով ըստ այ-
լոց · * (թէ եւ) շնորհք եղիցի ամպարշտի (զինչ

,, օգուտ

,, օգնութեան նորա. զի ) ոչ ուսաւ զարդարութիւն,
,, ( այլ փոխ այնր ) յերկրի ( ասա ) զուղղութիւն
,, անիրաւաբար առնիցէ ‖ . ՚ի սոյն մերձի և
թարգմանութիւն լատինացւոց . ուր ասի * (եթէ)
,, ողորմեսցուք ամպարշտի, ( կարկեսցի նա ) և
,, ոչ ուսցի զարդարութիւն ‖ ։ Իսկ թէ զիմոյ
եօթանասունք թարգմանեցին՝ դադարեաց, և մերքս՝ կարկեսցաւ, չունիմք ինչ ասել, բայց է թէ գուցէ լեալ իցէ այդ վ՛ն այլեայլութեան եբրայական տառից . զի որ յայժմու բնագիրն եէխէն դնի, ն՛շ շնորհեսցի, կ՛մ շնորհեսցաւ, յօրինակին եօթանասնից և ասորւոց եդեալ էր բայդ-եխսա՝ որ նշանակէ դադարել կամ մեկնել . և կամ եդեալ էր բայդ խառհալ, որ զնոյն նշանակէ ։ Այլ ոմքին առհասարակ ՚ի նախակարգեալդ հայկն, ՚ի ցուցանել՝ թէ ամպարիշտն ոչ կամի ուսանել և առնել զարդարութիւն և զուղղութիւն յերկրի. և զի այսու անարժան գտանի կալոյ ևս ՚ի մ՛ջ երկրի՝ ՚ի վայելել զբարութիւն ա՛յն, ամին իրի յարէ զնմի մարգարէն, և ասէ ։

4 . Բարձցի ամպարիշտն յերկրէ . Նա մի տեսցէ զփառս ա՛յ ։

Երկիր ոչ ստեղծաւ վ՛ն թշնամեաց ա՛ն, այլ վ՛ն ծառայից ն՛ր . նոյնպէս և փառքն ա՛յ ոչ է թշնամեաց ն՛ր, այլ ծառայից նորին . և զի ամպարիշտք թշնամի են ա՛յ, վ՛յ անարժան գտանին եթէ այսմ, և եթէ այսմ . ամին իրի ասէ ։ Բարձցի ամպարիշտն յերկրէ . զի մի տեսցէ զփառս ա՛յ ։ Պահի ասել . որովհետև ամպարիշտն ոչ կամեցաւ ուսանել զարդարութիւն Ճշմարտութեան, բարձցի յերկրէ իբրև զթշնամի ա՛յ, և մի ևս բնաւ վայելեսցէ զփառս ա՛յ ։ Այլ այս բարձումն տիրապէս

պէս խօսելով ոչ ցուցանէ սակս զմեկնիլն յերկրէ · զի այս հասարակացն՝ եթէ՛ բարեաց և եթէ չա_րաց · այլ 'ի մէջ բերէ զանարժանուն կալոյ 'ի վր երկրի , և վայելելոյ զփառս տն ։ Որպէս եղև հրէից · որք 'ի մերժելն զարդարոյն Ճշմարտու_թեն քի՛ անարժան գտան կալ յերկրին աւե_տեաց , և վայելել անդ զփառս տաճարին տն ։ Յեբր'' և յայլ թարգմանութիւնս բաց յեօթանասու_նից պակասի առաջին հատուածս այսր համարոյս, այն թէ * բարձցի ամպարիշտն յերկրէ ‖ · բայց պարտ է ասել , թէ անկեալ է այն 'ի բնագրէն · իսկ եօթանասունք զամբողջն ունելով թարգ_մանեցին ըստ մերումս · * բարձցի ամպարիշտն · զի մի տեսցէ զփառս տն ‖ ։

Իսկ փառօքն տն իմացեալ լինի աստ այն ամ որով փառաւորի ած , եթէ՛ օրէնք իցեն , և եթէ արարք սքանչելիք · զի որպէս գործք մարդոյ եթէ՛ մա_տեանք իցեն և եթէ կերտուածք , ասին փառք նր , նոյնպէս և ո՛ և իցէ գործք տն ասին լինել փառք նր · որոց անարժան գտանին ամպրշտք ։ Արթ է փառօքն տն իմանալ աստ և զփառս արքայութե · յոր մտս կամի ասել · ամպարիշտն 'ի բառնիլն յաշխէ ոչ կարասցէ ժառանգել 'ի վայե_լումն փառացն տն , որպէս ժառանգեն որք ։ Իսկ ըստ այսմ առաւել պատշաճապէս եղև ընել , բարձ_ցի 'ք հանցի · ըստ որում ամպարիշտք բռնաբար ձգլին յարքայութենէ արտաքս · և այս կարի իրա_ւամբք · որովհետև ոչ կամեցան Ճանաչել զյարգ_նր · կամ ոչ յօժարեցան գիտել , թէ քանի մեծ է փառքն նր · Եւ և զխորդ մեծ է նախնիքն՝ որ տրն է փառաց , բարձրեալ և սքանչելի · առաւ 'ի վարձատրել , և հզօր 'ի պատուհասել · և զայս_մանէ խօսի 'ի յաջորդ համարն , յարելով 'ի

նոյն

նոյն և զանխծագրական բանս զամպարշտաց. ուստի ասէ։

5. Տէ Բարձր ես, և Բարձրեալ ես հզօր. և նոքա ոչ գի-տացին։

6. Ծանիցեն, ամաչեսցեն. և նախանձ անկցէ անխ-րատ ժողովրդեան. և արդ հուր զթշնամիս ես կերիցէ։

Զայս դնէ մարգարէն իբր զարմանալով՝ ՚ի խորհուրդս նոցա՝ թէ զիարդ ամպարիշտք ոչ պատկառէին յԱյ. և ոչ կամին գիտել՝ թէ զինչ կամիցի նա, որ բարձր է և հզօր. որպէս եթէ ոք տեսանելով զայր անզգամ՝ որ ոչինչ համարիցի զհրաման թգրի, ասիցէ ցթգրն. ապաքէն թգր հզօր ես դու. և զիարդ ոչ կամի սա ճանաչել զքեզ, և հնազանդիլ քեզ. յայսպիսի իմն միտս խօսի և աստ մարգարէն՝ յասելն։

Տէ Բարձր ես, և Բարձրեալ ես հզօր. և նոքա ոչ գիտացին։

Բարձր ասի Ած՝ ոչ ըստ տեղւոյ, այլ ըստ իշխանութեանն և ըստ փառաւորութեանն. բազուկ ասի և ամենակարողութիւն նր՝ ոչ ըստ հաստուածոյ, այլ ըստ գործելոյ զմեծամեծս, և ըստ վանելոյ զթշնամիս։ Արդ (ասէ) թէպէտ և այսպէս բարձր ես, և կարողութի քո հզօր, բայց ամպարիշտք ոչ գիտացին. ոչ զի ոչ կարէին գիտել, այլ զի ոչ կամեցան ճանաչել։

Յածաշնչի մերում ոչ դնի բառդ Հզօր. և բառդ Բարձր՝ յարի ՚ի բազուկն. յասելն. * Տր բազուկ քո բարձր, և ոչ ծանեան ‖. սոյնպէս դնի և յեօթ", եւս և ՚ի բնագրի, և յայլ թարգմանութիւս. այլ այս չէ ինչ. զի որպէս բարձր է բազուկ նորա, սոյնպէս բարձր է և ինքն։ Իսկ թէ ամպարիշտք ոչ կամին գիտել, ստիպեսցին

ծք ճա-

Ճանաչել , և ամաչել . և առ այս յարէ , և
ասէ ։

6 . Օրանէցեն , ամաչեսցեն ։ Կամի ասել . զոր կամօք ոչ ծանեան՝ 'ի հասանել ժամանակին ակամայ ծանիցեն . և 'ի ճանաչելն ամաչեսցեն . յորմէ և այլք խրատեսցին . և առ այս յարէ ։

Եւ նախանձ անկցէ անխրատ ժողովրդեան . և արդ հուր զթշնամիս քո կերիցէ ։ Այս բան կրկնակի մեկնի . եթէ բառդ նախանձ՝ առցի փոխ նախանձաւորութե , միտ բանին լինի այս . յամաչել ամպարշտաց՝ զգաստասցին յանձինս , և յայսմանէ նաև անխրատ ժողովուրդք , ի՛ նք՝ որք ոչ անսան խրատու , 'ի նախանձ բարի վառեսցին . իսկ յոչ կամիլ նոցա զգաստանալ , այլ 'ի չարութե մնալ՝ հուր բարկութե քո կորուսցէ զնո իբրև զթշնամիս քո . ուր յեբր" և 'ի լատ" և յասոր" ոչ գոյ բառդ անխրատ . բայց զօրութ իմացեալ լինի այս . գուցէ ներգործութ եւս կայր 'ի բնագիր օրինակն
եօթանասնից ։

Այլ եթէ բառդ նախանձ՝ առեալ լիցի փոխ չարմախանաց , ի՛ փոխ տանջիչ նախանձու , միտ բանին լինի այս . յետ ամաչելոյ ամպարշտաց՝ որք անխրատ գտան , տեսեալ թէ բարեպաշտք հասանեն 'ի փառս , 'ի նախանձ չար մաշեսցին , և 'ի սիրտս իւրեանց դառնասցին , թէ զիարդ անխրատ գտանելով՝ գտին զմեծամեծ չարիս . զի բարկութիւն այ իբրև հուր ունի ուտել զինքեանս ։ Այս մեկնութի առաւելագոյն յարմարի թարգմանութե եօթանասնից . ի՛ որոյ եդեալ է յմեծաչնչի մերում . *նախանձ առցէ զժողովուրդն
անխրատ‖ ։

Այս բանք կարեն վերածիլ և 'ի թշնամիսն հոգ'ի , ի՛ յասորեստանեայս և յայլս , որք ոչ տեսին

զփրկութի տանն յուդայ ։ և որք տեսինն՝ սոսկալք էին , որոց յայտնի ծանուցեալ զնախանձ նն՟ ՚ի վր՟ ժողովրդեան իւրոյ՝ ամաչեցին ՚ի կուռս իւրեանց ։ Նաև դրձլ ոք նախանձելով ՚ի վր՟ ժողովրդեանն իւր՝ յորժամ կամեցան ջնջել զնո , ջնջեցան , և իբրև թէ ՚ի հրոյ կերան՝ ՚ի պաշարել իւրեանց զեղիմ ( Գ · Թագ · ԺԹ · 35 · ) Թերևս յայս միտ յեբր՟ դնի · * տեսցեն, և զամօթի հարցեն նախանձու ժողովրդեան ( ՚ի
,, նախանձելով ը՟ ժղվրդն, կմ՟ ը՟ լատ՟ նախանձողք ժողովրդեան ) · և հուր զթշնամիս քո
,, կերիցէ ‖ ։ Օ այսոսիկ եղեւալ մարգարէին հայելով ՚ի թշնամիսն նյ՟ և իւր դառնայ ՚ի մաղթանս՝ ՚ի խնդրել յնյ՟ զբարիս վր՟ ժողովրդեան իւրոյ , և ասէ ։

7 · Տէ՟ր ա՟ծ մեր տուր մեզ խաղաղութի՟ քո · զի ըստ ամ՟ գործոց մերոց հատուցեր մեզ ։

Ամպարիշտք երևին ունիլ զխաղաղութի , բայց ոչ զճշմարիտ և ոչ զհաստատուն · վս՟ զի այն խաղաղութի նոցա՝ զոր կարծեն ունիլ՝ ոչ է ը՟ այ՟, և ոչ յայ՟ · նա զի և ոչ իսկ է խաղաղութի · զի * ոչ
,, գոյ խաղաղութի ամպարշտաց ասէ տր՟ ‖ · սմին իրի և մարգարէն լքեալ զայն ՚ի բաց՝ զայ՟ խաղաղութիւն խնդրէ զճշմարիտն՝ ասելով ։

Տէ՟ր ա՟ծ մեր տուր մեզ խաղաղութի՟ քո ։ Կամի ասել · չունիմք ՚ի մէնջ և ոչ իսկ կարեմք ունիլ զճշմարիտ և զհաստատուն խաղաղութի · այլ դու տուր մեզ զայն · զքոյդ խնդրեմք ՚ի քէն , և ոչ զայլոյ · դու ինքն պատրաստեա , և պարգևեա մեզ զայն ։

Այս բանք տիրապէս ասին ՚ի բերանոյ եկեղեցւոյ առ բանն ա՟ծ · որպէս տեսանի ՚ի շարունա-

նի

նի 'ի կամս ձ̃ն · յասելն · * կեանք 'ի կենաց և յոյս
,, յարութեան՝ որ արարեր խաչիւ քո զխաղաղութիւն
,, յերկինս և յերկրի · տուր մեզ տէր զքո խաղա-
,, ղութիւնդ, որպէս տրեց քոց առաքելոց ‖ : Իսկ 'ի
կամս ձ̃ն · 'ի մէջ առեալ զկենսագործել նորա
զազգ մարդկան, և յարութ̃ իւրով խնդացուցա-
նել զտառապանացն նց̃, խնդրէ՝ ասելով · * փա-
,, ռաբանակից հօր և տէր հոգւոյն · որ լուսափայլ
,, յարութ̃դ քո կենսագործեցեր զազգ մարդկան ·
,, տուր մեզ տէր զքո խաղաղութիւնդ ‖ : Իսկ սմին
պաղատելով 'ի կամս ձ̃լի՝ ասէ · * որ բարձրացար 'ի
,, խաչին յաղագս դատապարտութեան ադամայ ·
,, և բարձեր զփշաբեր անիծադրութի̃ հեղմամբ
,, արեանն քո տ̃րդ · խաղաղացո զկեանս մեր միայն
,, մարդասէր ‖ : Զայս խնդրէր յոքն և առ-
հւրկ ազգ մարդկան · յորս 'ի սէր պաղատէր և
աղօթն իւր, անսել թէ արդէն հատուցել է նց̃
ըստ գործոց նոցին : Իսկ զայսմանէ խօսի մարդա-
րէն 'ի յաջորդ հատուածն, և ասէ :

Օէ բառ ամ փորձոց մերոց հատուցանա մեզ : Այս բան
երրակի մեկնի · մի ըստ ներհակման հատուցման
խաղաղութե̃ · յոր միտ կամի ասել · զոր ինչ և գոր-
ծեցաք 'ի գտանել զխաղաղութի̃՝ հատուցանե̃ր
հակն · զի ոչ զքոյդ՝ այլ զմերն խնդրէաք ·
բայց արդ զքոյդ խնդրեմք, և աղաչեմք տալ
մեզ զայն : Երկրորդ՝ ըստ հանգչելոյ 'ի տառապա-
նաց · յոր միտ կամի ասել · տառապեցաք և տա-
ռապիմք մինչև ցայժմ 'ի հատուցումն չար գոր-
ծոց մերոց · և արդ շատ է տէր, այսուհետև տուր
մեզ զխաղաղութի̃ քո · և հանգո զմեզ 'ի տառա-
պանաց մերոց : Իսկ ըստ այսմ բառդ խաղաղութ̃՝ դնի
փոխ փրկութե̃ այ̃, յոր միտ առնու և գէորգ
վ̃պ : Երրորդ՝ ըստ շնորհելոյն այ̃ · յոր միտ բառդ

հաստատեա՝ դնի փխնկ բառիս տուր. և ը՟ այսմ կամի ասել. տուր մեզ առ 'ի քէն զօրութիւն և կարողութիւն գործելոյ ը՟ ամ՟ի զգործ փրկութեան մերոյ. կմ՟ թէ շնորհեցաւ մեզ 'ի քէն յաջողութիւն ը՟ ամ՟ գործոց՝ որք հարկաւոր են առ փրկութիւն յաւիտենականն. տուր ապա և զխաղաղութիւն քո. կամ թէ որպէս դու ինքն յաջողեցեր և գործեցեր 'ի մեզ զամ՟ կարևոր գործս մեր, նոյնպէս դու ինքն գործեա՛ և զխաղաղութիւն մեր:

Այս միտ յամ՟ծաշնչի մերում և յեօթանասնիցն դնի. * զամ՟ ինչ հատուցեր մեզ ‖. իսկ յեբր" և 'ի լատ" դնի. * զամ՟ գործս մեր գործեցեր մեզ ‖. յասոր" դնի. * ը՟ ամ՟ գործոց մերոց տնօրինեցեր մեզ ‖. 'ի սոսին հայի և արտաբացւոցն: Ամ՟ի զնոյն դիտէ մարգարէն, և զնոյն խնդրէ. և եթէ ապերախտութիւն ինչ կայցէ 'ի միջի, աղաչէ՝ մի հայիլ յայն, այլ յողորմութիւն իւր նայելով՝ խնայել և ձեռն կարկառել. և առ այս յարէ, և ասէ:

8. Տ՟է ա՟ծ մեր ստացի՛ր զմեզ. Տ՟է բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո անուանեմք զօրհանապազ:

Բազում օրինակաւ կարէ ոք ստանալ զիր ինչ. մի՝ գնմամբ. երկ՟դ՝ գտմամբ. եր՟դ՝ պարգևմամբ. չ՟րդ՝ դարձուցմամբ. հինգե՟րդ՝ արարմամբ. վեցե՟րդ՝ փրկու՟թ կմ՟ ազատու՟թ. Թուի թէ ը՟ վերջինոյն խօսի աստ մարգարէն՝ յասելն: Տ՟է ա՟ծ մեր ստացի՛ր զմեզ. Տ՟է բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո անուանեմք զօրհանապազ: Կամի ասել. դու ես Տ՟ր մեր, և դու միայն Ա՟ծ մեր, որ յամ՟ի ցուցեր մեզ զբարիս. այլ մեք ապաշնորհ գտեալ այնչափ բարերարութեանց քոց՝ գնա-

ցաք

ցաք ըղձեմ կամաց քոց՝ վարելով զՔո կամս մեր. որով և մատնեցաք 'ի բազմապատիկ նեղութիւնս. և կասկածիմք եւս մատնիլ 'ի ձեռս օտարաց. այլ դու ստացիր զմեզ քոյին փրկութեդ. զի մեք բաց 'ի քէն ոչ գիտեմք զայլ Ած ճշմարիտ, այլ զքեզ միայն. և զանուն քո կարդամք յաւէտ :

Զսոյն կարդայ և եկեղեցի առ քեզ ասելով 'ի Հար Ձյք. * 'ի գիշերայ կանխեալ աղաղակեմք.
,, լուր մեզ Տէր. վասնզի բաց 'ի քէն զայլ ոք ոչ գի-
,, տեմք մարդասէր ‖ : Նաև խնդրելով զցանկալի խաղաղութիւն զայն՝ զոր եդ 'ի նախընթաց համարն՝ կրկին կարդայ, և ասէ 'ի նմին կանոնի.
* տուր մեզ Տէր զքո խաղաղութիւնդ. և փրկեա 'ի
,, ձեռաց խստաց ապստամբողաց. վա զի բաց 'ի
,, քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր ‖ : Նաև բարեխօս կալեալ զՏր Ածածինն իբր վկայ՝ հայցելով ասէ. * բարեխօսութբ ծնողի քո և միշտ
,, կուսի հայցեմք 'ի քէն քո փրկիչ Ածի. վա զի
,, բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք մարդասէր ‖ :

Յայլս բազ յեօթանասնից և յարարածոց՝ բաղդատանալ առ այլս վերածի. զի յեբր" գրի այսպ.
* Տէր Ած մեր, տիրեցին մեզ տեարք բաց 'ի քէն.
,, միայն 'ի քեզ (ապաւինեալ) յիշեսցուք զանուն
,, քո ‖. 'Ի սոյն վերածին և այլ թարգմանութիւնք :

Այլ միտ բանին 'ի նոյն ակնարկէ. զի կամի ասել. Տէր Ած մեր դու միայն ժառանգեա զմեզ, և մի այլ տեարք, որք զհետ են յափշտակել զմեզ, և տիրել մեզ. զի մեք ոչ զանուն նց, այլ զանուն քո կարդամք :

Զայս բան երգեաց (ըստ գրելոյ գէորգայ) միանգ կարեն ասել ծառայքն Այ և ծառայքն մամոնայի, յետ լսելոյ 'ի բերանոյ Տն, թէ ոչ կարեք լինել Այ և մամոնայի. ապաքէն օտար Տէր

է մանկանց․ և զխորդ որ այնմ ծնեալ՝ կարիցէ
ասել առ ա՛ծ․ բայց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք,
և զանուն քո միայն անուանեմք, և ոչ զանուն
մանկանցն : Զայս եղեւ մարգարէին՝ յարէ
զկնի և ասէ :

9․ Բայց արդ մեռեալք զկենդանութիւն այլ ոչ տեսանիցեն․
և ոչ բժիշկք յարուցանիցեն :

Զայսպիսիս խօսեցաւ և դաւիթ 'ի սաղ ձէ․
12․ յասելն, * միթէ մեռելոց առնիցես սքան-
„ չելիս քո, կա՛մ բժիշկք յարուցանիցեն, և խոս-
„ տովան առնիցին առ քեզ․ միթէ պատմեսցէ
„ ոք 'ի գերեզմանի զողորմութիւնս քո, կա՛մ զճշմար-
„ տութիւնս քո 'ի կորստեան ևն ‖․ Իսկ թէ յինչ
միտս դնիցի այս, տես 'ի մեկնութեան նշանակեալ
սաղմոսիդ․ այլ աստ հայեսցուք 'ի շարայարութի
բանիդ՝ զոր ասէ :

Բայց արդ մեռեալք զկենդանութիւն այլ ոչ տեսանիցեն․ և ոչ
բժիշկք յարուցանիցեն : Այս բան կրկնակի յարի 'ի
նախընթացդ․ մի՛ 'ի փութացուցանել զա՛ծ առ
'ի փրկութե․ յոր միտ կամի ասել․ և արդ փութա՛
ա՛մր փրկել զմեզ, մինչև եմք հասեալ 'ի դրունս
մահու․ ապա թէ ոչ՝ աւաղիկ մեռանիմք, և ոչ
ևս կեամք 'ի կատարել զհաճոյս քո․ վ՛ս զի մե-
ռեալքն զկեանս կա՛մ զկենդանութի ոչ տեսանիցեն․
յի՛ ոչ ևս կեցցեն 'ի վ՛ր երկրի, որպէս դնի յեբր"
և 'ի լատ․ և ոչ կարիցեն դառնալ 'ի կեանս
յայս․ և ոչ իսկ բժիշկք կարող լիցին յարուցա-
նել զն՛ս 'ի գերեզմանաց : Յայս միտ սոյն այս
ասէ և 'ի բերանոյ ազգի մարդկան առ որդին ա՛յ
'ի փութացուցանել զնա՝ վաղվաղակի հասանել
և փրկել, և իբրև ճարտար բժիշկ ապաքինել
զմահաբեր հիւանդութիւն իւրեանց, մինչև տե-
րեալ

բեալ էր ՚ի սպառ բռնութին մահու և գժո-
խոց :

Երկրորդ՝ այս բանյարի ՚ի նախընթացդ ա՛ ցուցանելոյ զվիճակ նոցա՝ որք նեղէին զինչ ... և ա՛ այսմ կամի ասել. որք յոխորտան ՚ի վե՛ր մե՛ր՝ հանգերձեալ են նոքա կորնչիլ. և ՚ի կորնչիլն՝ ոչ ևս ունիցին յոյս տեսանելոյ զկենդանութի՛ն ճշմարիտ. և յաջորդք նոցա՝ թէև բժիշկք լիցին՝ ոչ կարիցեն յարուցանել զնո. մանաւանդ թէ որովհետև նոքա ևս հետևեցան չար գործոց նոցա, նք ևս ա՛ նոյնն կորիցեն. որպէս գնի ՚ի յաջորդ համարն :

Յերբ" ասատանօք փոխ բժշկի այնպիսի բառ դնի՝ որ եթէ ընթերցեալ լիցի ռափա՝ նշանակէ հսկայ. ուստի լատինք և ասորիք եդին հսկայ. իսկ եթէ ընթերցեալ լիցի ռօփէ, նշանակէ բժիշկ. ուստի եօթանասունք և արաբացիք եդին բժիշկ. որպէս է և ՚ի մերումս թարգմանութե. Երկոքին ևս ՚ի նոյն միտս հային, ՚ի ցուցանել թէ ոչ հսկայք և ոչ բժիշկք կարեն յառնել կա՛մ յարուցանել զայլս. տես զայսմանէ և ՚ի վերոյ գրեալ սաղմոսի : Հայեսցուք այժմ յայն՝ զոր յարէ զկնի և ասէ :

10. Վն այսորիկ ածեր, հարեր, սատակեցեր, ջնջեցեր զամ արու մանուկ նոցա :
11. Յաւել Տր չարս ՚ի վր չարի. և ամ չարս ՚ի վր անօրինաց երկրի :

Յաճախումն բառիցդ ոչ այլ ինչ ցուցանէ, բայց եթէ զպատժելն մեծ պէսպէս աստիճանաւ զողդիս անօրինաց. զի յայդ և եթ ակնարկելով ասէ զայս բան :

Վն այսորիկ ածեր, հարեր, սատակեցեր, ջնջեցեր զամ

որոտ ձայնում նոցա : Առաջին մասն այսր համարոյ հայի յորդւոյն Իլի . որպէս յայտ է 'ի բնագրէն և 'ի թարգմանութեն լատ" և ասոր". իսկ երկդ մասն հայի յորդիս մեծամեծաց . և է այսմ կամի ասել . որովհետև անօրինեցաք առաջի քո , վասն այց արարեր մեզ՝ ածել 'ի վր մեր զայլևայլ նեղութիւնս . և խրատ ոչ զգաստացաք՝ հարեր նոքիմբք զմեզ . և տեսեալ թէ ոչինչ օգտիմք՝ սատակեցեր զմեզ . և եթէ մնացեալ էին 'ի միջի մերում

որդիք իշխանաց՝ զնա ևս ջնջեցեր :

Փոխանակ որդի գտնելոյ՝ դնէ զարու մանուկ . զի է արու մանկամբք կարեն իմացել լինել ևեթ. որպէս յասելն . երանեալ է այր, որ, իմացել լինի և կինն : Եւ քզի արու մանուկ յիշատակ է ծնողաց , յայլս բաց յեօթանասնից յիշատակ դնի : Եւ ևս որովհետև յածելն այ զնեղութիւն՝ նախ այց առնէ , որ տեսանէ և քննէ , վասն յեբր" փոխն ասելոյ . * ածեր , հարեր , սատակեցեր || գրի . * այց արարեր , և ջնջեցեր զմեզ . և կորուսեր զամ յիշատակս նոցա || : կամ ըստ լատ . * այց արարեր , և խորտակեցեր զմեզ , որ || . կամ ըստ ասոր" . * այց արարեր , և անուանս արարեր զմեզ ( կորստեամբ ) || . կամ է արար . * սարագեր արարեր (և) կորուսեր || : Օ այս եղեւ՝ յարէ զկնի , և առէ :

11 . Յաւել չր չար 'ի վր չարի . և ամ չար 'ի վր անօրինաց երկրի : Յոր յաւելեալ լինի յամաչնել մերում ասել . * յերկարեցեր ամ ծագաց երկրի || . և փոխ բուխս անօրինաց՝ գրի անդ . փառաւորաց : Արդ այս բան է մերում թարգմանութեան՝ կրկնակի առաջի դնի . մի է խրատելոյ և խնայելոյ . յոր միւս կամի ասել . թէպէտ և արժանի են որդիք անօրինաց՝ սատակման և ջնջման ,

մին, որպէս և փառաւորք, բայց դու որ երկայ-
նամիտդ ես, խրատեա՛. և ստացի՛ր զնա, յաղա-
խեա՛ առ նա զչար 'ի մ՟ր չարի, մ՟ զպատիժ 'ի մ՟ր
պատժոյ. որո՞ց և յաղախեցեր այլոյ ծագաց երկրի.
զի թերևս 'ի նեղութե՛ պատժոց զգաստասցին.
մ՟ զի նեղութիք խրատ են մարդոյ. և յորդորեն
յիշել զքեզ, և դառնալ առ քեզ. զորմէ խօսի
'ի յաջորդ համարն: Որկդ՝ է՟ հակառակն է՟ ոչ
խնայելոյ. յոր միտ կամի ասել. մի՛ դադարեր
'ի պատժելոյ զանօրէնս երկրի և զփառաւոր-
եալսն անօրէնութ՟. զի մի՛ յաղախեսցեն 'ի չարիս,
և լինիցին պատճառ կորստեան արդարոց.
Ասացի, է՟ միջում թարգմանութե. զի յայլս այլ
ազգ դնի. յեբր՟ գրի. * յաւելեր ազգի տ՟ր,
յաւելեր ազգի. փառաւորեցեր զքեզ. յերկա-
րեցեր զա՟մ ծագս երկրի ||. 'ի լատ՟ դնի. * նե-
րեցեր ազգի տ՟ր, ներեցեր ազգի. մի թէ փառա-
ւորեցար. հեռացուցեր զա՟մ ծագս երկրի ||. յա-
սոր՟ դնի. * յաւելեր տ՟ր 'ի մ՟ր ժողովրդեան.
յաւելեր 'ի մ՟ր ժողովրդեան. հեռացեալ 'ի բաց
չարժեցեր զա՟մ ծագս երկրի ||.
Եօթ՟ է՟ միջումն դնի. և սակայն՝ յետին համ-
ռաւծն՝ այն է * յերկարեցեր ա՟մ ծագաց երկ-
րի ||, որ դնի յա՟ծաշնչի միջում, և յեբր, և 'ի
լատ, և յասոր, ոչ գտանի 'ի թարգմանութե
եօթանասնից. զի գրի անդ այսպ՟. * յաւել նց
չարիս տ՟ր. յաւել չարիս փառաւորացն երկրի ||.
սոյնպ՟ է և յարաբ. զի անդ ևս ոչ գտանի այն
յետին բան, որպէս և ոչ 'ի սաղմոսարանի մե-
րում. որով երևի թէ այլայլութի մտեալ է աստ՝
ոչ միայն է՟ նշանակութե բառից, այլև է՟ յաւել-
լոյ և է՟ նուազելոյ.
Բայց սոյսու ա՟մի՛ ներքին իմաստ բանին 'ի նոյն

մե-

վերածի․ զի կամի ասել․ յետ խորտակելոյ զմեզ, ևս և յետ պատուհասելոյ զազգս անօրինաց, խնայեցեր 'ի նս․ և իբրև ոչ օգտեցան՝ յաւելեր զչարիս, յաւելեր եղբարիս, առ 'ի զգաստացուցանել զնս․ զի դարձցին առ քեզ, և փառաւորեսցեն զքեզ․ երկարեցեր ապա և զպատիժս ը̄ ամ̄ ծագս երկրի յորդիս անօրինաց․ և ոչ այնպէս օգտեցան նոքա : Զսոյն և 'ի ժամանակի աստ մերում տեսաք և տեսանեմք : Եւ սակայն յորոց նոքա ոչ օգտեցան, այլք օգտեցան և շահեցան․ 'ի սոյն հայելով՝ յարէ զկնի, և ասէ :

12․ Տէր 'ի նեղութեան յիշեցաք զքեզ․ զի փոքր մի նեղութիւն է խրատ քո 'ի վր̄ մեր :

Նեղութիւնք ասին լինել խրատ․ զի եթէ ներքինք իցեն և եթէ արտաքինք՝ 'ի տագնապելն զարթուցանեն զմարդ 'ի զգաստութի․ Հիւանդութիւն ծանր, որ է ներքին նեղութի մարմնոյ, զգաստացուցանէ զհոգի՝ յիշել զԱծ և խնդրել զնա․ Ընդ որում ասէ սիրաք․ ալէկոծութի՝ որ է արտաքին նեղութի, զգաստացուցանէ զնաւարկօղսն՝ աղաղակել առ Տր : Այնպէս է իմանալ և 'ի հոգևորական նեղութիւնս․ զի որպէս խթան և մտրակ մղէ և մարզէ զանասունս և զգաստացուցանէ, այնպէս և նեղութիւնք խրատեն զմարդն, և կրթեն․ յայս հայելով ասէ :

Տէր 'ի նեղութեան յիշեցաք զքեզ․ զի փոքր մի նեղութիւն է խրատ քո 'ի վր̄ մեր : Կամի ասել․ դու Տր՝ որ ոչ կամիս զհեռանալ մեր 'ի քէն, 'ի տեսանելդ զմեզ հեռացեալս և անփոյթս, առաքեցեր 'ի վր̄ մեր զնեղութիւնս․ որովք զգաստացաք և յիշեցաք զքեզ՝ մերձեցաք առ քեզ, և յարեցաք 'ի քեզ․ զի թէ-

պէտ

աղէտ և փոքր իցէ այն նեղութի , բայց խորտաքո է . զի պատիժ առաքեալ 'ի քէն 'ի վ[երա]յ մեր՝ առ 'ի զգաստացուցանել զմեզ ։

Յայլ Թարգ" այս ասացեալ վերածի յեր̃դ-դեմս , առ այնոսիկ՝ զորս յիշեաց 'ի նախընթաց համարն . իբր թէ ասէր . յաւէլ 'ի նո[ցա] զնեղու-թիւս . զի բազումք 'ի նոցանէ 'ի նեղութե խնդրե-ցին զքեզ . և թէպէտ 'ի սկզբան անդ տրտնջե-ցին , բայց յետոյ յուղղութի եկին . յոր միտ յեբր" դնի * հեղին զմրմնջիւն . ուղղութի քո (երևեցաւ) 'ի նո[ս] ‖ . 'ի սոյն վերածի և Թարգմա-նութի լատ" , և ասոր" ։ Օ այս բան՝ զի թէ նե-ղունք տան մարդոյ զգաստանալ՝ տարացուցի-իմն ևս բացատրէ մարգարէն , և ասէ ։

13 . Որպէս երկնեալ յղւոյ , որ հասեալ իցէ ժամանակ ծննդեան . և ի ցաւս իւր ձկեցէ ։

14 . Այսպէս եղաք սիրելւոյ քում . յահէ և յերկիւղէ յղա-ցեալ երկնեցաք . և ծնաք զհոգի փրկութե ։

'Ի ս[ուր]բ գիրս յորժամ բանք լինին 'ի վ[երա]յ նեղութեց՝ 'ի կամիլն յայտնել զսաստկութի նեղութեն՝ սովոր են մարգարէք 'ի մէջ բերել զցաւ երկանց ծնն-դեան . զի սաստիկ է այն ցաւ , և կրօղ ցաւոյն տկար ։ Այլ զի այնմ ցաւոյ զհետ գայ և ու-րախութի՝ յայս նմանութի հայելով ասէ ։

Որպէս երկնեալ յղւոյ , որ հասեալ իցէ ժամանակ ծննդ-եան . և ի ցաւս իւր ձկեցէ ։ Այսինքն ասել . որպէս ցաւ մեծ պաշարէ զկին յղի՝ երբ հասանէ ժամ ծննդեան ն[որ]ա . մինչև ձկել 'ի ցաւոյ անտի . բայց զկնի ցաւոց յաջորդէ ուրախութի վ[ասն] ծննդելոյ զորդի (Յովհ . ժզ . 21 .) սոյնպէս և նեղութիք ցաւ տան ն[ոց]ա՝ որք յղացեալ են ախտիւք կամ մե-ղօք . բայց տան ևս ծնանիլ զբարին , որով սփո-փին .

փին. որոց պատասխանեցաւ ասէ և մեզ. և առ այս յարէ և ասէ.

14. Ընդունեա երգս օրհնութեան քոց: Յինչ հայիցի արգեօք աստ բառդ օրհնութեան՝ դժուարին է որոշել, բայց մարթ է ես վերածել յերկուս. մի՝ 'ի հաճութիւնս, և երկրորդ՝ 'ի սիրելիսն Նր: Ըստ առաջնոյն կամի ասել, որպէս որ ընդունեալն է 'ի ցաւս երկանց՝ տագնապի, և ապա ծնանի, սոյնպէս եղաք և մեք զի հաճելոյ քո, կամ վս սիրոյ քո. կամ զի այնմ որ հաճոյ և սիրելի է առաջի երեսաց քոց. յոր միտ յեբր" և յասոր" և 'ի լատ" փխել սիրելւոյ՝ գնի յերեսաց քոց. իբր թէ առաջի երեսաց քոց: Տես և զոր ունիմք ասել 'ի յետագայ համարն:

Ըստ երկրորդին կամի ասել. մատնելով 'ի վերայ՝ գտաք նման սիրելեաց քոց, որք 'ի ձեռն վշտաց նահանջին 'ի չարեաց, և գտանեն 'ի բարին. զի որում և մեք վշտօք կամ պատժովք զգաստացեալք բերիմք 'ի բարիս. իսկ թէ զկարգ, յայտ առնէ՝ ասելով:

Յանց և յերկիւղ յղացեալ երկնեցաք. և ծնաք զհոգի փրկութեան. Կամի ասել. 'ի ձեռն պատժոց յահ և յերկիւղ քո ըմբռնեցաք, տեսանելով թէ ոչ խնայես պատժել. և երկնեցաք, զի տառապեցաք և տագնապեցաք 'ի ցաւս պատժոցն, յորս պաշարեցաք. բայց ուրախ եւս եմք. զի յետ երկանց ծնաք զհոգի փրկութեան, զի զհոգևոր բարիս փրկարարս. կամ որ նոյն է՝ զգործս հոգւոյ՝ օգտակարս առ փրկութիւն յաւիտենական. և կամ թէ գտաք զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց:

Ըստ այսմ յղացեալ կարէ աստ հայիլ և 'ի յղութիւն բարւոյ. յոր միտ կամի ասել. երկնչելով յերեսաց քոց կամ յահէ փառաց քոց՝ յղացաք 'ի մեզ

զբա

զբանին խորհրդս. և ըստ ժամանակին երկնե-
ցաք, զի ջանացաք ծնանիլ զայն. որպ և ծնաք
իսկ. որով և արարաք 'ի վր երկրի զհոգի փր-
կութե. զի այսմ գնի և յանձանցի յասելն. * Վս
երկիւղի քո յղացաք. երկնեցաք, և ծնաք. (ո-
րով և) զհոգի փրկութե քո արարաք 'ի վր երկրի ||.
կամ թէ, * ծնաք զհոգի փրկութե քոյ (զոր) արա-
րաք 'ի վր երկրի ||. սոյնպէս է և յեօթ.
Ցեբր" գնի. * այսպէս եղաք յերեսաց քոց տր.
յղացաք, ցաւեցաք. որպէս թէ ծնաք զհոգի.
զփրկութիս. ոչ լինի երկիր ||. կամ * փրկութիւնք
ոչ լինին յերկրի ||: Ըստ Լատ" գնի. * այսպ եղաք
յերեսաց քոց տր. յղացաք, և որպ թէ երկնե-
ցաք, և ծնաք զհոգի. զփրկութիւն ոչ արարաք
յերկրի ||: Յորս երկու տարբերութիք տեսանին.
մին է այն՝ զի ոչ գնին՝ 'ի գոսա, որպ և յասոր"
բառքդ * յահ և յերկիւղ ||. կամ զի եօթ'' և զի
անձանցի մերում բառքդ * վասն երկիւղի քո
տր ||. բայց զպակասութի. այդոցիկ բառից լնու-
բառդ յերեսաց քոց տր. որով նշանակի մեծ-
վայելչութի փառացն տյ, կամ սիրելի և ցանկալի
ներկայութի նր. որոյ փոխան 'ի մեզ եղեալ է
սիրելի. և կամ ահեղութի նր, յորմէ պատճառի
ահ և երկիւղ: Երկրորդն է այն՝ զի յաւելեալ
լինի բառդ ոչ. բայց ասելի է, թէ այդ բառ ա-
ռեալ է 'ի յաջորդ համարոյն. և սխալագրութբ
կրկնեալ է աստ. ապա թէ ոչ՝ եօթանասունք
ես գնելին զդոյն. Նաև արաբացիք. ընդ որս և
ասորիք. զի թէպէտ ասորւոցն ես տպագրեալ է,
բայց ոչ գոյ 'ի նմա աստ բառս ոչ. զի գրի այս-
պէս. * յղացաք և երկնեցաք որպէս այնք՝ որք
զհողմս ծնանին. պահեա զմեզ՝ զի մի կորիցուք
յերկրի ||. որպ գնի 'ի յաջորդ համրն. ասէ և անդ:

Հա-

Ճշմարտական մեր գերամբարձ իմն տեսութիւն 'ի ձեռն հոգւոյ փրկութեան զհոգին 'որ իմանալով՝ յայլ իմն միտս տարածել զայս բան, 'ի խնդրելն 'ի քէն՝ ունիլ զնա իբր զէն ինքեան ընդդէմ թշնամեացն. ուստի ասէ 'ի կան ՃԼԹ. * Հոգի քո
,, որ և բարի զէն իմն քո եղիցի ('ի փրկութի) յամ
,, ժամ ընդդէմ թշնամեացն հակառակողի ||: Այլ զայս խնդրէ առ անկասկած մնալոյ 'ի բարին, և անկործան 'ի չարն. և զայն կամելով յայտնել մարգարէին յարէ զկնի, և ասէ :

15. Մի ևս կործանեսցուք մեք. այլ կործանեսցին բնակիչք երկրի.

Նախամնաց է գտանել զհոգի փրկութե. բայց սակաւուցէ անկորուստ ունիլ զայն. միայն շնորհք հոգւոյն մէջ է՝ որ նորաստէ պահել զնոյն, և անկործան մնալ 'ի նմին. յայս վստահացեալ մարգարէին՝ ասէ :

Մի ևս կործանեսցուք մեք. այլ կործանեսցին բնակիչք երկրի: Այս ոչ կործանումն սկզբնաբար հայի առ հոգևորականն փրկութի, և երկրորդաբար առ մարմնականն. որպ թէ եդեալ էր. յետ ծնանելոյ մեր զհոգի փրկութե կամ յետ գտանելոյ զփրկութի՝ ակն ունիմք թէ օգնականութբ քով մնասցուք հաստատուն 'ի վիճակ բարւոյ. և ոչ անկցուք 'ի վիճակ չարի: Իսկ որք բնակին յերկրի, այս երկրասէրք, նա և թշնամիք մեր՝ որք տակաւին կեան յերկրի, ոչ զգաստանալով 'ի պատժոցն, զորս ետուր և տաս նց, անկցին և կործանեսցին 'ի չարիս :

Յեբր" և 'ի լատ" պակաս ընթեռնայս բան. զի յեբր" գրի այսչափ միայն. * և ոչ անկան բնակիչք տիեզերաց ||. սոյնպէս և 'ի լատ" ընի. * վասն ո-

ան

մնկան բնակիչք երկրի ։ սոյն այս և երևի խանգարեալ 'ի սխալագրութե. յորմէ և Թարգմանութիւն ասորւոց վեր 'ի վայր է շրջեալ յասել. * պաշտեան զմեզ՝ զի մի կորիցուք յերկրի. և զի մի ապաստան մնկցին բնակիչք ամենեքեանց ։ Յամի գիտութե բանին է ցուցանել՝ թէ 'ի յղանալ և 'ի ծնանիլ բնակչաց երկրի զհոգի փրկութե ոչ լինի նց անկանիլ և կորնչիլ. այլ այնոցիկ միայն՝ որք ծնանին զերկրաւոր և զնչաւոր հոգի ։ Նայսցիկ ամի հետևեցուցանէ մարգարէն, և ասէ ։

16. Յարիցեն մեռեալք. և կենդանասցեն մարմինք որ եղեալ են 'ի գերեզմանս ։

17. Ողորմեսցին, ընծայեսցին, և ուրախ եղիցին դադարեալքն յերկրէ ։

Նայս է աշա բարեբեր պտուղն և բրաբիոնն յղանալոյ յերկիւղն այ, և ծնանելոյ զհոգի փրկութե. որ է՝ հասանել 'ի յարութի մեռելոց. ուստի և մարգարէն 'ի սոյն ցնծալով գոչէ, և ասէ ։

Յարիցեն մեռեալք ։ Նամի ասել. որք 'ի ձեռն մեղաց ուղղեցին զինքեանս, և սրբութք կեցեալ մեռան 'ի շնորհս այ, յարիցեն յաւուրն յետնում 'ի յարութի կենաց, որ առ 'ի կեալ յաւիտեանս ։ Նաև 'ի ցուցանել՝ թէ մն բարեաց ասէ զայս՝ յաւելլու և զբառդ քո 'ի յեբր" և յասոր" և 'ի լատ" և յօրինակս ինչ ածաշնչի մերում ։ Նամելով ասա ցուցանել՝ թէ յիրաւի այս յարութի հայի 'ի յաւիտենականն կեանս, յարէ զկնի, և ասէ ։

Կենդանասցին մարմինք որք եղեալ են 'ի գերեզմանս ։ Նայսինքն թէ մի որ մնասցէ մեռեալ 'ի գերեզմաննի. այլ ամենեքեան ելցեն 'ի գերեզմանաց անտի .

տի. և այնուհետև մնասցեն կենդանիք ։ Դերեզմանօք ոչ իմացեալ լինին ըստ մտանաւոր տեղիք շինեալք 'ի մարդկանէ, յորս ը կարգի Թաղին մեռեալք. այլ ո՛ և իցէ վայրք, յորս գտնին կամ ծախին մարմինք մեռելոց՝ եթէ 'ի ծովու 'ի ձկանց, և եթէ 'ի ցամաքի՝ 'ի կենդանեաց. և այս է բան հաւատոյ. զորմէ երկար և ը օրինի խօսին ածաբանք ։

Յաւել ըստ մարգարէին, կենդանասցին մեռեալքն, բառդ ամենեցեան՝ միայն հայի յարդարս և յամպարիշտս. իսկ բառդ կենդանասցին ոչ միայն հայի 'ի նա, „այլ՝ այլ և այլ օրինակաւ. յամպարիշտս հայի՝ 'ի Թշուառութիւն նոցա. զի յարութիւն նոցին չար ևս է վասն նոցա. ուստի և անհնարին ցաւօք ունին յառնել. իսկ յարութիւն արդարոց՝ անպատում ուրախութիւն է նոցա. և առ որոշումն այսր՝ յարէ զկնի և ասէ ։

17. Զարթիցեն, ցնծասցեն, և ուրախ եղիցին բնակեալք յերկրէ. Այսինքն թէ արդարք այնպէս յարիցեն, որպէս թէ զարթնուցին յանուշ քնոյ. և 'ի յառնելն ցնծասցեն. և որպէս դադարեալ կային յերկրի 'ի բազում ամաց, սոյնպէս ուրախ եղիցին. և բերկրեալ մնասցեն ոչ առ ժամանակ ինչ, այլ յաւիտեանս յաւիտենից ։

Այս բան ըստ ձայնին կարէ հայիլ առ որդիսն Իսրայէլի, որք 'ի գերիլն 'ի բաբելոն՝ ը մեռեալս համարեալ էին. և 'ի դարձին՝ գրեթէ 'ի գերեզմանէ ելեալք կենդանացան, ևս և ցնծացան, և ուրախ եղեն. որպէս եցոյց և եզեկիէլ մարգարէ. լէ. 1 = 15 ։

Յերբ" և յասոր" և 'ի բատ" յետևառաջութիւն դնին բայքդ յարիցեն և կենդանասցին, և յետագայքն փոքր մի այլազգ կարգին. զի յերբ"

 դնի.

դնի · * կեցցեն մեռեալք քո · դիակք իմ յարի-
ցեն · զարթիք և գոհաբանեցէք բնակիչք հո-
ղոյ ‖ · յասոր'' դնի · * կենդանասցին մեռեալք
քո · և դիակունք նց յարիցեն · զարթիցեն , և
գովուն երգեսցեն ընկողմանեալքն 'ի հող ‖ ·
'ի լատ'' դնի · * կեցցեն մեռեալք քո · սպան-
եալքն իմ յարիցեն · զարթիք և գովեցէք , որք
բնակիք 'ի հող ‖ ։ Մք ևս 'ի նոյն ակնարկեն ·
և զոր 'ի մերս և յեօթ'' և յալաք'' յաւելեալ
էն ներգործութք , 'նք զօրութք տան իմանալ զայնս ·
այլ յոմն դիտումն բանին բովանդակի այս ,
թէ յառնելոց են մեռեալք առ հասարակ · և
որք յառնեն 'ի կեանս՝ բերկրելոց են 'ի նոյն · և
գովութք օրհնելոց են զյարուցիչ իւրեանց ։
Այլաբանօրէն՝ ազգք մարդկան որք մեռեալ
էին 'ի սկզբնական արդարութէ և 'ի շնորհաց , և
թաղեալ էին 'ի գերեզմանս ախտից և մեղաց ,
'ի գալ փրկչին յարեան և կենդանացան , ոմանք
'ի վիճակ բարի · ոմն եղեն նք՝ որք հաւատացին
'ի նա , և գնացին զհետ նր , և ուրախ եղեն 'ի
փրկութէ նորին · իսկ ոմանք 'ի վիճակ չար · ոմն
եղեն նք՝ որք ոչ հաւատացին 'ի նա , կամ որք
հաւատացին , բայց ըստ հաւատոյ նր ոչ կեցին ,
որով արժանի գտան դատապարտութե ։
Բարոյապս , մեղաւորք՝ որք 'ի մեռելոց սակի են ,
և կան 'ի գերեզման մեղաց , յապաշխարելն կեն-
դանասցին , և ուրախ լիցին ։ Իսկ թէ ուստի՞ իցէ
այս շնորհ , և պարգև բարի , յայտ առնէ ասե-
լով ։

**18 · Զանզի ցօղդ՝ որ ցօղէ 'ի քէն , այդ բժշկութիւն է նոցա · բայց երկիրն ամպարշտաց տապալեսցի ։**

Ցօղն է խոնաւութի նուրբ գոլորշեաց սփռելոց

և տարրացելոց 'ի վերին օդս՝ իջեալ 'ի գիշերի 'ի վր երկրի · որով զովանան տունկք , և կրկին ոգևորին · յայսպիսի իմն նմանութիւն վերստանու մարգարէն զկենդանարար զօրութիւնն այ ,

և ասէ ։

**Քանզի ցօղդ՝ որ ցօղէ 'ի քէն՝ այդ բժշկութիւն է նոցա ։** Կամի ասել · որպէս ցօղն իջեալ 'ի գիշերի 'ի վր տնկոց՝ տայ նոցա նորոգութի կենաց , սոյնպէս և կենդանարար զօրութի քո իջեալ առ 'ի քէն՝ և հասեալ 'ի ննջեցեալս՝ որք կան 'ի գիշեր մահու , բժշկութի տայ նց , այս թէ կենդանացուցանէ զնս՝ յարուցանելով 'ի կեանս անմահ ։ Իսկ

վս ամպարշտաց ասէ ։

**Բայց երկիրն ամպարշտաց անկցի ։** Կամի ասել · ամպարիշտք երկրի ոչ հանդիպեսցին այսպիսի յարութե · զի ոչ 'ի կեանս յարիցեն , այլ 'ի սատակումն յաւիտենականն ։

Սոյն այս կարէ ըստ ձեւին հայիլ 'ի հանդիստ տառապեալ ազգին հրէից՝ յաղագս նց 'ի գերութէ բաբելացւոց · յոր միտ կամի ասել · ողորմութի քո կամ օգնականութի քո՝ որ իբրև ցօղ իջանէ 'ի քէն՝ հանդերձեալ է հանգուցանել զազգն իմ 'ի տառապանաց գերութե , և բժշկել 'ի հիւանդութէ անտի նց , և զԹշնամիս նց կորուսանել ։

Այլաբանօրէն՝ ցօղ արեանն քսի , կամ զեղումն ողորմութե նր , կամ ի գեղարդեայ՝ լոյս ածային շնորհաց՝ ցօղէ 'ի հեթանոսս և լուսաւորէ զնս , զի դարձցին առ ած · բժշկէ և զհիւանդացեալս ախտիւք , և ապաքինէ զվէրս հոգւոց , և կենդանացուցանէ զմեռեալս մեղօք ։ Այլ շարական մեր 'ի կան ձին զայս բան վերածէ 'ի զօրութի լուսափայլ յարութեն քսի 'ի կենագործել

նո_

նովաւ զազգ մարդկան · տես 'ի Համարն 7 · 'ի
վերջն :

Յերբ" յատոր" և 'ի լատո" փնկ բժշկութե լոյս
դնի · զի յերբ" դրի · * ցօղ լուսոյ ցօղ քո · և
երկիր զհսկայս ընկեցէ || · կամ ըստ Թարգմա_
նելոյ այլոց · * ցօղ դալարոյ ցօղ քո · և զեր_
կիր հսկայից կործանեսցես || · սոյնպէս է և յա_
տոր" և 'ի լատո" : Օ.. նոյն 'ի մէջ բերեն և 'նք ·
զի որպէս ... այն ցօղ ողորմութե և զօրութե որ
բժշկէ և կենդանացուցանէ զննջեցեալսն , իբր
լոյս ծագէ, ըն այլևայլ ներգործութե լուսոյ, և
տայ յարուցելոց զհանդամանս լուսոյ , օրինակի
'ի ցօղ լուսոյ : Իսկ Թէ փոխանակ ամպարշտաց
հսկայ դնի , չէ ինչ · զի և հսկայք երկրի նշա_
նակեն աստ ամպարիշտք : Այս ըստ եղեալ
մարգարէին՝ դառնայ խօսիլ առ ժողովուրդ
իւր, և ասէ :

19 · Ելո՛յս տուր ժողովուրդ իմ · գնա՛ մուտ 'ի շտեմա_
րանս քո · փակեա՛ զդրունս քո առաջի երեսաց
քոց :

20 · Փախի՛ր և թաքի՛ր առ ժամանակ մի · մինչև անցցէ
բարկութիւն Տն :

Արտաքսեալ բազում չարիս գուշակեաց մարգա_
րէն 'ի վր Հրէաստանի , բազումք 'ի ժողովրդե_
նէ առաւել ... էին , և բազումք և ս
պարհուրեալք · զորտամեալսն յորդորէ խոյս տալ
և Թագչիլ · զի մի տեսցեն զչարիսն , որք գալոց
էին · իսկ զպարհուրեալսն քաջալերէ՝ մի երկն_
չիլ , այլ փախչիլ և պահիլ , մինչև դադարեսցին
այն չարիքն :

Այլ սակայն այս բանք փոխաբերաբար առեալք
կարդին յաղագս արարածի և 'ի զգուշաւորութե ժո_

զոմլորդեանն իլի երրակի · նախ՝ առ ՚ի խոյս տալ յամպարշտաց և յամպարշտութեանց նց · երկրորդ՝ ՚ի պատրաստիլ մ՝ զգուշութ անձին · և երրորդ՝ առ ՚ի թափչիլ յապաշխարութե և ՚ի գործս բարութե · զի մի կրեսցեն զպատիժ բարկութեն այ համգոյն ամպարշտաց : Յառաջինն հայելով ասէ :

Այս տաւր ժողովուրդ էմ : Կամի ասել · տես ով իցէ՛ որ ես ժողովուրդ իմ՝ թէ զիարդ պատուհասին և պատուհասելոց են ամպարիշտք · և զայս տեսեալ՝ խոյս տուր ՚ի նոցանէ, և ՚ի գործոց նց · և ամենևին մի խառնիր ը՟ նս : Հայելով և յերկրորդն՝ ասէ :

Գնա՛ նմա ՚ի շտեմարանս քո · փակեա՛ զդրունս քո առաջի երեսաց քոց : Ա՛յսինքն՝ յետ հեռանալդ յամպարշտաց՝ մուտ ՚ի ներքս ՚ի քեզ ՚ի սիրտ քո, ուր իբր ՚ի շտեմարանս ժողովին խորհուրդք · և քննեա՛լ զնմ՝ տես թէ զիարդ պարտ է քեզ զգուշութի կեալ · և եթէ տեսցես թէ ամպարիշտք կարեն մուտ առնել առ քեզ, փակեա՛ զդրունս քո առաջի երեսաց քոց · այ ամ ջանիւք արգել զմուտ նց, որպէս թէ փակեալ էիր զդրունս ընդդէմ մտից նոցա :

Յածաշնչի մերում ոչ գնի ՚ի մերջս * առաջի երեսաց քոց ‖ · և փոխ ասելոյ, խոյս տուր, գնի՝ գնա՛ · և բոլոր բանն գրի այսպէս · * գնա՛ ժողովուրդ իմ · մուտ ՚ի շտեմարանս քո · փակեա՛ զդուրս քո ‖ : Այսպէս գնի և յայլս · միայն թէ յեբր՛՛ և ՚ի լատ՛՛ փոխ ասելոյ ը՟ սաղմոսարանի մերում, * առաջի երեսաց քոց ‖ · գնի, ՚ի վերայ քո, որ ՚ի նոյն գլխի : Հայելով ապա և յերրորդն՝ ասէ :

20 · Թաքե՛ր և ծածկե՛ր առ ժամանակ մի · մինչև՝ անցցէ բար-

Ճաշկութ ՟Ի : Նոյնպէս ասել . եթէ տեսանես զքեզ 'ի գնացս հանգոյն ամպարշտաց , կամ յախտս յօրէնս 'ի գործս ՟նց , փախիր , կամ յետս կաց 'ի գնացից քոց . և Երգիր առ ժամանակ մի . զի մնաս սակաւ մի յապաշխարութիւն , և թաքիր 'ի նմին սրահօք և քրձովք : Նաև ըստ այսմ բանի առ ժամանակ մի՝ ոչ անկանի 'ի մեղս ներքին ապաշխարութե , որոյի է լալ 'ի վր մեղաց և ասել զայս , զի այս առ միշտ հայի , այլ 'ի վր արտաքնոյն , որպիսի են պահք , աղօթք , խարազնագերծութիւնք եւ , զի այսպիսիքս ոչ առ միշտ պարտաւորին , այլ առ ժամանակ մի միայն : Որդ եթէ առե զայս արասցես՝ անցցէ 'ի քէն բարկութի ՟Տն . զի թէ դարձուցես ՟Ած 'ի բարկութէ իւրմէ , և նահանջեսցի 'ի պատժելոյ զքեզ :

Յարմարական մեկնութ՝ մարթի զայս բան առնուլ և ըստ արտաքին նշանակութ բառիս . ըստ որոյ ցուցանի թէ 'ի պատուհասել ՟Այ զանզգամս 'ի ք՟նի ուրեք՝ արժան է ժողովրդեան ՟Տն խոյս տալ և առանձնանալ յապահով տեղւոջ , և պահել զգուշս , և կամ փախչիլ և թաքչիլ ուրեք՝ մինչև անցցէ պատիժ բարկութե ՟Տն :

Բարոյապէս՝ հարկ է կարողութեց հոգւոյն խոյս տալ յամպարիշտ խորհրդոց , և մտանել 'ի բարի մտածմունս իբր 'ի շտեմարանս , և փակել զգայարանս , որք են դրունք մտաց և կամաց , փախչիլ յաւթից մեղաց , և թաքչիլ առ ժամանակ մի 'ի մենաւոր հոգևորին կրթութիւնս , մինչև հաստեցուցանել զերեսս ՟Այ , և զիջուցանել զբարկութի ՟Նր , և գտանիլ արժանի երանաւէտ շնորհաց նորին , և ժամանել յանդորրութի յաւիտենականն :

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Է.

Գոհութիւն առ ած Եզեկիայ վ գտեալ առող-
ջութեան 'ի հիւանդութենէ մեծէ, հանդերձ հոգեկեցոյց խոկմամբ
մաղթանօք։

Աղօթք եզեկիայ արքային յու-
դայ։

('ի սաղ. Ճե։)

1. Ես ասացի 'ի կէսաւուր յե-
ղեն աւուրց իմոց, թէ գնացից ես
'ի դրունս դժոխոց։
2. * Թողի զամ կենդանի իմ. և
ասացի թէ այլ ոչ ևս տեսից զփր-
կութիւն ած յերկրի կենդանեաց.
և ոչ ևս տեսից զմարդ բնակիչ
երկրի հանդերձ։
3. * Պակասեցայ ես յազգատոհ-
մէ իմմէ. այսուհետև թողի զմն
զամ կենաց իմ։
4. * Ելի՛ գնաց՝ մեկնեցաւ յինէն
հոգի իմ որ այն՝ որ քակէ զտաղա-
ւար. և եղէ ես որ զտաղաւարն ա-
պարաց մէջ 'ի հաստատել։

5. * Յաւուր յայնմիկ մատնե-
ցայ ես յառաւօտէ՝ որ 'ի յերե-
կոյեան. այնպէս խորտակեաց
մանրեաց զոսկերս իմ. զի յառա-
ւօտէ մինչև 'ի գիշեր մատնեցայ։

6. * Որպէս ծիծեռնակ այնպէս ձայնեցի.
որպէս աղաւնի՝ այնպէս հեծեցի. զի
նուաղեցին աչք իմ 'ի տեսանե-
լոյ։
7. * Հայեցայ 'ի բարձունս առ

ած

Աղօթք Եզեկիայ արքայի հրէից,
'ի ժամանակի՝ յորում հիւանդա-
ցաւ, և յարեաւ 'ի հիւանդութենէ
իւրմէ։

( Եսայ. ԼԸ. 10 = 20։ )

10. Ես ասացի 'ի վերջանալ
աւուրց իմոց. գնացից 'ի դը-
րունս դժոխոց։
11. * Թողի զմնացորդս
ամաց իմոց. ասացի թէ ոչ
ևս տեսից զփրկութիւն այ 'ի վր
երկրի. և ոչ ևս տեսից ըզ-
մարդ բնակչօք հանդերձ։
12. * Պակասեցայ ես յազ-
գատոհմէ իմմէ. թողի զմնա-
ցորդս կենաց իմոց։
Ելին և գնացին յինէն, որպէս
որ քակէ զտաղաւար կանգ-
նեալ. եղև հոգի իմ առ յի-
նէն որպէս ոստայն ոստայնանկի
մերձ 'ի հատանելոյ։
13. * Յաւուր յայնմիկ մատնե-
ցայ մինչև յառաւօտ. իբրև
զառիւծ այնպէս խորտակեաց
14. զոսկերս իմ. * զի 'ի
տուընջենէ մինչև 'ի գիշեր
մատնեցայ։
Իբրև զծիծառն այնպէս ձայնեցի.
և իբրև զաղաւնի այնպէս
մնչեցի. զի նուաղեցան
աչք իմ.
'ի հայելոյ 'ի բարձունս երկ-

նից

[illegible]

8. * Տէր [illegible]

9. * [illegible]

10. * [illegible]

11. * [illegible]

12. * [illegible]

նեղց առ ո՞ր. որ փրկեայն
զիս. և փարատեցոյց զցաւս
15. անձին իմոյ. * և ինքն
կարգեաց զձ̃մ ամս իմ 'ի
դառնութեան անձին իմոյ:
16. * Տր՝ վասն պատմեցաւ
քեզ. զարթուցեր զհոգի իմ.
մխիթարեցայ և կեցի:
17. * Ահաւասիկ 'ի խաղաղութեն դարձաւ դառնութիւն իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի կորիցէ. և ընկեցեր յետոյ իմ զամ զմեղս իմ:
18. * Զի ոչ թէ որ 'ի դժոխս են՝ խոստովան առնիցին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ. և ոչ յուսասցին յողորմութիւ քո՝ որք իջանեն 'ի գուբ:
19. Այլ կենդանիք օրհնեսցեն զքեզ. ձ̃գ և ես այսուհետև մանկունս ծնայց, որ պատմեսցեն զարդարութի քո.
20. * Տր փրկութ իմոյ:
Եւ ոչ դադարեցից օրհնել զքեզ սաղմոսարանաւ զամ աւուրս կենաց իմոց յանդէման տաճարիդ այ:

# ՎԵՐՆԱԳԻՐ

Աղօթք եզեկիայ արքայի յուդայ:

Ի հիւանդանալ եզեկիայ արքայի յուդայ 'ի լթ ամի կենաց իւրոց՝ եկն առ նա եսայի մարգարէ, և ասէ. գխտաւջիր՝ զի մեռանելոց ես յայդմ հիւանդութենէ: Իսկ նորա լուեալ զայս՝ սոսկացաւ, և սկսաւ լալ. և դարձուցեալ զերեսս իւր յորմն 'ի տաճարին կոյս՝ բազում թախանձանօք աղաչեաց զԱծ. զի խնայեսցէ 'ի նա:

Յայնժամ առաքեցաւ առ նա դրձլ եսայի , և ասէ ցնա 'ի դիմաց այ · լուեալ աղօթից քոց , և մի մեռցիս · այլ կեցցես այլևս հնգետասան ամ · և ոչ այսչափ միայն , այլ և ազատեցից զքեզ 'ի ձեռաց արքային ասորեստանեայց , և ես ինքնին պաշտպան եղէց քղքիդ եդմի ։ Եւ իբրև առողջացաւ եզեկիա , մատոյց այ զաղօթս զայս 'ի շնորհակալութի ։

Յեբր՛՛ փոխկ աղօթից՝ միքթապ դնի · զոր լատինացիք թարգմանեալ են գրուած , եօթանասունքն ըստ օրինակաց ինչ՝ երգ , և ըստ այլոց օրինակաց՝ աղօթք · մարթ էր թարգմանել և դպրութի · ամքին ևս 'ի նոյն ակնարկեն ։

Ոմանք աստանօր , ըստ որս և գէորգ վրդ՝ համարին՝ թէ այս հիւանդութի եզեկեայ պատահեցիցէ նմ վն հպարտանալոյն նորա ըստ հարուածոյ արքային ասորեստանեայց · զի թէպետ ըստ կարգի ժամանակագրութե հիւանդանալն եզեկեայ փոքր մի յառաջ դնի քան զհարուածին ասորեստանեայց , բայց ըստ քղի գիրք թգւրց , ևս և եսայի մարգարէ նախ պատմէն զանցս ասորեստանեայց , և ապա զհիւանդանալ եզեկեայ , յայն հայելով ոց զհիւանդանալն նորա զկնի դասեն ։ Յաւելուն ոմանք 'ի սոյն՝ թէ որովհետև եզեկիա զկնի այնր յաղթութե՝ ոչ յօրինեաց զերգս շնորհակալութե , պատժեցաւ զնա ած մահաբեր հիւանդութբ · ուստի և յառողջանալ իւր 'ի հիւանդութէ անտի՝ փութացաւ երգել զօրհնութիս զայս ։ Մատիցուք արդ 'ի մեկնութիդ ։

## Ր. Ը. Ն.

1. Ես ասացի 'ի կիսանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացից ես 'ի դրունս դժոխոց:

2. Թողի զամս [illegible] իմ. եւ ասացի թէ այլ ոչ տեսանեց զփրկութիւն յերկրի կենդանեաց. եւ ոչ տեսանեց զմարդ բնակչօք երկրի հանդերձ.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Կամելով եզեկիայ մեծ իմն ցուցանել զբարերարութիւն այ՝ զոր եգիտ 'ի հիւանդութեան իւրում, առաջին դնէ զմեծութիւն յետին թշուառութեան՝ զոր կրեաց 'ի հիւանդութեան անդ. զի այսու առաւել եւս պանծալի ընծայեսցէ զբանս շնորհակալութեան իւրոյ. զայս դիտելով սկսանի ասել.

Ես ասացի 'ի կիսանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացից ես 'ի դրունս դժոխոց. կէս ամ անձառնալին եւ ամ այլոց՝ գնացից 'ի դրունս դժոխոց. Այս ասէր ոչ միայն բերանոյ է, այլ եւ սրտի. որպէս թէ եդեալ էր. 'ի հիւանդութեան իմում խորհեցայ մտօք եւ խօսեցայ բերանով, թէ ահա բառնին յինէն կեանք իմ. եւ չեւ իմ լցեալ զքառասներորդ ամն՝ աւուրք իմ վերանան եւ գնան յինէն. եւ ես շրջեմ 'ի դրունս դժոխոց (այն 'ի գերեզմանն, որ դուռն է գնալոյ 'ի դժոխս. ուր է գոգն աբրահամու). եւ զորս 'ի ձեռին ունիմ՝ 'ի նոցունց ոչինչ օգտիմ, ոչ յազատիլ 'ի թշուառութէ, եւ ոչ 'ի լինալ 'ի բարութէ.

Պւորդ [illegible] զայս բան ընթեռնու [illegible] եօթանասնից այսպէս. * Ես ասացի 'ի բարձրութեան աւուրց իմոց ‖. կամ 'ի բարձու աւուրց [illegible]. եւ ասէ թէ բարձրութիւն աւուրց իմացեալ լինին աւուրք մանկութէ. Բայց յաւելու եւս, թէ այլ թարգմանք դնեն,

դնեն, 'ի հանդարտել աւուրց. և այս ամէն նշանակէ զպակասիլն աւուրց. ըստ որում յերբ՛ դնի 'ի հատման կէտ 'ի կորման. և յորժամ՛ 'ի բարձման. և 'ի լուռ՛ 'ի կէս աւուրց. որոց փոխան 'ի մերում ըստ պատշաճի դնի՝ 'ի վերանալ յինէն. յոյր սակս իսկ լայր Եզեկիա. զի պակասէր յաւուրց անտի կենաց իւրոց. որով և զրկիւր 'ի վայելելոյ զայնս՝ որոց աւկն ունէր. և զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարն՝ ասելով:

2. **Թողից զամս մնացելոյս իմ, և այլն: Ասաց յետին** ցուցմանէ աստ զայն որ մնայ յետ մեկնելոյ ուրուք յոգւոյ. և ըստ այսմ կամի ասել. խորհեցայ 'ի հիւանդութեանս, թէ 'ի գնալ իմում թողում զամս զոր ունիմ. բայց տեսի՝ զի առանց թողլոյ իմ զնո՝ նոքա թողին զիս. և 'ի խորհիլն զայս՝ ասացի. զինչ օգուտ եղև ինձ 'ի թագաւորութեանս և 'ի մեծութեանս. զի ոչ կարեն օգնել ինձ առ 'ի տեսանել՝ զոր տեսանել կամիմ:

Աստանօր հայելով 'ի թարգմանութիւն եօթանասնիցն, ուր գրի. * Թողից զմնացորդս ամաց իմոց ‖. որպէ և յայլս, բառիւդ յետին՝ մանաւանդ պարտ է իմանալ զյետինս աւուրս. ըստ զայն աւուրսն, զորս յետոյ ունէր վայելել Եզեկիա իբր Լ կամ Խ ամ ևս, եթէ ապրէր. ըստ որում ասացեալ էր Դաւթի՝ թէ աւուրք կենաց մերոց տևեն Հ ամ, և աւելին քան զայն Ձ. իսկ Եզեկիա էր յայնժամ իբր ԼԹ կամ Խ ամաց. և 'ի մեռանիլն թողոյր աստ զմնացորդս ամաց իւրոց, ըստ զյետին Լ ամսն, կամ ըստ երբ՛ զրկեալ լինէր յայնցանէ. և ոչ ևս լինէր նմա տեսանել 'ի կեանս երկրի զգործս տն, և ոչ զազգս որդւոց մարդկան. և առ այս յարէ և ասէ:

**Այլ ոչ ևս տեսից զփրկութիւն ա̄յ յերկրի կենդանեաց. և ոչ ևս**

խաւարեաց զմարդ բնակչութ իւրով հանդերձ ։ Պատճառն
է, զի յառաջ եղեկեալ զաղօթս զայս՝ սկսեալ էր
սեննաքերիմ նեղել զինքն. նոյնպէս և Թագաւորն ար-
քային եթէովպացւոց. և եղեկեալ անհնարին փոր-
ձեր՝ ի ձեռաց նոցա, և յաղթել նոցա. իսկ ի հիւանդ-
դանալ խորոմ՝ տեսեալ թէ մեռանին, ասասցէ
առէ ոչ ևս ունիմ տեսանել զփրկութիւն զայն՝ զ
բում ակն ունէի ՝ի տնէ ընդդէմ սեննաքերիմայ
և արքային եթէովպացւոց. և ոչ ևս ունիմ
վայելել զխաղաղութիւն իմ յերկրին կենդա-
նեաց ։

Ապաշխարհին կոչէ երկիր կենդանեաց՝ վ. եր-
կուց. մի՝ զի խոստացեալ էր նմա երկայն կենօք
պահել անդ զօրութեամբ իւր. և մի և՝ զի հրեայք
զինքեանս միայն համարէին կենդանին. իսկ զայլս
ազգս իբրև զմեռեալս. ուստի և զերկիր իւրեանց
կոչէին երկիր կենդանեաց ։

Մարթ է և զերկիր առաջնորդ և զերկիր աշխարհն
կոչել երկիր կենդանեաց. ըստ որում բնակարան
է կենդանեաց՝ մինչդ մարդոյ. Յայսմ երկ-
րի ասէ ոչ ևս ունիմ տեսանել զփրկութիւն տն,
և ոչ իսկ զխաղաղութիւն բնակչաց նր, և զկենցաղա-
վարութ մարդկան ։

Յերբ" փոխակերպումն իմ՝ դրի եաց եաց. զի է իր
իր. զոր լուծանեցէք Թարգմանել են, զիր իմ.
առնէք սակ զիր.. եօթանասունք, ը որս և ա-
րաքացիք՝ զփրկութիւն իմ. որպէս է և յիմ աշխա-
րհում, այլ այս ևս ՝ի նոյն հայի ։ Որպէս՝ որ ՝ի
մերում դնի բնակչօք իւրովք, յերբ" և ՝ի լաւ"
դնի՝ բնակչօք ժամանակի. իբր թէ ասէր. ոչ
ևս տեսից զմարդ, և զօրս բնակին ժամանա-
կաւ ՝ի մէջ երկրի. ՝ի նոյն դիմի և այս ։

Մայր բանք և յանցորդք իմ առին ՝ի բերանոյ
մարդ

մարդկային բնութե․ զի որում 'ի վերանալ և 'ի բառնիլ աւուրց սկզբնական արդարութե նորա գնաց 'ի դրունս դժոխոց, պարտական լեալ մահու․ և եթող զամ գերբնական բարիս՝ զորս ունէր, նա և զխորութին 'ի մէջ այլոց կենդանեաց․ և հատաւ 'ի յուսոյ փրկութե և 'ի տեսանելոյ ընբնակիչս երկրին կենդանեաց, զի դրախտին․ պակասեցաւ յազգակցութե հրեշտակաց, և լքաւ 'ի կենաց խաղաղ։ Յայսպիսի վիճակի տեսեալ զինքն՝ աղաչէր զԱծ օգնել ինքեան․ յոր միյառաջբերէ շրկն մեր զայս բան՝ ասելով 'ի կան ձկր․ * 'ի վերանալ աւուրց իմոց Տր օգնեա ինձ „ միայն մարդասէր ‖։ Իսկ աստ հայեցեալ յարդիւնս չարչարանաց որդւոյն Այ՝ պաղատի առ նա ասելով․ * զչարչարանս խաչի և մահու յանձն „ առեր Տր օգնեա ինձ միայն մարդասէր ‖։ Իսկ հաստատէ 'ի յոյս փրկութեն քոյ՝ կրկին պաղատի 'ի կան ձին․ ապաքինել զհիւանդութե իւր, և ասէ․ * յոյս և յարութի ազգի մարդկան Քս Ած, զհի„ ւանդութի հոգւոյ իմոյ կենդանացո որպէս եր„ բեմն զեզեկիայն․ զչարչարանս և զմահ յանձն „ առեր կենդանատու Տմյն զհիւանդութի հոգ„ ւոյ իմոյ առողջացո որպէս երբեմն զեզե„ կիայն ‖։ Իսկ 'ի կան ձլ ասէ․ * յոյս կենդա„ նութե և փրկութե իմոյ Տր Ած իմ․ յիշեա զիս „ որպէս երբեմն զեզեկիայն․ և դարձո զհոգի „ իմ 'ի դրանց դժոխոց ‖։ Իսկ 'ի կան ձլ․ ընմաղթանօք եզեկեայ առաջի եդեալ՝ ասէ․ * զեզեկիային քեզ մաղթեմ փրկիչ, որ կենա„ րար բանիւ քո լուծեր զերկուսն մահու․ փա„ րատեա և զիմ զհիւանդութիւն․ յոյս կենդա„ նութե մեր կեցո զմեզ ‖։ Իսկ 'ի կան ձին կրկնէ զայսն ասելով․ * զեզեկիային քեզ մաղթեմ հա-

„ ռաչ․

,, աւչմամբ սրտի իմոյ . որ ըն իմ խոնարհե-
,, ցար 'ի յերկնից . յոյս կենդանութե և փրկութե
,, իմոյ տր ‖ ։

Ապա 'ի մէջ բերեալ զնահանջումն դատակն-
քոյ մահուն եղեկեայ յօրինակ բառնալոյ տն
մերոյ զդատակնիք յաւիտենական մահու՝ տա-
րածելով զձեռս իւր 'ի խաչին, մաղթէ արձա-
կել և զինքն 'ի կապանաց անտի հիւանդութե
հասելոյ 'ի հնարից բանսարկուին, ասելով 'ի
կան ձիէ . * որ 'ի խաչին բարձեր զդատակնիք
,, մահու՝ տարածելով զբազուկս քո. արձակեա
,, և զիս 'ի կապանաց բանսարկուին . յոյս կեն-
,, դանութե և փրկութե իմոյ տր ‖ ։ Իսկ 'ի կան
ձիր խոստովանելով զնա՝ կամեցօղ կենդանութե
մարդկան՝ դարձեալ աղաչէ զնա, 'ի մէջ բե-
րելով զբարձումն ցաւոցն եղեկեայ, և ասէ .
* անմահ Թագաւոր՝ որ կամիս զկեանս ամենայն
,, մարդկան, որք կարդան առ քեզ, լո՛ւր աղաչա
,, նաց մերոց . և նորոգեա՛ հոգւով փրկութե .
,, որ զառժամանակեայ զցաւսն բարձեր 'ի մարմ-
,, նոյն եղեկիայ, մշտնջենաւոր ցուցանելով
,, նմա զհոգեւորական առողջութի . լո՛ւր աղաչա-
,, նաց մերոց լծ ‖ . Իբրթէ ասէր . տալով եղե-
կեայ զժամանակաւոր կեանս՝ ցուցեր նմա, թէ
ունելոց իցէ և զմշտնջենաւորն . առ 'ի յայտ ա-
նել, թէ տալով նաև ազգի մարդկան զնորո-
գութի կենաց յՔի աստ՝ տալոց է զմշտնջենաւորն
'ի հանդերձելումն . յոր միտ ասաց տրն մեր .
* ես եկի՝ զի զկեանս ունիցին, և առաւել ևս
ունիցին ‖ . ( յովհ . Ժ . 10 ) ։ Այլ թէ քանի՛
ծանր էր այն թշուառութի պակասութե կենաց,
կամելով եղեկեայ յանձին իւրում նկարել՝ յա-
ւելու խօսիլ բազում ինչ . և նախ 'ի մէջ բե-
րեալ

ընդ պանդխտիլ իւր յազգատոհմէ իւրմէ ասէ:

3. Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ. այսուհետեւ թողէ լքի զմն զկեանս իմ:

Գիտէր Եզեկիա, թէ յազգատոհմէ իւրմէ ծնանելոց էր որդին տն. տր որում խոստացեալ էր դաւթի, յորմէ իջեալ էր ինքն. ուստի եւ ցանկայր ունիլ զորդի՝ զի ՚ի նմանէ ծնեսցի: Այլ ՚ի խորհիլ, եւ ՚ի տեսանել նր՝ թէ անորդի մեռանի, յանհնարին տխրութիւն ընկղմեալ լինէր. որոյ վն լալագին ձայնիւ ասէ:

Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ. այսուհետեւ թողէ լքի զմն զկեանս իմ: Նախ ասել. վայ է ինձ, զի ահա պակասիմ յազգատոհմէ իմմէ. եւ առանց ծնանելոյ զորդի՝ ժառանգ օրհնութեան դաւթի՝ գնամ յշխէ. եւ ոչ եւս կարեմ տեսանել թէ ՚ի զաւակէ իմմէ ծնանելոց իցէ փրկիչն իմ. զի ոչինչ մնաց ինձ՝ ՚ի սոյն յուսալոյ. քանզի ահա ՚ի բաց թողեալ եւ լքեալ զմնացորդ ամս կենաց իմոց զքառասուն, նա՝ զմն զկեանս իմ՝ չոքեմ յայլ աշխ. եւ հոգի իմ մեկնի յինէն:

Յամենայնի մերում ոմն եւ յեօթ'' եւ յայլս՝ պակասի բառդ այսուհետեւ. բայց որովհետեւ ինքնին իմացեալ լինի այն, ներգործութբ յաւելեալ է ՚ի սաղմոսարանի մերում: Գիտելի է եւս, զի յեբր'' եւ ՚ի լատ'' եւ յասոր'' ոչ գտանի այդ յետին հատուած, որ է. *Թողի լքի զմն զկեանս իմ||. զուցէ անկեալ է ՚ի բնագրէն, եւ կամ եօթանասունք յաւելին վն բացատրութե:

Դարձեալ գիտելի է, զի յեբր'' փոխ ազգատոհմի՝ դնի տոռ, որ թէպէտ նշանակէ դար, ոչ դնի յասոր'', բայց ՚ի մերս յոմն տեղիս ծծա-

հնչի

ճշչի ազգ թարգմանի, և ըստ իսկական հնչման տոհմ. որք թարգմանեալ են եօթանասունք և արաբացիք: Եւ ըստ այսմ յասելն յեբր. տոհմ իմ գնաց, կամ ազգ իմ պակասեցաւ, նոյնանման ընդ այնմ՝ որ գնի 'ի մերումս, այն է

պակասեցայ յազգատոհմէ իմմէ:

Այս պակասութիւն ազգատոհմութեան ըստ յիշելոյ մեր 'ի վերոյ՝ հայի յողորմելի վիճակն յայն, յորում մարդկայինս բնութիւն 'ի մեղանչել իւրում զրկեցաւ յազգակցութենէ հրեշտակաց. և եղև ազգակից սատանայի, թողեալ լքեալ զհոգեղինութիւն իւր քան զհոգևորական կեանս. իսկ թէ ընդէր և

զիարդ, յայտ առնէ ասելով:

4. Ել գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ որպէս այն՝ որ տանջի ծարաւոր. և եղէ ես որպէս ջրատայն տարրաց մերձ 'ի հատանել:

Պահապան մարմնոյ է հոգին, 'ի կալն մնայ կենդանի, և 'ի մեկնելն քակտի. վասն որոյ ասէ: Ել գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ որպէս այն՝ որ տանջի ծարաւոր. և եղէ ես որպէս ջրատայն տարրաց մերձ 'ի հատանել: 'Ի կատարեալն գնելով ել, գնաց, մեկնեցաւ, տայ իմանալ 'ի ներկայն. որպէս թէ ասէր, ահա թողու զիս հոգի իմ, որով կայի կենդանի. և մեկնի յինէն իբրև զիմ պահապան. և 'ի թողուլ նր զիս՝ քակտիմ, որպէս քակտի տաղաւար 'ի թողմանելն 'ի մրգապահէ. և թէպէտ տակաւին կեամ, բայց նուաղեալ յոյժ և տկարացեալ ամենևին, որպէս ոստայն սատարաց. (ըստ որպէս թել ջուլհակաց, ևս և որպէս էօրինակ՝ ձէկ մամուկի) մերձ 'ի հատանել. որ է ասել, մերձ 'ի մեռանել. զենադրեն եբր. և զայլոց թարգմանութեանց տես 'ի յառաջորդ հատուածն:

Խորհրդաբար՝ այսու հոգւով նշանակի նմին՝ հոգւոյն սբ, որ մեկնեցաւ 'ի մարդոյ 'ի մեղանչելն նր: Նշանակի երկրորդ՝ հոգեւորական վիճակ սկզբնական արդարութէ՝ զոր ունէր մարդն 'ի դրախտի անդ. բայց ոչ վայելելով 'ի նոյն՝ կորոյս փութով. և ինքն՝ որ տաղաւարն էր հոգւոյն սբյ, եղև քակտեալ հիւղ սատանայի. և տխրացեալ 'ի զօրութէ՝ եղև իբրև զօստայն մերձ 'ի հատանիլ, զի մերձ 'ի յուսահատիլ: Զսոյն զայս առաւել ևս կամելով բացատրել՝ յարէ ըզկնի, և ասէ:

5. Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ՝ որպէս 'ի չէսս առեւծու. այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ. զի յառաւօտէ մինչև 'ի գիշեր մատնեցայ:

Կամի ասել՝ յայտ առնել՝ թէ մահացու և սաստիկ էր հիւանդութի իւր. և 'ի միում աւուր յառաւօտէ մինչև 'ի հասանել գիշերոյ կարէր սպանանել զնա. ուստի և այլաբանութբ իմն խօսի, և ասէ:

Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ՝ որպէս 'ի չէսս առեւծու: Այսինքն 'ի նմին աւուր՝ յորում մատնեցայ և ըմբռնեցայ 'ի հիւանդութե մահու, այն իմ հիւանդութի, կամ նոյն իսկ մահն իբրև առիւծ կալաւ զիս յառաւօտէ այնր աւուր, և ոչ եթող զիս. և զառաւելն կամելով ցուցանել՝ յաւելու ասել:

Այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ. զի յառաւօտէ մինչև 'ի գիշեր մատնեցայ: Այսինքն սաստկութի հիւանդութեն իմոյ այնպէս խորտակեաց զկենդանական զօրութիս իմ, և այնպէս մանրեաց զի նուաղեցոյց զոսկերս իմ, մինչզի յառաւօտէ այնր աւուր մինչև 'ի հասանել գիշերոյ՝ համի

ես 'ի գուբն մահու. և 'ի փաղ եստյեսյ առ իս, և յասել, մեռանիս դու, բարձաւ յոյս կենդանութե՟ իմոյ:

Այն այս յայտնի նկարագրէ զաղէտ թշուա՟ռութե՟ մարդոյ, որ 'ի ստեղծանիլն անդ՝ յառաւօտէ անտի՝ մինչդեռ նորոգ էր ստեղծեալ, մատնեցաւ 'ի ձեռս անմարմին առիւծուն. և այն՝ մինչև 'ի գիշեր, այս՟ մինչև 'ի գուբն յուսահատութե՟, որ օրինակի 'ի խաւար գիշերոյ. յորում չարաչար մանրեաց առիւծն այն չար զոսկերս նր՟, այս՟ զզօրութիւս հոգւոյ նորին զչորեսին ևս, որք են միտքն, կամքն, ցանկականն, և ցասմնականն. զմիտսն մանրեաց կուրութե՟, զկամսն չարութե՟, զցանկականն անկարգութե՟, և զցասմնականն տկարութե՟. Եւ ոչ մնաց նմա այլ ինչ առնել, բայց եթէ 'ի խաւարի անդ ձչել և գոչել. զորմէ խօսի 'ի յաջորդ համարն:

Յեբր" այս բան հանդերձ նախընթաց համարովն դնի այսպ՟. * տոհմ իմ գնաց, և մեկնեցաւ յի-
,, նէն որպէս վրան հովուի. կտրեցի ո՟պ ոստայն-
,, անկ զկեանս իմ. առ բարակութե՟ հատցէ զիս.
,, 'ի տուընջենէ մինչև 'ի գիշեր ծախեսցես զիս. Ե-
,, դի մինչև յառաւօտ իբրև զառիւծ. այնպէս
,, փշրեր զա՟մ ոսկերս իմ. 'ի տուընջենէ մինչև 'ի
,, գիշեր վճարեսցես զիս:: Լատ" դնի. * ազգա-
,, տոհմ իմ բարձաւ և պարուրեցաւ յինէն. ո՟պ
,, տաղաւար հովուաց. կտրեցաւ որպէս յոստայն-
,, անկէ կեանք իմ. մինչդեռ տակաւին սկսանէի՝
,, կտրեաց զիս. յառաւօտէ մինչև յերեկոյ վախճա-
,, նեսցես զիս:: Յասոր" դնի. * դար իմ մեկնե-
,, ցաւ և թռեաւ յինէն իբր տաղաւար հով-
,, ուաց. կարճեցաւ հանգոյն թելի հիւսելոյ
,, կեանք իմ. և իբրև անուր (հիւսէի, կամ

,, իբրեւ ստուայն ) հուպ ընդ հուպ կարելի. ՚ի
,, տանջենէ մինչեւ ՚ի գիշեր մատնեցեր զիս ‖ ։
Չորս չորեքին տարբերութիւնք տեսանին. առաջինն է այն՝ ուր դնի բարձումն ազգատոհմին. դարձեալ եւ պակասութի հեռանէ՛ բանին. զորմէ խօսեցաք ՚ի համարն 3. տես անդ ։ Երկրորդն է այն որ ասի * որպէս վրան հովուի ‖ . կամ որպէս տաղաւար հովուաց . որոյ փոխան դնի ՚ի մերումս . * որպէս այն՝ որ քակէ զտաղաւար ‖ . ուր դերբայական բառդ ունի՝ լատինք եւ ասորիք թարգմանեալ են՝ հովուաց . եւ այլք ոմանք հովուի . բայց ք̃զի այդ բառ եբրայական հայի տիրապէս ՚ի ճարակել, եւ ՚ի ծախել, եւս եւ յապականել կամ ՚ի քանդել, եօթանասունք որպէս եւ մերքս թարգմանեցին, որ քակէ . ըստ որոյ յարաբ" բացատրաբար դնի , յասելն * որպէս այն՝
,, որ կանգնեալ էր զտաղաւար՝ քակէ զայն ,
,, այնպէս եւ հոգի իմ՝ ( որ է կանգնող մարմ-
,, նոյ ) ՚ի մեկնիլն՝ քակէ ( զմարմինն ) ‖ ։ Երրորդն է ՚ի բառդ հատանել կամ կտրել . որ ՚ի մերումս դնի նախադրութ̃ս մինչեւ . բայց նոցայն եւս ըստ մերումս բացատրի ։ Չորրորդն որ է յետինն համառօտ այսր է համարոյ՝ երեւի թէ փոփոխեալ է . բայց այնու ամ̃ի մեկնի ըստ մերում թարգմանութե համաձայն եօթանասնից ։ Արդ ք̃զի յայտ արար եզեկիա զմեծութի հիւանդութե իւրոյ, առաջի առնէ այժմ եւ զդոչել իւր ՚ի նեղութե հիւանդութե . եւ ասէ ։

6 . Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի . որպէս աղաւնի՝ այնպէս մնչեցի . զի նուաղեցին աչք իմ ՚ի տեսանելոյ ։

Եւ բերէ ՚ի մէջ զզուգութիւնս զօրաւոր կենդանեաց ,

նեայց, այլ զծխնւան և զաղաւնոյ · առ 'ի ցու-
ցանել նախ՝ զողորմելի ձայնարձակութի իւր · զի
այսօրինակ կենդանիք 'ի վտանգին ողորմագին ձչ-
չեն և մնչեն ։ Առ 'ի ցուցանել երկդ՝ զառաւե-
լութի տկարութեն · զի որում վն առաւել ծան-
րութե հիւանդութեն նուաղեալ էր յուժոյ · այն-
պէս զի թէև կամէր մեծապէս աղաղակել, ոչ
կարէր · այլ հանգոյն ծխնւան և աղաւնոյ ձայ-
նել · վն այս ասէ ։

Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի · որպէս աղաւնի՝ այնպէս
մնչեցի · զի նուաղեցին աչք իմ 'ի դիտանելոյ ։ Այսինքն
'ի մաշելոյ իմում 'ի ձեռս հիւանդութե և ցաւոց՝
սկսայ աղաղակել · որպէս աղաղակէ թռչուն
յըմբռնելն իւր 'ի բերան գազանի, կամ 'ի տե-
սանել նորա զօձ մերձ եղեալ 'ի բոյն իւր · բայց
չմնաց յիս զօրութի բարձրաձայն գոչելոյ,
ձայն իմ եղանէր իբրև զճչիւն ծիծառան, և իբրև
զմնչիւն աղաւնոյ · և յառաւելուն ծանրանալ հի-
ւանդութե և ցաւոցս, ոչ միայն ձայն իմ նուաղե-
ցաւ, այլև աչք իմ տկարացան 'ի տեսանելոյ · և
ես ժամանեցի 'ի տագնապ մահու, զի 'ի հաղե-
վարութի ։

Յեբր" և յաւուր" յետին համառօտ այսր համա-
րոյ պակասեալ է, մինչդ թէ խառնեալ է 'ի լը-
կրզեն յաջորդ համարոյ · բայց ըղի դտանի այն
յեօթ" և 'ի լոյս" և յարաւ" և 'ի մերս, պարտ
է ասել, թէ անկեալ է այն յեբրայականէն · ուս-
տի և յաւուրբոյն ։

Այս բան հայի 'ի ցոյց ցաւագին վիճակի մարդ-
կայնոյ բնութե, որ մնչէր և հառաչէր առ ած ·
մինչև լուաւ նմա տր · և յանձն առեալ զմահ
խաչի՝ ազատեաց զնա յապականութե անմահին · յոր
մէ առեալ շարականինն զայն՝ ասէ 'ի կան ձիթ ·

* Հառաչեցի զանլուելի զհեծութիւն առ բարե-
,, գութն Ած · և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ իւր-
,, մէ · և եհան զկեանս իմ յապականութենէ · ա-
,, ւերեաց զմահու կարողութիւն՝ որ խաչեցաւ
,, վն մեր · և յարեաւ 'ի մեռելոց՝ որպէս յամի
,, կարող , փրկելով զկեանս իմ յապականութենէ ॥ ։
Եւ զայս այլով իմն բանիւ առաջի առնէ եզե-
կիա , և ասէ ։

7 · Ձայնեցայ 'ի բարձունս առ Տր Ած իմ · որ փրկեաց
զիս · և փարատեցոյց յինէն զցաւս անձին իմոյ ։

Այս հայիլս ըստ արտաքին տեսութե 'ի մէջ բերէ զայն՝ զոր արար եզեկիա , յազդ առնել նմա եսայեայ՝ թէ մեռանիս դու · զի դարձոյց զերեսս իւր յորմն · և հայէր 'ի բարձունս՝ 'ի կողմն տաճարին ։ Իսկ ըստ ներքին տեսութե 'ի մէջ բերէ ըզհայիլն միոջ առ Ած , և զխնդրելն 'ի նմանէ զբժշկութի · ըստ այսոցիկ առեալ՝ ասէ ։

Ձայնեցայ 'ի բարձունս առ Տր Ած իմ ։ Այսինքն թէ 'ի յուսահատիլ իմում յառողջութե՝ հայեցայ առ Տր Ած իմ՝ որ բնակեալն է 'ի բարձունս · և աղաչեցի զնա՝ շնորհել ինձ կեանս առ 'ի լնուլ զպակասութի ծառայութեանս իմոյ · որպէս և ընկալաւ իսկ · վն այս ասէ ։

Որ փրկեաց զիս · և փարատեցոյց յինէն զցաւս անձին իմոյ ։ Այսինքն՝ ոչ անտես արար Տր զաղաչանս իմ · այլ լուաւ և փրկեաց զիս 'ի մահուանէ · և փարատեցոյց յինէն զցաւս իմ , յորս տառապէի ։

Սոյն երգէ և եկեղեցի առ փրկիչ իւր , ասե-
լով 'ի շար Ձին · * աղաչեցի զբժիշկ ողորմ Ած · և
,, լուաւ ձայնի խնդրուածոց իմոց · զի նուաղե-
,, ցան աչք իմ 'ի տեսանելոյ · և յինէն փարա-
,, տեցոյց զցաւս անձին իմոյ ॥ ։ Եւ ապա յորդո-

րէ-

բերով զորդիս իւր 'ի շնորհակալութիւն այսր՝ ասէ
'ի նմին կանոնի. * զԹագաւորն քո բարեբա-
,, նեցէք, որ 'ի յանձն եառ զմահ խաչի. և խա-
,, փանեաց զմահու թագաւորութիւն. և յիւրն փա-
,, ռաւորեցոյց զզաւս անձին իմոյ ‖.
Այլ աստ գիտելի է, զի յայս համար յանձանձելի
մերում բառք ծոյլ յայր 'ի վերջին հառաչանս
նախնեաց համարոյ՝ այսմ. * զի նուաղեցան
աչք իմ 'ի հայելոյ 'ի բարձունս երկնից առ Տէր ‖.
այսինքն դնի և յեօթ" և յարաք. մասամբ իւն
և 'ի լաւ" յասելն. * նուաղեցան աչք իմ վերա-
,, հայեցեալք 'ի բարձունս ‖: Իսկ յեբր" և յա-
սոր" ոմանք սակաւ ասելն * նուաղեցան
աչք իմ ‖, արձակ դնի. որ է * ամբարձեալ
են աչք իմ ‖. կամ որ ասոր" * ամբարձի 'ի
բարձունս զաչս իմ ‖: Այլ եղի այն նուաղութի
կայր նաև 'ի յամբարձման անդ կամ 'ի հայեց-
ման, որ երկուցին և Հիմարտի այս բան.
Գիտելի է դարձ, զի յանձաշնելի մերում յետ դնե-
լոյ * փառաւորեցոյց զզաւս անձին իմոյ ‖, յաւե-
լեալ լինի և այս բան. * և ինքն կարգեաց զնամ
ամն իմ 'ի դառնութիւն անձին իմոյ ‖. Այն այս
մասամբ իւն դտանի և յեբր" և 'ի լաւ" հան-
դերձ այլովք յաւելուածովք՝ որք ոչ 'ի մերում
կան, և ոչ յեօթ, և ոչ յարաբ. Նոյնպէս յեբր"
գրի այսմ. * ամբարձեալ էին աչք իմ 'ի բար-
,, ձունս Տէր. փութա առ իս. երաշխաւորեա
,, ինձ. զինչ խօսեցայց. և ասաց ինձ. և ինքն ա-
,, րար. թարթափեցոյց զամ ամօք իմովք 'ի վերայ
,, դառնութե անձին իմոյ ‖: Ի լաւ" դնի. * նուա-
,, ղեցան աչք իմ վերահայեցեալք 'ի բարձունս.
,, Տէր բռնաբարիմ. պատասխանի արա ըստ իմ. զինչ
,, ասացից. կամ զինչ պատասխանեցից ինձ, երբ

 ,, ինքն

,, Ինքն արար . անդրէն խորհեցայց քեզ զամ
,, ամս իմ 'ի դառնութեան անձին իմոյ || : Յասոր"
գնի . * ամբարձի 'ի բարձունս զաչս իմ . տէր
,, պահեա զիս . և զթուլ̄ վարեսջիր առ իս . և
,, զինչ ասացից՝ ասա ինձ . զի և ինքն արար . և
,, եբարձ զամ զքուն իմ . դառնութենց անձին
,, ողորմեացի տէր || :

Բայց թէ զիմարդ պակասեալ իցեն այս յետին բանք 'ի թարգմանութեան եօթանասնից, ըստ նմին և 'ի մերոյս, եւս և յարաբացւոցն՝ չկարեմ ասել ինչ : Այլ թէպէտ յօրինակի միում 'ի թարգմանութեան արաբացւոց գտանի այդ , բայց թուի թէ յետոյ է մուծեալ , առեալ յասորւոց . ըստ որում նմանութիւն ինչ ունի այն ընդ թարգմանութեան նց : Այլ թէ այսպէս և եթէ այնպէս՝ սոքիմբք կամի ասել . այս հիւանդութիւն և վիշտ եկն 'ի վերայ իմ ըստ կարգի բնութեան . զոր արարիչն խառնեալ է ընդ դառնութեան հիւանդութեան և այլոց վշտաց . զայս եդեալ՝ խօսի առ տէր և ասէ . բանաբարիմ ես տանջիմ 'ի նեղութենէ . դու ինքն բուռն արա ըստ ցոյց զզօրութիւն քո , և պատասխանեա . որպէս թէ ասէր . դու ինքն իբրև երաշխաւոր անձինս արգել զբռնութիւն ցաւոյս . ինձ չմնայ ինչ ասել . զի դու տէր այսպէս ասացեր . և այսպէս կամեցար առնել . այլ ես անդրէն խորհելով 'ի սրտի յայտնեցից քեզ զցաւս իմ . և գտից առ 'ի քէն զբժշկութիւն : Բայց առաջի եդեալ զյայտնելն՝ յարէ զկնի , և ասէ :

8 . Տէր վասն այսորիկ պատմեսցի քեզ . զարթուցեր զոգի իմ . զարթուցեր զհոգի իմ . մխիթարեցայ և կեցի :

Բաղդ . պատմեսցէ գնի աստ փրկել յայտնելոյ կամ

փրկ

մինչ առնելոյ . յոր միտ առի ձնն . Դ . 11 . * ո
պատմեաց քեզ ‖ . այ Թէ ո՞ յայտնեաց քեզ . որպի-
սի է և այն՝ որ գրի 'ի գիրս յոբայ, յառելում առ
յոբ . * պատմեա՛ ինձ՝ եթէ խելամուտ իցես
հանճարոյ ‖ . այ Թէ առա՛, կամ յայտնեա՛ ( յոբ .
լը . 4 . ) . ըն այսմ է և առս յառելն ,

Տէր հօր պատմեցաւ ձեզ . Հարցանելոյ Հանճին իմ . պարգեւ-
ցեր ... իմ . մեկնաբանեցայ և ... , կրամս առել .
մեկ՝ այ մը գաանելոյ զքաջութիւն պատմեցաւ
յիմէ՛ն քեզ աղօթիւք այն իմ հիացմանութին , և
խնդրեցաւ առ 'ի քէն առաջնոյն . և դու ոչ մեր-
ժեցեր զիս , այլ բերանով ձառայի քո եսայեայ
զարթուցեր զիս 'ի յուսահատութենէ իբրև 'ի
քնոյ . և զարձուցեր , այ նաշանչեցեր զհոգի
իմ՝ որ գնայր յիմէն , որով և ես մխիթարեցայ
և սփոփեցայ և կեցի .

Բառ այսմ և մարգարէին բանն Թշուառութին
պատմեցաւ այ բերանով նահապետաց և մարգա-
րէից . և այժ բերանով նորա եւս զաւետիս յուսոյ
փրկութեն . և ըն աւետարանն եկեալ յա՝ մխիթա-
րեաց և կեցոյց զնա . յոր միտ երգէ եկեղեցի
զայս բան յաւագ օրհնութիւն . որպէս երեւի 'ի
նախադրեալդ .

Յեբր՛ ամենեւին այլազգ գրի այս բան յառելն .
* որ 'ի մը նոցա կեցցեն . և յամի 'ի նա կեանք
„ հոգւոյ իմոյ . և բժշկեսցես զիս . և կենդանա-
„ ձեսցես զիս ‖ : 'Ի լատ՛ գնի . * որ եթէ այս-
„ պէս լինի կեալ , և յայսպիսիս կեանս հոգւոյ
„ իմոյ , կշտամբեսցես զիս . և կենդանարձեսցես
„ զիս ‖ . Յասոր՛ գնի . * մը այսպիսի կենաց հոգ-
„ ւոյ իմոյ բժշկեա՛ զիս . և կենդանի արասցես
„ զիս ‖ . Յեօթ՛ գնի . * որ մը այսր՝ զի պատ-
„ մեցաւ քեզ . և զարթուցեր զոգի իմ . և մխի-

,, թափեալ կեցի ‖ : Յարար" դնի . * զի մի՛ այսպէս
,, ո՛չ քեզ աղդ արարի . և զարթուցեր զշունչ
,, իմ . և զօրացեալ կենդանացայ ‖ : Կամ ասել .
կեցցեն և մնասցեն աւք իմ 'ի մէջ նեղութեց . և
յորմէ 'ի նմա յաջողեսցի փրկութիւն կենդանութեան .
միայն թէ բժշկեսցես զիս 'ի հիւանդութենէ աստի
իմմէ . և կենդանագործեսցես զիս . որով և կշտամ-
բելի ցուցցես զկալեալս իմ , որով լայի 'ի վերայ
հիւանդութենս . զորմէ աղդ արարի քեզ . և պատ-
մեցի առաջի քո :

Ասէ թէ շարական մեր զբաղդ կենդանագործել՝
առեալ է աստ 'ի սոցունց . զոր և գերադրյն իմն
իմաստութք 'ի մէջ բերէ 'ի բերանոյ աղաչաւոր-
ղի 'ի կան ձայն . 'ի խնդրել անդ 'ի քէն , թէ ո-
րովհետև մահճամբ զմահ մեռայց , յարութբ կե-
նդագործեսցէ զինքն . վասն ասէ . * որ կամիւ որ
,, մահճամբ քո մեռուցեր զմահ քո տր . և յա-
,, րութեամբ յարութեամբ քո կենդագործեցեր զմեզ . կե-
,, նդագործեա և զիս զմեղօք զմեռեալս ‖ : Ոսկին
զայս բացայայտես առաջի դնելով եզեկիայ՝
ասէ :

9 . Ես 'ի խաղաղութեան դառնութեան իմ . ընտրեցեր
զանձն իմ . զի մի կորիցէ . և ընկեցեր յետոյ
զամն զմեղս իմ :

Բաւական նշան 'ի մէջ բերէ աստ զկարծօղին ժամա-
նակի . որոյ յաւետաւորել եսայեայ զդժ-
կութեան վաղվաղակի առողջացուց եզեկիայ (որպէս
տեսանի 'ի դ թագ . ի . 5 .) յայս հայելով ասէ .
Ես 'ի խաղաղութեան դառնութեան իմ . ընտրեցեր
զանձն իմ , զի մի կորիցէ : Այսինքն 'ի խնայել քո
յիս և 'ի գթալ՝ դառնութիւն հիւանդութեան դար-
ձաւ 'ի խաղաղութիւն , ու յառողջութիւն կենաց և 'ի

յան-

յանդորրութի՛ւն․ զի նայեցեալ առ իս՝ փրկեցեր զիս ՚ի կորստենէ․ Եւ զառաւելն ՚ի մէջ բերելով՝ ասէ․

Ես ընկեցեր յերեսաց աչաց քոց եմ․ Այսինքն թէ ՚ի կամիլդ բժշկել զիս՝ ոչ հայեցար ՚ի մեղս իմ և յանարժանութի անձին իմոյ․ այլ հայեցար ՚ի բարեգթութի քո․ և ընդունելով զաղաչանս իմ բարձեր յինէն, և ՚ի բաց ընկեցեր զամ մեղս իմ՝ որք էին պատճառ հիւանդութե իմոյ․ Օ սոյն ա֊ բար և ո՞րն մեր ազգի մարդկան, դարձուցանելով զդառնութի նոյ ՚ի յանդորրութի, և ընկենլով ՚ի բաց զմեղս նոյ․

Այլ աստ գիտելի է․ զի առաջին հատուած այսր համարոյ՝ այն է․ * ահա ՚ի խաղաղութիւն դարձաւ դառնութի իմ ‖, ոչ գոյ յայժմեան օրինակս եօթանասնից․ և զի արտաբացեալ թարգմանութիւն ես է յեօթանասնից՝ առ նոյ ես ոչ գտանի այդ հատուած․ ուր ոչ միայն ՚ի բնագրի, այլ՝ և յայլ թարգմանութեանս ամփոփ դնի այդ․ և առկայն այլևայլ օրինակաւ․ մանաւանդ հետևեալ հատուածքն․ որք թէպէտ ըստ նոյն մտաց դնին, բայց բազում տարբերութ․ քանզի յեբր՝ գրի այսպէս․ * ահաւասիկ ՚ի խաղա֊
„ ղութե դառնութի ինձ դառնութի․ և դու ողջա֊
„ գուրեցեր սիրով զանձն իմ ՚ի խորխորատէ
„ ապականման, (կամ ՚ի գբոյ կորստեան)․ զի
„ ընկեցեր զկնի թիկանց քոց զամ զմեղս իմ ‖․
Ի լատ՝ դնի․ * ահաւասիկ ՚ի խաղաղութե դառ֊
„ նութի իմ դառնագոյն․ իսկ դու կորզեցեր
„ զանձն իմ՝ զի մի կորիցէ․ ընկեցեր զկնի թի֊
„ կանց քոց զամ զմեղս իմ ‖․ Յասոր՝ դնի․
* մի թէ առ խաղաղութի՞ դառնացյին ինձ դառ֊
„ նութիք․ վ՛ն ՚ի սրտի քում եղև անձն իմ, զի
„ մի

,, մի՛ հաշուեսցի . զի ընկեցեր զկնի մարմնոյ իմոյ
,, զամ՛ զմեղս իմ ‖ :

Ասացի ըստ նոյն մտաց դնի . քանզի սոքիմիք կամի ասել . յորժամ ՚ի խաղաղութեան էի՝ եհաս ինձ ամենադառն հիւանդութի . այլ այն հիւանդութի և դարձաւ ՚ի խաղաղութի . վ՛ն զի դու ինքն ողջագուրմամբ կորզեցեր և փրկեցեր ՚ի մահուանէ զանձն իմ, զի մի կորիցէ . և ընկեցեր ՚ի բաց զամ՛ զմեղս իմ : Ու առ ՚ի ցուցանել՝ թէ պատկան էր այսպէս առնել՝ ասէ :

10 . Ոչ եթէ՝ որ ՚ի դժոխս են՝ խոստովանեսցին տեառն [illegible] զքեզ . և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ . և ոչ յուսասցեն ՚ի ողորմութեան քո ամենեքեան՝ որ իջանեն ՚ի դժոխս :

Ասոր բանի զմեկնութի լիագոյն ունիս գտանել ՚ի սաղ . ՁԷ . 12 . ուր ասէ դաւիթ * միթէ մեռելոց առնիցես սքանչելիս քո Տր ‖ . զոր և ՚ի մէջ բերաք ՚ի նախընթաց օրհնութե . ՚ի համարն . 9 . տես անդ : Այլ զի մի և աստ առանց մեկնութե թողցուք , քննեսցուք համառօտիւ զոր ասէ :

Ոչ եթէ՝ որ ՚ի դժոխս են՝ խոստովանեսցին տեառն զքեզ . և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ . և ոչ յուսասցեն ՚ի ողորմութեան քո ամէն՝ որ իջանեն ՚ի դժոխս : Կամի ասել, եթէ ոչ գտանէի բժշկութի ՚ի քէն , և այնպէս մեռանէի , ոչ լինէր այն քեզ փառք . զի որք մեռանին և իջանեն ՚ի դժոխս՝ այս է ՚ի գերեզման՝ ոչ կարեն խոստովան լինել քեզ . զի մեռեալք են . և ոչ օրհնեն զքեզ . այնպէս և որք պակասեալ յողորմութե քումմէ իջանեն ՚ի դժոխս ներքինս՝ ոչ կարեն յուսալ ՚ի ճշմարիտ խոստմանս քո :

Սեր արժան է գիտել, զի թէպէտ գտանէին յայնժամ բազումք 'ի զարմն աբրահամու՝ որք յուսային 'ի տր̄, որպիսի եղեն նախահարք և այլ ա̄ծապաշտք, բայց այն էր 'ի շնորհաց ապագայ պարգեւացն քն̄ի. զի նա ինքն մահուամբ խաչին իւրոյ աւերեալ զզօրութի մահու՝ ետ յոյս փրկութե ազգի մարդկան. Ընդ որ ցնծացեալ ս̄բ եկեղեցի՝ երգէ 'ի վ̄ր այսր հնամարդոյ բերկրական բանիւ, և ասէ 'ի շար Ճ̄իթ. * աւերեաց զմա-
,, հու կարողութին՝ որ խաչեցաւ վ̄ն մեր. և յա-
,, րեաւ 'ի մեռելոց որպէս յատմի կարգով, փրկե-
,, լով զկեանս իմ յապականութէ‖. Եւ ասա 'ի կան Ճ̄Լ. պաղատելով ասէ. * որ անմահա-
,, բար քո մեռելութն աւերելով զզօրութն դժո-
,, խոց մեռուցեր զմահ. կենդանագործեա և զիս
,, զմեղօք զմեռեալս. յոյս կենդանութէ մեր, կե-
,, ցո զմեզ‖.

Եբր" և յայլ թարգմանութիւնս բաց յեօթ" և յարաբ" փոխ ասելոյ, որ 'ի դժոխս են, դնի սոսկ դժոխք՝ յասելն. * և ոչ դժոխք խոստովան լիցին քեզ‖. նոյնպէս և փոխ ասելոյ, մեռեալք՝ դնի սոսկ մահ, յասելն. * և ոչ մահ օրհնեսցէ զքեզ‖. և այս ասի ըստ ձեւոյ փոխանունութե. որով անուն պարունակողին դնի փոխ անուան պարունակելոյն, և անուն տեսակին փոխ անուան ենթակայից. և զի դժոխքն է պարունակող իջելոցն անդ, և մահն է խիստ տեսակ մեռանելոյ, սմին իրի եդեալ են բառքդ դժոխք և մահ. որոյ 'ի բացատրութի եդեալ է յեօթ" և յարաբ" և 'ի մերս, * ոչ թէ որ 'ի դժոխս են՝
,, խոստովան առնին առ քեզ, և ոչ մեռեալք օրհ-
,, նեսցեն զքեզ ԼԱ‖.

Նաև որ 'ի բանից աստի եզեկեայ արժան է 'ի

միտ

միտ առնուլ, թէ որպիսեաւ մեռեալք խափանեալ են յօրհնելոյ զԱծ և 'ի յուսալոյ 'ի նա, ապա ո՞ր առելոյ դէորդ վդ֊ղի՝ իբրև զմեռեալս համարելի են նքա՝ որք ոչն օրհնեն զԱծ, և ոչ յուսան յողորմութիւն նր. այլ և վատթարք ևս քան զմեռեալս. Օ այս այսպէս եղեալ եղկելեայ դառնոյ խօսիլ զկենդանի մնացելոցն և ասէ.

11. Այլ կենդանիքս օրհնեսցուք զՏէր. որպէս և ես այսուհետև մինչև յաւիտեանս՝ որ դարձուսցեն զշնորհաւորութեան քո. Տր փրկութե իմոյ.

Կենդանեօք ոմանք իմանին աստ միայն զարդարս երկրի. բայց համեմատագոյն է 'ի հոգին իմանալ եթէ զարդարս և եթէ զմեղաւորս. զի նաև մեղաւորք մինչև են կեցեալ 'ի դժոխս կարեն օրհնել զԱծ՝ թէև անարժանութբ, երբեմն և արժանապէս՝ 'ի դառնալ իւրեանց առ Ած. զի տակաւին չեն հասեալ յեզրն. յորում ոչ ևս է նց հնար օրհնել զԱծ՝ ոչ արժանապէս և ոչ անարժանապէս. յայս ակնարկելով՝ ասէ.

Այլ կենդանիքս օրհնեսցուք զՏէր: Այսմ ասել. մեզ կենդանեացս անկ է օրհնել զքեզ, թէ և անարժան իցեմք. և այսմ իբր տալացոյց առաջի առնէ զինքն, և ասէ.

Որպէս և ես այսուհետև մինչև յաւիտեանս, որ դարձուսցեն զշնորհաւորութեան քո. Տր փրկութե իմոյ: Այսմ ասել. որովհետև կենդանեաց է օրհնել զքեզ, ես որ կենդանի մնացի ողորմութբ քով՝ օրհնեցից զքեզ 'ի կեանս իմ և 'ի մահու. իբր զի ոչ միայն ինև օրհնեցից զքեզ, այլ և որդւովք իմովք, զորս ունիմ ծնանիլ 'ի պարգևելոյ ողորմութե քո. զի և նքա յետ մեռանելոյ իմոյ պատմելով զիրաւունս և զարդարութիւնս քո՝ փառաւորեսցեն զքեզ

զՏրդ

զորդ իմ՝ որ փրկեցեր զիս ։ Նաև թէպէտ ընդ-
հակառակն եղև այս, զի մանաւանդ որդի նորա զան-
հնարին չարիս գործեաց, բայց զկնի զղջացաւ․
և յաւելիաս որդի որդւոյ նորա գնաց զճանապարհս
նորին․ (Դ․ Թագ․ ԻԱ․ 2)։

Մարթ է զայս բան առնուլ և 'ի փոխաբերական
միտս, զի որոյ դիտէ եզեկիա՝ որդւոց տալ, այ՝
ծնանելով նմա զմանկունս․ որպէս թէ եդեալ
էր․ զինչ տաց որդւոց 'ի հաստատութիւն այսր
բարերարութեան՝ զոր ցուցեր ինձ տր՝ վերստին ծնու-
ցելով ինձ զկեանս իմ, բայց եթէ այսուհետև
ծնայց քեզ զունօղս կենաց՝ այ զորդիս, որք օրհ-
նեսցեն զքեզ ։ Զհոգևոր իմաստն տես 'ի յա-
ջորդ համարն ։

Յերբ՝՝ փոքր մի այլազգ կարգին բառք այսր հա-
մարոյ՝ յասելն․ * կենդանի կենդանի ինքն խոս-
„ տովան լիցի քեզ․ որպէս ես այսօր հայր որդ-
„ ւովք․ ծանօթս արասցէ 'ի վր ճշմարտութե
„ քո ‖․ սոյնպէս դնի և 'ի լատ․ միստամբ իմն և
յասոր, յասելն․ * այլ գոհասցին զքեզ կեն-
„ դանիք, որպիսի ես եմ այսօր․ և հայր որդ-
„ ւովք յայտնի արասցէ զհաւատս քո ‖ ։ Կամի
ասել․ կենդանիք միայն՝ որք կեանն՝ խոստովան
լինին առ քեզ՝ ոպի եմ ես այժմ․ որ և յայսմ
հետէ ծնանելով զորդիս՝ եղէց հայր նոցա, որք
զկնի իմ յայտնի արասցեն զարդարութիւն քո որդ-
ւոց յորդիս ։ Զայս եդեալ եզեկիայ՝ մատչի
'ի նպատակ բովանդակ բանից իւրոց, և ասէ ։

12․ Նա ոչ ևս դադարեցայց օրհնել զքեզ յօրհնութե-
նոր՝ զամ աւուրս կենաց իմոց՝ յանդիման տա-
ճարին այ ։

Կատարելուն օրհնելոյ զած՝ առ արտաքս մտա-
ծեալ՝

ծեալ՝ 'ի չորեսին փայլէ . մի՝ 'ի նիւթն , զի որոյ գնէ՝ օրհնութի . երկրորդ՝ յեղանակն , ըստ որոյ գնէ՝ նոր . երրորդ՝ 'ի ժամանակն , զի որոյ գնէ՝ զամ աւուրս կենաց իմոց . չորրորդ՝ 'ի տեղին պատշաճաւոր , զի որոյ գնէ՝ յանդիման տաճարին տն . զի թէպէտ այսօքիկ արտաքին իմն են օրհնութե , բայց ուր կայ կենդանի յաժարութի կամաց և արթուն զգաստութի մտաց , չորեքին սոքա պայծառ կացուցանեն զօրհնութիւն տն : Իսկ զի զայսպիսի օրհնութիւն փափաքէր մատուցանել եղեկիա , ամին իրի զայսօսիկ 'ի մէջ բերէ աս-
ելով :

Իսկ ոչ եւս փափաքեցայց օրհնել զՏէր յօրհնութեն նոր՝ զամ աւուրս կենաց իմոց՝ յանդիման տաճարին տն : Այսմ ասել . որովհետև ետուր ինձ նորոգ զկեանս , ցորչափ մնացից 'ի կեանս յայս՝ ոչ դադարեցայց յօրհնելոյ զքեզ նոր օրհնութբ 'ի տաճարի քում : Այլ վն նոր օրհնութե տես 'ի մեկն . սաղ . ղէ . Ա . և ճխթ . Ա : Իսկ զոր ասէ՝ յանդիման տաճարին՝ ոչ ցուցանէ թէ արտաքոյ տաճարին յանդիման կալով ունէր օրհնել զած , այլ յանդիման խորանին՝ որ էր 'ի տաճարի տն . ուստի յեբր" և 'ի լատ" և յասոր" , 'ի տան տն գնի , զի 'ի տաճարի : Իսկ թէպէտ յօդնակի գնի 'ի սաղ այս բան , բայց նոյն մնայ միտ բանին :

Հոգևորապէս , այս բանք՝ որք ասացաք զնախ ընթացից՝ ասին 'ի բերանոյ մարդկային բնութե . որ 'ի յետին հիւանդութե իւրում եգիտ փրկութի 'ի տնէ . զի լուաւ տր աղաղակի նր , զարթոյց զնա 'ի թմրութե , դարձոյց 'ի նա զհոգին՝ զոր կորուսեալ էր , և մխիթարեաց զնա . որով և դառնութի սրտի նր դարձաւ 'ի խաղաղութի . ապա թէ չէր պատահեալ այսմ , 'ի մեռանիլն անդ

իջա-

իջանէր 'ի ներքինս դժոխս , և մնայր անդ անյոյս յաւիտեան ։ Որպիսի փրկութի գտեալ կենդանեաց՝ որք հաւատացելոց՝ արժանապէս վաստահին օրհնել զնա՝ եթէ ինքեամբք և եթէ որդւովք իւրեանց ծնելովք որ ապագայն ։

Այն այս բանք եղեկեալ ոչ աւանդի 'ի մաշտոցի , այլն և 'ի բերանոյ հաւատացեալ ննջեցելոյն , թէ 'ի ժամ հասանելոյ նր յաւանդումն հոգւոյ , և թէ 'ի ժամ ելանելոյ հոգւոյն . թէ 'ի ներկայանալ յատեանն քնի , և թէ 'ի դատաստանի անդ նորա . թէ 'ի թաղելն , և թէ 'ի յառնելն . ոչ է տեսանել 'ի շարականի 'ի կանոնին . ուր հայելով 'ի ժամ հասանելոյ յաւանդումն հոգւոյ՝ սոյլին բանին պաղատի և ասէ .
* Ես առաջի որ ողորմեա հոգւոյ իմոյ բազմա-
,, ձեռլի՝ որ բնակեալդ ես 'ի յերկինս , և յան
,, մարմնոյ փառաբանիս . յիս մարդասիրեա
,, բազմագութ փրկիչ . և փարատեցո զցաւս
,, անձին իմոյ ‖ ։ Հայելով յելս հոգւոյն ասէ .
* պահպանեցայ յազգատոհմէ . լքեալ թողլրդ-
,, կեանս Ծի . և մարմին անոյնութե դարձա-
,, (որք աչաւ դառնայ) 'ի հող , ուստի առեղծաւ .
,, յիս մարդասիրեա Քռ ‖ ։ Հայելով 'ի փայլ-
կեանն յայն՝ յորում ներկայանայ հոգին յահեղ ատեանն քնի՝ ասէ . * յաւուր յայնմիկ մատ-
,, նեցայ 'ի ձեռս ահեղ հրապարակին . (որք ա-
,, հեղ ատենին , ուր հրապարակի ամ ինչ ) և
,, առ քեզ ապաւինիմ առեղծող բնաւից որ բո-
,, լորից . յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ .
,, և (այժմէն) փարատեցո զցաւս անձին իմոյ ‖ .
Հայելով 'ի մարդասիրութի ոյ՝ 'ի ցուցանել ինքեան դատաստան քաղցր , և այնու ընդունիլ 'ի յարկս արդարոց՝ ասէ . * հայեցայ 'ի բարձունս

,, առ

,, առ քեզ կարօղ յ՚ամի · ընկա՛լ զխոյարկս արդա֊
,, րոյ ամբածածուկ աջովդ քո · յիս մարդասի֊
,, րեա՛մ բազմագութ փրկիչ ‖ ։ Հայելով աստ
՚ի թաղումն և ՚ի յարութիւն մարմնոյ՝ ասէ · * ահա
,, ՚ի խաղաղութեան՝ դարձայ ՚ի հող՝ յորմէ ստեղ֊
,, ծայ · Նորոգող Ճարտարապետ՝ պարգևատու
,, ողորմութե · յիս մարդասիրեա՛մ Տր ‖ ։ Որ խա֊
ղաղութիւն դնի փոխ հանգստի · որպէս թէ ասէր ·
ահա ես հանգեայ ՚ի վշտաց կենցաղոյս · և դար֊
ձայ ՚ի հող՝ յորմէ ստեղծայ · և անտի ունիմ ա֊
մենահնար Ճարտարապետիդ՝ նորոգել զմարմին
իմ յարութե ։ Խօսելով աստ ՚ի բերանոյ կենդա֊
նեաց՝ ասէ · * այլ կենդանիքս օրհնեմք զքեզ
,, քո թագաւոր յաւիտենից · որ փառօք փա֊
,, ռաւորիս ՚ի յերկնայնոց և յերկրայնոցս · յիս
,, (ես) մարդասիրեա՛մ բազմագութ փրկիչ · և
,, փարատեցո՛ զցաւս անձին իմոյ ‖ ։ Նյամ փա֊
ռաւորութե և մեք փափաքելով, ցանկամք ոչ միայն
յերկրի աստ օրհնել զԱծ, այլ և յերկինս ժա֊
մանելով փառաւորել զնա յաւիտեան ։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ը.

## Յորդոր օրհնելոյ զՏր̃ բանակաց եսայեայ 'ի ծագաց մինչեւ 'ի ծագս երկրի :

Օրհնութիւն Եսայեայ մարգարէի :
('ի սաղմոսն. Ճժը : )

1. Օրհնեցէք զՏր̃ յօրհնութիւն նոր. զի իշխանութիւն նորա 'ի բարձրանս փառաւորի :

2. * Եւ անուն նորա փառաւորեալ է 'ի ծագաց մինչեւ 'ի ծագս երկրի :
3. * Որք իջանէքն 'ի ծով նաւաւք. կղզիք եւ ամ̃ բնակիչք նոցա ընդ նմա :
4. * Ուրախ եղիցի անապատն եւ ամ̃ բնակիչք իւր. ուրախ եղիցին բանակք եւ բակք կեդարու. եւ ուրախ եղիցին բնակիչք վիմին :
5. * 'Ի գլխոց լերանց գոչեսցեն. տացեն զփառս այ̃. եւ զքաջութիւն նորա կղզիք պատմեսցեն :
6. * Տր̃ ած̃ զօրութեանց դիմեալ գայ. զխորտակեսցէ զպատերազմ. յարուցանէ զնախանձ. քաջ հարկանէ. գոչէ 'ի վերայ թշնամեաց իւրոց զօրութբ̃ բազմաւ :
7. * Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ. եւ ամպք ցօղեսցեն զարդարութիւն :
8. * Բղխեսցէ երկիր զողորմութիւն. եւ զարդարութիւն առ հասարակ բղխեսցէ :

Օրհնութիւն Եսայեայ ըստ ամբողջին :
(Եսայ. ԽԲ. 10 = 13. և ԽԹ. 8:)

10. Օրհնեցէք զՏր̃ յօրհնութիւն նոր. զի իշխանութիւն նորա 'ի բարձունս փառաւորի:
Եւ անուն նորա 'ի ծագաց երկրի :

Որք իջանէին 'ի ծով նաւօք. կղզիք և բնակիչք նոցա :
11. * Ուրախ եղիցի անապատն և աւանք նորա. բանակք և բնակիչք կեդարու. ուրախ եղիցին բնակիչք վիմին :
'Ի գլխոց լերանց գոչես-
12. ցեն. * տացեն զփառս այ̃. և զքաջութիւն նր̃ կղզիք պատմեսցեն :
13. * Տր̃ ած̃ զօրութեանց եկեսցէ. և հարցէ զպատերազմ. յարուսցէ զնախանձ. և գոչեսցէ 'ի վերայ թշնամեաց իւրոց զօրութբ̃ .... :
Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ. և ամպք ցօղեսցեն զարդարութիւն :
Բղխեսցէ երկիր զողորմութիւն. և զարդարութիւն առ հասարակ բղխեսցէ :

# Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

## Օրհնութիւն եսայեայ մարգարէի ։

Այս օրհնութիւն եսայեայ գրի 'ի խբ̄ գլուխն մարգարէութեան նր̄, 'ի 10 համարոյ մինչև 'ի 13 համարն փակառուք ։ Իսկ որք յաւելեալ լինին 'ի վերջոյ այսր օրհնուէ 'ի սաղմոսարանի մերում · այն է · * ուրախ եղիցին երկինք 'ի վե֊րուստ, և ամպք ցօղեսցեն զարդարութի · բղխես֊ցէ երկիր զողորմութի, և զարդարութի առհասա֊րակ բղխեսցէ ‖ · ոչ գոյ յայն խբ̄ գլուխն · այլ 'ի գլ խե · 8 ։

Արդ օրհնութիւս այս կարգի 'ի փառաբանել զա̄ծ յա̄մ ծագաց երկրի՝ 'ի ծովէ և 'ի ցամաքէ, եւս և յանապատէ և 'ի լերանց · ուր միանգամայն առաջի դնի և վրէժխնդրութիւն ա̄յ ընդդէմ թըշ֊նամեաց իւրոց · յաւելեալ լինի և աւետաւո֊րութի ցօղելոյ երկնից զարդարութի, և բղխելոյ երկրի զողորմութի ։

## Ր Ա Ն ։

1 · Օրհնեցէք զտ̄ր յօրհնութիւն նոր · զի իշխանութի նորա 'ի բարձունս փառաւորի ։

## Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն ։

Սկզբնաւորութի օրհնութեանս նման է սկզբնաւորութե ղե̄ սաղմոսի · ուր ասի · * օրհնեցէք զտ̄ր յօրհ֊
„ նութիւն նոր · օրհնեցէք զնա ա̄մ երկիր ‖ · ի̄ այսմ է և սաղմոսն ղէ · յասելն · * օրհնեցէք զտ̄ր
„ յօրհնութիւն նոր · զի սքանչելիս արար ‖ ։ Իսկ այսոցիկ յորդորէ և աստ եսայի յօրհնութիւն ա̄յ 'ի նոր՝ ասելովն ։

Օրհ

Օրհնեցէք զՏր յօրհնութ նոր ։ Նոյն յորդոր օրհնե-
լոյ զԱծ՝ զի առանդելոյ ումանց , և զի գերագունեայ
հայի զի ձայնին 'ի նորոգ պարծեալսն 'ի գերուէ
բաբելացւոց . ըստ որում 'ի նորոգիլ նոցա՝ ար-
ժան էր նոր օրհնութ. օրհնել զԱծ . բայց Քսի
Մարգարէն ոչ որոշէ աստ զկարգ բանին՝ թէ առ
ո՞յս խօսի , սակայն լոկ ցուցանէ՝ թէ առ ամենին
բարբառի . որպէս թէ եղեալ էր . ամենեքին՝ որք
ճանաչէք , թէ գոյ Ած ճշմարիտ , օրհնեցէք զնա
նոր օրհնութ . կի՝ զի եբր" և զի թարգմանութ այ-
լոց ազգաց . երգեցէք նմա երգ նոր . տես 'ի մեկն.
սաղ. ղէ . 1 . և ղէ . 1 . ևս և 'ի մ օրհնութ՝ 'ի հա-
մարն . 1 ։ Խորհրդաբար՝ այս յորդոր հայի առ
պարծեալսն 'ի հեթանոսութէ 'ի հաւատս քնի . ո-
րոց միայն վայելէր նոր օրհնութ օրհնել զԱծ . զի
թէ արժան էր իլացւոց յանցանել եօթանասնա-
մեայ ժամկի գերութ օրհնութ նոր նուագել , քա-
նի ևս հեթանոսաց՝ յազատիլն նց 'ի բազմամեայ
գերութէ սատանայի . զի թէ նոր եղեն առ նմ
պարգևք , և նոր առաքինութիւնք , ապա նոր պարտ
էր լինել և օրհնութ նոցա ։

Իսկ այս նորութիւն օրհնութեան խորհրդաբար ա-
ռեալ՝ մատծելի է յերկուս . մի զի նորոգութէ ։
և մի ևս՝ զի միայնութ ։ Ըստ առաջնոյն ոչ է լի-
նելոց զի հին սովորութեն , կամ զի հին օրինաց . որ
ասէ Գէորգ վ՟դ . տես և 'ի վերոյիշեալ սաղմոսն ։
Իսկ ըստ երկրորդին՝ ոչ է լինելոց բաժանեալ
յայլևայլս . այլ միայնոյ նորոգողին մերոյ . զի
նա միայն մարդանալով ըն մեր՝ նա ինքն միայն
ազատեաց զմեզ . նա միայն զերծոյց 'ի պաշտօնա-
տար լինելոյ կռոց . նա միայն եղոյծ զդատապար-
տութի մեր և նախաստեղծին մերոյ ։ Յայս միտ առ-
նու եկեղեցի զայս բան 'ի շար ձինն զբաւող օրհնել

յերգել փոխելով ըստ Թարգ. այլոց. տես անդ : Իսկ
զի յայսմ ամի փառաւորեցաւ և փառաւորի իշխա-
նութի նր, յայս հայելով մարգարէին՝ յաւելու
ասել :

Ո՜ է իշխանութիւն նորա 'ի բարձունս քաղաքէ : Ըստ
'ի բարձունս՝ փոխ հնգից կարէ առեալ լինել աստ.
մի փոխ գերազանցութե. երկրդ՝ փոխ գերագոյն
սրբութե. երրորդ՝ փոխ վերին երկնից. չորրորդ՝
ըստ շարականացին՝ փոխ դասու սերովբէից և քե-
րովբէից. հինգերորդ՝ դիմել ըստ շարականին՝ փոխ
խորհրդոյ տնօրէնութե Տն մերոյ : Ըստ առաջ-
նոյն կամի ասել. թէ ոչ կարօտի օրհնութե ստեղ-
ծուածոց, ոչ մարդկան, և ոչ հրեշտակաց. զի յա-
ռաջ իսկ է զստեղծանել նր զնա՝ փառաւորեալ
էր յինքեան 'ի բարձունս. այ 'ի գերազանցութե
էութե և իշխանութե իւրոյ. և ըստ այսմ բառդ
իշխանութ՝ ոչ դնի աստ փոխ ներգործութե իշխե-
լոյ. այլ փոխ ամենակարող զօրութե կամ իշխա-
նութե 'ի յանփոփոխ յաւիտենականութե :

Ըստ երկրորդին կամի ասել. թէ բարձրացեալ
գոլով 'ի սրբութե՝ փառաւորեալ է 'ինմին : Յայս
հայելով եկեղեցւոյ՝ յորդորէ զհոգեղէնս՝ օրհ-
նել զնա 'ի սրբութե անդ, ասելով 'ի շար. Տը.
* զփառաւորեալն 'ի հրեշտակաց զամենայն
„ զերրորդութիւն օրհնեցէք 'ի սրբութե նորա
„ դասք հոգեղինաց յօրհնութի 'ինոր ‖ :

Ըստ երրորդին կամի ասել. արժան է և իրաւ
օրհնել զած և փառաւորել. զի ունի իշխանութի
'ի վերայ ամի, և տիրէ յամի, և փառաւորի յամ
տեղիս, մանաւանդ 'ի բարձունս երկնից յանհամար
զօրաւթնոց. և եթէ կամիս տեսանել ասէ գե-
որդ, * բաց մտօք զերկինս, և տես բիւրս բիւ-
„ րուց հրեշտակաց, և հազարս հազարաց հրեշ-
տա

,, տանկապետաց՝ զնմ սարսեալս և զարհու-
,, րեալս ||: Ընդ որ ցնծայ և եկեղեցի ասելով 'ի
շար Ձ՛ը. * ամենայնք երկրորդութեամբ երկրպա-
,, գեն ('ի բարձունս երկնից) զօրք երկնայինք
,, և ստեղծուածք անապատ ձեռացդ՝ փառաւորե-
,, լով զտէրութիւնդ քո համապատ ||: Եւ 'ի կանոն
Ձ՛ը յորդորելով ասէ՝ համերգել յաղթերգին.
* զԱմեն ամենայն օրհնեն սրբոյ բանական կեն-
,, դանիք (այսինքն զօրք երկնից). յաղթական երգով և
,, մեք օրհնեսցուք զանուն նորա ||:

Իսկ չորրորդին կամի ասել. մեծ է ձեզ որդիք
մարդկան օրհնել զԱծ՝ որ նստի 'ի բարձունս, այսինքն
'ի քերովբէս. և իշխանութիւն նորա փայլէ 'ի նմա:
Այս մին երգէ եկեղեցի 'ի շար Ձ՛իթ՝ ասելով:
* յօրհնութիւն օրհնեսցուք զՏր. որ 'ի վերայ
,, քերովբէիցն հանգչի. և 'ի զօրաց երկնաւորաց
,, փառաբանի սրբոյ ձայնիւ ||:

Իսկ հինգերորդին կամի ասել. որովհետև մեծ
իմն եղև մարդկան՝ գալստեամբ բանին այսինքն նորո-
գիլ, արժան է նոցա փառաւորել զնա. զոր օրում
և փութով յանմարմնոց 'ի բարձունս, այսինքն 'ի բարձր
խորհուրդ այսր տնօրէնութեան. ուստի շարական
մեր 'ի սոյն շարայարեալ և գյաջորդ համարն՝ եր-
գէ 'ի կանոն Ձ՛իէ, ասելով. * զեկեղեցին 'ի փրկութիւն մեզ
,, զբանն Այ խորհրդով տնօրէնութեան նոր երգով
,, օրհնեսցուք զանուն նորա. զի 'ի բարձունս
,, (այսր խորհրդոյ) է փառաւորեալ յանմարմ-
,, նոց ||: Եւ քզի մարդիկ ոչ տեսանելով զԱծ՝
զանուն նորա 'ի բերան առեալ՝ յանուան նորին
փառաւորեն զնա, սմին իրի յարէ զկնի մարդա-
րէն և ասէ:

2. Անուանն նորա փառաւորեալ է 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի ։

Անունն Տն՝ որովհետև յամ ազինս նշանակէ զամենահզօրն էն, որ Տր է երկնի և երկրի, և իշ_ խան ամի, յամ ազգաց փառաւորի. և թէպէտ հեթանոսք՝ կռոց տան զայս անուն, բայց ընդ այսու անուամբ իմանան զնոյն, զի զանհաս իմն էութիւն ինքնաբաւ, ինքնիշխան յամի. և զի այս այսպէս է, վկայ ասէ ։

Անուանն նորա փառաւորեալ է 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի. Այսինքն թէ յամ տեղիս և յամ ազգս և 'ի լեզուս փառաւորեալ է անունն Տն ։

Այլ այս բանք համդերձ նախընթացին ուղղա_ կի հային 'ի մարմնացեալ բանն Այ. և 'ի յանուն նր ՟ԺԲ որում երգէ եկեղեցի յաւագ օրհնութեան 'ի կանոնին. ով եղաք 'ի նախընթաց համարն ։ Նաև այս 'ի կանոնին, օրհնելով զնոյն ինքն զփառաւո_ րեալն՝ ասէ. * զփառաւորեալն յամ արարածոց,
„ և 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի զերկրպա_
„ գեալն զմարմնացեալ բանն 'ի կուսէն ձայնիւ
„ երգով օրհնեսցուք ‖ ։ Նաև 'ի նմին կանոնի ըղ_ բաղդ ծագաց 'ի ծագս յայլ իմն փոխաբերական միտս թարգմանելով՝ առաջի առնէ ըստ երկուց միանգամայն. մի՝ փոխկ հօր և հոգւոյ. և երկ_ րորդ՝ փոխանակ երկրի և երկնի. յառաջինն հայելով ասէ. * ծագումն 'ի հօրէ, փոխկըս 'որ
„ հոգւոյն, կենդանութ ազգի մերդ կն ‖. և յերկրդ հայելով՝ յարէ * որ յարեաւն (յերկրէ) այսօր 'ի
„ մեռելոց, զհամբարձեալ բանն 'ի յերկինս
„ ձայնիւ երգով օրհնեսցուք ‖ ։

Երբ" և 'ի լատ" և յասոր" այս բան խառն դնի ՟Ը նախընթացին՝ առանց դնելոյ զփառաւորութ_ ան.

անուամն · զի դրի այսպէս · * երգեցէք տն երգ նոր · զի գովութի նորա 'ի ծագաց երկրի (Է) ‖ · բայց պարտ է ասել, թէ այն բանք՝ որք պակասին՝ անկեալ են 'ի բնագրէ անտի յետ թարգմանութեան եօթանասնից · յորում գնի այսպէս · * երգեցէք տն երգ նոր · իշխանութին նորա ('ի բարձունս) · փառաւորեցէք զանուն նորա 'ի ծագաց երկրի ‖ : Արդ յետ 'ի հասարակի յորդորելոյ մարգարէին՝ իջանէ առ մասնաւորս · և նախ ասէ :

3 · ՈՅՔ ԻՋԱՆԷՔՆ 'Ի ԾՈՎ ՆԱՒՕՔ · ԿՂԶԻՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԲՆԱԿԻՉՔ ՆՈՑԱ ԸՆԴ ՆՈՍԱ :

Որովհետև ծով ցածագոյն համարի քան զցամաք՝ մանաւանդ առ երկրին պաղեստինոյ, իջանել գնէ 'ի նոյն՝ յասելն :

ՈՅՔ ԻՋԱՆԷՔՆ 'Ի ԾՈՎ ՆԱՒՕՔ · ԿՂԶԻՔ ԵՒ ԱՄ̃Ն ԲՆԱԿԻՉՔ ՆՈՑԱ ԸՆԴ ՆՈՍԱ : Այս բան՝ եթէ 'ի նախընթացն հայեսցի, գնի իբր բացատրութի կամ իբր ընդարձակութի բանիցս * 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի ‖ · որպէս թէ եղեալ էր · փառաւորեալ է անունն այ յամ̃ի և յամ̃ տեղիս՝ ոչ միայն 'ի ցամաքի, այլ և 'ի ծովու, եթէ 'ի նոցունց՝ որք նաւօք շրջին 'ի նմին, և եթէ յայնցանէ՝ որք բնակին 'ի կղզիս : Իսկ եթէ հայեսցի 'ի յաջորդ բանն, վերածի յուրախ լինելն՝ զոր գնէ անդ · որպէս թէ ասէր · ուրախ լիցին ամենեքին առ ա̃ծ, և որք նաւեսցեն զնա, եթէ նաւօղք 'ի ծովու, և եթէ բնակօղք 'ի կղզիս · տես զայսմանէ և 'ի մեկն · սաղ · ՂԶ · 23 :

Յեբր" փոխ նաւուն՝ գրի մէջ · յո լռութի · որոյ փոխանակ յեօթ" գնի փրկօն, կամ ըԲ յաղնակարանին փրկօնդես · և քանզի բառս փրկօն համանուն է

առ յոյնս , զի նշանակէ նաւօղ , եւս և լուսն կամ
լուացեալն , ոմանք թարգմանեցին լուսն ըստ եբր″
և ըստ լատ″ , եւս և ըստ ասոր″ յորում դնի՝ որ ինչ է
'ի նմա , որով նշանակի լուսութիւն ծովու . իսկ այլք
թարգմանեցին՝ նաւօղք . և արաբացիք՝ նաւէք .
և մերքս՝ նաւուղք : Այլ միտ բանին՝ որպէս յայտ-
նի տեսանի 'ի նախադրելոյդ՝ յամի 'ի նոյն հայր :
Խորհրդաբար՝ ծովու նշանակի Աստուածաշունչ գիրն .
և զի 'ի ծովու կրկին են բնակիչք մարդկան ,
կէսք 'ի կղզիս , և կէսք 'ի նաւս , բնակչօք կղզեաց
նշանակին նոքա՝ որք միամիտ սրտիւ անշարժ յա-
րին 'ի բանս սուրբ գրոց , և կան անդորր . իսկ նաւու-
ղօք նշանակին նոքա՝ որք 'ի խորս սուրբ գրոց իջա-
նեն և 'ի նոյն նաւեն . որք և բերեն մեզ զբազ-
մադիմի իմաստս աստուածային գիտութեանց : 'Ի սոսա
ամանն ասէ փառաւորեալ է անուանն քո . և ամե-
նեքին սոքա ուրախ են , և ցնծան 'ի նա : Պարծա-
ցեալ ապա զբան իւր առ այլս՝ ասէ :

4 . Որպէս եղեւ անապատն և Ած բնակիչք նոր . որ-
պէս եղեւն բանակք և բանք նեղտարո . և որ-
պէս եղեւն բնակիչք Հին :

Այս ուրախ լինելս կարէ նոյնանալ ընդ օրհնութեան՝
զոր եդ 'ի սկզբան . և նոյն էր թէ ասէր . օրհ-
նեցաւ անապատն զոր , ևն . բայց պատշաճագոյն
ևս է ասել , թէ այս դնի իբր ծաղիկ կամ իբր
պտուղ օրհնութեան . ըստ որում յօրհնել մար-
դոյ զԱծ՝ յղանայ յինքեան զուարճութիւն և
թէ զներքին և եթէ զարտաքին . զարտաքնոյն
խօսի 'ի յառաջորդ համարն . իսկ զներքնոյն խօսե-
լով աստ ասէ :

Որպէս եղեւ անապատն և Ած բնակիչք նոր . որպէս եղե-
ւն բանակք և բանք նեղտարո . և որպէս եղեւն բնակիչք
Հն.

Հինգն : Այս բանք յայտնապէս հայլին յայտ-
բացին առ հասարակ · որդ արարեալ յերկս բա-
ժանի : Մին մասի անապատ արարեալ , և յայս
հայլւոյս զոր ասէ · * անապատն և բնակիչք
իւր Ա : Երկրորդն երջանիկ արարեալ · և յայս
հայլի այն՝ զոր ասէ * բանակք և բակք կեղա-
րու Ա : Երրորդն առատ արարեալ , կամ վիմ
արարեալ · և յայս հայլի ասելն՝ * բնակիչք վի-
մին Ա : Այդ ամբերն՝ մանաւանդ բնակիչք կեղա-
րու ԺԲ մեծի մասին վրանաբնակք են · բայց գտա-
նին և՛ որք 'ի տունս բնակին · զվրանաբնակս
'ի մէջ բերէ բառիւս Ճոփոկ · Ը որում բանակք
վրանօք գաղաթին · իսկ զբնակիչս տան 'ի մէջ
բերէ բառիւս Ճայէ · ուր բակին որ է մասն տան ,
դնի աստ փնիկ բոլոր տան ըստ ձևոյ Հարտատա-
նից :

Յոծարհնի մերում այս բան ըստ եօթանասնից
դնի այսպէս · * ուրախ եղիցի անապատն և ա-
ւանք նր · բանակք և բնակիչք կեղարու ԺԲ Ա ·
այսպէս դնի և յայլս · միայն թէ փոխի ասելոյ ·
* բանակք և բնակիչք կեղարու Ա · յեբր՛ դնի ·
* 'ի գաւիթս բնակեսցի կեդարը Ա · իբր թէ ոչ
սահման 'ի տունս բնակեսցի , և ոչ 'ի վրանս ·
որպէս դնի 'ի լատ : Ասա իբրև զվայրիս յոր-
դորելով մարդարէին՝ ուրախ լինել 'ի ՏՐ , ա-
բեմիք դիտէ՝ առաւել և զայլս 'ի նոյն խրա-
խուսել :

Խորհրդաբար , այսուքիւք նշանակին ազգք հե-
թանոսաց Գ երից կողմանց : Բնակչօք անապա-
տի՝ վայրենի հեթանոսք , որք ամենևին անա-
պատացեալ և անմշակացեալ էին 'ի գիտութէ
Ածպաշտին ոչ : Բնակչօք կամ բանակօք կամ
բակօք կեղարու՝ խոհական հեթանոսք , որք 'ի
ձեռն

ձեռն բնական գիտութեն ծանեան զա̃ծ, և մնա-
ցամբ իմն մտին 'ի բազ իմաստութե : Նմանիչք
վիմին իմաստասէր հեթանոսք . որպիսի էին յու-
նանք և նմանիք նոցա . որոց հաւատք հաստա-
տեալ էին լուսեղէն իմն 'ի վէմն քս : Այլ ամենայն
աշխատեալք 'ի դաստիարակութենէ մահու 'ի ձեռն
խաչելութեն քսի, երկրպագելով այնմ՝ խոստո-
վան եղեն զերախտիս նր, և փառաւորեցին զնա .
ըստ որում երգէ եկեղեցի 'ի բերանոյ նց 'ի շար
ձյն : Զայն յառաջագոյն տեսեալ և մարգա-
րէին՝ գոչէ ասելով :

5 . Ի գլխոյ լերանց գոչեսցեն . տացեն զփառս այ . և
զքաջութին նր կղզիք պատմեսցեն :

Այս բանք ոչ ցուցանեն զելանելն իրօք 'ի գլու-
խս լերանց, և անտի գոչել . այլ զյայտնա-
բարբառ աւետաւորութի և զքանչելի գովութի
ամենայն մեծութե . յայս վերածելով զգիտութն
բանին ասէ :

Ի գլխոյ լերանց գոչեսցեն . տացեն զփառս այ . և զքա-
ջութին նորա կղզիք պատմեսցեն : Այսմ ասել . յուրախ
լինել ձեր ազինք ամ 'ի տր՝ յայտնեսջիք զփառս
նր . և քարոզեսջիք, թէ զկարգ փառաւորի 'ի
բարձունս իշխանութի նր : Զայնակից լինին ձեզ
և բնակիչք կղզեաց՝ 'ի պատմել զզօրութին այ՝
զոր ցուցանէ՝ եթէ 'ի ծովու և եթէ 'ի ցամաքի .
յայտնելով միանգամայն և զվրէժխնդրութի նր
ընդդէմ թշնամեաց նորին :

Այս բան և նախընթացքն որ վերածին 'ի մեծ
ուրախութի ազգի մարդկան, 'ի ցնծալ նց 'ի փր-
կութեն քսի, և 'ի փառաւորել զնա, և 'ի գլխոց
լերանց՝ որ 'ի բարձր բարձր խորհրդոց հրատա-
րակել զզօրութին նր . որպէս երգէ շարական մեր

յաւուր օրհնութիս 'ի կամն ձ̅ի̅ն , յասելն 'ի բե-
րանոյ հաւատացելոց . * զանձառդ քո քո փա-
,, ռաւորեմք զմարդանալդ . 'ի գլխոյ լերանց
,, հրատարակեմք զքո քաջութիդ . քանզի հարեր
,, զպատերազմ եկեալդ 'ի փրկութիւն մեր ‖ . տես
և 'ի յաջորդ համարն :

Այս քաջութի ձ̅ն մերոյ էր կամաւոր յանձնա-
ռութի խաչելութե . որով վանեաց զզօրութի մա-
հու , յարուցեալ 'ի մեռելոց . յոր միտ մերա-
ձեւ շարակնն մեր զայս բան , յասելն 'ի կամն
ձիթ . * որ կամաւոր խաչելութբ̅ն իւրով աւե-
,, րեաց զզօրութիւն մահու . և երեքօրեայ յա-
,, րութբ̅ն իւրով պարգևեաց մեզ կենդանութի ‖ :
Իսկ այսմ երգէ և 'ի կամն ձ̅ի̅ . գոչելով իբր
'ի գլխոյ լերանց : Նա 'ի կամն ձ̅ի̅ տաղ , թէ
զայս քաջութի ոչ արար՝ արձակ ունելով զձեռս ,
այլ՝ բևեռելով 'ի խաչին . որով եղեւ զպա-
տապարատուն մեր : Օրպիսի արարս ձ̅ն մերոյ
'ի պէսպէս հանգամանս պատերազմի այլաբա-
նելով մարգարէին՝ տես 'ի յաջորդ համարն :

6. Տ̅ր̅ ա̅ծ̅ զօրութեց [illegible] ձայ՝ զարթուցանել զպա-
տերազմ . յարուցանել [illegible] . [illegible] հարկա-
նել . և [illegible] 'ի [illegible] [illegible] զօրութեամբ [illegible]
[illegible] :

Որպէս և տեսանեմք , ա̅ծ̅ երբեմն ինքնին առ-
նու զվրէժ 'ի թշնամեաց իւրոց . և երբեմն 'ի
ձեռն այլոց . ը̅ր̅ առաջնոյն տես :

Տ̅ր̅ ա̅ծ̅ զօրութեց [illegible] ձայ՝ զարթուցանել զպատերազմ :
Այսմ որոց դնի յանձանձ . * եկեսցէ , և հարցէ
զպատերազմ ‖ . Փոխաբերական զոյգք են սո-
քին . որովք ցուցանի սաստկութի վրէժխնդրութեն
ա̅յ . վասնզի որ զօրութբ̅ բազմաց գիտէ 'ի պա-
տե-

տէրութեամբ, յայս առնէ զմեծութիւն վրէժխնդ-
րութեան 'ի վանել զթշնամիս ։ Ըստ երկրոր-
դին ասէ ։

Զարթուցանել զնախանձ, եւ աղաղակել, եւ գոչել 'ի վր թշնամեաց իւրոց զօրութբ բազմաւ ։ Նման որում գնի յանձանձէ · * յարուցեալ զնախանձ · եւ գոչեալ 'ի վր թշնամեաց իւրոց զօրութբ ։ Նման աւել · ած 'ի պատերազմին զթշնամիս իւր՝ շարժէ երբեմն զայլս ընդդէմ նոց 'ի նախանձ՝ գալ 'ի վր նոցա ի պատերազմ, եւ վանել զնս · եւ այն՝ փող հարկանելով 'ի խրախուսել եւ 'ի զօրացուցանել · գոչելով մտադրութեամբ եւ 'ի ճակատնս, եւ խորտակելով զնս զօրութբ մեծաւ ։

Այլ զոր մեք տրոհմամբ եդաք՝ մարթ է միոյ-
գամայն եւս առնուլ, առ 'ի ցոյց սաստկութեն տե-
րութեանն վրէժխնդրութեն նոյ · եւ յաւէտ եւս 'ի
ցոյց այնր պատերազմին՝ զոր առնէ որդին նոյ ընդ-
դէմ դիւաց · ուստի երգէ եկեղեցի յաւագ օրհ-
նութիւն 'ի կանոնի Զի՛ · յասելն · * որ դիմեալ գայ
,, յեղումն բարձրացեալ փողով · յարուցեալ
,, 'ի պատերազմ, ընկղմեաց զաներեւոյթն սամ-
,, ղէլ · զինչեալ բանն 'ի դժոխս ձայնիւ եր-
,, գով օրհնեսցուք ‖ ։ Եւ 'ի կանն Ձրէ · ասէ ·
* զխաչեցեալն պատմեսցուք զքաջութիւն · որ
,, դասամամբ ձայնիւ զպատերազմ չարին վանեաց ·
,, եւ մահուամբ զմահացեալսն կենդագործեաց ·
,, զինչելոյն 'ի դժոխս վերածեաց զհոգիսն ‖ ։
Եւ 'ի կանն Ձլա ասէ · * զյաղթօղդ քո քն գո-
,, վեմք զզօրութն · քանզի վանեցեր զԲելիա-
,, մարտ թշնամին · եւ զարձուցեր զերրուփ ել-
,, եալդ 'ի փրկութի մեզ ‖ ։ Եւ 'ի կանն ՁԼ · ասէ ·
* զյաղթօղն 'ի մարտ պատերազմի դիմեալ
,, կամաւ 'ի մահ խաչին գովեսցուք · որ կառ ա-
,, ւար ·

,, ուր · բաշխեալ ողջոյն մարդկան բարձրա-
,, ցեալ փողով || ·

Նոյն փողով նշանակի աստ հրաւիրակութի յաղթութեան քնի · եւ և հնչումն բարբառոյ աւետարանին 'ի ձեռն առաքելոց · նաև նոքին իսկ առաքեալքն, որք եղեն փող ընդհանուր Քի, 'ի հնչել և 'ի գոչել ընդ տիեզերս զյաղթութի Տն · Հրեշտակք եւս եղեն փող 'ի տնօրէնութեան նորին, 'ի պատրաստիլ նորա 'ի մարտ պատերազմի ընդդէմ սատանայի · զի զօրօրինակ 'ի սկսանիլ զօրավարի 'ի մարտ՝ փողահարք հնչեցուցանեն զփողս 'ի զօրացուցանել, այնպէս արարին և հրեշտակք 'ի պարտիզին գեթսեմանի, յերևիլ միոյ 'ի նոցանէ անդ, և 'ի զօրացուցանել զամենազօրն՝ ոչ յինքեան, զի անկարօտ էր, այլ 'ի տնօրէնութեան, 'ի ցուցանել զյաղթօղն լինել նր յառաջիկայ պատերազմի ·

Այս խորհուրդ վերածէ վարդան զայն բան՝ զոր ասէ մարկոս (Ժ · օրին · ԼԲ · 43 ·) թէ * զօրացուցեալ զնա ամ հրեշտակք ոյ || · Պատուցէ յայս միտ աւի 'ի շար · Ծ · * 'ի զօրանալ հրեշտակ մերձեալ՝ զօրինակսն գիրն լցեալ || · իբր թէ ասէր · մերձեցաւ հրեշտակն առ նր 'ի պարտիզին անդ իբր փողահար՝ 'ի զօրացուցանել զնա · որով լցոյց զգրեալն 'ի գիրս օրինաց ·

Որձն ունին հրեշտակք հնչեցուցանել զփողս և 'ի վերջին պատերազմի տն յաւուրն յետնում · (մատ · ԻԴ · 31 · ա · կոր · ԺԵ · 52 · ա · թեսս · Դ · 15 ·) յորում և յայնմ ցուցցի խորհուրդ այնչափ փողահարութեց, որք աւանդին 'ի դեստական գիրս, ոն 'ի գիրսն մովսէսի · ոմն տեսանի 'ի շար · ՃԻԴ · յարարիչն · (ղևտ · ԻԵ · 9 ·) Նոյն յորժամ

ժամ՝ ընկղմեսցի եւ վերջասցի ամ մարտ · եւ սքանչելի ցուցցի զօրութի եւ յաղթութի՛ն քոյ · ո- րով եւ երկինք ցնծասցեն, եւ երկիր նորոգեսցի : Այս կանխաւ ազդեալ մարգարէին, դառնայ յայլ իմն նախագուշակ աւետաւորութե բանից յուրախակցութի երկնի եւ երկրի՝ ասելով :

7 · Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ · եւ ամպք ցօղեսցեն զարդարութիւն :

8 · Բղխեսցէ երկիր զողորմութիւն · եւ զարդարութիւն համօրէն բղխեսցէ :

Այս բանք՝ որք ասացաք 'ի սկզբան, առեալ են 'ի խմբ գլխոյ մարգարէութե սորին եսայեայ 'ի համարն 8 : Իսկ զայս յաւելլն սբ. հարք մեր առ 'ի լրումն առաջիկայ օրհնութենս · յորում հրաւիրէին արարածք յօրհնութի այ, եւ յուրա- խութի ը̃ մեծութի փառացն որ · ըստ որոյ եւ աստ նաեւ զերկինս 'ի նոյն հրաւիրելով ասէ :

Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ · եւ ամպք ցօղեսցեն զարդարութի : Այս ուրախ լինել հայի 'ի մեծութի սքանչելի փրկութեն, զոր արդարութի եցոյց այ եւ ցուցանելոց էր յերկնից · եւ զի արդարութի նորա անքննելին է եւ բարձր, վնկ դնէ ցօղել զայն ամ- պոց · զի որում ամպն 'ի սբ. գիրս այլաբանութի վնկ անքննութե եւ բարձրութե դնի · եւ յայս միտ կամի ասել · արժան է ուրախ լինել երկնից · զի այ 'ի վերուստ անտի եցոյց մեզ զփրկութի իւր 'ի ձեռն արդարութեան, զոր ցօղեաց անքննելին խորհրդով :

Իսկ առ 'ի ցոյց մեծութե իրացդ՝ յերկրորդ դէմս դնի յեբր" · եւ այն՝ փոխաբերութի՝ յասելն · *կաթեցէք երկինք 'ի վերուստ (զուրախութի) · եւ եթերք կաթեսցեն զարդարութի ‖ · եւ 'ի լատ" դնի ·

դնի. * ցողեցէք երկինք 'ի վերուստ (զփրկութի). և ամպք անձրևեսցեն զարդարութի ||:

Օ այս փրկութի արդարութե բազում անգամ եղայց այ առ ինէ. բայց տիրապէս և յայտնապէս երևեցոյց յառաջբերել նորա զորդի իւր յծ, ցողելով զնոյն 'ի լուսածին ամպոյ, այսինքն 'ի նախկուսէն մարիամայ. Որ որում ցողեալ 'ի նմանէ եղև այն արդարութի, այսինքն արդարացուցիչ. որով և ուրախ եղեն երկինք, այսինքն զօրք երկնից. և յայս միտ երգէ եկեղեցի յաւագ օրհնութեն 'ի կան ձին. ասելով. * ուրախացան զօրք երկնից 'ի
,, վերուստ. քանզի ցողն անապականն 'ի քէն հե-
,, ղեալ՝ միշտ կոյս՝ և մայր բանին աստուածութի՝
,, լուսածին ամպ, ծագելով 'ի մեզ զարդա-
,, րութե արեգակն ||. Որ այսմ է և այն որ ասի 'ի
կան ձխ. * ուրախութի երկնի և երկրի ամպ թե-
,, թև ցօղեալ 'ի մեզ զարդարութի. բարեբա-
,, նեմք զգլխեալն 'ի քէն մարմնով յարմարոյն
,, յեսսեայ գաւազան ծաղկեալ ||. տես և 'ի
մ. կն. սաղ. հն. 6: Իսկ քանզի այս եղև յողորմութենն այ՝ որ երևեցաւ յերկրի, վն յարէ զկնի և ասէ:

8. Բղխեսցէ երկիր ողորմութի. և արդարութի առհասարակ եղիցի:

'Ի ցուցանել այ զփրկութի իւր առ մեզ՝ ողորմութի նր երևի մեզ 'ի վր երկրի. և նովին ողորմութբ հաստատեցաւ լինելով արդարութե նր՝ այն ես Է նախին յայտնի. յայս հայելով ասէ.
Բղխեսցէ երկիր ողորմութի. և արդարութի առհասարակ եղիցի: Կամի ասել. երկիրս այնչափ լիասցի յողորմութենն այ, մինչ դրեթէ ինքնին բղխել զնոյն. այսինքն ցուցանել թէ լցեալ է նովաւ. և 'ի բղխել զայս՝

զայս՝ բղխեսցէ և զարդարութիւն երրակի · մի՝ զի
հաստուսցէ արդարութեան նյ · երկդ՝ զի զհետ
լիցի արդարութեն · և երրդ՝ զի տայցէ զարդա_
րութի :

Բ. Սլ այս բան ակնարկէ 'ի խորհուրդ մեծ · վս
զի 'ի խնդրել անձային արդարութե զվրէժ յորդ_
ւոց մարդկան, և 'ի նահանջել զօրութե նորա
զյարձակումն նորին, իմաստութիւն նյ, որ բանն
անձ՝ միջնորդ լեալ՝ զգեցաւ զերկրաւորս բնութի ·
որով և միաբանեցոյց զերկոսին, որ զողորմութիւն
և զարդարութիւն նյ · ուստի և երկիրս բղխեաց
զիմաստութիւն անձային, որ զորդին նյ յողորմութի
և յարդարութի · յողորմութի 'ի փրկելն զմեզ · և
յարդարութի 'ի ցուցանել նորա զճանապարհս
արդարութե, ես և 'ի հաստուցանել փոխ մեր՝
արդարութեան նյ · զայսմանէ տես 'ի մեկն սաղ·
ձդ · 10 · 11 :

'Ի սոյն ցնծալով երգէ եկեղեցի՝ նոր օրհնութբ
յաւադ օրհնութիւն 'ի շար" ձյն · և ասէ · * Բղ_
,, խեսցէ երկիր զողորմութի, և նորացուսցէ
,, զօրհնութի · քզի անձ ծննդեամբ 'ի միշտ կուսէն
,, 'ի փրկութի մեզ յայտնեցաւ · աւերեաց Բղ_
դժոխս || :

Յեբր" և յասոր" և 'ի լատ" փոխ ողորմութե՝ փրկու_
թի գրի · յասելն · * բացցի երկիր · և բուսուսցէ
,, զփրկութի ( կամ ըստ լատ" զփրկիչ ) · բուսուսցէ
,, միանգամայն և զարդարութի || · 'ի վերոյգրեալ_
հայրն և սուրբն · ըստ որում այս փրկութի յողոր_
մութիւն նյ էր հաստատեալ :

Բ. Յս բանք ըստ ձայնին կարեն հայիլ յուրախութի
դարձի գերութե որդւոցն իլի · վս զի 'ի դառնալ
նոցա երեւէր, թէ արարածք անձ խնդային և
ցնծային ըստ փրկութե նոցին · և երկիր նոցա լցեալ

ողորմութ. տն՝ տայր նոցա բղխել զարդարու-
թի.

Հոգեւորապէս, ըստ նշանակելոյ մեր ՚ի վերոյ, ու-
րախ եղեն երկնաւորք ՚ի դարձի հեթանոսաց.
զի թէ մի դարձի միոյ մեղաւորի ուրախանան
նք, քանի եւս մի դարձի այնչափ ազգաց հեթա-
նոսաց. եւ զի այս դարձ նոցա եղեւ քարոզութ.
առաքելոց, զնոսա եւս նմանութ. ամպոց ՚ի մէջ
բերէ. ըստ որում նոքա իբրեւ ամպք ցօղեցին
տիեզերաց զարդարութի՝ ըստ երկուց. մի ցուցա-
նելով թէ զիարդ որդին այ եկեալ յշ արդա-
րացոյց զազգ մարդկան. եւ մի եւս՝ զի ինքեանք
եւ յաջորդք իւրեանց արդարացուցին զմարդիկ
միջնորդութ. խորհրդոյ մկրտութե, եւս եւ ապաշ-
խարութե. Այսպիսի ամպոց ոռոգեալ երկիր
այս ազգ մարդկան՝ բղխեցին զողորմութի եւ զար-
դարութի. այս երեւեցուցին յինքեանս զբղխումն ո-
ղորմութեն այ եւ արդարութե նորա ՚ի ժաման-
կուի կենացն յաւիտենից։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Թ.

Աղերսանք առ ա̄ծ բերանովն յովնանու 'ի հրանգի նե-ղուէ, չարչարանօք ազատուէ, և խոստմանց ուխտից և պատարագաց:

Աղօթք յովնանու մարգա-րէին:
('ի սաղ. ՃԺԹ. 'ի վերջն:)

1. Ի նեղուէ իմում ես առ տ̄ր կարդացի. լուաւ ա̄ծ յանդնդոց դժոխոց աղաղակի իմում:

2. * Լո՛ւր տ̄ր ձայնի իմում. զի ընկեցեր զիս 'ի խորս ծովու. և ջրջանք փքոց պաշարեցին զիս:

3. * Ամ զբօսանք քո և ալիք քո անցին 'ի վ̄ր իմ, և ասացի թէ մերժեցայ առերես յերեսաց աչաց քոց:

4. * Արդ իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար ս̄ր քո. զի հեղձան զինև ջուրք մինչև յանձն իմ. և անդունդք անհնարինք պաշարեցին զիս:

5. * Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց. իջի ես 'ի խորս երկրի. և փակի զինև դռն̄ր. զի էին ակ̄ աղխք յաւիտենից. և ելցէն յապականութենէ կեանք իմ:

6. * Առ քեզ տ̄ր ա̄ծ իմ 'ի նուաղել անձին իմոյ կարդացի. և զքեզ տ̄ր յիշեցի. և մտցեն աղօթք իմ 'ի տաճար ս̄ր քո.

7. * Զի որք պահէին զունայնուէ և զսուտ, յողորմանէ իւ-

րեանց

Եւ եկաց յովնան յաղօթս առ տ̄ր ա̄ծ, և ասէ:
(Յովն. Բ. 2:)

3. Ի նեղութեան իմում աղաղակեցի առ տ̄ր ա̄ծ իմ. և լը-ուաւ ինձ յորովայնէ դժոխոց աղաղակի իմում:
4. Լո՛ւր տ̄ր ձայնի իմում* ընկեցեր զիս 'ի խորս սրտից ծովու. և գետք պաշարեցին զիս:
Ամ զբօսանք քո և ալիք քո
5 անցին 'ի վ̄ր իմ. * և ասացի թէ մերժեցայ յաչաց քոց:
Արդ իցէ՞ թէ յաւելից հայել
6 'ի տաճար ս̄ր քո. * Հեղձան զինև ջուրք մինչև յոգիս. անդունդք անհնարինք պաշարեցին զիս:
7 Եմուտ գլուխ իմ * ընդ փապարս լերանց. իջի յերկիր որոյ նիգք իւր աղխք յաւիտենից. ելցեն յապականութենէ կեանք իմ:
8. * Առ քեզ տ̄ր ա̄ծ իմ 'ի նուաղել հոգւոյ իմոյ կարդացի. զտ̄ր յիշեցի. և եկեսցեն աղօթք իմ 'ի տաճար ս̄ր քո:
9. * Որ պահէին զունայնութի և զսուտ, զողորմութիւնս

իւ-

ըեանց մեռեալն ։
9 . * Այլ ես 'ի [illegible] օրհնութ
[illegible] եղէց [illegible] . [illegible]
[illegible] . և [illegible]
[illegible] 'ի [illegible] ։

խորեանց Թաղին ։
Այլ ես 'ի ձայն օրհնութե
10 * և խոստովանութե մա֊
տուցից քեզ պատարագ ,
զոր ուխտեցի . և հատուցից
փրկութե տն ։

# Վ Ե Ր Ծ Ա Գ Ի Ր

[illegible] յովնանու մարգարէին ։

Գիտասցես կարծիք են 'ի վ՟ը յովնանու . ո՛ իցէ և երբ երևեալ իցէ ։ Ոմանք համարին՝ թէ էր որդի սարեփթացի այրւոյն . զոր եղիա մարգարէ յարոյց 'ի մեռելոց . յոր յաւելուն այլք ասել , թէ աբդիու մարգարէ էր հայր մանկանն. և թէ սոյն այս էր , զոր առաքեաց եղիսէ մարգարէ առ յէու՝ օծանել զնա թգ՟ւր իսլի ։ Նաև այս կարծիք չունի տեղի . զի յովնան ոչ էր յաւուրս եղիայի . և ոչ եղիա յաւուրս աբդիու . թերևս ըստ ասելոյ ոմանց՝ աբդիու իցէ հազարապետն աքայաբու ։ Հաւանական թուի ասել , թէ այս յովնան էր մարգարէն այն , որ յիշի 'ի դ՟ թագ . ժ՟դ . 25 . զի գրի անդ ., թէ յերոբովամ երկդ. արար ըստ բանի տն , * զոր խօսեցաւ 'ի ձեռն ծառայի իւրոյ յովնանու մարգարէի որդւոյ ամաթեայ 'ի գեթայ՝ աքոբերայ || . և այս յարմարի բուն յովնանու մարգարէին . զի և նա ինքն յովնան էր որդի ամաթեայ . ա՟ * և եղև բան տն առ յովնան որդի ամաթեայ || ։ Իսկ թէ իցէ 'ի գեթայ , զայդ հաստատեն բզմ֊ երևելի հին հեղինակք . բայց գեթ ասելով իմանան ոչ ըզփղշտացւոցն , այլ զաքոբերայն , յդ զոփերայն , որ էր 'ի հրէաստանի 'ի բաժնին զաբուղոնի ։ Նաև ըստ այսմ յովնան մարգարէ համարի լինել



'ի

'ի ժամանակս մարգարէիցն ովսեայ, յովէլեայ, ամովսայ և աբդիու՝ առ թագաւորութ՟ ոզիայ արքային յուդայ, և յերոբովամայ երկրորդի արքային Իղի, առ ո՟րութ՟ փակեայ արքային ասորեստանեայց. որ թագաւորէր 'ի նինուէ. որում յաջորդեաց սարդանապաղ :

Արդ 'ի ժամանակի անդ՝ յորում էր յովնան, յաձախէին անօրէնութիւք 'ի նինուէ քաղաք մեծ. մինչև ասել ա՟յ, թէ * աղաղակ չարութենոցա ել առ իս ‖. Ա՟յ ազդ արար յովնանու գնալ անդր, և քարոզել ապաշխարութ՟ի. և ը՟ անուան իւրոյ լինել առ նինուէացիս աղաւնի մնչօղ. ը՟ որում յովնան աղաւնի թարգմանի, և մնչօղ :

Իսկ թէ ըէ՞ր առ նինուէացիս և ոչ առ այլս առաքեցաւ, թողումք քննել այժմ. այսչափ ինչ կարեմք ասել, թէ որովհետև յայնմ ժամանակի նինուէ քաղաք էր աթոռ թագաւորութ՟ ասորեստանեայց, որ քան զա՟մ թգ՟րու՟ս հզօր էր, և իբր գլուխ ամենեցուն, պատշաձ էր յապաշխարութի ածելով զնա՟՝ օրինակ տալ ապախարութ՟ այլոց. մանաւանդ ազգին Իղի. զի 'ի գործոյ անտի նինուէացւոց յանդիմանեալք՝ զգաստասցին. զորմէ գեղեցիկ խօսի անանիա վ՟րդ՟ 'ի ձառն յովնանու :

Արդ թէպէտ յայսպիսի գործ մեծ հրաւիրեցաւ յովնան, բայց մարգարէն խորհելով անօրինամամբ իմն՝ ոչ կամեցաւ գնալ. և պ՟ձառն եղև այս, զի անպատշաձ վարկաւ՝ քարոզիչ լինել թշնամեաց ազգին իւրոյ և ատելեացն ա՟յ, և անել զնա՟ հանդոյն եբրայեցւոց մեծարեալ յաա՟ն. Երկեաւ ևս 'ի չարութ՟ նոցա և 'ի թշնամութ՟ զոր ունէին առ հրէայս : Կասկածէր և ևս՝

թէ

Թէ յապաշխարել նոցա՝ գուցէ ողորմեսցի 'ի նոսա ած, և պահեսցէ զքղք նոցա, և ինքն սուտ երևեսցի: Այսպիսիս խորհելով՝ փխչ 'ի Նինուէ գնալոյ՝ էջ 'ի Յոպպէ. և գտեալ նաւ մի՝ որ գնայր 'ի Թարսիս քաղաք Կիլիկեցւոց, այն է Տարսոն, եմուտ յայն: Իսկ 'ի նաւել նոցա յարեաւ հողմն սաստիկ, և յարոյց ալէկոծութիւն մեծ. մինչև մերձ լինել ընկղմելոյ նաւուն:

Ընկեցիկ առնել նաւավարացն զբեռինս՝ ոչինչ օգտեցան. զի ոչ թէ բեռինք նոցա, այլ յանցանք նաւարկելոյն վտանգէին զնս: Օտարացեալ ապա յոլնանու 'ի խղճէ, և զարհուրեալ 'ի սպառնալեաց ծովու՝ էջ 'ի խորշ մի նաւուն. և կալեալ եղև 'ի քնոյ. մինչ զի վաստակեալ էր յաշխատութէ ճանապարհի:

Տեսեալ նաւավարաց, թէ արտաքոյ կարգի է այս ալէկոծութի, գիտացին թէ յոյ է. վասն որոյ սկսան աղաղակել առ ածս իւրեանց. և ոչ տեսանելով զհանդարտութի, արկին վիճակս՝ թէ որոյ վս իցէ այս պատահարք. և իբրև ետեսին՝ թէ յՅովնան անկաւ վիճակն, ձայն ետուն նմա, հարցին և ասեն. ո՞ւ ես դու. ուստի՞ գաս, և ուր երթաս. և նա ասէ. ծառայ եմ այ կենդանւոյ՝ որ արար զերկինս և զերկիր. և զի ես փախնեայ յերեսաց նորա, վասն որոյ երկինք և ծով յարեան 'ի վր իմ:

Զայս լուեալ նաւավարացն երկեան, գուցէ 'ի լինել նր ը նս՝ կորիցեն. զի ծովն առաւել ևս յուզիւր: Ասէ ցնս Յովնան. զի՞ երկնչիք. ոչ վս ձեր է այս ալէկոծութի, այլ վս իմ. ընկեցէք զիս 'ի ծով, և հանդարտեսցի ալէկոծութիւն:

Տեսեալ նր թէ չէ հնար այլազգ ապրիլ, ընկե-

ցին զնա 'ի ծովն . և հանդարտեցաւ ծովն . զի եգիտ՝ զոր խնդրէր · յորմէ յայտնի տեսին՝ թէ 'ի հրամանէն այ եղև այն · վասն երկեան 'ի նմա_ նէ, և ուխտս եդին ծառայելոյ նմա միայնոյ և ոչ այլում :

Յընկենուլ անդ յովնանու 'ի ծով կէտ մի մեծ հրամանաւն այ յափշտակեաց զնա, և եկուլ_ ատանց վնասելոյ նմա . և այս յայտ է թէ 'ի սքանչելեացն այ եղև . որով ոչ միայն եկաց նա կենդանի 'ի փոր կիտին զաւուրս երիս, որպէս մանուկն ապահի յարգանդի, այլ և զգաստ՝ զգայ_ ութբ և միտք, որով եղև երից մանկանցն 'ի մէջ հնոցին : Ի գիպուածոյ աստի յովնանու առին հեթանոսք՝ առասպելել զհերքիւլեայ, թէ 'ի նաւարկութե խորում՝ անկեալ 'ի ծով կլաւ 'ի ձկանէ . և ողջ պահեալ 'ի նմա՝ յետ երից ա_ ւուրց ընկեցաւ 'ի դուրս :

Այս անցք յովնանու բազում տուգանօք վճա_ րեցաւ . զի փախուցեալ 'ի գերծանելի վտանգէ կասկածանաց, ըմբռնեցաւ յանզերծանելի վը_ տանգ կորստեան : Իսկ հնազանդեցաւ յովնան զհրամանն այ, և հաւատաց զանձն խստագոյն հողմոյ և անկայուն ծովու, զխութախորտակելի նաւու, և անձամբ նաւորդաց : Հրաժարեցաւ 'ի պատուոյ քարոզութե, և վարեցաւ 'ի մետաղս : Այլ կամեցաւ խաղաղութիւն մնալ 'ի նինուէ, և անկաւ 'ի խռովայոյզ բանտ կիտին մեծի : Յորում նեղեալ 'ի տառապանաց ոգւոյ և 'ի վշտաց մարմնոյ, 'ի տագնապանսն աղէաց և յանձ_ կութե տեղւոյ, աղաչեցաւ աղաղակել մտօք 'ի խորութե անտի փորոյ կիտին առ տր, և առնել զա_ ղօթս զայս :

Եւ զի գրէ անանիա վարդապետ, թէ յովնան լեզ_ ուաւ

ուա կնոջն խաւսեցաւ, և բանք նորա են այս.
* գործակից լինէր առն մարգարէին (կնոջն այն)
,, պահօք և աղօթիւք. զի զայն երիս աւուրսն
,, ոչ ինչ ճաշակէր. և պատրաստէր զլեզուն
,, փոխ տալ մարգարէին յաղօթելն. զի բանն
,, մարգարէին իբրև կանդնոց (այս իբրև թաղէն)
,, բաղխէր զլեզու կնոջն. և իբրև զքնար հրն
,, չեցուցանէր զաղի աղէտս ողբոցն սա. ամծ || .
Եւ այս երևի լինել 'ի վեր քան զկարգ իւրացն. մանաւանդ զի աղօթելն յովնանու 'ի փոր կէտին՝ ոչ հաւանական թուի՝ մտօք էր, և ոչ արտաքին ձայնիւն. յոր մեր նարեկացին, * մամատայց || հաւմարի զայն. 'ի բանն. հիա. Որով և իցէ՝ յետ երից աւուրց հրամայեցաւ կիտին թքանել զնա 'ի ցամաք: Եւ 'ի գնալ նր յեղին սա 'ի կատարել զուխտ իւր՝ վերստին առաքեցաւ 'ի նինուէ, և քարոզեաց անդ. և էած զնմանն յապաշխարութի.

Եւս անցք յովնանու նախագուշակ օրինակ էին տնօրէնութե տն մերոյ. որ առաքեցաւ 'ի հօրէ քարոզ հեթանոսաց, և յայս իսկ ընկեցաւ 'ի ծով մհի, և 'ի ծով չարչարնց՝ կլաւ 'ի մահուանէ, և էջ յորովայն դժոխոց. և բուծեալ զերկունս մահու, և խորտակեալ զնիգս բռնութե սատանայի՝ ել յաւուրն երրորդի 'ի մահուանէ անապական. և կոչեաց զնինուէացիս այսինքն զհեթանոսս յապաշխարութի կենաց և յարքայութի երկնից.

Եւ զայսոսիկ ըստ բազում փոխաբերութեց յառաջ բերէ շարական մեր 'ի կանոնին. և 'ի բազում բանս աւագ օրհնութեց. ոչ տեսցի 'ի մեկնութե: Եւ նախ զիջանելն յովնանու 'ի ծով և 'ի նաւ, և զլինիլ նր պատճառ ազատութե այլոց՝

օրինակ բերեալ խոնարհելոյն քան և աղաւնե_
լոյ նր զախեղերս, ասէ 'ի կամն Ճիզ. փառաւորե_
լով զնա. * մծ զքեզ փառաւորեմք, որ 'ի յերկ_
,, նից խոնարհեցար (ըստ յովնանու). ծառայի
,, ունէր զկերպարան. և զախեղերս աղաւնեցեր
,, 'ի մեղաց ։ Օ այսմ դնէ և 'ի կամն Ճիթ 'ի
մէջ բերելով զլինելն յովնանու 'ի փոր կիտոյն
զերիս տիւս և զերիս գիշերս, յասելն. * զհրա_
,, շալի խորհուրդ տնօրէնութե քո մր ցուցանե_
,, լով մարգարէին՝ 'ի փոր կիտոյն լինել զերիս
,, տիւս և զերիս գիշերս պահելով 'ի խաղա_
,, ղութե. համանգոյցիս հաստիչ գոլով՝ խոնար_
,, հեցար յերկնից, և խոնարհեցար կամաւ Հօր մն
,, մր. Թաղելով 'ի սիրտ երկրի զերիս տիւս
,, և զերիս գիշերս պահելով 'ի խաղաղութեն ։
Այլ 'ի կամն Ճիդ ասէ. * զմարդասէրն ապրեցու_
,, ցեր տր 'ի կիտէն որպէս մարգարէր. որ նմա_
,, նակէր զքո 'ի մեռելոց զերեքօրեայ յարու_
,, թիւնդ ։ Օ այսոսիկ եղեալ մատիցուք 'ի
բանսդ ։

## Ի. Բ. Ն.

1. Ի նեղութեան իմում ես առ տր կարդացի. լուաւ ձայն յանդնդոց դժոխոց աղաղակի իմում ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ։

Սկզբնաւորութիւն բանիցս նորին է ըստ ասիմ՝ որ գրի 'ի սաղ ՃԺԹ. 1. յասելն. * 'ի նեղութեան իմում ես առ տր կարդացի. և լուաւ ինձ ։ Այս կարդալս կամ աղաղակելս յովնանու ըստ ասելոյ ամենայն հայրն նախ 'ի վտանգս, և ապա 'ի վտանգեալ գոլն. այսինքն նախ 'ի ժամն յորժ՝ յորում ընկեցեալ լինէր 'ի ծովն. և երկ_
րորդ՝

բոլոր՝ 'ի ժամն յայն՝ յորում գտաւ յորո_
վայն կիտին ։ Այլ ըստ այսմ յառաջնում հա_
ստուածի եդեալ աղաղակն ուղղակի հայի 'ի
վտանգն ․ իսկ յերկրորդում հաստուածի ե_
դեալն հայի 'ի վտանգեալ գոյն ։ Այլ քանզի
զայս բան զբեաց յովնան յետ ելից իւրոյ , ամին
իրի 'ի կատարեալն դնէ , և իբրև զապաւմանական
յառաջաբանութի առաջքի սանձ՝ ասելով ։

'Ի նեղութեան իմում ես առ Տր կարդացի ․ լուաւ ինձ յանդընդ_
դոց դժոխոց աղաղակի իմում ։ Կրկին ասել ․ յորժամ
վտանգեցայ ես , և մնկայ 'ի ծով , և ընկլայ յո_
րովայն վիշապին մեծի , չունելով զայլ ապա_
ւէն՝ յոտ միայն յուսացայ , և առ նա աղաղակե_
ցի ․ և նա ոչ արար անտես , այլ լուաւ աղաղա_
կի իմում յանդնդոց անտի դժոխոց , կամ ըստ
եօթ՛՛ , և ՅՌ ամենաշնչի մերում՝ յորովայնէ դժո_
խոց ։

Օրովայն կիտին չափազանցական իմն ձևով
դժոխք կոչէ ըստ մեծութե , ըստ խորութե , և
ըստ նմանութե ․ զի այս կէտ՝ որպէս յայտնի յուցանի
'ի կարգէ բանիցն՝ էր մեծ յոյժ և աչագին ․
մինչև ըմբռնել նր արտաքս զյովնան՝ թգա_
նել կոչէ նր գիրն ։

Խորհրդաբար՝ այն այս նեղութե յովնանու նկա_
րագրեր յինքեան զվիշտ թշուառութե մարդկայ_
նոյ բնութե , որ մատնեցաւ 'ի փոր աներևոյթ
կիտին ․ բայց յաղաղակել նր՝ լուաւ նմա տր և
ՅՌ եբր՛՛ իբրև թէ պատասխանեաց նմա ․ և եհան զնա
յայնմանէ ապականութէ ։ Զայն հայելով երգէ
եկեղեցի առ տր 'ի չար ձինէ ․ ասելով ․ * 'Ի նե_
,, ղութե իմում աղաղակեցի առ տուօղն կենդա_
,, նութե ․ և լուաւ ձայնի աղօթից իմոց ․ և եհան
,, զկեանս իմ յապականութէ ‖ ։

Բա_

Նախագուշակեալ՝ սոյն այս բան մարգարէին ասի 'ի բերանոյ ապաշխարողի, եւս եւ 'ի բերանոյ ամենայն մեղուցելոց. Ձի որպէս տեսանի 'ի շար ՃԷ. ուր ասի. * որ փրկեցեր զմարգարէն յորովայնէ կի-
,, տին, ապրեցո եւ զըմբռնեալս 'ի ժանեաց չար
,, վիշապին կենարար խաչիւդ ||. Նաեւ սմին ասէ եւ 'ի շար ՃԻԵ. * որ լուար ա̃ծ գոչմանն յովնա-
,, նու յորովայնէ կիտին, ապրեցո եւ զիս յա-
,, ներեւոյթ թշնամւոյն փրկիչ գալով, որ նս-
,, տիս 'ի քրովբէական աթոռ. որ ընտրեցեր
,, քեզ վերստին քարոզող Նինուէացւոց զյափշ-
,, տակեալն 'ի կիտէն երեքօրեայ իջմամբ 'ի դը-
,, ժոխս. եւ զիս զբազմամեղս արձակեա 'ի կա-
,, պանաց մահու 'ի կեանս յաւիտենից ||. Այլ թէ 'ի գոչել յովնանու առ ա̃ծ յորովայնէ կիտին՝ զինչ ասէր, զայն 'ի մէջ բերէ 'ի յաջորդ-
համարսդ. եւ նախ ասէ.

2. Լուար Տ̃ր ձայնի իմում. Դու ընկեցեր զիս 'ի խորս ծո-
վու. եւ շրջանք գետոց պաշարեցին զիս.

Շարականն մեր 'ի կան ՃԼԲ 'ի մէջ բերեալ զանց-սն յովնանու՝ զբանս նորա այլով իմն կարգա-ւառաջի առնէ յասելն * մարգարէն 'ի փորոյ կի-
,, տին աղաղակէր եւ ասէր՝ Տ̃ր նայեաց յիս, եւ
,, մի տար զիս հզօրիս այս. ձայն բարձի 'ի խո-
,, րոց անդնդոց առ ա̃ծ ողորմած. եւ ձայն աղա-
,, ղակի իմոյ հասցէ 'ի լսելիս քո Տ̃ր ||.
Այս բան յովնանու նոյնանայ ընդ այնմ, զոր ասէ գուշակ 'ի սաղ. ԿԸ. 1. 2. * կեցո զիս ա̃ծ. զի
,, հասին ջուրք յանձն իմ. ընկլայ ես 'ի խորս
,, անդնդոց. ուր ոչ գոյ ինձ հանգիստ. եկի
,, ես 'ի խորս ծովու. եւ շրջանք ընկղմեցին զիս ||.
Սուի թէ յովնան զայն զայս բան Դաւթի ին-
քեան

քեոյն յարմարեցուցանելով՝ մատուցանել առաջի
ոյ. և ասէ.

Լուար ձայնի իմում. ՚Ի բնագրին և յայլ թարգ-
մանութիս փոխակ ասելոյ լուար, դնի լուաւ. բայց
քանզի եկեղեցիս հայոց զայս բան յօրինանս եդր
մաղթողական աղօթք առաջի մատուցանէ, լսել
խնդրել. և սոյն աղաչէ ազատել զանձն յայսպ
կասնուէ. Իսկ թէ յորմէ և յորում էր այս ա-
պականութի, յայտ առնէ ասելով.

Եթէ ընկեցեր զիս ՚ի խորս ծովու. կամ ըստ ամծայն-
չին, ՚ի խորս սրտից ծովու. Մի այս զընկեցիկ
լինել իւր ՚ի խորս. զի նոյն անկանելութ եղև. և
նորա հրամանաւն եկաւ զնա կէտն, և իջոյց ՚ի
խորս ծովու, յորում շրջէր նա ի ներս կէտն. Իսկ
բառդ սրտից՝ զոր յաւելու՝ ոչ այլ ինչ ցուցա-
նէ՝ բայց եթէ զնոյն խորութի ծովու, կամ զմէջն
ծովու. զի որպէս սիրտ երկրի ասելով՝ իմացեալ
լինի երբեմն խորութի ինչ երկրի, կամ մէջն երկ-
րի. ըստ (Մատթ. ԺԲ. 40.) * Նոյնպէս եղիցի և
,, որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւ և զե-
,, րիս գիշերս ||, նոյնպէս է իմանալ և զասելն՝
՚ի խորս սրտից ծովու. Իսկ թէ զի՞նչ կրեաց ՚ի
խորս անդ, գրէ կարգաւ. և նախ՝ ասէ.

Ամենայն [illegible] պաշարեցին զիս. կամ, ըստ ամծայ-
հնչին և ըստ այլոց. գետք պաշարեցին զիս. Պա-
տաւք ոչ է այլոք իմանալ աստ զյատակ գետս,
զի յատակ գետք ՚ի ցամաքի են. այլ զջուրս
ծովու, որք ՚ի շարժիլ կիտոսին ՚ի խորս անդ, և
յընթանալ նորա ՚ի վեր և ՚ի վայր, իբրև գետք հո-
սէին զնովաւ. կամ իմանայ զայն ջուրսն, որք
գետոցն մտանէին և ելանէին ՚ի փորոտիս կի-
տոսին. զորմէ խօսի ՚ի համարն 4. կամ թերևս
գետս կոչէ զջուրսն, զորս իբրև զգետս հոսէն

կէտք

կեալ է ընդդէմ , որպէս և այժմ տեսանեմք ·
Մարթ է գտանել խմանալ և զայլս ծովու · այլ զայսմանէ որոշակի խօսի զկնի , և ասէ ։

3 . Ամ զբօսանք քո և ալիք քո անցին ի վերայ իմ . և ասացի թէ մերժեցայ ապա յերեսաց աչաց քոց ։

Բազմին համատեղ այսր համարձակ առնուլ է ի բանից գուծթի · զոր գրէ ի սաղ խա . 8 . յասսէլն . * ամ զբօսանք քո և ալիք քո անցին ի վր իմ ։ զոյ մի տես ի մեկնութե անդր սաղմոսի . զի զնոյն մեկնութի ունին երկոքին եա · այսպէս ի նոյնս և տարբերութն , զի զաւթիմ փոխաբերութիւն և նմանաբանութ խօսի · իսկ յովնան իրապէս կրելով առաղակէ , և ասէ ։

Ամ զբօսանք քո և ալիք քո անցին ի վր իմ ։ Զբօսանս ( որպէս ասացաք ի նախասիջեալ բան . ) նշանակէն կոհակք ծովու , կամ ըստ եբրայեցի կանոնն մրմռունք կամ ընդհարմունք կի բեկմունք կամ եռմունք ալեաց ջուրց · որք ըստ միմեանց հկտեալ բեկանին ի փրփուրս , և բեկանեներ բեմն զնաւս ։

Սոյնպիսի ալիք և կոհակք անցանելով ի վր կետին և զկնիար անցանէին և ի վր յովնանու . վսյ ասէ · անցին ի վր իմ ։ Իսկ ասելն ամ ոչ ցուցանէ զամ անհատ ալիս , այլ զամ տեսակս ալեաց · զի որովհետև յովնան եկաց զերիս տիւս և զերիս գիշերս ի փոր կիտին , ամ ազգք ալեաց անցանէին զնովաւ ։

Այս բան կարէ ակնարկել և յայն անցս , որք անցին ընդ յովնան ի նաւի անդ ի մեծի ալեկոծութեն . յորում դիզանէին զբօսանք ալեաց ի վր յովնանու , զի վն յովնանու . և զօտէին զնաւն , և փրփրային ի կլանել զնա ·

Եւ

Եւ ՚ի Քրիստոսի ոչ հրամանաւ լինելին այսորիկ, մինչ
ոչ ուրոյ՝ ասելով զբաժանորդս և այլերս։ Մարթ
է և ոչ ասել, թէ քո ասելով կամի ցուցանել զմե_
ծութիւն այնորին. Ժ որով սովորութիւն զբոյ՝ զմե_
ծամեծ խօս կոչել ոչ կամ ձե. զի յասելն,
ծառք ձե, լերինք ոչ են. որով ցուցանի մե_
ծութիւն ծառոց և լերանց։

Եւ թէ այս բանք փոխաբերաբար առցին, ցուցա_
նեն զմեծութիւն վշտացն, զորս կրեր յոլովան ՚ի փոր
կիտին. մինչ գրեթէ հատանել նա՛ զյոյս խոր ՚ի
փրկութէ, եթէ չէր զօրացեալ յոյն. և յայս հայ_
ելով յարէ զկնի, և ասէ։

Ես ասացի թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։ Այս
մի ասել. յայսպիսի վիշտս վտանգի տեսանելով
զիս՝ վհատեցայ. խորհեցայ ասպս, թէ ուրեմն
թողեալ առ ՚ի քէն, և մերժեցայ յերեսաց աչաց
քոց, այսինքն ՚ի տեսչութէ խնամոց քոց։

Խորհրդաբար՝ սոքիմբք առաջի դնի աղետալի
վիճակ մարդկային բնութե, որ արտաքս ընկե_
ցեալ ՚ի դրախտէն ՚ի ծով [illegible], և մերժեալ ՚ի
սկզբնական արդարութէ՝ պաշարեցաւ ՚ի բազմա_
դիմի ախտս իբր ՚ի շրջանս գետոց. և եւանց ընդ_
այլեալ փորձանս իբր Ժ զբօսանս. և անկաւ
յայլեալ խառնակութիւն իբր յալիս. մինչև մերձիլ ՚ի
յուսահատութի, և ասել առ ած. * մերժեցայ
ուրեմն յերեսաց աչաց քոց ||. Այլ յոյս առեալ
՚ի բանից նախահարց և մարգարէից՝ դարձեր առ
նա՝ այց առնել փրկեան։ Յայս մերձեալ զայն
շարականին մերոյ՝ երգէ ՚ի կոյս ԱԾ ասելով. * Ե
,, յոլովանաւ անձն իմ ծփեալ յալիս մեղացս,
,, վա՛ս աղաղակեմ ՚ի նեղութ իմում առ փրկողդ
,, և յայս. լո՛ւր ձայնի իմում ||.

Նաւորդաց՝ ասելին յանդիմանն ցուցանէ որպիսու_

թի հոգւոյ մերդուցել քրիստոնէի . որ մերժեալ 'ի շնորհաց հոգւոյն սրբոյ և 'ի մասնակցութենէ նորա , և ընկեցեալ 'ի նաւաբեկութիւն քրիստոնէական կենաց' մատնի 'ի շրջանս խռովութեան խղճի մտաց , և յաւելս պէսպէս փորձութեանց : Ապա եթէ զգաստացեալ դարձցի առ փրկիչն իւր , և հաստատեսցի յապաւինութիւն խաչելութեան նորա , կարէ ըստ յովհաննու գտանել առ նա . որպէս տեսանի 'ի բանից շարականին' զորս եդաք 'ի նախակարգեալդ . նոյն է և այն , որ գրի 'ի չարձլս . յասելն . * որ լուծար
,, զմեծ մարգարէին ձայնի գուշակմամբ . և ես նովին
,, ձայնիւ գոչեմ . և զիս մի անտես առներ . այլ
,, պահեա պատուական և սրբ խաչիւ քո . որ քոյին
,, հրամանաւդ զմահու լուծեր զիշխանութիւն , և
,, անխծլիցն եղեր բակառումն . և զիս մի անտես
,, առներ իա || : Արդ տեսեալ յովհաննու՝ թէ կենդանի պահի 'ի փոր կիտին , յայտնանէ իբր 'ի յայտնի նշանէ զթութեն տն՝ յոյս առեալ՝ աղօթիւն բանիւ պաղատի առ նա , և ասէ :

4 . Արդ իջէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սբ քո . զի հեղձան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ . և անդունդք անհնարինք պաշարեցին զիս :

Յայս բան զօրութը իմացեալ լինի և ուխտելն յովհաննու զուխտ գոհութեն . ըր որում գնի 'ի վերջին համարն' յասելն . * մատուցից պատա-
,, րագս սն . և կատարեսցից զուխտ իմ 'ի փրկու-
,, թեան || . կամ * մատուցից քեզ պատարագ' զոր ուխտեցի իա || : Այսու ուխտիւք մատչի աստ յովհան 'ի պաղատանս . և խնդրէ յտէ զփրկութի ասելով :

Արդ իջէ՞ թէ յաւելից հայել 'ի տճր սբ քո : Կամի ասել . այն ունելով փրկութեան քում՝ աւասիկ ուխ-

ուխտեմ առաջի քո՝ գալ 'ի տաճար սուրբ քո , և մատուցանել անդ զպատարագս ուխտից իմոց . զոր արդ՝ երբ իցէ՝ զի ելեալ 'ի դժոխոց սատանի՝ գնացից յերկիր , և արժանի եղէց տեսանելոյ վերստին զնոյն՝ այսինքն զտաճար սուրբ քո , և անդ կա_տարել զայս իմ ուխտ՝ զոր ուխտեցի :

Ոչ եւս մտանել 'ի տաճարն , այլ հայիլ կամ տե_սանել . զի անարժան համարելով զինքն այնմ՝ և զայս 'ի մէջ բերելով՝ ակն ունէր և այնմ հա_սանել . մանաւանդ թէ անտարակոյս էր . ուս_տի յեբր՝ արձակ դնի յաւելն . * սակայն յա_ւելից հայիլ 'ի տաճար սրբութեան քո || . և 'ի լատ՝ դնի . * սակայն դարձեալ տեսից զտաճար սուրբ քո || . Թէոդոտիոն յասոր՝ գրեթէ ընդ մերում դնի՝ որ է ընդ եօթ՝ և ընդ արաբ՝ :

Այլ յովնան կասկածեալ միանգամայն՝ թէ_ դուցէ կարի յապաղեսցի այն ազատութիւն իւր՝ կրկին վարանէր . զի տեսանէր զանձն յանհնա_րին անդունդս խորոց ջուրց ծովու . և զայս կա_մելով յայտ առնել , յարէ զկնի և ասէ :

ՊԱՏԵՑԱՆ ԶԻՆԵՒ ՋՈՒՐՔ ՄԻՆՉԵՒ ՅԱՆՁՆ ԻՄ : Այսու ջուրբք իմացեն ըլինելն այն ջուրք՝ որք մտանէին և ելանէին ընդ փոր կիտին . որք և շրջապատէին զբոլոր մար_մինն յովնանու , և խեղդէին եւս զնա՝ եթէ չէր պահեալ յԱյ̃ . բայց քանզի ընդ ինքեան խեղդիչք էին , և բաժանիչք հոգւոյ 'ի մարմնոյ , ասին իբր ասէ , հեղան մինչև յանձն իմ , այսինքն մինչև 'ի հոգի իմ . որպէս թէ եղեալ էր . ջուրք պատեալ են ըզ_մարմին իմ , և մերձ են հասանել 'ի հոգիս . այսինքն մերձ են բաժանել զհոգիս 'ի մարմնոյս :

Ոչ թէպէտ կան որք ասեն , թէ ուր յովնան էր 'ի փոր կիտին՝ ոչ գոյր անդ ջուր , բայց տկարա_նան 'ի ցուցանել . մանաւանդ զի բանք յովնա_

նու

նու ցուցանեն՝ թէ ջուրք պատեալ էին զնա · և ինքն աքանչելեօք պահիւր ։ Իսկ զի այս եղև 'ի խորութ անդնդոց , յայն սակս յաւելու ասել ։ Ասաց անդունդք անհնարինք պաշարեցին զիս ։ Փոխանակ ասելոյ՝ փոր կիտին պաշարեաց զիս յանդունդս՝ դնէ թէ նոյն անդունդք պաշարեցին զիս · և այս՝ ըստ ոճոյ Հայրապետանեց՝ որ առն փոխանունութեն · որով սնունս պարունակողին դնէ փոխ անուան պարունակեցելոյն ։ Իսկ զայս դնէ առ 'ի ցոյց անքերելի պաշարմանն իւրոյ · զոր կամելով առաւել ևս ստատիկ ցուցանել , յարէ զկնի և ասէ ։

5. Ասաց Գլուխ իմ ընդ ճեղքս լերանց · իջի ես 'ի խորս երկրի · և տեսի զնիգս նորա՝ զի էին փականք յաւիտենից · և ելցեն յապականութենէ կեանք իմ ։

Որպէս յայտ է բնագրէնից , կամ 'ի խորութ ծովու բաղում լերինք ծածկեալք ջուրբք · և բաղում ուրեք ևս տեսանեմք , զի մեծամեծ լերինք պատեալ ունին զծով · որոց 'ի ստորոտն գտանին այրք կամ փապարք · յորս մտանեն կէտք՝ գտանել 'ի նմա իւրեանց կերակուր , և կամ ծնանիլ 'ի նոսին ։ Իսկ զի 'ի փոր կիտին էր յովնան , 'ի մտանել կիտին յայնպիսի փապարս՝ ինքն ևս մտեալ լինէր 'ի նոսին · յայս սակս ասէ ։

Ասաց գլուխ իմ 'ի ճեղքս լերանց ։ Ոմանս դնէ փոխ բոլորին · ըստ զգլուխն փոխ բոլոր անձին · և այս վասն՝ զի 'ի մտանել անձին 'ի փապարս՝ ըստ կարգի խօսելով՝ նախ գլուխն մտանէ · վասն գլուխ դնէ . և նոյն էր թէ ասէր · 'ի մտանել կիտին 'ի փապարս լերանց՝ ես ևս պարունակ-



եալ

եալ գոլով 'ի նմին՝ գլխոյն և ամ մասամբք
մարմնոյս մինչ 'ի նոյնս :

Այլ գիտելի է՝ զի երբայական բառդ ռոշ, որ դնի աստ փոխ բառիս փառաւոր՝ նշանակէ նաև դեղը և զճեղքուած կամ զփառաւոր․ ևս և նշանակէ զկնիւն կամ զպտուղ՝ որ բուսանի 'ի յատակս ծովու․ նշանակէ և զլօռ, որ գոյանայ յեզերս ծովու և գետոց․ և ըստ այսմ այս բանս կարէ ևս մեկնիլ այսպէս․ 'ի շրջիլ կիտին 'ի փապարս և յեզերս լերանց ծովու, յորս լինին կնիւնք և պտուղք և լօռք, ես ևս է նմին շրջելի յայնս :

Իսր յաւելուն ասել ոմանք՝ թէ որովհետև կէտք ուտեն զկնիւն, զպտուղ և զլօռ ևս, յեցանել այնց 'ի փոր կիտին՝ գլուխն յովնանու պատատէր 'ի նոսին․ և է այսմ դնէ (ասեն)․ եմուտ գլուխ իմ ընդ սուփ, այ է պտուղս կամ է լօռս : Բայց առաջին մեկնութիւն երևի հարազատ․ զոր և այլով բանիւ առաջի առնէ յովնան՝ յասելն :

Իջի ես 'ի խորս երկրի : Խորոք հիմացեալ լինին սաստ խորքին պատառուածք կամ քարանձաւք լերանց ծովու․ յորս յածեցուցանէր կէտն զյովնան․ Իսկ զի այսպիսիկ պատառուածք կամ քարանձաւք էին իբր դրունք լերանցն անանցանելիք և իբր նիգօք փակեալք, մինչ յաւելու ասել :

Եւ տեսի զնիգս նը, որ էին որպէս աղխք յաւիտենից :

Տեսի ասելով ոչ ցուցանէ թէ զգայական աչօք եսես զայնս, այլ թէ զգացհամբ զշրջիլ իւր յայտնապէս քարանձաւս, որոց նիգք էին յաւիտենից․ ուստի յեբր" և յոյնս և 'ի բուն գիրս յովնանու ոչ դնի տեսի, այլ թէ նիգք իւր էին աղխք յաւիտենից, այ փականք յաւիտենից :

Իսկ յաւիտենից ասել յերկու ինչ ակնարկէ · մի՛ յանշարժ և յանզեղծ ըմբռնումն անձին յունանու · և այս համաձայն թուի եբրայականին · ուր ասի · * իջի յերկիր նգօք խուռլք վ՛ն իմ յաւիտեան ||· իբր թէ ասէր · այն նիգք վ՛ն իմ էին յաւիտեան , զի անզեղծ ըմբռնողք և կալողք · Աւստի 'ի լատ" բացայայտ եւս դնի · * նիգք երկրի փակեցին զիս յաւիտեան || ։ 'Ի սոսին հայի և թարգմանութիւն ասորւոց՝ յասելն · * փակեալ էր երկիր զաղխս իւր յերեսս իմ յաւիտեան || ։ Երկրորդ ակնարկէ յահեղութի և 'ի տևողութի քարանձաւացն , և յանշարժ մնալ նոցա 'ի յաւիտեան , զի մինչև 'ի կատարած ծի ։

Աստանօր բազմաց պատշաճ թուեցաւ ասել , թէ որս և անանեայ վարդապետի , թէ յովնան կալով յուրոյն խորշ փորոյ կիտին անջուր՝ 'ի փորոյ անտի ամ̃ծ այլին իմն զօրութ̃՝ աչօք իսկ տեսանէր զի աչս կիտին իբրև զի ապակեայ պատուհանս , զ՛ոմ՝ որք էին յանդունդս · եւս և զմտանել իւր 'ի փապարս և 'ի պատառուածս սոսկալիս ։

Նարոյապէս այս ամ̃ հայի 'ի վիճակ մեղուցել անձին՝ որ անկեալ 'ի ծով Ծախուումն յափշտակի 'ի կիտէ մեղաց և 'ի գխնաց · և մերժեալ յերեսացն այ՝ տապնայի 'ի նոսին տատանմամբ խղճի մտաց · որում չիք այլ հնար զերծանելոյ՝ բայց եթէ առ այն դիմելով՝ գոչել զի խնդրել 'ի նմանէ ազատութի · որպ արար յովնան յաղաչել նր զանծ , և յասել ։

Ի՛Ս ԵՂՅԵՆ ՅԱՂԱԽՆԱՆԷ ՀԷՆՔ ԻՆ ։ Կամի ասել · աչա ապականի յայսպիսի յետին թշուառութե կեանք իմ · հոգիս բանական , և մարմինս քայքայի · բայց կարող է ամենաբաւական ձեռն քո զանել՝ զի ելցէ

ելցէ և ազատեսցի կեանք իմ յայսպիսի տագնա-
պանաց ․ որովհետև ՚ի քեզ եմ ապաւինեալ ։
Եւ թէպէտ յերբ՝ և յասար՝ և ՚ի լաւ՝ ՚ի կա-
տարելոյն դնի և ներգործականաբար , յասելն ․
* Ձգեցեր յապականութենէ զկեանս իմ ॥ ․ բայց
նոյն է և այս ․ ըստ որում յոժխան յաղօթելն՝
յապառնիսն ասաց ․ իսկ ՚ի գրելն՝ ՚ի կատա-
րեալն ։

Խորհրդաբար առաջինկայ բանքդ յոժխանու , որ-
պէս և զնախընթացից ասացաք՝ հայլին ՚ի թըշ-
նամութենէ մարդկային բնութ ․ Ը որոյ ջուրքն
նշանակեն մեղաց ․ և անդնդոցք նշանակեն ծան-
րութիք մեղաց ․ փապարոք լեռանց՝ մեծաց ՚ի փոր-
ձութիւնս փառաց ․ խորովք երկրի՝ իջմունք ՚ի
մարմնական փորձութիս ․ նզօք՝ խառնուրդ սրտի ․ և
աղխիւք յաւիտենից՝ յուսահատութիք ։ Ի սոսին
մատնեալ՝ հառաչէր մարդս առ տածօղն կենդա-
նութ ․ իցէ թէ ելցէն յապականութէ կեանք իմ ։
Ուսաւ նմա ա՛ծ , և եհան զնա ՚ի մեղաց անտի ․
որք դնի ՚ի չար ձին ․ յասելն ․ * յորժամ ընկ-
„ լայ ես ՚ի խորս անդնդոց ․ ըմբռնեցայ ՚ի ժա-
„ նիս մեղացն ․ և փրկեաց զիս փրկիչն ած ․ և
„ եհան զկեանս իմ յապականութէ ॥ ։

Դատամնոր այլ իմն խորհուրդ առաջի մատուցա-
նի մեզ ՚ի քննել՝ հայելով յանապական մնալն
յոժխանու յապականութէ անդ մահու ․ որով և
Ը վկայելոյ գրոց՝ օրինակ եղև անապական մնա-
լոյ ՚ոն մերոյ յապականութէ , և ՚ի մահու անմահ ․
Ը որում նա ինքն էր աղբիւր անապականութէ ․
յոր միտ երգէ առ նա եկեղեցի գովասանա-
կան բանիւք ՚ի չար ձին ․ ասելով ․ * անապա-
„ կանութէ աղբիւր և ՚ի մահու կեանք ․ զքեզ
„ ծանեան հրամանելթիցն սեռք , և բանական

,, կենդանիք . որ զյաճխան 'ի կլաքն կորզեալ
,, արտաքսեցեր . գովասանական ձայնիւ եղա-
,, նակեմք քեզ զերգս օրհնութե ներմարդացեալ
,, բանիդ այ || :

Նաւ զի ծնն մեր ոչ միայն անապականն մնաց 'ի գերեզմանի , այլ և 'ի մեռանելն 'ի խաչին ըստ մարմնոյ՝ անմահ մնաց ը̄ ածութեն , յորոյ արացոյց յետ աւանդման հոգւոյն ըղխեցոյց 'ի կողիցն զկրկնավտակ աղբիւրն՝ որով և յայտ արար զլինել իւր աղբիւր անապականութե , յայս ակնարկելով շարական մեր զայլ իմն գերադոյն իմաստ առաջի առնէ . և ասէ 'ի նոյն կան" . * յան-
,, սաղարթաբեր արմատ փայտին մակադրեալ
,, զքեզ անհպելի հզմամբ , և սեւեռեալ բևե-
,, ռօք . և 'ի հրացոյտ կողիցդ 'ի ձեռն զինու
,, տիգի հոսանս վտակաց գործեցեր . գովասա-
,, նական ձայնիւ եղանակեմք քեզ զերգս օրհ-
,, նութե ներմարդացեալ բանիդ այ || : Նւր ան-
սաղարթաբեր արմատով փայտին խմացեալ լինի փայտ խաչին , որ էր անսաղարթ արմն ծառոյ . յոր մակադրեցին , զքս 'ի վերայ եդին զտր մեր անհպելի հզմամբ , զքս անյեղարան հպեցուցմամբ . ը̄ որում չունէր զյեղարան 'ի խաչին հպեցուցանել յայն զատս իւր , այլ փոխ յեղարանի սևեռք բևեռացն կալան զմարմին նորա . որոյ վն յաւելու ասել . * սևեռեալ բևեռօք || : Արթէ եւս ասել , թէ աստանօր բառդ անհպելի՝ հայի յածութիւն քնի . իսկ հպումն՝ 'ի մարդկութիւն . իբր թէ եդեալ էր . անհպելի գոլով ը̄ ածութե՝ հպեցար ը̄ մարդկութե 'ի չոր և յանսաղարթ փայտ խաչին . և սակ հրամանքդ՝ զանսաղարթն՝ ամենասաղարթ գործեցեր՝ ոռոգելով զայն հոսանօք վտակաց արեան

'ի

'ի ձեռն խիստ խոցման սրտի :

Զայս դնէ չարակամն յաւելթէ անտի մատնելոյն յովնանու 'ի փայտն՝ որ 'ի նաւն, եւ ընկղմելոյ նորա պատճառ փրկութե եղելոց 'ի նաւի անդ . յոր մտ դնէ եւ 'ի չար ձին : Զայսոսիկ այսպէս եդեալ, առաջի առնէ այժմ յովնան զաղաչանսն՝ զոր մատոյց առ Ած . եւ թախծագին սրտիւ գոչէ ասելով :

6 . Ի նեղ Տր Ած իմ 'ի նուաղել անձին իմոյ կարդացի . եւ յուշ Տր յիշեցի . եւ եկեսցեն աղօթք իմ 'ի տաճար սբ քո :

Նուաղիլն է ներքին իմն այլափոխութի մերձիլ յանզգայութե, կամ իբրեւ թէ պակասիլ 'ի յուշոյ եւ յիմբռնմանէ զգայութեց : Յայս կերպ ըմբռնեալ յովնան՝ աղաղակէ առ Ած , եւ ասէ :

Ի նեղ Տր 'ի նուաղել անձին իմոյ կարդացի . եւ յուշ Տր յիշեցի : Տեսանես թէ 'ի տագնապիլ եւ 'ի նուաղիլ հոգւոյ իմոյ 'ի փոր կիտին՝ առ քեզ աղաղակեցի . եւ 'ի պակասիլ ուշոյ մտացս մ՛ն տագնապելոյս՝ զուշ իմ առ քեզ դարձուցի , եւ քեզ մատուցի զաղօթս իմ : Այս այն յիշել եւ կարդալ է , զոր եդ 'ի համարն 1 . եւ այժմ խնդրէ՝ զի ընդունելի լիցի այն առաջի քո . վասն որոյ ասէ :

Եւ եկեսցեն աղօթք իմ 'ի տաճար սբ քո : Ցանձնարարէ զՏր կարգի բանին՝ խնդրելով լինել առ երկինքն . յոր մտ կամի ասել . մտցեն աղօթք իմ յերկինս, եւ անդ հանդիպեսցին առաջի քո : Արդ թէ տաճարու իմանայ առ եւ զբուն տաճարն երկնի . յոր մտ կամի ասել . այս՝ որ՝ զի զոր ուխտեցի քեզ , այն իմ ուխտ եւ աղօթք մատուսցին քեզ 'ի քում տաճարի , որ է յերկին . եւ այս-

ուստի աղաչեմ՝ զոր մաղթեմ · քեզ յողորմութի՛ն քո իոր յուսացեալ եմ, և ոչ 'ի սուտ կուռս և յունայն խնամս մարդկան, որպէս առնեն կռապաշտք և ամպարիշտք · զորոյ խօսի 'ի յաջորդ համարն :

Խորհրդարար՝ այս իղձ ակնարկէր 'ի փափաք անկեալ մարդոյ · որոյ 'ի նուաղին մեղօք՝ զրկեալ յերանական վիճակէ՝ կարդայր առ Ած, և աղաչէր զնա ընդունիլ զխնդրուածս իւր 'ի տաճար փառաց սրբութե իւրոյ, և արժանի առնել զինքն ժառանգութե նորին : Օայսօրիկ եդեալ խօսի այժմ զվիճակէ ամպարշտաց, և ասէ :

7 · Օէ ոչ պահէին զանհայնութե և զարդարութե, յողորմութե երեանց մերժեցան :

Որինչ գործիյչի սատ, յերիս կարգս վերածի, իբրզի կամ բարի են, կամ չար, և կամ անտարբեր · բարի են գործք առաքինութե · որպէս համբերել, ողորմիլ, աղօթել, ևն : Չար են գործք մեղաց · որպ գողանալ, նախանձիլ, հայհոյել, ևն : Անտարբեր են 'ի կողմանէ իւրեանց գործք բնութե · որպէս ուտել, ննջել, գնալ, ևն : Որք զհետ են բարւոյ, գտանեն զբարի : Որք գործեն զչար՝ զրկին 'ի ճշմարիտ բարւոյ · և եթէ կարծիցեն ևս գտանել զբարին՝ այն է սուտ : Որք վարին յանտարբերս, եթէ 'ի բարւոքն 'ի կիր արկցեն, համարին 'ի բարեաց սակի · իսկ եթէ ոչ՝ ունայն աշխատին : Օուաջնոյն ինչ ոչ խօսի սաղմոսերգն, զի յայտ է · յերկրորդն հայելով կոչէ զայն՝ սուտ · իսկ յերրորդն հայելով՝ ունայնութի : Այս քեզ որք 'ի սոսին դեգերին՝ յողորմութե պակասին, վոյ ասէ :

Օէ ոչ պահէին զանհայնութե և զարդարութե, յողորմութե երեանց

բեանց մերձեցան ։ Այսինքն՝ որք յանցաւոր լինին իւր յանանցս յարին՝ և որք ՚ի ստուէս իւր ՚ի ճշմարտութիս յօժարին, նոքա զրկեն զանձինս յողորմութենէ այ, և յողորմութէ իւրեանց ։ Այն՝ զի ըղդուան ածային ողորմութե փակեն ։ Իւրեանց՝ զի անողորմ գտանին առ ինքեանս ։ Եւ զի այս այսպէս է անշուշտ, մնկ ՚ի կատարեալն դնի ՚ի մերումս՝ որպէս և յեօթ" և յասոր" և յարաք" . յասէլն, մերժեցան կամ թողլն. թէպէտ յեբր՝
թողցեն դնի, և ՚ի լատ" թողուն ;

Զայս ճշմարտութի յառաջ բերէ մարգարէն իբր առակ ինչ՝ ՚ի ցուցանել զանողորմութի նոցա՝ որք արկին զնա ՚ի ծով. զի թէպէտ նոքա առանց անիրաւութե արարին զայս, որպէս յայտ է ՚ի կարգէ պատմութեն, բայց մարգարէն ոչ ՚ի նա, այլ յարարս նոցա հայելով, յարմարեցուցանէ նմ զայս բան. որպէս թէ ասէր. նաւավարքն՝ յորս ես ապաւինեցայ, անողորմ գտան առ իս. զի առ ապրեցուցանելդ զանձինս՝ արկին զիս ՚ի ծով. և զայս անխիղճ արարին, զի էին ունայնասէրք և մոլորապաշտք ։ Ունայնասէրք՝ զի ըստ ունայն մեծակրնկեցութե զհետ եղեն ։ Մոլորապաշտք, կամ յաւէտ սնապաշտք, զի զսուտ ածս պաշտէին, և առ նոսա աղաղակէին. թէպէտ և ոչ մնացին յայնմ մոլորապաշտութե. այլ ՚ի բանիցն յիշմանու, և յանցիցն՝ որք անցին ընոսա՝ զգաստացեալ՝ դարձան առ ած ։ Զայս աւն եղեալ
յիշմանու՝ կնքէ զբան իւր, և ասէ ։

8. Այլ ես ՚ի ձայն օրհնութե խոստովանութեան զոհեց քեզ. զոհեցից պատարագս իմ. և հատուցից ուխտս իմ ՚ի փրկութե ։

Այս բան հայի նախ ՚ի գովութի և ՚ի փառաբա-

նութեան ամենայնին բարութ · և երկիր 'ի գոհութեան և 'ի շնորհակալութիւն ամենայնին բարերարութեն · ըստ առաջնոյն դնէ զբառդ օրհնութեան · և ըստ երկրորդին դնէ խոստովանութիւն · վս̃ առաջնոյն խոստանայ պատարագս մատուցանել , և վս̃ երկրորդին՝ զուխտս փրկութեն կատարել · զայսոսիկ գիտելով՝ ասէ :

Այլ ես 'ի ձայն օրհնութեան խոստովանութեան եղէց քեզ · հատուցից պատարագս քո · և կատարեցից զուխտ իմ 'ի փրկութեան :

Նաւդ այն՝ 'ի մէջ բերէ ասա զորոշումն գործոյն յանձնանու 'ի գործոց նոցա , որք պահեն զունայնութիւն և զստութիւն · որպէս թէ ասէր · նոքա յընդունելն 'ի քէն զբարիս՝ ապերախտ գտանին · բայց ես յընդունելս իմ 'ի քէն զփրկութիւն ոչ գտայց ապերախտ · այլ եկից խոկմամբ յետ իմ , և մտեալ 'ի տաճար տն քո անդ մատուցից քեզ ձայնիւ ընծայութեն զօրհնութիւնս և զշնորհակալութիւնս · զենից և զոհս խաղաղականս , և զողջս գոհացողականս · որովք կատարեցից զուխտս իմ՝ զոր ուխտեցի քեզ 'ի նեղութեան իմում · և մնացից 'ի փրկութեն քում յաւիտեան :

Այս բանք ասին նախ՝ 'ի բերանոյ տն մերոյ · որ եկեալ յծ̃ , մատոյց հօրն երկնաւորի զամենակատարն օրհնութիւն գոհութեն և խոստովանութեն · և ընծայեալ զանձն պատարագ վս̃ մեր , կատարեաց զուխտ իւր՝ զոր ուխտեաց հօր 'ի փրկել զմեզ :

Երկրորդ՝ ասին 'ի բերանոյ մարդկային բնութ · որ մատնեալ 'ի ձեռս գիշաց և ախտից՝ զազատութի խնդրէր յայ̃ , խոստանալով՝ 'ի ձայն օրհնութեն խոստովան լինել նմա , և մատուցանել զհոգեւորն պատարագ , և կատարել զուխտ փրկութե իւրոյ յեկեղեցի տր̃ :

Նու

Նորոգ՝ ասէ 'ի բերանոյ ապաշխարող մեղա-
ւորի . որ 'ի դառնալ խորամ աւ ամ՝ ցնծալից
օրհնութ խոստովան լինելով նմ՝ մատուցանէ
պատարագս բարի գործոց , և կատարէ զուխտ
առաջադրութ իւրոյ . և հաւատէ տենչմամբ սրտի
հասանել 'ի ցնծութ յաւիտենականն ։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ. Գ.

Աղօթք գոհացողական բանից , յորում հաւատէ մարգարէն
ամենակալ զօրութեամբ այ , զոր եցոյց առ եբրայեցիս յե-
րանել նոցա յեգիպտոսէ , փոխարինելով զանգատս և զը-
ղջումն նոցա 'ի գերութենէ բաբելացւոց . և խորհրդաբար
ըղձանան ազգի մարդկան 'ի գերութենէ սատանայի ։

Աղօթք ապաշխարութեան մարգա-
րէի :
( 'ի սաղ. ճխթ. : )

1. Տէր լուայ զլուր քո և եր-
կեայ . Տէր հայեցայ 'ի
գործս քո և զարհուրեցայ :
2. * 'Ի մէջ երկուց կենդանեաց
ծանիցիս դու . 'ի մերձենալ ա-
մացն յայտնեսցիս , 'ի հասանել
ժամանակին երեւեսցիս :
3. * 'Ի խռովել անձին իմոյ 'ի
ժամանակի բարկութ զողորմութ
յիշեսցես :
4. * Այծ 'ի հարաւոյ եկեսցէ , և
սբն 'ի լեռնէ Փառանու :
5. * Յայտնեսցեն երկինք զգե-
ղեցկութ քոյ նորա . և օրհ-
նութ նորա լցցէ զերկիր :
6. * Ճառագայթք որպէս լոյս
լին-

Աղօթք Ամբակումայ մարգարէին եր-
գով :
( Ամբակ . Գ . 1 = 19 : )

2. Տէր լուր քո լուայ և
երկեայ . Տէր հայեցայ
'ի գործս քո և զարհուրեցայ :
'Ի մէջ երկուց կենդանեաց ծա-
նիցիս . 'ի մերձենալ ամացն
յայտնեսցիս . 'ի հասանել
ժամանակին երեւեսցիս :
'Ի խռովել անձին իմոյ 'ի բար-
կութեան զողորմութիւն յիշե-
ցես :
3. * Այս 'ի Թեմանայ եկե-
ցէ , և սբն 'ի լեռնէ և
ստուերախիտ լեռնէ :
Հանգիստ . Ծածկեցին զեր-
կինս փառք նորա . օրհնութ
նորա լի եղև երկիր :
4. * Ճառագայթք նր իբրև
լուսոյ

հարան 'ի նմանէ · և եղջիւրք
'ի ձեռին նորա փառն · և անդ
հաստատեցաւ զօրութիւն փառաց
նորա :
7 · * Յերեսաց նորա ելցեն հա-
րուածք · և զհետ շաւղաց նորա
երթիցեն մեծամեծք 'ի թափօր :
8 · * Եկաց և շարժեաց զերկիր ·
հայեցաւ և դիւրեաց զհեթանոսս :

9 · * Լերինք հալեցին և ան-
ցան · բլուրք յաւիտենից ճա-
նապարհք՝ որ 'ի սկզբանէն էին՝
խորտակեցին · և 'ի նմանէ դողա-
ցին ամ երկիր :
10 · * Տեսի զխորանս եթովպա-
ցւոց · խռովեցան բնակիչք երկ-
րին Մադիամու :
11 · * Միթէ 'ի գետս գետոց
բարկացաւ Տէր · կամ սրտ-
մտութիւն քո 'ի գետս գետոց · կամ
բարկութիւն քո 'ի ծովս ծովու :
12 · * Ելեր դու 'ի կառս քո ·
հեծելութիւն քո ձիովք ելեւ յե-
ղանելոյ քո :
13 · * Զօրութեան աղեղն քո ·
զինեա լուսաւորից քոյ արեգա-
կեր · զգեստ զարմանքն · զերկիր
դողդողեցեր՝ 'ի գետսէն ան-
ցուն՝ որ անդամն ըստ տա :

14 · * Աղտահարեսցին աղաղակելոյն
ձեռացն · լոյս ծագեաց տես-
գախ արփիւան · և ծագումն
լուսին դադարեալ :

15 · * Որպէս 'ի նետս լուսոյ
քոյ գնասցեն · որպէս 'ի լոյս ծա-
ղկախման սրոյ քո :
16 · * Բարկութեամբ զարթիցես 'ի վե-
րայ երկրի · և դողութեամբ կոխեսցես
զհեթանոսս :
17 · * Ելանելոյ 'ի փրկութիւն ժո-

Լոյս եղիցին · և եղջիւրք 'ի
5 · ձեռին նորա · * և հաս-
տատեաց զսէր սաստիկ զօ-
րութեան իւրոյ :
Առաջի երեսաց նորա գնաս-
ցէ բան · և ելցէ 'ի դաշտս
զկնի նորա :
6 · * Եկաց և շարժեցաւ եր-
կիր · հայեցաւ և հալեցան
ազգք :
Լերինք խորտակեցան բռնութ՟ ·
և բլուրք յաւիտենականք
հալեցան · զճնացս նորա յա-
7 · ւիտենականս · * փոխա-
նակ աշխատութեց տեսի :
Խորանք եթովպացւոց զար-
հուրեսցին · և խորանք երկ-
րին մադիամու :
8 · * Միթէ գետոց բար-
կասցիս տր · կմ՟ սրտմտութ՟
քո 'ի վերայ գետոց · կամ
սաստկութիւնք քո 'ի վ՟ր ծովու :
Զի ելցես յերիվարս քո · և
հեծելութ՟ քո փրկութ՟ է :

9 · * Լարելով լարեսցես
զաղեղն քո 'ի վերայ իշխա-
նութ՟ ասէ տր · գետոց պա-
10 · տառեսցի երկիր · * տեսց-
ցեն զքեզ ազգք և երկնես-
ցեն · որ ցանես զջուրս գնաս-
ցես :
Ետուն անդունդք զձայնս իւր-
եանց · զբարձրութ՟ սաստ-
11 · կութ՟ իւրեանց · * բար-
ձաւ արեգակն · և լուսին
եկաց 'ի կարգի իւրում :
Գնասցեն նետք քո 'ի լոյս 'ի
փայլումն փայլատականց զէ-
նուց քոց :
12 · * Սպառնալեօք նուաղե-
ցուցեր զերկիր , և բարկութ՟
զիջուսցես զազգս :
13 · * Ելեր 'ի փրկութ՟ ժո-

[illegible]

18 · * [illegible]

19 · * [illegible]

20 · * [illegible]

21 · * [illegible]

22 · * [illegible]

23 · * [illegible]

24 · * [illegible]

25 · * [illegible]

26 · * [illegible]

ղովրդեան քո · փրկել զօծեալս քո :

Արկեր զգլուխ անօրինաց մահ · զարթուցեր զկապանս մինչև ցպարանոցս իսպառ :

14 · * Հատեր · խորտակեցեր ափշութ զգլուխս բռնաւորաց · սասանեսցին 'ի նմա · արձակեսցեն զերասանակս իւրեանց իբրև զաղնանկ գաղտակեր :

15 · * Հաներ 'ի ծով զերիվարս քո' պղտորել զջուրս բազումս :

16 · * Զգուշացայ և զարհուրեցաւ սիրտ իմ 'ի ձայնէ աղօթից շրթանց իմոց · և մուտ դողումն յոսկերս իմ · և խռովեցաւ փոր իմ 'ի ներքուստ :

Հանգեայց յաւուր նեղութե' ելանել ինձ 'ի ժողովուրդ պանդխտութե իմոյ :

17 · * Զի թզենի ոչ տացէ զպտուղ իւր · և մի եղիցի ծնունդ որթոյ · ստեսցէ բեր ձիթենւոյ · և դաշտք մի արասցեն զկերակուր :

Պակասեսցեն հօտք 'ի ճարակոյ, և ոչ լիցին եզինք 'ի մսուրս :

18 · * Այլ ես 'ի տր ցնծացայց · և ուրախ եղէց յած փրկիչ իմ :

19 · * Տր ած զօրութի իմ · և կարգեսցէ զոտս իմ 'ի վախճան, և հանցէ զիս 'ի բարձունս յաղթել երգով նորա :

ԱՂԲ

# ԿԱՐՃԱԳԻՐ

## Աղօթք ամբակումայ մարգարէի ։

Այս մեկնագիր յաւելուածով լինի գտնի յամ- անչնչի մերում յասելն . * աղօթք ամբակումայ մարգարէի երգով ‖ . և յեօթ" գնի . * աղօթք ամբակումայ մարգարէի հանդերձ երգով ‖ . իբր թէ այս աղօթք ամբակումայ իցէ ասելի երգելով . կամ թէ իցէ երգելի աղօթք . ը̃ որոյ յարաք" գնի * աղօթք ամբակումայ ըստ (եղանակի) երգոյ ‖ ։ Իսկ 'ի լատ" փխնկ բառիս երգով՝ գրի . * վ̃ն անգիտութեց ‖ . որով նշանակի յանցանք կամ մեղք . ըստ որում յն̃ և իցէ մեղս լծորդի անգիտութե ինչ կամ մոլորութե մարդոյ՝ յուշադրելն ըստ օրինի . և ըստ այսմ այս բառս յայտ առնէ , թէ ամբակումյաղօթելն առ ա̃ծ՝ խնդրէ՛ մի հայիլ 'ի մեղս ժողովրդեանն , այլ յողորմութի իւր , և նովին աղաչել զնա 'ի գերութէ ։

Այլ վ̃ն ժամանակի ո՞ր գիտելի է . գիտա էր առ գերութ̃ն բաբելոցւոց ժամանակից երեմեայ մարգարէի . որ և տարեալ եղև 'ի հրէից̃ն 'ի բաբելոն առ դանիէլ , մինչդեռ էր նա 'ի գուբն առիւծուց ։ Եւ որպէս երևի 'ի կարգէ բանիցն՝ յառաջագոյն գրեալ էր զմարգարէութի իւր . յաւելեալ 'ի նոյն և զաղօթս զայս 'ի ցոյց սքանչելեացն ա̃յ՝ եթէ յելս որդւոցն ի̃լի յեգիպտոսէ , և եթէ յազատութե նոցա 'ի գերութէ բաբելոցւոց 'ի ձեռն կիւրոսի . որ հայէր յազատութի ազգի մարդկան 'ի ձեռն ք̃սի ։

Այս օրհնութի կամ աղօթք ամբակումայ առաւել քան զայլոց ձօնացեալ է խրթնաբանութբ և փո-

փոխարինելումն . որով և 'ի տեղիս տեղիս կարի իմն մթին տեսանի . և ուրեք ուրեք անմեկնելի :

## ԲԱՆ:

Բ. Տէր լուր քո լուայ և երկեայ . Տէր հայեցայ 'ի գործս քո և զարհուրեցայ :

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ:

Յառաջ քան զմտուցանել ամբաստանութեամբ զաղօթս զայս' որպէս և յայտ է' ընկալեալ էր յՈյ զաղօթ յայտնութիւն , նաև 'ի բանից մարգարէից զդէպս գուշակութիւն 'ի վերայ հարուածոց և տառապանաց ազգին իւրի ձեռամբ բաղդէացւոց , և 'ի վերայ ազատութեան նոցա 'ի գերութենէ բաբելացւոց ձեռամբ մարաց և պարսից : Հայելով յառաջինն երկնչէր . զի մեծ եղև այն հարուած և տառապանք . Հայելով և յերկրորդն' զարհուրէր , մի արդեօք յետ դառնալոյ 'ի գերութենէ անտի վերստին բարկասցի Աստուած 'ի վերայ նոցա : Ի սոսին ակնարկելով ասէ :

Տէր լուր քո լուայ և երկեայ . Տէր հայեցայ 'ի գործս քո և զարհուրեցայ : Լսելիք թէ ծանեայ Տէր 'ի լսողութենէ քումմէ և 'ի բանից ծառայից քոց' զոր հանդերձեալ ես առնել ընդ ազգն իմ' մատնելով զնա 'ի ձեռս բաբելացւոց , և ապա զբաբելացիս 'ի ձեռս մարաց և պարսից . և զայս գիտացեալ' երկեայ 'ի բարկութենէ քումմէ : Հայեցայ ես մտօք խմելք յայն գործ' զոր գինի ցուցանելոց ես նոցա' ազատելով զնա 'ի գերութենէ բաբելոնի . բայց զարհուրիմ ես յարդարութենէ քումմէ և 'ի վրէժխնդրութենէ դատաստանաց քոց . զուցէ 'ի յանցանել նոցա վերստին' ոչ խնայեսցես 'ի նոսա . այլ կրկին մատնեսցես 'ի գերութիւն : Ով Տէր այս,

կա-

կանէն և զայլոց թարգմանութեանց տես 'ի յաւելուած համարն։

Այս բան ասի և 'ի մեծամանոյ ազգին Նոյի 'ի հասա- րակի. և ըստ այսմ կամի ասել. Տէր զլոյս քո լուայ 'ի Սինայ լեռնէ ; և երկեայ. հայեցեալ և 'ի գոր- ծս քո՝ զորս ցուցեր առ թշնամիս մեր, և առ մեզ խոկ, մինչ առաւս զհամանօք սէրայ 'ի հարուա- ծել զժողովուրդ քո յօձից անտի՝ զարհուրեցայ. և զայսմանէ խօսի 'ի համարն Դ. յասելն. * ած 'ի հարաւոյ եկեսցէ իգ ‖։

Զայս ասէ մարգարէն և խորհրդածութիւն Ճշմար- տութեան՝ որ առ Քս. և այն՝ երկնչելով և զար- հուրելով, և յաւէտ ես զարմանալով, թէ զի- արդ որ անքննելին է յէութեն՝ խոնարհեալ յերկնից, և առեալ զծառայի կերպարան, զմերժեալ ազգ մարդկան փրկելոց լիցէ 'ի դերութենէ սատանայի. ընդ որ և հրեշտակք զարմացան։ Վասն երդէ շարականն 'ի կանոն ՃԻԵ. ասելով. * հիացան զօրք „ երկնից ընդ քո յանձն առնուլ զծառայի զկերպ. „ և մարգարէն զարհուրեալ ասէր. լուայ զլուր „ քո և երկեայ, նայեցայ 'ի գործս քո, և զար- „ հուրեցայ ‖ ։ Նաև այսպէս 'ի դիմաց եկեղեցւոյ բարբառելով ասէ 'ի կանոն ՃԻԷ. * լուայ զսքան- „ չելի տնօրէնութեան քո զլուր. Քզի անճառ բանդ „ ած մարմնացար 'ի կուսէն. վերածեր զեւ կուսին „ ադամայ. և զարմացայ ընդ քո ընդ անհաս „ մարդասիրութիդ ‖։ Նոյն կրկնելով 'ի կանոն ՃԻԸ ասէ. * լուայ զսքանչելի տնօրէնութեան քո զլուր. „ Քզի յերկնից խոնարհեալ մարմնացար 'ի սբ „ կուսէն. և խաչեցար ընդ աւազակսն. և զար- „ հուրեալ հիացայ ընդ քո ընդ անհաս մար- „ դասիրութիդ ‖ ։ Նաև այսպէս փառս տալով մար- դասիրութեան նորա՝ ասէ 'ի կանոն ՃԻԹ. * Տէր լը-

„ լուր

„ լուր քո լուայ ես, և զարհուրեալ դողացայ
„ յոյժ. նայեցայ 'ի գործս քո. և փառաւորեցից
„ զքեզ քո որպէս մարգարէն ||: Այլ թէ այն
գործ ազատութեան իւր զոր եդ, 'ի ձեռն որոյ
էր լինելոյ՝ և երբ, խօսի 'ի յաջորդ համարն, և
ասէ:

2. Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. 'ի մերձե-
նալ ամացն յայտնեսցիս. 'ի հասանել ժամանակին
երևեսցիս:

Մարգարէացեալ էր եսայի՝ թէ ա՛ծ ցուցանելոց է զայցելութիւն իւր առ իսրայելացիս 'ի ձեռն կիւրոսի և դարեհի. որոց զմին այսինքն զկիւրոս նմանեցուցանէ նստողի յէշ. ըստ որում սովորութիւն էր յայնժամ մեծամեծացն պարսից նստիլ յէշ ազնիւ. իսկ զմիւսն այսինքն զդարեհ նմանեցուցանէ նստողի յուղտ. ըստ որում սովորութիւն էր մարաց նստիլ յուղտս. (եսայ. իա. 7): Այսպէս և երեմիա գուշակեաց զազատութիւն իւր 'ի ձեռն կիւրոսի յետ տիրելոյ նորա 'ի վերայ պարսից և մարաց միանգամայն. և որոշեաց ևս զժամանակ ազատութեան յետ եօթանասուն ամաց (երեմ. իե. 11. և 12: իթ. 10.): Զայս ազատութիւն յայտնեալ էր ա՛ծ և ամբակումայ. ըստ որում տեսանի 'ի նախադրեալդ. յորոց յուսադրեալ, և 'ի կասկածական զարհուրմանց անտի սթափեալ՝ ասէ:
'Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. 'ի մերձենալ ամացն յայտնեսցիս. 'ի հասանել ժամանակին երևեսցիս:
Կամի ասել. 'ի մերձենալ եօթանասուն ամաց յայտնեսցիս, և այց արասցես իսրայելացւոց. և զայս այցելութիւն քո ցուցցես 'ի մէջ երկուց կենդանեաց. կամ ըստ ա՛ծաշնչին 'ի մէջ երկուց գազան թագաւորաց, այսինքն կիւրոսի և դարեհի: Իւ

ըստ

զի այսմ բանդ 'ի մէջ դնի աստ զի նշանակութիւն բա-
ռին 'ի յետս. ըստ որում ած 'ի ձեռն թմբրացն
ապստամբաց զիսրայելացիս. և 'ի հատանել ժամկին
երևեցաւ նոցա ցուցանելով նոցա փոքր բարկութեան զօ-
րութիւն իւր. որպէս գրեալ 'ի յաջորդ հատուածն:
Խորհրդաբար՝ այս բան հայի 'ի ժամանակ խա-
չելութեան Քրի. յորում 'ի մերձենալ աւուրց
յայտնեցաւ 'ի մէջ երկուց կենդանեաց կամ
դաղանաց, մեռանելով 'ի մէջ երկուց աւա-
զակաց, մահուամբ մահու յաղթելով. յոր
մին երգէ առ նա եկեղեցի ասելով յաւուր օր-
նութեան 'ի կան Չրն. * քանզի դու՝ որ յառաջ
,, քան զյաւիտեանս որդի հօր և հոգւոյն փա-
,, ռակից, եկեալ 'ի մէջ երկուց կենդանեաց
,, երևեցար՝ բարձրացար 'ի խաչին ‖. և 'ի կան
Չիդ. ասէ. * որ անքննելին ես յէութե ընդ հօր ան-
,, բաժանելի բանդ ած. խոնարհեցար 'ի լրումն
,, օրինաց և մարգարէից. և 'ի մէջ երկուց կեն-
,, դանեացն բարձրացեալ եղեր 'ի վերայ խաչին,
,, զոր յառաջն երգեաց մարգարէն ամբակում‖:
Օսոյն կրկնէ և 'ի կան Չէ. ասելով. * որ յան-
,, քննին ծոցոյ հօր խոնարհեալ որդի, երևեցար
,, 'ի մէջ երկուց կենդանեացն. զոր նախագու-
,, շակ տեսլեամբ ծանոյց մարգարէն‖: Նա և դար-
ձեալ 'ի կան Չիր. ասէ. * անեղին եղեալ մարդ՝
,, տեսեալ զարմանայր մարգարէն. և հեղու-
,, սեալ բևեռօք զմարմինն 'ի խաչին նկարդ ործեղ
,, 'ի մէջ երկուց կենդանեաց‖: Նա և 'ի կան Չլա.
ասէ. * տր զլուր քո լուայ վերօրհնեմք 'ի բազմ.
,, աչեայս. և տեսաք զքեզ մարմնով 'ի վերայ խա-
,, չին 'ի մէջ երկուց կենդանեացն. զոր երգեաց
,, ամբակումն նախիմաց սբ հոգւովն‖:
Ն. յղով իմն խորհրդական մեկնութ կամ մեծինդ

յարմարականաւ, բղխէ 'ի սրտից հարց զայս բան
վերածեն 'ի ժամանակ ծննդեանն քս, համա-
րելով թէ քս ծնաւ 'ի մէջ երկուց կենդանեաց ·
յոր միտ մեկնեն զբանն եսայեայ · ա · 3 · զոր
ասէ · * Ծանեաւ եզն զստացիչ իւր, և էշ զմսուր
տն իւրոյ || · զի որում ծնաւ նա յայնպիսի տեղ-
ւոջ՝ յորում կայր և մսուր · որպէս և աւետա-
րանիչն ասէ, թէ եդ զմանուկն 'ի մսուր · որ
ըստ սովորութե երկրին պաղեստինոյ էր մսուր
եզին և իշոյ · ըստ որոյ և վայելչապէս յարմարի
ասել, թէ որդին այ 'ի մէջ երկուց կենդանեաց
ծանուցաւ, և 'ի մերձենալ ամաց յայտնեցաւ ։
Յեբրայականն ոչ գնի այս բան · զի * 'ի մէջ եր-
կուց կենդանեաց ծանիցիս դու || · այլ համդերձ
յաջորդ բանիւն, և համդերձ բանիւս գործ,
( զոր եդ 'ի նախընթաց համարն ), դնի այսպէս ·
տեսի * տր զգործ քո, 'ի մէջ ամաց կենդանագոր-
ծեա զայն · 'ի մէջ ամաց ծանօթս արա || ։ Նոյն-
պէս դնի և 'ի լատ ։ Յասոր" դնի · * տր գործք
քո (յայտնեսցին) 'ի մէջ ամաց կենաց · 'ի մէջ
ամաց ծանիցիս || ։ Բայց մարթ է ասել, թէ վրի-
պակ ինչ մնեալ է յայդ, որպէս յայտ է 'ի թարգ-
մանութէ եօթ" և արաբ" · այլ եթէ չկայցէ և ս
վրիպակ, գիտութն բանին 'ի նոյն վերածի · զի
յազատութե որդւոցն իլի և որդւոց մարդկան առ-
հօրն · զի որում 'ի մերձենալ ամաց՝ հաճեցաւ
ած կենդանագործել զմարմին զնր, ցուցանելով առ-
նոսա զողորմութի իւր · զորմէ խօսի մարգարէն
'ի յաջորդ համարն ասելով ։

3 · Ի խռովել անձին իմոյ՝ 'ի ժամանակի բարկութեան ող-
որմութեան յիշեսցես ։

Ազգն իլի՝ որ 'ի գերութե էր, գրեթէ յուսահատ-

եալ էր 'ի փրկութե, և խառնեալ էր յանձն իւր. և յառաւելն տագնապին՝ զարհուրեալ 'ի բարկութեն այ՝ յողորմութի նորա գոչէր ։ Իսկ այժ՝ որ մատնեաց զնոյն յայն թշուառութի, հայեցեալ 'ի նոսա, շարժեցաւ յայն յոր գոչէին, ըստ յողորմութե իւր. և եցոյց նոցա զխնամս պաշտպանութե իւրոյ. յայս ակնարկելով՝ ասէ ։

Ի խռովիլ անձին իմոյ 'ի ժամանակի բարկութեան ողորմութեան յիշեսցես ։ Այսինքն 'ի տագնապիլ իմում 'ի տառապանս գերութե, և յամբոխիլ հոգւոյս 'ի յուսահատութե՝ վերստին ընկալայ 'ի քէն յոյս փրկութե. գիտելով թէ դու որ բարկութբ մատնեցեր զմեզ յայսպիսի անձկութիս՝ հանդերձեալ ես անցուցանել 'ի մէնջ զժամանակս զայս բարկութե յիշելով զողորմութի քո. և փրկելոց ես զմեզ 'ի վշտաց մերոց ։

Յեբր" և յասոր" և 'ի լատ" ապականի ասէն. * 'ի խռովիլ անձին իմոյ ‖. բայց կամ անկեալ է այն 'ի բաց, և կամ զօրութբ իմացեալ լինի. ըստ որում ներգործութբ դնի 'ի Թարգմանութե եօթանասնից և արաբացւոց ։

Խորհրդաբար, զայն ասէ և մարդկայինս բնութի. զի 'ի խռովիլ իւրում չարաչար՝ յորժամ ժմկ էր շարժելոյ բարկութեն այ 'ի վր իւր՝ յիշեաց նա զողորմութի բարեգթութե իւրոյ. և եցոյց նմա զփրկութի. զորոյ զօրինակն երևեցոյց առ Նինուէացիս. ըստ որում գրի 'ի շար իդ յասելն. * որ 'ի բարկութե զողորմութի յիշեցեր առ քո ստեղծուածսն ‖ ։

Այժմ տարացոյց բերէ մարգարէն երկար բանիւք զառաջին փրկութին՝ զոր եցոյց ած առ իէլ յելսն յեգիպտոսէ. և նախ ասէ ։

4 · ԱԾ 'ի հարաւոյ եկեսցէ · և սուրբն 'ի Փառան լեռնէ :

Զսոյն զայս ասաց և Մովսէս յօրհնութեան իւրում այլովք բառիւք՝ յերգելն անդ · * Տէր 'ի Սինայէ ,, եկեսցէ · և երևեցաւ մեզ 'ի Սէիրայ · և փու- ,, թացաւ 'ի լեռնէն Փառանու ‖ · ( Ելից · ԼԳ · 2 ) : Այլ թէ զիարդ , ծանիր · որպէս աւանդէ սա ինքն Մովսէս , յաղագս Այ զորդիսն Իէլի 'ի ծառայութեն եգիպտացւոց՝ առաջնորդեացն նոցա 'ի հարաւակողմն · և եկն և յայտնեցաւ առ նս 'ի Սինա լեռնէ՝ որ 'ի հարաւակողմն անդ · և անդ ետ նոցա զօրէնս և զիրաւունս ( Ելից · ԺԹ ) որոյ վս ասաց 'ի սկզբանն · * Տէր զլուր քո լուայ ‖ : Այլ 'ի հասանելն նոցա 'ի Սէիր Եդովմայ , և 'ի հարուածիլն նց անդ յօձից , երևեցոյց նոցա զփրկութի իւր յօձն պղնձի ( Թուոց ԻԱ · 4 ) : Դարձեալ 'ի հասանելն նոցա 'ի Փառան՝ ընտրեաց Ած զեօթանասուն դատաւորս · և ետ նոցա զհոգի իւր · որով երևեցոյց զինքն լինել գերագոյն դատաւոր նոցա ( Թուոց · ԺԱ · 25 · ) · տես և զոր ունիմք ասել 'ի ԿԷ օրհ" · համր · 2 : Զայսոսիկ երևմունս Այ՝ որք եղեն երևելի՝ 'ի մէջ բերէ մարգարէն իբր տարացոյց լինել 'ի կատարումն խնդրոյ իւրոյ՝ ասելով :

ԱԾ 'ի հարաւոյ եկեսցէ · և սուրբն 'ի Փառան լեռնէ :

Այսպէս ասել · որպէս երբեմն եկն Տէր առաջնորդութ Մովսէսի և Ահարոնի առ ժողովուրդ իւր 'ի կողմանցն հարաւոյ 'ի Սինայէ և 'ի Սէիրայ , և ապա 'ի լեռնէն Փառանու , և եցոյց նոցա զօրէնս և զփրկութի իւր , նոյնպէս եկեսցէ և այժմ առ նոյն ժողովուրդ իւր 'ի փրկել զնոսա 'ի գերութէ բաբելացւոց ձեռամբ Կիւրոսի և դարե-

հի 'ի հարաւոյ, այսինքն յերկրէն պարսից և մարաց. ըստ որում այս երկիր ընդ առ հարաւոյ դոլով՝ հարաւ համարիւր առ բաբելացիս ։

Խորհրդաբար եկն նա ինքն ա՟ծ 'ի փախչման աւուրց 'ի հարաւոյ. այսինքն յերկնից. զի երկինք փոխադրելով յերկիր զջերմութիւն՝ իբր հարաւ համարի. եկն և յանկոխ սնապատէն հարաւոյ, այսինքն յանապական կուսէ. եկն և 'ի կողմանց անտի հարաւոյ այսինքն 'ի բեթղեհեմէ, որ է 'ի հարաւակողմն ե՟մի, և այն՝ ջերմն սիրով. ըստ որում հարաւ՝ ջերմն դոլով՝ յօրինակ բերի ստատիկ սիրոյ ։ Եկն և որմն, այսինքն հոգին ս՟բ 'ի փառանն լեռնէ, որ օրինակէր զփոնն. և լցոյց անդ զառաքեալսն և զեօթանասուն աշակերտսն. ուր և հրատարակեցաւ օրէնք նոր ։ Եկն դարձեալ տէրն մեր՝ 'ի սեիրայ, այսինքն 'ի լեռնէն գողգոթայ. ուր իբրև զօձն պղնձի բարձրանալով 'ի խաչ՝ ազատեցոյց զազգ մարդկան 'ի ծառայութենէ մեղաց և սատանայի ։ Ուղղի այս լեառն գողգոթայ համարի 'ի միջակի, այսինքն 'ի միջակէտ երկրի ընդ հարաւակողմն, յայս հայելով ասէ շարական մեր 'ի կամ ձէ՟. * և
,, համբարձար կամաւ 'ի խաչ քո ք՟ս. որ կանդ-
,, նեցաւ քառակերպն 'ի միջակին դիտելով ընդ
,, հարաւ ‖ ։ Ուր բառդ դիտելով ընդ հարաւ՝ ըստ խորհրդոյն 'ի մէջ բերէ զդիտեալ տեղոյն՝ զգուշակեալն յամբակումայ և 'ի մովսիսէ՝ թէ * ա՟ծ 'ի հարաւոյ եկեսցէ ‖, կամ 'ի սեիրայ, որ 'ի նոյն հայի. զի և սեիր էր ը՟ հարաւակողմն ։ Յեբր" և յեօթ" փ՟նկ ասելդ 'ի հարաւոյ, գրի 'ի թեմանայ, որպէս է և յածաշնչի մերում. նոյն է և այս, զի թեման հարաւ թարգմանի. և դ՟րձլ թեման էր մայրաքաղաք եդովմայեցւոց որդւոյն եսաւայ՝ այն է, սեիր. և զի սա էր

էր 'ի Հարաւակողմն, որպէս ասացաք այժմ, փոքր հարաւոյ դնի աստ ։

Յեօթ" ետ յիշելոյ զլեառն փառան՝ դրի * 'ի Հովանաւորէ և 'ի Թաւէ || · իսկ ըստ գրի յա̃ծաշնչի մերում, * 'ի Հովանաւոր և յանտառախիտ լեռնէ || · Նոյն է և այս · զի փառան Թարգմանի հովանաւոր, եւ և Թաւ կամ անտառացեալ ։

Յա̃ծաշնչի մերում ասամնօք և 'ի Հ̃մրն · 14 դնի համփոփ · որպէս և յեբր" և յեօթ" · զորմէ տես 'ի ներածութ սաղմոսաց ։ Իսկ աստ Թերևս յայն ակնդնէ, զի ցուցեր զգալն ա̃յ 'ի Հարաւոյ՝ իբր Թէ հանդիստ առնու · և ապա սկսանի առաջի առնել և զայն՝ որ եղև 'ի գալն նր · և ասէ ։

5 · Զարդարեացեն երկինք զվայելչութ փառաց նորա · և օրհնութ նր լցան տիեզերք ։

6 · Ճառագայթք որպէս զլոյս հարան 'ի նմանէ · և եղջիւրք 'ի ձեռին նր փառաց · և անդ հաստատեցաւ զօրութ փառաց նր ։

Յիջանել ա̃յ 'ի սինա այլայլեցան երեսք երկնի · և 'ի ծածկել ամպոց, եղեն անդ ձայնք և փայլատակմունք · և երկիր սկսաւ սասանիլ · և անդ ետ ա̃ր զօրէնս իւր · (Ելից ԺԹ · 16 ⇒ 20) ։ Յայտնին հայելով ասէ ։

Զարդարեացեն երկինք զվայելչութ փառաց նր · և օրհնութ նր լցան տիեզերք ։ Յապառնի դնելով ոչ ցուցանէ զայն՝ որ լինելոցն էր, այլ որ եղեն · որպէս յայտ է 'ի բանից ա̃ծաշնչին ուր ասի · * ծածկեցին զերկինս փառք նորա || · ըստ որում է տեսանել և յեբր" և 'ի լատ" և յեօթ" և յասոր" և յարաբ" ։ Իսկ բ̃զլի յեբր" և յա̃ծաշնչի մերում փառք դնի, և 'ի լատ" վայելչութ, և յայլս այլ բառ, Թարգմանիչք մեր զերկուսին ևս 'ի միասին շարայարեն

եղին . *յայտնեցին երկինք զվայելչութիւն փառաց նորա || . դ̄ թէ յորժամ էջ ա̄ծ 'ի սինա լերան, երկինք անդէն այլայլեալ եւ յաղթեղատեսիլ ամպոց ծածկեալ, եւ մեծահնչիւն ձայնիւ փայլատակեալ, յայտնեցին՝ թէ մեծ է վայելչութիւն փառացն ա̄յ . եւ թէ նա է՝ որոյ օրհնութը լցեալ են տիեզերք ։

Նատանոր եթէ օրհնութը իմացեալ լիցի գովութի՝ որպէս գնիւ յայլս բազմեօթանասնից, սովին ցուցանի՝ թէ 'ի յայտնել երկնից զփառս ա̄յ՝ ցուցին եթէ ա̄մ երկիր պարտաւորի ձօնաչել զա̄ծ՝ ա̄ր փառաց, եւ օրհնել զնա ։ Իսկ եթէ օրհնութի իմացեալ լիցի լիութի բարեաց՝ սովին ցուցանի թէ ա̄մ երկիր լցեալ է 'ի բարութէն ա̄յ ։ Այսոի ապա եւ զձառագայթիցն՝ որք եղեն 'ի լերին անդ եւ ասէ ։

6 . Ճառագայթք որպէս զլոյս հարան 'ի նմանէ ։ Նշաինքն թէ յերեւիլն ա̄յ 'ի սինա լերին՝ ձառագայթք արձակեցան յերեսաց նո̄ր իբրեւ զլոյս յարեգական . ը̄ որում լուսով ծածկեալ էր նա ա̄մ զարեգական . ը̄ որոյ յերբ" եւ յայլս եւ յա̄ծաչնչի մերում ընի * ձառագայթ ( նո̄ր ) որպէս լոյս էր || . կամ * ձառագայթք նո̄ր իբրեւ զլոյս եղիցին || ։ Յաւելու եւ ասէ ։

Ի եղջերս 'ի ձեռին նո̄ր փառս ։ Եղջերօք ը̄ ձառին մարթ է իմանալ զփողս՝ որք հնչեցեալ լինէին 'ի սինա լերին . որպէս գրի ելից . ժթ . 16 . յոր մին կամի ասել . յերեւիլ անդ ա̄յ, ձայնք հնչեցին փողոց . որպէս թէ ա̄ծ 'ի ձեռին ունելով զնոսին՝ հնչեցուցանէր զայնս ։ Բայց որպէս ասացաք այլուր ('ի մեկն . սաղ . ժէ . 2 . եւ իա̄ . 21 . [illegible] .) բարուոք եւս է եղջերօք իմանալ զզօրութիւն եւ զիշխանութիւն . որով եւ ցուցանի, թէ

'ի

'ի ձեռին այ են ամ զօրութիւնք և իշխանութիւնք , զօրս և եցոյց յորդւոյն իւր ընդդէմ թշնամեաց նո- ցին 'ի ձեռն մովսէսի և յեսուայ իբր 'ի ձեռն երկուց եղջերաց ։

Եթէ այս բան սոսկապէս առ մովսէս հայիցի , մարթ է եղջերօք իմանալ զերկուս ձեռս նորին 'ի համբառնալ նր զնոսին ընդդէմ ամաղեկայ · (ե- լից · ժէ · 9 = 14 ·) և զի յայսցանէ սքանչելի ցու- ցաւ զօրութիւն այ՝ վնկ յարէ զկնի , և ասէ ։

Նա անդ հաստատեցաւ զօրութիւն փառաց նորա ։ Այս- ինքն՝ 'ի ցուցանել այ անդ 'ի սինա զկայծակունս և զմեծութիւն փառաց իւրոց՝ նովին հաստատեաց , և յաղթօղ եցոյց զզօրութիւն իւր , ևս և զփառս իւր ։

Այլ գիտելի է · զի յեբր" փխկ ասելոյ · * և անդ հաստատեցաւ զօրութի փառաց նր ||, դնի · * և անդ ծածկութի զօրութե նր || և 'ի լատ" դնի · * անդ ծածկեցաւ զօրութի նր ։ 'Ի սոյին վերածի և թարգմանութի ակիւղասայ , սիւմաքոսի , և թէոդիտոնի ։ Իսկ եօթանասունք փոխանակ ընթեռնլոյ յեբրայականն խէպեօն , որ նշա- նակէ ծածկութի , ընթերցեալ աշեպա՝ որ է սէր , և կամ ընթերցեալ խօպէպ , եդին՝ սէր սաստիկ · և թարգմանեցին այսպէս · * և եա զսէր սաստիկ՝ զօրութե իւրոյ || · ընդ որոյ և յանձ- նչի մերում եդեալ է · * հաստատեաց զսէր սաստիկ՝ զօրութե իւրոյ || · իբր թէ ասէր · հաս- տատուն և երևելի եցոյց զծածուկ սիրելութի փառաց և զօրութե իւրոյ · կամ թէ սաստկապէս սիրելի և ցանկալի եցոյց զփառս իւր , զոր ծած- կեալ ունէր ։

Զայսոսիկ յառաջ բերելով մարգարէին՝ սո- վորեք իբր տարացուցին մաղթէ՝ զի և 'ի գե-

լուծ անդ բաբելացւոց ցուցցեն երկինք զփառս իւր . և զարհուրեցուսցեն զգերիչս իւրեանց յազատութի որդւոցն իւր 'ի գերութե անտի 'ի ձեռն երկուց եղջերաց՝ այսինքն 'ի ձեռն կիւրոսի և դարեհի . սրով և լցցի երկիր օրհնութ իւն . եւս և ճառագայթք զօրութե և ողորմութե նր սփռեսցին ընդ քօք , և այնու հաստատեսցի և յայտնի երևեսցի առ նա սաստկութի սիրոյ նր , որ առն եօթանասուն ծածկեալ կայր 'ի նոցանէ :

Խորհրդաբար յայտնեցին երկինք զվայելչութի փառացն քի . նախ՝ 'ի ծննդեանն նր . (ղուկ . բ . 13 .) երկրորդ՝ 'ի մկրտութեն . (ղուկ . գ . 21 .) երրորդ՝ յայլակերպութեն . (մատ . ժէ . 5 .) և չորրորդ՝ 'ի խաչելութե . յորում երկինք ծածկելով և խաւարելով յայտնեցին զփառս խաչեցելոյն . և յաւանդել նորա զհոգին՝ հատան 'ի նմանէ ճառագայթք արդարութե և ողորմութե . արդարութե՝ 'ի վճարումն պարտուց մերոց . և ողորմութե՝ 'ի թողութի յանցանացն ադամայ , և 'ի քաւութի մեղաց մերոց , և յաւնելութի շնորհաց և պարգևաց իւրոց : Դարձեալ բղխեցին 'ի նմանէ երկու աղբիւրք իբրև երկու ճառագայթք 'ի լուսոյ : Եւ դարձեալ յիջանել նր 'ի դժոխս՝ ճառագայթք փառաց նորա իբրև լոյս հասին 'ի հոգիս արդարոց եղելոց 'ի գոգն աբրահամու՝ 'ի լուսաւորել , եւս և 'ի հոգիս դատապարտելոց՝ 'ի շլացուցանել : Նոյն և եղջիւրք 'ի ձեռին նորա , այսինքն աստուածութի և մարդկութի միաւորեալք 'ի միութե անձին նորա : Նոյն և առաքեալքն իբրև եղջիւրք փողոյ 'ի ձեռին նր՝ հնչեցուցանել զկատարումն հին օրինաց , և զհռչակումն նորոյս : Նոյն դարձեալ եղջիւրք խաչելութե 'ի ձեռին նր բևեռեցելոյ 'ի նմա : Եւ յայսմ

տեղի

նամի հաստատեցաւ զօրութիւն փառաց նր̅ · յորմէ եւ լցան տիեզերք օրհնութբք նր̅ ։ Ըստ սոցին երգէ եւ շարական մեր զայս բան ՚ի նման Ձի̅ր · առեալ ինչ ինչ եւ ՚ի 14 համարոյ , ասելով ·
* պատմեսցեն երկինք զփայլելուի փառաց քոյ ·
,, եւ ընկալեալ լուսաձեւ տարերց զգոյնս ա-
,, րեան անեղին · եւ օրհնութբ խաչելոյն լցան
,, տիեզերք ‖ ։ Ուր ասելովն * ընկալեալ լուսաձեւ տարերց զգոյնս արեան անեղին ‖ , յայտ առնէ զի̅ 14 համարոյն , թէ լուսաձեւ տարերքն , զի̅ արեգակն եւ լուսին ՚ի ժամ խաչելոյն ՚ի գոյն արեան խաչելոյն դարձան եւ խաւարեցան ։ Այլ թէ ՚ի լինել այսոցիկ զինչ զհետ եկին , զայնցանէ խօսի ՚ի յաջորդ համարան · եւ նախ ասէ ։

7 · Յերեսաց նորա ելցեն հարուածք · եւ ընթեր շաւղաց նր̅ երթիցեն մեծամեծք ՚ի թռչնոց ։

Այս հարուածք այն է՝ որ գրի ելից · ժբ̅ · 26 = 29 · քանզի աւանդի անդ՝ թէ ՚ի յամել մոլեկսի ՚ի ասինա լերին՝ որդիքն Իլի արարին խրեանց որթ ձուլածու · եւ երկիրպագին այնմ , եւ ասեն · այս են ածք քո Իէլ՝ որք հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց ։ Զայն տեսեալ Ած̅յ՝ բարկացաւ ՚ի վր̅ նց̅ · եւ կամեցաւ ջնջել զնոսա · բայց միջնորդ լեալ մովսէսի՝ դադարեցոյց զբարկութի նր̅ · եւ հրամանաւ նորին սպառուիրեաց ղեւտացւոց մտանել սրով ՚ի բանակն եւ դառնալ անդրէն՝ ծայրէ ՚ի ծայր կոտորելով զորդիսն Իլի՝ որոց եւ զխալեսցին · եւ նոքա փութացեալ կոտորեցին զոգիս բսան եւ երեք հազար · եւ զի այս հարուածք ելին ՚ի բարկութէն Ած̅յ , վասն այսորիկ ասէ ։

Յերեսաց նորա ելցեն հարուածք · եւ ընթեր շաւղաց նորա եր-

եբրայեցին մեծամեծս 'ի Թռչնոց : Որեսօք իմացեալ լինի սաստ յայտ յանդիմանութի վիճակնդրութե՛ն այ, կամ ներկայութի նր . յորմէ ելին հարուածք յորդիսն Իղի 'ի ձեռն ղևտացւոց, զորս կոչէ մեծամեծք 'ի Թռչնոց . զի մեծ էին նոքա յորդիսն Իղի, և Թռուցեալ էին 'ի պաշտօն այ . Նա զի իբրև մեծամեծ Թռչունք հասին առ մովսէս 'ի հրամայել նորա գալ առ ինքն : Իսկ վն գնալոյ նց զկնի տն՝ դնէ գնալ զհետ շաւղաց նր . տես 'ի գիրս ելից . լբ . 26 = 29 . ուր գրի այսպէս .
* և եկաց մովսէս առ դրան բանակին, և ասէ .
,, որ ոք տն իցէ՝ առ իս մատիցէ . հաւաքեցան առ
,, նա ամ որդիքն ղևեայ . և ասէ ցնոսա, այս
,, պէս ասէ տր այ Իղի . դիք իւրաքանչիւր
,, զսուր իւր յազդեր իւրում . անցէք, և այսրէն
,, դարձարուք դրանէ 'ի դուռն բանակիդ . և
,, կոտորեցէք իւրաքանչիւր զեղբայր, և իւրա-
,, քանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր զմեր-
,, ձաւոր իւր . և արարին որդիքն ղևեայ՝ որ-
,, պէս ասաց մովսէս . և անկան 'ի ժողովրդենէ
,, անտի յաւուր յայնմիկ քան և երեք հազար
,, արք, և ասէ ցնոսա մովսէս . լցէք զձեռս ձեր
,, այսօր տն ( այսինքն ձեռն 'ի գործ արկէք
,, այսօր վասն տն ) իւրաքանչիւր յորդի իւր և
,, իւրաքանչիւր յեղբայր իւր՝ տալ 'ի վր ձեր
,, այսօր օրհնութի ‖ :

Մարթ է զայս բան ամբակումայ մեկնել և 'ի վր այլոց հարուածոց՝ որովք եհար տր զԹշնամիսն Իղի . և ըն այսմ մեծամեծօք Թռչնոց հնար է իմանալ ոչ այնչափ զմեծամեծս ազգին Իղի, որչափ զայնոսիկ տծապաշտ անձինս՝ որք էին յօտար ազգս . յոր միտ կամի ասել . 'ի հարկանել այ զԹշնամիսն Իղի՝ անխնայեաց յայնոսիկ ազգս՝

որոց

որոց մեծամեծք գնային զհետ շաւղացն այ , որ-
պիսի էին բարեկամքն յոբայ , և այլք բազումք
առ ժամանակօք մովսեսի ։

Խորհրդաբար 'ի խաչելութեն քնի ելին հար-
ուածք ընդդէմ սատանայի և մահու . և 'ի յառ-
նել նր գնացին զհետ շաւղաց նր մեծամեծք 'ի
թունոյ , որ առաքեալք և աշակերտք . նա և
թագաւորք և իշխանք , ընդ որս և իմաստունք և
մեծատունք ։

Մանաւորապէս՝ այսոքիւք թռչնովք նշանա-
կին հոգիք արդարոց որք էին 'ի գոգն աբրահա-
մու . և զհետ եղեն շաւղաց տն մերոյ յիջանել
նր անդր կառօք հրեշտակաց , և 'ի կենագործել
նր զնոսա ։ Յայս միտ առնու շարական մեր զայս
բան 'ի կան Ճին այլով բնո տեսութբ . տես 'ի հա-
մարն 12 ։ Տես և 'ի շար ղը . 'ի վերջն ։

Գիտել արժան է աստ . զի յեբր" փինկ բառիս
հարուածք՝ այնպիսի բառ գնի որ ըստ այլևայլ կե-
տադրութե ընթերցեալ լինի տապառ և տապէռ .
կամ տխպէռ և տեպէռ ։ Եթէ ընթերցեալ լի-
ցի տապէռ կամ տեպէռ , նշանակէ մահ , կամ
ժանտախտ , կամ հարուած , և կամ անկումն .
ընդ որոյ 'ի լատ" և յասոր" գնի մահ . սոյնպէս է
և 'ի թարգմանութե սւմաքոսի . իսկ յակիւղա-
սայն՝ ժանտախտ . այլ 'ի քաղդէականն հրեշտակ
մահու . և 'ի սաղմոսարանի մերում հարուածք ,
զոր և մեկնեցաք այժմ ։ Եթէ ընթերցեալ լի-
ցի տապառ կամ տխպէռ , նշանակէ բան . ընդ որոյ
'ի հասարակ օրինակս եօթ" գնի բան , յասելն .
* առաջի երեսաց նր գնասցէ բան ‖ . և յարաբ"
գնի . * առաջի երեսաց նորա ելցէ խօսք ‖ . ուս-
տի և յածաշնչի մերում գնի . * առաջի երե-
սաց նորա գնասցէ բան ‖ ։ Եւ այս կրկնակի
մեկ-

մեկնի. մի՛ որ մերոյ գրելոցդ. յոր միտ կամի ա-սել. յերեսացն իմոյ ել բան, որ հրաման հար-ուածելոյ զյանցուցեալսն զայնոսիկ. երկրորդ՝ որ սորա նշանակութիւն բառիս բան. յոր միտ կամի ա-սել. յերեսացն իմոյ ելանէ բան. կամ թէ առա-ջի նորա դնայ հրամանն նորին: Իսկ խորհրդա-բար նշանակի ելումն բանին 'ի հօրէ, և գալ յԾս, և ձգել զհետ իւր զմեծամեծս 'ի թռչ-նոց՝ որ մեկնելոյ մեր 'ի վերագոյնդ :

Գիտելի է դարձեալ, զի յեբր՝՝ փոխանակ բա-ռիս թռչնոց՝ գրի աւչէֆ. զորմէ խօսեցաք 'ի դ. օրհնութեն՝ համար. 4. և 5: Այս բառ՝ լե-ռինք թարգմանեալ են բանսարկու, արաբա-ցիք՝ խրատ, ասորիք՝ թռչունք. որ որոյ յաւել-ուածով իմն եդեալ է 'ի սաղմոսարանի մերում. * մեծամեծք 'ի թռչնոց ‖ : Իսկ եօթանասունք թարգմանեալ են դաշտ, յասելն. * և ելցէ 'ի դաշտս որ առից նորա ‖. յորմէ և յԱծաշնչի մե-րում եդեալ է. * և ելցէ 'ի դաշտ զկնի նորա ‖. յոր միտ կամի ասել. ելցէ հրաման հարուածոց յերեսացն իմոյ. և յետ հարուածոյն ելցէ ժողո-վուրդն 'ի դաշտ, որ 'ի ճանապարհ անապատին. մինչև հասանել նոցա 'ի ժառանգութիւն երկրին աւետեաց. զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով:

8. Կացեալ և շարժեաց զերկիր. հայեցաւ և դիտեաց զհե-թանոսս :

Որպէս աւանդէ Աստուածաշունչն 'ի բազում տեղիս, զամս քառասուն շրջեցոյց Ած զորդիսն Իլի 'ի յանապատի, հալելով և դիտելով 'ի չափ մե-ղացն քանանացւոց, մինչև սպառեցան չարամիտք և չարակամք ժողովրդեանն Իլի. և 'ի լրանալ այոր՝

ոյոր՝ եւ տալ նոցա զերկիրն քանանացւոց . եւ
զի չափմամբ եւ , վ՛նկ ասէ :

Եկաց եւ չափեաց զերկիր . հայեցաւ եւ դիտեաց զհեթանոսս : Նստ եկաց՝ ցուցանէ աստ ոչ միայն զկայ առնուլ, այլ եւ յաղթող երեւիլ . որպէս թէ ասէր . յետ բազում հարուածոց զկայ եառ իւր , եւ ցուցաւ յաղթող թշնամեաց իւրոց իւրի . եւ ձեռամբ յեսուայ եւ չափել զերկիր նոյ 'ի ժառանգութիւն որդւոցն իւրի , դիտելով զհեթանոսս . յորմէ եւ շարժեցաւ երկիր , զի թէ երկեան բնակիչք երկրի :

Իսկ բառդ դիտել՝ որպէս եւ հայելն՝ կրկնակի կարէ իմացեալ լինիլ . մի՝ զի երկայնամտելոյն այ . յոր միտ կամի ասել . հայեցաւ 'ի հեթանոսս , եւ երկայնամիտ եղեւ առ նոսա , եւ տեսեալ թէ ոչ դառնան նքք 'ի չարեաց , դիտեաց՝ այսինքն վճռեաց , զի 'ի լրանալ չափու մեղաց նոյ՝ մատնեսցէ զնոսա 'ի ձեռս իսրայէլացւոց : Երկրորդ՝ բստ մերժելոյ զնոսա , յոր միտ կամի ասել . 'ի ժառանգեցուցանել այ որդւոցն իւր զերկիրն քանանացւոց՝ որք էին հեթանոսք՝ դիտեաց զնոսա , զի բարկութ հայեցաւ 'ի նոսա , որով եւ մաչեցան նոքա . յոր միտ յամենայնի մերում դնի . * հայեցաւ եւ հալեցան ազգք ||, սոյնպէս դնի եւ յեօթ" եւ յասոր" եւ յարաբ" . իսկ 'ի լատ" դնի ցրուեաց զազգս . յոր հայի եւ եբրայականն :

Խորհրդաբար , որդին այ 'ի խաչելութն եւ 'ի յարութն իւրում եկաց յաղթանակող մահու եւ դժոխոց . եւ չափեաց զերկիր 'ի ձեռս առաքելոց , զորս սփռեաց յծ ամ՝ քարոզել զարքայութն իւր . վ՛զի հայեցաւ ասէ 'ի նոսա՝ զի 'ի հեթանոսս , եւ դիտեաց զնոսա՝ առնել զնոսին իւր ժողովուրդ : Իսկ որք հակառակ էին՝ մերժեաց

զնո_

զնոսա . զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն՝ ասելով :

9 . Լերինք հալեսցին, և անապատք ջրարբեսցին . յաւի-
տենից ճանապարհք՝ որք 'ի սկզբանէն էին, հարթա-
ցին . և 'ի նմանէ դողասցէ ամ երկիր :

Զընտրեալն իւր ինքեան զիսրայելացիս 'ի ժառանգութիւն եթող զբազում ազգս, զոմանս խորտակելով, և զոմանս իբր անպիտանս մերժելով . ոմանց ևս ոչ յայտնելով զինքն՝ որպէս յայտնեաց իսրայելացւոց . բայց առանց մերժելոյ զնոսա : Յայտնապէս ակնարկելով ասէ :

Լերինք հալեսցին, և անապատք ջրարբեսցին . յաւիտենից ճանապարհք՝ որ 'ի սկզբանէն էին՝ հարթասցին . և 'ի նմանէ դողասցէ ամ երկիր : Լերինք բռնանացւոց 'ի մանաւորի առաւելք՝ համարեալ լինէին իբրև զլերինս բարձրացեալս իշխանութբք . և ազգք փղշտացւոց 'ի հասարակի առաւելք՝ երևէին իբրև զանտառս լցեալս բազմութբ և մեծութբ . և սոքա հալեցան և վատնեցան յերեսաց տն 'ի վանել նր զնոսա . ըստ որոյ ասէ * լերինք հալեցին և անտառք վատնեցին ‖ : Իսկ այլ տէրութիւնք և իշխանութիւնք՝ որք կանգնեցան 'ի սկզբանէ՝ որպիսի էին ասորեստանեայցն, քաղդէացւոցն, եգիպտացւոցն և այլոց բազմաց՝ որք նմանապէս էին իբրև լերինք և բլուրք, յանպիտանս համարեցան առաջի այ . և յաջորդութիւնք իշխանութե նոցա՝ որք էին 'ի սկզբանէ, զի 'ի սկսանիլ տէրութեց 'ի վերայ երկրի՝ կուրացան, զի մնացին 'ի կուրութե, և ոմանց ևս հալեցան, զի բարձան, կամ նուաճեցան . ըստ որոյ ասէ * որք 'ի սկզբանէ էին՝ կուրացին ‖ : Նաև բազում և այլ ազգք թէպէտ և ոչ խորտակեցան յայտ, և ոչ մերժեցան 'ի նմանէ ,

նէ , բայց և ոչ ըստ իսրայելացւոց ընտրեցան , այլ մնացին յինքեանս . յորս ոչ սակաւք ծանուցեալ զԱծ՝ և երկուցեալ յերեսաց նր՝ ծառայեցին նմա . և զի այսպիսիք ընդ ամ երկիր գտանէին , 'ի սոսա հայելով ասէ . * 'Ի նմանէ դողացի ամ երկիր || . ոչ զի այլք ոչ դողային , այլ զի սոցա դողումն էր 'ի փրկաւոր երկիւղէն Այ .

Այս բանք կարեն հայիլ և 'ի կործանումն հրեշտակաց , որք յապստամբելն յԱյ՝ իբրև ըզլերինս հալեցան , և իբրև անտառք վառեցան . և ճանապարհք նոցա , այն խորհուրդք նց՝ որք կատարեալ էին 'ի սկզբան՝ կուրացան . յորմէ դողացաւ ամ երկիր , այն բնակիչք երկրի :

Եւ քանզի այս ամ կարգեցաւ ըստ յաւիտենական յառաջադրութեն Այ , վն յաւելու դնել . Յաւիտենից ճանապարհք : Այս բանք մթացուցեալ են յոյժ զմիտս բանին . և յարելով 'ի բայդ կուրացին , այլատարազ իմն իմաստ ընծայեալ են առաջի . իբր թէ այն ճանապարհք իցեն կուրանալոյ . բայց ոչ է այնպ . զի բառդ ճանապարհք՝ ոչ հայի աստ 'ի գործս մարդկան , այլ 'ի գործս Այ . որպէս թէ եդեալ էր . այսպ լիցի , վն զի յաւիտենական ճանապարհք Այ կամ գնացք նր՝ այսպ են կարգեալ . յոր մտո յածանչնի մերում դնի . * զգնացս նորա յաւիտենականս || . իբր թէ ասէր . տեսի՝ զի Ածն արար զայսոսիկ ըստ յաւիտենական գնացից իւրոց , այն ըստ յաւիտենական վճռոց իւրոց : Նիւթումն մարգարէին է շարժել զԱծ 'ի գութ 'ի վր ժողովրդեանն Իլի առ ազատելոյ զնոսա 'ի գերութէ բաբելացւոց , և խորտակելով զթշնամիս նոցա տանել զնս յերկիր իւրեանց :

Խոր

Խորհրդաբար 'ի յառնել տն՟ մերոյ եւ 'ի քարոզել աւետարանի նորա՝ որք միանգամ ընդդէմ դարձան՝ եթէ մեծամեծք էին իբրեւ զլերինս՝ հալեցան, եւ եթէ փոքունք էին կամ ամբոխք իբրեւ զբլուրս եւ իբրեւ զանտառս՝ վատնեցան, կամ կակղացան: Իսկ գործք հեթանոսական կրօնից՝ որք 'ի սկզբանէ էին, քն՟ 'ի վաղ ժամանակաց՝ խափանեցան. եւ որք 'ի նոցանէ յամառեալ գտան՝ կուրացան. եւ երկիրս ամ՟ դողաց 'ի նմանէ:

Յայլ փոքր մի այլազգ կարգի այս բան: Յեբր" գնի. * խորտակեցան լերինք մշտնջենաւորութ.
,, կորացուցին զինքեանս լերինք յաւիտենից.
,, Ճանապարհք յաւիտենից նմա ||: Յասոր" գնի.
* ցրեցան լերինք՝ որք 'ի յաւիտենից էին. եւ խո-
,, նարհեցան բլուրք, որք էին 'ի յաւիտենից.
,, ինքեանքեն գնացք յաւիտենականք ||. 'Ի լատ"
գնի. * խորտակեցան լերինք յաւիտենից. կո-
,, րացան բլուրք աշ՟. 'ի Ճանապարհաց յաւի-
,, տենականութեն նորա ||: Յեօթ" գնի քն՟ նծա-
ղնչին մերոյ այսպէս. * լերինք խորտակեցան
,, բռնութ՟. եւ բլուրք յաւիտենականք հալե-
,, ցան, զգնացս նորա յաւիտենականս ||. 'ի սոյն
մերածի եւ արաբացւոցն: Որքին եւս քն՟ նախագրելոցդ մեկնին 'ի ցուցանելն զհալիլ եւ զվատնիլ լերանց եւ բլրոց՝ քն՟ մեծաց եւ փոքունց ըստ առաջադրութեն այ՟ եւ քն՟ նախախնամութե նորա. զի այսորիկ են Ճանապարհք եւ գնացք նորա յաւիտենականք: Օ այսոսիկ եղեալ՝ յաւելու ասել:

10. Տեսի զբանակս Եթովպացւոց. խռովեսցին բնակիչք վրանացն Մադիամու.

*Քուշացիք իմացեալ լինին տարբերութեամբ . ըստ որում 'ի քուշայ սերեցան նոքա, որք և կոչին արևելեան եթէովպացիք . իսկ ազգ մադիամու է կրկին . մին սերեալ 'ի քետուրայ բնակեալ յարևելակողմն մեռեալ ծովուն : Իսկ միւսն է այլ ազգ բնակեալ յապառաժն արաբիա, յոր փախեաւ մովսէս յաշէ փարաւոնի . և թուի թէ սա է՝ որ յիշի աստ յասելն .

Տեսի զխորանս եթովպացւոց . խռովեսցին բնակիչք վրանացն մադիամու :

Օ սոսա 'ի մէջ բերելով զայս ազգս ևս տայ իմանալ՝ եթէ զքաղաքայինս՝ որպիսի էին քուշացիք, և եթէ զվրանաբնակս՝ որպիսի էին ազգք մադիամու . Մէ ամենեքին ասէ՝ լուեալ զոր արար մծ ընդ իէլ՝ զարհուրեցան և խռովեցան . որպէս և թշնամիք եկեղեցւոյ՝ որք նշանակին քուշացւովք, ևս և դևք՝ որք նշանակին բնակչօք վրանացն մադիամու, խռովեալ զարհուրեցան ըն արարմանքն . Իսկ տեսի ասելով՝ ցուցանէ զստուգութին ասացելոցն . և զայս դնէ 'ի փափաքմանէ սրտի իւրոյ առ 'ի տեսանել և զբաբելացիս և զայլ թշնամիս իւրեանց զարհուրեալս յաղագս իւրեանց 'ի գերուէ .

Յածաշնչի մերում կարգ շարադրութե այսր համարոյ այլազգ դնի, և մթին՝ յասելն . * փո-
,, խանակ աշխատուեց տեսի . խորանք եթէով-
,, պացւոց զարհուրեցան և խորանք երկրին մա-
,, դիամու ‖ . ուր յեբր" և 'ի լատ" և յասոր" բառդ խորանք կմ վրանք՝ դնի իբր խնդիր բայիդ տեսի . և փխկ աշխատուե դնի անօրէնութի յասելն . * փխկ անօրէնուէ ( կամ ըն աշխատութ ) տեսի զվրանս քուշացւոց եա ‖ . որպէս թէ ասէր . փխկ զի քուշացիք և մադիանացիք աշխատեցան

յանօրէնութե , խորանք նոցա կործանեցան , և բնակիչք վրանացն մադիամու չարչարեցան · որո՛վ և այսօր իսկ տեսի ասէ ։ Պատանեայ ասա 'ի խօսի՛լ զորոց լռեաց 'ի վերոյ , և ասէ ։

11 · Միթէ 'ի վերայ գետոց բարկացեալ ես տր · կամ սրտմտութի քո 'ի վերայ գետոց · կամ բարկութի քո 'ի վերայ ծովու ։

Այս բան հայի յանցս որդւոցն իսրի ը ծովն կարմիր , և ը յորդանան գետ · բայց յետևաառջութբ , և հարցական ձևով յասելն ։

Միթէ 'ի վերայ գետոց բարկացեալ ես տր · կամ սրտմտութեան քո 'ի վերայ գետոց · կամ բարկութեան քո 'ի վերայ ծովու ։ Կամի ասել · միթէ բարկացեա՛լ էիր 'ի վերայ կարմիր ծովու և 'ի վերայ յորդանան գետոյ՝ զի այնպիսի բուռն զօրութեամբ բաժանեցեր զնոսա առ 'ի տալ անցս ժողովրդեան քում · որ է ասել · կամելով անցուցանել զժողովուրդ քո՝ պատառեցեր զծովն կարմիր 'ի ձեռն մովսէսի , և ընկղմեցեր զհալածիչս նոցա · որով բաժանեցեր և զգետն յորդանան 'ի ձեռն յեսուեայ · զի ժողովուրդ քո անցեալ ընդ այն՝ խորտակեսցեն զթշնամիս քո ։ Որում կամի հետևեցուցանել և ասել · իցէ՞ թէ բաժանեսցես և զեւփրատ գետ , և անցուսցես զմեզ յայնկոյս , և տարցիս յերկիր մեր · ուր աւանդեն հրէայք՝ թէ յիրաւի յաղթանակն այ զինէլ 'ի գերութէ բաբելացւոց՝ պատառեաց զեւփրատ , և այնպէս անցոյց զնոսա ը այն ։

Խորհրդաբար սոքիմբք ցուցանի պատառելն քի զծով մեղաց և զգետս բազմազան ախտից · դորմէ տես 'ի շար լը · 'ի հարցն ։ տես և 'ի շար ձիը · ուր գետովք և ծովու իմանայ հեղինակն զբրնա

նակալութին խաւարասէր իշխանին , զոր խորտա-
կեաց տէրն մեր 'ի տարածելն զձեռսն ձեռա-
բեր 'ի խաչին և յաղաղակելն առ հայր · զորմէ
ունիմք խօսել 'ի համարն 16 : տես և 'ի չար-
չիկէ · ուր յայս խորհուրդ դարձուցեալ եկե-
ղեցւոյ զիմաստ բանին՝ ընծայաբերի յուրա-
խութեն 'ոք ի մեծամօրն : Նաև զի այս իմ կատարե-
ցաւ 'ի մատնութեան զօրութէ ամն մերոյ , վճիկ յարե-
զկնի , և ասէ :

12 · Աչք տեառն 'ի վերայ արդարոց · և ականջք նորա 'ի խնդ-
րուածս նոցա :

Փոխաբերական և այլաբանական զոյգք են այ-
սոքիկ · որովք ցուցանի ահեղութիւն և մեծութիւն
վրէժխնդրութեն այ · որպէս սովորութի է գրոց՝
զմեծութի իրացն նմանութեամբ յայտնել · ըստ
որոյ ասէ :

Աչք տեառն 'ի վերայ արդարոց · և ականջք նորա 'ի խնդ-
րուածս նոցա : Ականջքն այ իմացեալ լինին նախ՝ զօ-
րութիք նորա · երկրորդ՝ զօրք երկնից , որք են ևս
իբր երեխայք այ · յօր մեծ յամենայնի դնի · յե-
րեխայս քո : Նաև հեծծելութ՝ որոյ փոխան յերբ"
և 'իլայտ" և յասար" դնի կառաձգութի կոմ կառք ,
նշանակի սաստ մարտ պատերազմի · ըստ որում
իբր 'ի բազում հեծանելով յերեխայս մարտն-
չին մարդիկ : Բստ այսոցիկ նմանութեանց կամի
ցուցանել մարգարէն զվրէժխնդրութեն այ՝ զոր
եցոյց առ թշնամիս · որպէս թէ ասէր · տր 'ի խն-
դրել քո զվրէժ 'ի թշնամեաց քոց՝ եղև փրկութի
որդւոցն իէլի , սոյնպէս ցոյց և այժմ զնոյն վրէժխնդ-
րութիւն առ դերբիս մեր , զի և մեզ շնորհեսցէ
փրկութի 'ի գերութէ մերմէ :

Խորհրդաբար՝ կառօք նկարագրի խաչն կենսա-
բար ·

բոլ. յոր եւ տէրն մեր, եւ 'ի նմա էառ զկի՛ժ
'ի սատանայէ. որով եւ կատարեցաւ փրկութի
մեր. յոր միա երգէ եկեղեցի յաւագ օրհնութին
'ի կան Ձիղ. ասելով. * որ 'ի կառս քերովբէա
,, կանս վերամբառեալ համբարձիր խնկակից հօր
,, եւ որք հոգւոյն, համձեցար երանել 'ի կառս
հողեղէնս. եւ հեծելութբդ քո փրկեցեր զտխե_
,, ղերս՝ վերականգնելով զանկումն ադամայ || :
Եւ 'ի կան Ձիէ ասէ. * մարգարէին ձայնեալ
,, զքո բազմութիդ, ասէ, ելեր դու 'ի կառս քո փրկ_
,, կութե. եւ խաչին ջախջախեալ զգլուխ վիշա_
,, պին, որք յարութբդ զմեզ կենդագործեցեր || :
Սոյնպ եւ 'ի կան ՁԼ ասէ. * որ յաթոռս հրա_
,, կերպեանս բազմէիր ը հօր՝ բարձրացար կա_
,, մաւ 'ի կառս խաչին. եւ հեծելութբդ քով ազա_
,, տեցեր զգերեալսն || : Եւ 'ի կան Ձլա ասէ.
* հեծելութիդ քո քն փրկութի եղեւ ազանց. յե_
,, լանելն քո 'ի կառս զուարճացան արարածք.
,, եւ օրհնութբ նոր երգով լցան տիեզերք || : Եւ
դարձեալ 'ի կան Ձլբ ասէ. * զիշխանութեար
,, զյարութիդ գուշակեաց մեզ մարգարէն. ասէ՝
,, ելեր դու 'ի կառս (խաչի) քո. հեծելութիդ
,, քո քն փրկութի եղեւ յելանելդ քո || : Եւ 'ի
կան Ձիէ ասէ. * բարձրացար 'ի խաչին առնե_
լով զհեծելոյն փրկութե || :

Արդ է կառօք իմանալ աստ եւ զքերովբէս.
որովք էջ հոգին քսի 'ի դժոխս. Եւ զի յերբ
փոխեցանելոյ՝ ձիաւորիլ դնի, յայս հայելով ասի
'ի շարականի 'ի կան. Ձիթ. * ձիաւորեալ ոչ_
,, միայն 'ի վեր բուսաբեր ումաստոյն, այլ քրով_
,, բէական հառաքն ստորինեալ 'ի դժոխս՝ կե_
,, նագործեաց հզօրեղապէս զերամն արդարոց ||.
Թէ յետ ընեռել 'ի վեր բուսաբեր ումաստոյն

այս

այսինքն 'ի մի՛ր խաչին՝ էջ 'ի դժոխս փրկելովք
իւր կամօք . և եհան անտի զարդարսն .
Իսկ երկնաւորք զի որում դնի յերր" և յայլս և
յամենայնի մերում, նշանակին առաքեալքն, զորս
սիրեաց որն մեր յաշխարհ նմ աւետարանել
զփրկութիւն իւր . յոր մինն երգէ եկեղեցի 'ի շար Ձ՛Ն
ասելով . * որ կուսական ծնընդեան մեր 'ի փրկութի
,, յայտնեցաւ, և առաքեցեր զերկնաւորս քո քա
,, րոզս՝ աւետարանել զկենսաբեր յարութիւն ||.
Նարձեալ և 'ի շար ՁՏՆ . ասէ . * երևեցար 'ի
,, փրկութի նախահօրն ադամայ, և առաքեցեր
,, զերկնաւորս քո քարոզս զքո՝ աւետաւոր յարութեն,
,, որք (պատերազմեալ զի զօրութի սատանայի) զի-
,, հանուր պատմեցին զմիւսանգամ քո գալուս-
,, տեան ||: Իսկ թէ որպիսի գործեօք և անօթիւք
վճարեցաւ պատերազմն այն՝ զոր յիշեաց, յայտ
առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով :

13 . Օրհնեա զՏէր հր . Օրհնեա հաղորդիւ հող
Տեառն [illegible] . Օրհնեա [illegible] . Օրհնեա [illegible]
[illegible] 'ի [illegible] անձրև , որ [illegible] :

Հեղս խօսի առ ահեղ ցուցանելոյ զկերպարանագ-
րութիւն այ և զանհասանելի եղանակի գործոց նր .
ուստի և նմանութի հզօրեղագոյն իրաց առաջի
դնէ զայն՝ յասելն :

Օրհնեա զՏէր հր . Օրհնեա հաղորդիւ հող [illegible] :

Զեղանակս իմացեալ լինի աստ բարկութիւն այ .
իսկ նետիւք գործք բարկութե նորա : Որդ բար-
կութիւն այ իբրև թէ 'ի քուն էր զամն բազում
'ի մեծ եգիպտացւոց և 'ի մեծ այլոց ամպարիշտ ազ-
գաց . իսկ 'ի լնուլ չափու մեղաց նոցա , և յա-
ղաղակել որդւոցն իէի առ այ՝ զարթեաւ 'ի քնոյ ,
և լարեցաւ . և զնետս պատուհասից որք ժողո-

վեալ էին 'ի վրէժխնդրութենէ նորա իբրև 'ի կատարածս, և ծարաւեալ էին արեանն նոցա, արձակելով 'ի նոսա՝ արբեցոյց զնոսա. որ է ասել. չարաչար ենհար զազգսն՝ յորոց վերայ բարկացեալ էր ։

Նա՝ զի զայս արար իբր երդնլով առ 'ի խնդրելոյ զվրէժ՝ յեբր՞դնի. * մերկացմամբ մերկացի աղեղն քո. երդմունք ցեղից ասէ (տր) ‖ ։ Նա՝ 'ի լատ՞ դնի. * յարուցանելով յարուցես զաղեղն քո. զերդմունս առ ցեղս՝ զորս խօսեցար ‖ ։ Ներ ցեղիւք եթէ իմացցին ցեղք Իղի, մտ բանին լինի այս. լարեսցես զաղեղն քո ըստ երդմանն քո, զոր երդուար որդւոցն Իղի՝ առնուլ զվրէժ նոցա 'ի թշնամեաց նոցին ։ Իսկ եթէ իմացցին թշնամիք՝ դարձեալ ըստ նմին մեկնին ։ Բայց ՔՂի եբրայական բառքն՝ որք դնին աստ՝ յայլեայլ նշանակութիւս հային, առոլէք Թարգմանեցին փոքր մի ըստ մերում այսպէս. * տքնելով տքնեսցի (կմ զարթնլով զարթիցէ) աղեղն քո. և յագեսցին նետք ըստ փառաւոր հրամանի քո ‖ ։ Նոյն եօթանասունք Թարգմանեցին. * լարելով լարեսցես զաղեղն քո 'ի վր գաւազանաց ասէ տր ‖ ։ Ներ գաւազանն հայի 'ի ցեղսն Իղի, որք էին շառաւիղք յակոբայ. կարէ հայիլ և առ իշխանութի թշնամեաց. յոր մտ թերևս յանձանձի մերումեղեալ է. * լարելով լարեսցես զաղեղն քո 'ի վերայ իշխանութեն ասէ տր ‖ . կմ ըղեմ իշխանութե նոցա, որ չարչարէին զորդիսն Իղի ։ Նա՝ զի 'ի գործել այ զայս՝ պատառեաց և զծովորպէս ասաց 'ի վերոյ, և ցամաքեցոյց զյորդանան գետ, զայնցանէ ես կրկին խօսի. և նախ զցամաքութե յորդանանու խօսելով ասէ ։

Զ գետս շրջանեցեր ։ Յորդանակի դնելով՝ զգետս՝ ոչ

ցու-

ցուցանէ զբազում գետս ցրուել , այլ թէ զմին ցրուելով ՚ի բաժանելով՝ եցոյց թէ զնոյն ցրուել կարող է :

Յաստուածաշնչի մերում որպէս և յեօթ՝ այս բան շրջան դնի . որ է ∗ գետոց պատառեցաւ երկիր ‖ . Իսկ յեբր՝ դնի . ∗ զգետս պատառեցեր զերկիր ‖ . կամ ըստ լատ՝ ∗ զգետս պատառեսցես երկրի ‖ . կամ ըստ ասոր՝ ∗ երկիր գետովք պատառեսցի ‖ . ուր յարաբացին դնի . ∗ յերեսաց ջրոց պատառեսցի երկիր ‖ : Այլքին ես ցուցանեն զպատառումն գետոց՝ իբրև զպատառումն երկրի : Այլ զի այսու գործովք զարհուրեցոյց ած զազգս , վնկ յաւելու ասել :

Օ լերինս դողացուցեր : Այսինքն թէ պատառելով զգետն յորդանան՝ սասանեցուցեր զբնակիչս երկրի . յոր միտ յաստուածաշնչի դնի . ∗ տեսցեն զքեզ ազգք (՚ի սքանչելիս քո) , և երկնեսցեն ‖ . կամ ըստ եբր՝ և ըստ ասոր՝ . ∗ տեսին զքեզ (ազգք) և դողացին լերինք ‖ . ՚ի սոյն հայի և թարգմանութին լատ՝ յասելն . ∗ տեսին զքեզ և ցաւեցան լերինք ‖ : Յաւելու ասպա ՚ի սովին ասելով .

՚Ի սաստկութէ անձրևի , որ անցանէին ընդ այս : Այս բան հայի ՚ի յորդութի ջուրց գետոյն՝ զոր եդ . որպէս թէ ասէր . ցրուեցեր զգետն յորդանան՝ որ առատացեալն էր ՚ի սաստկութէ անձրևաց՝ որք իջանէին և անցանէին ըստ նա . և սովին դիտէ ասել . եթէ զայսպիսի յորդահոս գետ պատառեցեր , քանի ես զամենայնջուր գետս . և զայս ասէ՝ ՚ի ցուցանել , թէ դիւրին է այն զայսպիսիս գործել . յոր միտ յաստուածաշնչի դնի ըստ եօթ՝ . ∗ որ ցանես զջուրս գնացից ‖ . որ թէ զջուրս որք սաստիկ ընթանան , որպէս և կամիս ցրուես , և իբր փոշի ցանես . կամ իբրև զհեղեղ հոսես :

Իսոր հրդաբար, տե՛րն մեր լուսելով 'ի խաչին ըզ- մարմին իւր իբրև զաղեղն՝ ձգեաց և եհար ըզ- նետս մեղժխնդրութե՛ իւրոյ 'ի սատանայ. արձա- կեաց և զկայծակունս արդարութե՛ 'ի մէ՛ջ նորա. և հեղմամբ արեան իւրոյ ցրուեաց զգետս մե- ղաց, որք 'ի սատանայէ անձրևէին չարութե՛ն սատա- նայի յորդեալ գնային ։

Շարական մեր զբառդ անձրև, կի՛ որպէս գնի յանձաւճնչի՝ զբառդ Ջուր՝ յայլ իմն գերազանց տե- սութի փոխաբերելով՝ վերածէ 'ի ք͞ս իբր յաղ- բիւր կենաց. որ մարմնացեալ 'ի մ͞րյ կուսէն՝ շի- ջոյց զբոց մեղաց մերոց. ուստի նմանադելով սա- կոյն մարիամ 'ի կան Ճիլթ, ասէ. * զի աղբիւրն ,, կենացքն անապական մարմնացաւ 'ի քէն կոյս. ,, զմեղս մեր բոցակիզեալ շիջոյց. վ͞ն զքեզ ,, անդադար բարեբանեսցուք ||: Զայսոսիկ ե- դեալ խօսի առս մարգարէն և զայնցանէ՝ որք եղէն 'ի պատառմամն ջուրց կարմիր ծովուն. և ասէ ։

14. Նոյնպէս աղաղակեցին ձկնազէս. լոյս ժայ- լաճ արեգական արգելու, և ծագումն լուսնին դադարեաց ։

Որպէս տեսանի 'ի գիրս Ելից ժդ. 14. = 31. 'ի պատառել մովսէսի զծովն կարմիր՝ բազմահեղ գործք գործեցան, որոց զոմանս գրեաց նախինքն մովսէս, զոմանս դեբորա, զոմանս սաղմոսեր- գուն, և զոմանս գրէ սա ասելով ։

Նոյնպէս աղաղակեցին ձկնազէս. լոյս ժայլաճ արե- գական արգելու. և ծագումն լուսնին դադարեաց ։ Մ՝ յոփնքն թէ 'ի պատառիլ կարմիր ծովուն՝ ան- դունդք այնր ծովու ձայն ահեղ հնչեցին. և ամպք սևագին պատեցին զերկինս. զորով լոյս փայլ

փայլման արեգականն արգելաւ . և 'ի հասանել
գիշերոյ նաև լոյս լուսնին ծածկեցաւ ։

Ըստ այսմ է իմանալի և որ գրի յա͞ծաշնչի՝ յա-
ւելն . * ետուն անդունդք զձայնս իւրեանց ըզ-
բարձրութի տեսակութ իւրեանց ( յ͞ս թէ ետուն
բարձր և սաստիկ ձայնս ) . բարձաւ արեգակն .
և լուսին եկաց 'ի կարգի իւրում‖ . այսինքն թէ
արեգակն ծածկեալ լինելով՝ երևեցաւ բար-
ձեալ 'ի միջոյ . սոյնպէս և լուսինն եկաց 'ի կար-
գի իւրում առանց լոյս տալոյ ։ Բայց կարէ հայ-
իլ և 'ի կատուածս արեգականն և լուսնոյն՝ զոր արար
յետու . ( Զ . 12 ) . ուստի յեբր" և 'ի լատ" և յա-
սոր" գնի . * արեգակն և լուսին կացին 'ի բնա-
կութ իւրեանց‖ ։

Բայց բանք տիրապէս և յատկապէս զ͞ Ձայնին
իսկ՝ հայցին յայն անցս , որք անցին 'ի ժամ խաչե-
լութե ո͞ն մերոյ . զի յաղաղակել նորա անդ 'ի
խաչին՝ երկիր դողաց . և անդունդք դժոխոց՝
յորս կային հոգիք մարդկան , եւս և սանդարա-
մետականք առ հասարակ՝ ետուն զձայն . ար-
դարք 'ի խնդութ , և չարք յերկիւղէ . յոր մին
երգէ շարականն մեր զայն 'ի կամս Ձի͞ր . ասելով .
* աղաղակէր ա͞ծային բարբառովն տ͞ր յ͞ս 'ի խա-
,, չին . և ընդդէմ աստեղաց կնքեր հրացեալ
,, ա͞ծայինն որ ձեռօքն . և բարկու͞թ զարթու-
,, ցեալ 'ի վ͞ր խաւարասեր իշխանին‖ . ուր հրա-
ցեալ ասելով՝ ցուցանէ նախ զհրադոյն ներկեալ
զօն ա͞ծայինն որ ձեռաց ն͞ր . ցուցանէ երկրորդ
զլինեալ գոլ նորա վրէժխնդրու͞թ իբրև հրով
ը͞դէմ սատանայի 'ի կալն 'ի վ͞ր խաչին . ուր 'ի
վեր ամբարձեալ ունէր զձեռս իւր . որով գրեթէ
կնքեր ը͞դէմ աստեղաց . այսինքն թէ տպաւո-
րեր 'ի նոսա զգոյն արեան իւրոյ , և որպէս թէ
ներ-

ներկեր զնոսա. ուստի եւ արեգակն խափանեցաւ ՚ի լուսոյ, սոյնպէս եւ լոյս լուսնին դադարեցաւ. Խօսի ապա մարգարէն եւ զայլոց իրաց որք եղեն յանցս կարմիր ծովուն, եւ ասէ.

15. Որպէս ՚ի նշոյլս սլաքաց քոց գնասցեն. որպէս ՚ի
լոյս փայլատակման զինու քո:

16. Բարկութբ̄ նուաղեցես ՚ի վր̄ երկրի. եւ տրտմութբ̄
կասցես զհեթանոսս.

Սովին ցուցանի՝ թէ ՚ի պատառմանն անդ կարմիր ծովուն եղեն փայլատակմունք եւ կայծակունք. իսկ մարգարէն զահեղութիւն նոցին կամելով ցուցանել՝ փոխաբերութբ̄ իմն խօսի յասելն. Որպէս ՚ի նշոյլս սլաքաց քոց գնասցեն. որպէս ՚ի լոյս փայլատակման զինու քո: Զկայծակունսն նմանեցուցանէ սլաքաց՝ որք են ծայրք նետից, եւս եւ ծայրք որոյ եւ զինու. կիմ̄ եբր", լատ" եւ ասոր" նմանեցուցանէ նետից. եւ զի փայլատակմունք արձակէ ած̄ զկայծակունս, վ̄ճկ դնէ ՚ի նշոյլս եւ ՚ի լոյս փայլատակման. որպէս թէ ասէր. յարձակել քո զկայծակունս ՚ի վր̄ եգիպտացւոց՝ նշոյլք եւ փայլատակմունք արձակեցեր իբրեւ զնետ եւ իբրեւ զսուր. Իսկ այն զոր ասէ՝ գնասցես, ցուցանէ թէ ած̄ է որ առնէ զայս. որպէս թէ եգեալ էր, գնացուսցես զկայծակունս փայլմամբ եւ ահեղութբ̄. եւ ՚ի գնացուցանելդ՝ նոքա եւս գնասցեն. որպէս դնի յած̄աշնչի ըստ եբր" եւ ըստ այլոց թարգմանութեանց: Զայն զայս եւ զայլ եւս գործս բարկութեան այ̄ ՚ի մի համառօտելով մարգարէին ՚ի յաջորդ համարն՝ ասէ.

16. Բարկութբ̄ նուաղեցես ՚ի վր̄ երկրի. եւ տրտմութբ̄ կասցես զհեթանոսս: Այսինքն թէ ցասցես եւ հեղցես զբարկութիւն քո ՚ի թշնամիս քո՝ որք կան յերկրի.

եւ

և որոմնութի կացցես զհեթանոսս, մի մնարե-
ցես զնո՛ զբարիսն աւքեղ ժողովելով, և զչարսն
'ի բաց մերժելով ։

Յածաշնչի մերում զնի . * սպառնալեօք նուա-
ղեցուցեր զերկիր . և բարկութիւն զիջուցես
զազգս ||. 'ի սոյն հայի և երրայականն, և ս և այլ
թարգմանութիւնք . և այս՝ ըստ հեռաւորութե, ըստ
որում 'ի զարթնուլ ոյ բարկութիւն 'ի վերայ երկրի՝
զհետ գայ սպառնալ և նուաղեցուցանել զմնա-
կիչս նորա . որպէս արար ընդ եգիպտացիս և ընդ
քանանացիս . զորս և մեծաւ բարկութիւն զիջոյց
և նուաճեցոյց, և ընդ կամնասայլիւք պատճոյ
կառեաց զնա ։

Օյսոսիկ ասելով մարգարէին (որպէս բզին
մնգամ ասացաք), փափաքի և մաղթէ առ ած՝
զի որպէս զայսպիսիս գործելով առ թշնամիս
այսինքն առ եգիպտացիս և առ քանանացիս՝ փրկ-
կեաց զազգ իւրեանց 'ի ծառայութէ նոցա, սոյն-
պէս և այժմ առաւնց զայսպիսիս գործելոյ ազա-
տեսցէ զինքեանս 'ի գերութէ բաբելացւոց ։

Խորհրդաբար, յաւանդել մն մերոյ 'ի խաչին
զհոգի իւր, և յիջանել նորա 'ի ստորին կողմն
երկրի՝ երևեցոյց արդարոց զլոյս փառաց իւրոց .
իսկ սանդարամետականացն արձակեաց զլոյս
բարկութե և աշխարհէն ամենակարող զօրութե
իւրոյ . որպէս տեսանի 'ի չար ձկն . զոր եդաք 'ի
վերոյ 'ի համարն 14 . և զի սոյնն հիացեալ սա-
տանեցան դժոխք, յայն հայելով շարականին՝
նաև 'ի յաջորդ համարն՝ ասէ 'ի կանո ձկն . * և
„ րևեցար 'ի փրկել զարարածս 'ի մահուանէ .
„ և դժոխք հիացեալ սատանեցան 'ի յահէ ա-
„ մենաշոր փառաց քոց ||.

Եւ ես 'ի զարթնուլ տն մերոյ 'ի մեռելոց, և 'ի
ցնծալ

ցնծալ անդ խորհուրդ՝ զարթոյց և յարոյց ընդ իւր զաւազանս յերկրէ. որպէս գրի 'ի մատ. ժէ. 52. և 'ի ձեռն քարոզութե աւետարանին՝ դողութք մեծաւ զօրութք կասեաց զազգս հեթանոսաց. զընտրեալս իւր իբրև զցորեան ժողովելով, և զանարգեալսն իբրև զյարդ 'ի բաց թողլով. և զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարն, 'ի մէջ բերելով զփրկութի ժողովրդեան ն̃ն, և ասէ:

17. Երեւեցար ի փրկութիւն ժողովրդեան քո. ի փրկել զօծեալս քո:

Յորչափ կային որդիքն Իէլի 'ի ծառայութե եգիպտոսի՝ գրեթէ ծածկեալ կայր 'ի նոցանէ ա̃ծ. և յաղաղակել ն̃ց առ նա, երևեցոյց ն̃ց զինքն 'ի ձեռն մովսէսի և ահարոնի՝ առ 'ի փրկել զնոսա. այս է՝ զոր ասէ:

Երեւեցար 'ի փրկութն ժողովրդեան քո, 'ի փրկել զօծեալս քո: Այսինքն թէ 'ի լրանալ աւուրց նեղութե ժողովրդեան քո յիշեցեր զուխտ քո՝ զոր եդեր ընդ հարս ն̃ց. վ̃ն և երևեցար նոցա 'ի փրկութի, ա̃յ 'ի փրկել զնոսա, և յազատել զընտրեալս քո. կամ որպէս գնի յա̃ծաշնչի՝ զօծեալս քո: Իսկ ընտրելովք կամ օծելովք ընդ ասելոյ երևելի վարդապետաց եւս և ընդ հրէից՝ իմացեալ լինին աստ մովսէս և ահարոն, զորս ազատեցոյց ա̃ծ ընդ ժողովրդեան իւրում:

Յա̃ծաշնչի մերում գնի. * ելեր 'ի փրկութի ժողովրդեան քո՝ փրկել զօծեալս քո ||. սոյնպէս գնի և յեօթ" և յասոր" և յարաբ". իբր թէ ասէր. ելեր և երևեցար 'ի փրկել զժողովուրդ քո, եւս և զահարոն և զմովսէս. զորս օծեր, զմին իշխան օծմամբ, և զմիւսն ա̃ծային տեսութք: Իսկ 'ի լատ" եղակի գնի բառդ օծելոյ՝

յա-

յասելն . * Եղէր 'ի փրկութի՟ն ժողովրդեան քո, 'ի փրկութի՟ն ը՟ օծելոյ քո ||. ուր բառդ ընդ պարզէ զմիտս բանին . իբրթէ ասէր . փրկեցեր զժո-ղովուրդ քո 'ի ձեռն օծելոյ քո , այ՟ 'ի ձեռն մով-սէսի . որ ոչ թէ իւղով՝ այլ որպէս ասացաք՝ ա՟ծային տեսութ՟բն էր օծեալ ։ Իսկ այժմ կամի հեռանեցուցանել մարգարէն , թէ փրկեա և զմեզ 'ի գերութէ բաբելացւոց 'ի ձեռն օծելոյ քո կիւրոսի ը՟ս գուշակութեն երեմեայ , որ կոչէ զնա ք՟ս , այ՟ օծեալ , և * հոգի երեսաց ||. ( ողբ . դ . 20 . )

Այս բան տիրապէս հայի 'ի փրկութի՟ն ազգի մարդկան , զոր արար և եցոյց հայրն երկնաւոր 'ի ձեռն օծելոյ իւրոյ . ը՟ որոյ յէբր" գրի . * Ե-
,, լեր 'ի փրկութի ժողովրդեան քո , 'ի փրկութի՟ն
,, ընդ մեսիայի քո || ։ Օ՛ի յառաջն գրեթէ նըշ-տեալ էր ա՟ծ , կամ մարդկօրէն ասացից՝ իբրեւ թէ անփոյթ էր 'ի փրկել զմարդիկ , որովհետեւ մերժօղ ցուցանէին ն՟ք իւրեանց փրկութ՟ . բայց 'ի ստիպել ողորմութէ նորա՝ ել և կանգնեցաւ , և երեւեցոյց զինքն 'ի փրկել զնոսա 'ի ձեռն մե-սիայի իւրոյ ։

'Ի դէմս որդւոյ ևս առեալ՝ տայլին յայտնի քարո-զի , թէ նա անմեկնելի մնալով 'ի հօրէ՝ ել և երեւեցաւ 'ի փրկութի ա՟մյն . և 'ի կատարել նորա զայս գործ մեծ՝ օրհնեաց յ՟ծ ա՟մ զընտրեալս և զօծեալս իւր , այ՟ զնոր առաքեալսն՝ կոչել զա՟մն 'ի փրկութիւն յայն . ըստ որում երգէ եկեղեցի յաւագ օրհնութիւն , 'ի մէջ բերեալ միանգա-մայն և զկամաւոր յանձնառութի խաչի և մահու նորա , յասելն 'ի կան Ջրն . * երեւեցար 'ի փրկութի
,, առեղծուածոց քոց . ոչ մեկնելով 'ի հօրէ՝
,, յանձն առեր կամաւ զխաչն և զթաղումն . և

,, յա-

,, յարուցեալ ի մեռելոց իշխանութ. քանզի
,, լուծեալ եղեն երկունք մահու ||։ Ի մէջ բե-
րէ ապա ի կամ ձլոյ զերևել նորա ի փրկութի
նախահօրն ադամայ. և ի կամ ձլի. զերևելն ի
փրկութի ամ արարածոց։ Այսպիսի եղեալ
մարգարէին՝ դառնայ այժմ պատմել թէ զինչ
արար ած ի փրկելն անդ, և ասէ։

18. Նետաձիգ եղեր ի գլուխս մարդկան ամբարշտա-
նեց. մինչև յանդունդս ծովու ընկղմեցան։
19. Մանրեցեր զհրէշ զօրութբ քով ի զօրագլխացն
մեղաւորաց. որք յառաջեալ էին ի յանդգնութե-
իւրեանց. զի կերան զաղքատն ի գաղտնիս։
20. Առաքեցեր ի վերայ ծովու զերիվարս քո. խռո-
վեցան յաղմկէ ջուրք անդնդոց։

Այսոքիկ բանք զնոյն ցուցանեն՝ զոր ինչ յայտ-
նեն ասացեալքն ի 6 համարոց մինչև ցնախըն-
թաց համարն. իսկ այսչափ կրկնութիւնք բանից
ի ձեռն փոխաբերական ձևոց ոչ այլ ինչ ցուցա-
նեն, բայց եթէ զմեծութի զօրութեն այ, և զատու-
ցումն եղելոցն. Ըստ որոյ ասէ նախ։
Նետաձիգ եղեր ի գլուխս մարդկան ամբարշտանեց.
մինչև յանդունդս ծովու ընկղմեցան։ Նետաձիգն լի-
նել այ՝ է վրէժ խնդրել, կամ զգործ բարկութե
թափել ի վերայ, որպէս արար ընդ եգիպտացիս.
զորս կոչէ ամբարշտանսն. որոց ի պնդել զհետ
որդւոցն Իէլի ի մէջ կարմիր ծովուն՝ եհար Տր և
խորտակեաց զգլուխս նոցա, այն է զհպարտութի նց
և զզօրութի նոցին. և նոքա ի ծածկել ծովուն՝
ընկղմեցան յանդունդս։
Եւ քանզի որպէս տեսանեմք՝ յընկղմել մարդոյ՝
ամբառնայ ի վեր զպարանոց իւր, յայն սակս
յածաշնչի դնի. * արկեր զգլխով անօրինաց
,, մահ.

,, մահ . զարթուցեր զկապանս մինչև ցպարա-
,, նոցս խապա || . որպէս թէ ասէր . յառաքել-
քո զմահ յեգիպտացիս 'ի կարմիր ծովուն՝ ընկղ-
մեցեր զնոսա . և յընկղմելն անդ զարթուցեր
զկապանս նոցա . իբր զի 'ի բարձրացուցանել
նոցա զպարանոցս իւրեանց , դու զօրացուցեր
զկապանս 'ի պարանոցս անդ նոցա . որ է ասել ,
կապեցեր զնոսա և իջուցեր խապա 'ի խորս ծո-
վու :

19. Խնդրեցեր զվրէժ զօրութ. տոհ 'ի զօրագլխաց մե-
ղաւորաց . որք յուսացեալ էին յանդգնութիւն իւրեանց . զի
ուտէին զաղքատն 'ի գաղտնիս : Օրագլխօքն մեղաւո-
րաց իմացեալ լինին աստ մեծամեծք եգիպ-
տացւոց , որք ընկղմեալ էին 'ի մեղս , և յանդգ-
նութեամբ յուսացեալ էին 'ի զօրութիւն իւրեանց .
'ի սոցանէ ասէ խնդրեցեր զվրէժ՝ ոչ միայն վասն
ամբարտաւանութեան իւրեանց , այլ և վասն չարաչար
նեղելոյ զազգն իմ , զոր կոչէ աղքատ . քանզի
իբրև զաղքատ և զանտէրունչ տագնապէին
զնոսա . և այն 'ի գաղտնիս , ոչ զի 'ի գաղտ տագ-
նապէին , այլ զի այնպէս չարչարէին՝ որպէս թէ
'ի գաղտնի տեղւոջ իցեն , և ոչ ոք տեսանիցէ
զնոսա 'ի չարչարելն . որով ցուցանի անողորմ և
անխնայ չարչարել : Եւ որպէս դնի յեբր" և 'ի
լատ" . այն էր ուրախութի նոցա :

Այն այս բան այլով իմն փոխակերպութ. գրի
յանծանօթի , յասելն . * խորտակեցեր ափշութ.
,, զգլուխս բռնաւորաց . սատակեսցին 'ի նմա .
,, արձակեսցեն զերասանակս իւրեանց իբր զաղ-
,, քատն գաղտակեր || . այլ միւս բանիւն 'ի նոյն
հայի . զի գլխովք բռնաւորաց նշանակին նոքին՝
զորս կոչեաց զօրագլուխս մեղաւորաց . և ասելն .
* արձակեսցեն զերասանակս իւրեանց || , հայէ
յայնս ,

կայնս, զորոյ ասաց. * որք յուսուցեալ էին յանդգնութիս իւրեանց ‖. զի այսպիսիքս արձակեն զերասանակս յանդգնութե 'ի զօրութիս իւրեանց։ Այլ զի որք գաղտակեր եղեն տնանկին, որ թէ գաղտ կերին զտնանկացեալն ինչ, մնկ խորտակեաց որ զգլուխս նոցա. ուր 'ի տպագրեալ Ածաշնչի, և 'ի լուսանցս չորից ձեռագրաց՝ խոտորեցեր զնի, որ թէ ընկրկեցեր, և նուաճեցեր զգլուխս նոցա. կամ ըստ Եբր" և Ասոր" ծակեցեր, որ ջախջախեցեր. կամ ըստ Եօթ" հերձեր։

Իսկ փոխանակ զօրութե՝ որպէս դնի 'ի սաղմոսարանի մերում, կամ փոխկ ապշութեն որպէս դնի յԱծաշնչի, յԵբր" և յԱսոր" և 'ի Քաղդ" և 'ի Լատ", դնի գաւազան. ըստ որում եբրայական բառդ Մաթէ կամ Մաթէհ՝ նշանակէ գաւազան, և փոխաբերութը՝ զօրութի. ըստ որոյ եդեալ է 'ի սաղմոսարանի։ Բայց քանզի Մաթէհն եղանէ 'ի բառէս Նաթ, որ նշանակէ ապշութի, (ըստ որոյ յայլազգական լեզուս ասի մաթ գալմաք), Եօթանասունք, և որս և արքայացիք և թարգմանիչք մեր եդին ապշութի։

Այլ գուցէ այդ ես առեալ է յեբրայական բառէս Նաթ կամ Նօթ՝ որ է մութն կամ խաւար. յորում լինի մարդոյ երբեմն ապշիլ, կամ խարխափել. որպէս և 'ի մերս բառդ մոյթ՝ որ նշանակէ ցուպ՝ ընդրդ է ըստ բառիս մութն՝ ըստ որում սովորութի է ոմանց 'ի մթան ցպով շրջիլ։ Նոյնպէս և թերևս ոմանք 'ի թարգմանչաց եդին ասա ապշութի, և ոմանք ցուպ կամ գաւազան։ Երդ քանզի 'ի հարկանել և 'ի խորտակել որ զգլուխս եգիպտացւոց՝ բարձրացոյց ըզգլուխս որդւոցն Իղի, փառօք անցուցեալ զնո-

սա է ծովն կարմիր, յայս հայելով յարէ զկնի մարգարէն և ասէ ։

20. Արշաւեցեր 'ի վերայ ծովու զերիվարս քո. խռովեցան յաղթ ջուրք անդնդոց ։ Խելամտութիւն ձևով խօսի. զի փոխ ասելոյ զհեծեալսն յերիվարս թէ զժողովուրդ քո, 'ի մէջ բերէ զերիվարսն. որպէս թէ ասէր. յածելն քո զորդիսն Իլի և զհեծեալս նոցա յերիվարս՝ խռովեցան և պղտորեցան յաղթ ջուրք, թէ խորին ջուրք անդնդոց, և պատառեալ յերկուս՝ իբրև պարիսպ կացին յերկուց կողմանց. և ժողովուրդ քո էանց ընդ այն անձուկս ։ Ոսոխն առաջի առնելով՝ է սա-քինքք խնդրէ յոյժ խնդրել զվրէժ 'ի թշնամեաց իւրեանց, նեղամիտ լինելով 'ի գլուխս նոցա, և ազատել զինքեանս 'ի ձեռաց նոցին ։

Խորհրդաբար, 'ի ձեռն ամբարտաւանից իմա-ցեալ լինին ասա դևք, առ որս նեղամիտ եղե-ւ որդին այ, և ընկղմեաց զնս մինչև յանդունդս դժոխոց, խնդրելով զվրէժ արեան մերոյ 'ի գլ-խոյ նոցա՝ թէ 'ի սատանայէ, և 'ի զօրաց լխաց նո-ցին. որք յուսացեալ 'ի խաւարային յանդգնու-թիւնս իւրեանց՝ ուտէին զաղքատացեալ բնուին 'ի գաղտնիս, այսինքն գաղտնի հնարիւք և յա-ներևոյթս, և այն էր միայն սուս ուրախութի նոցա ։ Բայց 'ի նուաճիլ իւրեանց խռովեցան և պղտորեցան իբրև յաղթ ջուրք. և մարդիկ ա-զատ գտան 'ի բռնութէ նոցա ։

Ու զի մեծ էր այս գործ փրկութե մարդկան, յառաջագոյն առաքեաց տրն մեր զերիվարս իւր 'ի վերայ ծովու, թէ զմարգարէս իւր յաւետա-ւորուէ ազգաց ամն. է որում երգէ եկեղեցի յաւագ օրհնութին 'ի բազում տեղիս. իսկ զա-ռաքմանէ մարգարէից խօսելով 'ի կան ձիղ.

սնէ. * Որ տուաքեցեր զերկրաւորս քո՛ որ զմար-
,, գարէսն՝ աւետարանել զկենսաբեր տնօրէ-
,, նութիւն քո՛ ի սիրտ կուսէն. և երևեցար մարդ
,, ճշմարտապէս ‖ : Զայս ամ̃ եղեալ մարգա-
րէին՝ հետևեցուցանէ և ասէ :

21. Այցէ ես և կծկեան աղիք իմ ի ձայնէ բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոսկերս իմ. և ես յանձին իմ խռովեցայ :

22. Զայս պահեսցես յաւուր նեղութեան ածել ի վերայ ազգի, որ մարտնչին ընդ ժողովրդեան քում :

Այս բանք ակնարկեն յայնմ՝ զորս եդ մարգարէն ի սկզբան այսր օրհնութեան յասելն. * Տ̃ր ,, զլուր քո լուայ և երկեայ. Տ̃ր հայեցայ ի ,, գործս քո և զարհուրեցայ ‖. Ի սոյն միտս խօսի և աստ ասելով:

Այցէ ես և կծկեան աղիք իմ ի ձայնէ բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոսկերս իմ. և ես յանձին իմ խռովեցայ : Այսինքն թէ զայս ամ̃ ճանաչելով կայցի և մնայցի զարմացեալ՝ ես և զգուշացեալ. և յասելն ես զայսոսիկ բերանով իմով, և յաղօթելն վասն այսր՝ դեղան և ձմլեցան աղիք իմ ի ցաւոցս. և զարհուրեցաւ սիրտ իմ յերկիւղէ քումմէ. և եմուտ սասկումն յոսկերս իմ, ո՛ ի զօրութիւնս հոգւոյ իմոյ. և եղէ բոլորովին խռովեալ :

Իսկ այս բացայայտ ևս դնի յԱստուածաշնչի մերում յասելն. * Զգուշացայ, և զարհուրեցաւ սիրտ ,, իմ ի ձայնէ աղօթից շրթանց իմոց. եմուտ ,, դողումն յոսկերս իմ. և խռովեցաւ փոր իմ ,, ի ներքուստ ‖ : Իսկ թէպէտ յեբր" և յասոր" և ի լատ" ոչ դնի բառս աղօթից, բայց ներթա- նուածս քան բաղդատարկելով զիմաստ բանիցն յա-

ւելուն

ռելին զայն . կամ գուցէ հայր յօրինակս նոցա .
Եւ սոյն այս զարհուրելի ոչ միայն յեղեալն հայելով սրտառհեաց , այլև յայնս՝ որք համդերձեալ են լինել . զորմէ խօսի 'ի յաջորդ համարն և առէ .

22 . Զայս պահեսցես յաւուր նեղութե̃ ածել 'ի վերայ աշխի՝ որ հարկանէին ընդ ծովու հրեշտակն յաւէտ . Նամ որպէս գնի յամծաշինքն մերում ԺԲ եօթն" և ԺԲ տարր". * Համդեայց յաւուր նեղութե̃ եղանել ինձ 'ի ժողովուրդ պանդխտութե̃ իմոյ || . Նամի ասելզօր խոչ անցուցեր Ժ̃Է եգիպտացիս և Ժ̃Է այլ թշնամիս քո , անհնարին թէ զնոյն համդերձեալ ես ածել 'ի վերայ գերչաց մերոց՝ որք մարանչին Ժ̃Է մեզ յաւուր նեղութե̃ , ՚յ յաւուրս գերութե̃ մերոյ . և ես տեսեալ զվրէժխնդրութի քո , և աղաւեալ 'ի գերութե̃ համդեայց 'ի տառապանացս , և երեկ 'ի ժողովուրդ պանդխտութե̃ իմոյ . այսինքն թէ դարձայց յերկիր իմ , յորմէ պանդխտացեալ եղև ժողովուրդ իմ . կամ թէ լիցի ինձ եղանել Ժ̃Է պանդխտացեալ ժողովրդեանս յերկիր ժառանգութե̃ մերոյ .

Եւ թէպէտ յերբե" և յաւուր" և 'ի լաւս" պանդխտութի ոչ յիշէ , բայց այնուհետև բառ գնի՝ որ 'ի նոյն կարէ վերածել , յասելն . * եղանելով առ ժողովուրդն համեալ || . կամ առ ժողովուրդն , որ կարեաց զիս . իբր թէ ասէր . համդերձեալ եմ եղանել առ ժողովուրդն՝ որ համեալ էր յինէն , կամ որ եհատ զիս , և պանդխտեցաւ . և այս յայնժամ՝ յորժամ լիցի վրէժխնդրութի առ թշնամիս իմ .

Իսկ հրդամար , այս բանք հայլին յայն վրէժխնդրութի ոչ՝ զոր համդերձեալ էր ցուցանել առ նահաւան հրէայս , և ս և առ բռնաւորս , որք մար-

տեան ՟ը՟ ժողովրդեան ՟ին՟, ՟ժ՟ ընդ եկեղեցւոյ. որ իբր թէ պանդխտացեալ կայր 'ի հին օրէնս, որում և պաշտպան լեալ յաւուրս նեղութեան հանգոյց 'ի կրօնս ածպաշտութ. Արդ ՟քղի եդ մարգարէն թէ հանդերձեալ է ած վրէժ խնդրել յայնցանէ՝ որք մարտնչին ընդ ժողովրդեան իւրում, հետևեցուցանէ այսմ և ասէ։

23. Թզենին ոչ տացէ զպտուղ իւր. և յայգեաց բեր մի տացէ. ձիթենիք անդաստանի. և երկիր մի բ[illegible]ասցէ կերակուր։

24. Պակասեսցեն հօտք 'ի մարգաց. և եզինք մի գտցեն առ մսուրս։

Պտուղք երկրի յերկուս ազգս բաժանին. մի՝ այնս որք ինքնին ուտին. որպիսի են թուզ, տանձ, խնձոր, նուռն, և այլն։ Երկրորդ՝ այնս՝ որք եփմամբ ուտին. որպիսի են շողգամ, դդում, առինձան, և այլն. ընդ ոսպ և ընդեղէնք։ Երրորդ՝ այնս՝ յորոց եղանեն այլ բերք. որպէս են ձիթապտուղ, յորմէ եղանի ձէթ. խաղող, յորմէ եղանի գինի. թէպէտ յինքեան ևս ուտի։ Յաւելեալ լինի 'ի սոսա և դալարի 'ի կերակուր մարդկան և անասնոց. Այնպէս և ընտանի չորքոտանիք՝ որոց միսք ուտին՝ յերկուս տեսակս բաժանին. մի՝ այնս որք 'ի հօտս են. որպիսի են ոչխարք և այծք. և մի ևս՝ այնս որք յանդեայս են. որպիսի են եզինք և կովք։ Արդ կամելով մարգարէին զսաստկութի պատժոյն ցուցանել զթշնամեաց ժողովրդեան իւրոյ, զպակասիլ ամ՟ի այսոցիկ 'ի մէջ բերէ, և ասէ։

Թզենին ոչ տացէ զպտուղ իւր. և յայգեաց բեր մի տացէ. ձիթենիք անդաստանի. և երկիր մի բ[illegible]ասցէ կերակուր։
24. Պակասեսցեն հօտք 'ի մարգաց. և եզինք մի գտցեն առ մսու-

ծառայս ։ Այսմ սակս . 'ի խնդրել իմ զկեանս 'ի
թշնամեացն ժողովրդեան իւրոյ՝ այնպէս սրտա-
հատելոց է զնա, մինչև ոչ կամիլ նոցա յամ ու-
տելեաց եղեւ 'ի պատերազմաց և եղեւ 'ի մանկլե-
նաց ։

Այն այս եհաս հոգևորապէս ազգին հրէից 'ի
մերժեցիլ նոցա ընդ քնի և ընդ ժողովրդեանն իւր .
որով և թզենիք նոցա, որ քաղցր օրէնք բարոյա-
կանք՝ զորս ընկալանյոյ՝ ոչ հասուն և ոչ տան 'ի
նա զպտուղ արժանի յաւիտենականն կենաց ։ Այ-
գիք նոցա կամ որթք նոցա՝ այսինքն իրաւունք
արարողականք՝ ոչ տան նոցա ինչ բերս բարեաց .
զի խոստմանցն ։ Ձիթենիք նոցա՝ այսինքն դա-
տաստանականն հրամանք՝ զորս ունէին՝ մնացան
և դրեթէ չորացան . կամ [illegible] այլոց, և ըստ ամե-
նայնի մեռուս՝ սահցին նոյ, այսինքն իբրև սուտ
ինչ եղեն 'ի մէջ նոցա ։ Երկիր նոցա կամ դաշտք
նոցին, այսինքն ժողովուրդ նոցա ոչ բուսուցանեն
զպտուղ ինչ բարի, այլ փուշս ։ Հօտք նոցա՝ այ-
սինքն գումար ժողովոյ նոցա՝ չունին զուղիղ
վկայութիւն Ճշմարտութեան ։ Եզինք նոցա՝ այսինքն ռաբ-
բիք նոցին՝ ոչ երևէին 'ի մսուրս՝ այսինքն 'ի քննու-
թիւն Ճշմարտութեան, այլ խաբեբայութեան ։ Ես ամենքին
առհարկ անիծեալք և մերժեալք են յինէն և 'ի մի-
կանէ . փոխ զի յետ այնքան փոփոխելոյ յինէ զի-
նեցան և զինեւ Քրիստոսի իմ . և կան մինչև ցայսօր
'ի նմին զինման և 'ի յամառութեան ։ Ինք որս
հայեցեալ մանկանց նորայս սրանի՝ զարմանան .
և գոհացեալ զինէ՝ ուրախ լինին 'ի փրկութեան նորա .
որպէս ասէ և մարգարէս՝ հայեցեալ 'ի հա-
տուցմունս թշնամեաց և 'ի փրկութիւն ժողովր-
դեանն իւրոյ, և ասէ ։

25. Ասա 'ի մեր յուսացայ · ընծայայց և ուրախ եղեց յամ փրկչէս :

Ըստ բանիս ասին եթէ 'ի բերանոյ մարգարէին և եթէ 'ի բերանոյ ժողովրդեանն իւր, և խորհրդաւոր 'ի բերանոյ եկեղեցւոյն քրի՝ ըստ յուսալոյ և ըստ ուրախ լինելոյ 'ի տր · ըստ որոյ ասէ :

Ասա 'ի մեր յուսացայ · ընծայայց և ուրախ եղեց յամ փրկչէս : Ըստ յուսալ և ուրախ լինել յերկուս հայի · մի՝ 'ի գերծ լինել 'ի հարուածոց անտի՝ յորս հարան թշնամիք ժողովրդեան տն · և մի ևս յազատիլ նց 'ի գերուէ բաբելացւոց · ոպ թէ ասէր · յոյս իմ հաստատուն է յամ փրկիչ իմ՝ պահիլ անխռով 'ի հատուցմանէ անտի թշնամեաց իմոց, և ազատիլ 'ի գերուէ ասաի իմմէ, և ուրախ լինիլ 'ի նա : Իսկ զի ցուցցէ թէ ճշմարտին ունի զդատաւոր զազատութի, և ուրախ լինել, յարէ զկնի, և ասէ :

26. Տէր մեր եւ ինչ զօրութէ · և կոչեայց զնա եմ 'ի հաստատութէ · 'ի կեր պարանոյ թշնամեայն կոչեայց զնա · և հանեցոյց զնա երազ երազ :

Որպէս եդաք 'ի վերոյ՝ կարի իմն նուաճեալ և նուաղեալ էին խնայիք 'ի գերուէն բաբելացւոց վն հարստահարելոյ 'ի նոցանէ · այլ 'ի ցուցանել տն զայցելութի իւր առ նոսա ձեռամբ կիւրոսի՝ ո գի առին, և հաստատեցան · և յազատիլն՝ 'ի վեր երևեցան քան զթշնամիսն · և փութացան գնալ յերկիր իւրեանց · յայսոսիկ հայելով ասէ :

Տէր մեր եւ ինչ զօրութէ · և կոչեայց զնա եմ 'ի հաստատութէ · 'ի կեր պարանոյ թշնամեայն կոչեայց զնա, և հանեցոյց զնա երազ

երգ երգ ։ Սրտի ասել. 'ի մեծատիլ խնում 'ի գերութենէ անդ՝ զօրացոյց զիս Տր այցելութիւնով. և զատատանումն առից ինձ՝ Տր զօրութեց իմոց՝ կացոյց հաստատուն. և մերձացոյց զիս 'ի մի պարանոցի՝ Տր 'ի մի բանուէ և հալածութէ զերչայ ինձ. և փութանակի հատուցեալ 'ի չանկաելին իմեցիմ հանդոյց 'ի ննմ զիս ։ 'Ի կատարելու դնելով ոչ զեղեալն ցուցանել, այլ զատուցումն

ընելեալն ։

Յովհաննէս մեկնում այլազգ դնի այս բան. այսինքն է. * Տր իմ զօրութիւն իմ. և կարգեսցէ
,, զոտս իմ 'ի վախճան. և հանցէ զիս 'ի բար-
,, ձունս յաղթել երգովս նր ‖ ։ Այսինքէս դնի և յեօթ", եւ և յայլս. սակայն յեբր" և 'ի լատ" և յասոր" փնկ վախճանի՝ եղջերու դնի յաւելն.
* դիցէ զոտս իմ իբրև զեղջերուաց ‖ ։ Նոյն դիտումն բանին յամի 'ի նոյն ակնարկէ. զի կամի ասել. Տր իմ իմեղև ինձ զօրացուցիչ. և զիմհատեալ զօրութիւն իմ հաստատեաց իբրև զեղջերուաց՝ հասանել ինձ երագ երագ 'ի վախճան գերութեանս, և ելանել 'ի բարձունս՝ այսինքն 'ի հրեաստան՝ որ լեռնամբք բարձրացեալն է, և անդ հանգչիլ, և յաղթական երգով օրհնել զՏր ։

Խորհրդաբար, այս բանք ասին 'ի դիմաց նոր եկեղեցւոյ. որ տեսեալ զՏնոյն հարուածս և զհատուցումն թշնամեաց իւրոց ք֊ յիշելոյ մեր այժմ յուսացաւ 'ի Տր՝ ցնծալով 'ի նա, և ուրախ լինելով 'ի փրկութէ նորա. մինչև պարծիլ նմ և ասել՝ փրկիչն իմ զօրացոյց զիս, և կացոյց 'ի հաստատութէ անայլայլելի ուխտից իւրոց. կացոյց և զոտս իմ 'ի մի պարանոցի անմարմին թշնամւոյն. և եհան զիս 'ի բարձունս խորհրդոց իւրոց. ուր

*և հանգոյց զնա. և ունի ևս հանգուցանել ՚ի կեանսն յաւիտենականս։*

Աստանօր աւարտի չորք աւագ օրհնութեցն՝ հանդերձ յարմարադրութբ բանից շարականին։ Եւս սկսանին աւան-ցէն հապաւածով այլ ևս չորս օրհնութիւնք աղերսաւորանէն։

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ.

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԺԳ.

Օրհնաբանութիւն առ Աստուած ՚ի բերանոյ երից մանկանց, յայտարարութիւն իրաւանց և արդարութեան նորա, որովք մատնեաց զորդիսն իւր ՚ի պատուհասն գերութեան Բաբելացւոց. միանգամայն և հրաւէր առ ամ արարածս՝ օրհնել զԱծ:

Օրհնութիւն երից մանկանց:
(ըստ ասորեստանին:)

1. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան:

2. * Յիրաւունս անցուցեր զայս ամ ըստ մեզ. արդար ես Տէր. և ամ փորձք քո ճշմարիտ են.

3. * Ճանապարհք քո ուղիղ են. և ամ դատաստանք քո արդար են:

4. * Դատաստան արդարութեան ածեր ՚ի վր մեր, ըստ ամ՝ զոր ինչ ածեր ՚ի վր մեր և քաղաքի սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի:

5. * Աղերսարանք և յիշատակ ածեր զայս ամ ՚ի վր մեր վս մեղաց մերոց:

6. * Անօրինեցաք և յանցեաք՝ ապստամբ լինել ՚ի քէն. մեղաք յոյժ. և պատուիրանաց քոց ոչ անսացաք:

7. * Ոչ պահեցաք և ո՛չ արարաք

որ

Օրհնութիւն երից մանկանց:
(ըստ Աստուածաշնչին. Դան. Գ. 26—88:)

26. Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս:

27. * Զի արդար ես յամենայնի՝ զոր արարեր ՚ի վր մեր. և ամ գործք քո ճշմարիտ են:

Եւ ուղիղ են ճանապարհք քո. և ամ դատաստանք քո ճշմարտութ:

28. * Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր ըստ ամենայնի զոր արարեր մեզ. և քաղաքին սրբոյ հարցն մերոց Երուսաղեմի:

Զի ճշմարտութեամբ և յիրաւի ածեր զայս ամ վս մեղաց մերոց:

29. * Զի մեղաք և անօրինեցաք՝ յապստամբել լինել ՚ի քէն. և սաստիկ մեղաք
30. յամենայնի. * և պատուիրանաց քոց ոչ անսացաք:

Ոչ պահեցաք և ոչ արարաք

այլ

ոչ պատուիրեցեր դու մեզ . զի
լինիցի բարի մեզ ՚ի քէն :
8 . * Արդ՝ զամ զոր արարեր .
եւ զոր ինչ ածեր ՚ի վր մեր .
արդար դատաստանաւ արարեր :

9 . * Մատնեցեր զմեզ ՚ի ձեռս
թշնամեաց մերոց , անօրինաց , խըս_
տաց եւ ապստամբողաց :

10 . * ՚Ի ձեռս թագաւորի անօրինի
եւ չարի քան զամ երկիր մարդկա_
[illegible] զմեզ :
11 . * Եւ արդ ոչ գոյ մեզ ձայն
բանալ զբերան մեր . զի ամօթ
եւ նախատինք եղաք ծառայից
քոց պաշտօնէից :
12 . * Այլ մի մատներ զմեզ ի_
սպառ վա անուան քո . մի ցրեր
զուխտ քո . եւ մի ՚ի բաց առ_
ներ զողորմութի քո ՚ի մէնջ :

13 . * Վա Աբրահամու սիրելւոյ
քո . Իսահակայ ծառայի քո . եւ
Իսրի սրբոյ քո :
14 . * Խոստացար նոցա , եւ ա_
սացեր . բազմացուցից զզաւակ ձեր
որպէս զաստեղս երկնից բազմութ .
եւ որպէս զաւազ առ եզր ծո_
վու :
15 . * Եւ արդ՝ մք նուաղեցաք
մեք քան զամ ազգս . եւ եմք տա_
ռապեալ յամ երկրի այսօր վս մե_
ղաց մերոց :
16 . * Ոչ գոյ ՚ի ժամանակիս յայս_
միկ իշխան , մարգարէ , եւ ա_
ռաջնորդ . ոչ ողջակէզ պատարա_
գաց , ոչ խունկ օրհնաց . եւ ոչ
տեղի պտղոյ մատուցանելոյ առա_
ջի քո . եւ զողորմութի գտանել ՚ի
քէն :

17 . * Այլ անձամբ խոնարհելով
եւ հոգւով տառապանաց ընդու_
նելի

ոչ պատուիրեցեր մեզ .
զի բարի լինիցի մեզ :
31 . * Եւ զամ զոր ածեր ՚ի
վր մեր , եւ զամ զոր ար_
րեր մեզ , արդար դատաս_
տանաւ արարեր :
32 . * Եւ մատնեցեր զմեզ
՚ի ձեռս թշնամեաց մերոց ,
անօրինաց , խստաց , եւ ապըս_
տամբողաց :
Եւ թագաւորի անիրաւի , եւ չարի
քան զամ երկիր :

33 . * Եւ արդ ոչ գոյ մեզ
բանալ զբերան մեր . զի ա_
մօթ եւ նախատինք եղաք ծա_
ռայից քոց պաշտօնէից :
34 . * Այլ մի մատներ զմեզ ի ս_
պառ վա անուան քո . եւ մի ցրեր
35 . զուխտ քո . * եւ մի՛ ՚ի
բաց առներ զողորմութի քո
՚ի մէնջ :
Վա Աբրահամու սիրելւոյ քո ,
եւ վա Իսահակայ ծառայի քո ,
եւ վա Իսրի սրբոյ քո :
36 . * Որոց խօսեցար , բազ_
մացուցանել զզաւակ նոցա
իբրեւ զաւազ առ ափն ծո_
վու :

37 . * Եւ արդ՝ մք նուաղե_
ցաք քան զամ ազգս . եւ եմք տա_
ռապեալք յամ երկրի այսօր
վա մեղաց մերոց :
38 . * Ոչ գոյ ՚ի ժամանակիս
յայսմիկ իշխան , մարգարէ ,
եւ առաջնորդ . ոչ ողջակէզք
եւ ոչ զոհք , եւ ոչ պատարագք
եւ ոչ խունկք . եւ ոչ տեղի
տալոյ երախայրիս առաջի
39 . քո . * եւ գտանել զողոր_
մութի :
Այլ անձամբք բեկելովք , եւ
հոգւովք տառապանաց ընդ_

նելի լիցուք քեզ որպէս ողջակիզաւ
խոյոց և զուարակաց , և որպէս
բիւրաւոր գառանց պարարտաց :

18. * Այսպէս ընդունելի լիցի
պատարագս մեր այսօր առաջի քո ,
զի խոստովանեալ պարտիմք քեզ .
և ոչ է ամօթ յուսացելոց 'ի քեզ :

19. * Եւ արդ գամք զհետ քո
ամ սրտիւ մերով . երկնչիմք 'ի
քէն . և խնդրեմք զերեսս քո .
մի յամօթ առներ զմեզ :

20. * Այլ արա ընդ մեզ ըստ
հեզութե քում , և ըստ բազ-
մութե քում . փրկեա զմեզ ըստ
սքանչելեաց քոց . և փառաւորեա
զի անուն քո յաւիտեան :

21. * Յամօթ լիցին ամենեքեան' որ
ցուցանեն չարիս ծառայից քոց . ամաչ-
եսցեն յամ բռնութենէ իւրեանց . և
ամ զօրութիւնք նոցա խորտակես-
ցին :

22. * Եւ ծանիցեն' զի դու ես
Տէր Աստուած միայն . որ փառաւորեալ
ես 'ի վր ամ տիեզերաց :

23. * Օրհնեալ ես Տէր Աս-
տուած հարցն մերոց . գովեալ և ա-
ռաւել բարձրացեալ յաւիտեանս :

24. * Եւ օրհնեալ է անուն Տր
փառաց քոց . գովեալ , և առա-
ւել բարձրացեալ յաւիտեանս :
25. * Օրհնեալ ես 'ի տաճարի
փառաց սրբութեան քո . գովեալ .



40. ունելի լիցուք . * Իբրև
զողջակէզս խոյոց և զուա-
րակաց . և իբրև զբիւրաւորս
գառանց պարարտաց :
Այսպէս եղիցի պատարագս
մեր այսօր առաջի քո . Ըն-
դունելի կատարեալ զկնի քո . զի
ոչ է ամօթ յուսացելոց 'ի
քեզ :
41. * Եւ արդ գամք զհետ
քո ամ սրտիւ մերով . և
երկնչիմք 'ի քէն . և խնդ-
42. րեմք զերեսս քո . * Մի
յամօթ առներ զմեզ :
Այլ արա ընդ մեզ ըստ հե-
զութեան քում . և ըստ բազում ո-
43. ղորմութեան քում . * և փրկ-
եա զմեզ ըստ սքանչելեաց
քոց . և տուր փառս անուան
քում Տէր :
44. * Եւ յամօթ լիցին ամենեքին՝
որք ցուցանեն չարիս ծառայից
քոց . և ամաչեսցեն յամ բռ-
նութե իւրեանց . և զօրու
թիւնք նոցա խորտակեսցին :
45. * Եւ ծանիցեն՝ զի դու
ես Տէր Ած միայն . և փառա-
ւորեալ 'ի վր ամ տիեզե-
րաց . . . . .
51. * (Յայնժամ երեքեան
իբրև 'ի միոջէ բերանոյ օրհ-
նէին և գովէին և փառա-
ւոր առնէին զԱծ 'ի մէջ հնո-
ցին , և ասէին .) :

52. * Օրհնեալ ես Տէր
Ած հարցն մերոց . գովեալ
և առաւել բարձրացեալ
յաւիտեանս :
Եւ օրհնեալ է անուն Տր փա-
ռաց քոց . գովեալ , և առա-
ւել բարձրացեալ յաւիտեանս .
53. Օրհնեալ ես 'ի տաճարի
փառաց սրբութեան քո . գովեալ

և այլն։

26. * Օրհնեալ ես 'ի վ՟ր աթոռոյ արքայութեան քո. գովեալ։

27. * Օրհնեալ ես՝ որ նստիս 'ի քերովբէս, և հայիս յանդընդս. գովեալ։

28. * Օրհնեալ ես 'ի վ՟ր հաստատութեան երկնից. գովեալ։

29. * Օրհնեցէք ա՟մ գործք տ՟ն զ՟տր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս։

30. * Օրհնեցէք երկինք զ՟տր. օրհնեցէք. և այլն։

31. * Օրհնեցէք հրեշտակք տ՟ն. ջուրք որ 'ի վերայ երկնից զ՟տր։

32. * Օրհնեցէք զօրութիւնք տ՟ն. արեգակն և լուսին զ՟տր։

33. Օրհնեցէք աստեղք երկնից. անձրեւք և ցօղք զ՟տր։

34. * Օրհնեցէք ա՟մ հողմք. հուր և ջեր զ՟տր։

35. * Օրհնեցէք ցուրտ և տօթ. ցօղ և ձիւնաբեր զ՟տր։

36. * Օրհնեցէք սառն և պարզ եղեամն և ձիւն զ՟տր։

37. * Օրհնեցէք տիւք և գիշերք. լոյս և խաւար զ՟տր։

38. * Օրհնեցէք ամպք և փայլատակունք և երկիր զ՟տր։

39. * Օրհնեցէք լերինք և բլ-

լուրք

և այլն։

54. * Օրհնեալ ես 'ի վ՟ր աթոռոյ արքայութեան քո. գովեալ։

55. * Օրհնեալ ես՝ որ հայիս յանդունդս, և նստիս 'ի քերովբէս. գով՟։

56. * Օրհնեալ ես որ նստիս 'ի հաստատութեան երկնից գովեալ։

57. * Օրհնեցէք ա՟մ գործք տ՟ն զ՟տր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս։

58. * Օրհնեցէք երկինք զ՟տր. օրհնեցէք. և այլն։

59. * Օրհնեցէք հրեշտակք տ՟ն զ՟տր։

60. * Օրհնեցէք ջուրք և ա՟մ որ 'ի վերոյ քան զերկինս զ՟տր։

61. * Օրհնեցէք ա՟մ զօրութիւնք տ՟ն զ՟տր։

62. * Օրհնեցէք արև և լուսին զ՟տր։

63. * Օրհնեցէք ա՟մ աստեղք երկնից զ՟տր։

64. * Օրհնեցէք ա՟մ անձրեւք և ցօղք զ՟տր։

65. * Օրհնեցէք ա՟մ հողմք զ՟տր։

66. * Օրհնեցէք հուր և տօթ զ՟տր։

67. * Օրհնեցէք ցուրտ և սառն զ՟տր։

68. * Օրհնեցէք եղեամն և ձիւն զ՟տր։

69. * Օրհնեցէք տիւք և գիշերք զ՟տր։

70. * Օրհնեցէք լոյս և խաւար զ՟տր։

71. * Օրհնեցէք ամպք և փայլատակունք զ՟տր։

72. * Օրհնեսցէ երկիր զ՟տր։

73. * Օրհնեցէք լերինք և

բար-

բլուրք և ամ բոյսք երկրի զՏէր ։

40. * Օրհնեցէք աղբիւրք, ծովք և գետք զՏէր ։

41. * Օրհնեցէք կէտք և ամ կայտառք որ 'ի ջուրս, և թռչունք երկնից զՏէր ։

42. Օրհնեցէք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏէր ։

43. * Օրհնեսցէ Իսլ զՏէր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեանս ։

44. * Օրհնեցէք քահանայք զՏէր. օրհ՛ ։

45. * Օրհնեցէք ծառայք Տն զՏէր ։

46. * Օրհնեցէք ոգիք և շունչք արդարոց զՏէր ։

47. * Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր ։

48. * Օրհնեցէք Անանիա, Ազարիա, և Միսայէլ զՏէր. օրհնեցէք ։

բարձունք զՏէր ։

74. * Օրհնեցէք ամ բոյսք երկրի զՏէր ։

75. * Օրհնեցէք աղբիւրք զՏէր ։

76. * Օրհնեցէք ծովք և գետք զՏէր ։

77. * Օրհնեցէք կէտք և ամ կայտառք որ 'ի ջուրս զՏէր ։

78. * Օրհնեցէք թռչունք երկնից զՏէր ։

79. * Օրհնեցէք ամ գզնք և անասուն զՏէր ։

80. * Օրհնեցէք որդիք մարդկան զՏէր ։

81. * Օրհնեսցէ Իէլ զՏէր. օրհնեսցէ և բարձր արասցէ ։

82. * Օրհնեցէք քահանայք զՏէր ։

83. * Օրհնեցէք ծառայք Տն զՏէր ։

84. * Օրհնեցէք հոգիք և շունչք արդարոց զՏէր ։

85. * Օրհնեցէք սրբք և խոնարհք սրտիւք զՏէր ։

86. * Օրհնեցէք Անանիա, Ազարիա, և Միսայէլ զՏէր. օրհնեցէք ։

( Զի փրկեաց զմեզ 'ի դժոխոց, և 'ի ձեռաց մահու ապրեցոյց զմեզ. և փրկեաց զմեզ 'ի հնոցէս. և 'ի միջոյ բորբոքեալ բոցոյս. և 'ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ ։ Գոհացարուք զՏէր. զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն ։ Օրհնեցէք ամ պաշտօնեայք Տն զԱծն աստուծոց. Օրհնեցէք և գոհացարուք. զի յաւիտեան է ողորմութիւն. )

# ՎԵՐՆԱԳԻՐ

## Օրհնութեան երից մանկանց:

Այորքին երեք մանկունքն՝ կոչէին անանիա, ազարիա և միսայէլ. և էին յաւուրս յովակիմայ արքային յուդայ, ընդ որս և դանիէլ. և էին ընքինաք ՚ի ցեղէ թագաւորացն յուդայ ըստ աւանդելոց երևելի մեկնչաց: Իսկ յորժամ ՚ի գերութն վարեցաւ յովակիմ որ և եղիակիմ արքայ ՚ի նենաւր յամի ծնի 3398. կամ 4597, ընդ նմա և սոքա բազումք տարեալեցեն ընդ նմա անդ: Իսկ նաբուքոդոնոսոր պատուիրեաց ներքինապետին իւրում ասփանեզայ՝ ժողովել զարքայազունս մանկունս ՚ի գերելոց անտի, և յորդւոցն մարդոց. և տալ զնա յուսումն զամս երիս մինչ ապա տանել ՚ի տուն արքունի. (դան. ա. 1 = 20:)

Իսկ ներքինապետն առեալ ՚ի գերելոց անտի ըզդանիէլ, զանանիա, զազարիա, և զմիսայէլ. եդ նոցա զայլ անուանս. դանիէլի եդ անուն բաղտասար, անանիայի՝ սեդրաք, միսայէլի՝ միսաք, և ազարիայի՝ աբեդնագով. և յանձն արար զնա մաղասարայ: Իսկ զի նոքա խարէին ուտել ՚ի հեթանոսական կերակրոյ՝ խնդրեցին ՚ի մաղասարայ տալ ինքեանց ունդս ևեթ և ջուր: Իսկ ՚ի կասկածել նորա՝ թէ գուցէ նիհարասցին, ապաւէին զնա փորձել զաւուրս տասն. և յետ տասն աւուրց երևեցան երեսք նց բարիք, և մարմինք նոցա հզօրք քան զայլ ամ մանկանց, որք ուտէին զսեղան թագաւորական:

Իսկ յետ կատարածի աւուրց երիցն յանդիման եղեն թգ՚ին՝ գտան իմաստուն մտօք և զօրաւոր բանիւք քան զամենն. և կային ՚ի տան թգ՚ի:

Իսկ

Եւ որպէս գրի 'ի դան. ա. 20. * յա̃մ բանի իմաս-
,, տութե̃ և գիտութե̃ զոր խնդրէր 'ի նոցանէ
,, թգ̃րն՝ գտանէր զն̃ս տասնապատիկ առաւել
,, քան զա̃մ գէտս և մոգս, որք էին 'ի թագա-
,, ւորութե̃ նորա ||: Եւ զոր օրինակ յիմաստութե̃
և 'ի գիտութե̃, նոյնպէս և 'ի սրբութե̃ և 'ի զգաս-
տութե̃ գտան նք գերագոյն. և որպէս հաստա-
տեն երևելի մեկնիչք՝ մնացին նք կոյս.

Եւ եղև յետ այսորիկ 'ի մեկնել դանիէլի զե-
րազ թգ̃րին՝ կացոյց զնա թգ̃րն իշխան 'ի վերայ
աշխ̃ին բաբելացւոց, և իշխան իշխանաց. և 'ի
խնդրոյ նորա կացոյց զսեդրաք, զմիսաք, և զա-
բեդնագով իշխան 'ի վերայ գործոց աշխ̃ին բաբե-
լացւոց. որպէս գրի 'ի դան. բ. 48:

Իսկ նաբուգոդոնոսոր արքայ հպարտացեալ
յանձն իւր, և յամբարտաւան խորհուրդս ամ-
բարձեալ՝ կամեցաւ պաշտիլ իբրև ա̃ծ. և յայս
իսկ կանգնեաց զարձան իւր յոսկւոյ 'ի դաշտին
դէերայ, բարձրութ̃ի նորա վաթսուն կանգուն,
և լայնութ̃ի նորա կանգուն վեց. և հրաման ե-
հան յա̃մ ազգս՝ որք էին 'ի թգ̃րութե̃ իւրում՝
ժողովիլ անդր, և երկիրպագանել արձանի իւ-
րում 'ի ձայն փողոյ, սրնգի, թմբկի, քնարի և
տաւղի, և այլ ա̃մ արհեստական գործեաց և
միաբանութե̃ երգոյ. և որ ոչ երկիր պագանիցէ,
անկցի 'ի հնոց հրոյ.

Եւ 'ի խոյս տալ անանիայ, ազարիայ, և միսայէ-
լի՝ ամբաստան եղեն զն̃ցէ առ թգ̃րն. և թգ̃րն
հրամայեաց ածել զն̃ս առաջի իւր. և սպառնա-
ցաւ նոցա արկանել զն̃ս 'ի հնոց բորբոքեալ հրոյ.
* և ո՞վ է (ասէ) ա̃ծ, որ փրկեսցէ զձեզ 'ի ձեռաց
իմոց ||. (դան. գ. 15:) Պատասխանի ետուն նմա
և ասեն. * ոչ ինչ պիտոյ է մեզ բանիւ այդորիկ
,, տալ

„ տալ քեզ պատասխանի. զի է մեր ած յերկինս՝ զոր
„ մեքն պաշտեմք, կարող է փրկել զմեզ 'ի հնո-
„ ցէ հրոյդ բորբոքելոյ, և 'ի ձեռաց քոյ արքայ
„ ապրեցուցանել զմեզ. ապա թէ ոչ՝ այս ինչ
„ յայտնի լիցի քեզ արքայ. զդիսքո մեք ոչ պաշ-
„ տեմք. և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝
„ երկիր ոչ պագանեմք ||.

Յայնժամ լի եղև բարկութբ նաբուգոդոնոսոր
արքայ. և հրամայեաց ջեռուցանել զհնոցն
եօթնպատիկ առաւել յոյժ ։ Եւ անդէն արք
հինգ զօրաւորք կապեցին զնս, և արկին 'ի հնոցն
զգեստուք իւրեանց. և առաւել ևս բորբոքե-
ցին զհնոցն նաւթիւ և ձիւթով, վշով և որթով.
մինչև բոցոյ նորա դիզանալ 'ի վեր մինչև ցքա-
ռասուն և ինն կանգուն. այսինքն մինչև ցլանջս
արձանին ։ Քանզի ասի թէ նաբուգոդոնոսոր ար-
քայ զերկոտասան ակունս վակասի քահանայա-
պետին հրէից՝ եդ 'ի լանջս արձանին՝ որում մօտ
էր հնոցն. և բոցն բարձրացեալ մինչև 'ի չափ
լանջացն՝ ոչ ևս ել 'ի վեր՝ իբրև թէ պատկառե-
լով յանուանէ այ՝ որ էր յականսն անդ. և զի
'ի ստորէ մինչ 'ի լանջսն քառասուն և ինն կան-
գուն չափիւր, վն այն դնէ դիզանալ բոցոյ ցքա-
ռասուն և ինն կանգուն ։

Յանկանիլ անանիանց 'ի հնոցն՝ եբաց ազարիա
զբերան իւր 'ի մէջ հրոյն. և սկսաւ օրհնել զած
'ի դիմաց ամյն, և ասէ. * օրհնեալ ես տր ած
հարցն մերոց ||. մինչև ցայն տեղին՝ ուր ասի. * և
„ ծանիցեն, զի դու ես տր ած միայն, որ փա-
„ ռաւորեալդ ես 'ի վերայ ամ տիեզերաց ||. Եւ
յայն բան երևեցաւ 'ի միջի նոցա հրեշտակ այ՝
որ պահէրն զնոսա. և փարատեաց զծուխ հրոյն
խապառ. և շրջէր ը նա 'ի մէջ հնոցին իբրև 'ի

սենեկի ։ Իսկ 'ի լինել այսր՝ երեքին միաձայն սկսան օրհնել զԱծ, և ասել. * օրհնեալ ես Տր
,, Ած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձ-
,, րացեալ յաւիտեան ‖ . Հրաւիրելով 'ի նոյն և զԱմ արարածս յերկնից մինչև յերկիր, և մինչև յանդունդս խորոց ։

Լուեալ Նաբուգոդոնոսորայ զօրհնութիւն նց՝ լի եղև ահիւ . և հայեցեալ 'ի հնոցն՝ ետես 'ի նմա զարս չորս . զարմացաւ և ասէ . * ո՞չ արս երիս
,, կապեալս արկաք 'ի մէջ հրոյն . . . . . այլ ես
,, տեսանեմ արս չորս արձակս . և գնան 'ի մէջ
,, հրոյն, և ապականութիւն ինչ ոչ գոյ 'ի նոսա .
,, և տեսիլ չորրորդին նման է որդւոյ Այ ‖ . Իսկ մատուցեալ 'ի դուռն հնոցին՝ ձայնեաց առ նոսա, և ասէ . * սեդրաք, միսաք, և աբեդնա-
,, գով, ծառայք Այ բարձրելոյ, ելէք և եկայք .
,, և ելին նոքա 'ի միջոյ հրոյն . և ժողովեցան
,, նախարարք և զօրավարք և կուսակալք և զօ-
,, րաւորք թագաւորին . և տեսանէին զարսն,
,, զի ոչ տիրեաց հուրն 'ի մարմինս նց . և հեր
,, գլխոյ նց ոչ խանձատեցաւ, և վարտիկք նց
,, ոչ այլադունեցան . և հոտ հրոյ ոչ գոյր 'ի
,, նոսա ‖ ։

Յայնժամ թագաւորն երկիր եպագ Տն առաջի ամյն նց, և ասէ . * օրհնեալ Ած սեդրաքայ,
,, միսաքայ, և աբեդնագովի . որ առաքեաց
,, զհրեշտակ իւր, և փրկեաց զծառայս իւր . զի
,, յուսացան 'ի նա, և զբան թագաւորին ա-
,, նարգեցին . և մատնեցին զմարմինս իւրեանց
,, 'ի հուր . զի մի պաշտեսցեն և մի երկիրպագ-
,, ցեն ամենայն աստուծոց . բայց միայն Այ իւ-
,, րեանց . . . զի ոչ գոյ այլ Ած՝ որ կարող իցէ
,, այնպէս փրկել ‖ ։ Յայնժամ առաւել ես շքե-

զայցոյց Թագաւորն զսեդրաք, զմիսաք և զաբեդնագով, և բարձրացոյց զնոսա յիշխանութի մեծ.

(դան. գ. 1 = 97):

Երեքին ոք յայսպիսի մեծապանծ պատուի վերամբարձեալ գտնին յայս այ անուան իւրեանց մեծամեծ շնորհս և օգնութիւն և փառս: Ասացի ըստ անուան իւրեանց. զի անանիա՝ որ էր առաջինն, Թարգմանի շնորհ այ. որով լցաւ հոգի նորա, և կոչեցաւ սեդրաք, որ Թարգմանի ստինք փափկութե՝ 'ի գիեցուցանել զազգն իւր: Ազարիա Թարգմանի օգնութի այ. որով արիացաւ նա, և կոչեցաւ միսաք, որ Թարգմանի տեսող և պարզապօղ՝ 'ի տեսել նորա 'ի համբերութե, և 'ի կանգնել նորին իբր պարիսպ ազգին իւրոյ: Միսայէլ Թարգմանի ով է հայցող, եւս և ամբարձումն այ, որով զօրացաւ նա, և բարձրացաւ, և կոչեցաւ աբեդնագով, որ Թարգմանի ծառայ լուսաւորութե՝ յերևել նր պաշտօնեայ լուսոյ ճշմարտութե:

Մք իւրեանց այսպիսի գերավայելուչ գործովք՝ երևելի և մեծարգի գտան քան զայլս բազումս: Այլեն նախատիպակ Թագ. պարծանաց եկեղեցւոյ 'ի հնումն՝ եւս և 'ի նորումն, և կանխահնչւն խրախոյսք փողոյ մարտիրոսաց. սքանչելապայծառ փառք ածպաշտութե, և չքնաղատիպ զարդ անապականելի ճշմարտութե: Նմանք սոցա հոգելից տաւիղ տանն հաւատացելոց, և օրհնութի սոցա քնար քաղցրութե 'ի բերանս օրհնաբանողաց երեքսրբեան Տրուէն: Ուստի և յամ եկեղեցիս քրիստոնէից հանապազ հանդիսացեն տեսանի օրհնութի սոցա 'ի պաշտամունս այ կենդանւոյ. Թէպէտ և առ եբրայեցիս յայժմեան օրինակս պակասի այս օրհնութի:

Ի

Ի բանից պատմութեան զենոբայ (յերես 55,) ե-
րեւի թէ 'ի լուսաւորել ազգին մերոյ 'ի ձեռն
սրբոյն գրիգորի. 'ի նոյն իսկ 'ի լուսաւորչէ մեր-
մէ կարգեալ եղեւ յեկեղեցի մեր՝ երգել զայս
օրհնութիւն սոցա. եւ այս ոչ եթէ ասորի կամ յոյն
լեզուաւ, այլ հայկականաւ, թէպէտ եւ այ-
լով գրով: Իսկ անտի մինչեւ ցայսր անխափան
կատարի այս, յաւելմամբ բազմադիմի եւ բազ-
մատեսակ շարականաց ըստ պատշաճի աւուրցն
յարմարութ. օրհնութեանն :

Բ.րդ՝ երգ կամ օրհնութիւն սոցա 'ի չորս մասունս
բաժանի. առաջինն կարգի 'ի խոստովանութիւն
արդար իրաւանցն այ վն ամի՝ զոր արար ազգին
հրէից՝ յածելն անդ 'ի վերայ նոցա զմեծամեծ
չարիս, եւ 'ի վարելն զնոսա 'ի գերութի. եւ այս՝
մինչեւ 'ի համարն 11: Երկրորդն կարգի 'ի մաղ-
թանս, մինչեւ 'ի համարն 22: Երրորդն յօրհ-
նութիւն մեծ վայելչութեան այ, մինչեւ 'ի հա-
մարն 28:

Չորրորդն 'ի յորդոր արարածոց յօրհնել զած,
եւ այս՝ մինչեւ 'ի վերջն. ուր արժան է յիշել եւ
զայս. զի այս չորրորդ մասն սկսեալ 'ի 34 հա-
մարոյ մինչեւ 'ի 38 համարն փոքր մի յետեւա-
ռաջութե բանից գնի յայլս, բայց առանց իրիք
յաւելուածոյ եւ առանց պակասութե, որով ոչ
ինչ այլայլի միտ բանին. որպէս եւ ոչ պէսպի-
սութե բաժանման համարոյն, ըստ որում տեսանի
յածաշնչի մերում: Գիտելի է եւս, զի որով-
հետեւ բանք այսր օրհնութե ամենեւին պարզ են՝
սակաւուք մեկնին, որպ տեսցի յառաջիկայդ.

## Ի. Բ. Ն.

1. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. օրհնեալ, փառաւորեալ անուն քո յաւիտեան։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ։

Օրհնեալ ասի Տէր իրապէս և առարկապէս. իրապէս՝ ըստ էութեան բարւոյ. առարկապէս՝ ըստ որում առարկայ լինի օրհնելոյ և գովելոյ յայլոց վասն էութեան բարւոյ։ Նոյնպէս փառաւորեալ ասի Տէր իրապէս և առարկապէս. իրապէս՝ ըստ էութեան փառաց. առարկապէս՝ Տէր փառաւորեալ լինելով յայլոց. տես և ՚ի մեկն. սաղ. ՃԼԷ. 12։ Եւ քանզի Աստուած է ինքնաբաւ էութիւն ամենայն բարւոյ և փառաց, որով և յամենայն օրհնի և գովի և փառաւորի, նա միայն տիրապէս ասի օրհնեալ և գովեալ, և յանուան իւրում փառաւորեալ է, թէ իրապէս, և եթէ առարկապէս. ուստի և որ օրհնէն՝ արձակապէս ասէ։

Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. օրհնեալ՝ փառաւորեալ անուն քո յաւիտեան։ Այսինքն. օրհնեալ ես դու յէութեան և յինքնութեան քում, և գովեալ յամենայն արարածոց. և անուն քո յամենայն փառաւորեալ՝ ոչ յայսչափ ինչ տևողութիւն, այլ յաւիտեան։ Եւ քանզի որ առարկապէս օրհնեալ ասի՝ նոյն յատկապէս գովեալ լինի, վասն այսորիկ ՚ի թարգմանութեան եօթ" և յամենայնի մերում գովեալ գտնի յերկրորդումն, այսպէս. * օրհնեալ ես
„ Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ, և փառաւո-
„ րեալ անուն քո յաւիտեան ‖։ Ուր ՚ի լատ" գտնի. * գովելի և փառաւոր անուն քո յաւիտեան ‖. իսկ յասոր" գտնի. * բարձրասցի և գովութեամբ հռչակեսցի անուն քո ‖. զնոյն նշանա-

նա-

նակեն և սրբին ։

Իսկ յաւելուլն տր ած հարցն մերոց, յերիս ակնար-կէ. մի՝ ՚ի դաւանութիւն Ճշմարտութեան. երկրորդ՝ ՚ի խոստովանութիւն խոնարհութեան. և երրորդ՝ ՚ի ցոյց ընտանութեան ։ Ըստ առաջնոյն ցուցանէ՝ թէ զոր ած դաւանիմն՝ ոչ եթէ նորոգ ճանաչեմն զնա լինել ած, այլ ՚ի հարց անտի. որպէս թէ ա-սէին. ոչ եթէ ՚ի մէնջ հնարեալ ինչ է ած, որպիսի են ածքն հեթանոսաց, այլ դաւանեալ ՚ի սկզբանէ յաւիտենից ՚ի հարց մերոց՝ ած ճշ-մարիտ ։ Ըստ երկրորդին կամին ասել. չունիմք արժանաւորութիւն կոչելոյ զքեզ ած մեր, զի յամօթ գտաք առաջի քո. այլ կոչեմք ած հարցն մերոց. զի նոքա գտան արժանի այսմ. որում և դու արժանապէս կոչեցար նոցա ած. և մեք վ՚ա արժանաւորութեան նոցա տեսանեմք ՚ի հնոցին զսք-անչելիս զայս մեծ ։ Ըստ երրորդին կամին ա-սել. թէպէտ և անարժան իցեմք, բայց քանզի եմք ընտանիք՝ տն որդիք ծառայից քոց՝ որք էին հարք մեր, յարժանաւորութիւն նոցա ապաստա-նեալ՝ վստահիմք օրհնել զքեզ, և աղաչել ։ Զայս եդեալ մատչին ՚ի խոստովանութիւն ածային արդարութեան ՚ի մատնել իւրեանց ՚ի նեղութիւն և ՚ի տառապանս գերութեան. վ՚յ ասեն ։

2. Զերանաւն անդրադարձեր զայս ամ ընդ մեզ. արդար ես դու տր. և ամ գործք քո ճշմարիտ են ։

Այս անգամ զորս յիշէ աղաչելով՝ հօրն յայն ած՝ որք անցին Է իմլայցիս ՚ի գերել ն՟յ յերկիրն իւ-րեանց՝ մանաւանդ յաւերմանն երուսաղեմի, և ՚ի կործանման տաճարին. և զի զայսոսիկ արար ած ըստ արդարութեան գործոց նոցա, վ՚յ իբր իրաւացի ինչ հատուցումն ՚ի մէջ բերէ, և ասէ ։

Յերաստանս անցուցեր զայս ամ ընդ մեզ. արդար ես դատաւոր. և ամ գործք քո ճշմարիտ են: Այսինքն թէ արդարութբ և իրաւամբք արարեր ընդ մեզ զայս ամ. և ոչինչ ինչ անիրաւեցար յառնելդ այսպէս. զի արդար ես. և զոր ինչ գործես՝ ճշմարիտ է ամ՝ ըստ համաձայն անսահման իմաստութե քում. Այլ թէպէտ բառդ յերաստանս պակասի յայլս, բայց իմացեալ լինի և այն: Յաւելու ապա ասել:

3. Ճանապարհք քո ուղիղ են. և ամ դատաստանք քո արդար են:

Ճանապարհօքն այս նշանակին նախ՝ օրէնք նր, որք առաջնորդեն մեզ 'ի կեանս. երկրորդ՝ ս և իցէ գործք նորա, յորս գնայ, այս յորս գործէ. երրորդ՝ նախախնամութի կամ կառավարութի նր. և յայս միտ գնի աստ: Իսկ դատաստանօքն այս տիրապէս նշանակի այն՝ որով դատէ զոք, և արժանի պատուհասաց տեսանելով պատուհասէ զնա. որպէս արար ընդ իսրայէլացիս՝ մատնելով զնոսա 'ի գերութի. ընդ այսոցիկ առեալ ասէ:

Ճանապարհք քո ուղիղ են. և ամ դատաստանք քո արդար են: Այսինքն նախախնամութիք և կառավարութիք քո ոչ մոլորին յարդարութէ և 'ի ճշմարտութէ. զի ամենևին ուղիղ են. նոյնպէս և ամ դատաստանք քո, որով դատես, և ընդ արժանեաց հատուցանես, ոչ ինչ անիրաւին. զի ամենևին արդար են, և զոր արդարն է՝ մնան և կատարեն: Այլ այսմ հետևեցուցանէ ասելով:

Դս

4 · Դատաստան արդարութ̅ե ածեր 'ի վերայ մեր , ըստ ամ̅ի որ ինչ ածեր 'ի վերայ մեր , և քաղաքի սբ̅յ հարցն մերոց երուսաղէմի :

5 · Արդարութ̅բ և յիրաւի ածեր զայս ամ̅ 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց ·

Աստանօր դատաստանաւ ոչ նշանակի նոյն ինքն դատաստանն այլ՝ զորմէ խօսեցաւ 'ի նախընթաց համարն , այլ գործ այնր դատաստանի · զի որպէս ասէ :

Դատաստան արդարութ̅ե ածեր 'ի վերայ մեր , ըստ ամ̅ի որ ինչ ածեր 'ի վերայ մեր , և քաղաքի սբ̅յ հարցն մերոց երուսաղէմի : Այսինքն թէ զի ամ̅ի և ամ̅ին՝ արդար դատաստանաւ ածեր 'ի վ̅ր մեր զայս պատիժ պատուհասի՝ զոր կրեմք : Եւ առ հաստատութ̅ի ասացելոյն՝ կրկնելով յաւելու , թէ յիրաւի զի ամ̅ի արդար դատաստանաւ ածեր զայս ամ̅ 'ի վ̅ր մեր , եւս և 'ի վ̅ր քաղաքի մերոյ երուսաղէմի , որ էր քաղաք ա՛ռ՝ թագաւորաց մերոց՝ գրաւեալ 'ի դաւթայ · և զի այս իրաւամբք պատուհասիս եղև վասն մեղաց , զնոյն իսկ յաւելու ասել :

5 · Արդարութ̅բ և յիրաւի ածեր զայս ամ̅ 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց : Կամի ասել · որովհետև մեղաք առաջի քո՝ արժանի գտաք այսպիսի պատժոց · ուստի և դու արդարութ̅բ և ճշմարտութ̅բ և իրաւամբք ածեր զայս ամ̅ 'ի վ̅ր մեր : 'Ի մէջ բերէ ապա և զմեղսն , և ասէ :

6 · Մեղաք և յանցեաք՝ ապստամբ լինել 'ի քէն · մեղաք յամ̅ · և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք :

7 · Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս պատուիրեցեր դու մեզ · զի շնորհս գտցուք մեք 'ի քէն :

Անօրինել և յանցանել և մեղանչել 'ի նոյն վե-րածին. նոյնպէս և ոչ անսալ պատուիրանացն այ՟ և ոչ պահել զոր պատուիրէ ած՟՝ զնոյն նշա-նակէն: Իսկ պատճառ զայսօսիկ միանգամայն 'ի մէջ բերելոյն է ցուցանել զառաւելութի՟ պարտաւորութե՟ յանցանացն: Բայց մարթ է զա-նազանութի՟ ինչ ևս բացատրել զսոսին. զի կար-գին զոր դնէ՝ ասելով:

**Անօրինեցաք և յանցեաք՝ ապստամբ լինել 'ի քէն. մեղաք յամն. և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք:** Կամի ա-սել. Թէպէտ և տուաք 'ի քէն զօրէնս 'ի ձեռն Մովսէսի, բայց իբր ոչ ունող օրինաց կացաք, և այսու **անօրինեցաք**. որով և նախատինս տուաք օրինացն քոց, և այսու **յանցեաք** 'ի նոսին. և զայս առնելով՝ յամն **մեղաք**, զի սխալեցաք չարաչար (զի որպ 'ի յոյժ գնի՝ բացամեղաք). և պատճառն է՝ զի ոչ **անսացաք** պատուիրանաց քոց: Զա-ռաւելն ևս 'ի մէջ բերելով ասէ:

7. **Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս պատուիրեցեր մե-զ. զի զբարիս գտցուք մեք 'ի քէն:** Կամի ասել. զոր ինչ պատուիրեցեր դու մեզ տր՟՝ վն՟ բարւոյ մե-րոյ պատուիրեցեր. իբր զի պահպանութի՟ նոցին լիցուք բարի, և գտցուք 'ի քէն զբարիս. այլ մեք անսաստ գտաք այնմ՟ տմի, և ապերախտ առ բազմերախտ բարերարդ մեր:

Այսոքիկ բանք ոչ ցուցանեն՝ թէ Ազարեանք այսպէս չարաչար մեղուցեալ իցեն, այլ թէ ազգն՝ յորմէ էին ինքեանք, մանաւանդ թա-գաւորքն՝ անօրինեցան առ ած՟. և զի ինքեանք (որպէս ասացաք) 'ի նոյն ազգէ էին, և 'ի ցեղէ այնոցիկ թագաւորաց, 'ի վերայ իւրեանց ա-ռնուն զմեղս նոցա, և իբր 'ի բերանոյ նոցա խօ-սին. զի որում էր սովորութի՟ մարգարէից՝ զանօ-րէ-

ընդունելութիւն այնց (որ յինքեանս բերելով խոստովա-նիլ առ ած · որպէս առնեն և որքս աստ · ուր յետ խօսելոյ զայսպիսիս՝ հեռացուցանեն , և ասեն ։

8 · Եւ զամ զոր արարեր , և զորինչ ածեր 'ի վերայ մեր , արդար դատաստանաւ արարեր ։

9 · Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց անօրէ-նաց խոտորաց և ապստամբելոց ։

10 · 'Ի ձեռս թագաւորի անօրէնի և չարի քան զամ եր-կրի մատնեցեր զմեզ ։

Սոյնքիկ ասացուածք իբր բացատրութիւն ինչ են այնոցիկ բանից՝ զորս յառաջ բերին 'ի համարն 2 · մինչև 'ի 5 · այլ զորս անդ իբր առաջարկութիւն եդին , աստ իբր հետևութիւն դնեն , և ասեն ։ Եւ զամ զոր արարեր և զորինչ ածեր 'ի վերայ մեր , արդար դատաստանաւ արարեր ։ Ոչ ասէ սոսկ զոր ինչ արարեր , այլ զամ · առ 'ի ցուցանել , թէ այն ամ պատիժ՝ զոր եած ած 'ի վերայ որդւոցն իւր՝ արդար դատաստանաւ էր · և ոչ մին յայնցանէ էր առանց արդարութեան ։ Իսկ կրկնելն զբառս արարեր և ածեր՝ ոչ այնչափ զատուցումն եղելոյն ցուցանէ՝ որչափ զարդարութիւն դատաստանին այ ։ Այլ թէ զինչ էր այն՝ զոր եած ած 'ի վր նց ոչ կարելով մի ըստ միոջէ պատմել , միայն զմատնիլն իւրեանց 'ի մէջ բերեն և ասեն ։

9 · Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց անօրինաց խոտորաց և ապստամբելոց ։ Թշնամիք թէպէտ և մարթ է իմանալ զբազումս , բայց դիտումն բանին հայի 'ի բաբելացիս , զորս կոչէ անօրէնս , խիստս , և ապստամբողս · որով ցուցանէ՝ թէ ծանր եղև յոյժ մատնիլ նոցա 'ի գերութիւն · զի ոչ սոսկ 'ի ձեռս թշնամեաց մատնեցան , այլ 'ի ձեռս

ձեռս այնպիսի խիստ և անօրէն թշնամեաց, որք յիւրեանս եւս ապստամբք էին յարդարութե՟ն , և թագաւոր նոցա առաւել քան զնոսա · ուստի ասէ ։

10 · Ի ձեռս թագաւորի անօրէնի և չարի քան զամ երկրի մատնեցեր զմեզ ։ Այս թագաւոր էր նա ինքն նաբուգոդոնոսոր , զոր կոչէ անօրէն և չար քան զամ երկիր , այսինքն քան զամ բնակիչս երկրի · իսկ մեծութիւն չարութե նորա հաչակեցաւ այնու՝ զի մարդ գոլով անարգ՝ կամեցաւ պաշտիլ իբրև ած ։ Որդ ասեն՝ եթէ ի ձեռս չարաց միայն մատնեալ եմք , և թագաւոր նմ չէր չար քան զնոսա , մարթ էր փոքր մի ոգի առնուլ՝ դէթ ի շնորհս թագաւորի · բայց թագաւոր նոցա քան զամ որդիս մարդկան չար լինելով՝ թշնամիք մեր ոգեպարտ կացուցանեն զմեզ , և խեղդեն ։ Նու զայս ասէ՝ ոչ իբր գանգատելով , այլ իբր խոստովանս համարելով · զի անընկճելի ապերասանութի և խստապարանոցութի ազգին իւր այսպիսում առնէր զնոսա արժանի · և իբ ասելոյն վարդանայ , * գժուարաչինչ չարիքն (իւր) այսպիսի բոլոց կարօտացան ‖ · մինչև ոչ եւս կարել ազատեանց վստահութբ բանալ զբերանս՝ առ ի խնդրել յոյ զազատութի ազգի իւրեանց · վյ ասեն ։

11 · Եւ արդ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր · զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից ։

Ուր յայտնի են յանցանք՝ չիք տեղի արդարացուցանելոյ զանձն · և զի յանցանք որդւոցն իւր յայտնի էին՝ վսկ չկարէին անամնիանք ջատագովելի ինչ առնել · այլ ափ ի բերան լռեալ թախծէին ,

ծէին , և լծախծութիւն ասէին :

Ես արդ ոչ եթէ մեզ ժամ բանալ զբերանս մեր . զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից : Այսու ասելով՝ ոչ միայն իմանան զժամանակն , այլ և զատիւն և զխրատունս պահանջօղս ժամանակի . իբր թէ ասէին . չունիմք իրաւացի առիթ՝ ժամանակ գտանելոյ՝ առ ՚ի արդարացուցանելոյ զմեզ բանիւք բերանոյ մերոյ , նա զի ամաչեմք և խօսիլ ինչ . զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց և պաշտօնէից :

Ծառայիւք իմացեալ լինին աստ մարգարէքն , որք յորդորէին զիսրայելացիսն՝ յետս կալ ՚ի չարեաց իւրեանց : Իսկ պաշտօնէիւք իմացեալ լինին որք քահանայք և ղևտացիք , որք համաձայն բարբառոյ մարգարէիցն առաջի դնէին ժողովրդեան զկամս ած . և զի արհամարհեցին նոքա զբանս սոցա , և վն արհամարհելոյ զայնս մատնեցան ՚ի թշուառութիւն գերութե , վսն յամօթ եղեն առաջի նոցա , և նախատինք եղեն նց , իբր նախատելի ՚ի նոցանէ , և պատճառ նախատինս կրելոյ ՚ի նոցանէ . և այս ամօթ տագնապեր զոգիս նոցա , և պապանձեցուցանէր զնս : Աւասիկ այսպէս եղեալ՝ դառնան ՚ի մաղթանս և ասեն :

12 . Այլ դու տէր արարեր ընդ մեզ ըստ ամենայն քաղցրութեան քո . ըստ ամենայն ողորմութեան քո . և ըստ ՚ի բազմաց ամենայն ողորմութեան քո ՚ի մեզ :

Ամաչել ազգին ՚ի ձեռս թշնամեաց՝ ետուն մեզ իւրեանց . իսկ զոչ մատնիլն իսպառ՝ տան փառացն այ ըստ երից , իբր ըստ անուան նր , ըստ ուխտին , և ըստ զղջմունս՝ ասելով :

Այլ դու տէր արարեր ընդ մեզ ըստ ամենայն քաղցրութեան քո . ըստ ամենայն ողորմութեան

ուխտս քո . և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութիւն քո 'ի մէնջ : Կամին ասել . յիրաւի վասն մեղաց մերոց մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց . բայց դու՝ որ ոչ ես իբրև զմարդիկ ոխս պահօղ , այլ տէր անոխակալ , մի՛ իսպառ մատներ , զի մի՛ զն անմի , և մի՛ զն տմ տեղւոյ և ժամանակի . և այս՝ վն փառաց անուան քո . յիշեա և զուխտ քո՝ զոր ուխտեցեր ընդ հարս մեր . և մի՛ քակտեր զնոյն , այլ վասն այնր թեթեւացո զպատուհաս մեր . և եթէ յայն ուխտ քո ոչ կամիցիս հայիլ , հայեաց յողորմութիւնս քո , և գոնէ զայն մի՛ 'ի բացեայ առներ , զի մի՛ հեռացուցաներ 'ի մէնջ , այլ առ մեզ մօտ կացո զնոյն , զի տեսցէ՝ զոր կրեմք , և այց արասցէ՝ յորս հեծեմք : Եւ զի չունէին համարձակութիւն և ոչ զայս խնդրելոյ՝ միջնորդ կացուցանեն զաբրահամ , զիսահակ , և զյակոբ , ասելով :

13. Վասն աբրահամու սիրելւոյ քո , Իսահակայ ծառայի քո , և Իսրայելի սրբոյ քո :

14. Որոց ասացեր նոցա և ասացեր . բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութեամբ , և որպէս զաւազ առ եզր ծովու :

Զաբրահամ կոչեն սիրելի այ , զիսահակ՝ ծառայ նորա , իսկ զյակոբ՝ սուրբ նորին . վն զի 'ի սուրբ ընծայել այ զանձն իւր յորդւոց մարդկան՝ զաբրահամ եգիտ իւր հաճոյ զի հաճելի և հաճեցող ինքեան . վն այս և սիրեաց զնա , և նա զած : Իսկ որդի նորա իսահակ դրեթէ գնեալ եղեւ 'ի նմանէ խոյիւն . որով և եղեւ ծառայ նորա . և յամենայն գտաւ հաւատարիմ : Այլ որդին յակոբ սրբեցաւ լինել այ՝ զի եղեւ այ . ընդ որում մինչև ծնեալ էր՝ կոչեաց զնա ած յինքն , և արար զնա տեսող իւր .

իւր. վ՛որ և կոչեցաւ Իսրայէլ, քո տեսող այ: Այս
օրդ. քզի մեծ էլին՛ոք յաչս այ, թողեալ զայլս՝
զոսա առաջի մատուցանեն, և ասեն:

Վասն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծառայի քո. և իսրայէլի սրբոյ քո: Կամին ասել. աղաչեմք աղա-
չել զքեզ վ՛ն ազատութե մերոյ. զի չունիմք ինչ
արժանաւորութի խօսելոյ յանդիման մեծվայելչութե քում. վ՛ն որոյ զսիրելին քո զաբրահամ, և
զծառայ քո զիսահակ, և զսուրբ քո զյակոբ մա-
տուցանեմք առաջի քո. զի դո՛նե վ՛ն նց ողոր-
մեսցիս մեզ. և այս է խոստման քո. և առ այս
յարեն, և ասեն:

14. Խօսեցար նոցա և ասացեր. բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութեամբ, և որպէս զաւազ առ եզր ծովու: Այս խոստումն յայտնի աւան-
դի յԱծաշնչի. մանաւանդ աբրահամու յա-
սել նմա այ. (Ծնն. ԻԲ. 17.) * օրհնելով օրհնե-
„ սցից զքեզ, և բազմացուցանելով բազմացու-
„ սցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազ-
„ մութբ և իբրև զաւազ առ ափն ծովու ևս ||.
որով ցուցանի բազմանալ որդւոցն իւր:

Զաստեղս 'ի մէջ բերելով ցուցանէ փոխաբե-
րաբար, թէ յորդւոցն իւր իբր յաստեղաց ու-
նէին լուսաւորիլ այլ ազգք: Իսկ զաւազս յի-
շելով՝ նոյնպէս փոխաբերաբար ցուցանէ, թէ
որդիքն իւր հանդերձեալ էին լինել իբրև զա-
ւազս յարգելուլ զալիս ծովու, որ խափանել
զալէկոծեալ և զխառն 'ի խուռն վարդապետութ
օտար ազգաց, մանաւանդ յերևիլ փրկչին 'ի
մէջ նոցա: Այլ զի այսմ ա՛մի զհակառակն տե-
սանէին 'ի դերուն իւրեանց, ամն իրի և աղա-
րեանքն ողբալով իմն ասեն:

Ն-

15. Զի՛ տէր տէր նուաստացաք մեք քան զա̄մ ազգս. և եմք տառապեալք յա̄մ երկրի այսօր վասն մեղաց մերոց:

Որչափ աճեցին որդիքն Ի̄ղի ըստ խոստմանն Ա̄յ, այնչափ սկսան նուաղիլ և նուաղիլ, այսինքն յուժոյ ևս պակասիլ. վասն զի ը̄դդէմ զինեցան այնր խոստմանն. սմին իրի ասէն:

Զի՛ տէր տէր նուաստացաք մեք քան զա̄մ ազգս. և եմք տառապեալք յա̄մ երկրի այսօր վասն մեղաց մերոց: Այսմին ասել. դու տէր խոստացար հարց մերոց բազմացուցանել զմեզ և փառաւորել. իսկ մեք սաստիկ տեսանեմք զմեզ այսօր նուաղեալս և պակասեալս և փոքրկացեալս և անարգեալս քան զա̄մ ազգս, յորս ոչ գոն օրէնք և ոչ մարգարէք. ևս և տեսանեմք զմեզ տանջեալս և տառապեալս՝ ոչ եթէ սոսկ յերկրի մերում, այլ և ցիր և իցեմք յա̄մ տեղիս 'ի ծառայութե̆ և 'ի գերութե̆. բայց արդ ոչ եթէ դու՝ որ հաճեցար ը̄ն հարս մեր՝ այսպէս կամէիր առնել ը̄ն մեզ, այլ մեղք մեր 'ի սոյն հասուցին զմեզ թշուառութի̆. յորում ոչ միայն նուաղիմք և տառապիմք, այլ և ը̄ն օտար ազգաց յա̄մէ զրկեալ գտանիմք. և առ այս յարէն և ասեն:

16. Եւ ոչ գոյ 'ի ժամանակիս յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ. ոչ ողջակէզ պատարագաց. ոչ խունկ օրհնաց. և ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո, և ողորմութի̄ գտանել 'ի քէն:

Որովհետև իսրայէլացիք ազգովին գերեցան, և այն՝ երիցս, և քաղաքք նոցա աւերեցան, և տաճարն այրեցաւ, և մնացեալքն ցրուեցան, ոչ մնաց ինչ 'ի նոսա 'ի վայելել, ոչ 'ի մարմնաւո-

րաց

լոյց և ոչ 'ի հոգևորաց. վ՛ն ասեն:

Ոչ գոյ 'ի ժամանակիս յայսմիկ իշխան, մարգարէ և առաջնորդ. ոչ ողջակէզ պատարագաց. ոչ խունկ օրինաց, և ոչ տեղի պատարագս մատուցանելոյ առաջի քո, և ողորմութ գտանել 'ի քէն: Կամին ասել. յայնպիսի վիճակ ողորմելի կենաց գտանիմք, յորում ոչ գոյ մեր իշխան՝ այսինքն թագաւոր. և ոչ առաջնորդ՝ այսինքն քահանայապետ. և ոչ մարգարէ. ո՛չ զի իրօք ոչ գոյին նոքա, այլ զի թագաւոր նոցա 'ի գերութ էր, և ոչ գոյր յոյս դառնալոյ անդրէն. և քահանայապետ նոցա՝ այն է յովսեդեկ ոչ կարէր լրապէս 'ի գործ ածել զքահանայապետութի իւր. և մարգարէք նոցա երեմիա, բարուք, եզեկիել, սոփոնիա, ամբակում, զաքարիա, և մաղաքիա՝ ոչ երևէին ըստ իւրեանց պաշտաման. ըստ որում ոչ տեսանիւր ազդել ինչ մարգարէութ նոցա: Ի վր այսր ամի տեղի զոհիցն և՝ այն է տաճարն՝ կործանեալ էր, և ո՛չ մատուցանիւր՝ ոչ ողջակէզ, ոչ պատարագ, և ոչ խունկ ըստ օրինաց, որք սահմանեալ եղեն յայ՝ առ 'ի գտանել 'ի նմանէ զողորմութի, և ողորմութ զազատութի: Յայսմ ամէ պակասելով՝ և զայլ ինչ 'ի ձեռին ոչ ունելով ազարեանց՝ զանձինս մատուցանեն և ասեն:

17. Այլ անձամբ խոնարհեալ և հոգւով տառապեալ ընդունելի լիցուք մեք որպէս ողջակէզս խոյոց և զուարակաց, և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց:

18. Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր այսօր առաջի քո. զի կատարեալ գնասցուք զհետ քո. և չիք ամօթ յուսացելոց 'ի քեզ:

Կիսէին ազարիանք, թէ տուեալ ընդունելի է

է առաջի ա̃յ խոնարհիմն հոգւով՝ քան զողջա-
կէզս զոհից մատուցանել. Ըստ որում ասաց Դա-
ւիթ. (սաղ. Ծ. 18.) * պատարագ ա̃յ հոգի
խոնարհ ‖. և զայս գիտելով՝ զնոյն զայս աղա-
փխնկ զոհից առաջի առնեն, և ասեն.

Այլ անձամբ խոնարհեալ և հոգւով տառապելով ընդ-
ունելի լիցուք մեք որպէս ողջակէզս խոյոց և զուա-
րակաց, և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց: Այ-
սինքն ասել. ոչ ունելով տեղի՝ զոհս մատուցանե-
լոյ քեզ՝ աւասիկ զմեզ մատուցանեմք, ոչ 'ի
սրբութի մեր ապաւինելով, այլ յանձինս մեր
խոնարհելով, և 'ի հոգիս մեր տառապելով, և
զմեզ բոլորապտուղ ողջակէզ քեզ մատուցա-
նելով 'ի հնոցիս յայսմիկ բորբոքելոյ իբրև 'ի
սեղանի ողջակիզաց. և աղաչեմք՝ զի մի խոտան
գտցուք առաջի քո, այլ լիցուք ընդունելի. որպ̃
ընդունելի լինէին քեզ ողջակէզք խոյոց և զը-
ուարակաց, և պատարագք բիւրաւոր գառանց
պարարտաց: Այլ առ առաւել հաճոյ ընծայե-
լոյ զայս, յաւելուն և ասեն.

18. Այժմ ընդունելի լիցի պատարագս մեր այսօր
առաջի քո, զի կատարեալ գտցուք զհետ քո, և չէ ամօթ
յուսացելոց 'ի քեզ: Այսինքն թէ այս մեր նահա-
տակութի՝ զոր յանձն առաք վ̃ քո, այնպիսի
ընդունելութբ ընդունելի լիցի 'ի ժամուս յայս-
միկ, որպ̃ զի սովին գտցուք իբրև զկատարեալ
ողջակէզ՝ ոչ եթէ առաջի քո, այլ զհետ քո,
որով ցուցանի խոնարհութի սրտից նց յընծայել
զինքեանս ա̃յ. իբրզի ոչ համարձակելով առաջի
ա̃յ կալ և նուիրել զայսպիսի պատարագ՝ զհետ
նր հայէին, յուսալով թէ յիրաւի ընդունելի
լինելոց իցէ պատարագ իւրեանց, և տան զպատ-
ճառն ասելով.

Եւ ոչ է ամօթ յուսացելոց 'ի քեզ : Եւ բառդ՝ և՝ դնի փոխ պատճառական շաղկապիս զի, որպէս յայտ է յայլոց թարգմանութեանց և յմիաւորելէ մերմէ . իբր թէ ասէին . ահն ունիմք՝ թէ ոչ յամօթ արասցես զմեզ, որք յուսացեալ եմք 'ի քեզ . զի ոչ ոք 'ի յուսացողաց 'ի քեզ կրեաց զամօթ : Եւ առ զօրացուցանելոյ զմաղթանս իւրեանց՝ յարեն զկնի և ասեն :

19. Եւ արդ գամք զհետ քո ամ սրտիւ մերով . երկնչիմք 'ի քէն . և խնդրեմք զերեսս քո Տէր . մի յամօթ առներ զմեզ :

Որդիքն Իսրայելի յետ բազում բարիս տեսանելոյ յԱյ՝ յետոյ չոգան 'ի նմանէ . և 'ի սպառնալեայ 'ի նոսա 'ի ձեռն Երեմեայ , որպէս և 'ի ձեռն այլոց մարգարէից , ոչինչ երկեան 'ի նմանէ . և 'ի մատնիլ անդ 'ի թշնամութի՝ ոչ խնդրեցին զերեսս նորա . և տեսեալ զինքեանս 'ի յետին անարգութե՝ յամօթ եղեն 'ի կարծիս իւրեանց . այսոցիկ զհակառակն ցուցանել փութան սոքա Ազարեանք , և ասեն :

Եւ արդ գամք զհետ քո ամ սրտիւ մերով . երկնչիմք 'ի քէն . և խնդրեմք զերեսս քո Տէր : Բառս և արդ՝ դնի աստ փոխ բառիս և այժմ . որպէս յայտ է յայլոց թարգմանութեանց . ըստ որոյ կամին ասել . այժմ մեք ոչ ևս յետս կամք 'ի քէն իբր որդիք ապստամբք . այլ զհետ քո գամք ամ սրտիւք մերովք . ոչ թէ գամք ամ յօժարութե սրտից մերոց . և գամք ըստ այնմ՝ ընդ որս պատուիրեցեր մեզ գալ . և յայսմհետէ ոչ երկնչիմք ինչ 'ի մարդկանէ , այլ 'ի քէն միայն . և դու Տր հայելով 'ի խոնարհութի մեր՝ մի մերժեր զմեզ յերեսաց քոց . այլ համարձակեցո զմեզ՝ պարզերես

ներկայանալ առաջի քո, և մի՛ գտանիլ գլխակոր և ամօթալից. և առ այս յարեն և ասեն.

Մի՛ յամօթ առներ զմեզ։ Նա ոչ զոք յամօթ առնէ յիւրմէ կողմանէ. որպէս առնեն իշխանք ծխոյ, որք յապաւինիլ այլոց յինքեանս՝ երբեմն զերեսս դարձուցանեն, կամ 'ի բաց մերժեն, կամ խստադէմս խօսին, կամ 'ի ձեռս այլոց մատնեն, և կամ չարաչար պատուհասեն. որովք և յամօթ առնեն զյուսացեալսն յինքեանս, թէ և չկայցէ նենգութի ինչ 'ի յուսացօղսն անդ։ Իսկ որք խնդրեն զնա և յուսան 'ի նա՝ ոչ երբեք դարձուցանէ նա 'ի նոցանէ զերեսս իւր, ոչ մերժէ զնոսա, և ոչ դատապարտէ. միայն թէ չկայցէ նենգութի կամ անզգամութի ինչ 'ի նոսա։ Յայս ապաստանեալ և ապաւինեալ, ասեն. որովհետև խնդրեմք զքեզ յամենայն սրտէ մերմէ, ակնունիմք՝ թէ ոչ արձակեսցես զմեզ ամօթով. այլ ցուցցես մեզ զփրկութի քո, ըստ հեզութեան քում և ըստ բազում ողորմութեանդ. և առ այս յարեն զկնի և ասեն։

20. Այլ արա՛ առ մեզ ըստ հեզութեան քում, և ըստ բազմութեան ողորմութեան քում. փրկեա՛ զմեզ ըստ սքանչելեաց քոց, և փառաւորեսցի անուն քո յաւիտեան։

Հեզութիւն է առաքինութի անբարկանալի մնալոյ 'ի յառիթս բարկութե. և զի երբայեցիք բազում առիթս ետուն այ բարկութե, որով և գրգռեցին զնա 'ի բարկութի մեծ, 'ի հեզութի նորա դիմեն ապաւինեալք, 'ի մէջ առեալ և զբազում ողորմութի նորին՝ ասելով։

Այլ արա՛ առ մեզ ըստ հեզութեան քում, և ըստ բազմութեան ողորմութեան քում. Կամին ասել. այո՛ արժանի եմք պատուհասելոյ քումդ սաստիկ բարկութե, որովհետև

հետև բազմաց աւխթ տուաք քեզ պարկանա-
լիս · այլ դու Տէր մի՛ հայիր յաւխթս մեր , այլ
յամենաքաղցր հեզութիւն քո · և ըստ հեզութեան քում
զիջիր 'ի բարկութենէ քումմէ · հայեաց և 'ի բազ-
մապատիկ ողորմութիւնս քո , և բաւական դատաս-
ջիր՝ զոր ինչ յարդ անցուցեր ընդ մեզ · Բայց
քանզի մարդկօրէն խօսելով իբր անկարելի երե-
էր նոցա զիջանիլ ում յայնպիսի աւխթան , և
փրկել զինքեանս՝ ապաւինին 'ի սքանչելիս նորա
և ասեն ։

Փրկեա՛ զմեզ ըստ սքանչելեաց քոց · և փառաւորեսցի ա-
նուն քո յաւիտեան ։ Այսմին ասել · հայելով 'ի մեծ-
ձանկ թշուառութեան մերոյ՝ զրեթէ անկարելի տե-
սանեմք զփրկութիւն մեր · բայց քանզի ամենակա-
լող ձեռն քո յանհնարինս ցուցանէ զսքանչելիս
հնարից , որպէս եցոյց յեգիպտոս , յայտ ապա-
տան եղեալ՝ աղաչեմք , ցո՛յց և այժմ զսքանչելիս
քո , և նովին փրկեա՛ զմեզ · և այնու տուր փառս
անուան քում · Զի այնմ արա՝ զի փառաւորեսցի
անուն քո , 'ի հաւաստել՝ թէ սքանչելագործ Տէր
ես և կարող ամի · և 'ի լինել այսր՝ ցնծասցուք
և մեք 'ի քեզ , և փառաւորեսցուք զքեզ Տէր · և
թշնամիք մեր ամաչեսցեն · զորոց խօսին 'ի յա-
ջորդ համարին՝ ասելով ։

11 · Յամօթ լիցին ամենայն որ չարչարեն զծառայս քո ·
ամաչեսցեն լիցին բռնութեամբ նոցա · և ամ զօ-
րութիւնք նոցա խորտակեսցին ։

Յամօթ լինելն է կերպ զհետ եկեալ մտ յայտ-
նելոյ պակասութե · որ 'ի մեծին ուրուք՝ յոյժ կա-
րելին պատասխանել կամ բացատրել զբանն՝ յոր-
ժամ 'ի յայտ գայ պակասութիւն իմաստութե նորա ,
ըմբռնի 'ի կերպ ամօթոյ · դարձեալ 'ի յանել

ուրուք 'ի վերայ այլոյ՝ յոչ կարելն յաղթել 'ի յայտ գալ տկարութէ զօրութե նորա՝ պաշարի յամօթոյ . և զի զայսպիսի ամօթ ունէին կրել թշնամիքն Տլի, մինչ ասէ :

Յամօթ լիցին ամենեքին որ չարչարէին զծառայս քո . ամաչե-ցեալ լիցին բռնութեամբ նոցա . և ամ զօրութեամբ նոցա խոր-տակեսցին : Այսմին ասել . որք չարչարեն զմեզ զծառայքս քո, տեսեալ թէ ոչ կարեն հանել զմեզ 'ի ձեռաց քոց՝ ամօթ կրեսցեն . և բռնութիւք նց դարձցին 'ի նախատինս նոցին . և զօրութիք նց՝ զոր անպարտելի կարծեն, պարտեսցին և բեկեալ ցրուեսցին . և 'ի լինել այսր՝ գուցէ զգաստասցին . և առ այս յարէ , և ասէ :

22. Եւ ծանիցեն՝ զի դու ես Տր Ած միայն . որ փա-ռաւորեալ ես 'ի վր ամ տիեզերաց :

Երրակի ծանօթանայ մեզ Ած . մի 'ի յայտնութէ բանից իւրոց . և ըս սմին ճանաչէին զնա եբրայեցիք : Երկրորդ՝ 'ի տեսութէ գործոցն նր . և ըս սմին ճանաչէին զնա բազումք արտաքոյ եբրայեցւոց . որպէս և բարեկամքն յոբայ և այլք բազումք , ևս և փիլիսոփայք : Երրորդ՝ 'ի յայտնի հրաշից կամ 'ի խստագոյն պատժոց . ըստ սմին ծանեաւ զԱծ նաբուգոդոնոսոր՝ եթէ 'ի հրաշից՝ որ եղև առ դանիէլ և առ ազարեանս , և եթէ 'ի պատժոց՝ 'ի պատուհասին յնյ՝ փոխարկելով 'ի գազանային կերպարանս . (դան . դ . 30 .) յորժէ եկն 'ի միտս իւր , և ասաց . * միտք իմ
,, առ իս դարձան , և զբարձրեալն օրհնեցի , և
,, զկենդանին յաւիտենից գովեցի և փառա-
,, ւորեցի . . . արդ ես նաբուգոդոնոսոր օրհ-
,, նեմ և առաւել բարձրացուցանեմ և փառա-
,, ւորեմ զարքայն երկնից ևայլն . (դան . դ . 31 = 34) :

Յայս-

Յայսպիսի ծանօթութիւն ոչ ակնարկէ առաջիկայ
բանդ՝ յասելն ․

Ես ծանեայն, զի դու ես ա͞ծ միայն․ որ փառաւո-րեալ ես 'ի վերայ ա͞մ տիեզերաց ։ Այսինքն թէ գե-րիչք և տառապեցուցիչք մեր, և որք արկին զմեզ 'ի հնոցս յայս․ տեսեալ զզօրութիւն քո՝ և զքաջանչելիս քո մեծ՝ ծանիցեն, թէ դու ոչ ես իբրև զածս նոցա սուտս և անարգս, այլ ա͞ծ Ճշմարիտ՝ փառաւորեալ 'ի վերայ ա͞մի ընդ ա͞մ տիեզերս և յա͞մ ազգս․ զորմէ ասացեալ է մեր
'ի մեկն․ սաղ ։

Այս ա͞մ բանք խորհրդաբար ասին և 'ի դիմաց ազգի մարդկան․ որք վարեալ 'ի գերութիւն ըստ հոգւոյ, և մատնեալ 'ի հնոց ախտից՝ աղաղակե-ին բերանով նախահարց առ ա͞ծ․ արդարութ͞ը ածեր 'ի վ͞ր մեր զայս թշուառութիւն․ զի ոչ պա-հեցաք 'ի դրախտի անդ զպատուէր քո․ որով և մատնեցաք 'ի ձեռս դիւաց և սատանայի թագա-ւորի ն͞չ չարի քան զա͞մն․ և եմք ամօթալից ա-ռաջի քո․ խոկ դու՝ որ մերժեցերն զմեզ, մի թո-ղուր իսպառ․ այլ որպէս խոստացար՝ կատարեա զխոստմունս քո․ Եկ և փրկեա զմեզ․ որով և յամօթ լիցին թշնամիք հոգւոց մերոց․ և ծա-նիցեն ա͞մքին, թէ դու միայն ես ա͞ծ Ճշմարիտ ։ Այլ այս բանք յարմարական մեկնութ͞ը կարեն ասիլ և յայլոց, մանաւանդ 'ի բերանոյ ազգիս
մերոյ ։

Աստանօր աւանդի 'ի գիրս դանիէլի․ (գ․ 46 = 51․) թէ 'ի հասուցանել աղաւթայ զօրհ-նութի իւր յայս բան․ ա͞յ է․ * և ծանիցեն, զի դու
,, ես տ͞ր ա͞ծ միայն, և փառաւորեալ 'ի վ͞ր ա͞մ
,, տիեզերաց ‖․ * Հրեշտակ ա͞յ էջ և եկաց ը͞ն ա-
,, զարիանան 'ի հնոցի անդ․ և թօթափեաց ըզ-

„ բոց հրոյն 'ի հնոցէ անտի . և արար 'ի մէջ
„ հնոցին իբրև զհողմ՝ որ ցօղաբերին շնչիցէ . և
„ ոչ մերձենայր ամենևին հուրն 'ի նոսա , ոչ
„ տրտմեցուցանէր և ոչ նեղէր զնոսա . յայն
„ ժամ երեքեանն իբրև 'ի միոջէ բերանոյ օրհ
„ նէին , և գովէին , և փառաւոր առնէին զԱծ ,
„ և ասէին . օրհնեալ ես Տր Ած հարցն մերոց
և այլն ‖ .

Յայսմաիկ բանսդ երեք ինչ կան քննելի , առա ջինն է այն՝ թէ հրեշտակ Այ արդեօք 'ի սկզբ բանն էջ առ նոսա՝ թէ յընդհատիլ օրհնութեան , հաւանական և ճշմարիտ է ասել , թէ նախ Ած 'ի ձեռն հրեշտակի պահեաց զաղօթականսն 'ի կի զելոյ հրոյն . և յօրհնել նոցա զԱծ՝ էջ Տր յայտ նի եցոյց զինքն անդ հրեշտակն . և փարատեցոյց զծուխ հնոցին , և պայծառացոյց զտեղին . և զգենայր ընդ նոսա 'ի մէջ հնոցին : Նա այս օրի նակէր զիջանել որդւոյն Այ 'ի հնոց Յիս . յոր միտ առի 'ի շարականի 'ի խնն , * որ խոնարհու թ
„ իջեալ յՅս՝ շիջուցեր զբոց մեղաց , որպէս եր
„ բեմն 'ի բաբելոն 'ի մէջ հնոցին ‖ . Սոյնպէս
է և 'ի շար . Ղ . լը . լզ . և խը . ևա .

Երկրորդ քննելին է այն՝ թէ ո՞ր եղև պատճառ անկեզ մնալոյ ապարեանց . ոմանք ասեն զպահե ցողութի նոցա . ոմանք զկուսութի նոցին . ոմանք դատան իբր անդամանդ անկիզելի , և իբր սալա մանդր անվնաս : Բայց տիրապէս հւտք նոցա և ապաւինութի նոցին առ Ած եղև առիթ պահե լոյ զնոսա Այ . որպէս յայտ է 'ի պատմութե ան տի՝ զոր եդաք 'ի սկզբան :

Երրորդ քննելին է այն՝ թէ երեքին արդեօք ևս ասացին զառաջին բանն , թէ ազարիա միայն . բայց որովհետև ասի՝ թէ յետ իջման

հրեշ

Հրեշտակին երեքին 'ի միասին սկսան օրհնել զԱծ իբրև 'ի միոջէ բերանոյ, ասելն է՝ Թէ զառաջին բանն Ազարիա ասաց. որպէս գնի 'ի համարն 25. յասելն, * յարեաւ Ազարիա և եկաց
„ յաղօթս այսպէս. եբաց զբերան իւր 'ի մէջ
„ հրոյն և ասէ. օրհնեալ ես տր Ած հարցն մե
„ րոց, [ab]. բայց քանզի 'ի բերանոյ երիցն ասէր, վնկ երիցն համարեալ լինի այն աղօթք. իսկ որք զկնի գնին յետ իջմանն հրեշտակին՝ երիցն են միանգամայն. զի 'ի խնդրել նոցա զերեսս այ՝ իբրև տեսին 'ի տեսլեան հրեշտակին՝ երեքին եւս յափշտակեալ 'ի տեսութի անճառելի խորհրդոյ իջմանն որդւոյն այ, զոր յանդիման տեսանէր երեւումն այն, սկսան միաբանական ձայնիւ օրհնել զնա և ասել։

23. Օրհնեալ ես տէր տր Ած հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։

Օրհնեալ ասի Ած և գովեալ է այնմ՝ զոր եդաք 'ի համարն 1. իսկ որ 'ի բանի անդ փառաւորեալ ասի՝ աստ 'ի տեղի այնր բարձրացեալ գնի. որոյ փոխան 'ի յոյնս գնի գերբարձրացեալ. սմին վան 'ի մերս գնի, առաւել բարձրացեալ։ Իրդ այսորիկ երեքին բառք յն օրհնեալ, գովեալ և բարձրացեալ՝ վերջեքկին կրկնին յօրհնութեան աստ. և նախ ասի։

Օրհնեալ ես տր տր Ած հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեանս։ Ասելն ասել. դու տր Ած հարցն մերոց՝ դու միայն օրհնեալ ես 'ի մեծվայելչութե քում, և գովեալ յամենայն արարածոց քոց, և բարձրացեալ փառօք 'ի վեր քան զամ փառաւորութի և 'ի վեր քան զամ գովութի. 'ի մէջ բերելովև զանունն՝ ասեն։

24 . Եւ օրհնեալ է անուն ս͞բ փառաց քոց . գովեալ և բարձրացեալ յաւիտեանս :

Որովհետև անունն ա͞յ նշանակէ զա͞ծ , որպէս օրհնեալ ասի նա ինքն ա͞ծ և փառաւորեալ , նոյնպէս և անունն ն͞ր . ը͞ս որոյ ասեն :

Եւ օրհնեալ է անուն ս͞բ փառաց քոց . գովեալ , և այլն .

Սուրբ բառդ փառաց՝ դնի փոխ ածականի անուանս փառաւոր՝ ը͞ս արհեստի քերականութե , յորում յատկացուցիչն դնի երբեմն փոխ ածականի . ո͞պ յասելն . այր զօրութե , բառդ զօրութե՝ դնի փոխ ածականի անուանս զօրաւոր . որպէս թէ եղեալ էր . այր զօրաւոր . ըստ այսմ և աստ յասելն . * անուն ս͞բ փառաց քոց || , բառդ փառաց՝ դնի փոխ փառաւորի . որպէս թէ ասէր . օրհնեալ է ս͞բ և փառաւոր անուն քո , գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան :

Նոյն անուն ա͞յ հայր յառաջին անուն նորա , այն է Եօվա . զի ՚ի հարցանել մովսէսի զա͞ծ թէ զինչ անուն ունիցի , զիմաստ այսր անուանն եդ առաջի . որոյ փոխան ՚ի մերում եդեալ է որ էն . զի և բառդ Եօվա նշանակէ որ էն՝ կամ ինքնագոյ . այլ զայսմանէ տես յօրհն . ա͞ռ . 4 : Սոյն այս հայր և ՚ի վերջին անունն՝ զոր ընկալաւ որդին ա͞յ , այն է անունս յ͞ս : Եւ զի անունն ա͞յ , և նա ինքն ա͞ծ առաւելապէս ՚ի տաճարի իւրում յերկինս փառաւորի՝ զայն ևս ՚ի մէջ բերեալ ասեն :

25 . Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբոյ քո . գովեալ , և առաւել , և այլն :

Օրհնեալ լինիլն ա͞յ՝ եթէ մատուցի յինքեան՝ ոչ կախի զանեղուջէ . իսկ եթէ մատուցի առ

ար-

ալտարս՝ փաղանչանէ զտեղի , զոր և չորեքկին յառաջ բերեն յառաջիկայ օրհնութեանդ . ըստ առաջնոյն ասեն :

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո . և այլն :

Տաճար փառաց սրբութեան ՚ոյ տիրապէս կոչի արքայութիւն երկնից . յորում հազարք հազարաց օրհնեն զնա , և բիւրք բիւրուց գովեն և բարձրացուցանեն յաւիտեան : Այս տաճար գնէ լինել տեղի փառաց և սրբութե . փառաց , զի փառքն ՚ոյ 'ի սմա տեսանի . սրբութե՝ զի ամենեքին մաքուր են և անարատ . և ոչ ինչ 'ի պղծութենէ կարէ լինել 'ի նմա :

Խոխաբերաբար , տաճարաւ փառաց և սրբութե իմացեալ լինի աստ բովանդակութի կատարելութեցն ՚ոյ՝ յորում է լրումն ՚ոմ փառաց և սրբութե իբր յամենայնս տաճարի ամենայն բարութե : ըստ երկրորդին ասեն :

16 . Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո . գովեալ , և առաւել :

Աթոռ ՚ոյ ասին երկինք , և պատուանդան ոտից նորա երկիրս՝ ոչ նիւթապէս առեալ , այլ նմանութբ . զի որում համեմատութբ միմեանց՝ երկիրս համարի իբրև ոտնատեղի . իսկ երկինք իբր գահոյք թագաւորութե . և զի առաւել փառաւոր երևի արքայ յաթոռ խորումբքան 'ի պատուանդանի , վն այնորիկ ասեն :

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութե քո : Այսինքն թէ օրհնեալ ես 'ի բարձրութե երկնից՝ իբր յաթոռ թագաւորութե քո . ուր գովեալ փառաւորիս յաւիտեան :

Աթոռով մարթ է իմանալ և զերդ դասս հրեշտակաց . որք կոչին աթոռք՝ իբրև հանգիստք ան-

ախտ

ախտ բնութե , ըստ որում դնի 'ի շարականի . 'ի կան . կդ :

Փոխաբերաբար՝ աթոռով արքայութե իմացեալ լինի աստ երանութին նոյ . ըն որում խոկումն երա_նութեն վն անդորրութե սլաբանի յաթոռ : Ըստ երրորդին ասեն :

27 . Օրհնեալ ես՝ որ նստիս 'ի քրովբէս , և հայիս յան_դունդս . գովեալ , և այլն :

'Ի դասս հրեշտակաց՝ յերկրորդումն դասու են քերովբէք . և սակայն քերովբէքիւք նշանակին ուրեք ուրեք և ամենայն զօրք անմարմնոց . ըստ այսմ իմացեալ լինի և աստ . զի ոչ եթէ սոսկ յերկրորդումն դասու օրհնի ած , այլև յոյլ ա_մենայն դասս : Իսկ պատճառ զքերովբէս միայն յիշելոյ աստ՝ այն է , զի ներկայութին նոյ 'ի քե_րովբէս երևիւր 'ի տաճարի անդ 'ի վն տապա_նակին . յոր սակս և ած համարիւր և ասիւր նստեալ 'ի քերովբէս . տես զայսմանէ և 'ի մեկն . սաղ . հթ . 2 : Յայս հայելով ասեն :

Օրհնեալ ես՝ որ նստիս 'ի քրովբէս . և հայիս յանդունդս :

Այսինքն թէ դու որ ինքնաբաւդ ես յինքնու_թեն քում՝ նստիս 'ի քերովբէս իբր յաթոռ . և յայնչափ բարձրութե գոլով՝ տեսանես զամենայն , ևս և զանդունդս խորոց . յամենայնի օրհնեալ , յամենայնի գովեալ , յամենայնի առաւել քան զամենայն բարձրացեալ յաւիտեան :

'Ի յոյնս , և յասորիս , և յօրինակս ինչ ածաշնչի մերում՝ փոքր մի յետևառաջութբ դնին բանք այսր և նախընթաց համարոյ , յասելն . * օրհ_նեալ ես՝ որ հայիս յանդունդս և նստիս 'ի քրով_բէս . գովեալ ես . օրհնեալ ես 'ի վն աթոռոյ արքայութե քո . գովեալ ես || : Այլ այս յետևառա_ջութե

ջուն ուրուք իւրոք այլայլէ զմիտս բանին ·

Փոխաբերաբար՝ բառդ երկնէ հայր ՚ի գերագոյ- նունն էութեան այ · զի այս բառ նշանակէ իմացող , կամ տեսող · իսկ բառն իմացականութե վերածի յէութիւն այ · յոր մեք բղիք ածաբանք համեմա- տութբ կատարելութեանց այ սահմանեն զէութի ան սահմանելոյն · * անսահման կատարելութի յինքնութե իմացականութե ‖ · կամ * ինքնագոյ էութի յանբաւութե իմացկնութե ‖ · և զի յէութե է էական հանգիստ էակի՝ յայն սակս նստիլ առի ՚ի նմին · և որ այժմ եթէ բացայայտ բառիւք կա- միցիմք բացատրել զայս բան , մարթ է առաջի դնել այսպէս · օրհնեալ ես՝ որ եդ յանսահման կատարելութե յիմացականութե : Ըստ չորրորդին ասեն :

18 · Օրհնեալ ես ՚ի Հր հաստատութեան երկնից · գո- վեալ , և այլն ·

Զոր ՚ի վերոյ կոչեաց տաճար փառաց , և աթոռ թագաւորութե , կս և գահ քրովբէական , զնոյն կոչէ աստ հաստատութի երկնից , ասելով ·

Օրհնեալ ես ՚ի Հր հաստատութե երկնից : Բառդ հաս- տատութի դնի երբեմն ՚ի տեղի աստղալից երկնից՝ կս և ՚ի տեղի համաստեղութեց · և երբեմն ՚ի տե- ղի եթերական երկնից · այլ աստ ըստ որում ցուցանէ կարգ բանին՝ դնի փխկ բոլորանդակ երկ- նից որ ամենայն տարածութե և բարձրութե · և սո- վին հռչակել կամին ազարեանք և յայտնի քարո- զել , թէ յայնչափ մեծութե երկնից օրհնեալ է ած , գովեալ և առաւել բարձրացեալ յաւի- տեան :

Փոխաբերաբար՝ հաստատութբ երկնից նշանակի աստ անփոփոխ տևողութի այ՝ որնէ յաւիտենա- կա-

կանութ̃ն նորա . յորում օրհնեալ է , և գովեալ և առաւել բարձրացեալ և փառաւորեալ ընդ ամենայն յաւիտեանս :

Յետ օրհնելոյ ազարեանց զԱ̃ծ 'ի կատարելութե̃ նորա , և յերանութե̃ , յէութե̃ և 'ի յաւիտենականութե̃ , հրաւիրեն զարարածս ամենայն յօրհնել զնա . սկսեալ նախ՝ 'ի վերին երկնից՝ և յորոց 'ի նմա . երկրորդ 'ի միջին երկնից՝ և յորոց 'ի նմա . երրորդ՝ 'ի ստորին երկնից՝ և յորոց 'ի նմա . չորրորդ յեթերական երկնից՝ և յորոց 'ի նմա . հինգերորդ՝ յերկրէ՝ և յորոց 'ի նմա . վեցերորդ՝ 'ի ջուրց՝ և յորոց 'ի նմա . եօթներորդ՝ 'ի կենդանեաց՝ եթէ ջրայնոց և եթէ օդայնոց , եթէ 'ի վայրենեաց և եթէ յընտանի եղելոց . ութերորդ՝ 'ի մարդկանէ ըստ կարգի . զառաջինն յազգէն Ի̃լի՝ որ էր եկեղեցի Ա̃յ . ապա 'ի քահանայից , որոց միջնորդութ̃ հաշտիւր Ա̃ծ . և զկնի 'ի ծառայից Տ̃ն՝ ա̃յ 'ի ղևտացւոց՝ յորոց պաշտիւր . յետոյ յարդարոց , յորոց Ճանաչիւր մեծութ̃ն նորա . յետ այնորիկ 'ի խոնարհաց՝ յորոց գեր 'ի վերոյ տեսանիւր բարձրութ̃ն նորա . հուսկ յետոյ յինքեանց ազարեանց , որք յորդորիչք լինէին այլոց՝ յօրհնութիւն Ա̃յ . և նախ ընդհանրապէս խօսելով՝ ասեն :

29 . Օրհնեցէք զՏր գործք ամ Տն . օրհնեցէք , և բարձր արարէք զնա յաւիտեանս :

Օրհնել զԱ̃ծ և գովել՝ է փառաւորել մեծվայելչութե̃ նորա , կամ մեծացուցանել զնա ըստ պէսպէս կատարելութեց , կամ հռչակել զօրութի̃ նորա . սոյնպէս և բարձր առնել զԱ̃ծ է մեծացուցանել զբարձրութի̃ն Ա̃յ . և այս ամենայն կարէ լինել երիւք . ա̃յ կամ Ճանաչմամբ , կամ միա-

գա-

գամայն ձայնայնամբ և բարբառով բերանոյ , և կամ առանց ձայնայնման և առանց բարբառոյ ․ Ձայնայնամբ օրհնեն հրեշտակք ․ Ձայնայնամբ և բարբառով բերանոյ օրհնեն մարդիկ ․ առանց ձայնայնման և բարբառոյ օրհնեն անզգայք և անբան արարածք ։ Նոյնպէս 'ի սկզբան բանիցս զսոսա զամն համանգամայն յօրհնութիւն յորդորելով ազարեանց՝ գոչեն և ասեն ։

Օրհնեցէ՛ք ամ գործք Տն զՏր ․ օրհնեցէ՛ք , և բարձր արարէ՛ք զնա յաւիտեանս ։ Նմանօր բառդ օրհնել՝ յառաջնումն դնի ըն իւրում առանձին նշանակութե ․ իսկ յերկրորդումն դնի փոխ գովելոյ ․ որպէս յայտ է յայլոց թարգմանութեանց ․ զի բաց 'ի յունականէն յամենայնի գովեցէ՛ք դնի ․ իսկ 'ի յոյնն՝ երգեցէ՛ք ։ Նա թէպէտ երեքին ևս 'ի նոյն վերածին , բայց քանզի օրհնելն որոշակի իմ ընծայի , սմին իրի թարգմանիչք մեր՝ զայն եդին նաև փոխ գովելոյ և երգելոյ ։

Իսկ գործովք Տն նշանակեն այն ամենայն զոր արար ԱԾ յերկինս և յերկրի ըստ ամենայն գոլոյ և ըստ ամենայն կարգի ․ և քանզի ամենեքին 'ոք ոչ են այն ինչ՝ որ իցէ ինքնագոյ էն , այլ՝ այս ինչ և այն ինչ՝ որչափ ինչ հաղորդեն այնմ ինքնագոյ էի , որով և ըստ գոլոյ իւրեանց կարգին բերիլ առ նա , պարտական գտանին օրհնել զնա յինքեան , գովել զնա 'ի զօրութե , և բարձր առնել յանհաս յաւիտենականութե ․ և զի յարարածս Այ քան զամենայն երևելի են մեզ երկինք ըն մեծութե և ըն բարձրութե՝ նախ առ այնս ուղղելով ազարեանց զբանս իւրեանց՝ ասեն ։

30 ․ Օրհնեցէ՛ք երկինք զՏր ․ օրհնեցէ՛ք և բարձր արարէ՛ք , և այլն

Նշ

Երկինք յերիս բաժանին. առաջինն է այն՝ որ կոչի երկինք երկնից, կամ լուսեղէն երկինք. որ և տիրապէս ասի տեղի փառացն այ. յորում և են հոգիք սրբոց. Երկրորդն է այն՝ որ կոչի աստղալից երկինք, որ և ասի հաստատութիւն, և առարկի աչաց մերոց. և համարի միջին երկինք. Երրորդն է, երկինք մոլորակաց, որ ասի ստորին երկինք.

Ի վայր քան զսա է տարրեղէն երկինքն. որ և սա բաժանի յերիս. մին է այն՝ որ ասի եթերական, և է ՚ի վեր քան զամպս և քան զամենայն ջրային գոլորշիս: Երկրորդն է այն՝ յորում են ամպք, և այլ գոլորշիք և շոգիք՝ եթէ ջրայինք, եթէ հրայինք և եթէ հողայինք. Երրորդն է այն՝ յորում կեան թռչունք, որք և վն այսր կոչին թռչունք երկնից. և սա հաստատութի և կոչի ՚ի գիրս ծննդ: Այլ յայս բան բառդ երկինք՝ դնի ՚ի հասարակի յասելն.

Օրհնեցէք երկինք զՏր. օրհնեցէք և այլն: Կամի ասել. ով երկինք միահամանձք՝ յորս բովանդակին ամենայն վերնայինք, տուք փառս արարչին ձերում. տես և ՚ի մեկնութեան սաղ" ճը. 1. Դառնայ ապա խօսիլ առ այնս, որք են յառաջին երկինս՝ ասելով:

31. Օրհնեցէք հրեշտակք տն. ջուրք որ ՚ի վերոյ երկնից՝ զՏր. օրհնեցէք և այլն:

Հրեշտակք են անմարմին իմացական գոյացութիւնք ինքնատորականք՝ գերագոյնք քան զամենայն մարմնեղէն գոյացութիւնս. և բաժանին յերիս երկինս, ըստ յերիս քահանայապետութիւնս. յառաջնումն են սերովբէք, քերովբէք, և աթոռք. յերկրորդումն են իշխանութիւնք, զօրութիւնք, և տէրու-

տէրութիւնք . յերրորդումն են պետութիւնք, հրեշտակապետք, և հրեշտակք . և զի՞նչ յետինքս՝ որ են հրեշտակք՝ ծանօթ են մեզ, յանուն որոյ զամենեսին հրեշտակս կոչեն ըստ գրոց . և որովհետև օրհնութիւն այսոցիկ ամենեցուն գերազանց և սքանչելի են քան զմեր մարմնաւոր արարածոց, ամէն լինի զասա նախադասելով ասէ ։

Օրհնեցէ՛ք հրեշտակք Տն . Ջուրք որ ՚ի վերայ երկնից զՏէր . օրհնեցէ՛ք և այլն ։ Ա՛յսինքն . ո՛վ լուսափայլ բազմութիւնք հրեշտակացդ Աստուծոյ՝ ձեզ նախ վայել է օրհնել զՏէր . օրհնեցէ՛ք ուրեմն, գովեցէ՛ք, և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան ։ Զայս ասեն աղաղակմամբ, ոչ զի ոչ օրհնեն նոքա զԱծ, այլ զի ցուցցեն նոքա՝ թէ արժանի է Ած օրհնել յամենայն արարածոց ևս առաւել ՚ի հրեշտակաց . ցուցցեն երկրորդ զառաւելութիւն փափագման սրտից իւրեանց՝ ՚ի ցանկալ նոցա օրհնել զԱծ ։

Իսկ զոր ասէ . Ջուրք՝ որ ՚ի վերայ երկնից, փոխաբերական առումն է . ըստ որոյ բառիս ջուրք՝ նշանակին նոքին իսկ հրեշտակք ըստ բնութեան իւրեանց, իբր թէ պարզ իմն լուսաւորեալ ծով իցեն օրհնութեան Այ . գուցէ յայս միտ յառաջադնի * Ջուրք վերերկնայինք || . այլ զայսմանէ տե՛ս ՚ի մեկն . սաղ . Ճխը . 3 . ուր բազում ինչ գտցես ՚ի նպաստ մեկնութեան այսր օրհնութեան ։ Զայս այսպէս եղեալ՝ իջանեն ապա յերկրորդ և յերրորդ երկինս՝ որ յերկինս աստեղաց և մոլորակաց, և ապա ՚ի տարրեղէն երկինս . և ասէ ։

32 . Օրհնեցէ՛ք զօրութիւնք Տն . արեգակն և լուսին զՏէր . օրհնեցէ՛ք եա ։

33 . Օրհնեցէ՛ք աստեղք երկնից, անձրևք և ցօղք զՏէր . օրհնեցէ՛ք եա ։

Օ

Զօրութիւնք տ՟ն բազում ինչ կարեն նշանակել. զորմէ տես ՚ի մեկն. սաղ. ճխը. 2. բայց հայելով ՚ի կարգ ընթացից բանիցս՝ աստ նշանակեն այն ա՟մ՝ որք են, և որք գործին յերկրորդ երկինս ։ Այնպէս և աստեղօք երկնից իմացեալ լինին աստ եթէ անմոլար աստեղք, և եթէ մոլորականք ։ Իսկ թէ նաև անձրևք և ցօղք ՚ի մէջ բերին աստ, չէ ինչ. զի այդ դնի ը՟ս բաժանման տանց սաղմոսաց մերոց, ուր յայլս որոշ դնին. ո՞չ է տեսանել և յա՟ծաշնչի մերում ։

Արդ թէպէտ և ո՛ք չունին յարմարութի օրհնելոյ զա՟ծ, բայց կատարելով զկամս ա՟յ ը՟ս երկուց՝ մ՟ն ը՟ս պահելոյ զկարգ ընթացից իւրեանց, և ը՟ս ազդելոյ զզօրութի իւրեանց՝ ցուցանեն ա՟մյն, և իբր փողով հնչեն յականջս մեր, թէ գոյ ո՟ր ամենակարող, որ զայսպիսի զօրութիս և զայսպիսի կարգս եդեալ է յինքեանս և յայլս ա՟մնին ։ Նաև զի սովին յորդորեն զմեզ օրհնել զտ՟ր, ինքեանք ևս իրաւամբք յորդորին ՚ի նոյն. ը՟ս որում և յորդորեն ազարեանք յասելն ։

Օրհնեցէք զօրութիւնք տ՟ն, արեգակն և լուսին զտ՟ր ։ Նախ զզօրութիս ՚ի մէջ բերելով՝ տան իմանալ և զայնոսիկ՝ որք ազդեն զզօրութիս իւրեանց ՚ի ստորերկրեայս. և զի երևելի են ՚ի նոսա արեգակն և լուսին, զնոսին յանուանէ ՚ի մէջ բերեն. իսկ զայլսն ՚ի հասարակի ասելով ։

Օրհնեցէք աստեղք երկնից ։ Աստեղօք իմացեալ լինին աստ այնք, զորս աչօք տեսանեմք, թէպէտ և ոչ զա՟մ. որք և իւրեանց ներգործութեամբք հանարին օրհնել զա՟ծ. տես և ՚ի մեկն. սաղ. ժը. 1 ։ Ոայս եդեալ՝ խօսին ապա և առ այնոսիկ որք են ՚ի տարրեղէն երկինս, մանաւանդ առ այնս՝ որք են ՚ի ստորև եթերական երկնից. և

նախ զջրայինսն 'ի մէջ բերելով, ասեն ։

Անձրեւք եւ ցօղք զՏէր օրհնեցէք ։ լգ ։ Անձրեւք գոյա-ցորին յամպոց գումարելոց 'ի շոգեաց եւ 'ի գո-լորշեաց լուծելոց 'ի կաթիլս ․ այնպէս եւ ցօղք լինին 'ի նուրբ գոլորշեաց՝ որք 'ի գիշերի թօ-լացեալ իջանեն յերկիր ։ Իսկ օրհնել 'ոց զԱծ այն է՝ զի Ած սահմանելոյ նորա իջանեն, եւ ըստ կարգի բնութեան իւրեանց գործեն ։ Խօսելով ա-պա եւ առ այլ գործս՝ որք գործին 'ի նոյն եր-կինս՝ ասեն ։

34 ․ Օրհնեցէք ամ հողմք ․ հուր եւ ջեր զՏէր ․ օրհնե-ցէք ․ եւ բարձր ։

35 ․ Օրհնեցէք ցուրտ եւ տօթ ․ ցօղ եւ ձիւնաբեր զՏէր ․ օրհնեցէք ։

36 ․ Օրհնեցէք սառն եւ պաղ ․ եղեամն եւ ձիւն զՏէր ․ օրհնեցէք ։

Գոյաւորութիւն հողմոց որպէս եւ տեսանեմք՝ յա-ռաջ գայ 'ի գոլորշեաց ելելոց 'ի ծովոց կամ 'ի ծովայնոց, որք յազդմանէ աստեղաց, եւ յորա-կաւորելոյ 'ի հողոց խառնացեալ, եւ խառնութբ պայ-թեալ յարձակին ․ եւ ուժգնութբ իւրեանց ծծեն գրեթէ զշրջակայ օդս անընդհատ արագութբ, եւ վարին ուժգին մինչեւ 'ի սպառիլ ․ Իսկ հուրն է տարր այրեցող 'ի բնութէ իւրմէ, եւ է իբր մայր ջերմութե ․ զի գրեթէ ամ ջերմութիք 'ի հրոյ յառաջ գան ․ բայց քանզի կան եւ ջերմութիք՝ որք ոչ պատճառին 'ի հրոյ, այլ կամ յարե-գակնէ եւ կամ յայլոց իրաց, ամին իրի յաւելուն եւ զտօթ՝ որ է ջերմութի պատճառեալ յարեգակ-նէ ․ եւ զջեր՝ որով նշանակի ջերմութի պատճա-ռեալ յայլմէ ․ որոյ փոխան տապ դնի 'ի յոյնն եւ 'ի լատ" եւ յԱծաշնչի մերում ։ Սոսա եւս հրա-

ւիրեն ապարեանք օրհնել զնա՝ ասելով:

Օրհնեցէ՛ք ամ հողմք, հուր և ջեր զՏր: Զօրութիւնք հողմոց եթէ ըստ կարգի շնչեսցեն, յերկս երեւին. մի՛ 'ի մաքրել և 'ի պարզել զօդն. երկրորդ՝ 'ի զովացուցանել զատապացեալսն, կամ յարծարծել. երրորդ՝ 'ի վարել զնաւս յօգուտ բնակչաց ծովու: Իսկ եթէ անցցեն զբ չափն արտաքոյ կարգի, զաւրատեղիս գործեն եթէ 'ի ծովու և եթէ 'ի ցամաքի: Եւ քանզի բազմապիսի են հողմունք՝ ամ գնելով՝ զամսին յորդորեն, զի որս և զհուր և զջեր յօրհնութիւն այ. ոչ բանիւք շրթանց, այլ իւրեանց գործողութեամբք յանմլրեալ պահել նոցա զկարգն եդեալ յայ 'ի նմա. 'ի սոյն յարեն և զհրաւիրումն ցրտոյ և տօթոյ՝ ասելով:

35. Օրհնեցէ՛ք ցուրտ և տօթ. ցօղ և ձիւնաբեր զՏր: Ցրտութիւն է որակութի խտացուցիչ աննմանեաց. որպէս ջերմութիւն է ցրիչ. իսկ տօթն է (որպէս ասացաք 'ի վերոյ) ջերմութի պատճառեալ յարեգակնէ: Այլ ցօղով զոր դնէ աստ՝ ոչ է պարտ իմանալ զյստակ ցօղն. զի զայնմանէ ասացաւ 'ի համարն 33, այլ զայն ամ որ զբ ցօղոյ իջանէ՝ եթէ 'ի գիշերի, և եթէ 'ի տուընջեան. որպիսի է և մէգն: Իսկ ձիւնաբերիւն իմացեալ լինի փուքն այսինքն մանր ձիւնն՝ որ իբրև փոշի խիտ գայ, և է իբր բերք ձեան. և կամ պարտ է իմանալ ըստ յունականին զձիւնատարափն, որ 'ի նոյն գլխի: Զսոսա ևս յորդորեն օրհնել զգոյացուցիչ իւրեանց. զի որս յարեն և զսառն և զպարզ ասելով:

36. Օրհնեցէ՛ք սառն և պարզ, եղեամն և ձիւն զՏր: Սառն է ցրտութեամբ ձուլեալ ջուր. իսկ պարզն է օդ ցրտացեալն. այլ եղեամն է ցօղ յաղի շոգեաց՝

որք

որք սառուցեալ յօդս իջանեն 'ի վայր. և ձիւնն է պաղեալ ամպ։ Այլ առ ծանօթութիւն այսոր ամփ՝ գիտելի է. զի գոլորշիք և շոգիք, ըստ որս և ոգիք՝ որք ելանեն յերկրէ և 'ի ջուրց՝ որպէս և տեսանեմք՝ յամպս գոյանորին. և նրբագոյնքն 'ի նոսա յօդս տարածին. 'ի նրբագունից սառին գոյաւորին ցօղ և եղեամն, 'ի լաւացն ցօղ, և յաղեաց եղեամն. իսկ մէգք երբեմն յերկրէ վե_րանան, և երբեմն 'ի թանձր մասանց օդոյ ե_րեւին։ Այլ ձիւն և կարկուտ յամպոց լինին. ձիւն 'ի ձմերան, և կարկուտն յամառան. զի որոշեցաւ 'ի ձմերան ցուրտ է գաւառ ամպոց վասն ոչ պզնելոյ յայն՝ անդրադարձուէ ճառա_գայթից արեւու՝ 'ի ցրտութէ պաղին ամպք, և ծուատին 'ի պատառս, և պատառք 'ի պատառս, և թօթափին 'ի վայր. և այն աստ ձիւն։ Այլ յամառան ջերմ է այս գաւառ. զի ճառագայթք արեւու՝ անդրադարձեալք յերկրէ՝ յայն թափեն զուժգնութիւն իւրեանց. իսկ ստորին գաւառն մնայ ցուրտ. 'ի լուծանիլ ապա ջերմագին և ծծմբային ամպոց յանձրեւ՝ այն անձրեւք յիջա_նելն ընդ ցրտոյ թին գաւառ՝ սառին, և այնպէս իջանեն. և այն աստ կարկուտ. և այս հաստատա_կորէն լինի 'ի յուղիղ հրալից ամպոց. Իսկ զի ոչ ասացաք, ցուրտ է 'ի ձմերան վերին գաւառն, յամփոփիլ արեւու՝ եթէ ամպով ոչ ծածկեսցի, զցրտութիւն իւր տայցէ 'ի վայր. որով և ստորին օդն ցրտանայ յոյժ, և այն աստ պարզ. ըստ ցրտացեալ օդ. ուստի յայլս ցուրտ դնի։ Ոսսա զամանին յորդորէն ազգերանք յօրհնութի ում, զամենայն նախ դասելով, և զամենայն գինի. ըստ որս 'ի մէջ բե_րելով զարի և զգլխէր սաեն։

37. Օրհնեցէք տիւք և գիշերք. լոյս և խաւար
զՏէր ։

38. Օրհնեցէք ամպք և փայլատակունք, և երկիր
զՏէր ։

Ր. յոքէն իրագործութիւնք յայտնի ցուցանեն՝ թէ գոյ տէր Տէր. և զայս ցուցանելով՝ անբարբառ բերանով համարին օրհնել զնա. վ՞յ և ազաբեանք իբր 'ի միջին տեղւոջ դասելով զայսոսիկ՝ 'ի նոյն խրախուսեն և ասեն ։

Օրհնեցէք տիւք և գիշերք. լոյս և խաւար զՏէր ։ Տիւն որպէս և յայտ է՝ պատճառի 'ի ծագմանէ արեւու. և գիշերն 'ի մեկնելոյ նորա ։ Մին իւրով պայծառութե օրհնէ զԱծ. իսկ միւսն իւրով մթութե, 'ի հաւաքելն՝ թէ գոյ կառավար տիեզերաց՝ որ զայս գործէ ։ Իսկ լուսով՝ զոր գնէ՝ պարտ է իմանալ ոչ միայն զլոյս արեւու, այլ և զայնս՝ որք պատճառին յայլոց, որպ 'ի հրոյ, 'ի ճրագէ, և յայլ ոլորտս իրաց ։ Այնպէս և խաւարա իմանալի է այն մթութի՝ որ պատճառի 'ի բարձմանէ լուսոյ ։ Սք եւս իւրեանց այսպիսի երևմամբ ցուցանեն զնախախնամութի հաստչի Այ, որով և օրհնեն զնա ։ Նոյն ասաս և առ ամպս և առ փայլատակունս, և ասեն ։

38. Օրհնեցէք ամպք և փայլատակունք և երկիր ։ Ամպք որպէս ասացաք՝ պատճառին 'ի գոլորշեաց ելելոյ 'ի հողոյ, 'ի ջրոյ, և 'ի հրոյ. ըստ որում և աչօք իսկ տեսանեմք. որք երբեմն խտանան յիւքեանս. և յազդեցութէ աստեղաց և 'ի ներքին բնաւորութէ յուզին. յորս եթէ կայցեն ծծմբային և իւղային մասունք ծրարեալք, յառաւելուլ խտանալ և յուզիլ՝ բորբոքին, և երբեմն ճայթին, յորմէ ելանեն փայլատակունք, և հնչեն

չեն ձայնք որոտմանց. և եթէ կայցեն 'ի նոսա նաև հողային մասունք՝ 'ի ձիւթիլ խառնեալ մասանց՝ յարձակին 'ի դուրս, և որք կոչին կայծակունք: Սոսա են կոչեն աղարեանք յորհնութիւն ոչ ըստ իւրեանց ահեղութեան. ընդ որս հրաւիրեն և զերկիր. և ապա 'ի մասնաւորս իջանելով՝ ասեն:

39. Օրհնեցէք լերինք և բլուրք, և ամենայն ծառք բերրի զՏէր:

Ս խարդ արդեօք գոյացան լերինք և բլուրք, և երբ, ոչ կարեմք ուսանել ցուցանել. և սակայն 'ի բանից աստուածաբանութեան երևի թէ 'ի բաժանիլ ջուրց յերեսաց երկրի երևեցան նոքա. տես 'ի մեկն. սաղ. ճգ. 6. որպէս և իսկն լեալ նոք՝ հրաւիրին օրհնել զՏէր յասելն:

Օրհնեցէք լերինք և բլուրք և ամ. ծառք բերրի զՏէր:

Ընդ սոսա իմացեալ լինին և դաշտք և հովիտք, ձորք և խորք ևս. որք իւրեանց կայիւք ցուցանեն՝ թէ երկիր ունի զամենիմաստ ճարտարապետ իւր և պահապանիչ: Սոյն զայս քաղցրաստուելութ. յանդիման առնեն մեզ բոյսք՝ ոչ միայն ընդ յորդառատ յաճախութեն տեսակաց իւրեանց, այլև ընդ բազմապատիկ զարդու և գեղեցկութեան: Հայեաց 'ի ծառս, հայեաց և 'ի պտուղս նոցա, որչափ ինչ տեսանես 'ի նոս: Հայեաց 'ի խոտս և 'ի ծաղիկս նոցա, քանի զարմանալիս նշմարես 'ի նոսին՝ եթէ 'ի գոյն, և եթէ 'ի սերմն իւրեանց: Եթէ ուշիմ միտք և ընդաստութ. զննեսցես, անզգալի աղաղակ նոցա լինի զսիրտ քո օրհնութեն այ. և դու ես ընդ աղաբեանս ձայն տայցես նոցա օրհնել զՏր: Ապա զկնի սոցա հրաւիրեն և զգազանս և զգետս և

զծով՝ ասելով։

40. Օրհնեցէք աղբիւրք, ծովք և գետք զՏէր. օրհնեցէք։

Աղբիւրք ասին այնք, որ յերկրանց բղխեն ըղջուրս, յորոց յաճախմանէ գնան գետք։ Որչափ իցեն սոքա, և զիարդ հոսիցեն, յաւէտ արժան է աչօք տեսանել, քան լեզուաւ պատմել, և գրով յայտնել. ոմանք ցայտմամբ բղխելով, և ոմանք հոսմամբ. ոմանք 'ի բարձունս լերանց, և ոմանք 'ի խոռոչս, ոմանք ականակիտ և ցուրտ, և ոմանք բարեխառն և անոյշ, ոմանք ջերմ, և ոմանք քարայինս ըստ հանգամանաց տեղեացն՝ յորոց բղխեն։ Յառաջ խաղացեալ ապա յայլևայլ կողմանց և եկեալ առ միմեանս, զորքան վտակս՝ և զորչափ գետս գործեն, զոմանս սրընթացս, և զոմանս յամրընթացս, զոմանս լայն յոյժ, և զոմանս անձուկ։

Իսկ թէ ուստի իցեն ջուրք սոցա, երեք կարծիք են. ոմանք ասեն, թէ են միայն 'ի ջուրց ծովու. այլ այս չունի տեղի. ոմանք միայն 'ի ջուրց անձրևաց. այլ այս յոյժ ոչ ճշմարտի. իսկ այլք ասեն՝ թէ են 'ի ջուրց անձրևաց և 'ի ջուրց ծովու, որք անցանիցեն ըստ երակունս հողոյ՝ քաղցրանան, և ըստ ջուրս անձրևաց աղբերանան, և գետանան. և այս երևի հաւանական. զի կան բազում գետք՝ որք եթէ միայն 'ի ջուրց անձրևաց լինէին, ցամաքէին իբրև զհեղեղատս վասն պակասելոյ անձրևաց. թող զայն՝ զի յառաջ քան զգալ անձրևաց 'ի վերայ երկրի՝ չորք գետք ելանէին յեդեմայ. և ուստի բաւէր հոսումն ջուրց սոցա։

Իսկ զոր դիմադրեն՝ թէ ըստ այդմ հող երկրի աղիա-

աղխանայր, և ոչ ևս քաղցրացուցանէր, չէ ինչ. զի աղխութիւն այն սիսէր յայլևայլ մասունս հոգւոյ յանձողականութի հանքային իրաց և բուսականաց. որ որում աղխութիւն գտանի 'ի սկզբունս անձողականութե. Մեր թողցուք զայն՝ զի ջրհորք բանիւն մեր յերկը ծովու, որոց ջուրք յայտնապէս 'ի ծովէ գան, և յայնչափ դառնութե ոչ մնան, այլ զխառնուն դառնութե խեցեանց թողուն 'ի հողն, և հողն յետ զայնքան դառնութի ձգելոյ յինքն՝ ոչ կարէ 'ի զտելոյ զխառնութի դառնութե ջուրցն։ Նոյնպէս և եթէ այնպէս, որք են քն են աղբիւրք և գետք, որ որս և ծովք՝ խեցեանց գոյից և ընթացից և պէսպէս բերից քարոզեն՝ թէ գոյ նախախնամող Տր. որում և ասին օրհնել զնա։ Ծայսուիկ եղեւոյ ազարեանց՝ ձայնեն և առ կենդանիս, և ասեն։

41. Օրհնեցէ՛ք կէտք և ամ կայտառք որ 'ի ջուրս. և թռչունք երկնից զՏր։

42. Օրհնեցէ՛ք գազանք և անասունք. և որդիք մարդկան զՏր։

Կէտք են մեծամեծ գազանք ջրային թեփոտք, եթէ 'ի ծովու իցեն և եթէ 'ի գետս. իսկ կայտառք են ձկունք և ժժմունք ջուրց, կամ որ յունականին՝ այն ամ՝ որք շարժին 'ի ջուրս։ Ծնուսա համդերձ թռչնովք երկնից և գազանովք երկրի՝ ևս և անասնովք՝ կոչեն օրհնել զՏր. որ որս և զմարդիկ ասելով։

Օրհնեցէ՛ք կէտք և ամ կայտառք՝ որ 'ի ջուրս և թռ-
42. չունք երկնից զՏր։ * Օրհնեցէ՛ք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏր, օրհնեցէք։ Նաև քանի զարմանալի իցեն գործք կենդանեաց՝ ընտրողք

միայն կարեն տեսանել. թող զբաղմունս և զզանազանութիւնս նոցա. որոց երևոյթ միայն յայտնաբարբառ քարոզէ՝ թէ կայ անսահման իմն կարողութիւն և իմաստութիւն, որ արար զսոսա, և կառավարէ զսոսին. և զի ողջ յիրաւի քարոզեն զայս, սովին ասին օրհնել զԱծ։

Նա և ք̃զի թագաւոր ա̃մի ո̃պ կարգեցաւ մարդս, ՚ի վերջոյ զնոսա յորդորեն աղաչելանք օրհնել զԱծ։ Նա և սակայն եթէ մարդիկ մատչէին ՚ի քննութիւն այնր ա̃մի՝ որք յորդորեցան յառաջն, ոչ ևս էր պիտոյ յորդորել զնոսա ՚ի նոյն. զի տեսեալ նոցա զզօրութիւն Ճարտարապետի այսոցիկ ա̃մի, և զիմաստութիւն կառավարութեան նր̃՝ յայտնի Ճանաչէին զնա՝ և ՚ի սրտէ իւրեանց ինքնին բըղխէին զօրհնութիւն։ Բայց քանզի առաւել յօժար են մարդիկ ՚ի վայելել զբարիս առեալս յա̃յ՝ ք̃ ՚ի Ճանաչել և յօրհնել զնա, վ̃յ առաւել քան զայլս կարօտին յորդորանաց. և զի այնու ևս ոչ արթնանան, ամէն իրի ոչ ՚ի նոսա աւարտեն Անանեանք զյորդորութիւն իւրեանց, այլ դարձուցանեն յեկեղեցի ա̃յ՝ ջ̃ յիսրայէլացիս, և յա̃ծապաշտ անձինս, և ասեն։

43. Օրհնեսցէ՛ Իսրայէլ զՏ̃ր. օրհնեսցէ՛ և բարձր արացէ զնա յաւիտեան։

44. Օրհնեցէ՛ք քահանայք զՏ̃ր. օրհնեցէ՛ք և բարձր արարէք։

45. Օրհնեցէ՛ք ծառայք Տ̃ն զՏ̃ր. օրհնեցէ՛ք. և բարձր։

46. Օրհնեցէ՛ք անձինք և շունչք արդարոց զՏ̃ր. օրհնեցէ՛ք։

47. Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարհք սրտիւք զՏ̃ր. օրհնեցէ՛ք։

Բաւակա՛ն խորայէլ՝ իմացեալ լինի ազգն իջեալ յիս-

յիսրայէլ․, ծն 'ի յակոբայ նահապետէ՝ որ կո-
չեցաւ իսրայէլ․ և զի ազգս այս ընտրեալ էր լի-
նել եկեղեցի այ̃, վասն որոյ յամենայնի միա-
ցեալ էր ը̃ նմա, ոչ ը̃ որում էր ազգ, այլ ը̃
որում այ̃ ազգ․ որով և յիւրմէ ունէր օրհնել
զա̃ծ, և ոչ կարօտէր յորդորել յայլոց 'ի նոյն․
զի̃ այսորիկ ոչ յերկրորդ դէմս՝ այլ յերրորդն
խօսելն ասելով․

Օրհնեսցէ իսրայէլ զտ̃ր լա̃ ։ Յայտնեքն Թէ ազգն
իսրայէլի որ ընտրեցաւ 'ի ժառանգութի̃ այ̃՝ օրհ-
նեսցէ, գովեսցէ, և բարձր արասցէ զնա յաւի-
տեան ։ Նախանման ապա խօսիլ առ այնոսիկ՝ որք
էին յիսրայէլի՝ ասելով․

44․ Օրհնեսցէ տունն ահարոնի զտ̃ր լա̃ ։ Որք էին պատ-
ուականագոյն մասն նորա․ ուստի սոցա առաւել
արժան էր օրհնել զա̃ծ, ընդ որս և գործակցաց
սոցա ի̃ ղևտացւոց․ վ̃յ և առ նոսա խօսելով ա-
սէ ։

45․ Օրհնեսցէ ծառայք տն̃ զտ̃ր ։ Ծառայք իմա-
ցեալ լինին աստ միրապէս ծառայողք 'ի պաշ-
տաման այ̃ն ընդ քահանայս, որպիսի էին ղևտա-
ցիք, որպէս ասացաք․ փոխանակ որոյ են այժմ
սարկաւագունք, որք Թարգմանին սպասարկա-
ւագք, ի̃ պաշտօնեայք աւագք կամ աւագաց․
յոր միտ 'ի շարականի բազում անգամ յիշին
ընդ քահանայս յասելն․ քահանայք և պաշտօ-
նեայք ։ Արժէ է իմանալ սրբիմբք և զհաւա-
տարիմ ծառայս տեառն, որք իւրեանց պաշտա-
մամբք և բարեգործութբ̃ք, նա և փառաբանա-
կան բանիւք օրհնեն զա̃ծ, և գովեն զնա․ որ-
պիսի են և այլ ամենայն անձինք սրբք, առ որս
դարձուցանեն զբանս իւրեանց և ասեն ։

46․ Օրհնեսցէ անձինք և շունչք արդարոց զտ̃ր ։ Ան-
ձամբք

ձամբք արդարոց իմացեալ լինին աստ հոգիք արդարոց. որպէս դնի յա̃ծաշնչի և յայլ Թարգմանութիս. Իսկ շնչովք իմացեալ լինին զգայական ոգիք կամ զգայական զօրութիք. և զայսոսիկ 'ի մէջ բերելով ազարեանց ցուցանեն՝ թէ պարտ է արդարոց հոգւով օրհնել զա̃ծ, և զամենայն զգայութիս 'ի նոյն ծառայեցուցանել. Իսկ արդարովք իմացեալ լինին աստ ոչ միայն այնոքիկ բարեպաշտք՝ որք էին 'ի մէջ իսրայէլի, այլ և այնոքիկ՝ որք կային առաջի նոցա. ընդ որս դասելով զսուրբս սրտիւք և զխոնարհս հոգւով՝ ասեն.

47. Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւ զՏէր. օրհնեցէք.

Սրբութի̃ մարդոյ առանց խոնարհութե̃ է շինուած 'ի վերայ աւազոյ. իսկ խոնարհութբ̃ հանդերձ՝ է այնպիսի շինուած, զոր ոչ ոք կարէ կործանել. և որք ունին զայսոսիկ՝ նոքա միայն հաճոյ գտանին ա̃յ. և նոքա միայն արժանապէս օրհնեն զնա. ուստի և 'ի վերջոյ դասին յօրհնել զտ̃ր. Արդ զսոսա՝ որպէս և զնախընթացս սոցա յորդորելով ազարեանց՝ ոչ ցուցանեն՝ թէ նոքա ոչ յօժարէին յօրհնել զտ̃ր, և վ̃ն այն 'ի նոյն յորդորէին. այլ զի ցուցցեն նախ՝ թէ առաւելութբ̃ իմն արժան է նոցա օրհնել զա̃ծ. ցուցցեն երկրորդ զփափաք սրտից իւրեանց առ օրհնութիս ա̃յ. յայս իսկ հուսկ յետոյ առ ինքեանս դարձուցեալ զբանս յորդորանաց իւրեանց՝ ասեն.

48. Օրհնեցէք Անանիա, Ազարիա, և Միսայէլ զՏէր. օրհնեցէք, գովեցէք, և բարձր արարէք զնա յաւիտեանս.

Այս բանք ոչ են յայլոց յաւելեալ 'ի դէմս անանիանց, այլ ը̃ վկայելոյ բազմաց, և ը̃ բանից լուսաւորչին մերոյ 'ի յաճախ. իբ̃. 'ի նո-

ցունց

ցուց իսկ յանանկանց տեսցեալ առ անձին-
ութեանց՝ յօրհնել զԱծ՝ յաւէտն առ ինքեանս ։
Օրհնեցէք անանիա, ազարիա, և միսայէլ զՏր ։ Կամիմ
ասել · ով անձինք նուիրեալք յօրհնութիւն այ՝
անանիա, ազարիա, և միսայէլ, որք ծանեայք
'ի սկզբանէ զԱծ Ճշմարիտ, և զօրութ. նորա ապ-
րեցայք յայրմանէ հրոյն, և յորդորեցիք զա-
մենայն արարածս յօրհնութիւն այ՝ դուք ինքնին
օրհնեցէք զնա, գովեցէք, և բարձր արարէք զնա
յաւիտեան ։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ ·

Ի վերջ այսր ամենայնի առաջի առնեն աղօ-
թեանք և զապրիլ իւրեանց և զփրկիլ ազգի
մարդկան, և գոհանալով ասեն ։

Օ ե ծրնեալ ըսեն 'ի դժոխոց ։ Սովին յայտ առնեն
զմեծութիւն փրկութեանն՝ զոր եցոյց առ նոսա Ած ։ Ք
որում զձեռն իւր կարկառելով առ նոսա՝ փրկ-
եաց զնոսա, այսպէս թէ ոչ իջանէին նոքա 'ի դը-
ժոխս դր 'ի մահ, և զայս առնել ես յայտ առ-
նեն յետագայ բանիւքդ ասելով ։

Ա 'ի յետոյ մեծ աղաչեցայց զեզ · և ծնրեալ ըսեք 'ի
ձեռնաց, և 'ի միջոց երրորդեալ երգոց, և 'ի միջոց հրոյ ծրա-
ծեալ ըսեն ։ Այս ասացեալ՝ գոհութ մատուցա-
նեն առ Ած, և զամենեսին առ համարակ 'ի
նոյն յորդորեն ասելով ։

Գոհացարուք զՏէր՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմ
նորա ։ Այս ասա յօրհնութին խրախուսեն, և ա-
սեն ։

Օրհնեցէք զՏ. ամենայն պաշտօնեայք տն. զԱծն աստուածոց · օրհ-
նեցէք և գոհացարուք · զի յաւիտեան է ողորմ նորա ։
Այս բանք ոչ կարօտին մեկնութեան, զի ինքնին
յայտնի են, և բացատրին ես 'ի նախագրելոցդ ։

Այլ

Այլ գիտել է և, զի 'ի տեղի այսր յետին օրհնութեն 'ի ժամագիրս մեր դնի. * օրհնեցէք ,, զարարիչն արարածոց, զտէրն տերանց, ըզ- ,, թագաւորն թագաւորաց, զա՟ծն աստուծոց, ,, օրհնեցէք, գովեցէք, բարեբանեցէք. զի քաղցր ,, է՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա ||։ Իսկ զայս յաւել եկեղեցի՝ առ 'ի փառս տալ ա՟յ, և իբրև թէ ստորագրել փառաբանութեն անա- նեանց յօրհնութի յաւիտենականս։

---

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ. ԺԳ.

Փառաբանութիւն այս բերանով Տէր Աստուածածնին՝ յայտարարութիւն այցելութեան եղելոյ առ նա, նա և հրապարակութիւն ողորմութեան այս և հրճուախնդրութիւն նորա. կանխաձայն և ցուցապաշտպանութեան այս 'ի վերայ Իսրայելի։

Օրհնութի մարիամու աստուածածնի։
(ըստ սաղմոսարանին)։

1. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. և ցնծասցէ հոգի իմ յԱստուած փրկչում իմում։
2. * Հայեաց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք։
3. * Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սուրբ է անուն նորա։
4. * Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. արար զօրութիւն բազկաւ իւրով։

Ցրու-

Օրհնութի Տէր Աստուածածնի։
(ըստ աւետարանին Ղուկասու. Ա. 46=55)։

46. Մեծացուսցէ անձն իմ զՏէր.
47. * և ցնծասցէ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ։
48. * Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք։
49. * Զի արար ինձ մեծամեծս հզօրն. և սուրբ է անուն նորա։
50. * Եւ ողորմութի նորա ազգաց յազգս երկիւղածաց
51. իւրոց. * արար զօրութի

բազ-

5 · * Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց :

6 · * Զխոնարհս բարձրացոյց · զքաղցեալս ելից բարութբ · և զմեծատունս արձակեաց ունայնս :

7 · * Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշելով զողորմութիւն իւր :

8 · * Որպէս խօսեցաւ առ հարսն մեր · ընդ աբրահամու և զաւակի նորա յաւիտեան :

բազկաւ իւրով · Ցրուեաց զամբարտաւանս մտաց սրտից իւրեանց ·

52 · * Քակեաց զհզօրս յաթոռոց : Եւ բարձրացոյց զխոնարհս ·

53 · * զքաղցեալս լցոյց բարութեամբ · և զմեծատունս արձակեաց ունայնս :

54 · * Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում · յիշել զողորմութիւն :

55 · * Որպէս խօսեցաւ առ հարս մեր · աբրահամու և զաւակի նորա յաւիտեան :

# ՎԵՐՋԱԳԻՐ ·

## Օրհնութիւն Մարիամու Աստուածածնին :

կամ ըստ ժամագրքի ·

Երգ Մարիամու Աստուածածնին :

Այն այս փառաւորութիւն որ աստուածածնին կոչի օրհնութիւն և երգ · օրհնութիւն՝ զի կարգի յօրհնել զա՛ծ ըստ երկուց, ըստ գովութեան և ըստ գոհութեան · ըստ գովելոյ զբարութիւն այ, և ըստ գոհանալոյ զբարերարութիւն նորա · երգ կոչի, ոչ զի եղանակաւ նուագեցաւ, այլ զի ըստ այլոց երգոց չափակցութբ ոտից յօրինեալ եղև · Նախ ասացեալ՝ օրհնութիւն ասի՝ զի յօրհնեալ բերանոյ բղխեցաւ, յայսս առնել ընդ և զօրհնիլ ազանց · երգ ևս ասի՝ զի 'ի հոգւոյն սբյ երգեալ եղև բերանով մօր փրկչի իւրոյ · Նաև օրհնութիւն կամ երգ 'ի բազում գրոց գերազանց ցուցանի քան զայլ ամենայն նուագս յօրինեալս 'ի մարգարէից · Առաջին գերազանցութիւն է չափ 'ի կողմանէ երգողին · քանզի այլ ո՛ և էցէ երգք կամ օրհնութիւնք նուագեալ եղեն յայնցա-

նէ

նէ՝ յորս հոգեմբ ևեթ բնակէր բանն ա՛յ. իսկ սա նուաճեալ եղև յայնմանէ յորում մարմնացեալ էր բանն ա՛ծ, և անձնաւորապէս բնակէր 'ի նմա։ Ուստի որպէս այլք այնու բանիւ՝ որ հաղորդեալ էր նոցա յա՛յ՝ նուաճէին՝ զոր նուաճէինն, սոյնպէս և կոյսն մարիամ այնու բանիւ՝ զոր կրէր յորովայնի՝ նուաճէր՝ զոր բերանովն խօսէր. սմին սակս այն օրհնութիք համարին իբր ստուերք ն՛ր։ Բ. Զի օրհնութիք նուաճեալ եղեն յայնցանէ՝ յորս տիրեալ էր մեղք՝ գոնէ մեղքն ադամայ. իսկ սա ստացաւ յայնմանէ՝ յորում ոչ եգիտ տեղի՝ ոչ մեղքն ադամայ, և ոչ այլ մեղք ինչ որդւոց ն՛ր. և ոչ իսկ լուցկիքն մեղաց։ Գ. Զի երգք ստացան յայնցանէ՝ որք կարօտ էին օրհնութեան ա՛յ. ուստի և 'ի գտանելն զայն՝ 'ի շնորհակալութի՛ այնր երգէին նմա զերգս իբրև զօրհնութի՛. իսկ սա ստացաւ յայնմանէ, որում կարօտ էին այլք. ըստ որում 'ի նմանէ օրհնեցան ամենայն ազինք։ Դ. Զի օրհնութիք նուաճեալ եղեն յայնցանէ՝ որք յանուպատուոյ իրիք երևելի էին, և հասակաւ լիացեալք. իսկ սա նուաճեցաւ յայնմանէ, որոյ ոչ անուն էր հռչակեալ, և ոչ լրումն հասակի կատարեալ. այլ իբրև քրոջէն իւրն հօրեղէն 'ի տան զաքարիայ երևեալ հաստչին ամենայնի մայր. որ մինչև էր նուաճեալ զայս զիւր օրհնութի՛՝ եբաց զբերան ամլոյն օրհնել զինքն և ասել. օրհնեալ ես դու 'ի կանայս։

Երկրորդ գերազանցութի՛ ն՛ր մտածի 'ի կողմանէ երգեցելոյն, ք՛զի 'ի կողմանէ ստացեալ բանիցն. զի ոչ միայն յեղանակ խօսիցն տեսանի սա պանծալի, զորոյ զնմանն ոչ նշմարեմք յայլս, այլ և 'ի նոյն իսկ 'ի նիւթսն՝ զորս յերանեալ հոգւոյ անտի իւրմէ հրացայտ հոսէ. ուր և իբրև ա՛ծ

այնացեալ տիրուհի ոմն զանձն առաջի առնէ մե-
ծացուցիչ տուողին մեծութեան՝ հանդերձ անկշռելի
խոնարհութեամբ . աւետաւորելով միանգամայն և
զժամանել ողորմութեան նորա՝ որ զայնքան ժամա-
նակս ծածկեալ կայր :

Ո այս երգ որ ամենածնի մի այսչափ գերապանծ
գոլով երգեցին եկեղեցիք մեր 'ի սկզբանն յաւուրս
կիւրակէից և այլ տէրունական տօնից՝ յարմարել
'ի նոյն ըստ պատշաճի և զշարականս գեղեցիկս
յոյժ . այլ զնի ժամանակաց իբր յերեքտասա-
ներորդ դարուն սկսան ուրեք ուրեք յամենայն
աւուր ևս նուագել . մինչև յետոյ սովորութի եղև
յամենայն տեղիս նուագելոյ :

Երգ այս երգ՝ որ յութ համարս բովանդակի՝
յերիս մասունս բաժանի . առաջինն 'ի գովասա-
նութի այն՝ հայելով յանձն ասողին , յորում եղև
այսպիսի մեծ շնորհք . երկրորդն 'ի յայտարա-
րութի ողորմութեան և արդարութեան այն՝ հայելով 'ի
գործս նորին՝ զորս եցոյց առ այլս . երրորդն 'ի
պաշտպանութի Իսրայէլի՝ հայելով 'ի խոստմունս
նորա :

'Ի մեկնել մեր զիւրաքանչիւր բան այսր օրհնու-
թեան՝ բազում ինչ ունէաք գրել մեծամեծս և
զարմանալիս 'ի գովեստ սրբ. ամենածնին , զի իւրա-
քանչիւր բանից առանձին զատ յօրինելով .
բայց քանզի այսու կարի իմն ընդարձակէին ըն-
թացք մեկնութեան , սորին մի լաւ համարեցաք
սստանօր համառօտ անցանել . և ապա զայլ յա-
տուկ գիրս շարագրել տասն զատուք զի աւուրց
տօնից նորին , և զի պաշտպանութեան նորա : Ո այս
ծանուցեալ մատիցուք 'ի մեկնութի :

ԲԱՆ.

Բ · Ր · Ն ։

1 · Մեծացուսցէ անձն իմ զՏր · և ցնծասցէ հոգի իմ ած փրկչաւ իմով ։

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ։

Դաւիթ մարգարէ փափաքելով մեծացուցանել զԱծ, և ոչ կարելով առանձինն լնուլ զփափագ իւր՝ հրաւիրէ զայլս ասելով · * մեծ արարէք զՏր ինև ‖ · ( սաղ · ԼԳ · 3 · ) · որպէս թէ ասէր · եկայք ամենեքեան միաբան մեծացուսցուք զԱծ · զի ես ինքնին առանձինն ոչ եմ՝ ինոյն ձեռնհաս · բայց աւասիկ դուստր նորա օրիորդ չորեքտասանամեայ կամ հնգետասանամեայ արձանացեալ ՝ի միջի՝ ինքնին առանձին մեծացուցանել զԱծ խոստանայ՝ ոչ ըստ հասարակ կարգի՝ այլ ՝ի վեր քան զկարգ ստացածոց · ընդ որ թէ հնար էր՝ և դասք հրեշտակաց և ամենայն երկնային զօրաց կարէին հիանալ · զի և ոչ նոքա յայս մասն չին համարձակին ։ Այլ զոր այլք ոչ իշխէին ասել, սա համարձակի · և ասէ ։

Մեծացուսցէ անձն իմ զՏր ։ Յարարածս ամ միայն նա կոյսն մարիամ մեծացաւ ՝ի վեր քան զամենայն՝ ըստ շնորհաց, ըստ փառաց, և ըստ մեծի պատուոյ ածամայրութե · որոյ վս և եղիսաբեթ հիացմամբ լինի մեծացոյց զնա ասելով · * օրհնեալ ես դու ՝ի կանայս ‖ ։ Իսկ զի յայսպիսի մեծութի եհաս նա՝ արժանաւորեալ յառաջ մասնի մեծացուցանել զմեծացուցիչն իւր զԱծ ։

Արդ մեծացուցանել զԱծ երրակի կարէ լինիլ · մի՝ բանիւք · երկրորդ՝ գործովք · և երրորդ՝ իրօք ։ Բանիւք մեծացուցանէլն է՝ զայնպիսիս խօսիլ զԱծոյ, որով ցուցանի մեծութի նորա · որպի-

սի են փառաբանական բանք, օրհներգութիւնք, քարոզութիւնք, և այլն. և զայս արար սբ կոյսն գերազանց օրինակաւ յիւմ ի կեանս իւր 'ի փառաւորել նորա զԱծ յամենայն ժամ 'ի վեր քան զամենայն. զորոյ զճշմարտութիւն յայտնի արար յայս բան ։

Գործով մեծացուցանելն է՝ զայնպիսիս գործել, որովք յայտնի թէ մեծ է նա՝ որում ընծային այն գործք, որպիսի է զոհս և պատարագս մատուցանել նմա, զանձն 'ի մահ մատնել վասն նորա, ուղերձել նմա զայնպիսի ինչ՝ քան զոր աւելի ոչ կարէ ։ Նոյն զայս արար սբ կոյսն՝ զանձն իւր նուիրելով նմա, և կարգելով զամենայն գործս իւր 'ի փառս նորա, ևս և մատուցանելով նմա ընծայ և պատարագ զհաւասարն նմա զԱծորդի իւր, ընծայ՝ 'ի տաճարին, և պատարագ՝ 'ի վերայ խաչին. միանգամայն և հրատարակելով զեկեալ հասեալ փրկութիւն նմա. զոր չէր ուրուք արարեալ ցայն ժամանակ ։

Իրօք մեծացուցանելն է՝ զայնպիսի ինչ առնել, որով Ած իրօք մեծանայ՝ ոչ յինքեան, զի այս է անկարելի, այլ զինքեամբ. զորպիսի ոչ ոք 'ի ըստեղծուածոց կարաց առնել, բայց միայն սբ կոյսն Մարիամ. և այս՝ երրակի ։ Նախ ըստ մարմնաւորութեան. քանզի զգեցուցանելով նմա զմարմին՝ արար զի մեծասցի Ած. մինչ զի որպէս արեգակն 'ի ծագելն ամպ՝ ունելով զիւրև յառաջոյ զամպս նուրբս՝ իբրև զգեստ զգեցեալ մեծանայ առ մեզ կարմրափայլ և դիւրանկատելի երևեալ, նոյնպէս և Ած զգենլով զմարմին 'ի սբյ կուսէն՝ մեծացաւ առ մեզ. զի է ցուցաւ՝ թէ ճշմարտիւ մեծ է Ած՝ լուսափայլեալ 'ի սէր իւր, և տեսանելի լեալ յանտեսութենէ իւրում ։

Երկրորդ՝ յարանուանութիւն . մի՛ զի ծնանելով զած որդին՝ սուրբ՝ զի ած ասիցի ած Ճշմարտին ա՟յ . քանզի յառաջքան զծնանիլ ո՟րդյ կուսին զոր-դին ա՟յ՝ ած ասիւր ածոց , տր ած նոցա՝ որք իւիք հաղորդեալ էին կատարելութեն ա՟յ , կամ անուան նորա . որպէս էին հրեշտակք , մարգա-րէք , թագաւորք , դատաւորք , և սուտ ածք . իսկ ՚ի ծնանիլ ո՟րդյ կուսին զորդին ա՟յ՝ ած եղև ած Ճշմարտին ա՟յ , տր ած քնի՝ ա՟յ Ճշմարտի ։

Երրորդ՝ պաշտամամբ . զի ցայնժամ արարածք միայն երկրպագանէին ա՟յ . իսկ ՚ի ծնանիլ կու-սին զքս, Ճշմարիտն ած , տր քս որդին ա՟յ երկիր ե-պագ Ճշմարտին ա՟յ . վասն որոյ իրաւամբք ասաց· մեծացուցէ անձն իմ զտր . կամ որ նոյն է՝ որ-պէս զնի յայլս , մեծացուցանէ անձն իմ զտր ։

Ոչ ասէ՝ ես մեծացուցից . այլ զանձն ՚ի մէջ բե-րէ ասելով՝ մեծացուցէ անձն իմ . իսկ անձամբ նշա-նակի աստ հոգի բանական ։ և թէպէտ այս և ս ՚ի նոյն վերածի , բայց սովին յայտ առնէ նախ , թէ հոգի նորա ամենևին միացեալ էր ընդ ա՟յ , և այնու հոգւով միացելով մեծացուցանէր զած ։ Յայտ առնէ երկրորդ՝ թէ որովհետև ՚ի կողմանէ մարմնոյն չունէր այլ ևս ինչ առնել , զի արդէն մեծացուցեալ էր զնա մարմնով յար-գանդի իւրում , դնէ՝ մեծացուցանել հոգւով , և այն՝ եթէ ըստ կարողութեց նորին , և եթէ ըստ այլ ամենայն մասանց ։

Իսկ դերանունս իմ՝ ցուցանէ նախ՝ թէ Ճշմար-տիւ նա միայն ունէր զայնպիսի հոգի՝ որ նորայն էր , և ոչ այլում , ոչ մեծութեց ծի , ոչ փափկու-թեց , և ոչ փառաց . ո՛չ էին հոգիք մեր անկեալք ՚ի ներքոյ այլևայլ կրից ։ Ցուցանէ երկրորդ՝ թէ ժառանգեալ ունէր զհոգին ո՟չ իբրև զիւր . և նո-

նովին շարժէր մեծացուցանել զտ՟ր ։ Ցուցանէ երրորդ՝ թէ զոր յարգանդի ունէր՝ մի էր ընդ նմա իբրև ընդ հոգւոյ իւրոյ · և իւր գոլով՝ իբր իւրով հոգւով մեծացուցանէր զմեծավայելչութիւն նորա · զոր ոչ ոք 'ի ստեղծուածոց կարաց առնել ։

Քննել արժան է և զայս՝ զի ոչ դնէ աստ զբառդ ա՟ծ , որպէս դնէ 'ի յառաջորդ համարուածի , այլ՝ զտ՟ր յասելն · * մեծացուսցէ անձն իմ զտ՟ր ‖ · Իսկ բառդ ա՟ծ՝ 'ի թարգմանութե՟ ա՟ծաշնչելին պատասխանէ եբրայական բառիս Եօվա , այն է՝ որ էն կամ՝ ինքնագոյ · որով նշանակի ինքնութի՟ անսահման գոյութե՟ · և զի ոչ իւիք կարեմք ըմբռնել զնոյն զայն ինքնութի՟ , այլ միայն ըստ կարի մեծացուցանել հոգւով , վ՟յ եդ զհոգւով մեծացուցանելն ։

Արթ է և ասել՝ թէ զայս դնէ հայելով 'ի բանն եղիսաբեթի · քանզի 'ի դաւանիլ նորա զնա մայր այնր՝ որ էր տ՟ր իւր՝ յասելն առ նա , մայր տ՟ն իմոյ · այսմ ասացուածոյ առնէր պատասխանի , և ո՞չ թէ ասէր · դու ո՛վ եղիսաբեթ Ճանաչելով զիս մայր տ՟ն քո՝ մեծացուցանել կամիս զիս · այլ ես զնոյն ինքն զտ՟րն՝ զոր յարգանդի ունիմ՝ իբրև մայր մեծացուցանեմ ։ Իսկ թէ 'ի վստահանալ անձին նո՟ր մեծացուցանել զանմեծանալին՝ քանի՛ բերկրեալ բերէր յինքեան՝ համառօտ իւն բանիւ՟ յայտ առնէ , և ասէ ։

Եւ ցնծասցէ հոգի իմ ա՟յ փրկչաւ իմով · կամ * ցնծացաւ հոգի իմ յա՟ծ փրկիչ իմ ‖ ։ Ապաքէն ուր ուրեք կայցէ անուշահոտ ինչ՝ անուշութի՟ հոտոյ լցեալ լինի տեղին այն · և ուր կայ լոյս պայծառ՝ լուսաւորութի՟ · և ուր հուր՝ ջերմութի՟ ։ Աստի յայսմանէ կարեմք չափել՝ թէ քանի՛ ցնծութի՟ լցեալ

եր ամենամաքուր կոյսն. որովհետեւ լինելութիւն շնորհաց հոգւոյն սրբոյ հանգուցեալ էր 'ի նա. եւ բովանդակութիւն առաքինութեանց վառեալ էր յամենայն մասունս հոգւոյ նորա՝ եթէ ըստ բանական մասին, եւ եթէ ըստ զգայականին. եւ որ անհաս է 'ի մէնջ՝ նոյն ինքն աղբիւրն յաւիտենական ցնծութեան եւ սփիւռն անսահման ուրախութեան համայն բնակեալ էր յորովայնի նորա գոյացաբար. վասն որոյ արձակաբար եւ լիաբերան բարբառելով ասէ, * եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով ||. ոչ խօսի յաւելուածով իմիք՝ զի թէ ցնծացաւ մեծապէս, կամ ցնծացաւ յոյժ. զի զոր ինչ եւ յաւելումն յայտնիցէ աստի բանից, ոչ այնչափ զառաւելութիւն՝ որչափ զնուազութիւն ցուցանէին այն բանք՝ համեմատութիւն այնր՝ զոր ունէր:

'Ի նախընթաց հատուածի որպէս ասացաք՝ եդ անձն իմ. իսկ աստ դնէ հոգի իմ. եւ զայս առնէ թերեւս առ 'ի ցոյց առաւելութեան ցնծութեան իւրոյ 'ի մեծացուցանել զԱստուած. ըստ որում բառդ հոգի՝ ընդհանրագոյն է քան զանձն. եւ պարագրէ յինքեան նաեւ զանձնիշխանական զօրութիւն. իսկ բառդ անձն՝ 'ի մէջ բերէ զհոգին յաւէտ ըստ ստորին մասին քան ըստ վերնոյն. եւ յայս սակս յետ ասելոյ՝ * մեծացուսցէ անձն իմ զՏէր ||, 'ի յարելն զկնի՝ * եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով ||, սովին իսկ ցուցանէ՝ թէ մեծացուցումն այն 'ի վեր եղեւ քան զամենայն 'ի ցնծութեան հոգւոյ նորին:

Այս ցնծութիւն հոգւոյս Աստուածածնին 'ի մեծացուցմանն հայէր նախ 'ի մեծութիւն փառացն Աստուծոյ իբր 'ի սկզբնական առարկայ. հայէր երկրորդ 'ի մեծութիւն բարերարութեան նորա իբր յերկրորդական

առա-

նաւարկաց ։ Ըստ առաջնոյն դնէ զբանն ած՝ յաւ-
ելն · ցնծայեցէ հոգի իմ ած, կմ որ նոյն է՝ ցըն-
ծացէ հոգի իմ յած · և ըստ երկրորդին յաւե-
լու զբանդ երեքն՝ յաւելն փրկչաւ իմով, կամ որ-
նոյն է՝ 'ի փրկիչ իմ · որում համեմատ եբրա-
յականն բառս եհշուա, այն է յիսուս՝ որ թարգ-
մանի փրկիչ ։ Աստի պարզապէս ած դնելով
զցնծութիւն իւր բովանդակ յածութիւն նորա կար-
գէ · իսկ յաւելլով զփրկիչն՝ 'ի շնորհս փրկութ
նորա զնոյն վերածէ ։

Իսկ այս փրկութի զոր 'ի մէջ բերէ բաժանեն երե-
քեն՝ յերիս հայս, այ 'ի նախապահողականն, 'ի
պահպանողականն, և 'ի յաւիտենականն ։ Ըստ
նախապահողութ փրկիչ եղև նմա ած 'ի սկզբնա-
կան մեղաց · զի պահեաց զնա չյղանալ և չծնա-
նիլ ընդ պարտաւորութ մեղացն ադամայ · որ-
պէս յղանան և ծնանին այլք ամենքին · ուստի և
յամենայն որդիս մարդկան կոյսն մարիամ միայն
սուրբ անարատ 'ի յղութ և անապական յանիծիցն ա-
դամայ · ըստ որոյ և 'ի շարականի կոչի՝ * անդա-
տապարտ շառաւիղ ‖ · այ այնպիսի ծնունդ՝ որ
ազատ մնաց 'ի դատապարտութէ անտի ադա-
մայ · որ է ասել, ազատ 'ի մեղացն ադամայ
յղացեալ, և առանց յանցանաց նորա 'ի լոյս ըն-
ծայեալ · յոր միտ ասէ նարեկացին · * առանց
յանցանաց զաւակ փոխեցար ‖ · սմին իրի և եկե-
ղեցի քսի ընդ ամենայն տեղիս հռչակելով զայս
անարատութի նորա՝ տօնէ զտօն յղութ նորին ·
զորմէ տես 'ի Ճառս այնր տօնի նորա ։

Ըստ պահպանողութ փրկիչ եղև նմա ած յամե-
նայն արարոց մեղաց եւս և ներելեաց և յամե-
նայն չարեաց · և այս՝ ոչ միայն վս պատշաճողու-
թե, այլ և վս հարկաւորութե · իբրև ոչ միայն

պատշաճ էր, այլ և հարկ էր պահել զնա անբիծ յամենայն արատոյ մեղաց. զի մի՛ նախատինքն մեղաց վերածեսցին և յորդին. վասնզի պակասութիւն մօրն համարի որդւոյն՝ եթէ որդին կարէ բառնալ զայն՝ և ոչ բառնայ.

Ըստ յաւիտենական փրկութեան՝ փրկիչ եղև նմա Ած առանձին իմն օրինակաւ. ըստ որում զնա եդ սկիզբն նախասահմանելոց 'ի փրկութիւն. զի փրկութիւն որդւոյ մարդկան եղև 'ի ձեռն մարդեղութեան բանին. իսկ մարդեղութիւն բանին նախ առաջին պարագրէր յինքեան զծնօղն՝ յորում ունէր կատարիլ. զի առանց այնր՝ ոչ կատարիւր այս խորհուրդ. ապա նախ զնա պարտ էր վիճակել այնմ փրկութեան իբրև զառաջին և իբրև զարժանաւոր քան զամենայն. Ուրեմն ըստ այսոցիկ կարգաց փրկութեան՝ միայն սրբոյ կուսին տիրապէս անկ էր ասել, Ած փրկիչ իմ. զի թէպէտ և ամենեցուն եղև նա փրկիչ, բայց գերազանց իմն օրինակաւ եղև սրբոյ կուսին. և յայս իսկ յաւելու գնել զբառդ իմ: Արդ յայսպիսի վիճակ վերառեալ սուրբ Ածածնին՝ ոչ մատուցանէ առաջի զարժանաւորութիւն ինչ անձին կամ իւրոյ տոհմին, այլ միայն զխոնարհութիւն իւր՝ ասելով:

Հ. Զի հայեցաւ 'ի վր խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ամ ազգք:

Ակնունէին մարդիկ այցելութեան Այ. այլ ոչ ոք գտաւ, որոյ միջնորդութը ցուցցէ նոցա Ած զայցելութիւն իւր. հայեցաւ յերկնից՝ տեսանել թէ իցէ՞ ոք արժանաւոր այսմ, և ոչ եգիտ զոք. Ետես միայն զամենախոնարհ կոյսն մարիամ՝ զոր 'ի յաւիտենից սահմանեալ էր. արձակեաց 'ի նա զաչս իւր իբրև 'ի մի միայն հաճոյ ինքեան,

և.

և յարմար տեղի իւրոյ այցելութեան · էառ զնա 'ի ձեռս՝ մարմնանալ յարգանդի նորա ։ Այլ նա ոչ ստացաւ՝ յայսպիսի արժանաւորութիւն ամբարձեալ՝ ոչ 'ի բարձրութիւն պատուոյն հայրն՝ յոր վերացաւ , այլ 'ի խոնարհութիւն անձինն՝ որով արարչին հաճոյացաւ · և զնոյն զայն առաջի առնելով առ 'ի գովութիւն այցելութեան տն՝ ասէ ։

Այս արար 'ի ԼԷ խոնարհութեան աղախնոյ իւրոյ ։ կամ * հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ ‖ ։ Այսմ ասել · անհամար իշխանութիւնք կային յաշխարհի , և անթիւ կուսանք , յոգունք արքայազունք և բազում փառաւորք պատուեալք առաջի մարդկան և բարձրացեալք յաթոռ մեծութե · կային և բղխք յազգին Դլի , որք գխոելով թէ գալոց է փրկիչ յն , փափաքէին՝ զի յինքեանց հաճեսցի երևիլ · այլ որ արարն զամենայն՝ թողեալ զամենեսեան՝ հայեցաւ 'ի խոնարհութիւն իմ · և ինձ հաճեցաւ այց առնել , և ինև ազգի մարդկան հասայն ։

Այս հայեցուած կամ այս այցելութիւն ոչ ցուցանէ՝ թէ ած նորոգ սկսաւ հայիլ 'ի կոյսն , և այց առնել , այլ թէ որ յաւիտենից հաճեալ էր ընդնա՝ 'ի սահմանեալ ժամնկի եկն առ նա , և մարմնացաւ 'ի նմանէ՝ առ 'ի փրկել զազգ մարդկան ։ Իսկ թէ յինչ միտս դնէ զբառդ խոնարհութիւն , ծանիր , զի այս բառ երրակի առեալ լինի · մի՝ փնկ այնր առաքինութեան՝ որ ներհակի հպարտութեան · որով ոք նուաստ ճանաչէ զինքն քան զայլս · երկրորդ՝ փնկ պատճառի խոնարհութե · որպիսի է նուաստութիւն տան , անարգութիւն անձին , ևս և նեղութիւնք և վիշտք պէսպէս իրաց , որք պատճառեն 'ի մարդն զխոնարհութիւն · և այս խոնարհութիւն հակադրի բարձրութեն · երրորդ՝ փնկ գործոյ խո-

նարհութեան. որպիսի է այն ամենայն, որով ոք նուաստ ցուցանէ զինքն եթէ 'ի խօսս և եթէ 'ի զգեստս իւր. և այս խոնարհութիւն հակադրի մեծութեան. ըստ երից ըստ այսոցիկ մարթ է առնուլ ասա զբաժ. խոնարհութի:

Ըստ առաջնոյն՝ յիրում մտածեալ՝ յայտ է թէ սբ. կոյսն զարդարեալ էր առաքինութեամբ ծայրագոյն խոնարհութեան յայնպիսի և յայնքան կատարելութեան, մինչև վերացուցանել զնա 'ի գագաթն գերազանց պատուոյ ածամայրութեան: Բացի յիրում մտածեալ. զի իրօք այնպիսի էր. բայց յաչէն զայս՝ ոչ հայէր յայն առաքինութի իւր. զի խոնարհն ոչ տեսանէ զինքն խոնարհ գոլ. և սակայն այնպիսի գոլով նա՝ իբր այնպիսի մատուցանէր զանձն առաջի:

Ըստ երկրորդին՝ յայտ է թէ սբ. կոյսն թէպէտ և էր 'ի թագաւորական զարմէ դաւթի. զի իջեալ էր 'ի նաթանայ՝ յորդւոյ դաւթի. կամ ըստ այլոց, և ըստ խորենացւոյն ('ի թուղթն առ սահակ արծրունի) 'ի սողոմոնէ, բայց առ նորա չէր 'ի մեծի համարի. մանաւանդ թէ աղքատ ևս էր, և յաղքատ գաւառի որ 'ի գալիլեա՝ յանարգ քաղաքի միում, այն է նազարէթ:

Ըստ երրորդին՝ յայտ է, թէ արտաքին կեանք նորա ոչ փայլէր 'ի ճոխութեան կամ 'ի շքեղութեան զգեստուց կամ այլոց իրաց, այլ 'ի նուաստութեան:

Եւ ահա զայս ամենայն 'ի մի բան խոնարհութեան բովանդակէ ասելով. * այց արար 'ի վր խոնարհութեան աղախնոյ իւրոյ ‖:

Այլ վիճակի ծայրագոյն խոնարհութեան իբրև անուշահոտ ծաղիկ երևեցոյց սբ. կոյսն զխոստովանութի աղախնութեան իւրոյ՝ եթէ յընտրիլն, և եթէ 'ի լինիլն անդ մայր այ. զի յընտրիլն ասաց.

ւայց · * ահաւասիկ կամ աղախին տն ‖ · ոչ լինէ ա_
նէր · ընդունեցայ ահա մայր այ · այլ ես մեծ հա_
մարիմ զինքն իմ աղախին նորա ։ Որպէս և 'ի
լինելն եւ՝ զայն զոյս ծաղկեցաւ , յասելն՝ * այց
արար 'ի վր խոնարհութե աղախնոյ իւրոյ ‖ ·
Իսկ աղախնութի նորա տիրապէս յերկուս եղև ·
մի՝ 'ի խոնարհ ծառայութե իւրում · յորում առա_
ւել քան զամենայն որդիս մարդկան գտաւ մի
միայն անարատ պաշտօնատար մեծվայելչութեն
այ ։ Եւ երկրորդ՝ 'ի սքանչելի սպասաւորութե
մեծի խորհրդոյ մարդեղութե · զի նովաւ և 'ի
նմա կատարեցաւ այս խորհուրդ՝ յղանալով յար_
գանդի իւրում զորդին այ , և ծնանելով զնա
լոյս ծի ։ Եւ 'ի սմին յայսմ՝ որով գտաւ սպա_
սաւոր այսր խորհրդոյ , նովին գտաւ և կատա_
րիչ խորհրդոյն · և 'ի կատարմանն եղև ճշմար_
տիտ մայր այ · որով երևեցաւ մի միայն երանելի
յամենայն որդիս մարդկան · ըստ որում և վը_
կայեաց առ նա սրբուհին եղիսաբէթ , ասելով ·
* երանի՛ որ հաւատայցէ՝ եթէ եղիցի կատա_
րումն ասացելոցս նմա 'ի տնէ ‖ · իբր թէ ասէր ·
դու միայն գտար երանելի , զի հաւատացեր՝ թէ
ած կատարելոց է 'ի քեզ զայս խորհուրդ · և հա_
ւատալովդ՝ գտար սպասաւոր կատարման խոր_
հրդոյն ։ Եւ քանզի սովին եղև նա՝ և նպատակ
երանութեանց ամենայն ազանց , վն ինքնին բար_
բառելով հրատարակէ զայն , և ասէ ։

ԱՀԱՒԱՍԻԿ ԵՐԱՆԻՑԵՆ ԻՆՉ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳՔ ։ Այսպի_
սի ինչ բարբառեցաւ և լիա կին յակոբայ 'ի ծնա_
նիլ աղախնոյ իւրոյ զեղփայ զասեր · որ թարգ_
մանի օրհնեալ · զի ասաց · * երանելի եմ ես ,
զի երանեսցեն զիս կանայք ‖ · ( Ծնն · Լ · 13 · )
Նոյն բայց բզմ տարբերութիւք կան 'ի միջի · մի՝ զի

վասն

լիային առ ժամանակ մի էր․ իսկ սրբոյ կուսին յաւիտեանս․ զի ասելն յայսմհետէ յայս ակնարկէ։ Երկրորդ՝ զի լիային միայն ՚ի կանանց էր․ իսկ սրբոյ կուսին յամենայն ազգաց։ Երրորդ՝ զի լիային կարի իմն ստորին էր՝ եթէ ըստ առարկային, և եթէ ըստ ենթակային․ քանզի եթէ ըստ ծնիցելոյն և եթէ ըստ ծնողին․ զի ծնեալն էր մարդ մի անարգ․ և ծնողն զելփա աղախին լիայի․ իսկ սրբոյ կուսին բարձր յոյժ՝ եթէ ըստ առարկային և եթէ ըստ ենթակային․ որպէս և յայտ է․ վասն որոյ արժանապէս երանեալ լինէր․ ընդ որոյ և ասէր․ * այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք ||։

Յաւետարանի՝ այս բան սկսանի բառիւքս, զի ահա․ ուր չէն կարէ հայիլ ՚ի պատասխանատուութիւն բանիցն եղիսաբեթի․ որ ասաց, երանի որ հաւատայցէ․ քանզի երանի քեզ՝ զի հաւատացեր․ որում պատասխանէ կոյսն․ այո երանի է ինձ, զի վասն այսր երանեսցեն ինձ ամենայն ազգք։

Իսկ բառդ ահա առաջի դնի ըստ երից․ նախ՝ իբր սկսանողական․ որպէս թէ եղեալ էր․ աւասիկ յայսմհետէ սկսանիմ երանիլ մինչև ՚ի կատարած աշխարհի յամենայն ազգաց ընդ ամենայն տիեզերս․ ուստի ասէ իգնատիոս վարդապետ․ այս բան կուսին, * որ յայնժամ ասացաւ ՚ի տանն զաքարեայ, ահա ելից զտիեզերս․ զի երանեն զնա ամենայն ազգք ||։ Երկրորդ՝ իբր զարմացական․ որպէս թէ եղեալ էր․ ահա գործ նոր և սքանչելի և ամենայն լեզուաց անճառելի․ զի աղջիկ մի ՚ի դստերացն եւայի երանեսցի յամենայն ազգաց ընդ ամենայն յաւիտեանս ՚ի վեր քան զամենայն մարդ և քան զամենայն հրեշտակս։ Երրորդ՝ իբր ազդարարողական և յորդորական․ որպէս թէ եղեալ էր․ որք միանգամ ցանկայք

երա-

երանելի լինել, ահա յինէն ուսարուք՝ խոնարհութեամբ 'ի նոյն ժամանել. որպէս և ես 'ի ձեռն խոնարհութեան 'ի գերագոյն բարձրութիւն ելանելով՝ եղէ ամենեցուն երանելի. զի այսուհետև երանեսցեն ինձ ամենայն ազգք ·

Այս բան ոչ է սոսկ իբր կանխատեսութիւն կամ իբր լոկ գուշակութիւն լինելի իրաց, այլ իբր հաստատութիւն. զոր և գործադրութիւն իրացն յայտնի կացուցանէ. քանզի յիրաւի ամենայն ազգք քրիստոնէից 'ի ծագաց երկնից՝ մինչև 'ի ծագս երկրի երանեն զքեզ կոյս իբրև զմայր աստուծոյ կենդանւոյ, իբրև զընակարան անպարագիծ էին, իբրև զմարմնարան անեղական բանին, իբրև զընդունարան լիութեան շնորհաց, իբրև զտիրաշէն խորան հոգւոյն սրբոյ, իբրև զդշխոյ փառաց, իբրև զթագուհի հրեշտակաց, իբրև զգանձատուն աստուածային ողորմութեան, իբրև զարժանապատիւ աւարկայ գերաբուն գովասանութեան, և իբրև զմի իմն միայն 'ի վեր քան զամենայն արարածս, և 'ի վայր քան զաստուած. և այս այնչափ՝ մինչև ոչ գտանել զչափ երանելոյ նմա, այլ յամենայնի լինել երանեալ, և միշտ երանեալ, և վեհագոյն էիցս երանեալ.

Այլազգիք ևս երանեն նմա իբրև ամենագութ մօր, և իբրև պաշտպանողի ամենեցուն. իբրև բարեխօսի փրկութեան, և իբրև ազատարարի ազգի մարդկան, ևս և իբրև ամենամաքուր և անխախտ կուսի, և իբրև ամենասուրբ և անարատ ծնողի, 'ի դաւանիլն զնա կոյս և մայր. այսինքն կոյս 'ի մայրութեան, և մայր 'ի կուսութեան.

Այս երանութիւն կամ այս երանի տալս ոչ է մտածելի միայն ընդ բացատրութեամբ բառիս երանի կամ երանեալ. զի այս բազմաց կարէ ընծայիլ՝ յասելն, երա-

երանի հեզոց, երանի ողորմածաց, երանի մեռելոց՝ որք ՚ի Տէր ննջեցին, այլ՝ յայնպիսի բանս, որք կամ յայտնեն զգոյն նոցա երանելի, որպիսի են նախակարգեալ բանքդ, և կամ որք վերապատուութի ընծայեն նմա. որպիսի են բառքս օրհնել, գովել, բարեբանել, մեծացուցանել, երկիրպագանել ևն. որք յետ այ միայն Տր. ածածնին մատուցանին, և ոչ այլոց արարածոց։ Իսկ հիմն և արմատ այսպիսի օրինակաւ երանելոյ զնա՝ է այն՝ զոր դնէ ՚ի յաջորդ համարն ասելով։

3. Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սբ է անուն նորա։

Յաւետարանի յաւելեալ լինի, և պատճառական շաղկապս զի. վն զի այս բան իբր պատճառ դնի նախընթացին. ըստ որում վնկ երանելոյ է ին նմա ազգք և ազինք, վն զի արար նմա ած մեծամեծս։

Արդ աստանօր մեծ ինչ առաջի ընծայի մեզ խորհիլ և քննել. իբր զի սբ կոյսն հայելով առ այլս՝ դնէ ՚ի յաջորդսն, * ողորմութի արար ազգաց յազգս ևն ||. իսկ հայելով առ ինքն՝ ոչ խօսի այսպէս. այլ թէ * արար ընդ իս մեծամեծս հզօրն ||։ Բայց թէ զինչ՝ ծանիր. զի զոր ինչ արար ած ստեղծուածոց իւրոց եթէ երկնաւորաց և եթէ երկրաւորաց՝ արտաքոյ էութե և յատկութե նոցա մնացեալ՝ վերածի կամ յողորմութի նորա, և կամ յարդարութի նորին։ Բայց արտաքոյ էութե և յատկութե նոցա. զի այս արարչութի՝ որ ըստ էութե և ըստ յատկութե արարածոց՝ ոչ յողորմութի նորա հայի, և ոչ յարդարութի նորին, այլ յամենակարողութի նորա. իսկ պահելն զնոսա ՚ի

Հը

շնորհօ՝ որպէս արար ընդ հրեշտակս , և ածելն զնոսա 'ի փառս՝ վերածի յողորմութիւն նորա . ըստ այնմ և դատապարտել նորա զերրորդ մասն նց , վերածի յարդարութիւն նորին ։ Այնպէս յետ ստեղծանելոյ նորա ամենակարողութբ իւրով զմարդն և զորս պատշաճ էր մարդկային բնութ՝ եթէ 'ի վիճակի անմեղութ դրախտին , և եթէ 'ի վիճակի յանցանաց՝ զոր ինչ բարի արար մարդոյն՝ վերածի յողորմութիւն նորա . և զորինչ պատուհաս էած՝ յարդարութիւն նորին ։

Ոչ այսպէս է մտածելի և առ սբ կոյսն . վասնզի զոր ինչ արար նմա ած՝ ամենայնն 'ի վեր է քան զողորմութի և ք զարդարութի նորա , զի յընտրելն զնա 'ի յաւիտենից՝ լինել ծնող և մայր այ՝ զոր ինչ արար նմա՝ ոչ ըստ բանի ողորմութ , այլ ըստ կարգի հետևութ արար , իբր 'ի հարկէ պատշաճողութ իւրն՝ ըստ ամենայն կատարելութեց , ոյ ըստ անարատ յղութն , ըստ անմեղանչականութե կենաց , ըստ կուսական ծննդեան , ըստ լիութե շնորհաց , ըստ կարգելոյ դշխոյ փառաց և գերագոյն քան զամենայն սրբս ստեղծուածս ։ Եւ զի այս ամենայն մեծամեծ իրք են՝ այնն իրի արժակապէս խօսելով՝ ասէ ։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն . և սբ է անուն նորա ։

Կամի ասել . այն որ ընտրեաց զիս 'ի մայրութի՝ արար ինձ զայնպիսիս , որք գերազանց են ք զամենայն զարմանալի իրս եղեալս յԱծի , և բարձր քան զհասողութի մտաց մարդկան՝ և հրեշտակաց . զի են մեծամեծս յոյժ . յորս ամենամեծն է լինելս իմ ծնող և մայր այ ։ * Արդարև մեծամեծք են „ ( ասէ իգնատիոս վդպ ) և 'ի վեր քան զբան . „ և չէ ոք բաւական բանիւ ցուցանել զմեծութի „ շնորհացն՝ որ առ նա եղեն . և զինչ ես ունիցի

„ ոք

,, որք այլ ինչ մեծամեծս ասել կամ շնորհի ա-
,, ռաւելուն, որպէս զի յարարածոյ աստի գո-
,, լով միայն լինել անեղ բնութեն ։

Աստանօր քննել արժան է և զայս. զի որովհետև այս իրագործութիւն՝ ՚ի կողմանէ արարչին մտածեալ՝ ըստ ՚ի կողմանէ իւր՝ կատարեցաւ սքանչելագործ զօրութ., և ՚ի կողմանէ ենթակային մտածեալ՝ ըստ ՚ի կողմանէ կուսին և ծնիցելոյն ՚ի նմանէ՝ ամենևին սրբութ. եղև, վնկ յաւելու դնել զանուանս հզօր և սբ։ Հզօրն հայի ՚ի սքանչելագործութիւն իւր. որով արար զայսպիսի գործ գեր ՚ի վերոյ քան զամենայն գործս։ Իսկ սուրբն հայի ՚ի սրբագործութի նորա, որով սրբեաց զկոյսն ՚ի վեր քան զամենայն սբս՝ եթէ քան զեղեալսն և եթէ քան զլինելիսն, առ ՚ի տրամադրել զնա յընդունել յինքեան և յղանալ իբրապէս զսբն որդ.

Աստ այսոցիկ մտածեալ՝ կամի ասել. մի զարմանայք թէ զայսպիսի մեծամեծս արար ընդ իս Տր. զի կարող է և հզօր առ ՚ի սքանչելագործել. և սբ՝ առ ՚ի սրբել, ըստ առ ՚ի սրբութ. կատարել։ Իսկ թէ անուանս տայ զսբն ասելով, սբ է անուն նորա, այսու յայտ առնէ թէ նմա վայել է այս սրբութի. զի որում ինքն ինքեամբ սբ է և սրբարար. որոյ վս իսկ ՚ի հարցանել կուսին զգաբրիէլ, թէ որով օրինակաւ լինիցի ինձ այդ, նա առաջի եդ նմա զսրբութիւն իւր ասելով. * որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սբ է ։ և առ ՚ի ցուցանել նաև զհզօրն լինել ՚ի գործել զայսպիսիս՝ յաւել՝ թէ * ոչ տկարասցի առ յԱյ ամենայն բան ։ Արդ. ցուցեալ սբյ կուսին զայսոսիկ՝ զորս ինքեան արար Այծ, ՚ի մէջ մատուցանէ այժմ և զայն՝ զորս արար այլոց, և նախ ասէ ։

Ողոր.

4. Ողորմութ արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. արար զօրութ բազկաւ իւրով։

Յետ յանցանելոյ նախահօրն ադամայ՝ որդիք նորա անկեալ ընդ անիծիւք յանցանաց նորա՝ առ հասարակ մատնեալ էին ի ձեռս սատանայի. և կարօտ էին տեսանել զողորմութիւն այ յինքեանս, և զվրէժխնդրութիւն նորա ի սատանայէ։ Եւ ած ըստ որում յայտնեալ էր ադամայ, և խոստացեալ էր նախահարց, և հրատարակեալ էր ի ձեռն մարգարէից՝ ի հասանել ժամանակին եհաս առ նոսա. եկն յաշխ, և կատարեաց զերկոսին ևս, այս զգործս ողորմութ և զգործս վրէժխնդրութ։ Յառաջինն հայելով ասէ։ Ողորմութ արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց։ Կամի ասել. մարդիկ դատապարտութ էին արժանի. բայց որ արարն զնոսա՝ փոխանակ դատապարտելոյ զնոսին՝ եցոյց առ նոսա զողորմութիւն իւր։ Եւ թէպէտ առ ամենեսեան էր այս ցոյցք ողորմութե, բայց զերկիւղածսն յիշէ ասելով. արար ողորմութի երկիւղածաց իւրոց. ոչ զի այլոց ոչ արար, այլ զի նոքա սպասէին այսմ։ Եւ դարձեալ՝ կամի սովին յայտ առնել, թէ այնոքիկ ևեթ արժանի գտան ողորմութեն այ՝ որք երկնչելով ի նմանէ՝ պատրաստեցան յընդունիլ զնոյն. իսկ որք անարժան կացուցին զինքեանս՝ անմասն գտան յայնմ ողորմութենէ։

Իսկ բառդ ազգաց յազգս՝ կարէ հայիլ նախ յերկիւղածսն. յոր միտ կամի ասել. ողորմութիւն արար յամենայն ազգս՝ որք էին երկիւղածք. կամ թէ, ողորմութի արար ոչ միայն նոցին իսկ երկիւղածաց, այլ և ազգաց նոցա՝ այս հարց և որդւոց նոցա՝ որք յերկիւղի տն կային։ Կարէ

հայիլ

հայիլ երկրորդ ՚ի տեսողութի ողորմութեն այ․ յոր մտ կամի ասել․ ողորմութի արար երկիւղածաց իւրոց յամենայն դարս, և առնելոց է զնոյն մինչև ՚ի կատարած աշխարհի։ Հայելով ապա և յերկ-
րորդն ասէ․

Արար զօրութիւն բազկաւ իւրով։ Զօրս միանգամ գործէ ած ը̄ կարգի բնութե՝ ասի գործել ձեռօք կամ մատամբք, ըս * զգործս ձեռաց քոց մի անտես առներ‖․ (սաղ․ ճլէ․ 8)։ Եւ թէ * տե
„ սից զերկինս՝ զգործս մատանց քոց, զլուսին
„ և զաստեղս, զորս դու հաստատեցեր‖․ (սաղ․ ը․ 4)։ Իսկ զորս գործէ ՚ի վեր քան զկարգ բնութեան՝ ասի գործել բազկաւ։ Եւ ը̄ այսմ բառիւդ բազուկ նշանակի աստ ամենակարողութի նորա ը̄ երկուց․ մի ը̄ գործելոյ նորա զգործս ՚ի վեր քան զկարգ բնութե, և ը̄ խնդրելոյ նորա վրէժս յատելեաց իւրոց գեր քան զեղանակ։ Իսկ զօրութի իմացեալ լինի աստ ոչ նոյն ինքն զօրութին այ, այլ գործ զօրութե նորա, մի այնպիսի գործ՝ յորում փայլէ սքանչելի զօրութին այ, կամ յորում յաղթող ցուցանի զօրութի նորա ընդդէմ թշնամեաց իւրոց։ Եւ թէ ը̄ առաջնոյն առցուք՝ սովին ցուցանի՝ թէ ած սքանչելի իմն օրինակաւ ՚ի գործ եած զամենակարողութի իւր՝ ՚ի ցուցանելն առն․ զողորմութի առ ազգս մարդկան ՚ի ձեռն խորհրդոյ մարդեղութե։ Իսկ եթէ ը̄ երկրորդին առցուք՝ սովին ցուցանի՝ թէ ած ՚ի կամելն ցուցանել մարդկան զողորմութի՝ ՚ի կիր եարկ զվրէժխնդրութի իւր ընդդէմ սատանայի․ որով և յաղթեաց նմա, և եառ զնոսա ՚ի
ձեռաց նորա։

Բազկաւ կարէ իմացեալ լինել և որդին այ․ որ ասի բազուկ հօրն երկնաւորի․ և ըստ այսմ

կամի տալ . հաճելով հօրն երկնաւորի առնել
ողորմութիւն ազգի մարդկան՝ կատարեաց զայն
ոգւով իւրով ։ Զգործ այսր կատարման դնէ
լինել զօրութե . զի եղև վանիչ ամ հակառակու-
թեան՝ մանաւանդ սատանայի . եւս և եղև տուօղ
զօրութե այնոցիկ ամենեցուն՝ որք հաւատացին 'ի
նա ։

Եթէ այս բան զորդւոյն մյ ասիցի ասէ Իգնա-
տիոս վարդապետ , * յայտ առնէ՝ թէ չկարօտա-
,, նայ (նա) յայլմէ զօրանալ , այլ իւրով զօրութն
,, կատարէ զոր կամի ‖ . որպէս և արարն իսկ՝
իւրով զօրութե վանելով զսատանայ և զզօրս նր՝
'ի խնդրելն անդ 'ի նոցանէ զվրէժ ազգի մարդ-
կան ։ Եւ զի զայն եցոյց և առ այնոսիկ՝ որք կա-
մակից գտան սատանայի , զայնցանէ եւս խօսե-
լով ասէ ։

5 . Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից . և քա-
կեաց զհզօրս յաթոռոց ։
6 . Զխոնարհս բարձրացոյց , զքաղցեալս լցոյց բարութե .
և զմեծատունս արձակեաց ունայնս ։

Թէպէտև ամենայն մեղաց չարութի ընդդէմ
է այ , և արգել լինի ողորմութե նորա , բայց չա-
րութի հպարտութե ոչ միայն ընդդէմ է նմա ,
այլև գրգռիչ է բարկութե նորա . որպէս յայտնի
տեսանի այս 'ի նք գիրս ։ Արդ հպարտութիւնն
յերիս երևի . մի՝ իբր յաթոռ 'ի սիրտ ամբար-
տաւանից . որպիսի եղև 'ի սատանայ և 'ի հրեշ-
տակս նորա , եւս և 'ի փարաւոնեանսն և 'ի նա-
բուգոդոնոսորեանսն ։ Երկրորդ՝ 'ի հզօրս , այս
յայնոսիկ՝ որք 'ի գործելն զգործս զօրաւորս՝
համարին ինքեամբք վճարել . որպիսի եղև 'ի
տիգրան , 'ի կրասոս , եւն ։ Երրորդ՝ 'ի մեծա-

տունս . որք եղեալ զայս իւրեանց յինչս՝ արհամարհօղք զտանին ողորմութեան այ . որպէս եղեւ 'ի Կրեսոս լիւդացի , 'ի Հերովդէս , եւն : Օ երեսին զայսպիսիկ եւս 'ի մէջ բերէ աստ . երկուց առաջնոյն զխմադրէ զխոնարհս . իսկ երրորդումն զկարօտս : Յառաջին ազգ. հպարտաց հայելով ասէ :

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից : Որպէս այր բարկացեալ սաստիկ՝ ցրուէ երբեմն ոտիւք զանօթս եւ զխոտիւս եւ զայլ ինչ սոյնպիսի . եւ կամ որպէս հողմն սաստկացեալ՝ ցրուէ զծուխս . կմ ոպ վառօդ 'ի լուցանելն ցրուէ զնիւթս , սոյնպէս ասէ առնէ ած ըզ ամբարտաւանս . իբր զի բարկութբ իւրով իբր ոտամբ հարկանելով ապականէ զնոսա . եւ սաստկութբ իւրով իբր հողմով վանէ զնոսա . եւ ոգւով վրէժխնդրութե իբր բորբոքմամբ վառօդոյ ցիր եւ ցան կացուցանէ զամենայն խորհուրդս նոցա : Բայց այսպիսի այլաբանական զրոյցք ոչ զայլ ինչ ցուցանեն՝ բայց եթէ զսաստկութի վրէժխնդրութեն այ ընդդէմ ամբարտաւանից . զի այլ ամենայն անօրէնք եւ չարք հակառակ են օրինացն այ . իսկ ամբարտաւանք ուղղակի հակառակ են նմին իսկ այ . վասն որոյ եւ ած ուղղակի ընդդէմ ամբարտաւանից հակառակի . ըստ * որ ամբարտաւանից հակառակ կայ Ա . (առակ . գ . 34 . յակ . դ . 6 : ա . պետ . ե . 5) :

Բայց գիտելի է՝ զի բառդ ամբարտաւան՝ կրկնակի առեալ լինի . մի՝ փոխանակ իսկական ներքին չար հպարտի . եւ մի եւս՝ փոխանակ արտաքին հպարտի . առաջինն համարի զինքն մեծ , եւ 'ի մէջ բնաւից ոմն արժանի պատուոյ՝ թէ եւ այլք ոչ համարիցին զնա այնպիսի . իսկ երկ-

րորդն

ւորդն ոչ համարի զինքն մեծ և կամ իմն. և գիտէ նա թէ չէ ինքն արժանի պատուոյ. բայց զի այլք համարին զնա ոմն, և պատիւ նա մատուցանեն նմա, նա առաւել հաւատալով այլոց՝ քան ճանաչման իւրում՝ ուռի յինքեան և փքանայ։

Որդ յայս բան թէև ըստ երկուցն կարէ առեալ լինել բառդ ամբարտաւան, բայց տիրապէս առեալ լինի ըստ առաջնոյն. և յայս իսկ յաւելուածել. 'ի մտօք սրտից. Իսկ այս բառք ոչ են խնդիր ցրուելոյն, այլ ամբարտաւանից։ Ուր թէպէտ ոմանք 'ի ցրուելն վերածեն. իբր թէ եդեալ էր, ցրուեաց զմիտս ամբարտաւանից, կամ թէ արար զամբարտաւանս լինել ցրուեալս 'ի խորհուրդս իւրեանց, բայց ոչ է այդպէս. այլ վերածի յամբարտաւան միտս, որպէս թէ եդեալ էր. ցրուեաց զայնոսիկ՝ որք էին ամբարտաւան մտօք սրտից. որպէս դնի 'ի ղուկ. ա. 51. յասելն. *ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց ||։ Իսկ բառդ սրտից՝ դնի 'ի ցոյց հաստատութեան ներքին արմատացեալ ամբարտաւանութե. ըստ որում սիրտն է արմատ ամ շարժմանց կրից։

Որդ քանզի առաջինն յամբարտաւանս եղև սատանայ և արբանեակք նորա, այս ցրուումն ըստ աւանդելոյ իմաստնոց վարդապետի և այլոց բազմաց սկզբնաբար հայի առ նա, և ապա առ այլս, որք 'ի փարաւոն, 'ի նաբուգոդոնոսոր, 'ի հերովդէս ևն։ Սպառեցէն նախ նա ինքն սատանայ 'ի սկզբան անդ ձիւաբորբեալ յամբարտաւանութի իւր՝ մտանէաւ 'ի նախաստեղծն. և համարէր՝ թէ 'ի կործանելն զնա՝ ունի ճարձակել զանէրունն իւր. սակայն ամ կամելով ձեռն մա-

տուցանել պարտեցելումն՝ սպառսպուռ ցրուեաց զնա եթէ յիշխանութենէ և եթէ ՚ի զօրութենէ նորա ։ Այնպէս և զօրս յիշեցաք, փարաւոն և նաբուգոդոնոսոր և այլք բազումք՝ յամբարտաւանիլ իւրեանց՝ ցրուեցան յԱյ ։ Հայեցուք այժմ յերկրորդ ազգ հպարտաց՝ որ ՚ի հզօրս զօրոց առէ.

Քակեաց զհզօրս յաթոռոց ։ Հզօրք իմացեալ լինին աստ նոքա՝ որք արարին յաղթութիւնս, և եդին ՚ի մտի՝ թէ զօրութեամբ բազկաց իւրեանց արարին և առնեն. որպիսի եղեն հողեփեռնեսս, և ասւսակ, և այլք բազումք. և ՚ի կարծելն իւրեանց թէ անկործանելի ունին մնալ յաթոռ իշխանութեան՝ քակեաց զնոսա Այ. որ արար՝ զի մի ևս նստցին յիշխանութեան անդ, այլ լիցին պատուհանգան այլոց իշխանութեանց. որպէս եղեն. եգիպտացիք, ասորեստանեայք, յոյնք, և այլք. թող զմերոյս ազին նուաճութիւն ։

Աստանօր հզօրք ՚ի մասնաւորի առեալ (որպէս զամբարտաւանս ասացաք) իմացեալ լինին զօրք դեւաց, և տիրապէս նա ինքն սատանայ. (Եսայ. ժդ. 13.) որպէս գրէ Եգնատիոս վարդապետ ՚ի մեկնութեան ղուկասու ։

Զամբարտաւանից եդ՝ ցրուեաց. իսկ զաթոռանէ առէ քակեաց. առ ՚ի ցուցանել զառաւելութիւն չարութեան ամբարտաւանից քան զհզօրաց. և զառաւելութիւն բարկութեան Այ ՚ի վերայ նոցա քան ՚ի վերայ սոցա. քանզի որչափ մեծ է ցրուելն քան զքակտելն. զի քակտեալն եթէ չիցէ ցրուեալ՝ կարէ զօդիլ վերստին. իսկ որ յետ քակտելոյ ցրուի, դժուարաւ զօդի ։ Արդ քանզի որչափ սոքա ատելի են Այ, այնչափ խոնարհքն են նմա սիրելի՝ համեմատութեամբ նոցա կամելով զանարգութիւն սոցա մեծ-

ցու-

ցուցանել, առ նոսա դարձուցանել զբանն իւր, և ասէ ։

6․ Զխոնարհս բարձրացոյց ։ Բառդ խոնարհն (որպէս տեսանի ՚ի համարն 2․) ի երից նշանակութեանց առեալ լինի․ մի՝ փոխանակ այնր՝ որ ունի յինքեան զառաքինութիւն խոնարհութեան․ որով համարի զինքն նուաստ քան զամ․ Երկրորդ՝ փոխանակ այնր՝ որ ունի յինքեան զպատճառս խոնարհութեան․ որպիսի են նոքա՝ որք ունին զնեղութիւնս խոնարհեցուցիչս անձին ։ Երրորդ՝ փոխանակ այնր՝ որ ունի յինքեան զգործս խոնարհութեան․ որպիսի են նոքա՝ որք ունին զնուաստ կերպարանս՝ եթէ ՚ի կողմանէ զգեստուց իցէ, և եթէ ՚ի կողմանէ տան ևն ։ Առաջինն ներհակի ամբարտաւանից․ երկրորդն հզօրաց, զորս յիշեաց ՚ի վերոյ․ իսկ երրորդն մեծատանց․ զորաց ունի խօսիլ ՚ի յետագայ հատուածդ ։ Այլ երևի թէ աստ ի երից առմանցդ և խօսի զայս բան՝ եթէ ՚ի հասարակի խորհելով և եթէ ՚ի մասնաւորի, եթէ յանցեալն և եթէ յապագայն ։

Ըստ առաջին կարգի խոնարհաց մտածեալ՝ կամի ասել․ ՚ի խոնարհել ազգի մարդկան առաջի Այ, և ՚ի մերկանել նոցա զինքեանս վատթարացեալ և հաւասար անբանից լեալ, տեսեալ Այ զխոնարհիլ նոցա՝ խոնարհեցաւ առ նոսա, և առեալ զձեռն նոցա՝ բարձրացոյց գեր ՚ի վերոյ քան զհրեշտակս ։

Ըստ երկրորդ կարգի խոնարհաց մտածել՝ կամի ասել․ ՚ի տեսանել Այ զորդիս մարդկան նուաճեալս ՚ի նեղութիւն գերութեան սատանայի և ծառայութեան մեղաց, բարձրացոյց, Յս ՚ի վեր կաց՝ և փրկեաց զնոսա ։

Ըստ երրորդ կարգի խոնարհաց մտածեալ՝ կամի

մի ասել. յորժամ ետես ա՟ծ զպատկեր իւր զի՟ զմորթին յանարգութե՟, նորոգեաց զնոսա 'ի ձեռն շնորհաց և վերածեաց զն՟ս 'ի փառս ար-քայութեան :

Զայսօրինակ եդաք 'ի հասարակի մտածեալ. և սակայն 'ի մասնաւորի ես առեալ՝ զք՟ սմին մեկ-նի. յոր միտ կամի ասել. զորս միանգամ ետես ա՟ծ խոնարհեալս՝ բարձրացոյց զնոսա ըստ իւրա-քանչիւր կարգի և վիճակի. և մինչ այսչ՟ափ առ-նէ. զի է՟ այս հաճի, և զայն ախորժի : Որդ-որչ՟ք է՟դդէմ ցրուման ամբարտաւանից և է՟դդէմ քակման հզօրաց եդ զբարձրանալ խոնարհաց, սոյնպէս և առանձինն ընդդէմ ունայնութե՟ մե-ծատանց զլիութի՟ կարօտելոցն առաջի առնէ և ասէ :

Զկարօտս ելից բարութե՟ : Կարօտ ասի նա՝ որ պա-կասեալ է յայնպիսի բարեաց, առ որ իբր բնա-պէս բերի. զի առանց այնր կամ ոչ կարէ կեալ, և կամ դժուարաւ կեայ. որպէս քաղցեալն պա-կասեալ 'ի կերակրոց՝ բնաւպէս բերի 'ի նոյն. զի առանց այնր ոչ կարէ կեալ, և կամ դժուարաւ կեայ. վասն որոյ և կարօտ ասի : Յայսպիսի վի-ճակի էին որդիքն ադամայ յառաջ քան զգալ որդւոյն այ՟՝ պակասեալք 'ի հոգևոր կերակրոց և յերկնային բարութեց. իսկ որ արարն զնոսա՝ գթացեալ 'ի նոսա՝ եկն առ նոսա. և լցոյց զն՟ս հոգևորական և երկնային բարեօք :

Ու զայս պարտ է իմանալ իբր 'ի հասարակի՝ հայելով ընդհանրապէս յազգ մարդկան. իսկ թէ բազումք յառաջ ք՟ զգալ որդւոյն այ՟ լցան 'ի բարեաց անտի՝ այն ևս էր յաղագս ար-դեանց նորա : Աւստի և ամ՟քն առ հասարակ է-թէ յառաջ և եթէ զկնի՝ վասն գալստեան նո-

րա

բա ընկալան՝ զոր ընկալանն ։

Այս բան խորհրդաբար իմն անկանի. և առ կոյսն Մարիամ իբրև առ սկզբնական պատկեր խոնարհաց և կարօտելոց. յոր մտ յասելն. * զխոնարհս բարձրացոյց ||, իմաստ բանին հայի նախ յանձն կուսին, զոր յանչափական իմն բարձրութի վերացոյց ա՟ծ՝ առնելով զնա մայր իւր ։ Այսպէս և զոր ասէ. * զկարօտս ելից բարութե ||, իմաստ բանին սկզբնաբար 'ի նա հայի. ըստ որում 'ի կարօտիլ ն՟ր ունել յինքեան զա՟ծ բովանդակ, եկն 'ի նա որդին ա՟յ. և լցոյց զնա իւրև ։ Արդ որպէս բարձրացոյց ա՟ծ զխոնարհս, և լցոյց զկարօտեալս, սոյնպէս ունայնս արձակեաց զայնոսիկ՝ որք լցեալս համարելով զանձինս՝ ոչ կամեցան ընդունել ինչ 'ի լրութե նորա. և 'նք վերածին առ երրորդ ազգ հպարտաց ն՟ր առ մեծատունս. զորոց խօսի 'ի յետագայ բանդ ասելով ։

Եւ զմեծատունս արձակեաց ունայնս ։ Մեծատունսք իմացեալ լինին աստ նոքա՝ որք անկարօտ դոլով մարմնաւորաց՝ համարին զինքեանս անկարօտս և հոգևոր բարեաց, յորոց զուրկք են. որպիսի էին բազումք յիշխանաց աշխարհիս այսորիկ, և առաւել ևս դևք. որոց իշխանն ցուցեալ 'ի լերինն փորձութե զա՟մ թագաւորութիս աշխարհի՝ պարծէր ասելով. * ինձ տուեալ է || այս ամենայն (Ղուկ. Դ. 6) ։ Այսպիսիս արձակեաց ասէ ունայնս. զի լի համարելով զանձինս՝ ոչ մատեան առ ա՟ծ՝ առ 'ի գտանել զնա և զողորմութի նորա. և կամ թէպէտ և կամեցան մատչիլ՝ բայց ոչ առ 'ի գտանել զնա. այլ կամ առ 'ի փորձել և պատրել, որպէս մատեաւ սատանայ, կամ առ 'ի մատնել և սպանանել՝ որ-

պէս մատեան տիրապատանքն. կամ առ 'ի բառ-նալ զհաւատս նոցա, որպէս արարին հալածիչք հաւատացելոց. և կամ զոր 'ի մատչելն ընկալան՝ ոչ պահեցին յոր հաւանեցանն. որպիսի են ամ-պարիշտ հաւատացեալք. վասն որոյ և աստուած ոչ եցոյց և ոչ ցուցանէ նոցա ինչ 'ի բարեաց անտի՝ զորս կամէր տալ. այլ և զորս ունէինն՝ էառ 'ի նոցանէ. և արձակեաց զնոսա դառնալ ունայնս և թափուրս: Իսկ թէ զինչ առ իւրսն եցոյց՝ յայտ առնէ զկնի ասելով:

7. Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝ յիշելով ո-ղորմութեան իւր:

Յանկանիլ որդւոց մարդկան մեղօքն ադամայ, և յապականիլ նոցա 'ի չարիս յետ ջրհեղեղի՝ ընտրեաց աստուած զաբրահամ, խոստացեալ նմա տալ զփրկութիւն մարդկան 'ի ձեռն զաւակի նո-րա, և պաշտպան լինել ազգի նորուն. զնոյն խոստացաւ և որդւոց նորա իսահակայ և յակո-բայ. զոր և յայտ արար 'ի ձեռն մովսէսի. հուսկ յետոյ մասնաւորապէս խոստացաւ դաւթի. զոր և բազում մասամբք քարոզեցին մարգա-րէքն՝ որք եկին յետ նորա: Այլ քանզի երկա-րեցաւ ժամն, և սաստկացաւ աղէտ մարդկան, որով և վտանգեալ լինէին նաև նոքին իսկ որ-դիք աբրահամու՝ մերձ 'ի կորնչիլ, 'ի յաճա-խել աղաղակի նոցա՝ եցոյց նոցա աստուած զայցելուի պաշտպանութե իւրոյ ըստ խոստման իւրում, մար-դանալով 'ի զաւակէ նոցա 'ի սրբոյ կուսէն. յայ-սոսիկ հայելով ասէ:

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ: Պաշտպանելն երկոքումբք կարէ լինիլ. մի՝ 'ի մէջ փորձութեանց և չարեաց անվնաս պահելով. և մի ևս՝ զչարիսն

հեռացուցանելով, կամ 'ի միջոյ չարեաց 'ի բաց առնլով ։ Արդ 'ի մարդասէր որդւոյն ոչ' թէ_ պէտ և առ ամենեսին եցոյց զայսպիսի պաշտ_ պանութիւն, բայց մանաւանդապէս առ որդիս աբրահամու, այսինքն առ ազգն իսրայէլի' զոր ընտրեալն էր 'ի ծառայութիւն իւր . և 'ի նոցանէ տարածեաց առ այլս, այսինքն առ հեթանոսս. և զայս արար առէ ։

Յիշեալ զողորմութիւն իւր ։ Աւր բառդ ողորմութիւն' դնի փոխանունութ ձևով փոխանակ խոստման ողորմութե, որ փոխանակ ասէր խոստմանն' որով խոստացաւ ած առնել զողորմութիւն ազգի մարդ_ կան . ըստ որոյ դնէ զբայդ յիշել . ապա թէ ոչ' պարտ էր դնել' կամելով ցուցանել զողորմութիւն իւր ։ Իսկ յիշել դնելով' զխոստումն յայտնէ . այլ թէ որոց էր խոստացեալ' յայտ առնէ ա_ սելով ։

8 . Որպէս խօսեցաւ առ հարս մեր . ընդ աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ։

Այս խոստումն հարցն նախ հօրն յադամ. որում ըստ աւանդելոյ վարդապետաց յայտնեաց ած' զալ և ծնանիլ յորդւոց նորա . որոյ վն ասաց աստուած . * Թողցէ այր զհայր իւր և զմայր իւր . և երթիցէ զհետ կնոջ իւրոյ ‖ . (ծնն . բ . 24) . որ թողցէ որդին այ զհայրն երկնաւոր, զի մի' նա մարմնասցի, և զմայրն զվերինն սիոն, զի մի' հրեշտակասցի . և գնասցէ զհետ ազգի մարդ_ կան, զոր հարսնացոյց ինքեան ։ Երկրորդ' հօրն 'ի խոստումն նոյի ոչ միայն ըստ ուխտի աղեղանն, այլ և ըստ օրհնութեն ։

Այս խոստումն այ որոշեցաւ և հաստատեցաւ յուխտն յայն' զոր եդ ընդ աբրահամու, և յեր_ դումն

դումն յայն՝ զոր երդուաւ նմա . (Ծնն . իբ . 18 . և ժէ . 9 . և սաղ . ՃԴ . 8) ։ Այն այս տուեալ եւ որոշեցաւ 'ի զաւակն աբրահամու՝ մանաւանդ 'ի դաւիթ . (եսայ . ԾԵ . 8) ։ Յայտնիկ հայելով սակ ։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր . ընդ աբրահամու և (ընդ) զաւակի նորա յաւիտեան ։ Առաջին հաստատած այսր բանի , այն է * որ խօսեցաւ առ հարսն մեր ‖ , դնի իբր փակագծիւ միջանկեալ բան յետադասելի . իսկ երկրորդ հաստատածն՝ այն է , * ընդ աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ‖ , դնի իբր խնդիր նախընթաց բանին . որով և կարգ շարադրութեան առաջի դնի այսպէս . յիշեաց ըղխոստումն իւր՝ զոր արար ընդ աբրահամու և ընդ զաւակի նորա . որպէս և խոստացաւ առ հարս մեր ։ Իսկ զի խոստումն այժմ իբր 'ի քաղումն խօսելով եղև , վասն այսորիկ փոխանակ ասելոյ խոստացաւ՝ դնէ խօսեցաւ ։ Առաջին դիտէ ասել թէ այս խորհուրդ՝ որ կատարեցաւ յիս՝ ոչ եղև ընդ դիպուածոյ իմն , այլ՝ յառաջածանօթութեամբ և քաղում խոստմամբք եղելովք առ հարս մեր . զորմէ գրէ առաքեալն յեբր . Ա . 1 ։

Իսկ բառդ յաւիտեան՝ ընդ երկուց կարէ առեալ լինել , ընդ յարմարութե և ընդ յաւիտենականն աւեղզութե . ընդ յարմարութեն դնի փոխանակ բառին ամէն . որպէս թէ եղեալ էր . այո այսպէս է՝ զոր ասացի , և այսպէս եղիցի ։ Իսկ յաւիտենական տևողութե՝ դնի իբր ածական ողորմութե՝ զոր յիշեաց 'ի նախընթաց համարն , կամ իբր յայտնիչ մշտնջենաւորութե խոստմանն՝ ոչ 'ի խոստումն հայելով , այլ յելսն կամ յառաջկայն խոստմանն . իբր զի զոր խոստացաւ Ած՝ տևելոց էր յաւիտեան . այն է փրկութի ազգի մարդ-

մարդկան, և Թագաւորութն փրկողին, և երա-նական անեղութն վիճակի փրկեցելոցն, որք ու-նէին ժառանգել զայն Թագաւորութին յաւի-տեանս յաւիտենից:

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ. ԺԸ.

Գովաբանէ առ այս բերանով զաքարեայ՝ վն այցելութեան [illegible] առ որդեան իսրայէլի գալստեամբ որդւոյն ած ըստ երդ-մանն՝ զոր երդուաւ ած ընդ հարս նոցա. յառաջընթացն ցուցանելով այսմ [illegible] [illegible]:

Օրհնութ զաքարիայ (ըստ սաղմոսարանին և ըստ ժամագրքին):

1. Օրհնեալ տէր ած իղի. որ յայց ել. և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ:

2. * Յարոյց մեզ եղջիւր փրկութեան 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ. որպէս խօսեցաւ բերանով սրբոցն՝ որ յաւիտենից մարգարէքն էին:

3. * Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց. և 'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց.

4. * Առնել ողորմութիւն առ հարսն մեր. և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ:

5. * Երդումն զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց:

Պաշ-

Օրհնութ զաքարիայ: (ըստ աւետարանին ղուկասու. Ա. 68 = 79:)

68. Օրհնեալ տր ած իղի. որ յայց ել մեզ. և արար փրկութիւն ժողովրդեան իւրում:
69. * Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ 'ի տանէ դաւթի
70. ծառայի իւրոյ. * որպէս խօսեցաւ բերանով սրբց՝ որ յաւիտենից մարգարէքն նր էին:
71. * Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց. և 'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց:
72. * Առնել ողորմութիւն ընդ հարս մեր. և յիշել զուխտն իւր սուրբ:
73. * Զերդումն զոր եր-դուաւ աբրահամու հօր մե-
74: րում. տալ մեզ * ա-ռանց երկիւղի 'ի ձեռաց թշ-նամեաց մերոց փրկելոյ: -

Պաշ-

6 . * Պաշտել զնա սրբութբ և ար-
դարութբ առաջի նորա զամենայն
աւուրս կենաց մերոց :
7 . * Եւ դու մանուկ մարգարէ
բարձրելոյն կոչեսցիս . գնասցես
առաջի տն՝ պատրաստել ճա-
նապարհս նորա :
8 . * Տալ գիտութիւն փրկութե
ժողովրդեան նորա . 'ի թողութե
ան մեղաց մերոց :
9 . * Վս գթոյ ողորմութեն այ
մերոյ որով այցելեսցէ մեզ արեգակն
'ի բարձանց լուսաւոր առնել ըզ-
խաւար մեր :
10 . * Ծագել լոյս 'ի վր այնոցիկ
որ նստէին 'ի խաւարի և 'ի ըստ-
ուերս մահու , ուղղել զոտս մեր
'ի ճանապարհս խաղաղութե :

75 . * Պաշտել զնա սրբութբ
և արդարութբ առաջի նորա
զամենայն աւուրս կենաց մերոց :
76 . * Եւ դու մանուկ , մար-
գարէ բարձրելոյ կոչեսցիս .
զի երթիցես առաջի երեսաց
տն՝ պատրաստել զճանապարհս նր :
77 . * Տալ գիտութիւն փրկութեան
ժողովրդեան նր . 'ի թողութիւն
մեղաց նց :
78 . * Վս գթութեց ողորմութեան
այ մերոյ . որովք այց արաս-
ցէ մեզ արեգակն 'ի բար-
ձանց :
79 . * Երևել որոց 'ի խաւա-
րի և 'ի ստուերս մահու
նստէին . ուղղել զոտս մեր
'ի ճանապարհս խաղաղութեան :

# Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր :

## Օրհնութիւն զաքարիայ հօր յովհաննու մկրտչի :

Զաքարիա էր քահանայ 'ի դասակարգէ Աբիայ , որ յիշատակի ա . մնաց . իդ . 10 . յութերորդ կարգի , յազգէ Ահարոնի : Նա էառ սա իւր կին զեղիսաբեթ 'ի նոյն ազգէ . և որպէս աւանդէ սբ գիրն , ( ղուկ . ա . 6 . ) * Էին արդարք
„ երկոքին առաջի այ . գնային յամենայն պատ-
„ ուիրանս և յիրաւունս տն անարատք . և ոչ
„ գոյր նց որդեակ . զի եղիսաբեթ ամուլ էր . և
„ երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց ‖ :
Նա զի քահանայից էր ըստ կարգի աւուրց մտանել 'ի տեղի սրբուն , ուր էր սեղան խնկոցն և առաջաւորութն , և անդ խունկ արկանել , 'ի հասանել կարգի այսր պաշտաման առ զաքարիա , իբրև եմուտ նա անդր 'ի ժամ խնկոցն , ետես զգաբրիէլ հրեշտակ ը̄ աջմէ սեղանոյ խնկոցն , և խռովեցաւ , և անկաւ ահ 'ի վր նր : Իսկ հրեշտակն

քա-

բարձրացեալ զնա՝ եւ նմա զաւետիս՝ թէ եղի-
սաբեթ կին քո ծնցի քեզ որդի. և կոչեսցես
զանուն նորա յովհաննէս. որ եղիցի մեծ առաջի
Տն. և գնասցէ առաջի նորա իբրև կարապետ նո-
րին՝ պատրաստել նմա ժողովուրդ կազմեալ.
Եւ յերկբայել զաքարիայ, և 'ի խնդրել նորա
զնշան՝ յասելն * իՏ՞ գիտացից զայդ ‖, պատու-
հասեաց զնա հրեշտակն՝ ասելով. որովհետև ոչ
հաւատացեր բանից իմոց, ահա համրասցիս, և
մնասցես համր՝ մինչև ցօրն յայն՝ յորում տեսցես
աչօք՝ զոր ոչ ընկալար ականջօք.
Եւ եղև 'ի լնանալ աւուրց պաշտաման զաքար-
եայ՝ գնաց 'ի տուն իւր. և յետ աւուրց ինչ յղա-
ցաւ եղիսաբէթ, և եղև նմա ուրախութիւն մեծ.
Եւ յետ վեց ամսոց իբրև եկն յայցելութիւն մայր
Տն՝ լցաւ եղիսաբէթ հոգւով Սրբով. և մանուկն՝
որ կայր յորովայնի նորա՝ սրբեցաւ անդէն. և
յորովայնէ անտի երկիրպագ Տն իւրում յորո-
վայն կուսին. Եւ 'ի հասանել աւուրց ծննդեան
մանկանն՝ մեկնեցաւ անտի կոյսն. Ըստ որում ասի
յաւետարանի, թէ * եկաց առ նմա մարիամ ա-
միս երիս, և դարձաւ 'ի տուն իւր ‖. զի լցան
աւուրք եղիսաբէթի. և չէր արժան մօր երկնա-
ւոր արքայի կալ 'ի սպաս ծննդեան իւրոյ ծառայի,
ևս և չէր պատեհ կուսական մօր մնալ 'ի զննին
անկուսական ծննդի.
Եւ իբրև ծնաւ մանուկն՝ լուեալ ազգականաց
և ծանօթից՝ եկին 'ի տունն, և ուրախ եղեն
յոյժ. Եւ յաւուրն ութերորդի 'ի թլփատելն
զմանուկն՝ կոչէին զնա զաքարիա յանուն հօր նո-
րա. Իսկ մայրն՝ որ լցեալ էր հոգւով Սրբով՝ մար-
գարէանալով իմն ասէ. մի՛ դնէք զանուն նորա
զաքարիա, այլ յովհաննէս որ թարգմանի՝ շնորհք
Տն.

ծին . զի որում նա էր լինելոց աւետաւորս կենդանի
օրինի շնորհաց : Պատասխանի ետուն նմա , թէ
այդ անուն ոչ պատկանի մանկանս . զի ոչ դոյ ա-
սեն յազգի քում ոք Յովհաննէս անուամբ : Իսկ
'ի պնդել մօրն՝ կամեցան հարցանել ցհայրն իւր .
և զի նա համր էր , ևս և խուլ , ակնարկէին առ-
նէին նմա՝ թէ զինչ կամիցի կոչել զմանուկն :
Իսկ նա խնդրեաց տախտակ , և գրեաց 'ի նմա՝
թէ Յովհաննէս է անուն դորա . և նոյնժամայն
բացաւ լեզու նորա . և զարմացան ամենքն ոչ միայն
վասն բացման լեզուին նորա , այլև վասն միաձայն
գալոյ բանից մօրն և հօրն :

Յայնժամ լցաւ Զաքարիա հոգւով սրբով . և նո-
վին հոգւով երգեաց զօրհնութիւն զայս . յորում
սկսանելով գովել զԱստուած՝ յայտ առնէ զայցելութիւն
նորա՝ զոր եցոյց առ որդիսն Իսրայէլի ըստ երդմանն ե-
դելոյ ընդ հարս նոցա . առաջի առնելով զմա-
նուկն իբր յառաջընթաց այնմ այցելութեան :

Ի . Ր . Ն :

1 . Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի . որ յայց ել և արար փրկու-
թիւն ժողովրդեան իւրոյ :

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ :

Չունէր Զաքարիա մեծի բարերարութեան Աստուծոյ եղե-
լոյ առ ինքն՝ զայլ ինչ տրիտուր ընծայել , բայց
եթէ զօրհնութիւն գովութեան և շնորհակալութեան , հաւա-
քելով միանգամայն և զորս արար նա ազգին Իսրայէլի .
վասն յառաջ քան զայլ ինչ 'ի կիր առնուլ զարձակեալ
լեզու իւր , յօրհնութիւն Աստուծոյ կարգէ զայն , և ցնծա-
լից սրտիւ աղաղակէ և ասէ :

Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի որ յայց ել . և արար փրկութիւն ժողո-
վրդեան իւրոյ : Աստուած թէպէտ և ամենեցուն է տէր ,

բայց

բայց քանզի Տէրն յայտնեաց զինքն , և ոչ օտար ազգաց, և յայտնէ անոտի կամեցաւ գալ , փոխ կոչեցաւ Աստուած Տէրն ։ Նա զի 'ի լրումն այսր յայտնութեան և գալստեան հայելով խօսի աստ զաքարիա , ամէն իրի և Աստուած Տէրն կոչէ զնա՝ ասելով օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի · որով կամի ասել · օրհնեալ է Տէր՝ որ եցոյց զինքն լինել Աստուած Տէր , և օրհնեալ եղիցի յաւիտեան · զի 'ի համարիլ մեր՝ թէ թողեալ իցեմք յերեսաց նորա՝ հաճեցաւ յայց ելանել մեզ · և յառաջընթաց այսմ յղել զնա , զի զորդի իմ զյովհաննէս · որով և արար մեզ փրկութիւն , զի թէ սկսաւ փրկել զմեզ՝ որք եմք ազգ Տէրն՝ զորս ընտրեալ էր լինել իւր ժողովուրդ սեպհական ։ Իսկ թէ զիարդ արար զայն փրկութիւն՝ յայտ առնէ՝ ասելով ։

2 · Յարոյց մեզ եղջիւր փրկութեան 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ · որպէս խօսեցաւ բերանով սրբոց , որ յաւիտենից մարգարէին էին ։

Այս բան հայի յայն՝ զոր ասաց Աստուած 'ի սաղ ՃԼԱ 16 · թէ * ծագեցից զեղջիւր դաւթի ‖ · առն 'ի մեկնութեան անդ , ուր ցուցաք՝ թէ եղջերաւ իմացեալ լինի զօրութիւն , և իշխանութիւն , և փառք , և գոյացապէս առեալ՝ նա ինքն որդին Աստուծոյ · որով գտին մարդիկ առ հասարակ զփրկութիւն · զի 'ի հարկանել նորա զսատանայ՝ ազատեցան մարդիկ 'ի գերութենէ նորա · բայց քանզի սկզբնաւորութիւն այսր եղև յազգին իսրայելի , յայն ակնարկելով՝ և անոտի սկսանելով խօսի , և ասէ ։

Յարոյց մեզ եղջիւր փրկութեան 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ · որպէս խօսեցաւ բերանով սրբոց , որ յաւիտենից մարգարէին էին ։ Այսինքն թէ 'ի կամիլ Աստուծոյ

փրկ-

փրկել զմեզ և բարձրացուցանել՝ հաճեցաւ ծագել մեզ զզօրութիւն մեծ, և նորոգել զթագաւորութիւն ազգիս մերոյ՝ ոչ զմարմնաւորն, այլ զհոգևորն. և 'ի սոյն սակս առաքեաց առ մեզ զմիածինն իւր 'ի տանէ դաւթի իբրև զեղջիւր, այսինքն իբրև զզօրութիւն անվանելի՝ 'ի վանել զթշնամիս մեր. որով ունիմք գտանել զփրկութի. ըստ որում սահմանեալ էր առնել. և զոր սահմանելոյ իւրոյ խոստացեալ էր բերանով սրբոց իւրոց նահապետաց և մարգարէից. զորմէ տես յօրհնութեան որ ծնծածնին 'ի համարն 8 : (Երեմ. ժթ. 20 : և Եսայ. Է. 10 : և Եզեկ. ժէ. 21) :

Իսկ զոր ասէ * որք յաւիտենից մարգարէք նորա էին‖, բառդ յաւիտենից՝ ըստ չորից կարէ առեալ լինել. մի՝ զի կանխելոյ ժամանակին. ըստ որում 'ի կանուխ ժամանակաց իւր 'ի յաւիտենից մարգարէացան նոքա : Երկրորդ՝ զի մշտնջենաւորութէ ընտրութէ նոցա. զի որում 'ի յաւիտենից ընտրեալ էր զնոսա այծ 'ի մարգարէութի : Երրորդ՝ զի հաստատութէ մարգարէութէ նոցա. զի որում անփոփոխ մնալոց էին բանք նոցա, 'ի գուշակելն անդ զփրկութի խորայելի : Չորրորդ՝ 'ի ցուցանել զմեծութիւն խորհրդոյն՝ որ ծածկեալ կայր 'ի յաւիտենից :

Նորոյապէս, յարոյց քս 'ի հաւատացելոց իւր զեղջիւրս, այսինքն զբազմապատիկ առաքինութիւս 'ի տանէ դաւթի, այսինքն 'ի լռութէ որ եկեղեցւոյ. և 'ի ձեռն այնց եղջերաց փրկեաց զմզ 'ի բռնութէ ախտից և սատանայի. զորս կոչէ թշնամիս, 'ի մէջ բերելով զթշնամիս իւր և ատելի մարդկան, յասելն :

3 . Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց եւ ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց :

Թշնամեօք եւ ատելեօք իմանայ ոչ միայն զներկայ եղեալսն, այլ եւ զանցեալսն . այսինքն ոչ միայն զորս յայնժամ ունէին որդիքն Իսրայէլի, այլ եւ զորս յառաջն ունէին յոր եւ իցէ ժամանակս, յորս ակն ունէին գալստեան փրկչին՝ առ ՚ի ազատիլ ՚ի ձեռաց նոցա՝ եւ առաւել եւս ՚ի ձեռաց աներեւոյթ թշնամեաց՝ այսինքն դիւաց . եւ զի եկեալ հասեալ տեսեալ զաքարիա զայս գալուստ, ուրախացեալ ընդ այն՝ ասէ :

Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց եւ ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց : Նասամնօր բառդ փրկութեան՝ երրակի կարէ կարգիլ . մի՝ իբր բացայայտիչ, եւ հայի ՚ի բառդ եղջիւր փրկութեան . որպէս թէ եղեալ էր . յարոյց մեզ զեղջիւր փրկութեան, այսինքն զայնպիսի եղջիւր, որով փրկեցաք ՚ի թշնամեաց մերոց : Երկրորդ՝ իբր խնդիր, եւ հայի ՚ի բառդ յարոյց . որպէս թէ եղեալ էր . յարոյց մեզ զեղջիւր՝ առ ՚ի ցուցանել մեզ զփրկութիւն ՚ի թշնամեաց մերոց : Երրորդ՝ իբր առարկայ, եւ հայի ՚ի բառդ խօսեցաւ . որպէս թէ եղեալ էր . խօսեցաւ բերանովք մարգարէից՝ փրկել զմեզ ՚ի թշնամեաց մերոց :

Ոխարդ եւ առցի՝ միտ բանին է ցուցանել՝ թէ ած կամեցաւ փրկել զիսրայէլ ՚ի թշնամեաց եւ յատելեաց իւրեանց, եւ զազգ մարդկան ՚ի ձեռաց դիւաց՝ որք էին ատեցողք նց . եւ զի զայս արար ըստ խոստմանն եղելոյ առ նախահարսն իւր, սմին իրի յարէ զկնի, եւ ասէ :

4 . Առնել ողորմութիւն առ հարսն մեր . եւ յիշել զուխտարանս սրբութեան իւրոյ :

Սողոմոնին ա̃յ թէպէտև առ ամենին եղև 'ի մար_
դանալ որդւոյն ա̃յ, բայց մասնաւորապէս առ
եղեալ առ հարս մե̃ր ըստ երից. մի՝ զի մինչև
եկեալ էր որդին ա̃յ՝ նորա յապագայ արդեանց
նորա գտին զողորմութի̃ յա̃յ, ընդունելով 'ի
նմանէ զշնորհս, և 'ի ձեռն շնորհաց զայլ և այլ
պարգևս գերընական կարգի։ Երկրորդ՝ զի առ
նոսա եղեալ էր խոստումն և երդումն ա̃յ՝ առ_
նել զողորմութի̃՝ եթէ նոցա և եթէ որդւոց նո_
ցին։ Երրորդ՝ զի 'ի կատարել ա̃յ զայն երդումն
առ որդիս նոցա՝ համարիւր առնել զնոյն ողոր_
մութի̃ ոչ միայն որդւոց նոցա, այլ և նոցին իսկ
մե̃ր հարցն. քանզի և նոքին իսկ կարօտ էին ողոր_
մութեան ա̃յ. * զի թէպէտև սր̃բ էին (ասէ Իգնա_
,, տիոս), սակայն դատակնիք պարտեացն Ա_
,, դամայ 'ի վերայ ամ̃յն հաստատեալ կայր ||։
Յայսոսիկ հայելով՝ ասէ։
Առնել ողորմութիւն առ հարս մեր. և յիշել զկտակարա_
նս սրբութեան իւրոյ։ Բայքդ առնել և յիշել իբր դերբայ
դնին աստ. որպէս թէ ասացեալ էր. Հաճեցաւ
ա̃ծ փրկել զմ̃զ՝ առնելով զողորմութի̃ առ հարս
մեր 'ի յիշելն անդ զկտակարանս սրբութե̃ իւրոյ։
Ուր ողորմութի̃ իմացեալ լինի նոյն իսկ փրկութին՝
զոր եցոյց ա̃ծ 'ի ձեռն որդւոյ իւրոյ՝ եթէ յա_
ռաջն առ մե̃ր հարս վասն ապագայոյ արդեանց նո_
րա, և եթէ յետոյ՝ յառաքելն զնա յաշխ̃։
Իսկ կտակարանս իմացեալ լինի կտակն կամ ուխտն
ա̃յ, կա̃մ խոստումնն կամ երդումնն՝ որ գրեալ
կայր. 'ի կտակարանի. և այս դնի ըստ ոճոյ փոխա_
նունութե̃. որով անուն պարունակողին դնի փո_
խանակ անուան պարունակելոյն. և զի կտա_
կարանն է պարունակող, և կտակն պարունա_
կեալ 'ի նմա, անունս կտակարան՝ դնի փոխա_
նակ

նակ անուանս կտակ . և միտ բանին է՝ թէ ամ կամելով փրկել զմարդիկ՝ եցոյց զինքն յիշող լինել այնր երդմանն՝ զոր արար ընդ հարս իւր ըստ գրեցելումն 'ի կտակարանի . և այնու առնել զողորմութիւն՝ ոչ միայն նոցա , այլ և մեզ՝ որք ժա_ ռանգ գտաք նց : 'Ի մէջ բերէ ապա և զկտակն կամ զերդումնն՝ ասելով .

5 . Զերդումն՝ զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ . տալ մեզ առանց երկիւղի փրկութեան 'ի թշնա_ մեաց մերոց :

Այս երդումն է այն՝ զոր արար ամ առ աբրա_ համ . նախ՝ 'ի խոստմանն նր նմ փորձս բազումս (Ծնն ԺԵ . 1) : Երկրորդ՝ յուխտելն ընդ նմա ուխտ յաւիտենական 'ի ժառանգութի բազում զաւակաց (Ծնն ԺԷ . 4 = 10 . և 19) : Երրորդ՝ տիրապէս յերդնուլն յանձն իւր՝ օրհնել 'ի զա_ ւակէ նորա ամենայն ազգաց երկրի . (Ծնն : ԻԲ . 13 = 18 : և ևս Ծնն . ԺԲ . 3 : և Ի . 4 : և ԻԸ . 14 : և երեմ . Լա . 31) : Զայսոսիկ ակնարկե_ լով՝ ասէ :

Զերդումն զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ : Զոր 'ի նախընթաց համարն կտակարան կոչեաց , աստ երդումն կոչէ զնոյն . և սոյն այս դնի աստ իբր խնդիր սեռի բայիս յիշել , և կամ այլում բայի՝ որ զօրութբ իմացեալ լինի . որպիսի է բայդ կա_ տարել , կամ լնուլ , կմ . որպէս թէ ասէր . հա_ ճեցաւ ամ փրկել զմեզ , յիշելով և կատարելով զերդումն զայն՝ զոր արար առ աբրահամ հայր մեր՝ օրհնել հոգևորապէս 'ի զաւակէ նորա ամ ազգաց . և այս կրկին օրինակաւ . նախ՝ փրկու_ թեամբ , և ապա պաշտամամբ : Զառաջինդ խօսելով ասէ .

Տալ մեզ առանց երկիւղի շնորհօքն 'ի թշնամեաց մերոց :

Յայս բան բառդ առանց երկիւղի՝ յարելի է 'ի յաջորդ համարն . որպէս տեսցի զկնի . և ըստ այսմ կամի ասել . երդումն ա̅յ կարգեալ էր առ 'ի տալ մեզ զփրկութի̅ն . այ̃ առ 'ի փրկել զմեզ 'ի թշնամեաց մերոց . և տիրապէս 'ի փրկել առ հասարակ զազգ մարդկան 'ի ձեռաց թշնամեաց նոցա, 'ի գերութէ̃ սատանայի, 'ի բռնութէ̃ մահու, և 'ի ծառայութէ̃ մեղաց : Խօսելով և զերկրորդէն ասէ :

6. Պաշտել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա զա̅մ աւուրս կենաց մերոց :

Յառաջին ժամանակն անդ նախ քան զմարդանալ որդւոյն ա̅յ մարդիկ պաշտէին զարարածս, այ̃ կամ զանասունս, կամ զկուռս, կամ զդեւս, կամ զմիմեանս, եւս և զախտս իւրեանց : Եւ թէպէտ ազգն իսրայէլի պաշտէր զա̅ծ կենդանի, նոյնպէս և այլք բազումք, բայց խ՛իք խ՛իք անկատարութբ̃ : Իսկ 'ի լրման երդմանն ա̅յ 'ի գալ Յիսուսէ յաշխարհ՝ եհաս և կատարելութի պաշտաման ը̅ս հնգից հանգամանաց, որոց խօսի կարգաւ . և նախ սոսկ զպաշտօնն 'ի մէջ բերելով՝ ասէ :

Պաշտել զնա : Ոն ասելով՝ յայտ առնէ՝ թէ այսուհետեւ ոչ եւս ունէին մարդիկ պաշտել զարարածս, այլ զա̅ծ կենդանի . որպէս և եղեն իսկ . զի 'ի քարոզել առաքելոց յաշխարհ ա̅մ, ա̅մ ազգք և ազինք ընկալեալ զքարոզութի նոցա՝ յետս կացին 'ի կռոց, և պաշտեցին զա̅ծ . այլ թէ ոմանք վերստին դարձան 'ի պաշտօն կռոց, նոցա է մեղն : Իսկ առաջին հանգամանք պաշտամանն ա̅յ էր առանց երկիւղի բերիլ 'ի նոյն,

նոյն, զոր և 'ի մէջ եբեր 'ի նախընթացսն Հաւատոյն՝
ասելով.

Աղօթից երկրորդ: Երկիւղին ոչ իմացեալ լինի աստ երկիւղն ծառայական, որ է բռնադատութե կամաց 'ի ծառայել Այ՝ ոչ վասն սիրելոյ զնա, և կամ վասն ձանձրելոյ զնա արժանի պաշտամամբ, այլ վն երկնչելոյ 'ի պատժոցն. Այլ այսպէս է լինելոց ասէ այսուհետև պաշտօն ծառայութե մերոյ, զոր ունիմք մատուցանել Այ կենդանւոյ. այլ առանց այսպիսի երկիւղի՝ սիրով
և յօժարութբ կամաց.

Երկրորդական մեկնութբ՝ մարթ է երկիւղին իմանալ աստ զկասկածանս. յոր միտ կամի ասել՝ այսուհետև առանց կասկածելոյ 'ի վերայ փրկութե մերոյ, կամ առանց երկբայելոյ 'ի պաշտամունս մեր՝ կարեմք ծառայել Այ. 'Ի մէջ բերէ ապա և զայլ չորս հանգամանս կատարե-
լութե պաշտամանն, և ասէ.

Սրբութ̃ և արդարութ̃ առաջի նորա, զամենայն աւուրս կենաց մերոց: Սրբութին հայի աստ առ Ած, և արդարութին առ ընկերն, միանգամայն և առ անձն. Ըստ որում սրբութին վերածի յայն օրէնս որք գրեալ էին յառաջնում տախտակի. իսկ արդարութին
յայնս՝ որք էին յերկրորդումն տախտակի.

Բայց պատշաճի ևս մարթ է ասել, թէ սրբութին հայի աստ յանձն, և արդարութին յընկերն. իսկ ասելն առաջի նր՝ հայի յԱծ. յոր միտ ասէ պօղոս. (տիտ. բ. 12.) թէ յերևեցաւ շնորհացն Այ՝ շնորհեցաւ մարդկան կեալ * զգաստութբ և արդարութբ և Ածպաշտութբ ‖. Նաև ըստ այսմ սրբութբ իմացեալ լինի աստ անարատութի կենաց՝ մաքուր պահելով զանձն 'ի մեղաց. Արդարութբ իմացեալ լինի ընկերսիրութի՝ հիմնեալ

յոյն բանն՝ զոր ասէ քս . * ոհ կամիք թէ արա_
,, ցեն ձեզ մարդիկ , այնպէս արասջիք և դուք
,, նոցա ||. (Ղուկ. զ. 31 .) Իսկ ասելովն առաջի
նորա՝ իմացեալ լինի զլրութի պաշտամանն այ ,
իբր զի մի լիցի այն առ աչս մարդկան՝ կամ 'ի
փառս մարդկան , այլ զուտ առաջի այ , որ միայն
'ի հաճոյս նորա և 'ի պատիւ մեծվայելչութե
նորին ։ Յաւելու ապա և զվերջին հանգամանսն՝
ասելով ։

Զամենայն աւուրս կենաց մերոց ։ Իբր թէ ասէր . ե_
հաս ժամանակ՝ զի ոչ ևս սահմանեալ փակես_
ցին աւուրք պաշտաման այն , այլ մշտ յաջողես_
ցին յամենայն աւուրս կենաց մերոց ։

Յասացելոցս աստի յայտնի երևի՝ թէ զաքարիա
զամ խոստմունս այ և զգուշակութիւս մարգա_
րէից՝ զորս և յիշեաց 'ի համարսն 2 . 4 . և 5 . բո_
վանդակ վերածէ 'ի հոգևորս . և իբր մեկնե_
լով իմացուցանէ , թէ այն ամ բանք ոչ 'ի մար_
մնաւորս հայլին ը̄ առասպելելոյ հրէից , այլ 'ի
հոգևորս . զի այս բանք ուխտի և խոստմանն
այ , որ է տալ մեզ զգիտութի փրկութե և զթո_
ղութի մեղաց , ևս և տալ պաշտել զնա սրբութբ
և արդարութբ առաջի նորա զամ աւուրս կենաց
մերոց՝ ոչ 'ի մարմնաւորս ակնարկեն , այլ 'ի հո_
գևորս ։ Նա զի 'ի կատարման այսր ամի յառաջ_
ընթաց եղև յովհաննէս , առ նա դարձուցանէ
զաքարիա զդէմս բանից իւրոց , և ասէ ։

7 . Եւ դու մանուկ , մարգարէ Բարձրելոյն կոչեսցիս ․
գնասցես առաջի տն՝ պատրաստել զճանապարհս
նորա ։

Զառ մանուկն խօսելով թուեցաւ ոմանց , թէ
իմանայր նա՝ զոր խօսէր հայր իւր . զի թէ 'ի
լուել

լսել նր յորովայնի զողջոյն մօր տն իւրոյ՝ խնդացաւ , կարէր խնդալ և ոստոստել յորովայնի ըղբանս հօր իւրոյ ։ Նոյնց հաւանական եւս է ասել , թէ ոչ զի իմանայր նա՝ վն այն խօսէր առնա , այլ զի այլք իմասցին զնա և զգործ առաջաւորութեն նորա՝ զոր ունէր յառաջայն կատարել-ըն երկուց , յն ըն մարգարէութեն , և ըն յառաջընթացութեն · ըն առաջնոյն ասէ ։

*Եւ դու մանուկ , մարգարէ բարձրելոյն կոչեսցիս ։* Ապա-մի ասել · իմ որդի , իմ ամենապարգև յովհաննէս , դու որ ուխտօրեայդ ես այժմ , յետ քսան-ևինն ամաց երևեսցիս և ցուցցիս մարգարէ բարձրելոյն ։

Մարգարէ կոչէ զյովհաննէս վասն երից · մի՝ վասն գուշակելոյ և քարոզելոյ ժողովրդեանն խոստացելի զգալուստ որդւոյն այ , յասելն · * զայ
,, զօրագոյնն քան զիս . . . . նա մկրտեսցէ զձեզ
,, հոգւովն սրբով ‖ · (մարկ · ա · 7 ։ ղուկ · գ · 16 ։ մատ · գ · 11 ։ յովհ · ա · 15 · և 27 ։) Եւ թէպէտ զորմէ գուշակէր , եկեալն էր , բայց չև էր տեսեալ զնա · և ոչ գիտէր՝ թէ ո՛ իցէ · որպէս և ինքն ասաց · * և ես ոչ գիտէի զնա ‖ · (յովհ · ա · 31 · և 33 ։) Գուշակեաց դարձեալ և զերկրորդ գալուստ նորա ասելով · * որոյ հե-
,, ծանոցն ՚ի ձեռին իւրում · և սրբեսցէ զկալ
,, իւր · և ժողովեսցէ զցորեանն ՚ի շտեմարանս
,, իւր · և զյարդն այրեսցէ անշէջ հրով ‖ ·
(մատ · գ · 12 · և ղուկ · գ · 17 ·)

Երրորդ՝ մարգարէ կոչեցաւ վն ունելոյ զհոգի եղիայի մարգարէի , և վն գալոյ հոգւով նորա · որպէս ասէ ղուկաս · (ա · 15 · և 17 ։) Այս իսկ ըստ վկայելոյ մատթէոսի ( ժդ · 5 · ) ժողովուրդքն * իբրև զմարգարէ ունէին զնա ‖ ։

Երրորդ՝ մարգարէ կոչեցաւ. զի եղև իբր լրումն նոցա. և զոր նոքա 'ի հեռուստ գուշակէին, սա հասեալ եցոյց զնոյն. և առաջիկայութք ճշմարտութեան եցոյց և զճշմարտութիւն մարգարէութեան իւրոյ. և սորին վասն ոչ միայն մարգարէ կոչի, այլև ճշմարիտ մարգարէ. որպէս տեսանի 'ի շարականի. Օ այս պաշտօն մարգարէութեան յաւդանդէ սկսաւ 'ի կիր առնուլ յովհաննէս, յերկիրպագանել նորա որդւոյն այ յորովայնէ անտի մօր իւրոյ յորովայն կուսին.

Չորրորդ 'ի կոչել զաքարեայ զյովհաննէս՝ մարգարէ, ոչ աստ մարգարէ այ, այլ՝ մարգարէ բարձրելոյ. և այս ես թէպէտ զնոյն նշանակէ, բայց քանզի և այլք էին նոյնպիսի, սովին կամեցաւ զառաւելութի ինչ ընծայել նմա. զի որում դերագոյն գտաւ սա քան զնոսա՝ 'ի ցուցանել անդզբարձրագոյն խորհուրդ ամենայնք երրորդութե. որով և առաւել եղև քան զմարգարէս. որպէս և վկայեաց քս ասելով. (մատ. ժա. 9.) * զինչ
,, ելէք տեսանել. մարգարէ, այո ասեմ ձեզ՝ և
,, առաւել ևս քան զմարգարէ. զի նա է՝ վսյ
,, գրեալ է. ահա ես առաքեցից զհրեշտակ իմ
,, առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճա-
,, նապարհս քո առաջի քո ‖. որով յայտնի եցոյց
զառաւելութիւն յովհաննու.

Թող զայն՝ զի այլ մարգարէք ոչ գուշակեցան յայլոց մարգարէից. իսկ սա գուշակեալ եղև 'ի նոցունց, որով և մեծ ցուցաւ քան զնոսա, և քան զայլ հասարակ որդիս մարդկան. մինչև ասել տն. * ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ 'ի
,, ծնունդս կանանց մեծ քան զյովհաննէս մկր-
,, տիչ ‖. (մատ. ժա. 11.)

Երկրորդ պաշտօն յովհաննու եղև յառաջընթա-

Թագուհի նորա . զոր և 'ի մէջ բերէ զաքարիա 'ի
յաջորդ բանսդ ասելով ։

Գնասցես առաջի Տն՝ պատրաստել զճանապարհս նորա ։

Զնոյն զայս յառաջագոյն գուշակեալ էր և մաղաքիա ըստ նմանութեամբ եղիայի . ( Դ . 5 . ) ասելով 'ի դիմաց Տյ . * ահա ես առաքեմ առ ձեզ
,, զեղիա թեզբացի , մինչև եկեալ իցէ օր Տն
,, մեծ և երևելի . որ պատրաստեսցէ զսիրտ հօր
,, առ որդի , և զսիրտ առն առ ընկեր իւր ‖ . Նոյն զայն առաջի եդ գաբրիէլ նմին իսկ զաքարեայ զյովհաննէ՝ ասելով . * ինքն եկեսցէ առաջի նր
,, հոգւով զօրութ եղիայի , դարձուցանել զս-
,, իրտս հարց յորդիս , և զանհաւանս յիմաս-
,, տութի արդարոց , պատրաստել Տն ժողովուրդ
,, կազմեալ ‖ ։

Իսկ թէ յիրաւի ըստ նմանութեամբ եղիայի իմացեալ լինէր նաև յովհաննէս , վկայեաց և Տր մեր . զի 'ի հարցանել աշակերտացն . * զիարդ դպիրքն
,, ասեն՝ եթէ եղիայի նախ պարտ է գալ , պա-
,, տասխանի ետ նո և ասէ ցնս . եղիա գայ , և
,, հաստատեսցէ զամ ( և զայս ասէ վասն բուն
,, եղիայի՝ որ գալոցն էր . խօսի և զյովհաննէ՝
,, ասելով . ) այլ ասեմ ձեզ՝ զի եղիա եկեալ
,, իսկ է . և ոչ ծանեան զնա . այլ արարին ընդ-
,, նա՝ զորինչ կամեցան ‖ . ( մատ . ԺԷ . 10 = 12 .
և մարկ . Թ . 12 . )

Արդ յառաջընթացութի յովհաննու եղև երևիլ նորա 'ի մէջ ժողովրդեան յառաջ քան զքարոզութին քնի . զի պատրաստեսցէ զճանապարհս նորա , որպէս օրէն է ծառայից 'ի գալ թագաւորի յառաջել քան զնա , առ 'ի պատրաստել զճանապարհսն , այսինքն առ 'ի մաքրել զայնս յաղտեղութենց և 'ի քարանց և յայլոց անպատեհ իրաց ,

րաց , և առ 'ի զարդարել զայնս : Իսկ սմին և յովհաննէս նախընթաց եղև որդւոյն ա՟յ , պատրաստել զճանապարհս նորա առ ժողովուրդն , յորդորելով զնոսա , նախ՝ 'ի գիտութիւն ճշմարտութե , և երկրորդ՝ յապաշխարութի 'ի ձեռն արտաքին մկրտութե . և այս՝ առ ընդունելութի գալըստեան որդւոյն ա՟յ , քարոզելով զնմանէ մեծամեծ բանիւք :

Յառաջընթացութի սորա հայի նաև 'ի նախագնացութի նորա 'ի գոգն աբրահամու՝ աւետել հարց եղելոց անդ , եթէ հասեալ է փրկիչն , և 'ի մօտոյ գայ աստ ազատել զմեզ , և վերածել ընդ իւր յարքայութի երկնից : Նաև յայս սակս կրկին կարապետ կոչի 'ի շարականի . 'ի կան . հգ . և ճիգ : Այլ բանն զաքարեայ ուղղակի հայի 'ի պաշտօն նախընթաց քարոզութեն յովհաննու ա՟ծ այլև այլ գործոց . զորոց խօսի 'ի յաջորդ համարն , և ասէ :

8 · Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա 'ի թողութիւն մեղաց նոցա :

Այս փրկութի՝ զորոյ զգիտութիւն առաջի առնէ՝ իմացեալ լինի ըստ հոգևորին . զի է փրկիլ ըստ հոգւոյ 'ի հոգևոր թշնամեաց . յորոյ ապացոյց դնէ զկնի զմեղացն թողութի ասելով :

Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա 'ի թողութիւն մեղաց նոցա : Կամի ասել . վասն եկն յովհաննէս՝ զի տացէ գիտել ժողովրդեան ա՟ծ թէ հասեալ է փրկիչ նոցա և փրկութի նոցին 'ի թողութի մեղաց նոցա . զի 'ի ձեռն թողութե մեղաց նոցա , կամ լինելով թողութի մեղաց նոցին : Նաև զի յողորմութեն ա՟յ եղև այս , վասն յարէ զկնի , և ասէ :

9. Վասն գթոյ ողորմութեան Այ մերոյ. որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց. լուսաւոր առնել շնորհաւոր մեր։

Պիտելի է՝ զի գութն է ցոյց գորովական սիրոյ առ խեղճն 'ի խնամել. և այս՝ ըստ ներգործութեան մնածեալ. իսկ ըստ ունակութեան՝ է առաքինութիւն ցուցանելոյ զայսպիսի ներգործութիւնս։ Նոյնպէս և ողորմութիւն է ցոյց քաղցր իրիք առ կարօտս՝ 'ի բառնալ զկարօտութիւն նոցա. իսկ ըստ ունակութեան առեալ՝ է առաքինութիւն յօժարեցուցիչ յայսպիսի գործս։

Արդ թէպէտև մերժեալ էր Այ զազգ մարդկան վն մեղացն ադամայ. այլ քանզի իւր էին արարածք, և ամենքին 'ի յետին կարօտութեան էին, գթացաւ և ողորմեցաւ նոցա. գթացաւ իբրև յիւրսն, և ողորմեցաւ իբրև 'ի կարօտեալս. ըստ որոյ եցոյց առ նս զներգործութիւն գթոյ և ողորմութեան իւրոյ՝ ծագելով նոցա փրկիչ զմիածինն որդի իւր. որոյ յառաջընթաց առաքեաց զյովհաննէս։ Յու ահա յայս հայելով դնէ զոքարիա զայս բան։ Յու որովհետև գթութիւն Այ հաստատեալ էր յողորմութեան նր, և ողորմութիւն 'ի գթութեան նորին, առըին վն զերկաքանչիւրսն 'ի նոյն միաւորելով ասէ։ Վն գթոյ ողորմութեան Այ մերոյ։ Կամի ասել. վն ցուցանելոյ Այ Այ մերոյ զգութ ողորմութեան իւրոյ 'ի մեզ՝ այց արար մեզ. իսկ թէ զիարդ, յայտ առնէ ասելով։

Որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց. լուսաւոր առնել շնորհաւոր մեր։ Բառդ արեգակն՝ վերաբերի աստ յԱծ, ոչ յառաջին անձն հայելով, և ոչ յերրորդն, այլ յերկրորդն, յՈ յորդին, որ 'ի սբ գիրս արեգակն կոչի, և արեգակն արդարութեան. ըստ մաղաք.

ղաք. Դ. 2. * Եւ ծագեսցի ձեզ երկիւղածաց
,, անուան իմոյ արեգակն արդարութեան. եւ բժշ-
,, կութիւն ՚ի թեւս նորա ։ Այլ եւ ծագումն ըստ
յատկութեան արեգական. ըստ Զաքար. Գ. 8. * Ա-
հաւասիկ ես ածեմ զծառայ իմ զԾագումն ։ Այլ
զծագօղն, որ է մեսիայն. որպէս դնի ՚ի քաղդէա-
կանն ։ Եւ Զ. 12 դրի. * Ահա այր՝ եւ Ծագումն
,, անուն նորա, եւ ՚ի ներքոյ իւրմէ ծագեսցէ.
,, եւ շինեսցէ զտուն Տն ։ Ըստ սոցին եւ յաւա-
գիկայ բնաբանիդ՝ ՚ի յոյնն դնի անատօլէ. այլ
արեւելք, եւ ՚ի լատ" դնի ծագօղ կամ ծագումն.
որ ՚ի նոյն մերածի ։

Այս ծագումն արեգական դնէ լինել զթուր ։
ըստ որոյ դերանունդ որոյ՝ հայի ՚ի զթուի ողոր-
մութեան Այ Հօր. որպէս թէ եղեալ էր. ՚ի ձեռն
գթոյ ողորմութեան Հօրն երկնաւորի եկն առ մեզ
Որդին Այ. եւ երեւեցաւ մեզ իբրեւ արեգակն ա-
դարութեան ծագեալ ՚ի բարձանց, այլ ՚ի Հօրէ, կամ
յերկնից, կամ ՚ի բարձր խորհրդոց. * Լ[illegible]
[illegible]նել զ[illegible]ր մեր ։ այսինքն լուսաւորել զմեզ՝
որք էաք ՚ի խաւարի մեղաց եւ անգիտութեան, փա-
րատելով ՚ի մէնջ զխաւար մեր ։

Խորհրդաբար, բառիւդ ՚ի բարձանց՝ կարէ նշա-
նակել զարգանդ Տրբյ կուսին, որ առաւել գտաւ
քան զբարձունս երկնից. յորմէ ծագեցաւ ծա-
գումն մեծ՝ այն է Որդին Այ ՚ի ձեռն գթոյ. եւ
այս կարի իմն ըստ պատշաճի. զի գութն մերա-
ծութ իմն հայի ՚ի նշանակութիւն արգանդի. ըստ
որոյ ՚ի լեզուեբր" եւ արաբ" եւ ասոր" ռախհմամ.
որով նշանակի գութ միանգամայն եւ արգանդ,
որպէս եւ առ յոյնս եւ առ լատինս՝ գութն ա-
ղիքս կոչի, որ է մասն որովայնի. յոր միտ ես
՚ի մեզ ասի աղէգորով, աղեխարշ, եւ այլն ։

Ապա

Նորա կամելով ոչ ցուցանել զգութ իւր՝ Հաճեցաւ ծածկել 'ի գթոյ այսինքն յորդմանէ , և իբր շառաւիղ արեգական թափանցել ընդ այն , առ 'ի լուսաւոր առնել զոգս մարդկան , փարատելով զխաւար մեղաց նոց : Զսոյն զայս բացայայտ ևս կամելով առաջի դնել՝ յարէ զկնի , և ասէ :

10 . Զ՝ Տանել լոյս 'ի Հէք տառապեալս՝ որ նստեալ 'ի խաւարի և 'ի ստուերս մահու . ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութե :

Զսոյն ասաց և Եսայի . Թ . 2 . * Ժողովուրդ՝
,, որ գնայր ընդ խաւար՝ ետես զլոյս մեծ , և որ
,, բնակեալդ էք յերկ , և 'ի ստուերս մահու ,
,, լոյս ծագեսցի 'ի ձեզ || . յորս որպէս և տեսանես՝ զկիճակ թշուառութե ազգի մարդկան չկարելով յայտնել՝ նմանութբ խաւար կոչէն , և ստուեր մահու . խաւար 'ի ներքոյ և արտաքոյ . զի ներքին լոյս մարդկան գրեթէ շիջեալ էր , զուղիղն թիւր և զթիւրն ուղիղ ըմբռնելով . և յիշատակութի ա՛ծային մեծ վայելչութե և սիրոյ բարձեալ էր 'ի նոցանէ . և էին ամենեքեան 'ի խաւարի մոռացութեանն այ : Արտաքուստ ևս ոչ երևիւր լոյսն ա՛ծային , բայց եթէ առ խորայելոցն . այլև յայն խառնեալ էին մարդիկ զխաւար իւրեանց : Արդ որպէս որ 'ի խաւարի գնայ՝ մոլորի . զի ոչ գիտէ յո՛ երթայ , որովհետև խաւարն կոյր կացուցանէ զայս , սոյնպէս և ազգ մարդկան 'ի խաւարի գնալով՝ մոլորէին . և ոչ գիտելով յո՛ երթալ՝ ընթանային 'ի մահն յաւիտենական : Պարզեալ ըստ իգնատիոսի զանգիտութիւնն և զմեղսն կոչէն խաւար . զի անգիտութիւն չունի մասն լուսոյ իմաստից . իսկ մեղքն

գլխովին խաւարեցուցիչ է ։

Ստուեր մահու եւ կոչեն մարգարէք զվիճակ մարդկան, զի 'ի դատապարտիլ նոցա 'ի մահ՝ կեանք նոցա գնայր զկնի մահու իբրեւ ստուեր նորա. քանզի ստուերին է զհետ գնալ իրին ։ Պարզեալ՝ որպէս ստուերն ըստ ձեւոյն ցուցանէ զայն՝ որոյ է ստուեր, սոյնպէս եւ կեանք մարդկան իբրեւ զձեւ մահու ցուցանէ զմահ ըստ չորից. մի՝ ըստ թշուառութեան եւ աղետից մահացուցչաց եւ կամ ածողաց 'ի մահ ։ Երկրորդ՝ ըստ լինելոյ ստուերական իմն պատկեր կամ ձեւ, եւ կամ նըշմարանք յաւէտ յաւիտենական մահու քան յաւիտենական կենաց. զի որպէս 'ի պատկերէ կարէ ըմբռնիլ իրն, սոյնպէս 'ի թշուառութեց կենցաղոյս իբր 'ի պատկերէ կարէ ըմբռնիլ թշուառութիւն յաւիտենական մահու ։ Երրորդ՝ ըստ վտանգի անկանելոյ 'ի մահ՝ եթէ ըստ հոգւոյ ի ձեռն մեղաց, եւ եթէ ըստ մարմնոյ 'ի ձեռն արկածից ։ Չորրորդ՝ ըստ սարսելոյ մարդկան 'ի մահուանէ. իբրեւ թէ կային 'ի զարհուրանս ստուերի նորա ։

Պարզեալ՝ ազգ մարդկան իբրեւ թէ մեռեալ էին առաջի իմ. եւ Դու էր իբր գերեզման նոցա. իսկ գերեզմանն է ստուեր մահու. զի իբրեւ ըստուեր ցուցանէ զմահ. քանզի ուր գերեզման է, անդ է տեղի մահու ։

Յայսպիսի վիճակի գոլով մարդկան՝ չմնայր նոցա յոյս լուսոյ կենդանութեան ։ Այլ կամեցեալ իմ ցուցանել նոցա զայցելութեն փրկութեն 'ի ձեռն գթոյ ողորմութեան իւրոյ՝ ծագեաց նոցա զլոյս մեծ ։

Յայսմիկ հայելով ասէ ։

Ծագեալ լոյս 'ի վ̅ր այնոցիկ՝ որ նստէին 'ի խաւարի եւ 'ի ստուեր մահու ։ Այս այն է՝ զոր ասաց 'ի նախ-

ըն-

ընթացս հիւսին * լուսաւոր առնել զխաւար մեր ‖ · զոր առաւելապէս կամելով բացայայտել և հաստատել՝ կրկնելով իւր խօսի · իբր թէ ասացեալ էր · յողորմել՝ ի մեզ աստուծոյ՝ յայտնեցաւ մեզ որդի նորա իբրև արեգակն՝ ծագելով զլոյս իւր ՚ի վերայ այսոցիկ՝ այսինքն ՚ի վերայ մեր՝ որք էաք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու ։

Ոչ ասէ ՚ի վերայ ամենայն, կամ ՚ի վերայ այնոցիկ, կամ ՚ի վերայ մեր, այլ ՚ի վերայ այսոցիկ · առ ՚ի ցուցանել՝ թէ նաև ընտրեալքն իսկ՝ ՚ի խաւարի էին յառաջ քան զծագել արեգականն արդարութեան ։ Բայց այսմ է իմանալի և բանս որոց, որ դնի յաւետարանի ( ՚ի ղուկ ա · 79 · ) Ոչ ասէ դարձեալ՝ որք էաք ՚ի խաւարի, այլ որք նստէին, առ ՚ի ցուցանել՝ թէ ընկղմեալ էին ՚ի խաւարի մոլորութե և ՚ի ստուեր մահու մեղաց ։

Իսկ այն լոյս զոր ծագեաց՝ տիրապէս առեալ՝ էր նա ինքն որ լոյս եկն յաշխարհ · իսկ ըստ գործոյն առեալ՝ էր նախ լոյս աւետարանին քնի · և երկրորդ լոյս շնորհաց հոգւոյն սրբոյ ՚ի լուսաւորել զմիտս, և յուղղել զկեանս · և զի խօսեցաւ ըզլուսաւորութենէ մտացն, խօսի և զուղղութենէ կենաց՝ ասելով ։

Ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան ։ Ոտիւք իմացեալ լինին աստ նախ զգայական բաղձանք · որք իբր ոտք են բանական բաղձանաց · ըստ որում այլուր ասացաք · ( տես ՚ի սաղ · ՃԺԸ · 49 ) ։ իմացեալ լինին երկրորդ՝ կեանք մարդկան · որովք իբր ոտիւք լինի ընթանալ նոցա զատի կեանս · և զի ամենեքին թիւրեալ էին նք, լոյսն երկնային՝ որ ծագեցաւ՝ ուղղեաց զոտս՝ գնալ անմոլար ՚ի ճանապարհս խաղաղութե այսինքն յընթացս առաքինութե, կամ յայնպիսի գործս և իրս,

յորս

յորս հնար էր նոցա ունել զխաղաղութիւն ընդ Այ, ընդ մարդոյ և ընդ անձին, մինչև արժանի լինել նոցա ժամանելոյ 'ի խաղաղութիւն յաւիտենական:

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ. ԺԳ:

Մաղթանք առ Տր բերանով ծերունւոյն Սիմէոնի՝ արձակել 'ի խաղաղութիւն. գոհանալով Մանկանն և շնորհաւորել հեթանոսաց 'ի յայտնութիւն որդւոյն Այ:

Աղօթք Սիմէոնի:
(Ըստ սաղմոսարանի, և ըստ ժամագրքի):

1. Արդ արձակեա զծառայս քո Տր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո. զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:

2. * Լոյս յայտնեցար հեթանոսաց (կամ ըստ ժամ. Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց) և փառք ժողովրդեան քում Իսրայէլի:

Աղօթք Սիմէոնի:
(Ըստ աւետարանին Ղուկայ, Բ. 29 = 32):

29. Արդ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն.
30. * զի տեսին աչք իմ զփր-
31. կութիւն քո. * զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց:
32. * Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում Իսրայէլի:

## ՎԵՐՆԱԳԻՐ:

Աղօթք ծերունւոյն Սիմէոնի:

Ո՞ արդեօք էր ծերունիս այս՝ բազում բազում ինչ ասեն. յորս հետաքննին իմն տեսանի կարծիքն այն, զոր դնեն ոմանք, թէ սա էր մին յեօթանասուն թարգմանչաց: 'Ի թարգ-

էջ մա

մանել 'որ առեն զբանն եսայեայ . * աՀա կոյս յղասցի և ծնցի որդի ‖ , Հիացեալ ընդ այս՝ փնիկ կոյս թարգմանելոյ՝ օրիորդ եդ . և 'ի վա_ղիւ անդր ետես , զի փնիկ օրիորդի դրեալ էր ոսկեգրով բառդ կոյս ։ Ընդ որ ապշեալ նորա՝ խնդրեաց յոյժ , զի թէ Հնար իցէ՝ աչօք եւս տեսցէ զկոյսն , և զծնեալն 'ի կուսէն ։ Եւ Հո_գին որ ըստ խնդրոյ նորա խոստացաւ նմա տե_սանել ։

Ըստ այսմ կարծեաց ծերունին սիմէոն 'ի դաւ_լուր 'ի տաճարին՝ պարտիւր լինել գոնէ երեքՀա_րիւր ամաց , զի 270 ամօք յառաջ եղև թարգմա_նութիւն այն . և ինքն յայնժամ կայր գէթ 'ի Հա_սակի 30 ամաց . որով և ամք կենաց նորա լինէր երից Հարիւրոց . իսկ այս ոչ կարէ Հաստատիլ աւանդութիւն ինչ վկայութբ ։ Այնպէս է առել և վն այլոց կարծեաց . վասն որինչ և ասի՝ Հիմն Հաս_տատութե ոչ ունի . քանզի և աւետարանիչն 'ի խօսիլն զսիմէոնէ՝ ոչ զազգ նորա որոշէ , և ոչ զվիճակ պաշտաման նորին յայտնէ . այլ միայն 'ի պատմելն անդ զքառասնօրեայ գալստեանն յսի 'ի տաճարն , այսչափ ինչ ևեթ գրէ . * Եւ
,, աՀա (ասէ) այր մի էր յեմ . որոյ անուն էր
,, սիմէոն . և էր այրն այն արդար և երկիւ_
,, ղած . և ակն ունէր մխիթարութեն իէլի . և Հո_
,, գի սբ էր 'ի նմ . և էր նորա Հրաման առեալ
,, 'ի Հոգւոյն սրբոյ՝ մի տեսանել զմաՀ, մինչև տես_
,, ցէ զօծեալն տն . . . և եկն Հոգւովն 'ի տա_
,, ճարն ‖ . ( ղուկ . բ . 25 = 28 . )

Զայս եդեալ աւետարանչին՝ յարէ զկնի , թէ իբրև ածին զյս 'ի տաճար անդր ծնօղք նորա , և ընծայեցին 'ի ձեռս քաՀանայի՝ առնել ըստ սովորութե օրինացն , էառ նա ինքն սիմէոն զմա_

նոյն 'ի գիրկս իւր . և գոհանալով զԱյ ասաց զաղօթս զայս . յորում խնդրեաց արձակիլ 'ի խաղաղութի , և գուշակեաց զլուսաւորիլ հեթանոսաց :

Իբրեւ թէ 'ոք այլոց այս քննելով զգուշակութն յակոբայ՝ ոչ պակասել իշխան 'ի յուդայ , մինչ ( Ծնն . խթ . 10 . ) նոյնպէս և զեօթանասուն եօթնեկացն մարգարէութեն դանիէլի ( . դան . Թ . 25 . ) ևս և տեսանելով զհանդիսման ծննդեանն յովհաննու կարապետի , լուսաւորեալ 'ի հոգւոյն որբ՝ ծանեաւ զմերձենալ յայտնութեն որդ . վասն փափաքէր և խնդրէր 'ի նմանէ՝ աչօք ևս տեսանել զկատարումն խորհրդոյն . և հոգին որբ՝ որպէս ասացաք այժմ , էր փափաքանաց նր՝ յայտնեաց նմ՝ թէ յառաջ քան զմեռանիլ իւր ունի տեսանել զնա : Արդ 'ի հասանել աւուրցն՝ յաղդաբարութէ նոյն հոգւոյն որբ եկն 'ի տաճարն : Հայեցուք այժմ 'ի բանս նր :

## Բ . Ա . Ն :

1 . Արդ արձակես զծառայս քո Տր ըստ բանի քում 'ի խաղաղութի . զի տեսին աչք իմ զփրկութի քո . զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց :

## Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն :

Ո՜վ թէ քանի՛ մեծ եղև բարեմասնութի որբ ծերունւոյս՝ յարժանաւորիլն անդ բառնալ 'ի գիրկս զձեռաձգօղն երկնից , և 'ի համբոյր բերանոյ մատչելով 'ի նա՝ և 'ի բազուկ իւր գգուելով խօսիլ ընդ նմա : Այս տեսիլ՝ եթէ մարթ ինչ էր՝ ցանկալի լինէր անմարմնոց 'ի մարմնաւորացս լինել միջնակի՝ առ արժանաւորելոյ այսպիսի մեծի շնորհի , զոր եգիտ սա 'ի ծերութե իւրում . որով

և

և մեծագոյն երևեցաւ քան զնա . որպէս գնի 'ի ժամանակսն :

Սէջ շնորհեցաւ աբրահամու այս պարգև , թէ և յամենայն որոց ցանկայր , և ոչ գտանէր , և ոչ այլում ումեք 'ի նախահարցն՝ այլ սմա . որ և այն չափ մեծ համարեցաւ զայն , մինչև սովին և եթ շատանալ , և այլ ևս ինչ ոչ խնդրել՝ բայց եթէ արձակիլ 'ի խաղաղութի , ասելով :

[illegible] 'ի խաղաղութե : Տես զերանելոյս յաժարութի , 'ի ձեռին ունի զկեանքն անմահական , և փոխէ զերկարութի կենաց խնդրելոյ՝ հայցէ մահ 'ի կենաց : Իսկ այս՝ թերևս մի երից . մի՝ զի գիտէր՝ թէ կեանքն այն եկեալ էր տալ որդւոց մարդկան զկեանս յաւիտենականս . զոր և բազմիցս [illegible] առաջի եդ . ուսոյ և յոյս ակնարկելով՝ արձակիլ 'ի նոյն աղերսէր : Երկրորդ՝ զի միայն զտեսանելն զայն խոստացեալ էր նմա հոգին սբ . որպէս յայտ է 'ի վերոյ գրեցելոցդ . և որպէս ինքն վկայէ ասելով [illegible] քո խոստման քում . ապա 'ի լրանալ այնր՝ 'ի նոյն պատրաստ էր գաղթարիլ : Երրորդ՝ զի անդէպ համարէր զառաւելն ևս խնդրել քան զչափ երկարութե կենաց՝ յորում էր . զի որպէս երևի 'ի բանից աւետարանչին , անցեալ էր յոյժ զաւուրբք հասարակական կենաց . և զոր ունէր 'ի ձեռին յաւուրց անտի , այն ևս աւելի էր քան զչափ կենաց . յորում ըստ ընթացից բնութե մարդկան հարկ էր նմա ցաւօք և հեծութե կեալ . որպէս գրի 'ի սաղ . ձթ . 9 . վճյ աղաչէր վճարիլ մահուամբ 'ի կենաց :

Իսկ զայս իբր նուաճելով խնդրէր , նմանեալ [illegible] կարապ թռչնոյ , որ հասեալ 'ի ծերութե քաղցրաձայն նուագելով սպառէ

մահու. այլ զոր նա յանդէտս նուաղէ, սա զիտելով աղերսէ՝ արձակիլ ՚ի խաղաղութի.

Բայց արժան է քննել՝ զի ոչ ասէ տուր ինձ մեռանիլ, կամ արա զի մեկնեցայց ՚ի կենաց աստի, այլ թէ արձակեա զծառայս քո. և զայս դնէ ըստ երից. Նախ՝ զի կապանս համարէր կեալ ՚ի մարմնի. ուստի և զազատիլն անուն՝ արձակիլ ադնէ. Երկրորդ՝ զի իբր բանտ տեսանէր զսա. ուստի և զելանելն անուն՝ արձակութիւն համարի. Երրորդ՝ զի կապեալ էր ՚ի հրաման հոգւոյն սրբոյ իբր յոսկի շղթայ. ուստի և զլրանալ հրամանին արձակման նմանեցուցանէ.

Ոչ ասէ սակս* արձակիլ||, այլ արձակիլ ՚ի խաղաղուէ. և այս ըստ երից. մի՝ ըստ լրման փափաքանացն. քանզի ցայս վայր տագնապէր յըղձանաց սրտի իւրոյ. այժմ թէ, Երբ լցի խոստմամբն հոգւոյն սրբոյ. Երբ եկեսցէ ժամն այն՝ որում ցանկանայր. Երբ տեսցէ զցանկալին զայն, որում սպասէր. Իսկ իբրև ետես, խաղաղացաւ տագնապ սրտի նորա. վասնորոյ ասաց. արձակեա զիս ըստ բանի քում ՚ի խաղաղութի. որպէս թէ ասէր. ահա կատարեցաւ՝ զոր խոստացարդ. ահա լցաւ փափաք սրտի իմոյ. ահա անդորրացաւ ոգի իմ. զի զոր խնդրեցի՝ զնոյն և տեսի. և ոչ ևս մնայ ինձ խնդրել ինչ այլ. ոչ զմեծն քան զպայծառման հոգւոյդ, և ոչ զառաւելն քան զիղձ փափաքման հոգւոյս. այլ միայն զարձակելդ զիս ՚ի խաղաղութի.

Երկրորդ՝ ըստ ժամանելոյ յեզր խաղաղութե. զի ՚ի խռովութե տեսանելով զնմանն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, ՚ի խաղաղութի հառաչէր և զնոյն աղերսէր. իբր թէ ասելով. դու որ եկիր՝ խաղաղութի առնել յերկինս և յերկրի, արձակեա զիս զծա-

զծառայ քո 'ի խաւարութեան տառի՝ գնալ 'ի անդրն խաղաղութե , և անդ սպասել քեզ ընդ այնոսիկ՝ որք ակն ունին գալստեանդ · մինչև ինքնին և կեալ ամդր՝ վերամբիցես զմեզ զամենն 'ի յաւիտե_ նական կեանս ։

Երրորդ՝ ըստ հանգստեամբ մեռանելոյ · յոր մտս քաւս 'ի խաղաղութի , կմ ըստ յուսոյ և ըստ լաւութեան՝ 'ի խաղաղութե , առեալ լինի աստ երբ գործական հոլով· որպէս թէ ասէր · աղա_ չեմ զքեզ , տուր ինձ՝ խաղաղութբ և հանգս_ տեամբ մեռանիլ ։ Նայլսի ուղիղ ասաց և դա_ ւիթ · * խաղաղութբ յայս և 'ի սոյն ննջեցից Սղ Դ. ( սաղ · դ · 8 · ) ըստ որոյ ասեմք մեռաւ խաղա_ ղութբ , կամ հանգեաւ խաղաղութբ · երթայք խաղաղութբ Սղ · ըստ այսմ է իմանալի և աստ զոնէ ըստ երրորդական նշանակութե ։

Իսկ թէ յորում դէմն խօսի զայս · 'ի դէմն հօր , թէ 'ի դէմն որդւոյ, կամ հոգւոյն սրբ , ծանիր · զի որովհետև ուսուցանելիքն դնէ՝ թէ 'ի հոգւոյն սրբ առեալ էր զայն խոստումն , բանքն սիմէոնի ըստ լըման խոստմանն 'ի նոյն դէմն կարդեալ լինելին · իսկ ըստ լըման աղերսանաց 'ի դէմն հօր · այլ ըստ լըման խորհրդոյն՝ 'ի դէմն որդւոյ· զի հոգին սբ՝ որ յայտնեաց նմա զխորհուրդն զայն , յայտնեաց և զմիութի ածութեն որդւոյ ընդ հոգւոյն սրբ և ընդ հօր ։ Սասի և 'ի հայցելն 'ի հոգւոյն սրբ՝ հայցէր և յորդւոյ , և 'ի հայցելն յորդւոյ՝ հայցէր և 'ի հօրէ ։ Զայս եդեալ 'ի մէջ բերէ առաջ և զկատարումն պատմաբանու_ թեն ասելով ։

Զի տեսին աչք իմ զփրկութիւն քո ։ Սիմէոն ոչ ետես 'ի լըման զփրկութի աշխարհի մարդկան , այլ զփրկիչն որ լըացուցանելոց էր զայն փրկութի · բայց տե_

մի ասէ զփրկութիւնսն. զի նովին իսկ՝ որով զփրկիչն
ետես, ետես եւ զփրկութիւն նոցա. վն զի որպէս 'ի
տեսանել մարդոյ ուրեք զլոյս, նովին իսկ համա-
րի տեսանել եւ զլուսաւորութի տեղւոյ՝ յորում է
լոյսն, սոյնպէս եւ 'ի տեսանել սիմեոնի զփրկիչն
'ի մէջ ժղի, նովին իսկ ետես զփրկութի ժղի, եւ
յայտնի դիտաց այնու, թէ ահա հանդերձեալ
է ած փրկել զնոսա 'ի գերութենէ սատանայի, եւ 'ի
բռնութենէ մահու, եւ 'ի ծառայութենէ մեղաց, եւ մի-
րածել զորդիս մարդկան յարքայութի երկնից :
Ոմանք բառիւս փրկութեան՝ իմանան աստ զփրկիչն.
եւ ըստ այսմ իրապէս եւս ասի տեսանել սիմեոնի
զփրկութի նոյ : Իսկ քանզի այս տեսութի իբր պայ-
մանն եղեալ էր, 'ի լրման պայմանին, զի 'ի կա-
տարել տեսութեանն՝ հեռանի թէ ոչ եւս եկեաց սի-
մեոն 'ի մարմնի, այլ փութով փոխեցաւ 'ի կե-
նաց աստի, եւ գնաց առ հարսն՝ որք էին 'ի գոգն
աբրահամու :

Խորհրդաբար, ծերունին սիմեոն նկարէր յին-
քեան զհինն իէլ. կամ մանաւանդ զհին օրէնս,
որ ծերացեալն էր, եւ ոչ կարէր արդարացուցա-
նել զոք. եւ 'ի տեսանելն զլրացուցիչ իւր հասեալ,
եւ զարդարացուցիչն եկեալ 'ի տաճար, խնդրէր
'ի նմանէ արձակել, մանաւանդ թէ փոխադրել
'ի խաղաղութե օրէնս : Այնպէս մարթ է ասել եւ
զադամայ, որ ըստ յայտնութեն եղելոյ առ ինքն
ակնունէր եւ յուսով սպասէր տեսանել զփրկիչն.
եւ իբրեւ գիտաց զգալն նորա, խնդրէր արձակել
'ի դժոխոց անտի՝ որ ասի լիմպոս :

Նմանապէս, ամքին՝ որք մնային ամ ցանկան տե-
սանել զփրկութին քի, եւ արձակել 'ի խաղաղու-
թե, պարտ է նոցա նախ ըստ սիմեոնի յուսով
սպասել խոստմանն այ . երկրորդ՝ հաւատով

ըն-

ընթանալ 'ի տաճար նր, քի յայնմիկ գործս՝ յու-
րում դատանին ․ որոց է խոնարհութի, համբե-
րութի, արդարութի, ընկերսիրութի, ողորմութի, ևն ․
Երրորդ՝ սիրով առնուլ զնա 'ի գիրկս՝ քի 'ի հոգիս 'ի
ձեռն շնորհաց, ևս և 'ի ձեռն խորհրդոյ հաղոր-
դութե ։ Նաև յայնժամ կարէ մարդ ասել՝ արդ ար-
ձակես զիս զծառայ քո 'ի խաղաղութի ․ զի եհաս
ժամ տեսանելոյ զփրկութի քո ։ Նաև արդ քանզի
զայս փրկութի՝ զոր գնէ սիմէոն՝ 'ի սկզբանէ անտի
պատրաստեալ էր ած, վնկ յաւելու ասել ։

**Զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց ։** Այս
պատրաստութի ըստ երից մտածի ․ մի՝ ըստ յաւի-
տենական վճռոյն, որով սահմանեալ էր ած փրր-
կել զորդիս մարդկան 'ի ձեռն խորհրդոյ մար-
դեղութե ։ Երկրորդ՝ ըստ այլևայլ օրինակութե
այլևայլ իրաց, զորս եցոյց ած 'ի սկզբանէ ծի,
սկսեալ յադամայ մինչև 'ի քս ։ Երրորդ՝ ըստ
բազմապատիկ մարգարէութեց, որք պէսպէս բա-
նիւք գուշակեցին զայս փրկութի ։

Նաև քանզի փրկութիս այս՝ որ սկսաւ յԻէլէ և 'ի մէջ
նոցին, ոչ էր սոսկ վն միոյ ազգի, այլ վասն ամցն,
սմին իրի գնէ լինիլ՝ ամենայն ժողովրդոց, քի ա-
մենայն ազգաց ։

Բայց տես և՝ զի ոչ ասէ սոսկ ամենայն ժողովր-
դոց, այլ յաւելու և զբառդ **առաջի** յասելն ․
* առաջի ամենայն ժողովրդոց ‖ ․ զի ամցն առա-
ջի եդ ած զփրկութի իւր, և նախապէս առաջի
նի ․ և որք միանգամ կամեցան՝ գտին և առին.
և որք ոչն կամեցան՝ կորուսին ։ Ապաքէն
* փրկութի նոցա ամցն տուաւ (ասէ Իգնատիոս),
„ զի գառնն՝ որ եբարձ զմեղս ծի՝ վն ամենայն
„ ազգաց պատարագեցաւ ․ պէտք են միայն ըն-
„ ծայել հաւատս, և փրկութի նորա առաջի

« ամենայն պատրաստեալ կայ »:

Իսկ որոց արժան էր նախաժառանգ լինիլ այնմ ՚ի բաց մերժեցին . որպէս եղեն Իէլացիք . ապարքն առ նոսա եղև ՚ի սկզբան պատրաստութի գալստեան փրկչին, և ՚ի նոցունց եղև ծառայութին նորա . բայց նոքա խնքնակամ հրաժարեցան ՚ի նմանէ՝ որով ունէին լուսաւորիլ և փառաւորիլ, ձեռամբ իւրեանց առին մատուցին այլոց, այսինքն հեթանոսաց : Ի սոյն յայս հայելով սիմէոնի՝ յարէ զկնի և ասէ :

2 . Լոյս ՚ի յայտնութիւն հեթանոսաց . և փառս ժողովրդեան քում Իէլի :

Որպէս ասացաք ՚ի վերոյ, զի ամենայն ՚ի խաւարի էր՝ մինչև յայտնեցեր որդին այ . և այս խաւար առաւել տիրեալ էր ՚ի հեթանոսս քան ՚ի հրեայս . որովհետև հեթանոսք զուրկ էին յածային լուսոյ . իսկ հրեայք ընկալեալ էին յայ զլոյս օրինաց և զմարգարէութե . ուստի առաւել կարօտ էին հեթանոսք ՚ի լուսաւորիլ քան թէ հրեայք յընդունիլ : Այլ քանզի առ ընդունելութի լուսոյ՝ ընտրելութի աչաց խնդրի, ընտրելացեալ գոլով հրէից առ ածային լոյսն և առ նա լինելով խոստմանն ծագելոյ մեծի լուսոյն՝ նախ առ նոսա յայտնեցաւ՝ առ ՚ի նոքօք լուսաւորել զհեթանոսս : Եւ ըստ այսմ թէպէտ և պարտ էր սիմէոնի ՚ի սմին գուշակութե նախ զհրէից կարգել զբանն, և ապա զհեթանոսաց, բայց հայելով նորա ՚ի փոխադրութի այնր լուսոյ ՚ի հրէից ՚ի հեթանոսս՝ առ հեթանոսս վերածելով խօսի և ասէ :

Լոյս ՚ի յայտնութիւն հեթանոսաց : Կամի ասել . սա՝ զոր ՚ի գիրկս ունիմ, լինելոց է լոյս ՚ի յայտնութի հեթանոսաց . այս թէ յայտնելոց է հեթանոսաց իւ-

րև

եւ լոյս՝ առ ՚ի լուսաւորել զմիտս, հանելով զնոսին ՚ի խաւարէ կռապաշտութեան եւ ծառայութեան մեղաց . եւ ածելով զմիտս ՚ի լոյս ծանօթութեան ճշմարտին Այ, եւ ՚ի ծառայութի մեծութե նորա ։ Զայս գուշակեցին եւ մարգարէք . եւ որոշագոյն եւս եսայիաս ( · կբ · 26 · խթ · 6 · եւ կ · 3 ։ ) Զայս լուսաւորութի ընծայելով եւ հաւատացելոցս յաւուր երգելոյ ՚որ զայս բան, քն յաւուր ծննդ աւաջի, որհնեմք եւ լուցանեմք զմոմեղէնս, ՚ի խոստովանիլ, թէ տէրն մեր լոյս յայտնեցաւ մեզ՝ որք էաք ՚ի հեթանոսաց ։ Եւ բաւական չհամարեալ զայն՝ բորբոքեմք եւ զհուր, առ ՚ի ցուցանել նախ զառաւելութի եւ զպայծառութի լուսաւորութեն քնի ՚ի միտս մեր . եւ երկրորդ զպաստկութի ներգործութե սիրոյ այսր լուսաւորութե ՚ի կամս մեր, առ ՚ի յօժարիլ եւ դիմել ՚ի ժառանգութի նորին յերկինս ։ Յայս խնկ եւ ՚ի ժամ մահու լուցանեմք զճրագ առ մահճօք տագնապելոյն ՚ի մահ, քն հոգեվարին . առ ՚ի ցուցանել, թէ որ հանդերձեալս է մեռանիլ՝ զնայ ժառանգել զնա, որ ծագեցաւ լոյս հեթանոսաց ։ Եւ զի ծագումն այսր լուսոյ առ հեթանոսս՝ ՚ի սկզբան անդ փառք եղեւ ինի, վն յաւելու ասել ։

Ի— [illegible] ԻԼԷ ։ Կամի ասել · դու՝ որ եկիր փրկել զմարդն, ոչ միայն լուսաւորելոց ես զհեթանոսս, այլ եւ փառաւորելոց ես զժողովուրդ քո զիէլ ։ Արդարեւ փառաւորութի մեծ՝ ք զոր չէր հնար ունիլ ազգի ումեք՝ այն է ծնանիլ յիւրմէ զանստեղծ լոյսն, եւ ունիլ զնա առ իւր իբրեւ զփեսայ, եւ նովաւ լուսաւորել զազգս . ( եսայ · խը · 13 · եւ կ · 1 = 3 · եւ կբ · 2 ։ ) Եւ սակայն նուաղեցոյց ինել, մանաւանդ թէ չիջոյց զփառս իւր . եւ զնա ինքն զփառաւորիչն

մեր_

մերժեալ յիւրմէ՝ հեթանոսաց ետ զնոյն. և ինքեան ոչ այլ ինչ մնաց 'ի փառաց անտի, բայց միայն պարծել՝ թէ յիւրմէ ծագեցաւ լոյսն փառաց. և սակայն որովհետև յայսմանէ եւս հրաժարեցաւ, որչափ փառք և պարծանք կարէր ունել՝ այնչափ նախատելի գտաւ, ոչ միայն առաջի ամ̃ազգաց, այլ և առաջի հրեշտակաց, եւս և առաջի դիւաց. և զոր ոչ կամեցաւ վայելել, այլք վայելեցին, և նոքին ժառանգեցին զփառս յաւիտենականս :

Աստանօր աւարտի երկրորդ կարգ օրհնութեց աղօթարանին. և սկսանի երրորդ կարգ մարգարէական և յաղթական օրհնութեց՝ եղելոց արտաքոյ աղօթարանին յ̃ծաշնելի :

# ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ․

*Օրհնութիւնք արտաքոյ սաղմոսարանին ։*

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԺԵ․

Օրհնութիւն Յակոբայ նահապետին առ որդիս իւր կանխատե_սութեամբ բերանոյ իւրոյ, որք համարեցեալ էին հասանել նոցա և ցեղից նոցին. նա և գուշակութեամբ գալստեան Մեսիային ։ ( Ծնն․ ԽԹ․ 1 = 27 ) ։

1. Կոչեաց Յակոբ զորդիսն իւր և ասէ. Ժողովեցարուք, զի պատմեցից ձեզ զինչ պատահելոց է ձեզ 'ի վախճանի աւուրց ։

2. * Ժողովեցարուք և լուա_րուք որդիք Յակոբայ. լուարուք Իսրայէլի հօր ձերում ։

3. * Ռուբէն անդրանիկ իմ, դու զօրութիւն իմ և սկիզբն որդ_ւոց իմոց. խստութեամբ գնայցես. և խստութեամբ յանդգնութեամբ թշնամանե_ցեր ։

4. * Իբրև զջուր մի եռասցես. զի ելեր յանկողինս հօր քո. յայն_ժամ պղծեցեր զանկողինն' յոր ելեր ։

5. * Շմաւոն և Ղևի եղբարք կատարեցին զանիրաւութիւն 'ի կա_մաց իւրեանց ։

6. * 'Ի խորհուրդս նոցա մի մտցէ անձն իմ. և 'ի ժողովս նոցա մի հաճեսցին լեարդ իմ. զի սրտմը_տութեամբ իւրեանց սպանին զայրս. և ցանկութեամբ իւրեանց խարթափոր արարին զցուլս ։

7. * Անիծեալ սրտմտութիւն նոցա, զի յանդուգն էր. և ոխն նոցա' զի խիստ էր. բաժանեցից զնոսա 'ի մէջ Յակոբայ. և ցրուեցից զնոսա 'ի մէջ Իսրայէլի ։

8. * Յուդա զքեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռք քո 'ի վերայ թի_կանց թշնամեաց քոց. երկիրպագա_ցեն քեզ որդիք հօր քո ։

9. * Կորիւն առիւծու Յուդա. 'ի շառաւիղէ եղեր որդեակ իմ. (եղեր) բազմեցար. ննջեցեր իբրև զառիւծ. և իբրև զկորիւն առիւ_ծու. ո՞ յարուցանիցէ զնա ։

10. * Մի պակասեսցէ իշխան ('ի) Յուդայ. և մի պետ յե_րանաց նորա. մինչև եկեսցէ նա_որոյ իւրն է հանդերձեալսն. (կամ ըստ քանի մի օրինակաց. և ըստ Եբր. մինչև եկեսցէ նմա հան_դերձեալսն). և նա է ակնկալութիւն հեթանոսաց ։

11. * Կապեսցէ զորթոյ զյաւա_նակ իւր. և զփնդանին զյաւա_նակ իշոյն. լուասցէ գինեաւ զպատմուճան իւր. և արեամբ խաղողոյ զհանդերձ իւր ։

12. * Զուարթագին են աչք նորա 'ի

'ի գինւոյ . և սպիտակ ատամունք իւր քան զկաթն :

13 . * Զաբուղոն յեզերս ծովու բնակեսցէ . և ինքն նաւահանգիստ նաւուց . և հասցէ մինչև 'ի սիդոն :

14 . * Իսաքար բարւոյ ցանկացաւ հանգուցեալ 'ի մէջ վիճակաց :

15 . * Տեսեալ զհանգիստն՝ զի բարի էր . և զերկիրն՝ զի պարարտ (էր) . եդ զուս իւր յաշխատել . և եղև այր արդիւնարար :

16 . * Դան դատեսցէ զժողովուրդ իւր իբրև զմի այր 'ի մէջ իսրայէլի :

17 . * Եւ եղիցի դան օձ դարանակալ ճանապարհի . հարկանել զգարշապար երիվարի և ընկենուլ զհեծեալն յետս :

18 . * Ես քու փրկութեան տն :

19 . * Գադ հինի եկեսցէ . և ինքն եկեսցէ հինին զհետ նոցա :

20 . * Աշերայ պարարտ հաց իւր . և ինքն տացէ կերակուր իշխանաց :

21 . * Նեփթաղիմ ծառ բարձրացեալ . արձակեսցուցանէ արմատօք . զգեղեցկութիւն :

22 . * Որդի աճեցեալ յովսէփ . որդի աճեցեալ նախանձելի . որդի իմ կրտսեր . առ իս դարձիր . զոր բանադրէին բամբասէին :

23 . * Եւ դառնացեալ անէծին՝ և ոխակալ էին ընդ նմա այր աղեղանց :

24 . * Եւ փշրեցան զօրութեամբ աղեղունք իւրեանց . և լուծան ջիլք բազկաց նոցա ձեռամբ հզօրին յակոբայ . անտի՝ որ զօրացոյց զիսրայէլ :

25 . * Յայ հօրն քո՝ և օգնեաց քեզ ած իմ , և օրհնեաց զքեզ յօրհնութիւն երկնից 'ի վերուստ . և զօրհնութիւն երկրի ունի զամ . վն օրհնութեան ստեանց և արգանդի :

26 . * Օրհնութիւնք հօր քո և մօր քո . որ զօրացան քան զօրհնութիւնս լերանց մշտնջենաւորաց , և քան զօրհնութիւնս բլրոց յաւիտենականաց , եղիցին 'ի վր գլխոյ յովսէփայ . և 'ի վր գլխոյ եղբարցն՝ որոց առաջնորդեաց :

27 . * Բենիամին գայլ յափշտակօղ . զայգունն ուտիցէ առաւօտէ . և ընդ երեկս բաշխեսցէ կերակուր :

28 . * Ամենեքեան սոքա որդիք յակոբայ երկոտասանք . և այս է զոր խօսեցաւ ընդ նոսա հայրն իւրեանց . և օրհնեաց զնոսա , իւրաքանչիւր ըստ օրհնութեան իւրում օրհնեաց զնոսա :

## Կ Ե Ր Ն Ռ Գ Ի Ր :

### Օրհնութիւն յակոբայ նահապետին առ որդիս իւր :

Յակոբ նահապետն՝ որ և կոչի իսրայէլ՝ որդի սահակայ որդւոյ աբրահամու , որպէս աւանդի 'ի գիրս ծննդոց՝ յետ պանդխտութեան բնակելոյ 'ի միջագետս առ աներոյ իւրում լաբանայ , և այս յերկրին քանանացւոց՝ զոր ած խոս-

խոստացեալ էր տալ ազգի նորա, թաղում ինչ եւ տես և կրեաց՝ ոչ միայն յօտարաց, այլ և յորդւոց իւրոց, մանաւանդ 'ի վաճառել նց զյովսէփ. և իբրև անկաւ սով մեծ յերկիրն քանանացւոց, էջ յեգիպտոս, ուր տարեալ էր յովսէփ որդի իւր՝ և բարձրացեալ յիշխանութի կառավարութեն եգիպտոսի։ Կեցեալ անդ յակոբայ զամս եօթնևտասն (Ծնն. խէ. և խթ.) և տեսեալ՝ թէ հասեալ է 'ի վախճան կենաց իւրոց յամս հարիւր քառասուն և եօթն, կոչեաց առ ինքն նախ զյովսէփ զորդի իւր. և յետ օրհնելոյ զնա՝ ընկալաւ զերկուս որդիսն նր զեփրեմ և զմանասէ 'ի թիւ երկոտասան որդւոց իւրոց։ Կոչեալ ապա և զամ որդիս իւր 'ի միասին՝ խօսեցաւ առ նս զբանս օրհնութեն այսորիկ իբրև վերջին կտակ. (Ծնն. խթ.) որպէս օրէն է բարի հօր 'ի մեկնիլն յաշխարհէ՝ աւանդել իւրոցն՝ զորս արժան է գիտել, և կարևոր 'ի պահել։ Այս կտակք կամ այս բանք յակոբայ՝ օրհնութիք կոչին՝ հայելով նախ յորդիս նորա ժբ իւրաքանչիւր վիճակի նոցին. հայելով երկրորդ յորդիս մարդկան առ հասարակ 'ի գուշակել զխորհուրդ ապագայ փրկութե նր 1685 ամօք յառաջ քան զգալ փրկչին յաշխարհ։ Զսոյն զայս կամելով աւանդել սբ գրոց՝ սկսանի ասել։

ԲԱՆ.

## Ի Ա Ն ։

1 . Կոչեաց յակոբ զորդիս իւր եւ ասէ . Ժողովեցարուք, զի պատմեցից ձեզ ինչ՝ որ պատահելոց է ձեզ 'ի վախճանի աւուրց ։

2 . Ժողովեցարուք եւ լուարուք որդիք յակոբայ . լուարուք իսրայէլի հօր ձերում ։

## Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն ։

Երկոտասան որդիք էին յակոբայ 'ի չորից կանանց. ա՛ ռուբէն . բ՛ շմաւոն . գ՛ ղեւի . դ՛ յուդա . ե՛ դան . զ՛ նեփթաղիմ . է՛ գադ . ը՛ ասեր . թ՛ իսաքար . ժ՛ զաբուղոն . ժա՛ յովսէփ . ժբ՛ բենիամին . եւ սոսա աւասիկ կարգի առաջիկայ բանդ՝ զոր ասէ ։

Կոչեաց յակոբ զորդիս իւր եւ ասէ . Ժողովեցարուք զի պատմեցից ձեզ ինչ որ պատահելոց է ձեզ 'ի վախճանի աւուրց ։ 2 . Ժողովեցարուք եւ լուարուք որդիք յակոբայ . լուարուք իսրայէլի հօր ձերում ։ Ա՛յսինքն թէ յակոբ նահապետ կամելով յայտնել որդւոց իւրոց ըզխորհուրդս սրտի իւրոյ վասն հանդերձելոցն՝ կոչեաց զնս զամենեսին առաջի իւր եւ ասէ . ժողովեցարուք եւ լուարուք զոր ունիմ ասել ձեզ . Ժողովեցարուք ասելով՝ միանգամայն եւ զամփոփել մտաց նոցա խնդրէ . եւ կրկնելովն յայտ առնէ՝ թէ մեծամեծս ունի պատմել՝ որք հանդերձեալ էին պատահել՝ եթէ 'ի ներկայն յանձինս նոցա, եւ եթէ յապագայն յանձինս այլոց . զոր որոյ դնէ 'ի վախճանի աւուրց . այս է յայսպ ժամանակի, որ մանաւորապէս հայի 'ի ժամանակ գալստեանն քի, եւս եւ նեռինն ։

Իսկ կամելով հաճոյական եւ ընդունելի առնել զբանն, զհայր լինել իւր նց առաջի առնէ՝ ասելով .

լով · լուարուք Ի՛ղի հօր ձերում : Եւ յունկնդիր լի-նել նոցա՝ սկսաւ խօսիլ առ իւրաքանչիւր 'ի նո-ցանէ զիւր արժանն՝ ոմանց խստութ, և ոմանց քաղցրութ : Եւ նախ առ անդրանիկ իւր կար-գելով զբանն ասէ :

3 · Ռուբէն անդրանիկ իմ · դու զօրութիւն իմ և սկիզբն որդւոց իմոց · խստութեամբ գնայեր, և խստութեամբ յանդգնութեան թշնամանեցեր :

4 · Եփրեր իբրև ջուր մի եռայցես · զի ելեր յանկողինս հօր քո · յայնժամ պղծեցեր յանկողինն՝ յոր ելեր :

Ռուբէն՝ որ թարգմանի տեսանող զորդի, կամ տեսուչ որդւոյ, էր առաջին ծնունդ յակոբայ, զոր ծնաւ նմա լիա առաջին կին նր · ուստի և ըստ ծննդեանն եղև անդրանիկ որդի նր · որով և ասի սկիզբն որդւոց՝ կամ սկիզբն զօրութ՝ կամ սկիզբն վաստակոց · զորմէ տես 'ի մեկն · սաղ · ՀԷ · 53 · և ՃԴ · 35 : Եւ զի զօրութ առն նախ անդրանկան հաղորդի, վասն այսորիկ կոչի և զօրութ հօր :

Այս պատիւ անդրանկութ մեծ էր յոյժ յառա-ջին ժամանակսն յամենայն ազգս՝ մանաւանդ 'ի հրէայս · այլ ռուբէն եղծեաց զայն՝ անիրա-ւելով 'ի հայր իւր · զի ննջեաց ընդ կնոջ նր ընդ-բաղլայ · որով մեղաւ չարաչար ընդդէմ այ, և ընդդէմ հօր իւրոյ · մեղաւ և ընդդէմ իւր կրկնակի · մի՝ պղծելով զմարմին իւր · և մի ևս՝ անկողնով հօր իւրոյ : Այն իրի և հայր նր 'ի 62 ամի հա-սակի նորին զպատիւ անդրանկութ նր յերես նորա հարկանելով՝ գանգատանօք իմն խօսի առ-նա, և ասէ :

Ռուբէն անդրանիկ իմ · դու զօրութ իմ և սկիզբն որդ-ւոց իմոց · խստութբ գնայեր, և խստութբ յանդգնութե

թշնա

Թշնամանեցեր ։ Կամի ասել · ով ռուբէն անդրանիկ
որդի իմ, առաջինն 'ի մէջ որդւոց իմոց, և ըս֊
կզբնաժառանգ զօրութեան իմոյ, կամ է երբ" և
առոր" սկիզբն ուժոյ իմոյ · ոչ ապաքէն առաւել
քան զամենն քեզ արժան էր հաւատարմութե լի֊
նել է իս, և է կողակիցս իմ իբրև է մարս քո ·
էէր ապա խստութե գնացեր · զի էէր զայնպիսի
խիստ գործ գործեցեր · որով յանդգնեցար՝
նախատինս դնել հայրութե իմում, և որդիութե
քում ։ Ուր 'ի լատ" փխկ ասելոյ * խստութե գնա֊
ցեր [illegible] ‖, գրի · * առաջին 'ի տուրս, մեծագոյն
յիշխանութե ‖ · իբր թէ ասէր · պարտ էր լինել
քեզ իբրև առաջին տուրք տուեալ ինձ յինէն, և
հրամանատար իշխան եղբարց քոց, և տան իմոյ ·
բայց դու է հակառակն եղեր · վս որոյ յանեծս
փոխէ զբան իւր, և ասէ ։

4 · Որպէս ջուր մի եռասցես ։ Ջուրն 'ի բղխելն
անդ 'ի սկզբան յակնանէ աղբերն, եթէ իցէ
կենդանի և առատ, եռացմամբ իմն ելանէ՝ յա֊
ռոգանել և 'ի զովացուցանել · ապա թէ իցէ
մեռեալ և նուազ՝ իբր թշուառմամբ հոսէ · և զի
ռուբէն անդրանիկ գոլով՝ իբրև ջուր բղխեցաւ
զառաջինն յաղբերէ անտի 'ի յակոբայ, յայս
նմանութի առնու զնա յակոբ · և փխկ ասելոյ,
մի զօրասցիս, և մի առատասցիս, դնէ մի եռա֊
ցիս · զի մի լիցիս իբրև զջուր կենդանի ոռոգա֊
նել և զովացուցանել ։

Ոռոգանելն հայի 'ի գործ պաշտաման քահա֊
նայութե, որ անկ էր ռուբէնի՝ որովհետև նա
էր անդրանիկ · տես 'ի մեկն · սաղ · Հ̃Թ · 4 ։ Իսկ
զովացուցանելն հայի 'ի տարածումն օրհնութեն
աբրահամու՝ որ է օրհնի 'ի ռուբէն կատարե֊
լոց էր, օրհնել 'ի զաւակէ նր ամ ազգաց ։ Բայց


նա

նա մ՚ա անարժանութեն զրկեցաւ ոչ միայն յերա-
ւանց անդրանկութե, այլ և 'ի քահանայութէ և
յօրհնութէ ազգաց · զքահանայութեն պաշտօն
ժառանգեաց ղևի, և զօրհնութին ազգաց հան-
դերձ թագաւորութ ժառանգեաց յուդայ ։ Նա և
թէպէտ շմաւոնի ևս անկանէր մին 'ի սոցունց,
զի էր երկրորդ որդի, բայց վ՚ա չարաչար անի-
րաւելոյ նր 'ի յուզեփ, և ջանալոյ ջնջել զմին
'ի ցեղիցն էլի ոչ կարաց ժառանգել զայն ։
Նուազմամբ ջուրց մարթ է իմանալ աստ որո-
շակի և զսերունդ ռուբէնի · յոր մի այս բան
դնի փոխանունութե ձևով · որպ թէ ասացեալ
էր · փէնկ զի հեղեր զջուր քո անխրատութե, մի
եռասցի 'ի քեզ ջուր օրհնութե իբրև 'ի ծառ՝ յա-
ձեցուցանել զքեզ յազգի քում · և այս յիրաւի
կատարեցաւ 'ի ռուբէն · ըստ որում ցեղ նորա
նուազ գտաւ քան զեղբարցն իւրոց · յոր մի թեր-
ևս 'ի լատ՛՛ այս բանդնի այսպէս · * հեղար
իբրև զջուր · մի ածեսցես ‖ · կմ քն ասոր · * հո-
սեցար որպ ջուր · մի ևս կացցես ‖ · կամ քն եօթ ·
* թշնամանեցեր (զիս, և եղեր) որպ ջուր · մի
եռասցիս ‖ · ուր որպ տեսանի՝ զբառդ թշնամա-
նեցեր՛ եդեալ են մերքս 'ի վերջ նախընթաց
համարոյ · այլ մի բանին յանի 'ի նոյն հայի ·
և եթէ կամիցիմք զթարգմանութի մեր համա-
ձայնեցուցանել այսմ՛՛ կարեմք զբնաբան մեր
ընթեռնուլ այսպէս · իբրև զջուր (հեղար) և
արդ մի եռասցիս · և այս ևս ըստ վերոյգրելոցդ
մեկնի · տես և զոր ունիմք ասել · 'ի ժզ ·
օրհն · Յ ։
Ամանք թարգմանեն այսպէս · * խրամատեցար ·
իբրև զջուր մի մնասցես ‖ · ըստ որում ռուբէն
խրամատեաց զպարիսպ այսր բնական օրինաց ·

որոյ վ՟ն ոչ յորդեցաւ իբրև զջուր, այլ նուա-զեցաւ, և ը̅ խիք յերկիր սուզաւ. որպ՟ եղև 'ի դաթան և յաբիրոն, որք էին 'ի ցեղէն ռու-բենի ։

Ելլ յեբր՝՝ դնի · * անձնապարութիւն (չարութե՟ քո 'ի պղծութի՟՝ եղև եռացմանդ) որպ՟ ջրոյ · մի՟ լցցիս բարձր ‖ · ուր բառդ բարձր՝ ակնարկէ 'ի նախ-ատացեալ բանն, ուր փխկ ասելոյ · * խստութ՟ ,, գնացեր, և խստութ՟ յանդգնութե՟ թշնամանե-,, ցեր ‖, յեբր՝՝ դրի · * բարձրութի՟ բարձրացու-ցանելոյ և բարձրութե՟ հզօր ‖ ։ Որ քաղդէական մեկնաբանութի՟ն տարածէ յերկս · իբր թէ ա-սէր · դու ունէիր ժառանգել զբարձրութի՟ անդ-րանկութե՟, զբարձրութի՟ քահանայութե՟, և զբարձ-րութի՟ թագաւորութե՟. բայց քանզի անզգամեցար, մի՟ բարձրասցիս 'ի դոսին ։ Ոյս եդեալ յակո-բայ՝ կրկին եւս յաւելու առաջի առնել զպատ-ճառ այսր խստաբանութե՟, և ասէ ։

Եթէ ելեր յանկողինս հօր քո · յայնժամ պղծեցեր յանկո-ղինն՝ յոր ելեր ։ Այս հայի յայն՝ զոր եդ 'ի վերոյ ըստ մերումս, թէ * խստութ՟ գնացեր, և խըս-տութ՟ յանդգնութե՟ թշնամանեցեր ‖. զոր և ինք-նին մեկնէ ասելովն. ելեր յանկողինս իմ, որ էր անկողին հօր քո. և յանկողնի անդ պղծեցեր զկին իմ զբաղղա, որ էր կին հօր քո. որով ոչ միայն զրկեցար յօրհնութ՟ հօր, այլ և յիմ բա-րութեց անդրանկութեդ ։ Տես ընթերցող՝ թէ մի միայն մեղք յորպիսի և յորքան բարեաց զրկեաց զռուբէն. տես եւս թէ քանի՛ մ՟ծ եղև եղեան մեղաց նր յանխրատելին անդ առ հայր իւր, որոյ վասն զայսպիսի անէծս ընկալաւ. տես և զեր-կայնմտութին յակոբայ, որ զամս երեսուն լռեալ կաց՝ և ոչ յանդիմանեաց զռուբէն. զի ակն ու-նէր

նէր, թէ գուցէ ապաշխարեսցէ ։

Խորհրդաբար, յայս բան յակոբայ գուշակի ոչ եռալ որդւոցն իւր իբրեւ զջուր կենդանի առաջի տն ։ վ՛ զի թեպէտ եւ ընտրեցան նք յն իբրեւ անդրանիկ. ըստ ելից. դ. 22. * որդի անդրանիկ իմ իսրայէլ||, բայց յանդրանկութէ անդխատուք գնացին, եւ յանդգնեցան թշնամանս դնել տն ։ զի ելին յանկողին խորհրդոյ մարդեղուե նր. եւ պղծեցին, քն 'ի մահ խաչի մատնեցին զմարմին նր. որով եւ եղծին նաեւ զկտակն նր ։ Դարձեալ եւ հերետիկոսք անխրաւելով պէսպէս հայհոյութբ 'ի մարմին նր, եւ զանազան չարեօք 'ի հարսն նր յեկեղեցի նր, ոչ եռացին ջրով շնորհաց, այլ անարգեցան եւ դատապարտեցան ։

Նմանապէս, անդրանիկ որդիք եկեղեցւոյ քն եկեղեցականք չար վարուք իւրեանց դայթակղեցուցանելով զհաւատսն քի, քն զհաւատացեալսն իբրեւ զաղջիկ՝ որ թարգմանի հնացեալ կամ ամբոխեալ, ոչ միայն կորստեան նց եղեն եւ լինին պատճառ, այլ եւ դատապարտութե անձանց իւրեանց. որոյ վն փխկ եռալոյ ջրով շնորհաց՝ ունին այրել հրով դժոխոց ։ Ապա խօսելոյն յակոբայ ը ռուբենի անդրանկան իւրում, դառնայ խօսիլ զշմաւոնէ եւ զղեւեայ՝ ասելով.

5. Շմաւոն եւ Ղեւի եղբարք՝ կատարեցին զանիրաւութիւն 'ի կամաց իւրեանց ։

6. 'Ի խորհուրդս նոցա մի՛ մտցէ անձն իմ. եւ 'ի ժողովս նոցա ոչ հաճեսցին միտք իմ. զի սրտմտութբ իւրեանց սպանին զարս, եւ ցանկութբ իւրեանց կարթակոտոր արարին զցուլս ։

7 · Անիծեալ սրտմտութեն նոցա, զի յանդուգն էր. և ոխութեն նոցա՝ զի խիստ էր. բաժանեցից զնոսա 'ի մէջ յակոբայ և ցրուեցից զնոսա 'ի մէջ իսրայէլի ։

Շմաւոն՝ որ թարգմանի հնազանդ, էր երկրորդ որդի յակոբայ, և էր յայնժամ 61 ամաց ։ Իսկ ղևի՝ որ թարգմանի զօդեալ, էր երրորդ որդի յակոբայ, և էր յայնժամ 60 ամաց. երկոքեան եւս ծնեալք 'ի լիայ, որոց քոյր էր դինա ։ Արդ֊ պատմէ ածաշունչն 'ի գիրս ծննդոց · լդ · 1 = 30. Թէ 'ի կալ յակոբայ հանդերձ որդւովք իւրովք յանդիման քաղաքին սիկիմայ՝ ել դինա 'ի զըննին դստերաց տեղւոյն ։ Տեսեալ զնա սիւքեմայ որդւոյ եմովրայ իշխանի երկրին այնորիկ, եառ 'ի ներքս, և ննջեաց ընդ նմա ։ Խօսեցաւ ապա հայր նր ը յակոբայ՝ տալ զդինա 'ի կնութի սիւքեմայ ։ Իսկ շմաւոն և ղևի եղբարք դինայ դաւաճանութբ ետուն պատասխանի, թէ ոչ կարեմք տալ, մինչև ոչ թլփատեսցին արք քաղաքին ։ Եւ 'ի յանձն առնուլ նոցա՝ թլփատեցին զամենին ։ Եւ եղև յաւուրն երրորդի՝ մինչդեռ էին նոքա 'ի ցաւսն՝ շմաւոն և ղևի մտին 'ի քաղաքն, և կոտորեցին զամ արու. և հանին անտի զքոյր իւրեանց զդինա. և գերեցին զկանայսն, և աւար առին զքաղաքն զամ ։

Յայսմ անզգամ գործողութե մեծապէս անիրաւեցան շմաւոն և ղևի. զի թէպէտ սիկիմացիք արժանի գտան այնպիսի հարուածոյ, բայց նոքա չարութբ գործեցին զայն. որպէս ունիս տեսանել 'ի համարն 7 ։

Ասացի՝ արժանի գտան. զի այն գործ սիկիմացւոյ՝ զոր արարին անիրաւ յափշտակութբ 'ի բռնաբարել անդ զդինա 'ի նախատինս որդւոյն իւր ։

ռելի, պարտաւոր արար զնա այնմ մեծի հարուա-
ծոյ: Նա թէպէտ սուքեալ էր՝ որ գործեաց զայն
գործ, բայց նոքա եւս եղեն նմա խորհրդակիցք,
եւ կամակիցք, եւ ձեռնտու. որպէս ցուցանեն
գործք նց, եւս եւ բանքն յուդիթայ. (Թ. 3.)
Որոյ վն խակ Թոյլ ետ ած շմաւոնի եւ ղեւեայ վա-
ռել 'ի նախանձ վրէժխնդրութե, եւ կոտորել
զնս. եւ ժառանգել զերկիր նոցին, եւ սեպհա-
կանել զայն հօր իւրեանց. (Ծնն. ԽԲ. 22.) Աս-
տի եւ յուդիթ՝ որ էր յազգէ շմաւոնի, զհա-
ռաճածիլ սիկիմացւոցն դնէ լեալ իբր հատու-
ցումն այ արդարութե, եւ իբր գործ նախանձայու-
զութե. Նաեւ եւ զթշուառութիւն իւյ համարի իբրեւ
սուր տուեալ յայ 'ի ձեռս շմաւոնի եւ ղեւեայ, 'ի
վրէժխնդրութի անարգեն յափշտակութե նոցա.
(յուդիթ. Թ. 2. 3.)
Նա սակայն զայն սուր թշուառութեն իւյ չարա-
չար վարեցին շմաւոն եւ ղեւի իւրեանց անողոր-
մութբ. ոչ արարին եւ աստրեւտանեայք, եւ այլք
ընդ այլս. (եսայ. Ե. 5=11.) յայս հայելով
յակոբայ՝ ասէ:
Շմաւոն եւ ղեւի եղբարք՝ կատարեցին զանիրաւութի 'ի կա-
մաց իւրեանց: Նղեալս կոչէ զնոսա ոչ միայն ըստ
ծննդեանն, այլ եւ ըստ միաբանելոյ սոցին 'ի չար
գործ անդր. զոր անիրաւութի կոչէ, կամ ըստ
այլոց թարգմանութեց՝ անօթ անօրէնութե. զի էր
ըղձեալ ամ իրաւանց, եւ պարունակօղ անօրէ-
նութե. եւ այն՝ ոչ եթէ 'ի տգիտութէ կամ 'ի տկա-
րութէ, որ ներելի ողորմութե է, այլ 'ի կամաց իւ-
րեանց ասէ, զի կամակար մտօք՝ որոց դնի յեօթ"
եւս եւ յասոր", գխտելով զայրն, եւ իբրեւ զչար
գործելով. որում գժուարաւ լինի գտանել ըղ-
ձութի. որոյ վն ամ դնի յեբր", զելն նց եւս

 սու-

սուսեր անիրաւութեան կոչէ յակոբ. և յանհնա_
րինս պժգացեալ ը̅ նմ̅, ամենևին հեռի կացու_
ցանէ զանձն 'ի նոցանէ ասելով.

6. 'Ի խորհուրդս նոցա մի մտցէ անձն իմ. և 'ի ժողովս
նոցա ոչ հաճեսցին միտք իմ. զի սրտմտութբ̅ իւրեանց սպա_
նին զայրս. և ցանկութեամբ իւրեանց կարթահատ արարին
զցուլս: Խորհուրդ կամ ժողով ասելով՝ իմանայ
նախ զայն խորհուրդ և զայն ժողով նոցա, զոր
արարին երկոքին նոքա առ 'ի կոտորել զսիկիմա_
ցիս. և զի գաղտ 'ի հօրէ իւրեանց արարին զայն՝
վնկ դնէ, թէ մի մտցէ անձն իմ յայն խորհուրդ
նոցա. և ը̅ այնմ բայց մտցէ՝ ոչ է իմանալի յա_
պառնին, այլ յանցեալն. որպ̅ թէ եղեալ էր.
ոչ եմուտ անձն իմ 'ի խորհուրդս նց̅. որպ̅ դնի
յասոր" և յարաբ: Իմանայ երկրորդ՝ զի և իցէ
խորհուրդս և զժողովս նոցա 'ի հասարակի. որպ̅
թէ ասէր. որովհետև անիրաւս խորհեցան նք̅,
և վ̅ անիրաւութեան ժողովեցան, որով և եղեն
անօթ անօրէնութեան, այսուհետև ոչ խորհրդոց
նց̅ եղէց խորհրդակից, և ոչ ժողովս նոցա կա_
մակից. քանզի որպ̅ և տեսի, չարուք̅ ժողովեալ
նց̅ 'ի խորհուրդ՝ ըստ չար խորհրդոց իւրեանց 'ի
սրտմտութն̅ վառեցան, և յարձակեալ 'ի վերայ
արանց և կանանց՝ կոտորեցին զնս̅ 'ի սուր սուսե_
րի: Իսկ յաւելլով՝ թէ * կարթահատ արարին զց_
ուլս||, ցուցանէ՝ թէ կոտորեցին և զիշխանսն՝ որք
օրինակին 'ի ցուլ. կամ թէ կոտորեցին զայս_
պիսի արս՝ որք էին իբրև ցուլք կորովիք. բայց
քանզի ըմբռնեալ էին նոքա 'ի ցաւս, 'ի ցաւսն
անդ գտեալ զնս̅ տկարս՝ կարթահատ արարին
զնս̅. որ̅ չարաչար սպանին զնս̅:

Յեբր" և 'ի լատ", յասոր" և յարաբ" փխնկ ցլու_
դնի պարիսպ. որով ցուցանի՝ թէ ապականեցին
և

և զքաղաքն պարսպաւոր․ կամ փոխաբերութ̃
եամբ՝ նշանակի թէ կոտորեցին և զիշխանս նո-
ցա , որք էին իբր պարիսպ քաղաքին ։

Այլաբանօրէն , այս խորհուրդ և ժողով՝ զոր
յիշէ աստ յակոբ՝ հայի 'ի չար խորհուրդս դպ-
րաց և փարիսեցւոց , որք ըն̃ հաստատելոյ թագ-
մաց՝ էին 'ի շմաւոնէ․ հայի և 'ի չար ժողովս
քահանայապետաց , որք էին 'ի ղևեայ․ 'ի խոր-
հուրդս և 'ի ժողովս 'ոց ասէ , զոր արարին ընդդէմ
քի՝ մի՛ մտցէ անձն իմ , և մի՛ իմիք հաճեսցին
միտք իմ ։ Սովին ոչ շատացեալ յակոբայ՝ յաւե-
լու ասել ։

Է․ Անիծեալ սրտմտութիւն նոցա՝ զի յանդուգն էր․ և
բարկութիւն նոցա՝ զի խիստ էր ։ Ոչ անիծանէ յակոբ
զշմաւոն և զղևի , այլ՝ զսրտմտութ̃ նց̃ , և զո-
խութ̃ նոցին․ կամ ըն̃ այլոյ՝ զգայրոյթ նոցա․ զի
նոքին եղեն պատճառ հարուածոյ սիկիմացւոցն․
և այն՝ ոչ̃ ասացաք 'ի համարն․ Ե ։ անիրաւութ̃․
Ըստ զի այն սրտմտութ̃ նց̃ և ոխութ̃ նոցին այնչափ
կատաղեցոյց զնոսա , մինչև զսուր նախանձու
վրէժխնդրութե̃ դարձուցանել նց̃ 'ի չարութ̃ ըն̃
քաղաքն գլխոց․ մի՝ զի չունէին նոքա իշխանութ̃
գործելոյ ինքնագլուխ զայն գործ առանց հրա-
մանի հօր իւրեանց․ երկրորդ՝ զի զամենեսին և
ըն̃ յանցաւորսն կոտորեցին , և զքաղաքն ողջոյն
յաւարի առին , և գերեցին․ երրորդ՝ զի սրտեն
ցուցեալ էին նց̃ , թէ ներեն յանցանաց նոցին ,
և յետ զայս առնելոյ՝ ընդդէմ ներողութե̃ գործե-
ցին․ չորրորդ՝ զի խաբէութ̃ արարին՝ դաւաճա-
նելով և ստելով ուխտի և դաշին իւրեանց․
հինգերորդ՝ զի 'ի նիւթ ծանր յանցանեցան ,
զօրէնս թլփատութե̃ գործի առեալ չարաչար
կրից իւրեանց․ վասն որոյ իրաւամբք անիծանէ յակոբ

զկատաղութիւն նոցա ·

Այս է աւասիկ անխրատ վրէժխնդրութի որդւոց մարդկան, զոր և տեսանեմք աչօք մերովք · զի վ՛ն խնդրելոյ զվրէժ 'ի միոջէ՝ յափշտակին երբեմն 'ի կատաղութի, և զազգ մի ողջոյն ոտնակոխ առնեն կամ ցրուեն · վ՛յ և ինքեանք պարտաւոր գտանին ցրուելոյ և ոտնակոխ լինելոյ · ը՛ որոյ և յակոբ զցրուումն երկոցունց եղբարցս այսոցիկ գուշակելով խմ՛ ասէ ·

Բաժանեցից զնոսա 'ի մէջ յակոբայ · և ցրուեցից զնոսա 'ի մէջ իսրայէլի ·

Կամի ասել · որովհետև 'ի մի խորհուրդ միաբանելով գործեցին նք զայսպիսի չարիս, արարից՝ զի մի ևս միաբանեսցին, այլ ցրուեսցին 'ի մէջ ազգին իւր՝ ոմանք աստ և ոմանք անդ · որպէս յայտնի երևի այս յազգին ղևեայ · որում ոչ տուաւ յատուկ ժառանգութի յերկրին քանանու, այլ ցրուեալ լինել 'ի մէջ այլոց ցեղից · Նոյնպիսի ինչ եղև և յազգին շմաւոնի · որոյ բնակութի եղև 'ի ցեղին յուդայ · (յեսու · ժԹ · 2 · 9 ·) և մի բաժին նր յետ ժամանակաց գնաց բնակեցաւ առ գերարայ · (ա՛ · մնաց · դ՛ · 39 ·) և մասն ինչ 'ի սէիր · (ա՛ · մնաց · դ՛ · 42 ·)

Այլ ասելի է և՝ թէ այս անէծք ղևեայ և շմաւոնի փոխեցաւ նց յետոյ և յօրհնութի · զի ղևնի ժամանակաւ իբրև աղ համեմիչ սփռեցան նք 'ի մէջ իէլի · ք՛զի ղևի կարգեցաւ լինել կառավարիչ ժողովրդեան այն 'ի հովուել զնս 'ի հոգևորս · Նոյնպէս և շմաւոն · զի բազում դպիրք և օրէնսուսոյցք 'ի ցեղէ անտի հանդոյն ղևտացւոց և քահանայից սփռեալք ընդ ա՛մ ցեղս իէլի՝ ուսուցանէին և մարզէին զնս յօրէնս այն · տես և զոր ունիմք ասել յօրհնութի · ժդ՛ · 6 · Առա_

տեալ

տեւալ յակոբայ զբանս զկծմանց՝ միանգամայն և օրհնութեանց առ երիս որդիս իւր՝ դառնայ օրհնել զյուդայ երկար բանիւք. և նախ ասէ.

8. Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռք քո 'ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որդիք հօր քո:

Յուդայ՝ որ թարգմանի խոստովանութիւն և գոհութիւն, էր չորրորդ որդի յակոբայ ծնեալ 'ի լիայ. և յօրհնելն անդ էր 59 ամաց: Սա 'ի մէջ եղբարց իւրոց հաճոյ գտաւ հօր իւրում գրեթէ յամի՝ եթէ ծառայութ՟բ և եթէ խորհրդատուութ՟բ. և ջանայր պահել զյովսէփ 'ի վտանգանէ՝ ոչ միայն վ՟ն գթալոյ 'ի վ՟ն նր՟, այլ և վասն խնայելոյ 'ի հայր իւր, և վ՟ն ամբողջ պահելոյ զթիւ երկոտասանից՝ որք ունէին ցեղին յազգս. վասն որոյ և արժանի գտաւ մեծի օրհնութե՟ հօր իւրոյ:

Զայս օրհնութիւն՝ ռուբենի արժան էր ժառանգել. զի էր անդրանիկ. բայց ո՟պ ասացաք 'ի վերոյ՝ յանիրաւելն նր՟ առ հայր իւր՝ զրկեցաւ: Զկնի ռուբենի շմաւոնի վայել էր, և ապա ղեւեայ. բայց յանիրաւելն և նոցա՝ անկաւ յուդայի. ըս՟ որում և արժանի գտաւ այնմ. ուստի լիաբերան իմն բերկրանօք օրհնէ զնա յակոբ և ասէ:

Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարք քո: Որպէս ասացաք՝ յուդա թարգմանի խոստովանութիւն, գովութի՟ և գոհութի՟. և զի մայր նր՟ լիա 'ի ծնանելն զնա՝ գովեաց զա՟ծ և գոհացաւ զն՟յ, զայս անուն եդ նմա 'ի գովութիւն ն՟յ. զայն՝ առիթ առեալ յակոբայ՝ յայլ իմն դէմս փոխէ զնշանակութիւն անուան նորա 'ի գովութիւն յուդայ. իբր զի զոր եդ

եդ լիա ըստ ներգործական նշանակութեան 'ի գովել զնա՝ սա դնէ ըստ կրաւորական նշանակութեան 'ի գովել յուդայ · ըստ որոյ բառդ օրհնեսցեն՝ դնի աստ փոխանակ գովելոյ, որպէս թէ եղեալ էր · գովեսցեն դու՝ գովեսցեն զքեզ եղբարք քո · և խոստովանելով զմեծութիւն քո և զարժանաւորութիւն երկիր պագցեն քեզ՝ ոչ իբր բռնաւորի, այլ իբրև հարազատ մեծի եղբօր · յոյր սակս իսկ յաւելու ասել · * որդիք հօր քո ‖ ։

Այսպիսի օրհնութիւն թէպէտ և անդրանկան վայելէ · զի անդրանկան է ըստ ունել զայսպիսի գովութիւն, և առնուլ զառաջին երկրպագութիւն յեղբարց իւրոց, բայց ոչ ապացայք, որովհետև նա անարժան գտաւ այսմ, սմա տուեալ եղև · որով և անդրանկութիւն ըստ անուան միայն մնաց 'ի ռուբէն · իսկ ըստ իշխանութեան էանց 'ի յուդա որդւոց յորդիս, 'ի լինել նորա և որդւոց նորին իշխան 'ի վերայ այլոց ցեղից, և 'ի զօրանալ նոցա առաւել քան զնոսա ։ Եւ զայս ցուցին նոքա յայլ և այլ գործս · նախ՝ 'ի մուտս կարմիր ծովուն՝ յորում ցեղն յուդայ առաջնորդութեամբ ամինադաբայ իբր գլուխ այլոց ցեղից ըստ աւանդելոյ հրէից խրախուսեաց զկնի մովսէսի · և յետ մահուանն մովսէսի և յեսուայ՝ սոյն այս ցեղ յուդայ եղև առաջնորդ 'ի պատերազմունս · որպէս է տեսանել 'ի դատ · ա · 3 ։ Յանցանել ապա ժամանակաց՝ 'ի նոյն ցեղէ թագաւորեաց դաւիթ, և զկնի սողոմոն, և յետոյ այլք որդւոց յորդիս՝ մինչև 'ի գերութիւն բաբելացւոց · յորում յարեաւ զօրաբաբէլ, և այլք զկնի նորա 'ի նոյն ցեղէ · հուսկ յետոյ թագաւորն թագաւորաց քրիստոս ։ Եւ զի ամենեքին սոքա գտան զօրաւորք, և հարին զթշնամիս, սմին իրի յաւելու ասել ։

Ձեռ

Ձեռն քո 'ի վերայ բարկութեան թշնամեաց իմոց ։ Այս ոճ բանի ցուցանէ նախ՝ հալածել զթշնամիս, ըստ որում հալածումն թշնամեաց 'ի թիկանց լինի. ցուցանէ երկրորդ՝ իշխել 'ի վերայ թշնամեաց. որպէս որոյ բառդ բարկութեան՝ կամ որպէս երբ" և սար" և արագ" և լոտ" բառք պարանոց՝ հայի 'ի թիկն մատուցանել, որ 'ի հպատակիլ և 'ի պարանոց խոնարհեցուցանել. ուստի նոյն լինի այս բան՝ եթէ ասէր. դու հալածեսցես զթշնամիս քո. և իշխեսցես նոցա, եւ։ Իւ այս ոչ միայն վասն յուդայ իմացեալ լինի, այլ և վասն որդւոց նորա ըստ վերոգրելոյդ ։ Այս էբր միջանկեալ ինչ եղեալ ասա յակոբայ՝ յարէ զկնի և ասէ ։

Երկիր պագցեն քեզ որդիք հօր քո ։ Սովին ցուցանի հպատակութիւն այլոց ցեղից՝ ցեղին յուդայ. որ և առաւել կատարեցաւ 'ի դաւիթ և 'ի սաղոմոն. որպէս որում 'ի թագաւորել նոցա՝ հպատակեցան նոցա այլ ցեղք ազգին իսրայելի ։

Իսկ թէ ոչ ասէ որդիք մօր քո, այլ՝ հօր քո, զայդ 'ի պահանջմանէ բանին դնէ. զի ոչ միայն եղբարք նորա էին 'ի նոյն մօրէ, այլ յայլ և այլ մարց. ուստի եթէ ասէր մօր դնէր, զայլս 'ի բաց առնուլ երևէր. իսկ հօր դնելով՝ զամենայն տայ իմանալ ։

Օրհնեսցեն քեզ եղբարք քո ։ Այլաբանօրէն, յուդայիւ նշանակի քրիստոս, որ եղև գալուստ երկնաւորաց և երկրաւորաց, խոստացեալ յամենայն ազգ կենդանի. զոր և օրհնեն եղբարք նորա, որպէս որդիք մարդկան. և երկիր պագանեն նմա որդիք հօր նորա՝ որպէս հրեշտակք ։ Նաև զի ձեռք նորա, որպէս զօրութիւն նորա եղև 'ի վերայ թիկանց թշնամեաց իւրոց, որպէս 'ի վերայ բանսարկուին դիւաց 'ի հալածելն զնա, և 'ի վանել, եւս և 'ի վերայ տիրասպան հրէից և 'ի վերայ ամենայն հալածչաց իւրոց ։

Կորէ

Կոչէ աստ վարդան՝ թէ ըստ պատասխանի 'ի յուդա նկարագրէ յակոբ զորդին այս. զի 'ի չորրորդում կարգի տեսեալ զնա յորդիս իւր, և զանունն նր̄ յօդեալ չորիւք տառիւք՝ նովին եւեթ ասէ զարարչագործն չորեքնիւթեայ բնութեան եկեալ 'ի նոյն, որ եկեալ յառնուլ զչորեքնիւթեայ բնութիւն, և նովին երկրպագիլ յամ արարածոց, մինչ յեղբարց իւրոց ։ Այլ թէ քանի՞ հզօր է- ցէ նա, նմանութ̄բ իմն յայտ առնէ ասելով ։

Թ · Կորիւն առիւծու յուդայ · 'ի շառաւիղէ ելեր որդեակ իմ · ելեր բազմեցար ննջեցեր իբրև զառիւծ, և իբրև զկորիւն առիւծու, ո՞ յարուսցէ զնա ։

Փոխանակ առիւծ բառիդ՝ որ երիցս կրկնի աստ, յեբրայականն երեք բառք դնին. յառաջնումն՝ կուռ, այսինքն առիւծ՝ որ դեռևս կորիւն է. ըստ որոյ 'ի մերս դնի կորիւն առիւծու ։ Յերկրորդումն՝ արիէ, այսինքն առիւծ՝ որ զօրացեալ իցէ և կատարեալ. ըստ որոյ 'ի մերս դնի աստ՝ առիւծ ։ Յերրորդումն՝ լաւի, որով նշանակի արուոս, այսինքն առիւծ՝ որ իցէ հզօրեղասիրտ. որպիսի է երբեմն կորիւն երիտասարդացեալ. ըստ որոյ 'ի մերս եդեալ է դարձեալ՝ կորիւն առիւծու ։

Ըստ սոցին երիցս առիւծ կոչելով յակոբայ ըզյուդայ՝ կամի երևելի իմն և մեծ ցուցանել զնա ըստ պէսպէս յատկութեանց առիւծու, այսինքն ըստ մեծահանձնութեան, ըստ հզօրեղութեան, ըստ աներկևանութեան, ըստ անպարտելի զօրութեան, և ըստ յաղթող հանդիսանալոյ, զորս տեսանէր յակոբ 'ի յուդայ, և յազգ նր̄. վ̄յ ասէ նախ ։

Կորիւն առիւծու յուդայ ։ Կամի ասել. իբրև առիւծ տեսանեմ զքեզ յուդա. բայց ոչ եթէ

իբրև

իբրև ծնրացեալ առիւծ, այլ իբրև կորիւն, որ
իբրև առոյգ և զուարթ: Զայս առնէ ոչ միայն
յանձն յուդայի հայելով, այլ և 'ի ցեղ նորա,
որ իբրև առիւծ գտաւ յամի 'ի մէջ երկոտասան
ցեղիցն: Իսկ պատճառ այսպիսի լինելոյ այսր
ցեղի՝ է այն՝ զոր յարէ ասելով:

'Ի ՇԱՌԱՒԻՂԷ ԵԼԵՐ ՈՐԴԵԱԿ ԻՄ: Այս ո՞ր բանին ցու-
ցանէ զազնուութի սերնդեան, կամ զազնուակա-
նութի բնաւորութե՝ ըս որում ելեալն 'ի շառաւիղէ
ազնիւ և քաջասուն լինի. և այսու ցուցանի ազ-
նուութն և առոյգութիւն յուդայ 'ի վերայ այլոց
ցեղից:

ՆԱԵՒ դիտելի է, զի յեբր" փոխանակ շառաւի-
ղի՝ դնի աւար, յասելն. * յաւարէ ելեր ‖ որ լինի
'ի լատ" դնի՝ * յաւարի ելեր ‖. իբր թէ ասէր.
յաւարէ յաւար ընթացար. կամ ելեր 'ի վերայ
թշնամեաց քոց յաւարի առնուլ, և յաւարէ ան-
տի մեծանալ և փառաւորիլ. և այսու ցուցանի
նախ՝ յաղթական լինել ցեղին յուդայ ընդդէմ
թշնամեաց ազգին Իլի. ցուցանի երկրորդ՝ հա-
նապազորդութի յաղթութե նր 'ի փոքունէ ա-
մեծն յառաջելով. զորոյ զօրինակն եցոյց դա-
ւիթ յանձն իւր. զի որ նախ զօրանայր և յաղ-
թող լինէր գայլոց և առիւծուց, զօրացաւ զկնի
ընդդէմ ահեղախրոխտ ախոյեանին իւրոյ բարձ-
րաբլուրն գողիաթայ. և այսպ յաւար ելանե-
լով հանապազ յաւելիս ազգին Իլի յաղթող
հանդիսացաւ. և յետ թագաւորելոյ 'ի վր ցե-
ղին իւրոյ և բոլոր ազգին՝ յաւարի եհան զհակա-
ռակորդս իւր 'ի բազում տեղիս. և սփռեաց զնս,
և բազմեցաւ 'ի վր իշխանութե նց, և հանգոյց
զիսրայէլ:

ՆՍՏԵՐ, ԲԱԶՄԵՑԵՐ, ՆՆՋԵՑԵՐ ԻԲՐԵՒ ԱՌԻՒԾ, ԵՒ ԻԲՐԵՒ
կո-

զչուրէան ամէնծա. ո՞ յարուցանիցէ զնա (կամ ո՞ յարուցա-նէ զնա)։ Բնայքդ եղեր, բազմեցար և ննջեցեր, որպէս և բայք նախընթաց բանիցն՝ յապառնին են իմանալի. բայց վ(ասն) ստուգութե իրացն 'ի կա-տարեալն դնէ. և կամի ասել. որպէս առիւծ յետ յափշտակելոյ և տիրելոյ որսոյն՝ բազմի, և ս և 'ի քուն լինի, և ոչ ոք համարձակի մերձենալ 'ի նա կամ յարուցանել, այլ ինքնին յառնէ. նոյն-պէս և դու յուդա՝ եղեալ 'ի վ(երա)յ ազգաց՝ տիրես-ցես նոցա, և բազմեսցիս 'ի վ(երա)յ նոցա, և ննջես-ցես, մ(ինչ)եւ հանգիցես յիշխանութե քում. և թշնամիք քո զարհուրեալ 'ի զօրութենէ քումմէ՝ մի ևս հա-մարձակեսցին 'ի վ(երա)յ քո։

Այս գուշակութի յերաւի կատարեցաւ յորդիսն յուդայ, որք իբրև առիւծ հանդիսացան ընդդէմ այլազգաց. յոյր սակս իսկ աւանդի յումանց՝ թէ 'ի թագաւորել դաւթի և յետ նորա սողոմոնի և այլոց որ զկնի, եդին 'ի դրօշակս իւրեանց զնշան առիւ-ծու 'ի ցոյց զօրեղութե ցեղի իւրեանց։ Նաև որպէս յիշի ուրեք՝ նաև թգւրն եթէովպացւոց յոլհան-նէս անուն՝ համարելով զինքն իջեալ 'ի նոյն ցե-ղէ (ըստ որում ասեն 'ի հրովարտակս նորա) եդ և նա զնշան առիւծու 'ի դրօշակ իւր՝ խաչ 'ի ձեռին. որպէս էր և 'ի դրօշակն վենետիկեցւոց առ 'ի ցոյց նշխարաց մարկոսի։

Այլաբանօրէն 'ի քս կատարեցաւ այս ամենայն, զի իբրև առիւծ ել 'ի շառաւիղէ յուդայ. ըստ ո-րում առանց սերման ծնաւ 'ի կուսէ իբր 'ի շա-ռաւիղէ. և կոչեցաւ առիւծ 'ի տանէ դաւթի. զի էր իբրև առիւծ հզօր ընդդէմ թշնամեաց իւ-րոց, ըստ ընդդէմ դիւաց և մահու. և ապրեաւ 'ի նզէ զազգ մարդկան. զորմէ տես 'ի մեկն սաղ-մսէ. 18։ Նաև 'ի խաչ. և բազմեցաւ 'ի նմա տա-րած.

բամբասմամբ ձեռաց և ոտից. և ննջեաց ՚ի նմին. ք̃ մեռաւ ՚ի նմին իբրև ՚ի ցանկալի գահոյս : Ննջել ասէ՝ հայելով ՚ի հանգստեանս առիւծու. զորմէ ասեն՝ թէ ՚ի ննջելն ՚ի բաց ունի զաչսն. որպէս և տէրն մեր ՚ի ննջելն՝ ք̃ ՚ի մեռանելն ը̃ստ մարդկութե՝ ՚ի բաց ունէր զաչս ա̃ծութե, ք̃ թէ կենդանի էր ը̃ստ ա̃ծութեն. * Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ ||. որով և ՚ի յառնելն անդ ՚ի գերեզմանէ՝ ոչ կարօտացաւ օգնականի ումեք ՚ի յարուցանել, այլ ինքնին յարեաւ իբրև տէր կենաց և մահու ;

Նաև դարձեալ և յերկինս ՚ի համբառնալն իւրում, և բազմեցաւ ընդ աջմէ հօր. և յաւուրն յետնումունի բազմել յաթոռ դատաստանի. և ո յորուցանիցէ զնա. զի ոչ գոյ այլ ոք դատաւոր գերագոյն ՚ի բողոքել յատեան նորա. այլ ինքն գոլով գեր ՚ի վերոյ քան զա̃մն, ինքնին և եթ ունի զատել և յանձնել յաթոռոյ անտի : Իսկ զորդ- քանզի զխոստումն գուշակութեն յակոբայ համայն ՚ի ք̃ս ակնարկէր, յայս հայելով գուշակէ և ըզ- ժամանակ ծագման նորա որոշակի, և ասէ.

10. Ոչ պակասեսցէ իշխան ՚ի յուդայ. և ոչ պետ յերանաց նորա. մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն. (կամ ը̃ստ քանի մի օրինակաց և ը̃ստ տպեալ ա̃ծաշնչին և ը̃ստ հ̃որկ եօթ", մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն) . և նա է ակնկալութիւն հեթանոսաց :

Քան զայս մեծագոյն ինչ ոչ կարէր յակոբ խօսել առ յուդա. զի ՚ի սմա բովանդակիւր լրումն օրհնութեն տյ, ՚ի խոստանալն անդ, թէ յազգէ ծլի հանդերձեալ է ծագել փրկիչ ազգի մարդկան. զորոյ զկատարումն ՚ի յուդա սեպհականէ

աստ

սատ յանկոյս․ և զփրկիչն զայն՝ ակնկալութ հե-
թանոսաց անուանէ, ասելով ։

Մ՝է պահպանեսցի իշխան ՚ի յուդայ, և մի պետ յերանաց նորա․ մինչև եկեսցէ նա, որոյ էր է հանդերձեալսն․ և նա է ակնկալութիւն հեթանոսաց ։ Արդ սա է ասել․ հաստատեսցի օրհնութիւն մյ և օրհնութիւն իմ՝ ՚ի ցեղն յուդայ․ որով և մի պակասեսցի ՚ի ցեղէ անտի նորա իշխան ՚ի վերայ ազգին հրէից, կամ թէ այլոց՝ (բաց յեօթ) դաւազան թէ իշխանութ հրէից․ և մի պետ, թէ ինքնագլուխ որ ՚ի սերնդոց նորա ՚ի մէջ ազգին․ կամ թէ երբ՞ և թէ որպէս՞ ևս և թէ ասոր՞ օրէնսդիր, թէ այնպիսի իշխան՝ որ ինքնին կարիցէ զօրէնս դնել, և թէ օրինացն սպասաւորել և առաջնորդել․ յոր միտ յեօթ՞ և ՚ի լատ՞ առաջնորդ դնի ։

Եւ այս տևեաց ոչ սակաւ ժամանակ ։ Եւ ՚ի պակասիլ և ՚ի սպառիլ իշխանութ ցեղին յուդայ եկեսցէ նա՝ որոյ է թագաւորն իւր․ թէ է մեսիայ․ որոյ են հանդերձեալքն․ և նա է ակնկալութիւն հեթանոսաց ։

Աստանօր երեք ինչ կան մասնաւորապէս քննելի և լուծանելի․ առաջինն է ՚ի բանդ՝ ոչ պակասիլ իշխանաց յուդայ․ երկրորդն է ՚ի բառդ՝ հանդերձեալքն․ երրորդն է ՚ի բառդ՝ ակնկալութ հեթանոսաց ։ Հայեսցուք աստ յառաջինն՝ զոր ասէ ։

Մ՝է պահպանեսցի իշխան ՚ի յուդայ․ և մի պետ յերանաց նորա ։ Ծանիր՝ զի մինչև ՚ի քս ոչ պակասեցաւ իրաւունք իշխանութ և պետութ ՚ի մէջ հրէից․ ՚ի պակասիլն՝ տիրեաց նոցա հերովդէս ասկաղոնացի, որ չէր յազգէն իւրն, այլ ՚ի հեթանոսաց․ որ և յայտնի տեսեալ՝ թէ պակասեալ է իշխան յազգէ անտի, հրատարակեաց զանձն՝ թէ

իթ ինքն

ինքն էր մեսիայ , և Թէ յիւրեան լրացաւ մարգարէ-
ութիւն յակոբայ . յայս իսկ բազումք անսացին նմ իբրև
մեսիայի . յորոյ անուն հերովդիանոսք կոչեցան .
Այլ աստ ընդէմ եղանի այն՝ զի յակոբ նահա-
պետս ոչ 'ի հասարակի խօսելով , այլ 'ի ցեղն յու-
դայ հայելով գուշակեաց՝ ոչ պակասիլ իշխանաց
ցեղին յուդայ 'ի մէջ նր՛ մինչև 'ի գալ մեսիային .
իսկ իշխանութի ցեղին յուդայ ոչ տևեաց մինչև
ցայն ժամանակ , քանզի առ գերութբն բաբելա-
ւոց և յետ գերութեն 'ի ծերակոյտ հրէիցն էանց .
և ապա 'ի մակաբայեցիս , որք չէին 'ի ցեղէն
յուդայ . Այլ այդ չէ ինչ . զի լուսաւորք իշխա-
նութեն սեփականեալ էր ցեղին յուդայ ըստ առա-
ջիկայ գուշակութեն յակոբայ , և ըստ անստելի
խոստմանն այ եղելոյ առ դաւիթ ( սաղ . ծր̃ . 25 .
ձլ̃մ . 12 ) . Նաև յատուկ աթոռ Թգրութեն ( այն
է եղմ ) ցեղին յուդայ էր սեպհականեալ 'ի դաւ-
թայ անուն . և միայն գործածութի այնր իշխա-
նութե եղև 'ի ծերակոյտս և 'ի մակաբայեցիս .
և այն՝ յանուն յուդայ . զի յետ գերութեն բաբե-
լացւոց՝ իէլացիք կոչէին յուդայ , կամ յուդայ-
եանք , և այլազգ օրէն եահուտի՝ կամ ը̃ս հնչման
եբրայեցւոց եհուտիմ . այլ 'ի մեզ գրի հրեայ՝
առեալ յեբրայական բառէս եւտէա , ո̃ր է եբ-
րայեցի . իսկ պ̃ձն յուդայեանք կոչելոյ նց յայն
ժամ՝ այն էր՝ զի գրեթէ միայն ցեղն յուդայ ել 'ի
բաբելոնէ ընդ սակաւուց ոմանց ցեղին ղևեայ
և բենիամենի , և այլոց քանի մի ցեղից . յորմէ
բովանդակ ազգն նր՛ յուդայեան կոչեցաւ .
Աստի և մակաբայեցիք Թէպէտ և էին 'ի ղև-
եայ , բայց իբրև յուդայեանք և իբրև ցեղք յու-
դայ կմ իբրև զօրք յուդայ տիրէին մինչև 'ի հե-
րովդէս ասկաղոնացի . Թող զայն՝ զի և ցեղն ղև-

եայ, յորմէ էին մակաբայեցիք, խառնեալ էր ը̃ ցեղն յուդայ, ուստի և իբր յուդայեանք կա-րէին տիրել. որպէս և տիրեցին իսկ։

Իսկ յորժամ եառուն հռովմայեցիք զայն իշխանութիւն և զօրութիւն ՚ի ձեռս հերովդի, պակասեցաւ յայնժամ իրաւունք իշխանութեան և պետութեան ՚ի յուդայէ և ՚ի բոլոր ազգէն հրէից. և ՚ի պակասիլն անդ՝ եկն այն՝ որ գալոցն էր, յս̃ քս̃. ՚ի 35 ամի իշխանութեան հերովդի, յետ 1685 ամաց այսր գուշակութեան. և յայսմանէ ապացուցանի՝ թէ ճշմարտիւ եկեալ է մեսիայ. ապա թէ ոչ՝ այս մարգարէութիւն յակոբայ համարիւր առասպելաբանութիւն։

Իսկ այն կրկնումն՝ զոր դնէ յակոբ. * մի պակասեսցի իշխան ՚ի յուդայ և մի պետ յերանաց նր̃ ‖, զհաստատութիւն խրատն ցուցանէ. և կամ թէ առաջին հաստատեան հայի յայնս՝ որք ՚ի ցեղէ անտի իշխեցին. և երկրորդն յայնս՝ որք յանուն այնր ցեղի պետ կարգեցան, մինչև եկն քս̃։

Խորհրդաբար՝ այս բան հայի ՚ի հաստատութիւն իշխանութեան եկեղեցւոյ մինչև ՚ի միւսանգամ գալուստն քի̃. իբր զի ոչ է պակասելոց իշխան և պետ յեկեղեցւոյ, մինչև միւսանգամ եկեսցէ որդին այ̃։ Հայեսցուք և յերկրորդն՝ զոր ասէ։

Մինչև եկեսցէ նա. որոյ էրն է հանդերձեալն. կամ ըստ այլ ձեռագրաց, * մինչև եկեսցեն նմ̃ հանդերձեալքն ‖։ Բառդ հանդերձեալ՝ ՚ի մէջ բերէ աստուածոր զայն անձնայն, որք լինելոց էին յանձն քի̃, և զքո̃րն և զկնոյ քի̃. և այս յայտ է յերկուց. մի յայնմանէ՝ զի ասէ, մինչև եկեսցէ նա՝ որոյ իւրն է. և մի եւս՝ յայնմանէ՝ զոր յարէ զկնի՝ թէ նա է ակնկալութիւն հեթանոսաց։ Իսկ շարադրութիւն առաջիկայ բանիդ՝ պարզի այսպէս.

մինչև

մինչև եկեսցէ նա, որում պատրաստեալ սահմանն հանդերձեալքն․ և նա է ակնկալութիւն հեթանոսաց․ կամ ըստ այլ ձեռագրաց․ մինչև եկեսցեն հանդերձեալքն այնմ՝ որ է ակնկալութիւն հեթանոսաց․ և այս նոյն է թէ ասէր․ մինչև եկեսցէ Մեսիայ, և որինչ Մեսիայի է․ որպէս յայտնի գնի 'ի քաղդէական մեկնաբանութեն, յասելն․ * մինչև եկեսցէ Մեսիայ․ որոյ է թագաւորութիւն՝ որ գալոցն է ‖:

Ըստ որոյ լուսաւորիչն մեր 'ի գիրս Ագաթանգեղոսի յերիս տեղիս, և նոյն յակոբ Մծբնայ հայրապետ․ 'ի ճառն․ ԺԷ․ ընթեռնուն․ * մինչև եկեսցէ այն՝ որոյ իւր է թգ̃ութիւն ‖․ սոյնպէս ընթեռնու և վարդան 'ի մեկն՝՝ ծնն․ որպէս և իգնատիոս վարդապետ․ ղուկ․ ա․ թէ * որոյ իւր է իշխանութիւն ‖:

Իսկ յեբր՝՝ փոխանակ բառիս հանդերձելոյ, կամ թգ̃ութեան, կամ Մեսիայ՝ գրի․ שילה սիլօ, կամ շիլօ, յասելն․ * մինչև եկեսցէ սիլօ ‖․ կամ * մինչև 'ի գալուստ շիլոյի ‖․ իսկ այս բառ ըստ արմատոյն առեալ թարգմանի՝ որդի․ ուստի և երբայականն առաջի գնի այսպէս․ * մինչև եկեսցէ որդին ‖․ բ̃ թէ մինչև եկեսցէ նա, որում մնայ բուն ժառանգութիւն յուդայեան իշխանութեան, կամ որոյ է հանդերձեալ իշխանութիւն․ կամ որում պատրաստեալ է հանդերձեալ թգ̃ութիւն : Աստի եօթանասունք թարգմանեցին․ * մինչև եկեսցէ, որում ամբարեալ է ‖․ կամ * մինչև եկեսցէ՝ որում հանդերձեալ է ‖․ կամ ըստ այլ օրինակաց․ * մինչև եկեսցեն ամբարեալքն նմա ‖․ իսկ ասորիք թարգմանեցին․ * մինչև եկեսցէ նա՝ որոյ իւր է այն ‖․ և արաբացիք․ * մինչև եկեսցէ նա՝ որոյ է ինքն ‖:

Թարգմանս յայս միտ լուսաւորիչն մեր այլուր ըն-թեռնու. * որոյ իւր է ‖ ։ Որպէս և Սաղիկ և այլք ոմանք 'ի մերոց ընթեռնուն. * մինչև ե-կեսցէ' որում կայն պահի ‖. կամ * որում կայն մնայ ‖. դ̃ մինչև եկեսցէ նա' որում պահի' որ ինչ կայ. իսկ 'ի թարգմանութե սամարացւոց գնի. * մինչև եկեսցէ խաղաղարարն ‖ ։

Այլ ոմանք փոխեն սիլոյի' ընթերցան שילה շի-լօախ. և թարգմանեցին առաքեալ. կամ ըստ ըստ" առաքելի. կամ ըստ ոմանց' որդի ։ Այլ ամ̃քին ես 'ի նոյն հայեին, դ̃ 'ի գալուստ մե-սիայի. ըստ որում խոստովանին ոմանք և 'ի րա-բունեացն հրէից. թէպէտ և այլք կամակորեն ։

Հայեսցուք և յերրորդն' զոր ասէ ։

Նա է ակնկալութիւն հեթանոսաց ։ Աստանօր բառդ ակն-կալութիւն. որոյ փոխան յեբր գնի եքքեհաթ, առեալ լինի եթէ ներգործաբար, և եթէ կր-րաւորաբար. ներգործաբար առեալ' նշանակէ ակն ունող. որպէս և քո ակն ունէր, դ̃ սպա-սէր ժառանգել զհեթանոսս. ըստ որում ասաց ցնա հայրն երկնաւոր. * խնդրեա յինէն և տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութի ‖. (սաղ. բ. 8).

Կրաւորապէս առեալ' նշանակէ ակնունելի կամ ակնկալելի. որպէս և քո ակնունելի և փափա-քելի և յուսալի էր հեթանոսաց. ոչ զի ամ̃քին նոքա ճանաչմամբ փափաքէին, այլ զի բնական բաղձանք նոցա բերիւր գտանել փրկիչ անձանց իւրեանց, այն է քո փրկիչ մեր. որպէս երկիր անջուր և ցամաք բնականաբար բերի յարբումն ջրոյ ։ Ըստ այսմ մեկնութե գնի 'ի թարգմանու-թե ասորւոց. * նմա ակնկալցեն ազգք ‖. և յա-րաբ" գնի. * առ որ ժողովեսցին ժողովուրդ ‖ ։

Յամ

Այսմ նպաստէ և քնարգիրն ըստ թարգմանե-լոց ոմանց այսպէս. *Նմա հնազանդութիւն ժողովր-դոց‖ ։ Բայց ուղիղ ևս է թարգմանութիւն եօթ" և ըստ" նմին մերումս ։

Աստանօր հեթանոսաց ասելով ըստ մերումս, կամ ըստ այլոց՝ ազգաց կամ ժողովրդոց դնելով, ոչ է թէ 'ի բաց առնու զհրէայս, այլ զնոսին ևս իմացուցանէ. քանզի նոքա յառաջագոյն բազում իրօք առաւել էին յոյժ, ոչ այնչափ ծարաւեալ լինէին որչափ հեթանոսք. մանաւանդ զի իբր յագեալք յետս կացին 'ի նմանէ. և զտեղի իւրեանց ետուն հեթանոսաց ։ Օ այսոսիկ եդեալ յակոբայ՝ յաւելու և զայլ ևս օրհնութիւնս բանս 'ի յուդա, և ասէ ։

11. Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր, և զփնդուղէ զյաւանակ իշոյն. լուասցէ գինեաւ զպատմուճան իւր, և արեամբ խաղողոյ զհանդերձ իւր ։

Օրհնութիւն քանիցս իւրով գեղեցկախօսութբ մեծացուցանէ նախ զինքն (զ̃ զօրհնութիւն). երկրորդ՝ զօրհնողն, և երրորդ՝ զօրհնեալն ։ Օ ինքն՝ 'ի յայտ առնէ զմեծութիւն պարունակեցելոյն յինքեան ։ Օ օրհնողն՝ 'ի յայտ առնէ զմեծութիւն առատութեան և ձարտարութեան հոգւոյ նորին ։ Օ օրհնեալն՝ 'ի յայտ առնէ զմեծութիւն իրացն եղելոց առ նա ։ Այսպիսեօք իմն մերձաւորեալ յակոբայ զբան իւր՝ ասէ ։

Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր, և զփնդուղէ զյաւանակ իշոյն. լուասցէ գինեաւ զպատմուճան իւր, և արեամբ խաղողոյ զհանդերձ իւր ։ Այս բանք ըստ նկարագրին ցուցանեն զբեղմնաւորութի և զարգասաւորութի երկրին յուդայ. որպէս թէ եղեալ էր. այնչափ արգասաւոր և բերրի եղիցի բաժին

երկրին յուդայ, մանաւանդ յայգիս, մինչ զի մարթ իցէ նմ՝ կապել զյաւանակ իւր իբր զէշ իւր ընդ որթ այգւոյ իբրեւ ընդ ցից, առ ՚ի արածիլ անդ ցայգուրդ. զոր եւ բացատրելով յաւելու ասել, եւ զգնդակէ զյաւանակ իշոյն. իբր թէ անկանակած կապեսցէ զյաւանակ իշոյն զգնդակէ որթոյն. իսկ գնդակաւ որթոյն նշանակի կարծ՝ բունն որթոյ, եւ կամ այն մասն որթոյ, ուր պտկին աչք խաղողոյ. կամ՝ ըստ եբր" եւ ըստ լատ" նոյն իսկ որթն: Մարթ է եւ զ գնդակաւ իմանալ ըստ ասոր" եւ ըստ արաբ" զուռս որթոյ, յորս կապին ստաղարք. յոր միտ կամի ասել. յառատութէ որթոյն հնար իցէ նմա բեռնաւորել նաեւ զյաւանակ իւր ՚ի խաղողոյ այգւոյն գնդակօք՝ այսինքն ստպատովք հիւսելովք յուռոց որթոյ այգւոյն:

Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ այնչափ առատ եղցէ գինի յայգեաց նորա, մինչեւ կարել նմա լուանալ նովաւ զպատմուճան իւր. եւ արեամբ խաղողոյ, այսինքն նովին գինեաւ, որ է իբր արիւն խաղողոյ, կարասցէ լուանալ եւ զայլ հանդերձս իւր. զորոյ զխորհուրդն գտանես ՚ի յաջորդ համարն. զոր յաւելու գնել:

12. Զուարթագին են աչք նորա ՚ի գինւոյ. եւ սպիտակ ատամունք իւր քան զկաթն:

Զայս դնէ ՚ի ցուցանել զզօրեղութի գինւոյն, եւ զառատութի կաթինն. եւ կամելով իբր մեծին առաջի առնել զայս, ձայնարկութք խօսի, եւ ասէ: Զուարթագին են աչք նորա ՚ի գինւոյ. եւ սպիտակ ատամունք իւր քան զկաթն: Որպէս թէ ասէր. ՚ի զօրեղութե եւ ազնուութե գինւոյն զուարթասցին աչք նորա. եւ յառատութէ կաթինն սպիտակասցին ատա-

ատամունք իւր՝ յաճախ ըմպելով զայն ։
Փոխաբերաբար՝ այս բանք ը̄ վարդանայ հայրն
'ի հաստատութ իշխանութ ցեղին յուդայ . ըստ
որում կապեցանս ը̄ իւր՝ կամ յուէտ ը̄ դա-
ւիթ՝ իբրեւ ը̄ որթ զժողովուրդն իւր իբրեւ զյա-
ւանակ . կապեաց և զգնդակն կամ զքուռնոյ, մ̄
զազգէն, կամ զզաւակն նորա զորդիս ժողովր-
դեանն ։ Նա գինեաւ հարկաց զորս առնոյր 'ի
ժողովրդենէ՝ լցոյց զամ̄ պէտս զգեստուց և
զարդուց իշխանութեն . և 'ի նոսին զուարթացան
աչք նր̄ . և զի արդարութ̄ առնոյր զհարկն՝ յու-
տելն զայն՝ իբրեւ զկաթն վայելէր ։

Այս բանք սկզբնաբար և տիրապէս հայրն 'ի
քս̄ . որպ̄ մեկնեն նք հարք առ հասարակ . ըստ
որում քս̄ նախ առաջին կապեաց զէշ իւր, մ̄
զազգն հրէից ը̄ ինքն իբր ը̄ որթ յայգւոջ իւ-
րում մ̄ յեկեղեցի իւր՝ կարգանօք հաւատոյ և
սիրոյ . կապեաց ապա 'ի նոյն զյաւանակ իշոյն՝
այսինքն զազգս հեթանոսաց, որ դեռեւս յաւա-
նակ էր . զի չէր կապեալ 'ի դանդամանութ օրէ-
նաց . կամ թէ չէր բեռնաւորեալ օրինօք . և
զսոսա կապեաց առն զգնդակն . որով ցուցանի՝
թէ 'ի ձեռն առաքելոց՝ որք էին ուռ որթոյն քսի՝
կապեաց զնոսա ը̄ ինքն իբր ընդ ամենահաստա
գնդակ, կամ իբր ը̄ ամենաբարի որթ . մ̄ որոյ
յերբ" գնի . * ը̄ որթ ամենաբարի զմատակ էշ
իւր † . մ̄ որում հեթանոսք 'ի մատակութ̄ էին ։
Զայսոսիկ արար նրն մեր այնու՝ զի լուաց զգե-
նեաւ պատմուճական արեամբ իւրոյ զպատմուճան
իւր, այսինքն զմարմին իւր ։ Յայս խորհուրդ
յափշտակեալ եսայեայ՝ աղաղակէ . * իսկ այս
„ ով է՝ որ գիմեալ գայ յեդովմայ . կարմրութ
„ ձորձոց իւրոց 'ի բոսորայ (մ̄ կարմրութ հրի-

,, ձանի ) գեղեցիկ պատմուճանաւ ‖: Եւ ապա հարցանելով նմա ասէ. * Ո՞ւ էր կարմիր են ձորձք քո իբրև հնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ ‖. (Եսա. կգ. 1. 2.) ը̃ որում 'ի լինելն հնձանս կարմրին ձորձք հնձանահարի: Արդ ո̃պ զիրական մարմին իւր իբրև զպատմուճան ներկեաց արեամբ իւրով, սոյնպէս և զբարոյական մարմին իւր՝ այսինքն զեկեղեցի իւր՝ զոր իբրև զհանդերձ էառ զիւրև, մաքրեաց նովին արեամբ՝ որ 'ի խաչին, և որ 'ի բաժակին:

Իսկ զոր յաւելու. * զուարթագին են աչք իւր 'ի գինւոյ, և սպիտակ ատամունք իւր քան զկաթն ‖, այս նախ 'ի քն̃ հայի, և ապա յեկեղեցին նր̃: 'Ի քն̃ հայելով ցուցանէ՝ թէ նա յետ լուանալոյ զմարմին իւր արեամբ, և յետ մեռանելոյ և թաղելոյ՝ զուարթացաւ յաչսն, 'ի յառնելն անդ 'ի մեռելոց, և յերևիլն իւրոցն զուարթագին աչօք: Եւ այս զուարթուն աչաց նր̃ էր ասէ 'ի գինւոյ, այսինքն 'ի սաստիկ սիրոյ: Մարթ է առլին իմանալ և զամենահայեաց տեսութի նր̃, եւս և զնախախնամութի նորին զուարթագին գթով, և անձառ սիրով՝ որ այլաբանի 'ի կարմիր. ը̃ որոյ յեբր" և յասոր" կարմրագոյն դնի. իսկ 'ի լատ" և յարաբ" գեղեցկագոյն: Իսկ ատամամբք նշանակին իմաստութի և խնամք նր̃. որովք ծամեալ զպատգամս իւր՝ իբրև զկաթն մատոյց առաքելոց, և նոքիմբք այլոց: Կարծ-ատամամբք կարեն նշանակիլ նոյն իսկ բանք բերանոյ նր̃, սպիտակացեալ ամենայնը̃ վարդապետութը̃:

Եկեղեցի հայելով՝ ցուցանէ, թէ 'ի ձեռն արեանն քնի զուարթացան աչք եկեղեցւոյ՝ այսինքն են նր̃ առաքեալքն, կամ նոյն իսկ եկեղե-

ցի

ցի յաչս իւր՝ 'ի տեսանել զանտեսանելին . և սպիտակացան ատամունք իւր , այսինքն քարո_զիչք և վարդապետք՝ 'ի մանրել նց̃ զխստութի սրտից ։ Նմանապէս առեալ՝ ատամամբք նշա_նակին խորհուրդք մտաց բարեպաշտից 'ի ծա_մել զբանն նոյ, և 'ի սպիտակենալ նովաւ իբր կա_թամբ ։ Սա վերջ տուեալ յակոբայ օրհնու_թեանն յուդայ՝ դառնայ առ զաբուղոն և ասէ ։

13 . Զաբուղոն յեզերս ծովուց բնակեսցէ . և նա նա_ւահանգիստ նաւուց . և ձգեսցի մինչև 'ի սի_դոն ։

Զաբուղոն՝ որ թարգմանի բնակութի կամ յա_ջողումն Ճանապարհի՝ էր տասներորդ որդի յա_կոբայ ծնեալ 'ի լիայէ . իսկ թէ ընդէր աստ դնէ 'ի հինգերորդումն , որպ̃ և մովսէս 'ի վեցերոր_դումն՝ ոչ ունիմք տալ պատասխանի ինչ պատ_ճառ . իսկ ըստ խորհրդոյն մտածեալ ասեմք՝ թէ զայս կարգ եդ հայելով 'ի քս̃ ըստ երից . մի՝ զի քս̃ յերկրին զաբուղոնի յղացաւ և սնաւ , զի̃ 'ի նազարեթ՝ որ էր 'ի մասին զաբուղոնի . երկ_րորդ՝ զի յայնմ երկրի 'ի թաբոր երևեցոյց ըզ_փառս իւր յայլակերպութեն անդ . երրորդ՝ զի անդ 'ի կափառնաում սկսաւ նախ քարոզել . յոր հայի և բանն եսայեայ . թ . 1 . յասելն . * Ըմպա նախ զայդ արբ , վաղվաղակի հետ արա երկիր զաբուղոնի ‖ .

Դարձեալ՝ զի բազումք յառաքելոց էին 'ի զա_բուղոնէ . ուստի և մովսէս յօրհնութեն զաբու_ղոնի և իսաքարայ յաւելու ասել զերկրէ նոցա . * անդ լր կոչեսջիք և զոհեսջիք զոհս արդարու_թեան ‖ . ( ե̃ . օրին . լգ̃ . 19 ) . վասն այսորիկ

պատ_

պատճառաւ թերևս ասաց զաւէ յակոբ ( ասեն ոմանք ) զզաբուղոն, յասելն ։

Զաբուղոն յեզերս ծովուց բնակեսցէ · և ինքն նաւահանգիստ նաւաց · և ձգեսցի մինչև ՚ի սիդոն ։ Պիտանի է՝ զի երկիր կամ բաժին ժառանգութեան զաբուղոնի ձգիւր ՚ի միջերկրական ծովէ մինչև ՚ի ծովն գալիլեացւոց · առ որով էր քաղաքն տիբերիա, և և քաղաքքն կափառնաում և բեթսայիդա, և այլ քանի մի քաղաքք ։ Նաև զի այս տեղի ունի պատուական նաւահանգիստս յեզր միջերկրական ծովու, որոց մին է ագգէ քաղաք առ կարմեղոս լերամբ, և և յեզր ծովուն գալիլեայ, սմին իրի յաւելու ասել թէ * ինքն է նաւահանգիստ նաւուց ‖ · այսինքն թէ ունի զպատեհաւոր նաւահանգիստս ։

Իսկ յասելն՝ * ձգեսցի մինչև ՚ի սիդոն ‖, բառացին ոչ ցուցանէ զշարունակութիւն սահմանութեան, այլ զծիրս հայեցուածոյս · և զնի փոխանակ բառիս դէպ ՚ի · որպէս որոշել յայտ է յեբրայականէն · ուր դնի · * և կողմն իւր ՚ի վերայ սիդոնի ‖ · իբր թէ ասէր · մի կողմն իւր հայի դէպ ՚ի սիդոն՝ այսինքն դէպ ՚ի սայտա, որ ՚ի կողմն հիւսիսոյ · որոյ և է մէջ անկանի բաժինն ասերայ · բայց զի սիդոն՝ կամ սաացեալ սայտա՝ անուանի քաղաք էր, յորմէ և բաղում վաճառականք գային յերկիրն զաբուղոնի, վասն յիշէ զնոյն աստ ։

Այլաբանօրէն, զաբուղոն՝ որ թարգմանի բնակութի կամ բնակարան, նշանակէ զեկեղեցի յեզերս ծովուց այսինքն զամենայն ազգաց · որ և է տեղի հոգեւոր վաճառուաց · յորմէ սկսաւ տէրն մեր ձեռամբ առաքելոց վաճառել զաւետարանն մինչև ՚ի սիդոն, այսինքն մինչև ՚ի թշնամիս և և ՚ի նեղիչս · ըստ որում սիդոն նեղիչք թարգմանի · ՚ի միջի

ունել

ունելով զասեր՝ ըստ զխոստումն երանութեան · ըստ որում ասեր երանութիւն թարգմանի ։ Խօսելով ապա յակոբայ զիսաքարայ՝ ասէ ։

14 · Իսաքար բարւոյ ցանկացաւ , հանգուցեալ 'ի մէջ վիճակաց ։

15 · Տեսեալ զհանգիստն՝ թէ գեղեցիկ էր · և զերկիրն՝ թէ պարարտ (էր) , եդ զուս իւր յաշխատել · և եղև այր երկրագործ ։

Իսաքար՝ որ թարգմանի վարձք կամ փոխարէն՝ էր իններորդ որդի յակոբայ ծնեալ 'ի լիայէ · և բաժին իւր եղև 'ի միջի սահմանաց այլոց ցեղից · 'ի հիւսիսոյ ունելով զզաբուղոն , և 'ի հարաւոյ զկէս ցեղին մանասէի · և զի այն սեղի իսաքարայ էր երկիր պարարտ և բերրի՝ յաճախեալ 'ի թզենիս , յայգիս , և 'ի ցորեան , յաշխատութիւն ողջին պարապեցաւ ցեղն իսաքարայ · և բարի համարեցաւ ինքեան զհանգիլ 'ի նմին , ա՛յս ասէ ։

Իսաքար բարւոյ ցանկացաւ , հանգուցեալ 'ի մէջ վիճակաց ։ Այսինքն ասել · ցեղն իսաքարայ 'ի մէջ բարի վիճակաց՝ բարի բաժին առեալ՝ ոչ ըստ այնոցիկ վիճակաց զհետ եղև նաւարկութեց և վաճառականութեց , ձկնորսութեց և պատերազմաց · այլ բարւոյ ցանկացաւ , ըստ բարի վաստակոց · որպէս է զերկիր վարել և սերմանել , արածել զխաշն և կերակրել կաթամբ նր , ոչ ելանելով յերկրէ իւրմէ , այլ յերկրի անդ կալով , և զայն՝ ինքեան շատ համարելով ·

Յեբր" փխնկ ասելոյ ցանկացաւ՝ դնի חמר խամոր , այսինքն էշ · և բանն դրի այսպէս · * իսաքար էշ ոսկորեայ ‖ · կամ ըստ յոյն" · * իսաքար էշ զօրաւոր ‖ · կմ ըստ ասոր" · * իսաքար այր հըռկայ ‖ ·

կայ ‖. կամ ը͞ս ուրաք". * իսաքար իբրու մարմնին զատուցեալ ‖ : Բայց եօթանասունք զեբրայե-կան բառ. խամօռ՝ որ է, ընթերցեալ חמר խա-մառ, եղին ցանկացաւ. և թարգմանեցին. * Ի-սաքար բարւոյ ցանկացաւ ‖ : Այլ ամքին ևս 'ի նոյն հայլին, 'ի ցուցանել, թէ ցեղն իսաքարայ՝ աշխատութե պհետ լինել ցանկացաւ : Իսկ այն զի յեբր" ոսկորեայ կամ ոսկերաւոր դնի, կամ ը͞ս լատ" հզօր, ցուցանէ զզօրութիւն նո͞ց յաշխատել 'ի խնամ ծառայութիւն երկրագործութեան ո͞նց էր :

Զայս աշխատութիւն իւրեանց ցուցին և 'ի պատե-րազմունս, նախ 'ի մարտին եղելոյ ը͞դէմ սիսա-րայ (դատ. Ե. 14.) երկրորդ 'ի մարտին՝ զոր վարեցին զաբուղոնեանք վ͞ս դաւթի.(ա. մնաց. ժԲ. 33.) Իսկ թէ զինչ էր այն՝ որ յօժարե-ցուցանէր զնո͞ս վաստակել սիրով յերկրի անդ իւրեանց, յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասե-լով :

15. Տեսեալ զհանգիստն՝ զի գեղեցիկ էր. և զերկիրն՝ զի պարարտ (էր), եդ զուսն իւր յաշխատել. և եղև այր ար-դիւնարար : Զվիճակ իսաքարայ կոչէ հանգիստ, և ասէ գոլ գեղեցիկ, և զայս դնէ լինել վասն պարարտութե. տեսեալ ասէ զայսպիսի երկիր գեղեցիկ և պարարտ, եդ զուս իւր աշխատել 'ի նմին. կամ թէ տեսեալ զպարարտութիւն երկրին՝ գեղեցիկ համարեցաւ հանգչել 'ի նմին աշխա-տանօք, քան ելանել արտաքոյ նորին. վ͞սյ եդ զուս իւր յաշխատանս, ո͞ր է տ զզօրութի անձին իւրոյ յաշխատել. որով և եղև արդիւնարար. այսինքն վաստակօղ և շահօղ, և 'ի շահուց ան-տի տուօղ արդեանց, ևս և հարկաց՝ ը͞ս որում դնի յեբր", և 'ի լատ", և յասոր": Միտումն բա-նին է ցուցանել, թէ իսաքար առաւել լաւ հա-

մա-

մարեցաւ աշխատելով յերկրի խորում, և յաշխատանաց անտի հանգստեամբ կեալ, և հարկս ևս տալ այլոց, քան զմխիթարականութեան և պատերազմաց պարապելով՝ ’ի հողս և ’ի ծուխս մաշիլ։

Այլաբանօրէն՝ Իսաքարաւ նշանակի Քս, որ ցանկանալով բարւոյ մարդկան՝ հանգեաւ ’ի մէջ վիճակաց՝ որ ածուե և որ մարդկուե, միջնորդ լեալ ’ի մէջ այս և մարդկան. միանգամայն և միացուցիչ լինելով երկոց սեռից՝ երկնաւորաց և երկրաւորաց, և յաւէտ ևս հրէից և հեթանոսաց։ Նաև տեսեալ՝ թէ գեղեցիկ իմն է՝ հանգիստ տալ աշխատութեան ազգի մարդկան, և առնել զնոսա փոխել փշաբերն լինելոյ՝ երկիր բարեբեր, եդ զուս իւր յաշխատանս, որ ’ի չարչարանս և ’ի խաչ. և եղև ինքն արդիւնարար յամ բարիս։

Բարոյապէս՝ այս բան կարէ նկարագրել զկեանս բարի քրիստոնէի, և մանաւանդ զկեանս բարի կրօնաւորի, որ ցանկացեալ առաքինութեան հանգչի ’ի մէջ վիճակաց. որ ’ի մէջ կարգաւորեալ կանոնաց. և գեղեցիկ տեսեալ զպարարտութիւն հոգևոր վիճակի իւրոյ՝ տայ զուս իւր յաշխատութիւն հնազանդութեան և համբերութեան. և գործէ զարդիւնս բազումս արժանիս արքայութեան։ Տեսցուք այժմ զորս խօսի յակոբ զդանայ։

16. Դան դատեսցէ զժողովուրդ իւր՝ իբրև զմի ազգ ’ի մէջ Իսրայէլի։

17. Եւ եղիցի Դան օձ դարանակալ ճանապարհի, հարկանել զգարշապար երիվարի, և ընկենուլ զհեծեալն յետս։

18. Եւ ճաւ փրկութեան Տեառն։

Դան՝

Դան՝ որ թարգմանի դատող կամ դատաստան , էր հինգերորդ որդի յակոբայ ծնեալ 'ի բաղ֊ ղայ յաղախնոյն ռաքելայ . և զի յետ դատա֊ փետելոյ ռաքելի զյակոբ վ՛ս ոչ ծնանելոյ որ֊ դի՝ ծնեալ եղև նա , որով իբր թէ իրաւունս արար ա՛ծ ռաքելայ , վ՛նկ զայս անուն եդ նմա՝ այսինքն է դան . որ ը՟ս ասելոյ մեր այժմ նշանա֊ կէ դատաստան կամ դատող . (Ծնն . Լ՟ . 6 :) Օ այս գործ դատողութեն առիթ առեալ յա֊ կոբայ՝ յայլ իմն դատողութի վերածէ զբանն իւր , և ասէ :

ԴԱՆ ԴԱՏԵՍՑԻ ԶԺՈՂՈՎՈՒՐԴ ԻՒՐ ԻԲՐԵՒ ԶՄԻ ԱԶԳ 'Ի ԻՍՐԱ֊ ԵԼԷ : Այս բան ոչ երևի կատարեալ յայլ ազ 'ի ցեղն դանայ , բայց եթէ ըստ քաղդէական մեկնաբանութեն 'ի սամփսոն , որ 'ի յետին նե֊ ղութե որդւոցն Իլի՝ եղև վերջին դատաւոր նոցա առ ժամանակօք հեղեայ քահանայի . և դա֊ տեաց զիէլ զամս . Ի, խնդրելով զվրէժ 'ի թշնա֊ մեաց նոցա . և այն՝ այնպիսի իմն զօրութբ՝ որոյ ոչ գտաւ երբեք նման 'ի մէջ Իլի . յոր միտ յա֊ ւելու ասել :

ԻԲՐԵՒ ԶՄԻ ԱԶԳ 'Ի ՄԷՋ ԻՍՐԱՅԵԼԷ : Այսինքն թէ հզօ֊ րագոյն գտաւ քան զամ ազգս եղեալս 'ի մէջ այլոց ցեղիցն Իլի , իբրև թէ լինէր մի միայն : Այս յետին բան հայելով յայլ թարգմանու֊ թիւս և 'ի քանի մի ձեռագիրս , կարէ վերածիլ և 'ի նմանակցութի այլոց քանի մի ցեղից Իլի . յոր միտ կամի ասել . ցեղն դանայ լիցի իբրև զմի յայնց ցեղիցն Իլի՝ յորոց եղին դատաւորք . որպի֊ սին ցեղքն նեփթաղիմայ , և մանասէի , եւն . և ոչ իբրև զցեղսն ռուբենի , գադայ , շմաւոնի և ասերայ . յորոց ոչ ոք եղև դատաւոր Իլի :

Այսպէս , հայելով յայլ թարգմանութիս . զի 'ի

լատ

լատ" գրի · * ոչ և այլ ցեղ յԻէլի || · յասոր"
գրի · * որպէս այլ 'ի ցեղից Իէլի || · յեօթ" գրի ·
* ոչ զմի ցեղ յԻէլ || · յարաբ" գրի · * որպէս իւ-
րաքանչիւր ցեղ յորդւոցն Իէլի || : 'Ի բնագիրն
պարզագոյն եւս գրի · * որպէս մի ('ի) ցեղից Իէլի || ·
Սեր յերկուս ձեռագիրս մեր՝ ազգ. գրի · յաւելուլ ·
* իբրև զմի ազգ 'ի մէջ Իէլի || · Այլ թէ պնդրդ ,
յայտ առնէ աւելորդ ·

17 · Եւ եղիցի Դան օձ դարանակալ ճանապարհի , հարկա-
նել զկարճապատ երիվարի , և ընկեսցէ զհեծեալն յետս :
Կամի ասել · որպէս օձ 'ի թշնամանսն իւր ումեք՝
դարանի նմա , և կայցեալ առ ճանապարհաւ գա-
զի · և իւր անզգամնել թշնամւոյն իւր այն՝ հարկանէ
զոտս երիվարի նորա · և յանկանիլ նորա՝ յար-
ձակի 'ի վր հեծելոյն , և առնու վրէժ 'ի նմանէ՝
չարաչար խայթելով զնա , սոյնպէս եղիցի աւա-
դան , այսինքն ցեղն դանայ · որպէս տեսանի 'ի սամփ-
սոն · զի և նա զայսպիսիս գործեաց բզի անդ-
դամ ընդդէմ այլազգեաց · որպէս յորժամ հնա-
րիւք իմն վարելով ընդդէմ նոցա , կապեաց յագի
երեքհարիւր աղուեսուց զջահս վառեալս · և
արձակեաց զնս իբրև զդարանակալս յարտորայս
փղշտացւոց , և այրեաց զամենայն · տես և զայլ
գործս նորա 'ի գիրս դատաւորաց · ( Գլ · ԺԴ ·
ԺԵ · եւ ԺԶ · ) մանաւանդ զվերջինն զայն՝ յորժամ
այլով իմն հնարիւք հարկանելով զերկոսին զար-
շապարս , այսինքն զերկոսին սիւնս պալատանն , ուր
նստէին բազմութիւնք այլազգեաց՝ կործանէ զնոսա :
Նոյնպէս և զայլ գործս օձի 'ի խնունն անդ զականջս
իւր ընդդէմ թովչին դալիլայ · թէպէտ և յետոյ
տկարացաւ · ( Դատ · ԺԶ · 1 = 15 · ) : Նմանին
երբեմն և այլ որդիք դանայ համադոյն օձի զգործս
նենգութե ընդդէմ լայիսացւոց · զի դարանեցան և
կո-

կատարեցին զնոսա. և առեալ զքաղաք նոցա՝ կո_ չեցին զնա Դան. (Դատ. ԺԸ)։ Նաև թէ 'ի դա_ դարիլ այսոցիկ ամի զինչ պարտ էր առնել նոցա, և այլոց ցեղից, առաջի մատուցանէ և զայն ա_ սելով.

18. Զփրկութիւն քո ակն կալայ Տէր։ Պիտանի է՝ զի յետ մա_ հուն Սամփսոնի առ Ժամօք սակաւուք մարգա_ րէի՝ յարեան փղշտացիք 'ի վ[րայ] Իսրլի, և հարին զնոսա, և գերեցին զտապանակն Տն, և մնաց լինել իբրև այրի. յայս հայելով ասէ, թէ չունելով նոցա յայնժամ զայլ ինչ առնել՝ հարկ էր նոցա մնալ և սպասել փրկութեան Տն։ Աստի յեբր՛ և յասոր՛ և 'ի լատ՛ 'ի դիմաց ազգին Դնի այս բան՝ յա_ սելն. * փրկութեան քում ակն կալայ Տր ॥. կամ ակն_ կալայց։

Խորհրդաբար՝ ցուցանի այսու՝ թէ 'ի մատնիլ ազգի մարդկան 'ի ձեռս փղշտացւոց, այսինքն դիւաց՝ ոչ այլ ինչ մնայ նոցա առնել, բայց եթէ սպասել փրկութեան որդւոյն Այ։

Այս բանք՝ որք խօսեցեալ եղեն զԴանայ, ուղ_ ղակի ակնարկեն 'ի Ներոն, այսինքն 'ի դերաքն, որ ըստ աւանդելոյ վրդպաց՝ երևելոց է 'ի ցե_ ղէն Դանայ. և իբրև օձ նենգաւոր դարանելով բարոզելոց է զինքն ծագեալ 'ի յուդայ. և խայ_ թելոց է զդնացս մարդկան զերկվարացեալս. և սպանանելոց է զնոսա 'ի հոգիս։ Նաև զի փնկ դարանակալի՝ որպէս ասացաք՝ յայլս դնի եղջիւ_ րին՝ այսինքն այնպիսի օձ՝ որ ունի զեղջիւրս, ամլին ցուցանի՝ թէ Ներոն ունելոց է և զեղջիւրս չարս, այսինքն զզօրութիւն սուտ սքանչելեաց, և զուժեղութի սուտ իշխանութե. որովք հարկանե_ լոց է զորդիս մարդկան։

Զայս իսկ 'ի թուելն յովհաննու 'ի յայտնութե (Է. 4=8.)

Է

4 = 8 · ) զերկոտասան ազգս Իլի՝ յորոց ետես հա-րիւր քառասուն և չորս հազար կնքեալ՝ զանց առ-նէ յիշել զանուննս դանայ՝ հայելով 'ի ծնունդ-նեւոյինս · յորոյ տարագրոյց ըստ աւանդելոյ ումանց ոչ առեալ եղև օձն 'ի տապանն նոյի, վ՞ն օրինա-կելոյ յինքեան զօձն չար, այսինքն զնեռն ։ Դա-նայ այժմ յակոբ խօսիլ զգադայ, և ասէ ։

19 · Գադ հէնէ ելցէ · և ինքն ելցէ հէնէն զհետ նոցա ։

Գադ՝ որ թարգմանի զօրաւորեալ կամ զայեն-լեւս և հէն, դարձեալ և երջանիկ, կամ բաղ-դաւոր, էր եօթներորդ որդի յակոբայ ծնեալ 'ի զեղփայ յաղախնոյն լիայի ։ Օրդւոց 'որ եր-կու ինչ գրի երևելի յանձանչելի ։ Առաջինն է այն՝ զի 'որք անցեալ ընդ յորդանան՝ ետուն պա-տերազմ ընդ քանանացիս · և վկայեցուցեալ զայլ ցեղս 'ի բաժինս նոցին՝ դարձան 'ի տեղի իւրեանց յայնկոյս յորդանանու · (յեսու · իբ · 1 = 10) ։ Երկրորդն է այն՝ զի զօրացեալ սոցա ը̄ որդիս ռուբէնի և ը̄ կիսոյ ցեղին մանասէի, և յուսացեալ ք յած՝ ետուն պատերազմ ը̄ ագա-րացիս, և հարին զնոսա, և գերեցին 'ի նոցանէ ոգիս արանց հարիւր հազար · և զի յայսոսիկ գոր-ծըս զօրաւորագոյն գտան, զգործս նոցա՝ գոր-ծոց հինի նմանեցուցանելով ը̄ ստուգաբանու-անուանն՝ ասէ ։

Գադ հէնէ ելցէ · և ինքն ելցէ հէնէն զհետ նոցա ։ Այ-սինքն թէ 'ի ժառանգել որդւոցն Իլի զերկիրն քանանու որ յայսկոյս յորդանանու՝ գադ զօրաւոր-եալ ելցէ ը̄դէմ թշնամեաց նոցա ոչ թերևս յա-ռուկ ժառանգ այնր երկրի, այլ իբր օգնիչ այ-լոց ցեղից · և առ այս դնէ զայս թէ * և ինքն

ելցէ հիմնի զհետ նոցա ։ Ուր բառդ զհետ՝ ոչ ցուցանէ զկնի գալն, այլ զօգնականութիւն տալն․ որպէս թէ ասէր․ ելցէ 'ի մարտ ը՟ն նլր ը՟դդէմ քանանացւոց իբր օգնելոյ ։ Բարեբանօրէն, դատ- ներկայարդրէ յինքեան զեկեղեցի ոք, եւ և զխու- րաքանչիւր հնազանդեալս 'ի քս, որք գօտևորեալ հաւատով՝ ելանեն 'ի մարտ ընդդէմ սատանայի, և մարմնոյ, և ձի․ և բարեբախտ գտեալ ըստ այլ իմն ստուգաբանութեան անուանն գադայ՝ հա- սանեն յերանութի արքայութե ։ Այսպէս ապա յակոբ զասերայ, և ասէ ։

20 · Ասերայ պարարտ հաց իւր · և նա տացէ կերա- կուր իշխանաց ։

Ասեր՝ որ թարգմանի երջանկութի կամ մեծութի, էր ութերորդ որդի յակոբայ ծնեալ 'ի զեղ- փայ յաղախնոյն լիայի․ որոյ երկիր ժառանգու- թե էր պարարտ ցորենով, գինւով, և ձիթով, և ուրեք ուրեք ես հանքով պղնձոյ և երկաթոյ առ- սահմանաւ սարեփթայ․ զորմէ տես և 'ի ժդ․ օրհն ։ 'Ի սոսին ակնարկելով յակոբայ՝ ասէ ։ Ասերայ պարարտ հաց իւր․ և նա տացէ կերակուր իշխա- նաց ։ Հայց ասելով՝ ոչ լոկ զհացն իմանայ, այլ և զամենայն արդիւնս երկրի, որք այնչափ ա- ռատ էին և պարարտ 'ի վիճակին ասերայ՝ մինչև տալ անտի և այլոց իշխանութեց զյաճախութի կերակրոց, կամ ըստ թարգմանութե այլոց (բաց յեօթ․ և յասոր․) զփափկութիս, կմ զփափկացու- ցիչ կերակուրս ։

Բարեբանօրէն՝ առաքելաւ նշանակի որդին այ, որ ետ մեզ զհաց պարարտութե զմարմին և զարիւն իւր, ես և զօրբաբար շնորհս, և զայլ բզմ բա- րիս՝ 'ի փափկացուցանել զհոգիս մեր՝ առ 'ի յե- րա-

բաժնել զմեզ յերամսուն իւր ։ Խոստեալով առաւ եւ
զնեփթաղիմայ՝ ասէ ։

21. Նեփթաղիմ ծառ բարձրացեալ. ամենայնագանեն արմտեօք. զմենայնագանեն արմտեօք զգեղեցկութեն ։

Նեփթաղիմ՝ որ թարգմանի զուամարութն կամ պաշարումն, էր վեցերորդ որդի յակոբայ ծնեալ ՚ի բաղղայ յաղախնոյն ռաքէլի ։ Օրհնութեն այսր ցեղին եւ զբարեմասնութի ժառանգութ բանից ՚ի մէջ բերէ յակոբ՝ ասելով ։

Նեփթաղիմ ծառ բարձրացեալ՝ ամենայնագանեն արմտեօք ։ Կամի ասել. որպէս ծառ բարձրացեալ տերեւազարդ եւ լի պտղովք՝ գեղեցիկ երեւի, սոյնպէս երեւեսցի եւ ցեղն նեփթաղիմայ ՚ի մէջ այլոց ցեղիցն իւր. յոր միտ ասէ մովսէս. (Բ. օր. ԼԳ. 23.) *Նեփթաղիմ յագուրդ ընդունելութեց. եւ լցցի օրհնութ ՚ի տեառնէ ‖. տես յօրհ. ԺԳ. 23. եւ ոչ այսչափ միայն, այլեւ քան զայլս շքեղ երեւեսցի. եւ առ այս յարէ ։

Ծեգոտանեն արմտեօք զգեղեցկութե ։ Այսինքն թէ իւրովք արդեամբք գերազանցեսցէ քան զայլս. մինչեւ յերեւելն իւր՝ շքեղութբ իւրով ծածկել զշքեղութի այլոց ։

Զայլս այլազգ դնի այս բան. յեբր" եւ ՚ի լատ" գրի *Նեփթաղիմ եղջերու արձակ, եւ տուող զպատգամս գեղեցկութե ‖. ՚ի սոյն հայի եւ արաբացւոցն. իսկ յասոր" փնկ եղջերուի դնի *պատգամաւոր արագ ‖ ։ Այսքին մանաւորապէս հային ՚ի բարակ, որ էր ՚ի նեփթաղիմայ իբրեւ եղջերու արձակ. որ զօրացեալ տերամբ՝ եհար զթշնամիսն. զի առեալ ընդ իւր զնեփթաղիմացիս եւ զզաբուղոնեանս՝ եւ ընդէմ սիսարայ

զօրավարին յաքինայ արքայի , ունելով ը͞ն ին_քեան զմարգարէուհին դեբօրա . և պատերազ_մեալ յաղթեաց զօրուն սիսարայ . ( դատ . դ . 1 — 24 . ) և եւ , ը͞ն յօրինեաց ը͞ն դեբօրայ զպատ_գամս գեղեցկաբանութե՝ ը͞ն զգերապանծ զայն օրհնութի , որոյ սկզբնաւորութի է * 'ի սկսանիլ զօ_րավարացն ի͞լի ‖ . զորմէ տես 'ի Ժ՟Է օրհնութ ։ Այլ զի սովին երևեցաւ նա իբրև տունկ արձա_կեալ , կամ իբրև մի միայն տունկ մնացեալ յի͞լ , և տօ՛ղ բուսոյ ցեղին իւրոյ զգեղեցկութի , Թերևս յայս սակս 'ի Թարգմանութե եօթ՟ դնի . * նեփթաղիմ տունկ արձակեալ ( կամ տունկ վե_րաթողեալ ) տօ՛ղ բուսոյ զգեղեցկութի ‖ ։ Այլաբանօրէն՝ նեփթաղիմաւ նշանակին ք͞ն . որ իբրև ծառ բարձրացեալ ցո՛յց զարարածս ար_մատօք հոգևոր բարեաց . ևս և իբրև եղջերու_եհար զյարձակմունս դպրաց և փարիսեցւոց , և մանաւորապէս զխորախտութի դիւաց . և ետ մեզ զաւետարանական վ͞րդպուն իւր՝ գեղեցիկ քան զամենայն պատգամս ։ Պարծուցանէ այժմ յա_կոբ զբան օրհնութե իւրոյ առ յովսէփ և ասէ ։

22 . Որդեա՛կ աճեցեալ յովսէփ . որդեա՛կ աճեցեալ նա_խանձելի . որդեա՛կ իմ կրտսեր՝ առ իս դար_ձի՛ր . զոր բանսարկուք բամբասէին ։

23 . Եւ դատափետ առնէին . և ոխանային ընդ նմա արք աղեղանց ։

24 . Եւ փշրեցան զօրութ աղեղունք նոցա և լու_ծան ջիլք բազկաց նոցա ձեռամբ հզօրին յակո_բայ , անտի որ զօրացոյց զի͞էլ ։

Յովսէփ՝ որ Թարգմանի աճեցեալ և առաւե_լեալ , էր մետասաներորդ որդի յակոբայ , ծնե_եալ

եալ 'ի սարելայ , սփռեցեալ յայս հօր իւրոյ քան զամենայն եղբարս իւր . վա՛յ և խոնդ ազատելով խօսի առ նա . և այն՝ այնպիսի եղանակաւ , որով ցուցանէ՝ թէ բռնադատութբ իմն զուսպ ու_նէրնա ցայնմնայր զլեզու իւր 'ի խօսիլ առ յովսէփ . և երկայնամտեալ սպասէր , և ապա ոչ ևս կա_րելով ժուժել՝ զեղու և հեղու 'ի բանսն՝ զմի_մեամբ յարելով յասելն ։

Որդեա՛կ աճեցեալ յովսէփ . որդեա՛կ աճեցեալ նախանձելի ։

Կրկնումն բառիս աճեցեալ՝ ակնարկէ սաստ 'ի կրկին աճումն յովսէփայ յերկուս որդիս յեփրեմ և 'ի մանասէ . ըստ որոյ յեբր" և յարաբ" դնի . * որդեակ պտղատու յովսէփ որդեա՛կ աճեցող ‖ . որ է ասել . որդի տածօղ երկուց պտղոց , այսինքն եփրեմի և մանասէի . զորս էառ յակոբ 'ի թիւ երկոտասան որդւոց իւրոց 'ի տեղի երկուց ցեղից . լրացուցեալ զտեղի ղևեայ , որ որոշեցաւ 'ի գործ պաշտամանն տն ։

Զայս առաւելութին արժանապէս ստացաւ յովսէ_փայ . զի 'ի նախանձիլ եղբարց նորա ընդ նա , և 'ի կամիլ նոցա ջնջել զնա և զցեղ նորա , յա_կոբ կրկին ցեղիւք առաւելացոյց զնա . և եհեղ 'ի նա զօրհնութի անդրանկութեն ռուբենի . որպէս արար և առ յուդա . զի թէպէտ անուն անդրան_կութե մնաց 'ի ռուբէն , բայց օրհնութի անդրան_կութեն առ սոսա եղև . առ յուդա ըստ իշխանութե , և առ յովսէփ ըստ աճմանն . որպէս և առ ղևի ըստ քահանայութեն . տես ա՛ մնաց . Ե . 1 . և 2 . և զի սովին նախանձելի ցուցաւ յովսէփ , սմին իրի նախանձելի կոչէ զնա յակոբ յասելն . * որ_դեակ աճեցեալ նախանձելի ‖ . Ոի որպէս յա_ռաջն եղև առարկայ չար նախանձու եղբարց իւ_րոց , այնպէս և յետոյ եղև առարկայ բարի նա_

խմանձու, զի է ցանկալի և փափաքելի, սիրելի և փառելի. Մանաւանդ զի գեղեցիկ եւս էր տեսլեամբ. յոր միտ 'ի լուսո" փինկ նախանձելի գնելոյ՝ գրի. * գեղեցիկ հայեցուածով ||. կամ * վայելուչ տեսլեամբ ||. և զայս կատարելութի ունէր նա ըստ սնանելոյ՝ եթէ 'ի շնորհաց հոգւոյն, և եթէ 'ի խնամելոյ ծնողացն. յոր միտ յեբր" և յարաբ" գնի. * 'ի վ̄ր աղբեր ||, կամ * առ աղբերբ ջուրց ||. որով նշանակի սնանիլ նորա յաղբերէ շնորհաց, և յաղբերէ ծնողական գթոյ. որով և գտաւ պատուական և բարեզգացց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և զայս կամելով յայտնանել՝ յարէ զկնի, և ասէ:

**Որդեակ իմ մատաղ՝ առ իս դարձիր:** Մատաղ ասելով ցուցանէ զմատաղաչութի նորա՝ զփափուկն գոլ և ազնիւ. և այս որպէս տացաք այժմ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ: Իսկ զոր յաւելու զկնի, առ իս դարձիր, այս բան երրակի կարէ առաջի գնիլ. մի՝ իբր յորդորական. որպէս թէ ասէր. լեր ըստ ինձ հայր հաւատարիմ եղբարց քոց. կամ նման ինձ, և մի խնդրեր զվրէժ յեղբարց քոց. երկրորդ իբր յայտարարական. որպէս թէ ասէր. յաւելեալ լեր յազգ իմ երկոքումբք, այսինքն առաւելութբ երկրորդ ցեղի. երրորդ՝ իբր խանդաղատական. որպէս թէ ասէր. տեսի զքեզ որդեակ իմ. մատի՛ր արդ առ իս 'ի համբոյր սիրոյ:

Յեբրայականն փինկ ասելոյ. * որդեակ իմ մատաղ առ իս դարձիր ||. գնի. * դստերք գնային 'ի վ̄ր պարսպի ||. սոյնպէս գնի և 'ի լատ. 'ի ցուցանել, թէ այնչափ ցանկալի էր յոխեփ, մինչև ելանել դստերացն եգիպտացւոց 'ի վ̄ր պարսպի առ 'ի տեսանել զնա յանցանելն նորա:

Որ

Զնա խորհրդակցեալք բամբասէին ։ Բանսարկուս կոչէ զեղծարարն յանխնայ . մի՛ զի զբանս առաւելեան նորա առեալ 'ի մէջ իւրեանց՝ բանսարկէին նովին՝ գրգռելով զմխիթարանս ընդդէմ նորա . երկրորդ՝ զի և առ հայր իւրեանց բանսարկուն անէին՝ բազմաչարիս խօսելով զնմանէ , և բամբասելով զնա իբրև զհպարտ և զմոլի . երրորդ՝ զի և ընդ նմա բանսարկուք վարէին . և չորրորդ՝ զի արտաքուստ և 'ի ներքուստ թշնամութիւն վարէին ընդ նմա ։ Նոյն զայս առաւել ևս կամելով բացայայտել՝ յաւելու զկնի , և ասէ ։

Եւ նախատէին առնէին , և ոխանայէին ընդ նմա արք աղեղանց ։ Այսինքն թէ բանիւք զկծանաց նախատակօծ առնէին զյովսէփ . և այնու ոչ շատացեալ՝ ոխս պահէին 'ի սրտի՝ կորուսանել զնա . և որք ոչ եթէ օտարք էին , այլ եղբարք . և նոքին ևս արք աղեղանց . որով նշանակի նախ՝ զօրաւոր լինել նոցին . որոց չէր արժան երկնչելով 'ի կրսեր եղբօրէ իւրեանց տկարէ՝ ոխանալ ընդ նմա ։ Նայց զոր ինչ և խորհեցան՝ տկարացան , և ոչ ինչ կարացին առնել . վասն յաւելու զկնի , և ասէ .

Եւ փշրեցան զօրութեամբ աղեղունք իւրեանց . և լուծան ջիլք բազկաց նոցա ձեռամբ հզօրին յակոբայ՝ անտի որ զօրացոյց զԻէլ ։ Աղեղամբք ը՛ յիշեալս մեր այժմ՝ նշանակին աստ հնարք եղբարցն յովսեփայ՝ զոր իբրև զաղեղունս լարեցին ընդդէմ նորա՝ կամելով վաճառել զնա կամ կորուսանել . իսկ ջիլք բազկաց նոցա նշանակին ուժգնութիւնք նոցին , որովք կապեցին զյովսեփ . բայց այն ամենայն հնարք նոցա զօրութեն այ փշրեցան ասէ . որ թէ անպիտանացան , և զօրեղութիւնք նոցա ձեռամբ հզօրին այ յակոբայ լուծան և յոչինչ դարձան ։ Իսկ զոր յաւելէ ասելով անտի որ զօրացոյց զԻէլ՝ այս

իբր բացատրութի դնի բառիդ Հզօր, որպէս էր զօ-
րացուցանել զինէլ ած զյակոբ. և կամ զի արդէն
զօրացուցեալ էր զնա 'ի մարտի անդ որ ը հրեշ-
տակին, և տուեալ էր նմա զանուանս իէլ այն է
ածատես :

Իսկ բառդ անուն՝ դնի փոխ բառիս այնորիկ. զի
թէ եդեալ էր, Հզօրին այնորիկ՝ որ զօրացոյց
զինէլ. և կամ զօրութ փակէ ը իւրև զգոյական
անուն ինչ, որպէս թէ եդեալ էր. ձեռամբ Հզօ-
րին այ լուծան ջիլք նորա 'ի զօրութէ անուանն նորա՝
որով զօրացոյց զինէլ. կամ ըստ եբր" * 'ի բազկաց
Հզօրին յակոբայ. ('ի բազկաց) անդ՝ որ հովուէ
զինէլ||. կամ թէ 'ի բազկաց անուն՝ որ զօրացոյց
զյովսէփ՝ լինել հովիւ և տածօղ իւր : Իսկ կամ
զօրութ 'ի մէջ բերէ զբառդ յայ. զոր դնէ 'ի
սկիզբն յաջորդ համարոյն, տես անդ :

Այլաբանօրէն յովսեփաւ նշանակի քն գեղե-
ցիկ տեսանելով քան զամ որդիս մարդկան՝ մա-
տաղ ըստ կուսական ծննդեանն, նախանձելի
երկնաւորաց և երկրաւորաց. կրկին անձեցեալ
'ի կրկին ազգս՝ յազգ հրէից և յազգ հեթանո-
սաց. որ և յետ կատարելոյ զամ՝ կոչեցաւ 'ի
հօրէն երկնաւորէ յերկինս : Իսկ թէպէտ եղ-
բարք նր, այս հրեայք բանսարկու լեալ բամբա-
սէին զնա, և դատափետ առնէին, և ոխանային
ը նմա, յեցեալք 'ի հնարս և 'ի զօրութիս ժողո-
վոց իւրեանց, մինչև վաճառել եւս զնա 'ի ձեռն
յուդայի մատնչի, այլ արարին և եղբարք յով-
սեփայ, բայց հնարք նց փշրեցան. և զօրութիք
նց լուծան զօրութ Հզօրին յակոբայ :

Աստանօր յեբր" փոխ Հզօրի դրի אביר աբպիր.
որ է մին յանուանցն այ. ուր քննել արժան է.
զի 'ի սմին բառի տառդ א ալեֆ՝ նշանակէ אב
աբ,

տայ, այսինքն հայր. և տառդ ב պէթ՝ որ դնի ՚ի միջի, նշանակէ בן պէն, այսինքն որդի. և տառդ ר ռէս նշանակէ רוח ռուախ, այսինքն հոգի. որովք ՚ի մէջ բերի խորհուրդ ամենասուրբ երրորդութեան։ Նաև տառդ՝ եստ՝ ՚ի մէջ բերէ զմիութիւն աստուծոյ. Նաև դարձեալ սոյն այս տառս եստ՝ որ յաւելի աստ ՚ի տառն ב պէթ, որ նշանակէ զորդի, ցուցանէ զմարդեղութիւն նորա. որ և ՚ի կատարման խորհրդոյն ընկալաւ զանուն եստ տառին, այսինքն յ տառին. այն է յիսուս։ Նաև մի՛ ոք աստ վայրապար համարեսցի զայսմիկ այլաբանական իմաստ, մինչև խորհուրդ ես հանել ոչ միայն ՚ի բառից, այլ և ՚ի տառից անգամ գրոց. զի և Տէրն մեր զսոյն զայս եստ գիր, որ հայերէն յովտ լսի, որ և փոքրագոյն է ՚ի մէջ ամենայն տառից՝ ՚ի մէջ եբեր՝ ասելով * յովտ մի՝ (և) որ նշանախեց մի է ԼԵ ‖։

Արդ քանզի վերոյեդեալ չորեքգրեան անունս այդիս՝ ակնարկէ ՚ի զօրութիւն այսինքն Թարգմանիչք մեր չորեքտառեան գրով եդին հզօր, ՚ի նշանակել զամենազօրն Աստուած. որոյ զօրութեամբ աստ փրկեցան բռնութիւնք ատեցողացն յովսեփայ, և խորհրդաբար բռնութիւնք Թշնամեաց ազգի մարդկան. և զայս այլով իմն բանիւ առաջի առնել կամելով՝ ասէ։

25. Յայ հօրն քո. և օգնեսցէ քեզ Աստուած իմ. և օրհնեսցէ զքեզ յօրհնութենէ երկնից ՚ի վերուստ. և զօրհնութեան երկրի լի ամենայնիւ, վասն օրհնութենէ ստեանց և արգանդի.

Տեսանես՝ թէ զիարդ իբր անյագաբար իմն բերի յակոբ ՚ի բանս օրհնութեան յովսեփայ. և որպէս ՚ի զեղմանէ անտի բղխմանց սրտի իւրոյ զեղու զոր ՚ի շտեմարանս հոգւոյն ունէր յօրհնութ-

սի-

սրբեցելոյն իւրոյ. և այս՝ այնչափ, մինչև զոր իւր գիտէ՝ նմա հաղորդել փափաքէ. և զայս պէսպէս շքեղաբանութեամբ առաջի առնէ՝ ասե-

լով։

Յայ հօրն քո. և օգնեաց քեզ Ած իմ։ Արդ Յայ՝ զի յիշելոյ մեր 'ի վերոյ՝ կարէ համարիլ աստ իբր բացայայտիչ բառիս Անփի, զոր եդ 'ի նախըն-թաց համարին. որպէս թէ ասացեալ էր. Լու-ծանն չիլք բաղկացնոցս անտի՝ զի յԱյ հօրն քո՝ որ զօրացոյց զքեզ։ Իսկ թէպէտ 'ի քանի մի Ածա-շունչս մեր, ոմք և 'ի տպագրեալն փոխ դնելոյ՝ յԱյ հօրն քո, դնի Ած հօր քո, բայց այդ փոփո-խութ երևի յարմարեալ. զի յընտիր ձեռագիրս դնի, յԱյ հօրն քո։ Արդ ասէ՝ Նա ինքն Ած՝ որ յԱմի օգնեաց հօր քում յակոբայ եթէ 'ի նե-ղուԹ, և եթէ 'ի յանդորրու, օգնեաց և քեզ և օգնեսցէ. և որպէս օրհնեաց նա զիս զհայր քո յԱմ բարութիւ, նոյնպէս օրհնեաց՝ և օրհնեսցէ

զքեզ։

Այս օգնութի Այ առ յովսէփ 'ի չորեսին եղև. մին 'ի փրկելն զնա 'ի մահուանէ՝ զոր խորամանկե-ցին եղբարք նորա. երկրորդ՝ յազատելն զնա 'ի չարէ անտի մեղաց. երրորդ՝ 'ի հանելն զնա 'ի բանտէ. և չորրորդ՝ 'ի վերացուցանելն զնա յիշ-խանութի՝ 'ի կառավարել զԵն եգիպտացւոց, և յապրեցուցանել զԵն զայն. որոյ վն կոչեցաւ փսոմփթոմփանէ, այսինքն փրկիչ Աի։ Խօսե-լով ապա և զօրհնութէն Այ որ եղև առ յովսէփ, 'ի մէջ բերէ զօրհնութի երկնից և երկրի. և նախ

յօրհնութի երկնից հայելով՝ ասէ։

Եւ օրհնեաց զքեզ յօրհնութեան երկնից 'ի վերուստ։ Այս օրհնութի հայի 'ի բարութիւն՝ որք գան յերկնից՝ ըստ մարմնաւորին և ըստ հոգևորին։ Ըստ մարմնա-

ւորին

ւորին՝ օրհնութիւն երկնից է լիութիւն մարմնաւոր բարեաց տուեալ յերկնից 'ի ձեռն անձրևաց , 'ի ձեռն ցօղոյ , և 'ի ձեռն այլոց բարեխառնութեանց վերին օդոյ ։ Ըստ հոգևորին՝ օրհնութիւն երկնից է լիութիւն պէսպէս հոգևոր բարեաց՝ զորս տայ Աստուած . և ահա զայսոսիկ մաղթելով՝ սոքիմբք օրհնէ զնա ։ Եւ աստ յօրհնութիւն երկրի հայելով ասէ ։

Եւ զօրհնութենէ երկրէ լի տունս ։ Օրհնութիւն երկրի յերիս տեսանի , այսինքն 'ի յաճախութեան ստացուածոց , և կերակրոց , և ծննդոց . 'ի ստացուածոցն հայելով ասէ զլի տունս . իբր թէ ասէր . այնչափ և այնպիսի ստացուածովք լիացուսցէ զքեզ Տէր , մինչև յամի բաւականանալ քեզ և որդւոց քոց ։ Սոյնպէս և 'ի սնունդս և 'ի ծնունդս հայելով՝ ասէ ։

Վասն օրհնութենէ ստեանց և արգանդի ։ Օրհնութեամբ ստեանց իմացեալ լինի օրհնութիւն սննդեան . այսինքն օրհնութիւն լիութեան ուտելեաց և ըմպելեաց . զի որում ստինքն է անօթ սնուցիչ . որով այլաբանի այն ամ՝ որով լինի սնանել . որպիսի են ուտելիք և ըմպելիք ։ Իսկ օրհնութիւն արգանդի նշանակի օրհնութիւն յաճախութեան ծննդոց . ըստ որում արգանդն է անօթ ծնանելոյ . զի սոցին առեալ՝ կամի ասել . լիացիր արգասեօք ուտելեաց և ըմպելեաց . և բազմացիր յաճախութեամբ ծննդոց՝ եթէ որդւոցդ և եթէ անդէոցդ ։

Այլ աստ արժան է գիտել . զի յերեսին հատուածոց բառս օրհնութեան՝ թէպէտ և յայլ և այլ հոլովս դնի . յառաջնումն յօրհնութենէ , յերկրորդումն զօրհնութենէ . և յերրորդումն վասն օրհնութենէ . բայց յերեսին ևս ոչ յայտ է յեբր" և յայլոց , իմացեալ լինի 'ի գործիական հոլովն՝ փոխ առելոյ

ռելոյ

ռելոյ օրհնութ՟. ոպ՟ թէ եղեալ էր. լցցիս օրհ-
նութ՟ երկնից. լցցիս օրհնութ՟ երկրի. և լցցիս
օրհնութ՟ ստնդեան և ծննդեան:

Խորհրդաբար այսօրինակ օրհնութիւնք երևեցան և լրացան ՚ի քս՟՝ յօրհնիլ նը՟ ՚ի հօրէ, և ՚ի կարգիլն փառամբթոմիանէ՝ այսինքն փրկիչ Յի. Եւս և յօրհնիլ նը՟ այսինքն ՚ի գովելն յամենայն երից յերկնաւորաց և յերկրաւորաց և յեղելոց ՚ի ստորինս երկրի յօրհնութ՟ յաւիտենական: Դարձեալ այսօրինակ օրհնութիւնք ը՟ եսայեայ. (խթ. և կ.) երևեցան յեկեղեցի քսի. ը՟ որում լցաւ նա օրհնութ՟ եթէ յերկնից, և եթէ յերկրէ ը՟ դերբնական բարութ՟, ը՟ հոգևոր ստնդեան, և ը՟ աւազանին ծննդեան: Այլ թէ յինչ հիմնեալ էին այսօրինակ օրհնութիւնք ՚ի մէջ բերէ և զայն՝ ասելով:

26. Օրհնութեանց հօր քո և մօր քո. որք զօրացան քան զօրհնութիւնս լերանց հաստատնաւորաց և քան զօրհնութիւնս բլրոց յաւիտենականաց, եղիցին ՚ի վերայ գլխոյ յովսեփայ. և ՚ի վերայ գլխոյ եղբարցն՝ որոց առաջնորդեաց:

Բազում նշանակին այն մեծամեծ օրհնութիւնք զորս ընկալան ծնողքն յովսեփայ. Եւս և ծնողքն յակոբայ, յորոց իբր յանօթոց օրհնութ՟ հանեալ յակոբայ զլրութ՟ նոցին՝ զեղու ՚ի վր՟ յովսեփայ ասելով:

Օրհնութեանց հօր քո և մօր քո: Կամի ասել. ոպ՟ օրհնեցաք ես և մայր քո յայ՟ և ՚ի հարց մերոց, այնպէս օրհնեցիս և դու. բայց ոչ սոսկ մերովս օրհնութ՟, այլև նովին իսկ օրհնութ՟ն այ՟ և օրհնութ՟ հարց մերոց: Կամելով ապա ցուցանել զհաստատութ՟ և զտևողութ՟ այսր օրհնութ՟՝ յարէ զկնի և ասէ:

ՄՕՐ ԶՕՐԱՑԱՆ 'Ի ՎՐ ՕՐՀՆՈՒԹԵ ԼԵՐԱՆՑ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱՑ, ԵՒ 'Ի ՎՐ ՕՐՀՆՈՒԹԵ ԲԼՐՈՑ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆԱՑ ։ Կարէր յակոբ 'ի մէջ բերել և զօրհնութիւն այլոց գերագոյն իրաց ։ Բայց քանզի երևելի են լերինք և բլուրք ըստ հաստատութե և ըստ տևողութե, և յորս խնա ևս արգասեաց իւրեանց պայծառ երևին, զնոսին բերէ 'ի մէջ․ որով և կամի ասել․ ապաքէն օրհնութիք լերանց և բլրոց՝ զորս օրհնեաց ած 'ի յաւիտենից, այսինքն 'ի սկզբանէ, հաստատուն են և անշարժք յաւիտեան, այսինքն տևօղք մինչև 'ի կատարած աշխի․ զի նոքա օրհնութին ոչ միայն՝ յորչափ մնայ աշխ, և բերեն համապազ զպտղինս բարեաց․ բայց ծանի՛ր դու ով յովսէփ․ զի այն օրհնութիք՝ որովք օրհնեցան հայր և մայր քո, հզօրագոյն են քան զայսոսն․ և ես ահա զայն

օրհնութի ետու և տամ քեզ ։

Փոխաբերաբար մարթ է ասել լերամբք իմանալ զհրեշտակս, և բլրովք զամ մրդս․ և ըստ այսմ բառս ՎՐ՝ դնի փոխանակ բառիս իբրև կի հանգոյն․ ոչ թէ ասէր, օրհնութիք իմ և օրհնութիք հարց մերոց՝ որք զօրաւորք էին իբրև զօրհնութիս զաստուց հրեշտակաց և մրդց, եղիցին 'ի քեզ ։ Ուստի յաւելու ասել ։

ԵՂԻՑԻՆ 'Ի ՎԵՐԱՅ ԳԼԽՈՅ ՅՈՎՍԷՓԱՅ ։ Կամի ասել․ այն օրհնութիք՝ զորս յիշեցի, կամ զօրութիք օրհնութեանցն այնոցիկ եղիցին 'ի վր յովսեփայ ։ Ոչ ասէ կատարեսցին 'ի յովսէփ, կի հասցեն 'ի նա, այլ 'ի վր գլխոյ նորա․ զի որովհետև գլուխն է ազնուագոյն մասն մարդոյ, յորում բովանդակին ամ զգայութիք, զայն 'ի մէջ բերելով՝ 'ի մէջ բերէ այնու զառաւելութի ինչ, քան թէ զանձն և եթ դնէր առաջի․ զոր և կրկնէ այլով

իմն փոխաբերութ, և ասէ ։

'Ի

'Ի վերայ գլխոյ եղբարցն՝ որոց առաջնորդեաց․ Բնաւ գլուխ՝ ոչ դնի աստ ը̅ առաջնոյն՝ փխկ իրական գլխոյ, այլ փխկ բարոյական կամ փոխաբերական գլխոյ, այսինքն փխկ իշխանի․ որպէս թէ եդեալ եր․ իջցէ օրհնութիւն իմ 'ի վ̃ր գլխոյն յովսեփայ, 'ի վ̃ր յովսեփայ ասեմ, որ եղև գլուխ եղբարց իւրոց, և առաջնորդեաց նց̃։

Այլ գիտելի է աստ․ զի 'ի չորս ձեռագիրս մեր բառդ գլուխ՝ յոգնակի դնի աստ յասելն․ * 'ի վերայ գլխոց եղբարցն․ որոց առաջնորդեաց ‖․ և այս կրկնակի մեկնի․ մի՝ այսպէս․ այն օրհնութիւնք՝ որք իջանելոց են 'ի վերայ գլխոյն յովսեփայ, 'ի յովսեփայ անտի մասնաւորեսցին եղբարց նր̃ յառաջնորդել նր̃ նց̃։ Երկրորդ այսպէս․ օրհնութիւնք իմ և օրհնութիւնք հարց իմոց իջցեն 'ի վ̃ր գլխոյն յովսեփայ, և նա զօրացեալ այնու՝ իշխեսցէ 'ի վ̃ր գլխոց եղբարցն՝ առաջնորդելով նց̃․ ը̅ որում նա եղև նոցա գլուխ և իշխան յերկրին եգիպտացւոց։ Բայց մարթ է և ասել, թէ վրիպակ մուեալ է յայդ 'ի գրագրաց․ իբր զի փխկ գրելոյ 'ի վ̃ր գլխոյ՝ եդեալ է 'ի վ̃ր գլխոց։

Գիտելի է և, զի յեբր" և 'ի լատ" փխկ ասելոյ՝ որոց առաջնորդեաց, դնի նազովրացի՝ այլով իմն կարգաւ, յասելն․ * 'ի վ̃ր գագաթան նազովրացւոյն 'ի մէջ եղբարց իւրոց ‖։ ուր 'ի տեղի նազովրացւոյ յեբր" դնի բառս נזר նեզիր, որ է նոյն․ ը̅ նազովրացի․ որով նշանակի նախ՝ պսակեալ կամ պսակ․ յոր մտ յատոր" դնի․ * 'ի վ̃ր գլխոյ պսակի եղբարց իւրոց ‖։ Երկրորդ՝ նշանակի փառաւորեալ․ յոր մտ 'ի ժ̃զ̃․ օրհնութե․ 'ի համմարն․ 16․ եդին եօթանասունք․ * 'ի վ̃ր գագաթան փառաւորելոյն 'ի մէջ եղբարց ‖․

քարց" ։ Երրորդ՝ նշանակի բաժանեալ կին ու խստաւոր կամ ժուժկալ. որպէս է տեսանել ՚ի քաղդէականն. յոր միտ յարուք" գնի. * ՚ի վ[ա]րդ գա-
" գաթան ամենաժուժկալի ՚ի մէջ եղբարց իւ-
" րոց" ։ Բայց սակայն աստանօր եօթանասունք միակ ընթեռնլոյ նեզէր՝ ընթերցեալ նազիր, Թարգմանեցին. * առաջնորդեաց եղբարց" . Ըն որում բառդ նազիր, կամ նազըր նշանակէ տեսուչ՝ եւ և առաջնորդ ։

Խորհրդաբար՝ այս բան հայի ՚ի ք[րիստո]ս ըստ մարդկութեն. յորում բովանդակեցաւ լրումն օրհնութեանց ո[րպէս] իբրև ՚ի գլուխ եկեղեցւոյ, և սքանչելի ցուցաւ ՚ի նմին այն օրհնութի իբրև ՚ի փառաւորեցելումն ՚ի մէջ եղբարց, այսինքն ՚ի մէջ որդւոց մարդկան համօրէն՝ որոց եղև առաջնորդ անմալար ։ Աստանօր աւարտեալ յակոբայ զօրհնութիւնն յովսեփայ՝ դառնայ խօսիլ և զբենիամինէ՝ ասելով ։

27. Բենիամին գայլ յափշտակօղ. Այգուն դեռևս ուտիցէ. և առ երեկս բաշխեսցէ կերակուր ։

Բենիամին որ Թարգմանի որդի ցաւոց և որդի աջոյ, էր երկոտասաներորդ որդի յակոբայ ծնեալ ՚ի ռաքելայ ։ Ցեղ սորա զօրաւոր գտաւ քան զայլս ՚ի խառնութե պատերազմի. բայց ոչ իբր առիւծ մեծահանձն, այլ իբր գայլ. որպէս յայտ է ՚ի պատերազմէ անտի՝ զոր եառուն ՚ի գաբաաւն ընդ ամ[ենայն] ցեղս ի[սրայէ]լի վ[ասն] յափշտակելոյ իւրեանց զկին ղևտացւոյն. և արարին կոտորած մեծ. (դատ. Ի. 1 = 25.) ՚Ի ցեղէ սորա էր և սաւուղ առաջին թագաւոր հրէից՝ որ արար բազում յաղթութիւնս ընդդէմ այլազգեաց, և զաւար նոցա բաշխեաց. (ա. թագ. ԺԴ. 11. և ԺԷ. 47.) ՚Ի ցեղէ

ցեղէ սորա էր և Մուրթքէ և Եսթեր տիկին , որք յապականութենէ դարձուցին զՀամանն և զՀամանեանսն . և յաւարի առին զստացուածս նոցա : Թերևս 'ի սոսա և յայլս ևս հայելով Յակոբայ՝ խօսի զայսպիսի բանս զԲենիամենէ ասելով :

Բենիամին գայլ յափշտակօղ . զառաւօտն դեռևս ուտիցէ . և առ երեկս բաշխեսցէ կերակուր : Այսինքն թէ ցեղն Բենիամենի հանդոյն գայլոյ պատառեսցէ զայլս , մանաւանդ զթշնամիս իւր , և զաւար նոցա յափշտակեսցէ . և յաւարէ անտի նոցա ամենայն լիասցի՝ մինչև կշտացեալ ուտել անտի յառաւօտու . և 'ի յագիլն իւր՝ 'ի հասանել երեկոյի զմնացեալսն բաշխեսցէ այլոց : Իսկ ըստ այսմ բառդ զառաւօտն՝ դնի աստ ըստ ներգոյական հոլովի . որպէս յայտ է յեբրայականէն և յայլոց թարգմանութեանց : Իսկ եթէ առցի հայցականաբար , նշանակէ զկերակուր առաւօտու . յոր միտ կամի ասել . յուտելն անդ զառաւօտեան կերակուրն՝ ունիցի դեռևս ուտելոյ . և զերեկոյեանն յառաւելուծէ նորին այլոց ևս բաշխեսցէ :

Այլ գիտելի է . զի աստ փոխ բառիդ "դեռևս յեբր" դնի աստ . որ զնոյն նշանակէ՝ այսինքն դեռևս , կամ մինչև . ուստի և եօթանասունք եդին դեռևս : Բայց քանզի այդ բառ նշանակէ և զաւար , լատինք զաւար եդին . որպէս և ասորիք . իսկ արաբացիք գողունի : Մեկնիչքն ևս ըստ նախադրելոցդ մեկնին :

Արժան համարիմ 'ի մէջ բերել աստ և զմեկնաբանութիւն քաղդէականն՝ ուր այս բան գրի այսպէս . * յերկրին Բենիամենի բնակեսցէ մեծ-
,, վայելչութիւն տաճարի (տն) . և 'ի ժառանգութեան
,, նորա շինեսցի խորան . յառաւօտու և յերե-

,, կոյի մատուցեն քահանայք զպատարագս . և
,, 'ի ժամ երեկոյի բաժանեսցեն զմնացեալն ॥ .

Այսպէս մեկնեն և հրէայք . զի որում տաճարն շինեցաւ յերուսաղէմ, որ էր 'ի բաժնին բենիամենի . և ըստ այսմ կարծեաց՝ հայելով 'ի բնագիրն , և յայլ թարգմանութիւ՝ խորանն տն համարեալ լինի զայլ՝ յառնուլ 'ի ժողովրդենէ զաւար , զի զպատարագս , և ծախել զայնս հրով . բայց կարի խնն անտեղի երևի զխորանն դնել զայլ յափշտակօղ յընդունելութե պատարագաց և յայրման զոհից :

Այլաբանօրէն՝ որ հարք բենիամենին՝ 'ի մանաւորի խմնման առնն զպօղոս առաքեալ , որ էր 'ի ցեղէն բենիամենի . և դատէ զայլ հզօր՝ եթէ յառաջն և եթէ զկնի . բայց որպէս անունս առիւծ՝ երբեմն առեալ լինի 'ի բարին . յոր մտս առիւծ կոչեցաւ տրն մեր . և երբեմն 'ի չարն . յոր մտս առիւծ կոչի և սատանայ , սոյնպէս և բառս գայլ՝ հայելով 'ի պօղոս՝ առեալ լինի 'ի բարի և 'ի չար կողմն . 'ի չար կողմն՝ յառաջ քան զդարձն իւր , և 'ի բարի կողմն՝ յետ դարձին . զի նախ քան զդառնալ իւր՝ իբր յառաւօտու՝ զի յերիտասարդութե իւրում՝ ոչ և ինքն գրէ՝ եղև գայլ չարաբարոյ . և աւար էառ զեկեղեցի . և ետ պատառել զբազումս՝ եթէ զայր և եթէ զկանայս . և ետ գիշատել զմին ստեփաննոս . Իսկ յետ դառնալոյն հասեալ յերեկս , զի 'ի կատարեալ հասակ՝ եղև գայլ բարի . և յաւարի էառ զառնուն սատանայի զօրութե քնի . և յափշտակեաց զանհաւատս 'ի ձեռաց նր՝ դարձուցանելով զնս 'ի կռապաշտութէ յածպաշտութե . և ետ զնս կերակուր եկեղեցւոյ , առնելով զնս անդամս քնի . Աստանօր աւարտէ մով-

օ՛ս զբանն օրհնութեան յակոբայ. և յաւելու ասել։

28. Ամենեքեան սոքա որդիք յակոբայ՝ ազգք երկոտասանք. Եւ այս է՝ զոր խօսեցաւ ընդ նս հայր իւրեանց. և օրհնեաց զնոսա իւրաքանչիւր ըստ օրհնութեան իւրեանց։

Երկնակի հաշուին ցեղք յակոբայ. մի՝ ը կարգի ծննդեան իւրաքանչիւր որդւոց նորա, որք էին երկոտասան. ռուբէն. շմաւոն. ղեւի. յուդա ('ի լիայէ). դան. նեփթաղիմ ('ի բաղղայ նաժշտէն ռաքելի). գադ. ասեր ('ի զեղփայ նաժշտէն լիայի). իսաքար. զաբուղոն ('ի լիայէ). յովսէփ և բենիամին ('ի ռաքելայ). Երկրորդ՝ ը կարգի բաժանման վիճակի նց. և ը այսմ ցեղն ղեւեայ ոչ դասի 'ի թիւ երկոտասանից. նոյնպէս և ցեղն յովսեփայ ոչ դնի յայն թիւ անուամբ յովսեփայ, այլ անուամբ երկուց որդւոց նորա՝ եփրեմի և մանասէի. որով և լրանայ երկոտասան թիւ ցեղիցն յակոբայ այսպէս. ռուբէն. շմաւոն. յուդա. դան. նեփթաղիմ. գադ. ասեր. իսաքար. զաբուղոն. եփրեմ. մանասէ. և բենիամին։ Ըստ ը առաջնոյն խօսի ասելով։

Ամենեքեան սոքա որդիք յակոբայ՝ ազգք երկոտասանք։ Ասելով թէ այսոքիկ երկոտասան ազգք, այսինքն ռուբէն, շմաւոն, ղեւի, յուդա, դան, նեփթաղիմ, գադ, ասեր, իսաքար, զաբուղոն, յովսէփ, և բենիամին, էին երկոտասան որդիք յակոբայ ծնեալք 'ի չորից կանանց նորա. զորս և օրհնեաց յակոբ յառաջիկայ օրհնութեամբ. վ՛ն որոյ յարէ զկնի. և ասէ։

Եւ այս է՝ զոր խօսեցաւ ընդ նոսա հայր իւրեանց. և օրհնեաց զնոսա իւրաքանչիւր ըստ օրհնութեան իւրեանց։

Օեր-

Սերկուս դնէ աստ առաջի. մի՛ թէ խոստացաւ Տէր նոսա. և մի ևս՝ թէ օրհնեաց զնոսա. Երկա-քին ևս թէպէտ հային յամ որդիս յակոբայ, բայց առաջինն տիրապէս հայի 'ի ռուբէն, 'ի շմաւոն, և 'ի ղևի. առ որս ոչ այնչափ օրհնութք, որչափ թէ խոստութք խոստացաւ յակոբ: Իսկ երկ-րորդն հայի յայլս ստորինաբար, յոմանս մե-ծագոյն օրհնութք. որպէս 'ի յուդա և 'ի յով-սէփ: յոմանս միջակային իմն օրհնութք. որպ 'ի զաբուղոն, յիսաքար, յասեր և 'ի նեփթաղիմ. և յոմանս ստորին օրհնութք. որպ 'ի դան, 'ի գադ և 'ի բենիամին: Իսկ սոսին հայելով յաւելու ա-սէ՝ * իւրաքանչիւր ըստ օրհնութե իւրում ||:

Նայլ քանզի մովսէս զամ զբանսն յակոբայ օրհ-նութի կոչէ, հաւանական երևի թէ նաև խոստու-թիւնք բանից նորա՝ որք իբր անէծք առաջի ե-դան, յօրհնութի հայելով տուեալ եղեն՝ որոց տուեալն՝ առ 'ի զգաստութի նոցա, և առ 'ի գու-շակութիւն բաղում իրաց՝ որք ծածկեալ են 'ի մէնջ, և յայտնեսցին սրբոցն այ 'ի յետին ժամա-նակս, և լուասցին 'ի ժառանգութե կենացն յա-ւիտենից:

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ. Ժ.Զ.

Օրհնութիւն Մովսէսի առ որդիսն Իսրայէլի ըստ հատուածի և ըստ իւրաքանչիւր ցեղից. օրհնելով միանգամայն և զազգն երբեմն զեկեղեցին Ա̄յ՝ ընտրեալ 'ի նմանէ և պաշտպանեալ 'ի խնամոց նորա:

*1. Այս է օրհնութիւն. զոր օրհնեաց Մովսէս այրն Ա̄յ զորդիսն Իսրայէլի յառաջ քան զվախճանել իւր. և ասէ.*
( Բ. Օրին. ԼԳ. )

2. Տէր 'ի Սինայէ եկեալ է. և երևեցաւ մեզ 'ի Սեիրայ. և փութացաւ 'ի լերանէն Փառանայ. բիւրաւորօք 'ի Կադէսայ. յաջմէ նորա հրեշտակք իւր ընդ իւր:

3. * Եւ խնայեաց 'ի ժողովուրդ իւր. և ամ̄ սրբեալք 'ի ներքոյ ձեռին քո. և նոքա ընդ քեւ են:

4. * Եւ ընկալաւ 'ի պատգամաց նորա օրէնս՝ զոր պատուիրեաց մեզ Մովսէս ժառանգութիւն ժողովրդեան Յակոբայ:

5. * Եւ եղիցի իշխան 'ի մէջ սիրեցելոյն գաւառակալաց իշխանաց ժողովրդոց հանդերձ ցեղիւքն Իսրայէլի:

6. * Կեցցէ Ռուբէն և մի մեռցի. և եղիցի բազմաւոր թուով:

7. * Եւ զայս ասէ Յուդայէ. լո՛ւր Տ̄ր ձայնի Յուդայի. և 'ի ժողովուրդ նորա եկեսցէ. և ձեռք նորա ընտրեսցեն նմա. և օգնական 'ի թշնամեաց եղիցիս նմա:

8. * Եւ զՂևեայ ասէ. տո՛ւք Ղևեայ զյայտնութիւն նորա. և զճշմարտութիւն նորա առն արդարոյ. զոր փորձեցին փորձանօք. և բամբասեցին զնա 'ի վերայ ջրոյն հակառակութեան:

9. * Որ ասէր ցհայր իւր և ցմայր իւր. թէ ոչ տեսի զքեզ. և զեղբարս իւր ոչ ծանեաւ. և զորդիս իւր ոչ գիտաց. զգուշացաւ բանից քոց. և զուխտ քո պահեաց:

10. * Պատմեսցեն զիրաւունս քո Յակոբայ. և զօրէնս քո Իսրայէլի. դիցեն խունկս 'ի բարկութեան քում հանապազ 'ի վերայ սեղանոյ քո:

11. * Օրհնեա՛ Տ̄ր զզօրութիւն նորա. և ընկա՛լ զգործս ձեռաց նորա. խորտակեա՛ զմէջս 'ի վերայ յարուցելոց թշնամեաց նորա. և ատելիք նորա մի կանգնեսցին:

12. * Եւ զԲենիամինէ ասէ. սիրեցեալն 'ի Տ̄նէ բնակեսցէ յուսով. և Ա̄ծ հովանի լիցի նմա զամ̄ աւուրս. և 'ի մէջ ուսոց նորա հանգիցէ:

13. * Եւ զՅովսեփայ ասէ. յօրհնութէ Տ̄ն երկիր նորա. 'ի ժամանակաց երկնից և 'ի ցօղոյ և յանդնդոց աղբերաց 'ի ներքուստ:

14. * 'Ի ժամանակի արդեանց՝

արեգական ժողովմանց , և ՚ի գումարելոյ առ միմեանս ամսոց :

15 · * ՚Ի գագաթանց լերանց սկզբան , և ՚ի գլխոց բլրոց մշտնջենաւորաց :

16 · * Եւ ըստ ժամանակի երկրի լրութէ · և ընդունելութիւնք երևելոյն ՚ի մորենւոջն՝ եկեսցեն ՚ի վերայ գլխոյն յովսեփայ , և ՚ի վերայ գագաթան փառաւորելոյն ՚ի մէջ եղբարց :

17 · * Անդրանիկ ցլու գեղ նորա · և եղջիւրք միեղջերուն եղջիւրք նորա · խոյեսցէ նոքօք զազգս միանգամայն մինչև ցծագս երկրի · այս են բիւրաւորք եփրեմի · և սոքա հազարաւորք մանասէի :

18 · * Եւ զզաբուղոնէ ասէ · ուրախ լեր զաբուղոն յելս քո : Եւ զիսաքարայ ասէ · ՚ի բնակութիւնս նոցա ազգք սատակեսցին :

19 · * Եւ անդր կոչեսջիք · և զոհեսջիք զոհ արդարութէ · զի զմծութ̄ ծովու դիեցուսցէ քեզ · և զվաճառականաց առ ծովեզեր բնակելոց :

20 · * Եւ զգադայ ասէ · օրհնեալ որ ընդարձակեաց գադայ · հանգեաւ իբրև զառիւծ · և խորտակեաց զբազուկս և զիշխանս :

21 · * Եւ եսես զիշխանութ̄ իւր · զի անդ բաժանեցաւ երկիր իշխանաց ժողովրդոցն՝ հանդերձ ազգապետօք ազգաց ցեղիցն իսրայէլի · զարդարութ̄ Տն արար · և զդատաստան իւր ընդ իսրայէլի :

22 · * Եւ զդանայ ասէ · դան կորիւն առիւծու · և յարձակեսցի ՚ի բասանայ :

23 · * Եւ զնեփթաղիմայ ասէ · նեփթաղիմ յագեցուրդ ընդունելութ̄ց · և լցցի օրհնութ̄ ՚ի տն̄է · և զծով և զհարաւ ժառանգեսցէ :

24 · * Եւ զասերայ ասէ · օրհնեալ յորդւոց ասեր · և եղիցի ընդունելութ̄ եղբարց · և մխեցէ յիւղ զոտն իւր :

25 · * Եւ երկաթ և պղինձ եղիցին կօշիկք նորա · ըստ աւուրց քոց և զօրութ̄ քո :

26 · * Ոչ գոյ իբրև զԱծ սիրեցելոյն · որ ելանէ յերկինս օգնականն քո , և մեծամեծարն հաստատութ̄ :

27 · * Եւ ծածկոյթ Այ իշխանութեանն · և ՚ի զօրութ̄ բազկաց մշտնջենաւորաց · և մերժեսցէ յերեսաց քոց զթշնամին · և ասասցէ՝ թէ կորի՛ր :

28 · * Եւ բնակեսցէ իսրայէլ յուսով առանձինն յերկիրն ցանբայ ՚ի մէջ ցորենոյ և գինւոյ · և երկինք նմա համբարաւք ցօղոյ :

29 · * Երանեալ ես դու իսրայէլ · ո՛ նմանեսցէ քեզ ժողովուրդ ընտրեալ ՚ի տեառնէ · պաշտպանեսցէ քեզ օգնականն քո՝ և սուր պարծանք քո · և ստեսցեն թշնամիք քո · և դու ելցես ՚ի վերայ պարանոցի նոցա :

# Վ. Ե Ր Ն Ա. Գ Ի Ր.

1. Այս է օրհնութիւն զոր օրհնեաց Մովսէս այր այ զոր- դիսն իսրայելի յառաջ քան զվախճանելն իւր. և ասէ.

Մովսէս մարգարէ յետ աւարտելոյ զաւա- քին զօրհնութիւն իւր հանդերձ սպառնա- լեօք՝ զորս սպառնացաւ 'ի բերանոյ այ առ որ- դիսն իւր, իբրև հրամայեցաւ նմա ելանել 'ի լեառն նաբաւ ( որ էր մի 'ի լերանց աբարիմայ՝ 'ի կատարն փոգորայ յանդիման երիքովի: Բ. օ- րին. լԲ. 1. ) ուր և յետոյ վախճանեցաւ, եդ- առաջի իսրայելացւոց զայլ ևս օրհնութիւն գուշա- կողական. որով և օրհնեաց զնս՝ եթէ 'ի հասա- րակի և եթէ 'ի մասնաւորի ժբ երկոտասան ցե- ղիցն յանուանէ նց, սկսանելով այսպէս:

## Բ. Ա. Ն.

2. Տէր 'ի սինայէ եկեալ է. և երևեցաւ մեզ 'ի սէիրայ: և փութացաւ 'ի լեառնէն փառանայ, բևեւրա- րօքն 'ի կադեսայ. յաջմէ նորա հրեշտակք իւր ընդ իւր:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Յերեսին լերինս յայտնապէս զորս յիշէ աստ մովսէս՝ 'ի սինա, 'ի սէիր, և 'ի փառան՝ երևե- ցոյց ած զմեծամեծս: Յառաջինումն այն է սի- նա՝ ետ զօրէնս. (ելից. ժԹ. 20.) ուր և արար- բաղում ինչ: Յերկրորդումն այն է սէիր՝ պաշտպա- նեաց զիսրայելացիս: քանզի 'ի հարուածից նց յօձից՝ ետ կանգնել զօձն պղնձի. առ որ հայե- լով բժշկէին. (Բ. օրին. Ա. 49. և Բ. 28:) Յերրորդումն այն է փառան, տուեալ նց կե- րակուր զլորամարգին՝ կարգեաց զեօթանասունս

դա-

դատաւորս , տալով նոցա զհոգին հանդերձ այ-
լովք . (Թուոց . ժա .) Ո՛ այսքան խնամս ոչ տե-
սանելով մոլեկանի յորդւոյն խորայնկէ շուրջ զայ-
սոքիւք լինամբք՝ ասէ :

Տէր ՚ի ամենայն ինչոյ . և երևեցաւ մեզ ՚ի ամէնայ . և ծածկեցաւ ՚ի լերանց քարանձաւ : Աստուածն գտնելով զեկեղեցին՝ զանկեալն խմանայ . որով յայտ է յերբայականն և յայլ թարգմանութեց . զի յասելն մոլեկանի զայս՝ վճարեալ էին այն իրք . և ԶԲ այսմ կամի ասել . ՚ի սինա գալով որ եա մեզ անուն զօրէնս . այնպէս և ՚ի ամէնի երևեցոյց զպաշտանումն իւր , և ՚ի փառաւն փութացաւ խնամարկել զմեզ : Տես և զոր ասացաք ՚ի Ժ օրհնուե . ՚ի համարն . 4 :

Ո՛ այսպիսի լերինս յիշելով մարգարէին՝ ոչ զարցանէ , թէ ած ՚ի սէր դադաթան ոչ ասաց՝ զոր արարն . այլ թէ որ ինչ մեծամեծ գործք գործեցան յանապատի , ՚ի սահմանս այսոցիկ լերանց գործեցան . և զիսուածն բանին է ցուցանել , թէ ած յամի նախախնամեաց զինէ , և ոչ պակասեցաւ յինքն ՚ի պաշտպանելոյ զնոս :

Այլաբանօրէն՝ սինա լեառն նկարագրէ յինքեան զսիոն , յորում հրատարակեցաւ նոր օրէնք ան յաւուր պենտեկոստէի : Իսկ սէիր օրինակէ ըղգողգոթայ լեառն՝ յորում կանգնեցաւ օծն պղնձի , զի խաչն քնի : Այլ փառաւն հայի ՚ի վերնատունն յայն՝ որ ՚ի սիոն , ուր էջ հոգին ՚ի յառաքելսն և յեօթանասուն աշակերտսն . տես և զոր ասացաք ՚ի նախայիշեալ օրհ . Ժ . ՚ի համարն . 4 :

Առաքելեն հրեշտակք , թէ ած նախ յայտնեաց զօրէնս իւր եգովմայեցւոց , զի որդւոցն եսաւայ՝ որք բնակէին ՚ի սէիր . և յասելն անդ զտա-

նաքանեայ օրինանն՝ իբրև եհաս 'ի հինգերորդ պատուիրանն որ ասէ, մի՛ սպանաներ. պատասխանի եառուն. կա՛լ զմեզ հրաժարեալ. զի սասցեալ է առ հայր մեր՝ թէ որով քով կեցցես. (Ծնն. իէ. 39): Նմանապէս առ իմանայելացին՝ որք բնակէին 'ի փառան. և յառանդեալ նոյա զնոյն օրէնսն՝ իբրև եհաս 'ի վեցերորդ պատուիրանն՝ որ ասէ, մի՛ շնար. ասէին եառուն, թէ ոչ կարեմք ճռունիլ զայգ պատուիրան. զի սասցեալ է հօր մերում իսմայէլի՝ բազմանալ 'ի վր երկրի: Նոյա թողեալ զնա՝ եկն 'ի սինա. և եդ զամենայն օրէնս իւր առաջի հրէից. և նոքա ընկալան զայնս ուխտիւք. յայս հայի ասեն առաջիկայ բանդ: Այլ 'ի բաց լքեալ զառասպելդ՝ հայեցաւք 'ի կարգ բանիս, զոր յաւելու

ասելով

Ի փառաւորէն 'ի նուազեան. յաջմէ նր հրեշտակք իւր ընդ իւր: Այս բանս ողոշակի հայի 'ի հանդէս երևմանն այ 'ի սինա. ուր բիւրաւորք 'ի նոցա հրեշտակաց երևէին զնովաւ. եր տրուած և մեկնելով ասէ, թէ կային յաջմէ նր հրեշտակք իւր ը իւր. ուր բառդ յաջմէ ցուցանէ զյարդ գերազանցութ հրեշտակաց: Արժան է և ասել ընդ բազմաց, թէ յերևելն անդ այ՝ ոմն կային առ նովաւ բիւրաւոր հրեշտակք, սոյնպէս և յաջմէ նորա գերազանց իմն տարադրու երևէին այլք 'ի գերազանու-

նից նոցա:

Իսկ բառդ 'ի նուազեան՝ ոչ դնի իբր յատուկ անուն, այլ փոխ ՚ոքց. որպէս յայտ է 'ի բնագրէ և 'ի թարգմանութէ այլոց. քանզի բառդ կադէս, կի՛ բստ եբր קדוש քէադոշ, կամ քադոշ՝ նշանակէ սբ. բայց քանզի այստքիւք սրբք իմացեալ լինին նք հրեշտակք, յայն կամելով հայեցուցանել

թարգ-

Թարգմանիչքն եդին 'ի կադէսայ ՅԹ 'ի մէջ հրեշտակաց.

Առասպելեն և աստ հրէայք, թէ այսորիկ 'որովք նշանակին մարգարէք, ևս և վարդապետք յօրինողք Թալմուտին. հոգիք ՚ոց ասեն կան 'ի սինա լեառն ընդ Այ, և փառաւորին 'ի Նմանէ՝ իւրաքանչիւր ըստ վաստակոց իւրեանց, մարգարէք վն գրելոյ զմարգարէութիս, և վարդապետք վն յօրինելոյ զԹալմուտն. զի առ հրէայս մեծ իմն համարեալ լինի Թալմուտն, և հաւասար մարգարէութեց. ըստ որոյ և զբանս մարգարէից խելայնոր մեկնութբ Թալմուտի իւրեանց մեկնեն, մինչև տաղտկալ լսելեաց. վսյ Թողցուք զայդպիսիսդ, և մատիցուք յառաջիկայդ:

Գիտել արժան է աստ. զի որովհետև 'ի տալ Այ զօրէնսն 'ի սինա՝ հրացայտ փայլատակմամբքն, մինչ ասելոյ՝ *յաջմէ նորա հրեշտակք իւր ԸՆ իւր||, յանմանս գրի *յաջ ՆՐ օրէնք հրեղէնք||. ՚ք որոյ աջով ցուցանի ինքնիշխան հեղինակութիւն Այ 'ի տալ զօրէնս և 'ի յաջողել զնոյն. իսկ հրեղինաւ ցուցանի հրեղէնն այն հանդէս, որով տուան օրէնքն Այ. որով ցուցանիւր միանգամայն և վրէժխնդրութիւն Այ առ արհամարհողսն օրինաց. բայց քանզի հուրն օրինակ է և սիրոյ, ըստ այսմ մտածեալ՝ այն հրեղինուն օրինաց ցուցանէր զսիրոյ օրէնսն՝ զոր եա քս. ըստ ղուկ. ժբ. 49. *հուր եկի արկանել յերկիր. և զինչ, կամիմ թէ արդէն իսկ բորբոքիւր||: Օայսոսիկ եդեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ, թէ վն սիրելյն Այ զազգն Իլի՝ արար նոցա զայս ամենայն. ուստի ասէ.

3. Եւ խնայեաց 'ի ժողովուրդ իւր. եւ ամենայն սր-
բեալք 'ի ներքոյ ձեռին քո. եւ նոքա ընդ քեւ
են:

Զերկոտասան ցեղսն Իլի կոչէ ժողովուրդ ն՛յ. ըստ որում ո՛ք 'ի գիրս ծնն. խը. 19. կոչին ազգք ն՛ն, կամ ժողովուրդք ն՛յ. եւ զի նուաճեալք եւս էին 'ի ներքոյ ձեռին ն՛յ՝ կոչէ զն՛ս սրբս. զի զայս-պիսիս՝ ա՛յ զնուաճեալսն ն՛յ՝ սրբս անուանեն գիրք. յոր միտ առնու եւ սա, յասելն:

Եւ խնայեաց 'ի ժողովուրդ իւր. եւ ա՛մ սրբեալք 'ի ներ-քոյ ձեռին քո: Այսինքն թէ ա՛ծ՝ որ 'ի մէջ ամե-նայն ազգաց ընտրեաց զիսրայէլացիս՝ ոչ եթող զն՛ս, այլ խնայեաց 'ի ն՛ս. կամ ը՛ս եբր" եւ ըստ լատ" սիրեաց զնոսա. եւ զամենին արար սրբեալս, ա՛յ նուաճեալս 'ի ներքոյ ձեռին իւրոյ ա՛յ 'ի ծա-ռայութի իւր: Այս առ ազգս ցուցանելոյ ըղ-բանն՝ յերկրորդ դէմս եդեալ է 'ի մերումս. զոր եւ կրկնէ, ասելով:

Եւ նոքա ընդ քեւ են: Այսինքն 'ի ներքոյ իշխանու-թեան քոյ են, քեւ պահպանին, եւ 'ի քէն պաշտպանին: Այս բան, որպէս եւ նախընթացն ն՛ր, այն՝ զոր ասէ * եւ ամենայն սրբեալք 'ի ներքոյ ձեռին քո ||, ա՛յ աւանդելոյ բազմաց պատշաճին ղեւտաց-ւոց. որք որոշեցան եւ սրբեցան ա՛յ, ա՛յ նուաճե-ցան նմա ըստ յատուկ պաշտաման 'ի զգուշութի պահպանութե օրինացն ա՛յ, զորս ընկալաւ ազգն Իլի ձեռամբ մովսէսի. զորմէ եւ խօսի 'ի յաջորդ համարն ասելով:

4. Եւ ընկալաւ 'ի պատգամաց նորա օրէնս՝ զոր պատ-
ուիրեաց մեզ մովսէս՝ ժառանգութիւն ժողովրդեան
յակոբայ:

Զայս

Զայս բան թէպէտ և մխիթար ասէ, բայց քանզի խօսի իբր 'ի հասարակի, զնոյն և իբրև զմի 'ի հասարակաց պարտաւոր պահպանութե օրինաց առաջի առնէ . սմին իրի և յերրորդ դէմս խօսելով ասէ ։

Նա ընծայեաց 'ի պատգամաց նորա օրէնս, զոր պատուէրեաց մեզ Մովսէս ։ Կրկին ասել՝ էառ մխիթար մարգարէ 'ի պատգամացն այ զօրէնս, և պատուիրեաց ինչպէս պահել զայնս . և որպէս զի յօժարութբ պահեսցեն՝ յաւելու ասել ։

Զժառանգութիւն ժողովրդեան յակոբայ ։ Ո՛ յիմիքն թէ եա նմա զօրէնս իբրև ժառանգելի 'ի բազմութե նց, և իբրև ժառանգութի փոխադրելի յորդիս նոցա ։ Կամ դարձեալ՝ եա նոցա զօրէնս՝ զի պահպանութբ նոցին պահեսցեն և զժառանգութի իւրեանց . զի թէ վայելեսցեն զերկիրն աւետեաց՝ զոր այ ետ նոցա 'ի ժառանգութի ։ Կամ ելով ապա զատաւելն 'ի մէջ բերել՝ ասէ ։

5 · Նա եղիցի իշխան 'ի մէջ սիրեցելոյն գումարելոց իշխանաց ժողովրդոց համաբերեալ ցեղիւքն Իսրայէլի ։

Զիսրայելացիս կոչէ սիրեցեալ . ըստ որում սիրեցան նոքա յայ, և եղեն եկեղեցի նր՝ գումարեալ 'ի միում, 'ի մի պաշտօն, և 'ի մի օրէնս . յայս հայելով ասէ ։

Նա եղիցի իշխան 'ի մէջ սիրեցելոյն ։ Նոյն եղիցի՝ յերիս կարէ անկանել առս . մի՝ յօրէնս՝ զոր յիշեաց 'ի նախընթաց համարն . և ըստ այսմ կամի ասել . օրէնքն այն՝ զոր ետ այ՝ եղիցի 'ի մէջ սիրեցելոյն, զի 'ի մէջ ժողովրդեանն իբր իշխան՝ 'ի հրամայել զուղիղն, և յարգելուլ զթիւրն ։ Երկրորդ՝ կարէ հայիլ յայ . յոր միտ կամի ասել . նա ինքն այ 'ի ձեռն օրինաց իւրոց կառավա-

վճարեսցէ իբր յատուկ Թգ՛ր զժողովուրդն Իւր . յոր միտ յեբր" և 'ի լատ" և յասոր" և յարաբ" Թ՛գր գնի ։ Երրորդ՝ կարէ հայիլ և յառաջին իշխանն Իւր . յոր միտ կամի ասել . գտցի միշտ իշխան 'ի մէջ իւր՝ 'ի հրամայել զարդարն , մինչև եկեսցէ՝ որ գալոցն է ։ Ո այս ասաց և յակոբ յօրհնութեն խորում . * մի՛ պակասեսցի իշխան 'ի յուդայ եւ ‖ ։ Իսկ Թէ որո՛յ և յորս լինելոց էր այն իշխան՝ ասէ .

Պատմաբերելոց իշխանաց ժողովրդոց հանդերձ ցեղիւքն Իւր ։ Այս բան կրկնակի մեկնի . նախ՝ Թէ այն իշխան կամ նա ինքն ա՟մ իշխեսցէ երկոտասան իշխանաց ժողովրդեան՝ որք իցեն գումարեալ 'ի մի , այսինքն միաբանեալք 'ի մի կրօն՝ հանդերձ իւրեանց ցեղիւք . և այս խորհրդաբար հայի 'ի միաբանութի երկոտասան առաքելոց , և համօրէն հաւատացելոց . որոց իշխէ քս ։ Երկրորդ՝ Թէ այն իշխան ցայնքան ըստ արժանւոյն տիրեսցէ նոցա , ցորքան իշխանք ժողովրդոցն գումարեալ իցեն . յա միաբան և միակամ իցեն յինքեանս հանդերձ ամենայն ցեղիւքն իսրայէլի ։

Դսա աւարտ տանեալ մովսէսի հասարակական բանիցն՝ իջանէ 'ի մասնաւորս՝ յօրհնել զիւրաքանչիւր ցեղ որդւոցն իլի . և նախ խօսելով զռաւբենէ՝ ասէ .

6 . Կեցցէ ռուբէն , և մի՛ մեռցի . և եղիցի բազմաւոր Թուով ։

Ռուբէն վս ազգապղծութեն՝ զոր արար ընդ բաղզա ը կին հօր իւրոյ՝ արժանի գտաւ պատժոց և մահու . սակայն և հայր նորա յօրհնելն ասաց ցնա . * իբրև զջուր մի՛ եռասցես ‖ . այլ բանիւ ա՟մ հաւանական Թուի բազմաց , պաշտօնեաց

նա

նա 'ի վերայ այսր, վ՛սն մեղաց մտանելս զպատիժն ա-
սելով :

Կեցցէ ռուբէն եւ մի մեռցի . եւ եղիցի բազմաւոր թուով .

Այսինքն թէ մնասցէ եւ տեւեսցէ ազգն ռուբէնի, եւ մի խափանեսցի ընջեսցի . եւ եղիցի բազմաւոր թուով . ուր բառդ բազմաւոր՝ ոչ ցուցանէ զյաձախութիւն, այլ մանաւանդ զնուազութիւն . իբր. թէ բազմութի նոցա մի լիցի իբր անթիւ, որպէս այլոցն եղեւ, այլ թուելի . յայլ սակս յեբր" ոչ բազում գնի եւ ոչ սակաւ, այլ թէ լիցի թիւ արանց նորա, որպէս է եւ 'ի քաղդ" եւ 'ի սամար" . զոր եօթանասունք թարգմանեն՝ բազումք . իսկ լատինացիք սակաւ :

Այլ դիտել արժան է՝ զի յեօթ" յօրինակս ինչ յաւելեալ լինի սուտ եւ անուն շմաւոնի . ուր եւ բանն առաջի գնի այսպէս . * եւ եղիցի շմաւոն բազմաւոր թուով ‖ . ըստ որոյ 'ի լուսանցս տպագրեալ Ածաշնչի մերոյ եդեալ է բառդ շմաւոն : Բայց որպէս ասեն մեկնիչք, այդ բառ յեւոյ է յաւելեալ 'ի թարգմանութ. եօթ" . նախ՝ զի ոչ գնի այդ ոչ յեբր", ոչ 'ի սամար", ոչ 'ի քաղդ", ոչ յասոր", ոչ յարաբ", ոչ 'ի լատ", եւ ոչ 'ի մերումս, եւ ոչ 'ի հնոց օրինակս եօթանասնից . երկրորդ՝ զի բազում մեկնիչք, որք ըստ եօթանասնից մեկնեն՝ ոչ յիշեն զայդ . եւ ամենեքին հաստատեն՝ թէ մովսէս զանց արար յիշել զանուն երկրորդ որդւոյն յակոբայ, այսինքն զանուն շմաւոնի . գուցէ վ՛ս կամելոյ նորա անյիշատակ առնել զնա 'ի ցեղից՝ յառաջնորդ լինելն նր 'ի վաճառմանն յովսեփայ . որոյ վ՛ս իսկ եւ ինքն յովսէփ առ 'ի պատիժ այսր գործոյ նր կապեաց զնա, եւ եդ 'ի կալանս :

Ի բաղդատական մեկնաբանութեն այս բան գրի

այս-

այսպէս. * կեցցէ ռուբէն յաւիտենական կե-
„ նօք. եւ մի մեռցի երկիրորդ մահուամբ, եւ առ-
„ ցեն որդիք նորա զժառանգութիւն իւրեանց ըստ
„ թուոյ իւրեանց ‖. եւ այս եւս չէ խոտելի ըստ
խորհրդական մտաց իմացեալ: Դառնայ ապա
մախեւս խօսիլ զցեղէն յուդայ:

7. Եւ զայս ասէ զյուդայէ. լուր Տէր ձայնի յուդայի. եւ 'ի ժողովուրդս իւր եկեսցէ. եւ ձեռք իւր ընտրեսցեն նմա. եւ օգնական 'ի թշնամեաց եղիցես նմա:

Յասելն * լուր Տէր ձայնի յուդայի ‖, ձայնիւ իմացեալ լինի աստ աղօթք եւ մաղթանք. որպ դնի 'ի քաղդ". եւ զայս ասէ՝ ոչ զի աղօթից նորա միայն լսելոց էր Տէր, այլ զի լսելով նմա՝ հաճելոց էր ընդ նմա՝ 'ի գալ առ նա եւ յօգնել. ամէն իրէ ասէ:

Լուր Տէր ձայնի յուդայի. եւ 'ի ժողովուրդս իւր եկեսցէ. եւ ձեռք իւր ընտրեսցեն նմա: Կամի ասել. լուր Տէր յաղօթել ազգին յուդայ. եւ 'ի ժողովուրդ իւր եկեսցես. որպէս 'ի կարօտիլ ժողովրդեան իւր՝ հասուսցես զօգնութիւնս 'ի նմա, եթէ 'ի պատերազմի, եւ եթէ 'ի յանդորրու. եւ ձեռք իւր ընտրեսցեն նմա, որպէս ձեռք յուդայ կամ զօրութիւնք յուդայի ընտրեսցեն՝ եւ հաճեսցին պատերազմիլ վասն իւր իբր առաջին իշխան. որպէս եւ եղեն իսկ. տես 'ի դատ. ա. 2. յոր միտ յեբր" եւ 'ի լատ" դնի. * ձեռն իւր հեռակեսցի նմա ‖, որպէս թշնամեաց. կամ * ձեռք իւր մարտիցեն փոխ իւր ‖. սոյնպէս է եւ յասոր" եւ յարաբ": Եւ զի զայս արար նա՝ ունելով իւր օգնական զՏէր, վասն յաւելու ասել:

Եւ օգնական 'ի թշնամեաց եղիցես նմա: Այսինքն՝ 'ի պատերազմիլ ազգին յուդայ վասն իւր ընդդէմ թշնամեաց նոցա, դու ինքն Տէրդ իւր ապրեցուսցես 'ի թշնա-

թշնամեաց։

Խորհրդաբար այս բանք առաջի դնին իբր յայտ-նի գուշակութիւնք հաճութեան կամաց որդւոյն այ 'ի գալ նորա 'ի ժողովուրդ յուդայի. ըստ որում ասէ առաքեալն. (Եբր. Է. 14.) *յայտ իսկ է՝ թէ յազգէ յուդայ ծագեաց տր մեր‖. և ազգն այն՝ մանաւանդ թէ ազգ մարդկան՝ ընտրեաց նմա և իբր ձեռօք մատոյց նմա զկոյսն մարիամ, յորմէ ծնաւ նա. որում և եղև օգնական նմա, զի ազգին՝ յաղթել նր զնա 'ի թշնամեաց նր, զի 'ի դիւաց. և կամ նոյն ինքն տր տարածմամբ ձեռաց իւրոց ընտրեաց զեկեղեցի իւր. և օգնեաց և օգնէ նմա յանմի։ Աստ դառնայ մովսէս խօսիլ և ըն ղևեայ։

8. Եւ ղևեայ ասէ. Տուք ղևեայ յայտնութիւն, և ըզ-ճշմարտութիւն նր առնն սրբոյ, զոր փորձեցին փորձութեամբ. և բամբասեցին զնա 'ի վր ջրոյն հակառա-կութեան։

Յերկոտասանցեղիցն 'ի լի ցեղն ղևեայ ընտրեցաւ 'ի ծառայութիւն պաշտամանն տն. և 'ի ցեղէ անտի որոշեցաւ տունն ահարոնի 'ի քահանայութիւն. և տուեալ նմա իշխանութիւն մեկնելոյ զբանս յայտ-նեալս յօրէնս այ, և զճշմարտութիւն նր. յայս հայելով ասէ։

Տուք ղևեայ յայտնութիւն, և զճշմարտութիւն նր առնն սր-բոյ. զոր փորձեցին փորձութեամբ. և բամբասեցին զնա 'ի վր ջրոյն հակառակութեան։ Տուք ասելով ոչ եթէ ըղ-նորոգ տալն յայտ առնէ, այլ ցուցանէ՝ թէ այնմ ցեղի տուեալ է տեղեկանալ յայտնութեանցն այ, և ճշմարտութեն նորա. և զի մասնաւորապէս տանն ահարոնի տուաւ այս, զնա եւս յիշէ 'ի մասնա-ւորի՝ ասելով առն անարատի. որպէս թէ ասէր.

թէ

Թէպէտ յանձն զեւեայ տուեալ պաշտօն ամենայն, բայց տիրապէս տանն առն անարատի, որ տանն աշխարհի պատկանեալ եղեւ կատարել զայն, և մեկնել զօրէնս. ուստի յերբ" և 'ի լաւ" դնի. * կատարելութիւնք և լուսաւորութիւնք (կամ վարդապետութիւնք) առն բարեպաշտի (կամ որդ) ||:

Մ. յաղագս գործոյ տանն աշխարհի՝ բազմ անգամ փորձեցին զնա ինքն զաշխարհն և և զմովսէս, և բամբասեցին զնա, մանաւանդ դադան և աբիրոն և կորխ, և եղեւ և դարձան 'ի տեղւոջն՝ որ կոչեցաւ հակառակութիւն վր հակառակելոյ 'ի վր ջուրց. որով և արգելաւ աշխարհն որ նմին և մովսէս՝ չմտանել յերկիրն աւետեաց. (Թուոց. ի. 28.) տես և 'ի մեկն սաղ. Ձէ. 30: Իսկ Թէպէտ յայլս բաց յեօթանասնից յերկրորդ դեմս դնի այս բան, յասելն փորձեցեր և դատեցեր, բայց 'ի նոյն միտս է իմանալի. որ որում ան թոյլ ետ փորձել զնա 'ի վր ջուրցն հակառակութ: Ս այս եղեալ մովսէսի՝ 'ի մէջ բերէ և զառաքինի գործս քաջութ ցեղին ղեւեայ, և ասէ:

9. Որ ասէր ցհայր իւր և ցմայր իւր, թէ ոչ տեսի զքեզ. և զեղբարս իւր ոչ ծանեաւ. և զորդիս իւր ոչ գիտաց. պահեաց զբանս քո. և զուխտ քո պահեաց:

'Ի պատմել որ զգործխոն նխվն պաշտելոյ նոցա զործն՝ էառ 'ի ձեռս զցեղն ղեւեայ. որք մտեալ 'ի ժողովուրդն՝ հարին զնս քսան երեք հազար ոգիս. որս և զհարս և զմարս և զեղբարս իւրեանց. (ելից. լբ. 28). և զայս արարին նախանձայուզութ մեծաւ՝ առ 'ի կատարել զհրաման ան. յայս ակնարկելով ասէ:

Որ ասէր ցհայր իւր և ցմայր իւր, թէ ոչ տեսի զքեզ. և

զեղբարս իւր ոչ ծանեաւ. և զորդիս իւր ոչ գիտաց. զգու-
շացաւ բանից քոց, և զուխտ քո պահեաց ||: Յայսմիկ
լինի որդիքն ղեւեայ 'ի վատթարել զհրամանն տն ոչ
խնայեցին 'ի հայր և 'ի մայր իւրեանց, և ոչ յեղ-
բարս և յորդիս՝ ոչ կարելով ճանաչել և որոշել
զնոսա. զի որովհետև այս հրամանած կայր ինն տագ-
նապաւ եղև, զի թէ ոչ տեսանէին՝ զորս հար-
կանէինն: Սոյն քանզի ցեղս այս ը պաշտաման
իւրում զգուշաւոր գտաւ 'ի պահպանութեան օրի-
նացն այն՝ և ուխտից նր, վսն յայտ թէ *զգուշա-
ցաւ բանից քոց և զուխտ քո պահեաց ||. ( եղից.
իը. 8.)

Նախագահպէս, սոյն այս յարմարի կրօնաւորաց 'ի
թողուլ նց զհայր և զմայր իւրեանց, և 'ի յետս
կալ 'ի խնամելոյ զհոգս նց ը խրատու փրկչին.
և 'ի զգուշանալ նոցա բանիցն քրի՝ առ. 'ի անա-
րատ պահել զուխտ իւրեանց՝ զոր ուխտեցին.
( սաղ. խը. 11.) յորոց օրինակ յաւելու և զու-
սուցանել ղևտացւոց զհրամանս տն, և ասէ:

10. Պատմեսցեն զիրաւունս քո յակոբայ, և զօրէնս
քո իսրայէլի. դիցեն խունկս 'ի բարկութեան քում հա-
նապազ 'ի վր սեղանոյ քո:

Յայս պաշտօն ցեղին ղեւեայ հայի առ որդիս ա-
հարոնի. զի նոցա էր օրէնս պատմել ազգին յա-
կոբայ, եթէ զարարողական հրամանս, եթէ ըղ-
դատաստանական իրաւունս, և եթէ զբարոյա-
կան պատուիրանս. և և մատուցանել խունկս
'ի սեղան տն: և զի այլ ղևտացիք ևս 'ի պարա-
գայս այսոցիկ գործոյ գործակից լինէինն նց, վսն
'ի հասարակի խօսելով ասէ:

Պատմեսցեն զիրաւունս քո յակոբայ, և զօրէնս քո իսրայէլի.
դիցեն խունկս 'ի բարկութեան քում հանապազ 'ի վր սեղանոյ

րո ։ Նայինքն թէ որդիք ղեւեայ քննելով և բաժ-
ւոք հասու լինելով իրաւանց և օրինացն նոյ,
պատմեսցեն զայնս իէղացւոց. և ընդ սահմանեալ
ժամանակին անխափան մատուսցեն խունկս և
ողջակէզս 'ի վ̃ր սեղանոյ քո, մանաւանդ 'ի ժա-
մանակի բարկութե, զի յայնպիսի ժամանակի՝ յո-
րում բարկութի քո պատուհասեսցէ զն̃ս ։
Յեբր" փոխկ բառիս հաւաքայ՝ դրի քայլիլ, կամ
քօխալիլ. որ եղանէ 'ի բառէս Հ Ծ. որ եթէ ըն-
թերցեալ լիցի քօլ՝ նշանակէ ն̃մ, եւս և յն̃մ ժա-
մանակի. և ընդ այսմ եօթանասունք և մերքս
եդին համապաղ. իսկ եթէ ընթերցեալ լիցի
քիլլա, նշանակէ ծախել, կամ սպառել. որոյ
վ̃ս զբառդ քօխալիլ՝ լատինք թարգմանեցին ող-
ջակէզ. ասորիք՝ սպառումն կամ ծախումն (զո-
հի). սոյնպէս և արաբացիք եդին կատարեալ
(զոհ) ։ Զայս եդեալ մովսէսի վ̃ս ղեւտացւոց՝
խնդրէ յն̃յ օրհնել զն̃ս. ուստի ասէ ։

11. Օրհնեա՛ տէր զզօրութի նորա. և ընկա՛լ զգործս ձեռաց նր̃. խորտակեա՛ զմէջս 'ի վ̃ր յարուցելոց թշնամեաց նր̃. և ատելեաց նր̃ մի կանգնեսցին ։

Երկու ինչ եդ 'ի վերոյ. մի՝ զօրանալ ղեւտացւոց
'ի կատարումն հրամանին ն̃յ առ հարուածելոյ
զերնջապաշտսն. և մի եւս՝ պատմել զօրէնս, և
մատուցանել զոհս ։ Յերկոսին 'ի սոսա հայելով
ասէ ։

Օրհնեա՛ տէր զզօրութի նր̃. և ընկա՛լ զգործս ձեռաց նր̃ ։
Կամի ասել. որովհետև զօրացաւ ցեղն ղեւեայ՝
'ի կոտորել զայնոսիկ՝ որք թողեալ զքեզ՝ պաշ-
տեցին զորթն, վ̃ս այսր նախանձաւորութե նոցա՝
օրհնեա՛, զի հաստատուն պահեա՛, և առաւե-
լացո՛ զզօրութի նոցա ը̃դդէմ թշնամեաց, եւս և
վոր-

վարժատրեալ զաշխատանս նոցա՝ որովք աշխատին 'ի պաշտօն գործոց և այլոց արարողութեանց ։ Հայելով ապա և 'ի թշնամիս նոցա՝ յաւելու և ասէ ։ Խորտակեսցէ զմէջս 'ի վր յարուցելոց թշնամեաց նր, և ատեցելոց նր մի կանգնեսցին ։ Այսինքն թէ յօրհնել քո զզօրութի ղևտացւոց՝ ընդդէմ թշնամեաց, եթէ զօրասցին թշնամիք, և յարիցեն 'ի վր, դու ինքն խորտակեա զմէջս նց, յորում բնակէ զօրութի նոցին. և այնպէս արա, զի մի կարիցեն միւսանգամ յառնել 'ի վր նց ։ Այս բանք տիրապէս կատարեցան 'ի մակաբայեցիս, որք էին յազգէն ղևեայ և խորհրդաբար 'ի պաշտօնէից եկեղեցւոյ ։ Դառնայ ապա մարգարէն խօսել և վս բենիամինի ։

12. Եւ զբենիամինէ ասէ. Սիրեցեալն 'ի տեառնէ բնակեսցէ յուսով. և ած հովանի լիցի նմա զամենայն աւուրս. և 'ի մէջ ուսոց նր հանգիցէ ։

Թէպէտ և կրսեր էր բենիամին, բայց մարգարէն զկնի ղևեայ դասէ, թերևս վնկ, զի 'ի վիճակին բենիամենի բնակելոց էին ղևտացիք ծառայօղք տաճարին. ը̃ որում 'ի վիճակի նց շինեցաւ տաճարն. զի այն տեղի թէպէտ և եղև ը̃ իշխանութբ յուդայ, բայց էր 'ի բաժնին բենիամենի ։ Այս հայելով մարգարէին՝ աստ դնէ զբենիամին. և գոլութբ իւր խօսի, ասելով. Սիրեցեալն 'ի տնէ բնակեսցէ յուսով ։ Սիրեցեալ 'ի տն ասէ. զի բենիամին սիրեցեալ լինելով 'ի հօրէ իւրմէ յակոբայ՝ այնու սիրեցեալ լինէր և 'ի տնէ. և գուցէ 'ի սոյն սակս նախ ցեղին նր ետ ած զիշխանութի թ̃գրութե յընտրելն զսաւուղ, որ էր 'ի բենիամինէ. նա զի որպէս ասացաք՝ հաճեցաւ ած կանգնել զտաճար իւր յեղիմ, որ էր

'ի վիճակին բենիամենի. և մինչ յաւելու զկնա_կելն յուսով. ի բրգլի տեսեալ նր՝ թէ ած հաճե_ցաւ բնակել 'ի վիճակի իւրում, ինքն ևս զկյոս իւր եդեալ 'ի նա՝ բնակեցի խաղաղութ. Այս

զաւաւելն 'ի մէջ մատուցեալ ասէ.

Այս ած հովանի լինի նմա զամ աւուրս, և 'ի մէջ ուսոց նր հանգչի։ Բնաւդ և կարէ ունիլ աստ վերջանա_կութեան պատճառական շաղկապիս ըն. իբր թէ պատճառ յուսով բնակելոյն բենիամենի այս է՝ զի ած հովանի է նմա, Լա. իսկ հովանի լինելն

ոչ նշանակէ զպաշտպանելն նր.

Նաև զոր յաւելու ասել* 'ի մէջ ուսոց նր հանգ_եաւ ‖, յայս բան դերանունս նր՝ ըստ ոմանց վե_րածի առ ած. զի որոյ կամի ասել. ցեղն բենիա_մենի ընտրեցաւ հանգչել 'ի մէջ ուսոց, այս 'ի մէջ խնամոցն ոյ. և այս վս պահպանեալ լինելոյ 'ի

նմանէ իբրև 'ի մէջ ուսոց նր.

Բայց հաւանականագոյն է ասել, թէ այդ դեր_անունն վերածի 'ի ցեղն բենիամինի. և բառդ 'ի մէջ ուսոյ՝ զի երրայական ոճոյ՝ դնի սոսկ փոխ բառիս 'ի մէջ. և զի այսմ կամի ասել. ած հանգ_չի 'ի մէջ բենիամինի. որովհետև ընտրեաց 'ի մէջ վիճակին նր բնակել. Այս զի տաճարն ածն՝ որ էր անդ՝ ուսովք էր բառնալի, թերևս յայս հայելով՝ փոխ ասելոյ 'ի մէջ բենիամենի՝ դնէ 'ի

մէջ ուսոց.

Խորհրդաբար, բենիամենիւ նշանակի եկեղեցի Քս սիրեցեալ 'ի քէն. որ և բնակէ 'ի վր երկրի յուսով ժամանելոյ առ նա. և նա ինքն հովանի է նմա զամ աւուրս մինչև 'ի կատարած աշխ. և 'ի մէջ ուսոց նր հանգչի. այս թէ 'ի նմա բնակէ հանգստեամբ յն և իւր տառապանս՝ զորս կրէ

համբերութ, իբր ուսովք.

Այս

13 · Եւ զՅովսեփայ ասէ · յօրհնութենէ տ՟ն երկիր ն՟ր · 'ի ժամանակաց երկնից, եւ 'ի ցօղոյ, եւ յանդնդոց աղբերաց 'ի ներքուստ ։

14 · Ի ժամանակի արդեանց արեգական փոփոխմանց, եւ 'ի գումարելոյ առ միմեանս ամսոց ։

15 · Ի գագաթանց լերանց սկզբան, եւ 'ի գլխոց բլրոց մշտնջենաւորաց ։

Ցեղն յովսեփայ ո՟ր ասացաք յօրհ · ԺԵ · 22 · եւ 28 · յերկուս բաժանեցաւ յերկուց որդւոց ն՟ր՝ յեփրեմայ եւ 'ի մանասէէ · զերկոսին զսոսա եւս 'ի մի անուն յովսեփու օրհնէ աստ մարգարէն, եւ ասէ ։

Յօրհնութենէ տ՟ն երկիր նորա 'ի ժամանակաց երկնից, եւ 'ի ցօղոյ, եւ յանդնդոց աղբերաց 'ի ներքուստ ։ Ա՟յսինքն՝ օրհնեալ լիցի երկիրն՝ յոր բնակի յովսէփ ։ Եւ զայս օրհնութի դնէ լինել 'ի հինգ իրաց · նախ՝ 'ի ժամանակաց երկնից · ա՟յ որում յերկնից չափին ա՟մ ժամանակք · որով ցուցանի, թէ ո՟րպ ոչ դադարին ժամանակք երկնից՝ 'ի ցուցանել զաւուրս, եւ 'ի հեղուլ զազդեցութիս իւրեանց, այսպէս եւ յերկրէն յովսեփայ ոչ պակասեսցի օրհնութիւն ա՟յ ։ Եւ զի երրայական բառն համ է աստ եւ 'ի յաջորդ համարն, այն՝ որ 'ի մեզ ա՟յ եօթանասնից եդեալ է 'ի ժամանակաց, յոմանս թարգմանեալ է 'ի փափկութենց, եւ յոմանս 'ի պտղոց կամ յարդեանց · որով ցուցանի արդիւնաւորութի երկրին յազդմութէ աստեղաց ։ Երկրորդ՝ 'ի ցօղոյ երկնից · իբր թէ երկիրն այն պարարտասցի 'ի ցօղոյ իջելոյ յերկնից · եւ այս յիրաւի · զի այն երկիր ոչ կրէր զցամաքութի ։ Երրորդ՝ յանդնդոց աղբերաց 'ի ներքուստ · ա՟յ 'ի ջուրց աղբերաբար բղխելոց 'ի խորութէ՝ որ է 'ի ներքոյ հողոյ ։

զայ : Սպիմեք ցուցանի առաւելուն օրհնութեան յովսեփայ . իբր զի երկինք և ցօղ երկնից և աղբիւրք բղխեալք 'ի խորոց՝ ունելին լիացուցանել զամ արդիւնս երկրին յովսեփայ : Դնէ և զչորրորդն ասելով :

14 . 'Ի ժամանակէ արդեանց արեգական փոփոխմանց, և 'ի գումարելոց առ մեծանս ամսոց : Այսինքն թէ որչափ արդիւնք յառաջ գան 'ի ժամանակի փոփոխման արեգական ի չորից եղանակաց, և 'ի գումարելոյ կամ 'ի հաշուելոյ լուսնական ամսոց ընդ միմեանս, յայն ամ արդեանց լիասցի երկիրն յովսեփայ :

Այլ աստ գիտելի է, զի յածաշնչի մերում փոխանակ ամսոց՝ եդեալ է ամպոց, որ է յայտնի սխալ գրչաց . որպէս յայտ է 'ի թարգմանութէ եօթանասնից . ուր դնի . * 'ի ժողովոց ամսոց ||. որոյ փոխան յեբր" և յայլ ամ թարգմանութեան լուսին դնի . զի յեբր" դրի . * 'ի փափկութէ ընկեցման լուսնի ||. 'ի լատ" դնի . * 'ի մրգաց պտղոց արեգական և լուսնի ||. յասոր" . * և 'ի պտղոյ զոր արտադրէ լուսին ||. յարաբ" . * 'ի փափկութեց ընդդոց լուսնականաց ||. որովք յայտնի երևի, թէ Մովսէս զարդեանց ամսական շարժման լուսնի խօսի աստ, և ոչ զամպոց : Կարգէ ապա և զհինգերորդն ասելով :

15 . 'Ի գագաթանց լերանց սկզբանց, և 'ի գլխոց բլրոց մշտնջենաւորաց : Կամի ասել . այն լերինք՝ որք 'ի սկզբանէ էին պարարտք, նոյնպէս և այն բլուրք՝ որք կային միշտ 'ի ստեղծմանէ անտի, լիասցուսցեն զերկիրն յովսեփայ . լերինք 'ի գագաթանց, և բլուրք 'ի գլխոց . իբր թէ ասէր . պարարտութիւնք լերանց և բլրոց հոսեսցին յերկիր յովսեփայ :

Այլաբանօրէն, այս երկիր յովսեփայ է եկեղե-
ցի քնի. որոյ օրհնութիւն յերկնից է, և 'ի ցօղոյ
շնորհաց, և 'ի խորոց խորհրդոց, և 'ի բազմա-
պատիկ պարգևաց սրբազանն արդարուն, և
'ի գումարելոց աւուրց զանազան տօնից առ մի-
մեանս յարմարելոց. և 'ի գագաթանց լերանց
սկզբանց՝ քն 'ի հրեշտակաց, և 'ի գլխոց բլրոց՝
քն 'ի սրբոց. մինչև լրանալ նմա ըստ ամի ամ օրհ-
նութիւնք: Յետ օրհնելոյ մարգարէին զերկիրն
յովսեփայ՝ օրհնէ և զնոյն ինքն զյովսէփ յոր-
դիսն նր, և ասէ:

16. Ըստ ժամանակի երկրի լրումն. և ընդունե-
լութիւնք երևելոյն 'ի մորենւոջն եկեսցեն 'ի վե-
րայ գլխոյն յովսեփայ, և 'ի վերայ գագաթան փառա-
ւորելոյն 'ի մէջ եղբարց:

Լրումն երկրի ասէ այն՝ որով լիացեալ տեսանէ
երկիր բարեօք իւրովք, որ և ասի օրհնութիւն երկ-
րի: Իսկ բառդ ընդունելութիւնք՝ նշանակէ զօրհնու-
թիւնս այ ընդունելոյ զայն. զի օրհնութիւն հայի 'ի
բարութիւն այլոյ. և այս՝ կամ 'ի ցոյց բարութեան՝
զոր ունի ոք, որ և յայտնի բանիւք. և կամ 'ի
ցոյց բարութեան՝ զոր ոչ ունի, և յայտնի մաղթա-
նօք. ըստ առաջնոյն ասեմք առ այ՝ օրհնեմք
զքեզ. որով խոստովանիմք, և իբրթէ յայտ առ-
նեմք զանձառ բարութիւն զոր ունի: Իսկ այ երկ-
րորդին օրհնեմք զայլս՝ մաղթելով նոցա զբարին՝
զոր ոչ ունին, և ընդունակ են այնմ. որպէս յորժամ
հայրն օրհնէ զորդի իւր ասելով, զօրասցիս, մե-
ծասցիս, լիասցիս, եւն: Այս երկրորդ տարազ
օրհնութեան ընդունելութիւն կոչի ուրեք ուրեք 'ի գիրս.
որպէս և 'ի ծննդ. խթ. 26. ըստ այսմ դնի և աստ.
որոյ փոխանակ յասոր'' դնի հաճութիւն կամ բարե-

հաճոյն. յորում" ողջոյն. և 'ի լաւս" օրհնութիւն. իսկ յեօթ" ըստ մերումս՝ ընդունելութիւն, և կիր ընդու- նման. յայս միտ խոստովանել ասէ ։

Եւ բաց ժամանակէ երկրի լրութեան, և ընդունելութիւնք ե- րևելոյն 'ի մորենւոջն եկեսցեն 'ի վերայ գլխոյն յովսե- փայ, և 'ի վերայ գագաթան փառաւորելոյն 'ի մէջ եղ- բարց ։ Կամի ասել. յօրհնել երկրին յովսեփայ, և 'ի լինել նորա ըստ ժամանակին՝ ընդունելութիւնք, ըստ օրհնութիւնքն այն՝ որ երևեցաւ մովսէսի 'ի մորեն- ւոջ, եկեսցեն 'ի վր յովսեփայ, և իջցեն իբ- րև պսակ 'ի վր գագաթան այնորիկ՝ որ փա- ռաւորեալն էր 'ի մէջ եղբարց իւրոց ։

Այս բանք հայցին և յանցեալն. որպէս թէ եղեալ էր. որովհետև անարգեալ եղև յովսէփ յեղ- բարց իւրոց յանիրաւի, և 'ի գուբ մատնեցաւ 'ի թշնամանաւն, վասն որոյ արժանացաւ զի իջցեն ընդու- նելութիւնք՝ ըստ օրհնութիւնքն այն 'ի վր նր, և կարգես- ցեն զնա լինել գագաթն՝ ըստ գլուխ և իշխան եղբարց իւրոց և բովանդակ եգիպտացւոց ։

Մարգարէն փոխի ասելոյ այլ՝ զնէ երևելոյն 'ի մո- րենւոջ. և այս՝ վասն երից. մի՝ վասն ոչ իշխելոյ առ- նուլ 'ի բերան զանունն զայն, զոր լուաւ 'ի մո- րենւոջ ։ Երկրորդ՝ վասն հայելոյ 'ի համեմատութիւն անծայրին օգնականութեան՝ 'ի ցուցանել, թէ որպէս երևմամբ 'ի մորենւոջ եհան յօգնութիւն իսրայէլացւոց, սոյնպէս և յայտնելով զինքն յովսեփայ՝ օգնեաց նմա ։ Երրորդ՝ վասն մեծացուցանելոյ զօրհնութիւն իւր. որպէս թէ եղեալ էր. զոր ինչ օրհնութիւն ըն- կալաք, և զոր ինչ խոստումն բարեաց լուաք յե- րևելոյն այլ 'ի մորենւոջ՝ այն ամենայն եկեսցէ 'ի վերայ գլխոյն յովսեփայ ։

Յերբ" և 'ի լաւս" փոխի բանիս փառաւորելոյ՝ գրի նազովրեցւոյ՝ որպէս և յօրհ. ժէ. 26. Իսկ նազովր-

րա-

բայլին նշանակէ բաժանեալ իբր ուխտաւոր, եւս և պատկեալ և փառաւորեալ. և զնի աստ փնիկ յովսեփայ, զի և նա Քս բազում իրաց եղև բաժանեալ ոչ միայն Քս վարուցն սրբութե, զի որ էր 'ի մէջ եղբարց իւրոց, այլև՝ Քս իրական բաժանմամն. որով 'ի վաճառելն իւր՝ բաժանեցաւ 'ի նոցանէ. բաժանեցաւ և 'ի մեծէ անտի իշխանէ՝ որում վաճառեցաւ. բաժանեցաւ և յազատութէ անտի իւրմէ, և արկաւ 'ի բանտ։ Կարծեալ և Քս օրինակի ուխտաւորաց մնաց ան գերծ զամս երկուս 'ի բանտի. և հուսկ յետոյ բարձրացեալ յիշխանութիւն փառաւորեցաւ 'ի նմին. տես զայսմանէ և 'ի նախընթաց օրհ. համար. 26։ Նայլիսի իմն տեսեալ մարգարէին զյովսեփ, և այսչափ օրհնութե արժանաւոր, 'ի գովութի առնու զնա և ասէ։

17. Ընտրանիք ցլու գեղ նր. և եղջիւրք միեղջերուին եղջիւրք նր. խեթիւեսցէ նոքօք զազգս միանգամայն մինչև ցծագս երկրի. այս են բիւրաւորք եփրեմի. և սոքա հազարաւորք մանասէի։

Ընտրանին ցլու ասելով՝ իմանայ զզուարակն նախնին, Քս զեղն զայն՝ որ նախնին գոլով՝ առանց մօլեալ լինելոյ՝ հասեալ իցէ 'ի ժամանակ միաւորելոյ ընդ կովու. յորում հասակի կարի իմն նազելի երևի և գեղեցիկ։ Յայտնի գեղեցկութե գոլով յովսեփայ՝ յարեցաւ 'ի նա կոյն վավաշոտ՝ այն է տիկին իւր. այլ նա իբրև միեղջերու վանեաց զնա. յայս հայելով՝ ասէ. Ընտրանիք ցլու գեղ նր. և եղջիւրք միեղջերուին եղջիւրք նր. խեթիւեսցէ նոքօք զազգս միանգամայն մինչև 'ի ծագս երկրի. այս են բիւրաւորք եփրեմի. և սոքա հազարաւորք մանասէի։ Կյամի ասել. գեղեցկութին յով-սե-

սեփու նման է գեղեցկութե՛ նախածնին ցլու . որոյ վս կապեցաւ 'ի նա տիկին իւր . բայց եղջիւրք նր , այ զօրութիւնք նր , որք էին առաքինութիւնք նորին՝ եղեն նմա իբրև եղջիւրք միեղջերուի . զի միով բանիւ վարեաց զնա յիւրմէ : Այս օրինակ անդրանկան ցլու կարէ ցուցանել և զառաջնորդ-

լինել նր իբր ցուլ նախրաց :

Որդ ում ինքն՝ նոյնում և որդիք նր առ է լինիցին իբրև զցուլս . և զօրութք իւրեանց իբր եղջերօք միեղջերուի խեթկեսցեն և վանեսցեն զազգս բազումս՝ ուր և գնասցեն՝ մինչև 'ի ծագս երկրին պաղեստինու . և այսոքիկ որդիք նր ոչ են առ է սակաւք , այլ բազումք յոյժ ՟բ երկուց ցեղիցն՝ եփրեմի և մանասէի , եփրեմին բիւրաւորք , և մանասէին հազարաւորք : Այս բաղդատութի ոչ ցուցանէ բիւր նեթ կամ հազար նեթ լինել . այլ յայտ առնէ զբազմաւորութի երկուց եղբարց՝ որդւոցն յովսեփայ՝ զեփրեմին աւաւել քան զմանասէին :

Այլաբանօրէն՝ այս նմանաբանութի հայի 'ի մարդացեալն ա͞ծորդին , որ նմանեցաւ գեղեցիկ ցլու կամ զուարակի՝ ՟բ չորից . մի՝ զի իբր անդրանիկ ցլու գեղեցիկ ցուցաւ սիրելեաց իւրոց . երկրորդ՝ զի եղջերօք խաչին իւրոյ վանեաց զատելիս իւր , և նովին ձգեաց առ ինքն զհաւատացեալսն . երրորդ՝ զի առաջնորդեաց որդւոյ մարդկան 'ի կեանսն յաւիտենականս . չորրորդ՝ զի զենաւ իբրև զեզն պարարակ ՟բ առակի աւետարանին : Օ այսոսիկ ասացեալ մովսէսի վն յովսեփայ՝ դառնայ խօսիլ և զզաբուղոնէ և զիսաքարայ :

18 · Եւ զզաբուղոնի ասէ · ուրախ լեր զաբուղոն յելս քո · և զիսաքարայ ասէ · 'ի բնակութեան նոցա · ազգք սատակեսցեն ·

Ցեղն զաբուղոնի զհետ էր նաւարկութե և վաճառականութե 'ի ծովու · զի բնակէր առ ծովեզերբն տիբերեայ · իսկ ցեղն իսաքարայ զհետ էր երկրագործութե , և բնակէր 'ի յանդորրու ·
վասն զզաբուղոնէ ասէ ·

Ուրախ լեր զաբուղոն յելս քո : Կամի ասել · թէ ազգ զաբուղոնի որովհետև ընտրեցեր դու սպառապիլ նաւարկութե , ուրախ լեր յելանելդ 'ի գնալ, և յելանելդ 'ի դառնալ · և տէր յաջողեսցէ քեզ ·
Եւ զիսաքարայ ասէ :

'Ի բնակութեան նոցա · ազգք սատակեսցեն : Կամի ասել · իսաքար ոչ տեսցէ զխռովութիւն · զի կայ 'ի յանդորրու՝ կից 'ի բնակութիւն նոցա , որ 'ի բնակութիւն զաբուղոնեանց : Եւ 'ի զօրանալ նոցա՝ անդ՝ մերժեսցեն 'ի նոցանէ օտար ազգք , և սատակեսցեն : Բայց յետին բանս ոչ գոյ յեբր" և ոչ յայլ թարգմանութիւն , այլ յեօթ" միայն · և այն 'ի սկիզբն յաջորդ համարոյ · բայց այդ չէ ինչ · թերևս պակասեալ իցէ յեբրայականն : Առաջի ապա մարգարէն 'ի խօսիլ զմասնաւոր գործոյ երկուց ազգացս այսոցիկ , և ասէ :

19 · Եւ անդր կոչեսջիք · և զոհեսջիք զոհս արդարութե · զի զմեծութի ծովու դիեցուսցէ զքեզ · և զվաճառականաց առ ծովեզերբ բնակելոց ·

Գիտելի է՝ զի յերկուց ցեղից աստի էին վարդապետք գալիլեացւոց՝ որք յորդորէին զժողովուրդն ելանել յերուսաղէմ 'ի տաճար տն · որպէս աւանդեն մեկնիչք · վասնորոյ ասէ նախ :

Եւ

Լ,ա — անդր կոչեսցեն · եւ զոհեսցեն զոհս արդարութե : Նմա-
մի ասել · որովհետեւ յօժարամիտք էք դուք 'ի
բարին՝ հրաւիրեսջիք զայլս գնալ 'ի լեառն 'տր.
յեղմ, առ 'ի զոհել անդ զոհս արդարութե , որ
զզոհս յարդար վաստակոց : Ասացի 'ի լեառն ,
զի յայլս բաց յեօթ՛՛ դնի · * կոչեսցեն զժողո-
վուրդս 'ի լեառն ‖ : Խօսելով ապա եւ զմեծութե
նց , ասէ :

Զի զմեծութեն ծովու դիեցուսցէ քեզ · եւ զվաճառա-
ռաց ու ծովեզերեայ բնակելոց : Նման ասել · տեղին
այն՝ յորում բնակիք՝ տացէ ձեզ գիւղ որ շահիլ
զարդիւնս 'ի վաճառաց եկելոց 'ի ծովէ , եւ ժո-
ղովել առ ձեզ զստացուածս վաճառականաց՝
որք բնակին յեզերս ծովու · կամ թէ ունիլ զըս-
տացուածս՝ որք բնակին , որ որք լինին յեզերս
ծովու · ըստ որոյ 'ի լատ՛՛ դնի * զգանձս ծած-
կեալս աւազոյ ‖ :

Այլաբանօրէն՝ այս բան եւ նախընթացն որ ասի
'ի բերանոյնքն առ առաքեալսն · զի նախ ինքն՝ որ
յղացաւ եւ սնաւ յերկրին զաբուղոնի 'ի նազա-
րէթ , եւ յերկրի անդ կենցաղավարեցաւ , պատ-
ուիրեաց աշակերտաց իւրոց՝ աւետարանել զար-
քայութին այ · եւ նք քարոզութեն իւրեանց զմե-
ծութին ծովու՝ որ զբազմութի ազգաց դիեցուցին ·
եւ զխորս բնակելոց յեզերս ծովու՝ որ զխորս
տառապելոց եւ աղեկոծելոց՝ ձգեցին առ քս · եւ
զախեզերս համօրէն ժողովեցին 'ի մի եկեղեցի ,
մատուցանել այ զպատարագս արդարութե ·
վասն որոյ գոչէ առ նոսա մարգարէն ուրախ
լինել յելս իւրեանց : Պատմոյ ապա խօսել
զգադայ :

20․ Եւ գադայ ասէ․ օրհնեալ՝ որ ընդարձակեաց զգադայ․ հանգեաւ իբրեւ զառիւծ․ եւ խորտակեաց զբազուկս եւ զիշխանս։

21․ Եւ ետես զիշխանութիւն իւր․ զի անդ բաժանեցաւ երկիր իշխանաց ժողովրդոց հանդերձ առաջնորդօք առաջնոյ ցեղիցն իսրայէլի․ զարդարութիւն Տր արար, եւ զդատաստան իւր ընդ իսրայէլի։

Պիտելի է, զի յառաջ քան զանցանել իսրայէլացւոց ընդ յորդանան, 'ի հարկանել նոցա զթագաւորս ամորհացւոց՝ զովգ եւ զսեհոն, ցեղն գադայ ընտրեաց բնակիլ անդ․ այլ 'ի բարկանալ մովսէսի 'ի վերայ նոցա՝ թէ ընդէր այսպէս առնելով լքուցանէք զսիրտ եղբարց ձերոց՝ չանցանել ընդ երկիրն քանանու, նոքա խոստացան կանխել քան զնոսա, եւ նոքօք անցանել ընդ երկիրն․ եւ պատերազմակից լինել նոցա ընդդէմ թշնամեաց նոցին․ մինչեւ նոքա եւս ժառանգեսցեն զբաժին իւրեանց։ Ի սոսին հայելին առաջի եդեալ բանքդ՝ զոր ասէ։ Օրհնեալ՝ որ ընդարձակեաց զգադայ․ հանգեաւ իբրեւ զառիւծ, եւ խորտակեաց զբազուկս եւ զիշխանս։ Այսինքն՝ օրհնեալ է Աստուած՝ որ ետ գադայ զընդարձակ տեղի յայնկոյս յորդանանու․ որք եւ 'ի նստելն անդ 'ի մղել իսրայէլացւոց զպատերազմունս՝ քաջութեամբ խորտակեցին զբազուկս եւ զիշխանս, այսինքն զզօրս եւ զիշխօղս նոցա․ եւ այսպէս հանգեան յերկրի անդ։

Յաւելու եւս ասել։

21․ Եւ ետես զիշխանութիւն իւր․ զի անդ բաժանեցաւ երկիր իշխանաց ժողովրդեան հանդերձ առաջնորդօք առաջնոյ ցեղիցն իսրայէլի։ Այսինքն թէ ցեղն գադայ ետես նախ զիշխանութիւն իւր՝ այսինքն զբաժին իշխանութեան կամ ժառանգութեան իւրոյ․ ուր բաժանեցաւ երկիր նոցա եւ երկիր այլոց ցեղից՝ բնակիլ նոցա 'ի նմա

ժո-

ժողովրդովք իւրեանց, հանդերձ ազգապետօք ազգաց ցեղիւքն Իղի, այսինքն հանդերձ իշխանօք ազգաց ժբ իւրաքանչիւր ցեղիցն Իղի. եւ յանցանել նոցա ընդ յորդանան՝ ցեղն գադայ յառաջեալ եանց ընդ նա. մինչեւ ժառանգեցին նք զբաժին իւրեանց. եւ զի այսու գործով վճարեաց զխոստումն իւր, վնկ յաւելու ասել։

Արդարութիւն տն արար, եւ զդատաստան իւր ընդ Իէլի։

Այսինքն թէ ցեղն գադայ անցանելով ընդ այլ ցեղս ընդ յորդանան, եւ պատերազմելով վձ նց՝ կատարեաց զխոստումն իւր. որով եւ արար դարդարութի տն. զի ընդ որում խոստացաւ տն՝ ըս արար. եւս եւ ուղղեաց զդատաստան իւր ընդ Իղի. զի զոր ինչ դաշն եդ ընդ նա դատաստանաւն մովսէսի՝ լիապէս լցոյց։ Զայսոսիկ եղեալ մարգարէին վասն գադայ՝ խօսի այժմ եւ զդանայ։

22. Եւ ընդ դանայ ասէ. դան կորիւն առիւծու. եւ յարձակեսցի ՚ի բասանայ։

Ցեղն դանայ բնակեցաւ առ յորդանանու՝ գրեթէ ՚ի ծագ նորա. եւ զի զօրացաւ նա անդ, վնկ ասէ.

Դան կորիւն առիւծու, եւ յարձակեսցի ՚ի բասանայ։

Այսինքն թէ ցեղն դանայ եղեւ հզօր իբրեւ զկորիւն առիւծու. եւ յարձակեալ ՚ի կողմանցն բասանու՝ եհար եւ վանեաց զթշնամիս իւր. որպէս եւ արար ՚ի յարձակիլն ՚ի լայիսա. զոր ցեղն այն կոչեաց յանուն իւր դան (դատ ժը. 7. եւ 27)։ Մարթ է եւս ասել, թէ զայս ասէ մովսէսնա խաղուշակելով եւ զարարսն սամփսոնի, որ էր ՚ի ցեղէն դանայ. տես եւ յօրհ. ծթ. 16. եւ 17։ Ոմանք զյետինն բան այսր համարոյ. այսինքն՝ * եւ

յար-

յարձակեսցի 'ի բասանայ||, մեկնեն 'ի վր Ջրոյն դանայ, քր 'ի վր յորդանանու, իբր թէ եղեալ էր. քաղաքն դանայ արձակեսցէ զգետն յորդանան, կմ թէ գետն յորդանան հոսեսցի 'ի ծագաց բասանու. քն որում ծագ. սահմանացն բասանու սկսանի 'ի կողմանց դան քաղաքի. առ որով իջանէ և առուն եօռ կամ յոր. յորոց բաղ. յօդի բառս յոր = դան, այն է յորդանան. թէպէտ քն աւանդելոյ այլոց՝ յորդանան առնու ըզծագումն 'ի ստորոտէ լերանցն լիբանանու 'ի լճէ փիալայ. և մերձ գոլով 'ի քաղաքն դան՝ կոչի յորդան. քր մօտ դանայ, կամ էջք 'ի դանայ: Զայս այսպէս եղեալ՝ խօսի և 'ի վր նեփթաղիմայ:

23. Եւ զնեփթաղիմայ ասէ. Նեփթաղիմ յագուրդ ընդունելութեց. և լցցի օրհնութբ 'ի տնէ. և զծով և զհարաւ ժառանգեսցէ:

Որպ ասացաք 'ի համարն 16. ընդունելութիք նշանակին լիալիր օրհնութիք կրաւորապէս առեալ կամ ընդունականապէս փինկ ընկալեալ օրհնութե. տես անդ. և զի նեփթաղիմ այսպիսի ընդունելութեց գտաւ հաղորդ, վնկ ասէ:

Նեփթաղիմ յագուրդ ընդունելութեց: Այսինքն ցեղն նեփթաղիմայ յագեսցի 'ի լիալիր բարութեց. և առ բացատրութի այսր յաւելու:

Եւ լցցի օրհնութբ 'ի տնէ: Այսինքն յամի լի գտցի այնպիսի բարեօք՝ որք առատասցին 'ի նմա յօրհնութէ տն:

Մարթ է ևս ասել, թէ ընդունելութիք խմացեալ լինի աստ երկրաւոր լիութի բարեաց. իսկ օրհնութիք տն լիութի հոգևորաց, զերկաքանչիւրսն ևս իբր զերկուս գանձս ունելով. տես և յօրհն. ԺԷ.

ժԵ. համար. 21. խօսելով ապա և զտարածումն իշխանութեան այսր ցեղի՝ ասէ.

Եւ ծով և հարաւ ժառանգեսցէ. Ծով ասելով ոչ տայ իմանալ զժառանգութիւն ծովուն. զի է մէջ վիճակին Նեփթաղիմայ և ծովու կայ վիճակն ասերայ՝ ևս և երկիրն փիւնիկեցւոց, այլ իմացուցանէ զժառանգութի սահմանաց նր՝ ըստ ապահովանալոյ յայնցանէ՝ որք բնակէին առ ծովուն. Նոյնպէս և զհարաւ ի մէջ բերելով՝ տայ իմանալ զամրացուցանել նր զկողմն հարաւոյ. և միտ բանին է՝ թէ Նեփթաղիմ հաստատեսցէ զիշխանութի իւրյում կողմանց՝ եթէ ի կողմանէ միջերկրական ծովուն, և եթէ ի կողմանէ գալիլեական ծովուն՝ որ անկանի ի կողմն հարաւոյ կողմնակի.

Սովիմբ նկարագրի բարոյական կեանք առն ածապաշտի. որ լիացեալ յամենայն օրհնութեց՝ պաշտպանեալ մնայ եթէ ի յուզմանց ալեկոծեալ խորհրդոց, և եթէ ի հարաւային և ի տապագին փորձութեց. Նոյնպէս է ասել և վս նք եկեղեցւոյ ըստ այլաբանական մտաց. տես և յօրհ. ժԵ. 21. Զայս եղեալ մարգարէին՝ գաւառայ և առ ասէր.

24. Եւ Աշերայ ասէ. օրհնեալ յորդւոց Ասեր. և եղիցի ընդունելութի եղբարց. և թրեսցէ յիւղ զոտն իւր.

25. Եւ երկաթ և պղինձ եղիցին կօշիկք նր. ըստ աւուրց քոց և զօրութի քո.

Այս բանք ցուցանեն զանդորրական լինել բարւոյ ցեղին ասերայ ըստ երից. ըստ առաջնոյն ասէ. Օրհնեալ յորդւոց ասեր. և եղիցի ընդունելութի եղբարց. Այսինքն թէ օրհնութին զոր տալոց է ած

 ասէ-

տեսրայ՝ եղիցի յորդիսն նր 'ի ծնանիլ նր զնա 'ի բարութե. որով և եղիցի ընդունելուն եղբարց. զի լիցի ընդունելի և հաճոյ եղբարց իւրոց. կամ՝ ըստ մասնաւոր նշանակութե զոր եդաք 'ի համայն. 16. եղիցի տեսր ըստ ընդունելուն՝ զի պատճառ ընդունող լինելոյ եղբարց իւրոց ամ այնն օրհնութեց. Ըստ երկրորդին խօսելով՝ ասէ.

Եւ թացցէ յիւղ զոտն իւր. Ըստ յունին՝ այնչափ լիացի տեսր երկրաւոր բարեօք, եթէ ձիթովք և եթէ գինեօք, եթէ արմտեօք և եթէ պտղովք. մինչև թաթխել ըստ վայր զնոսին, և ոտիւք եւս կոխել. կամ ըստ այլոց՝ զոտս իւր ներկել 'ի նոսին. ոչ զի թաթխելոց էր, այլ զի առատութի բարեաց յաճախելոց էր 'ի նմա. յոր միտ և յոբ ասէ վն արդարոյ. լուացէ զոտս իւր 'ի կոգի Յ. (ԻԹ. 6.) Իսկ և ըստ երրորդին. և ասէ.

Եւ երկաթ և պղինձ եղիցին կօշիկք նր. Կօշիկք իմացեալ լինին ստա զօրութիւնք, որովք կոխին տեղիք կամ այլ ինչ. և ըստ այսմ կամի ասել, կօշիկքն զի զօրութիւնքն տեսրայ եղիցին զօրաւորք իբրև զերկաթ, և ահեղք իբր փայլուն պղինձ.

Մարթ է ստա երկաթով և պղնձով իմանալ զբուն երկաթն և զպղինձն. յոր միտ կամի ասել. տեսր առատացի հանքովք երկաթոյ և պղնձոյ, մինչև կօշկօք կոխել զայնս, կամ մինչև կարել նմա կազմել զկօշիկս՝ ոչ միայն 'ի կաշւոյ, այլ և եթէ հնար էր յերկաթոյ եւս և 'ի պղնձոյ՝ վն յաճախութե նոցին. ըստ որում յայնմ մասին պաղեստինոյ յաճախ լինէին այսպիսի հրահալելիք, որպ աւանդեն ոմանք. յորմէ կոչեցաւ և քաղաքն սարեփթա, զի քաղաք բովոյ. Այս եդեւ՝ ապա 'ի ցոյց տեսողութե այսր ամի յարէ զկնի.

Որպէս աւուրք քո և զօրութ քո. Կամի ասել. ցորչափ

ունեն աւուրք քո , այնչափ տեւեսցէ և զօրութի քո . կամ ըստ այլ թարգմանութեանց . որպէս զօրաւոր եղեն աւուրք մանկութեան քո , սոյնպէս եղիցին և աւուրք ծերութեան քո , որ 'ի նոյն գլխի : Կամ դարձեալ՝ ըստ այլոց . եղիցիս ուրախ և զօրաւոր որպէս յաւուրս մանկութեան քո . կամ թէ մանկունք քո՝ որք են զօրութիւնք քո՝ եղիցին լի երկայն աւուրբք : Խորհրդաբար՝ այս հանգամանք Ասերոյ նկարագրէ զվիճակ ոք եկեղեցւոյ , որ օրհնեցաւ յորդիս իւր . և եղև հաճոյ եղբարց՝ այսինքն հեթանոսաց . և մխեաց զոտն իւր այսինքն զգնացս իւր յիւղ սրբոյն . որոյ կօշիկք եղև ընթացք յաջողուն քարոզութեան աւետարանին . և երկաթ՝ զօրութիւն հոգւոյն . և պղինձ՝ մնալն յանմոլոր վարդապետութեան հաւատոյ և փառուց , եւս և փայլելն և զօրանալն յորդիս իւր մինչև 'ի կատարածնի : Զայս ամ առաջի արարեալ մարգարէին՝ դարձուցանէ զբան իւր 'ի գովութի այ , և ասէ :

26 . Չէ ոք իբրև զԱծ սիրելւոյն , որ ելանէ յերկինս օգնականն քո . և մեծավայելչութեան հաստատութեան :

Նաուիւդ սիրեցելոյն իմացեալ լինի աստ ազգն Իսրայէլի ըստ որում սիրեցեալ եղև նա յԱյ 'ի տղայութենէ հետէ , ըստ 'ի կոչմանէ անտի աբրահամու . ըստ , * տղայ էր Իսրլ , և ես սիրեցի զնա ‖ . (ովս . ժա . 1 :) Մովսէս սիրով որոշեցաւ իւրն լինել Այ , և նա եւս կոչեցաւ ած իլի . և զի ոչ գոյ այլ ած բաց 'ի նմանէ , վ՚նկ ասէ : Չէ ոք իբրև զԱծ սիրելւոյն : Զայսպիսին ասաց և դաւիթ և այլք 'ի մարգարէից , առ 'ի ցուցանել , թէ ոչ գոն բազում ածք , այլ մի միայն . զի թէպէտ և իցեն անուանեալ ածք բազումք , բայց մի միայն է ճշմարիտն ած , և այն է ածն իլի սիրեցելոյ 'ի նմանէ . որ և յամի օգնական , և պաշտ

պան

սրան լինէր նմա . ամէն իրի յաւելու ասել ։
Որ ելանէ յերկինս օգնական քո ։ Կրկին ասել . մեծ է
քեզ այս մխիթարել՝ զի որ ելանէ յերկինս, կամ թէ
եթէ" որ ձիաւորի յերկինս՝ նա որ կառավարէ զեր-
կինս՝ օգնական քո է ։ Իսկ զայս յայտնապէս դնէ,
զի ցուցցէ թէ նա արագ հասանէր յօգնութիւն իւր-
ոցեաց՝ իբրեւ յերիվարս ելանելով ։ Իսկ առ զօրա-
ւոր առանձնելոյ զբան իւր՝ յարէ զկնի, եւ ասէ .
Եւ մեծամեծութեան հաստատութեան ։ Զնոյն մեծամեծար՝ նշա-
նակէ աստ մեծամեծս արարօղ՝ ուստի ՚ի քանի
մի օրինակս՝ մեծամեծ արար դնի . եւ այս՝ համա-
ձայն եբր" եւ ասորց . զի յեբր" բոլոր այս համար
դնի այսպէս . * ոչ գոյ ոք զած ուղղոց (իէլ),
,, ձիաւորեալ յերկինս՝ յօգնականութիւն քո . եւ ՚ի
,, մեծապարծութեան քում յերկինս ||, ՚ի գործել
նր ամպ զմեծամեծս ։ ՚ի լատ" դնի . * մեծապար-
ծութեամբ նր տարուբերին ամպք || . յեօթ" դնի .
* մեծավայելչութեան հաստատութեն || . ՚ի սոսին
մերածին եւ այլ թարգմանութք . որով կամի ցու-
ցանել, թէ նա՝ որ մեծամեծս գործէ ՚ի հաստա-
տութեան երկնից, արձակելով անտի զփայլատա-
կունս եւ զկայծակունս, կամ ցուցանելով անտի
զհրս աշխարհս եւ զարմանալիս օգնական է ազգին
իսրայէլի ։

27 . Եւ ծածկեսցէ զքո իշխանութեն . եւ ՚ի զօրութեն բազ-
կաց մշտնջենաւորաց . եւ մերժեսցէ յերեսաց
քոց զթշնամին . եւ ասասցէ թէ կորի՛ր ։

Ծածկոյթ իշխանութեն այ է նորա անհասութին
եթէ ըստ զօրութեն եւ եթէ ըստ տեւողութեն, եթէ ըստ
գոլոյ յինքեան, եւ եթէ ըստ գործելոյ առ արտաքս ։
Զայս հայելով ասէ ։
Եւ ծածկեսցէ զքո իշխանութեն ։ Այլին զի ասէ ասել առ

ինքն, թէ իշխանութիւն ոչ՝ որով օգնէ քեզ ամենին՝
մեծ է յոյժ և անհաս, և այնչափ բարձր՝ մինչև
ծածկիլ 'ի մեզ. բայց ծածկելովն ևս յայտնի
ցուցանի 'ի ձեռն գործոց ամենակարողութեան նր:

Եւ 'ի զօրութենէ բազկաց մշտնջենաւորաց: Սիմ. ասէ.
'ի զօրութէ գործոցն ոչ՝ զորս գործէ մշտնջենա-
ւոր բազկօք, յայտնի երևի փառք մեծութեան նր,
և անհասանելի իշխանութիւն նորին: Նաև ցու-
ցանի, թէ ած մշտնջենաւոր բազկօք ամենակա-
րողութեան իւրոյ նախախնամէ զարարածս:

Բայց քանզի զբառդ մշտնջենաւոր՝ թարգմանեն
ոմանք յեբրայականէն կենդաղ, և զբառդ 'ի զօ-
րութէ՝ թարգմանեն 'ի ներքոյ, վս և զայս բան
մեկնեն այսպէս. 'ի ներքոյ բազկացն ոչ կան ա-
րարածքս, կամ թէ 'ի ներքոյ յաւիտենականութեան
նորա են բաղուկք կենդաղոյս. զի այն ած՝ որք
են իբր բաղուկք կամ զօրութիւնք կենդաղոյս. սո-
քին ևս ըստ մտաց բանին 'ի նոյն հային: Օսոսա
յուսալ բերէ մարգարէն՝ ոչ միայն 'ի ցուցանել
զմեծութիւն ոչ, այլև 'ի քաջալերել զինէն, թէ
զայսպիսի ած ունի. որ և պաշտպան է նմա 'ի
թշնամեաց. զորմէ 'ի մասնաւորի ևս խօսի ա-
սելով:

Եւ— Մերժեսցէ յերեսաց քոց զթշնամին. և ասասցէ՝ թէ
կորիր: Այսինքն թէ ամենակալն ած՝ որ օգնա-
կան քոյ է՝ 'ի բաց վարեսցէ 'ի քէն զթշնամին քո.
և կորուսցէ իսպառ. և զայս ցուցանէ այնու՝
զոր ասէ. * և ասասցէ թէ կորիր ||. որոյ փո-
խան 'ի լատ" և 'ի քաղդ" դնի խորտակել կամ
կոխել. որ եթէ ներգործաբար առցի՝ այսինքն
է՝ խորտակեա, կամ կոխեա, ցուցանէ զնուա-
ճիլ նր ըստ իշխանութե իւրեանց. նոյնպէս եթէ կրա-
ւորաբար առցի՝ 'ի նոյն վերածի:

Բա-

Այլաբանօրէն, այս բան հայի 'ի մարդեղութիւն բանին, յորում մարմինն՝ զոր էառ՝ եղեւ իբր ծածկոյթ աստուածութեան նորա . այլ 'ի զօրութենէ մեծամեծ գործոց նորա յայտնի երեւէր աստուածութիւն նորին . նա զի եւ 'ի տարածելոյ բազկաց նորա 'ի խաչին՝ մերժեցաւ թշնամին ազգի մարդկան, եւ կործեաւ . եւ 'ի լինել այսր՝ նորոգեցաւ բնութիւն . եւ կարգեցաւ նոր կէն յեկեղեցի նորա՝ բնակեալ յուսով առանձինն . զորմէ խօսի 'ի յաջորդ համարն :

28. Եւ բնակեսցէ Իսրայէլ յուսով առանձինն յերկրին Յակոբայ 'ի մէջ ցորենոյ եւ գինւոյ . եւ երկինք նմա համբարեալք ցօղոյ :

Որչափ մեծ է մարդոյ բնակել 'ի բարւոք տեղւոջ, որչափ մեծ է բնակիլն բարւոքապէս, ըստ խաղաղութեան եւ անդորրութեան հոգւոյ . եւ զայս զերկոսին եւս ետ Աստուած Իսրայէլի յայնս հայելով ասէ : Եւ բնակեսցէ Իսրայէլ յուսով առանձինն յերկրին Յակոբայ 'ի մէջ ցորենոյ եւ գինւոյ : Կամի ասել . ազգն Իսրայէլի զայնքան բարիս տեսեալ յԱստուծոյ՝ զյոյս իւր 'ի նա դնելով՝ բնակեսցէ խաղաղութեամբ յերկրին յայնմ, զոր ետ Աստուած Յակոբայ՝ այսինքն նոյն ազգին Իսրայէլի որ կոչի եւս Յակոբ, զի է սերունդ նորա :

Իսկ բառդ առանձինն՝ ըստ երկուց կարէ իմացեալ լինել . մի՝ ըստ բնակելոյն . ըստ որոյ կամի ասել . առանձին տեղւոջ ուրոյն յայլոց ազգաց բնակեսցէ Իսրայէլ . երկրորդ՝ ըստ յուսոյն . ըստ որոյ այս բառ դնի փոխանակ բառին՝ միայն, ըստ եբր" եւ ըստ այլոց թարգմանութեանց . որպէս թէ ասացեալ էր . յԱստուած միայն յուսալով բնակեսցէ 'ի մէջ առատութեան ցորենոյ եւ յաճախութեան գինւոյ : Եւ զի այն երկիր 'ի ցօղոյ երկնից ոռոգանիւր, յաւելու ասել . Եւ երկինք նմա համբարեալք ցօղոյ : Այսինքն թէ

երկինք 'ի վերուստ եղիցին նմա իբրև շտեմարանք ցօղոյ յոռոգանել և արգասաւորս առնել զերկիր նց . զի որոյ յեբր″ և յասոր″ և յարաբ″ դնի ցօղել զցօղ 'ի պարարտութի ցորենոյ և գինւոյ : Այս բան կարէ հայիլ և յամպս երկնից , որք են իբր համբարակ ցօղոյ կամ շտեմարանք անձրևոյ՝ պատեհք զերեսօք երկնից . յոր միտ 'ի լատ″ ևս և յեօթ″ դնի մթագնիլ երկնից 'ի ցօղոյ , այլ 'ի ցօղագին ամպոց :

Այլաբանօրէն՝ այսու բանիւ նկարագրի միձակ նորոյս նմա . որ զկոյս իւր եդեալ 'ի փեսայն իւր 'ի քս՝ բնակէ յերկրի , պարարտացեալ 'ի մէջ սքանչելի խորհրդոյ մարմնոյ և արեան նր զի տեսակօք հացի և գինւոյ . և հոգին սբ իբր երկինք՝ համբարակ է ցօղոյ շնորհաց և երկնային պարգևաց . նաև նոյն իսկ եկեղեցի՝ որ է երկինք յերկրի՝ համարի ամբար ցօղոյ ածային օրհնութեց : Զայս եդեալ մարգարէին՝ երանէ ապա զազգն նմա , և զի նմին զնորս իջել ասելով :

29 . Երանեալ ես դու Իսրայէլ . ո՛ նմանեսցէ քեզ . ժողովուրդ ընտրեալ 'ի տնէ . պաշտպանեսցէ քեզ օգնականն քո . և սուր պարծանք քո . և ստեսցեն թշնամիք քո . և դու ելցես 'ի վերայ պարանոցի նոցա :

Երանեալ զատաւ Իէլ՝ ոչ զի էր ազգ յակոբայ , այլ զի ընտրեցաւ յայ՝ որպ զի նա ինքն ած իցէ յազգէ անտի . որոյ մն զգուշեցաւ ևս 'ի նմանէ բազում իրօք . ապա թէ ոչ՝ որպ մկայեաց մովսէս , և որպէս յայտնի տեսանի 'ի գործոց նոցա՝ զորս գործեցին յանապատին և յերկրին աւետեաց , քան զամ ազգս ապաշնորհ , և անընդել գտան . զի որում և ցուցանեն բանք առաջին օրհնութեն մովսէսի . ուստի և աստ ոչ յան

ընտե-

ընտելութե՛ նց, այլ յընտրութենացն Հայելովաւ.
Խրախուսեալ ետ մա— խորհրդեանն: Կամի աւել. մի՛ ազգ-
ելի, մեծի երանութե հասեր դու. և ո՛ յազգաց
կարէ նմանիլ քեզ. զի թէպէտ և ամ ազգք ոչ
են, և յոյժ իմաստուն, բայց ոչ ոք զքեզ՝ զի դու
ընտրեցար յոյժ՝ լինել նորա ժողովուրդ սեպհա-
կան. և նա ինքն յետ ընտրելոյ զքեզ՝ եղև օգնա-
կան քո, և պարծանք քո. եւ և պաշտպան քո. զի
եթէ յարիցեն չարիք 'ի վե՛ր քո, մի՛ երկնչիր, զի
նա պաշտպանեսցէ զքեզ. և նա ինքն եղիցի քեզ
ինքն սուր ընդդէմ թշնամեաց քոց, որով հար-
ցես զնոսա 'ի գալ նց 'ի վե՛ր քո. և ելցես 'ի վե՛ր պա-
րանոցի նց. զի յաղթեսցես նց, և նուաճեսցես
զնոսա ընդ իշխանութբ քով:

Այլաբանօրէն՝ այս բանք առին 'ի դէմս սբ եկե-
ղեցւոյ. որ ընտրեցաւ լինել հարսն քի, և յնմ
պաշտպանեցաւ 'ի նմանէ. և պարծանքն նր զի է
'որ խաչն՝ եւ և բանն ածային՝ սուսեր եղև նմա
ընդդէմ սանդարամետականաց. որով վանեաց
և վանէ զնոս միշտ. և յաղթող լեալ հնարից նց,
ընդ որս և բռնութե ախտից և մեղաց՝ յաղթանա-
կաւ զինչ 'ի յաղթանակող եկեղեցի առ 'ի ցըն-
ծալ յերանութենն յաւիտենականն:

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԺԹ.

Գոհանալ է առ Աձ բերանով Դեբովրայ եւ Բարակայ, 'ի ցուցանել զզօրութիւն նորա, որով հանեաց զՔանանացին Յաբին եւ զՍիսարա եւ զզօրս նորա :

*1. Եւ օրհնեաց Դեբովրա, եւ Բարակ որդի Աբինէեմայ յաւուր յայնմիկ. եւ ասեն. ( Դատ. Ե. 1. = 31 ) :*

2. 'Ի սկսանել զօրավարացն Իէլի՝ մակաւորութբ ժողովրդեանն օրհնեցէք զՏր :
3. * Լուարո՛ւք թագաւորք. եւ ունկն դի՛ք իշխանք. ես Տն երգեցից. եւ սաղմոս ասացից Այ Իէլի :
4. * Տէր յելանելդ քո 'ի Սէիրայ. եւ 'ի չուելդ քում յանդաստանացն Եդոմայ, երկիր շարժեցաւ. եւ երկինք խառնակեցան, եւ ամպք ցօղեցին ջուր :
5. * Լերինք շարժեցան յերեսաց Տն Էլովայ անդի. յերեսաց Տն Այ Իէլի :
6. * Յաւուրսն Սամեգարայ որդւոյ Անաթայ, յաւուրս Յայելի պակասեցին թգրք. եւ գնացին ընդ շաւիղս. գնացին ընդ ճանապարհս խամախորս :
7. * Պակասեցին քաղաքաւորք բնակեալք 'ի մէջ Իէլի. պակասեցին մինչեւ յարեաւ Դեբովրա. մինչեւ յարեաւ մայր Իէլի :
8. * Յանկացան իբրեւ գարեղէն նկանակի Աձց օտարաց անօթոց. յայնժամ պատերազմեցան քաղաքք իշխանաց. ծածկեալ է նորոց տեղարդեանց. քառասուն հազար այր 'ի մէջ Իէլի :
9. * Սիրտ իմ 'ի վր կարգելոցն Իէլի. զօրաւորք ժողովրդեանն օրհնեցէք զՏր :
10. * Հեծեալք յէշիկաս 'ի միջօրէի, եւ ադիկասաց. երթեալք յատեանս ատենականաց. տուք ձայն բարբառոյ :
11. * Կաքաւածանաց 'ի մէջ ցնծացելոց. անդ տացեն արդարութի Տն. զարդարութի զօրացոյց 'ի մէջ Իէլի. յայնժամ էջ 'ի քաղաքս ժողովուրդ Տն :
12. * Զարթի՛ր զարթի՛ր Դեբովրա. զարթո՛ զբիւրաւորս հանդերձ ժողովրդեամբ. զարթի՛ր զարթի՛ր. խօսեաց երգով. զօրացեալ յարիցես Բարակ. գերեսցես զգերութի քո որդի Աբինէեմայ :
13. * Յայնժամ մեծացաւ զօրութի նր. Տր ընկճեսցէ ինձ զզօրագոյնսն քան զիս :
14. * Ժողովուրդ Եփրեմայ պատժեաց զնս 'ի հովիտսն. եղբայր քո Բենիամին քայլին ժողովուրդ. յինէն 'ի Մաքիր իջին խուզակուք. եւ 'ի Զաբուղոնէ զօրացուցիչք. գաւազանաւ պատմութե դպրի :
15. * Եւ զօրաւորք Իսաքարայ

Սիրտ ընդ

ընդ դեբովրայ և ընդ Բարա-
կայ . և այս Բարակ 'ի հովիտսն
փարատեցաւ զոտս իւր . 'ի բաժանմուն-
սն Ռուբենի մեծամեծ ճշգրտութիւնք
սրտի :
16. * Ընդէր նստիցես 'ի մէջ
մոսփաթեմայ . լսել շչմնչիւն հօտից
նաւորաց անցանել 'ի կողմն Ռու-
բենի . մեծամեծ յորդորեալ խոր
հետազօտութիւնք սրտից :
17. * Գաղաադ յայնկոյս յորդանա-
նու բնակեցաւ . և դան ընդէր բնա-
կանդուլեցաւ 'ի նաւս . Ասեր
բնակեցաւ առ ծովեզերբ ծովուց .
և 'ի կիրճս նորա բնակեսցէ :
18. * Զաբուղոն ժողովուրդ
անձնանուէր 'ի մահ . և Նեփ-
թաղիմ 'ի բարձունս ագարակի :
19. Եկին թագաւորք և մարտեցան .
յայնժամ պատերազմեցան թագաւորք Քա-
նանացւոց 'ի Թանաք 'ի վերայ ջրոց
Մակեդդովայ , զագահութիւն արծա-
թոյ ոչ առին :
20. * Յերկնից մարտեցան ա-
ստեղք յիւրաքանչիւր յօրինուածոց
իւրեանց պատերազմ ընդ Սիսարայ :
21. * Հեղեղատն Կիսոնի մերժեաց
զնոսա . հեղեղատն կադեմեաց .
հեղեղատն Կիսոնի . կոխեսցէ զնա
անձն իմ :
22. * Այս իմ զօրացի զօրեալ .
յայնժամ կոտորեցան եղեն փար-
շատաք երիվարաց մադդարովթայ .
և հարթեցին փարշատակք իմ ըն-
հզօրութեան զօրաւորաց նոցա :
23. * Նզովեցէք զՄարովզ ասէ
հրեշտակն Տն . անիծանելով անի-
ծեցէք զբնակիչս նր . զի ոչ եկին
յօգնականութիւն Տն . օգնական Տր
'ի մէջ նահատակաց հզօրն :
24. * Օրհնեալ լիցի 'ի կանանց
Յայէլ կին Քաբերայ Կինեցւոյ .
օրհնեսցի 'ի կանանց 'ի խորանի
իւրում :
25. * Ջուր խնդրեաց , և կա-
թն ետ . դաշխուրանաւ զօրաւորաց
մատոյց կոգի :
26. * Զձեռն իւր յահ ձգեաց
'ի ցիցն . և զաջ իւր 'ի տապա-
րակոտ կոկոնակն' անգիտա-
նացուցանել . և կոխձանեաց
զՍիսարա . կարկեաց ընդ ծամելի-
ներ . և անցոյց ընդ քունք-
ներ . և սատակեաց :
27. * 'Ի մէջ ոտից նր անկա-
ծանրացեալ . և ննջեաց'ի մէջ
ծնգաց նորա . յորում կորացաւ .
մնչև զթեռնեցաւ . անդ անկա-
ցմանական :
28. * Մայրն Սիսարայ հայեցեալ
դէտակն ասեր 'ի կանդակապատ
դարպասացն . ասացի տեսանել
զտարեալն 'ի Սիսարայ . մի ոչ
յեւենցան կառք նր 'ի գալոյ .
ընդէր յամեցին հեքք կառաց նր :
29. * Իմաստք իմաստունք իշխա-
նաց նր եպասն անդրէն պատաս-
խանի նմա . և ասէն . և ինքնին ան-
կանի ասէր իւր պատաս-
խանի :
30. * Ու գտանիցեն զնա աւա-
րառուք ...
31. * ...

# Կ. Ա. Ր. Ն. Ր. Գ. Ի. Ր.

Ա. Եւ օրհնեաց Դեբովրա, և Բարակ որդի Աբինէեմայ յաւուր յայնմիկ. և այլն:

Յետ ժառանգելոյ որդւոցն Իսրայէլի զերկիրն քանանացւոց, իբրև թողին զՏէր, և ծառայեցին աստուածոց օտարաց, մատնեաց զնոսա Տէր ի ձեռս թշնամեաց նոցին. նախ՝ ի ձեռս Քուսարսաթեմայ արքային ասորւոց միջագետաց. և յաղաղակել նոցա առ Տէր՝ յարոյց նոցա Տէր զԳոթոնիէլ զկրսեր եղբայր Քաղեբայ. և նովաւ փրկեաց զնոսա: Յետ այնորիկ ի միւսանգամ ապստամբել նոցա՝ մատնեաց զնոսա ի ձեռս Եգղոմայ արքային Մովաբու. յորեւ յայնժամ Աւովդ որդի Գերեայ, և փրկեաց զնոսա: Եւ յետ նորա դարձեաց զնոսա Սամեգար որդի Անաթայ. (դատ. Գ. 8:) Եւ ի մեռանել նորա յաւելին որդիքն Իսրայէլի առնել չար առաջի Տեառն. և Տէր մատնեաց զնոսա ի ձեռս Յաբինայ արքային քանանացւոց. որ թագաւորէր յԱսովր. և նեղեաց նա զԻսրայէլ զամս քսան: Եւ յայնժամ յաւուրս Իսրայէլի կին մի մարգարէ Դեբովրա անուն՝ կին Ղափիդովթայ, և նստէր ի լերինն Եփրեմի ի մէջ Ռամայ և ի մէջ Բեթելայ. և տեսանէր զդատաստան որդւոցն Իսրայէլի: Եւ էր յայնժամ ի ցեղին Նեփթաղիմայ ի Կադէս՝ Բարակ անուն այր որդի Աբինէեմայ ծառայ Տեառն: Կոչեաց զնա առ ինքն Դեբովրա մարգարէուհի՝ պատգամաւ առ յԱյ. և պատուիրեաց նմա գնալ ի Թաբոր, և գումարել զօրս յինքն, և դիմել ի վերայ Յաբինայ արքային: Եւ նա ժողովեալ տասն հազար այր ի զաբուղոնէ և ի Նեփթաղիմայ՝ բանակեցաւ առ Կադէսաւ Նեփթաղեմի. էր ընդ նմա

նմա և գերբորա ։ Օ այս իբրև լո՛աւ յարին ալ-
քայ՝ հրամայեաց սպարապետին իւրում սխա-
րայ կալանել ընդ դէմ բարակայ . և նա գումա-
րեաց զնմ զօրութիւնս յարինայ , զինն հարիւր
կառս երկաթեղէնս և զօրս բազումս , և բանա-
կեցաւ 'ի հեղեղատն կիսոնի ։

Յայղ առնել անդ գերբորայ՝ դիմեաց բարակ 'ի
վ՛ր սխարայ . և ո՛ր եհար զնմ զօրս սխարայ 'ի
ձեռն բարակայ . յորոց բազումք հեղձան 'ի հե-
ղեղատի անդ . և սակաւք եղեն՝ որք ապրեցանն ։
Իսկ ինքն սխարա զարհուրեալ էջ 'ի կառացն .
և փախստեայ գնայր հետիոտս . և բարակ պըն-
դեցաւ զկնի նր . տես 'ի ստորև 'ի մեկնութե 'ի
համարսն 14 . և 15 ։

Իսկ զի բարեկամութի ունէր սխարա և ազգ նր
ը կինեցիս՝ դիմեաց 'ի սահմանս նց ։ Տեսեալ
զնա 'ի հեռուստ յայել կին քաբերայ իշխանի
կինեցւոյ՝ եւ ը առաջ նր , և հրաւիրեաց զնա
'ի խորան իւր . և 'ի խնդրել նորա ջուր՝ արբոյց
նմա կաթն . և քաջալերեաց զնա չերկնչել ինչ
'ի բարակայ . և ընկողմանեցոյց զնա 'ի ներքոյ
փեղկի խորանին որ 'ի ներքոյ բղանցից վրանին ,
և ը նոյլաւ ծածկեաց զնա . և կասկածեալ թէ
գուցէ զօրացի նա , և դարձցի ընդ դէմ բարա-
կայ , էառ զցից լուանի խորանին 'ի ձախ ձեռն
իւր . և հարեալ զայն ուռամբ աջոյ ձեռին ընդ
ծամելիս նր (որ ընդ չքնեալն) վարսեաց զնա 'ի
գետին և սպան . և զայս արար յայել 'ի շնորհս
իսրայելացւոց . որովհետև կինն մովսէսի կինե-
ցի էր 'ի մադիանայ ։

Ի հասանել անդր բարակայ՝ դիմեաց ը առաջ
նորա յայել , և ասէ ցնա . եկ այսր 'ի ներքս , և
ցուցանեմ՝ զոր որոնես ։ Օ այն տեսեալ բարա-
կայ՝

կայ՝ փառս եա ն̃յ , և դարձաւ 'ի բանակ իւր ։ և այր իւրաքանչիւր գնացին 'ի տեղիս իւրեանց ։ Յայնժամ երգեաց դեբօրա ը̃ բարակայ զօրհնութիւն զայս . յորում նախ գոհանան զա̃յ , որ յաջողեաց զայսպիսի յաղթութիւն . խօսին ապա առ այնոսիկ՝ որք ձեռնտու եղեն այսմ յաղթութեան , եւ և որք հրաժարեցանն անտի . 'ի մէջ բերելով զիւրաքանչիւր ցեղս նոյն ։

Իսկ թէ զայս երգ երկոքին 'ի միասին յօրինեցին , թէ դեբօրա եւեթ՝ չէ յայտ . հաւանական է ասել՝ թէ դեբօրա յօրինեաց , և բարակ հրատարակեաց երգելով ։ Ո՛ այս մի ինչ տեսանեմք . զի այս երգ ը̃ս ճարտարութե̃ն ոճոյն գերազանց է քան զբազում երգս ։ Ասացի՝ ը̃ս ճարտարութե̃ն ոճոյն . զի ը̃ս նիւթոյն բազում երգք և օրհնութիւնք գտանին 'ի գիրս , որք գերազանցեն ք̃ք զսա ։ Ի սմին օրհնութե̃ն տեսանի և կարգ վերջադասութե̃ն . զի 'ի համարս համարս դնի 'ի վերջս համարին ինչ ասացուած յարմար կարգի բանին ։ Ի համարն 2 * օրհնեցէք զտ̃ր ‖ ։ Ի համարն 4 * ամպք ցօղեցին զջուր ‖ ։ Ի համարն 10 * տուք ձայն բարբառոյ ‖ ։ Ի համարն 13 * տ̃ր ընկեկեաց ինձ զզօրաւորսն քան զիս ‖ ։ Ի համարն 14 * գաւազանաւ պատմութե̃ դպրի ‖ ։ Ի համարն 15 * մեծամեծ ճշդութի̃ք սրտի ‖ ։ Ի համարն 16 * մեծամեծ յարուցեալ կան հետազօտութիւնք սրտից ‖ ։ Ի համարն 17 * 'ի կիրճս նորա բնակեսցէ ‖ ։ Ի համարն 18 * 'ի բարձունս ագարակի ‖ ։ Ի համարն 19 * զապահութի̃ արծաթոյ եւ ոչ առին ‖ ։ Ի համարն 21 * կոխեսցէ զնոսա անձն իմ ‖ ։ Ի համարն 22 * հարթեցեն գարշապարք իմ զհպարտութիւն զարհաւրանաց նց̃ ‖ ։ Ի համարն 23 * օգնական տ̃ր 'ի մէջ նահատակաց

կաց հզօրն ։ Ի համարն 27 * անդ անկաւ չուա-ռականն ։ Ի համարն 28 * ընէր յամենցին հետք կառաց նր ։ Ի համարն 29 * ինքնին անձամբ անձին առնէր իւր պատասխանի ։ Ի համարն 30 * այն էր պարանոցի նր կապուտ ։

Օրինակ ասացուածս՝ որք առանձին բանք համարին, նոյնացուցանելով շարայարել դ՛ բռ-բա 'ի վերջ տանց . որովք որչափ չքնաղացուցա-նէ զբանն, այնչափ խրթնացուցանէ զայն ։ Իսկ այլայլուն թարգմանութեց՝ հայելով 'ի նմանութի բնագրին եբրայեցւոց՝ այնքան մթացուցեալ է զընթացս ճառին, մինչև հազիւ կարել նշմա-րել զիմաստ ինչ անվրէպ . ո՛չ և տեսանի յա-ռաջիկայդ ։

## ԲԱՆ ։

2. Ի սկսանել զօրավարացն Իսրայէլի կամաւորութ ժողովրդեան օրհնեցէք զՏր ։
3. Լուարուք թագաւորք, և ունկնդիր լերուք նախա-րարք . ես Տն երգեցից . և սաղմոս ասացից Այ Իսրայէլի ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ։

Սոյնքին ասացուածք են իբր կանխաբանութի առաջիկայ օրհնութես, միանգամայն և յորդոր լսելոյ զբանն և օրհնելոյ զԱծ ։ Եւ այսմ նախ իբր նիւթ առեալ զինքնագրու մատչիլ զօրաց իլի՝ ասէ ։

Ի սկսանել զօրավարացն Իսրայէլի կամաւորութ ժողովրդեան օրհնեցէք զՏր ։ Որոյ սկսանել՝ զնի ասա ըստ գիտելոյ 'ի մարտ . յոր միտ կամի ասել . զօրա-վարք մեր և ժողովուրդ մտադիւրութբ և յօժա-րութբ սկսան դիմել 'ի վր զօրաց արքային յաբե-նայ ։

նայ · և հարին զնոսա, և զզօրագլուխս նոցա զսիսա_
րա ։ Իսկ խրթնութեն շարադրութեան այսր քանի պար_
զի յետևառաջութե բառից և յաւելմամբ շաղ_
կապից նո՛ այսոք · 'ի սկսանիլ զօրավարացն իղի և
ժողովրդեանն մտադիւրութե 'ի մարտ, որ ինք_
նին եհար զթշնամիս մեր ։

Յեբր" գրի · * 'ի խնդրել զվրէժ իղցւոց ‖ · կամ
* 'ի հատուցանել զհատուցումն վասն իղի ‖ · 'ի
սոյն հայի և թարգմանութիւն ասոր" և արաբ" և
քաղդ" ։ Յեօթ" ըն մեկնեն դնի · բայց յօրինակի
ինչ գրի · * յայտնեցաւ յայտնութիւն 'ի մէջ իղի ‖ ։
Սորին ևս ըն վերոյգրելոյդ մեկնին · զի միտ բա_
նին է՝ թէ 'ի սկսանիլ ուղղեցոցն իղի և իշխանաց
նց խնդրել զվրէժ 'ի թշնամեաց, և 'ի յարձա_
կիլ ժողովրդեան 'ի վր նց մտադիւրութե՝ բարձ_
րացաւ յաղթութիւն իղացւոցն ըդեմ նց ։

3 · Լուարուք թագաւորք, և ունկնդիր լերուք նախա_
րարք · ես տն երգեցից · և սաղմոս ասացից այ իսրայէլի ։
Կամի ասել · թագաւորք երկրի և իշխանք ժո_
ղովրդեան՝ լուարուք և տեսէք թէ զինչ արար
ած ըն մեզ ըն եկելոցս 'ի վր թշնամեաց մերոց ·
ունկն դիք զոր ունիմ պատմել ձեզ · նք զօրութե
իւրեանց, և կառօք և բազմութե ելին ըդեմ մեր ·
իսկ մեք եղաք կարդալով զանուն տն այ մերոյ,
և 'ի նա դնելով զյոյս մեր · վն նք խորտակե_
ցան, և մեք յաղթեցաք · և զի այսմ դիմողութե
առաջնորդ գտայ ես ինքն դեբորա, ես ինքն
երգեցից տն զերգս օրհնութե, և սաղմոս ասա_
ցից, որ նուաճագս հոգևորս մատուցից այ իղի ։
Այլաբանորէն, 'ի սկսանիլ և զօրավարացն քսի որ
առաքելոց և աշակերտաց մտադիւրութե զ-քս քա_
րոզել և զանձնայ նուաճել, յորդորեցան ազգք
դառնալ առ ած և օրհնել զնա · ըն որ ուրախ
լեալ

լեալ Դեբովրա՝ զի եկեղեցի՝ գոչէ առ Թագաւորս և առ իշխանս՝ լսել զոր արար ինքեան Տր , և ունկն դնել օրհնութեան՝ զոր մատուցանէ փրկչին իւրում ։

Բարոյապէս , 'ի սկսանել զօրութեց հոգւոյն՝ մտադիւրութբ մարտնչիլ ընդ ախտից , և յաղթել մարմնոյ և արեան՝ հոգին գոչէ առ միտս և առ կամս իբր առ Թագաւորս և առ իշխանս , լսել զոր հոգին Տր արար ինքեան , և 'ի միասին գոհանալ զնմանէ ։ Այսոսիկ եղեալ դեբովրայ՝ սկսանի զօրհնութի իւր՝ ասելով ։

4․ Տր յելանել քո 'ի Սէիրայ , և 'ի չուել քում յանդաստանացն Եդովմայ , երկիր շարժեցաւ ․ և երկինք խռովեցան ․ և ամպք ցօղեցին ջուր ։

5․ Լերինք շարժեցան յերեսաց Տն Ելովայ Սինայի , յերեսաց Տն Այ Իսրայելի ։

Այս բանք ակնարկեն յայնս , որք պատմին 'ի գիրս Թուոց ( Ժ ․ 35 ․ և ելից ԺԹ ․ 18 ) ․ ըստ որոց ասաց և մովսէս ․ ( Բ ․ օրին ․ ԼԲ ․ 2 ) ․ * Տր
„ 'ի Սինայէ եկեսցէ ․ և երևեցաւ մեզ 'ի Սէի-
„ րայ ‖ ․ ուր գիտելի է՝ զի զօրս յիշէ մովսէս , զնոյն յետևառաջութբ դնէ աստ դեբորա ․ և փխկ դնելոյ նախ զսինայ և ապա զսէիր , յառաջ դասէ զսէիր ․ իսկ որք եղենն 'ի սինա՝ ըն մասին դնէ առ սէիրաւ , յասելն ։

Տր յելանել քո 'ի Սէիրայ , և 'ի չուել քում յանդաստանացն Եդովմայ , երկիր շարժեցաւ ։ Սէիր և Եդոմ երկոքին ևս մի են ․ այն է երկիրն եդովմայեցւոց , որ անկանի ըն հարաւակողմն անապատին ․ և քզի յանցանել իղցւոց առ նովաւ հանդերձ տապանակաւ Տն , և յասել * արի Տր , և ցրուեսցին
„ Թշնամիք քո ․ փախիցեն ամ ատելիք քո յերեսաց

սացքոց‖ , դողացան բնակիչք երկրին · յայս
հայելով, կամի տալ · Տր յելանել քո տապա_
նակաւ քով առ սէիրաւ և առ անդաստանօք նր
քն առ սահմանօք նորին՝ լռեալ բնակչաց տեղ_
ւոյն զոր ինչ արարեր Ա՟ որդին Իլի՝ զահի հա_
րան · զոր և այժմ աստ տեսանեմք · զի լռեալ
ազգաց զայն զոր արարեր Ա՟ մեզ՝ զարհուրեալ
են և ընկճեալ · 'Ի մէջ բերէ ապա և զորս 'ի
սինա եղեն , և ասէ ·

Եւ երկինք խռովեցան · և ամպք ցօղեցին ջուր ·
5 · Լերինք շարժեցան յերեսաց Տն Ելովայ սինայի , յերե_
սաց Տն Այ Իսրայէլի · Այսինքն թէ յիջանել Տն 'ի
լեառն սինայ՝ երկինք մթագնեցան և որոտա_
ցին , և ամպք անձրևեցին · և լերինք կողմանցն
սինայի շարժեցան յերեսաց Տն Ելովայ , յերե_
սաց Տն Այ Իլի · ուր բառս Ելովայ դնի փոխ եբ_
րայական բառիս Էլօհէ քն Ած · երևի թէ յօ_
րինակն եօթանասնից՝ եդեալ էր Էօվա Էլօհէ ·
և եօթանասունք 'ի թարգմանելն եդին · Տն
Ելովայ , փոխ դնելոյ Տն Այ · որպէս եդին 'ի յա_
ջորդ հատուածն · Տն որոյ եդին և մերքս · բայց
քանզի 'ի յետին օրինակս եբրայեցւոց յառաջ_
նում հատուածի՝ միայն Էօվա դնի , վսյ լատինք ,
սորիք , և արաբացիք թարգմանեցին սոսկ Տն ·

Այլ այս ոչ ինչ այլայլէ զմիտս բանին ·
Իսկ կրկնումն բառիցդ դնի առ ահեղ իմն ցու_
ցանելոյ զզօրութին Այ · և զայսոսիկ դնէ դեբորա՝
առ 'ի յայտ առնել՝ թէ Տր 'ի սկզբանէ անտի ե_
ցոյց Ած զզօրութի իւր 'ի լեառն սինա և 'ի սահ_
մանս սեիրայ՝ շարժմամբ երկրի , փայլատակամբ
երկնից , եւ՟ , 'ի պաշտպանել զազգն Իլի , և 'ի
դողացուցանել զթշնամիս , սոյնպէս և այժմ
զնոյն երևեցոյց , և ունի ևս առ յապայն երևե_

ցուցանել առ ինքեանս և առ Թշնամիս իւրեանց, առ ինքեանս պաշտպանութիւն, և առ Թշնամիսն նուաճումն. և ոչ երբէք պակասելոյ է ՚ի խնամելոյ զնոսա, յարուցանելով նոցա փրկիչ. յոյս ակնարկելով յարէ զկնի և աւէ:

6. Յաւուրցն Սամեգարայ որդւոյ Անաթայ ցաւուրս յայելի պակասեցին Թագաւորք. և գնացին ընդ շաւիղս. գնացին ընդ ճանապարհս խոտորնակս:

7. Պակասեցին քարաշանք բնակեալք ՚ի մէջ Իսրայէլի. պակասեցին. մինչև յարեաւ Դեբորա. մինչև յարեաւ մայր Իսրայէլի:

Այս յայտ է ՚ի նախագրելոց անտի՝ յառաջ քան զԴեբորա դատեաց զԻսրայէլ Սամեգար որդի Անաթայ փոքր մի ժամանակ. և երևելի ինչ ոչ գործեաց. և ՚ի պակասիլ նոցա տիրեցին Թշնամիք ՚ի վերայ Իսրայէլի. և նկունն արարին զնոսա. ըստ որոյ ասէ: Յաւուրցն Սամեգարայ որդւոյ Անաթայ ցաւուրս յայելի պակասեցին Թագաւորք. և գնացին ընդ շաւիղս. գնացին ընդ ճանապարհս խոտորնակս: Մթութիւնք կան ՚ի բանիդ. Նախ յայն՝ զոր ասէ ցաւուրս յայելի. իսկ յայել ոչ էր իշխան Իսրայէլի, այլ իշխանուհի կենեցւոց. վասն որոյ ոչ յարմարի ասել. յաւուրց Սամեգարայ ցաւուրս յայելի. կին ըստ եբր, և ըստ այլ Թարգմանութեանց յաւուրս յայելի. բայց երևի Թէ զայս գնէ ըստ համեմատութեան. իբր Թէ ասէր. ոչ Սամեգար կարաց պահել զԻսրայէլ, և ոչ յայել զկենեցիս. մինչև յարեաւ Դեբորա. յորոյ աւուրս ապա՛ն յայել զՍիսարա:

Երկրորդն է յայն՝ զոր ասէ՝ պակասեցին Թագաւորք. իսկ Թէ զինչ Թագաւորք էին սոքա՝ անգիտելի է. եթէ գոյականապէս առցուք զբառդ Թագաւորք, նշանակէ աստ զիշխանս. յոր միտ կամի ասել.

իշխանք Իսրայէլի՝ որք էին իբր Թագաւորք, նուաճեցան և սպառեցան։ Իսկ եթէ առցուք ածականաբար՝ նշանակէ աստ Թագաւորական՝ որ է արքունի Ճանապարհ զոր կոչեմք արահետ. յոր միա յեբր" գրի [illegible]. որ արահետ. 'ի տեղի որոյ յայլ Թարգմանութիւն բաց յեօթ" շաւիղ գրի կամ Ճանապարհ. և յայս միտ կամի ասել. յառաջ քան զյառնել դեբորայ յաւուրց անտի սամեգարայ դադարեալ էին 'ի մէջ Իսրայէլի արքունի Ճանապարհք. զի Թշնամիք ոչ Թողուին տալ յին համարձակ գնալ. և որք գնային՝ գնային ասէ ընդ շաւիղս գաղտնիս և ընդ Ճանապարհս կամակորս. այսինքն է զծռածրագնացս. կամ ընդ եբր" և ընդ այլոց ընդ Ճանապարհս ոլորածոյս, կամ արտուղիս։ Ի սոյն յաւելու ասելով։

7. Պակասեցին զօրաւորքն բնակեալք 'ի մէջ Իսրայէլի. պակասեցին. մինչև յարեաւ դեբորա. մինչև յարեաւ մայր Իսրայէլի։ Բռնաւորքն յեբրայականն գրի փերազոն. զոր լատինք Թարգմանեցին հզօրք. ասորիք՝ դաշտ կամ հարթունի. արաբացիք՝ Ճանապարհ առանձնութեց. և այլք՝ աւանք կամ գիւղ. իսկ եօթանասունք պահելով զձայնն 'ի յունարէնն եդին փրազոն. յորմէ և մերքս եդին փարազուն. որ 'ի հայս ստուգաբանի այր 'ի փառաւոր ազնէ, կամ այր հզօր և երևելի, կամ այր ձիոյ։ Իսկ ընդ այսմ կամի ասել. 'ի հարստահարութենէ Թշնամեաց ոչ մնային 'ի մէջ Իսրայէլի հզօրք և փառաւորք, կամ աւանք և գիւղք 'ի յանդորրու. այլ սպառեցան. մինչև յարեաւ դեբորա, որ եղև մայր Իսրայէլի 'ի խնամել զնոսա և յաղատել։

Զայս եդեալ յարէ զկնի և ասէ։

8. Զանձնացան եբրին գործելին նշանակէ աստուածոց օտարաց սնոտեաց. յայնժամ պատերազմեցան քաղաքք իշխան

խանայ. Ծածկումն նորա գեղարդեանց, տառապանաւն հազարք
այր 'ի մէջ Իսրայէլի.

Մթին են այս բանք, և շարադրութիւն ես խառն. երբեմն թէ զայս դնէ 'ի ցուցանել, թէ յետ այնր եղև յառնել թշնամեաց 'ի վերայ որդւոցն Իղի. և զկնի եղև զօրանալ նոցա ընդդէմ նոցին. ըստ որում ասէ. Յանկարծ եբեր գարեղէն նկանակն ածեալ ստորոտ Մադիամու. յայնժամ պատերազմեցան փաղաքս Իշխանաց: Նմա ասել. որդիքն Իղի թողեալ զած կենդանին՝ զհետ եղեն կռապաշտ մոլորութե. և ցանկացան մոլեգին ցանկութբ պաշտօն մատուցանել սուտ ածոց. որք որ քաղցեալն էին՝ ցանկայ գարեղէն նկանակի. վասն և ած բարկացեալ 'ի նոսա՝ յարոյց 'ի վերա նոցա զքաղաքս Իշխանաց, այսինքն զժողովուրդս Իշխանացն յարքունայ արքայի: Նա զի անզէն և անօգնական մնացեալ էին որդիքն Իղի՝ յուսահատեալ յանձանց իւրեանց՝ աղաղակեցին առ ած. և յուսացեալ 'ի նա՝ յարձակեցան 'ի վերայ թշնամեաց իւրեանց. յայս հայելով՝ յարէ զկէտն, և ասէ.

Ծածկումն նորա գեղարդեանց. տառապանաւն հազարք այր 'ի մէջ Իսրայէլի: Նմա ասել. 'ի դիմել մեր 'ի վերա թշնամեաց մերոց, այսինքն 'ի վերա սխարայ և զօրաց նոցա՝ չունէաք գեղարդունս. որպէս եղև յաւուրս Սաւուղայ. (Ա. Թագ. ԺԳ. 19): Նա և թէ նորոգ ես կամէաք չինել, ծածկումն նոցին պարտ էր յարձակիլ 'ի վերա թշնամեաց. որպէս թէ ասացեալ էր. այն գեղարդունք մեր ծածկեալ մնային. և չլինէին մեզ կարևոր. զի ոչ էր իմքնին պատերազմեցաւ ընդ թշնամիս մեր. ուստի ոչ միայն գեղարդեանց. այլև ոչ բազմութե պատերազմողաց կարօտացաք. զի թէև կարէաք քառասուն հազար այր ես գտանել 'ի մէջ Իղի, առ

'ի վանել զնմ, բայց մեզ շատ եղեն և տասն հազարքն, 'ի բաց առեալ զայնոսիկ՝ որք յայլ և այլ ցեղից ինքնայօժար յարձկցին 'ի մեր փախստեիցն ։ Այս մեկնութիւն՝ զոր եդաք, հաստատի 'ի բնագիրն եբրայեցւոց, և յայլ թարգմանութիւնս. զի յեբր՝ գրի. * ընտրեաց (կամ ընտրեսցէ) զմեծս
,, նորս. յայնժամ պատերազմ 'ի դրունս. վա-
,, հան եթէ տեսցի, և գեղարդն 'ի քառասուն
,, հազարս յիէլի ‖. յեօթ՝ ըստ մերումս դնի. բայց 'ի յետին օրինակս ինչ գրի, * ընտրեցին
,, զմեծս նորս. յայնժամ պատերազմեցան քաղաք
,, իշխանաց. եթէ վահան երևէր, և գեղար-
,, դունք 'ի քառասուն հազարս 'ի մէջ իէլի ‖. որպէս թէ եղեալ էր. որովհետև իսրայէլցիք ընտրեցին զմեծս նորս, յարձակեցան թշնամիք նոցա 'ի դրունս նոցա, և նոքա ոչ ինչ կարէին առնել. զի ոչ գոյր 'ի քառասուն հազար զօրս նոցա, ոչ վահան և ոչ գեղարդն. բայց մեծ 'ի ձեռն բարակայ առանց վահանի և առանց գեղարդեանց վանեաց զթշնամիս նոցա ։ Նաև այս բարւոք ևս բացատրի 'ի թարգմանութէ լատինացւոց. զի ասի անդ. * նոր
,, պատերազմունս ընտրեաց տէր. և զդրունս
,, թշնամեաց ինքն տապալէ. վահան և նիզակ՝
,, եթէ երևեսցի 'ի քառասուն հազարս իէլի ‖. ուր էնէ ասելով՝ ցուցանէ՝ թէ ոչ գոյր 'ի խ հազարսն իէլի վահան կամ նիզակ, և մեծ առանց այնպիսեաց նոր իմն պատերազմաւ վանեաց զթշնամիս նոցա ։

9. Սիրտ իմ 'ի վերայ կարգելոցն իսրայէլի, զօրաւորք ժողովրդեան օրհնեցէք զտէր ։

Մեծ էր արդարև սիրտ մարգարէուհւոյս, մինչև տարածիլ այնմ 'ի վերայ մեծամեծաց աղ-

գին Տեառն. որք նղ բանիւն կարգեցան և ելին 'ի պատերազմ. ուստի և 'ի մեծութիւն ասոյ սրտի

իւրոյ գեղեցիկ բարբառի և ասէ.

**Սիրտ իմ 'ի վր հրամայելոցն Իսրայէլի:** Սկսանի ասել. աւետէ իմ զիշխանս Տեառն՝ որք կարգեցան և կարգեցին զժողովուրդ իւրեանց 'ի պատերազմ յանուն Տն, սիրտ իմ գեղու 'ի վերայ նց.

Յերբ" փոխել ասելոյ, 'ի վերայ կարգելոց, դնի. * առ դպիրս ‖, կամ առ քննիչս, կմ առ օրէնսդիրս. այնպէս դնի և 'ի քաղդ". 'ի սոյն վերածի և Թարգմանութ ասորւոց և արաբացւոց, եւս և ակիւղասայն և Թէոդոտիոնին: Յեօթ" դնի ըստ մերումս, * սիրտ իմ առ այնոսիկ՝ որք կարգեալ են յիէլի ‖. բայց Ց այլ օրինակաց գրի. * սիրտ իմ Ց Ձօլսս Տի կարգեալս 'ի Հակատ ‖. 'ի լատ" դնի. * սիրտ իմ սիրէ զիշխանս Տի ‖. ամէքին եւս զնոյն իմաստ ունին:

**Օրհնեցէք զՏէր:** Այնինչն, դուք մեծամեծք՝ որք զօրացայք համգերձ ժողովրդովք ընդդէմ Թշնամեաց, տուք Տն ոյ զյաղթութիւն՝ ասելով. քո է զօրութի և քո է յաջողութի, քո է իշխանութի, և քո է Թագաւորութի.

Խօսի այս և առ այլս ասելով:

10. **Հեծեալք յերիվարս 'ի ճերմակս, և նստեալք. երթեալք յատեանս ատենակալաց. պատմեցէք բարբառոյ:**

Մեծամեծք քաղաքացյերիս տրոհին. մի՝ այնս որք յինքեանս են մեծ՝ դրամովք, ստացուածովք, ծառայիւք, տամբք, եւն. երկրորդ՝ այնս որք 'ի զինուորական կարգի իցեն. երրդ՝ այնս որք յարքունի հաւատարմութե իցեն. յորս երևելի են իշխանք և դատաւորք և մնացուանդ Թագաւորք: Յերկոսին յառաջինսն հայելով՝ դնէ հե-

ծեալք յերիվարս · իսկ յերրորդն հայելով՝ դնէ երթեալք յատեան · և զնոյն համանգամայն յօրհնութի՟ ա՟յ յորդորելով՝ ասէ ։

Հեծեալք յերիվարս 'ի Միջօրէէ , և սպիտակաց · Երթեալք յատեանս ատենակալաց · պա՛տ ձայն բարբառոյ ։ Կամի ասել · դուք որք ճոխքդ էք և դուք որք զօրաւորքդ էք՝ մինչև էր նուաճեալ թշնամին ձեր՝ ոչ կարէիք և ոչ 'ի գիւղերի համարձակ և հետիոտս շրջիլ 'ի հրապարակս · բայց աւասիկ այժմ 'ի վանել ա՟ծ զթշնամին ձեր՝ աներկիւղ շրջիք հեծեալք 'ի վ՟ր երիվարաց և 'ի վ՟ր սպիտակաց՝ այ՟ 'ի վ՟ր սպիտակ ջորեաց և իշոց , ոչ եթէ 'ի գիւղերի միայն , այլև 'ի միջօրէի ։ Ո՛այս տեսեալ ձեր՝ տուք ձայն բարբառոյ այ՟ տուք ձայն օրհնութե ա՟ծ ։ 'Նոյնպէս և դուք իշխանք և դատաւորք , որք ոչ զոք իշխէիք դատել և դատապարտել յերկիւղէ թշնամեաց ձերոց , այժմ յաջողութ՟ ա՟ծ երթեալ նստիք յատեան ատենակալաց · դուք ևս ը՟ նոսին 'ի միասին հնչեցէք զբարբառ ձեր ։

Խորհրդաբար , այս բանք կարեն հայիլ առ առաջնորդս եկեղեցւոյ · բայց ըստ պատշաճի և ս առ առաքինիս եղեալս 'ի միջօրէի՝ այ՟ յաւետարանական օրէնս · զի հեծեալ ն՟ք 'ի վ՟ր մարմնոյ և անասնական յօժարուեց , և նստել յատեան խղճի մտաց՝ զգաստութ՟ կարեն օրհնել զա՟ծ ։ 'Յեբր" և յայլս բաց յեօթ" փոխ երիվարի՝ դնի էշ մատակ · իսկ յեօթ" դնի իբօղիղօն , որ թարգմանի ենթալծեայ , այ՟ լծեալ · բայց թուի թէ մերքս ընթերցեալ են իբբօղիղօն՝ որ թարգմանի լծամի · որոյ վ՟ս թարգմանեալ են երիվար , որ՟ թէ ձի լծեալ ։ Դարձեալ յեբր" փոխ միջօրէի դնի ձեխուօթ · որ նշանակէ սպիտակ կ՟մ սպի-

սպիտակ . եւ որոյ այլք բաց յեօթն՝ թարգմա-
նեալ են յեշ պայծառ կիք յեշ սպիտակ : Առա-
ջի առնէ այժմ դեբորա զատարաղ եւ զնիւթ օրհ-
նութեան՝ յոր յորդորեաց . եւ ասէ :

11 . Նուագածուաց ի մէջ ցնծացելոց . անդ տացեն արդարութիւն Տն . զարդարութիւն զօրացոյց ի մէջ Իէլի . յայնժամ էջ ի քաղաքս ժողովրդ Տն :

Յետ յաղթութեան եղելոյ ընդդէմ սիսարայ՝ նուագածուք պար առեալ երգեին այսպէս բանս օրհնութեց՝ եւ եւ զայս օրհնութի դեբորայ : Իսկ թէպէտ այս ոչ գրի որոշակի, բայց ինքնին կարէ իմացեալ լինել . որովհետեւ յամ ազգս մանաւանդ ի հրէայս սովորութի էր զայս առնել : Ի սոյն հայելով դեբորայ՝ յորդորէ զնախակարգեալ անձինսն՝ երգել զօրհնութիս եւ եղանակի նուագածութե սոցա . ի մէջ միտուցանելով միանգամայն եւ զնիւթ օրհնութեն յասելն :

Նուագածուաց ի մէջ ցնծացելոց . անդ տացեն արդարուէ Տն : Նուագ. նուագածուաց՝ զնի ասա իբր յատկացուցիչ բարբառոյ, զոր եդ ի վերջ նախընթաց համարոյ . որպէս թէ ասացեալ էր . սոյն ձայն բարբառոյ իբրեւ զնուագածուաց՝ որք նըւագեն ի մէջ բազմութե արանց եւ կանանց ցընծացելոց . եւ ի մէջ նոցա տան արդարութի Տն . Եւ պատմեն զարդարութիւնս Տնյ, կամ թէ տան Տնյ զարդարութի : Իսկ արդարութիւնք իմացեալ լինին աստ այն վրէժխնդրութի զոր արար Տծ ընդ սիսարայ . եւ յաւելու ասել :

Զարդարութիւն զօրացոյց ի մէջ իսրայէլի . յայնժամ էջ ի քաղաքս ժողովրդ Տն : Արդարութիւնք ոչ իմացեալ լինին աստ այն՝ զոր եդ յառաջն, այլ ողորմութիւն Տնյ . որպ տեսանի յայլս . եւ ընդ այսմ կամի ասել .

յերգել ձեր զօրհնութիւն տն՝ ասասջիք . եցոյց տր պղորմութն իւր 'ի մէջ Իլի . զի արար վրէժխնդրութիւն ը թշնամիս նց . և ժողովուրդ տն դարձաւ ցնծութը 'ի պատերազմէ . և էջ իւրաքանչիւր 'ի քաղաք իւր, օրհնելով և գովելով զտր : Օ այս եդաք ըստ Թարգմանութե մերում . զի յայլս այլազգ դնի . քանզի փոխ ասելոյ . * տուք
,, ձայն բարբառոյ նուագածուաց 'ի մէջ ցնծա-
,, ցելոց ‖ . յասոր" դնի . * խորհեցարուք խնդ-
,, րեմ զբանս քննողաց, որք ( դեգերին ) 'ի
,, մէջ րաբունեաց ‖ . յարաբ" դնի . * քննեցէք
,, զբան նոցա՝ որք մարզին 'ի գիրս րաբունեաց ‖ .
'ի լատ" յետ դնելոյ . խօսեցարուք, կամ տուք ձայն, դրի . * ուր բաղխեցան կառք, և Թըշ-
,, նամեացն զօր հեղձաւ . անդ պատմեսցին ար-
,, դարութիւնք տն եւ ‖ :

Այս այլայլուն Թարգմանութեց ծագի 'ի մԹութէ եբրայական բնագրին . որ բառ առ բառ կարէ Թարգմանիլ այսպէս . * խորհեցարուք . 'ի ձայ-
,, նէ աղեղնաւորաց 'ի մէջ տեղեաց, ուր հա-
,, նեալ լինի ջուր ‖ . կամ ը Թարգմանելոյ այլոց . * խօսեցարուք ձայնիւ ( բարձրագունիւ ) ը
,, զնետից՝ 'ի մէջ նց որք հանեն զջուր ( ցըն-
,, ծալից երգով ) ‖ : Եւ 'ի գիրս լինչ մեր, ուր դնի կցկտուր մեկնութն դատաւորաց, Թարգմանութն եբր" դնի այսպէս . * ը միտս ածէք 'ի բանից փայտահարացն և ջրակրացն սեղանոյն ‖ . որով նշանակին ղեւտացիք, զորս կոչեաց քննիչս . իբր թէ ասացեալ էր . ուսջիք 'ի ղեւտացւոց զօրհնութիւն տյ, և այնու՝ օրհնեցէք զտր : Այս տմ հայի յայն, թէ որովհետև տծ եցոյց զփրկութն իւր առ իէլ՝ արժան է նց ձայնիւ ցնծութե օրհնել զնա : Աստ աւարտէ դեբորա զառաջին

մասն

ժամն օրհնութեան իւրոյ , և սկիզբն առնէ երկրորդ՝ գլին · և խօսելով առ նիքն՝ ասէ ։

12 · Զարթի՛ր զարթի՛ր Դեբովրա · զարթո՛ զբեւրաւորս հանդերձ ժողովրդեամբ · զարթի՛ր զարթի՛ր · խօսեա՛ց երգովք · զօրացեալ յարեացե՛ս Բա՛րակ · գերեացե՛ս զգերութիւն քո որդի Աբինէեմայ ։

13 · Յայնժամ իջանայր զօրութիւն նորա · Տէր ընկեցէ՛ց ինձ զզօրաւորսն քան զիս ։

Այս բանք հայցին նախ 'ի պատրաստութիւն սրտին դեբովրայ՝ յառնել ընդդէմ սիսարայ · երկրորդ՝ 'ի պատրաստութիւն յօժարութեան հոգւոյ նո՛ր օրհնել զՏր · երրորդ՝ 'ի պատրաստութիւն յաղթութեան՝ զոր առնելոց էր բարակ · ըստ առաջնոյն ասէ ։

Զարթի՛ր զարթի՛ր դեբովրա · զարթո՛ զբեւրաւորս հանդերձ ժողովրդեամբ · Արկանումն բառիցդ զարթի՛ր՝ ցուցանէ զմեծութիւն պատրաստութեան իւրոյն · նոյնպէս և խօսելն առ նիքն՝ ցուցանէ զաճապարումն յայն պատրաստութիւն · ոպ թէ եղեալ էր · ո՛վ դեբովրա , ո՞չ ապաքէն յայտնեաց քեզ Տր , թէ հանդերձեալ էք վանել զթշնամիս ձեր · զարթի՛ր արդ , և զօրացի՛ր , զարթի՛ր պատրաստիլ . և արդ առնել բարակայ՝ զարթուցանել զբիւրաւորս , որ զտասն հազարս 'ի վր սիսարայ ։

Իսկ այն զոր յաւելու հանդերձ ժողովրդեամբ , այս կարէ հայիլ նախ 'ի զարթնուլն դեբովրայ · ոպ թէ ասէր · զարթի՛ր դեբովրա հանդերձ ժողովրդեամբ քով · կարէ հայիլ երկրորդ 'ի զարթնուլ ժողովրդեան · որպէս թէ ասէր · զարթի՛ր դու , և զարթիցէ ժողովուրդ քո՝ պատրաստիլ տասն հազարաւ ընդդէմ թշնամեաց ։

Այլ գիտելի է · զի այս բան՝ որ դնի 'ի մերումս և յԼտին օրինակս եօթանասնից , որ է * զար-
թո՛

թա՛ զխուրաւորս հանդերձ ժողովրդեամբ Ա, ոչ դատանի յեբր" և ոչ յայլ Թարգմանութիւնս. Երևի թէ յանցանել ժամանակաց անկեալ է այդ յեբրայականէն ։ Գտցի յընտիր օրինակս եօթ", զի 'ի յետին օրինակս պակասի. բայց սակայն այն յետին օրինակք որք յայսմանի տեսանի՛ բաղդատութբ եբրայականին այլայլեալ են. որպէս է և օրինակն եօթնլեզուեան Թարգմանութե. ուստի և մեք ոչ զս նը, այլ զս ընտիր օրինակաց բերեմք զբանսն ։ Խօսի ապա դեբօրա ըստ երկրորդին ասելով ։

Զարթի՛ր զարթի՛ր. խօսեա՛ց երգով ։ Որպէս 'ի նախընթաց հատուածի կրկնումն բայիդ զարթի՛ր ցուցանէր զմեծութի պատրաստութե իւրոյն, այնպէս և յայս հատուած զս ասելոյ մեր այժմ ցուցանէ զմեծութի ցնծութե սրտի յորդնել զնծ, կամ յօրինել զերգս գոհութե առ ած. որոյ վն դնէ խօսեաց երգովք. այսինքն յօրինեա զերգս օրհնութե, խօսելով 'ի նմա՛ զորս արար ած 'ի փրկութիւն իսրայէլի, և 'ի խորտակումն թշնամեաց նոցա ։ Խօսի ապա և ըստ երրորդին, և ասէ ։

Զօրացեալ յարիցե՛ս բարակ. գերեացե՛ս զգերեան քո որդի աբինէեմայ ։ Այս բանն ոչ ցուցանէ թէ անդ ներկայ էր բարակ, և ընդ նմա խօսելով ասէր զայս դեբօրա. այլ թէ առ նա կարգին ասացեալքն. զն որոյ թէպէտ սպառ էր դնել յերրորդ դէմս. զօրացեալ յարիցէ, նա, բայց վեհանձնական մեծութի սրտի նր, և գեղումն ճարտարութե բանիցն յերկրորդ դէմս դարձուցանէ. որով առաւել ևս ազդու առնէ զբանն իւր. որք թէ եդեալ էր. արի՛ ո՛վ բարակ որդի աբինէեմայ. արի՛, զի 'ի ձեռին քում է յաղթութիւն. որով ունիս

նիս գերել զգերութիւն քո, այսինքն վարել 'ի գերութեան զԹշնամիս քո զքանանացիս. և զայս ասէ՝ ոչ զի գերեաց նա զնա, այլ զի նուաճեցոյց զնա և զարքայ նոցա զյաբին իբրև զգերի. Սովին այսու եղև բարակ իբրև զփայլակն առ Թշնամիս. ըստ որում բառս բարակ Թարգմանի փայլակն. եղև և փառք և վայելչութիւն իւր. ըստ որում էր որդի աբինէեմայ, որ Թարգմանի հայր վայելչութեան. և զի այսու մեծ իմն ցուցաւ զօրութիւն Տեառն, սմին իրի յարէ զհետ, և ասէ.

13. Յայնժամ մեծացաւ զօրութիւն Տեառն. Տէր ընկղմեաց ինձ զզօրաւորսն քան զիս.

Կամի ասել. 'ի վանել բարակայ զԹշնամիս իմ մեծացաւ և փառաւորեցաւ զօրութիւն Տեառն 'ի զօրութենէ իմմէ. որ ընկղմեաց և նուաճեցոյց ինձ դեբորայիս զայնոսիկ՝ որք զօրագոյն էին քան զիս, այսինքն քան զազգ իմ.

Խորհրդաբար, դեբորա եղև պատկեր Սրբոյ Աստուածածնի, որ կարգեցաւ և կացուցաւ մայր նորոյս Իսրայէլի. և զօրութեամբ որդւոյն իւրոյ նուաճեաց 'ի ներքոյ իւր զախոյեանս, այսինքն զսատանայ և զզօրս նորա. և երգեաց ցնծութեամբ. * մեծացուցէ անձն իմ զՏէր ||: Դարձեալ նաև ըստ Թարգմանութեան անուան՝ դեբորա եղև օրինակ Սրբոյ Աստուածածնի. զի դեբորա Թարգմանի մեղու, որ է կենդանի կուսակրօն, և տայ զմեղր անոյշ. որպիսի եղև Սուրբ Աստուածածինն, զոր միշտ կոյս դաւանի ըստ հանրական եկեղեցի. և առ՛օգ մեղու շնորհաց իբրև մատակարար հոգւոյն Սրբոյ. Իսկ բարակաւ և բանակաւ նորա ըստ ասելոյ ոմանց նշանակեին զումար դասու առաքելոցն, որք յետ համբարձմանն Քրիստոսի յորդորմամբ դեբորայ, այսինքն Սրբոյ Աստուածածնին՝ դիմեցին 'ի վերայ սիսարայ՝ այսինքն սատանայի

նայի և հնարից նշ. և նուաճեցին զնա. այլ մ-
նուն յաղթութեն յնմ տեղիս ընծայելի ցուցան-
ող ճծածնին. մինչև կարել նմա առել զառա-
քելյն իբրև զդեբորա. * գիտասջիր՝ զի ոչ ձեռ-
լիցի քաջութի 'ի ճանապարհին՝ զոր երթիջիր, քզ-
զի 'ի ձեռն կնոջ մատնեսցէ տր զսիսարա։ Ըստ
առաջի արարեալ դեբորայ զայս նուաճումն թշնա-
մեայ, 'ի մէջ բերէ այժմ և զձեռնտուութն 'ի նոյն,
և ասէ.

14. Յարուցանէր եփրեմայ պատժեաց զնոսա 'ի հո-
վիտան. եղբայր քո բենիամին յայն ժողո-
վուրդ. յինէն 'ի մաքիր (այսինքն 'ի մաքիրայ) իջին խուզ-
արկուք. և 'ի զաբուղոնէ զօրացուցիչք. գաւազանաւ
պատմութեան դպրի.

15. Եւ զօրավարք իսաքարու ընդ դեբորայ և ընդ
բարակայ. և այս բարակ 'ի հովիտան առաքեաց
զոտս իւր. 'ի բաժինս ռուբէնի մեծամեծ զննողք սրտի.

Հայելով յառաջի եդեալ բանսդ՝ յայտնի երևի
թէ 'ի դիմել բարակայ 'ի վ̅ր սիսարայ տասն հա-
զարօքն զաբուղոնի և նեփթաղիմայ՝ ձեռնտու-
եղեն նմա և արտաքուստ չորեքին ցեղք. դ̅ ցեղն
եփրեմայ, բենիամենի, մանասէի և իսաքարայ.
և ահա 'ի սոսին հայելով ասէ.

Յարուցանէր եփրեմայ պատժեաց զնա 'ի հովիտան. եղբայր
քո բենիամին յայն ժողովուրդ։ Որովհետև այս պատ-
մութի զոր առաջի առնէ դեբորա՝ ոչ գրի ու-
րեք յառաջնոցի, համարեցան ոմանք, թէ այս
յայլ ինչ հայի, զի յայն՝ որ աւանդի 'ի գիրս ե-
լից ժէ. թէ յեսու՝ որ էր յեփրեմայ, ել ընդդէմ
ամաղեկայ, և եհար զնա. զնոյն արար յետ ժա-
մանակաց և սաւուղ թագը որ էր 'ի բենիամինէ.
(ա. թագ. ժե)։ Այս մեկնութի թէպէտ և կա-
րէ

րել յարմարիլ առաջինկայ բնաբանիդ, մանաւանդ ը՟ եբր" և ը՟ լատ", բայց կարի հեռապէս. Քզի կարգ բանիցն դեբորայ ոչ ակնարկէ յայդ, այլ ՚ի ձեռնտուան բարակայ. իսկ թէ այս ոչ գրի ՚ի պատմութ՟ն անդ՝ ամաչնչլին՝ չէ ինչ. բաւական է՝ թէ դեբորա՝ որ էր յայնժամ պատերազմի, որոշա- կի գրէ զայն՝ և զորս զհետ նր, լրացուցանելով զմնացեալսն, զորովք զանց արար հեղինակ պատ- մութեն. Նաև ը՟ այսմ առաջինկայ բնաբանդ ցու- ցանէ, թէ ՚ի յարձակել բարակայ ՚ի վր սիսարայ և զօրացն նր տասն հազար արամբք զաբուղոնի և նեփթաղիմայ, և ՚ի ցրուելն և ՚ի փախչելն զօրացն սիսարայ, կամ յապատակել նց յայլ տեղիս, հասին զհնի նց ժողովուրդք եփրեմի. և հարին զնս ՚ի հովիտսն. Օյսն արարին և ժողովուրդք բենիամինի. և զի բենիամին էր եղբայր յովսե- փայ հօր եփրեմի, սմին իրի դնէ եղբայր ։։ և թէպէտ յեբր" փոխ ասելոյ եղբայրքո՝ դնի զհնի քո, բայց այդ ոչինչ ը՟ դիմանայ կարգի բանին. Նաև սակայն աստանօր երևելի իմն տարբերութի կայ յեբրայականն. զի յայժմեան օրինակս նց փոխ հովտի դնի ամաղէկ. ոչ դնի և ՚ի քաղդ" և ՚ի լատ" և յասոր" և յարաբ". Յայտնի է՝ զի եօթանասունք զեբրայական բառդ עמלק ա- մաղէք՝ ընթերցեալ בעמק էմէք՝ եդին հովիտ. յոր- մէ առին և մերքս. Եթէ հովիտ դիցի՝ մեկնի ը՟ վերագրելոյդ. իսկ եթէ ամաղէկ՝ մեկնի այսպ. ՚ի դիմել խնցւոց ՚ի վր սիսարայ, ամաղեկացիք՝ որք թշնամի էին նց՝ առաքեցին օգնութ առ սի- սարա. զայն իմացեալ եփրեմեանց և բենիամե- նեանց՝ հասին և հարին զնս. խօսի աստ դեբո- րա և զմնասեանց, և ասէ.

Յեղէն ՚ի նոցին եղեն խոտաբերդ: Մաքիր էր մի միայն

միայն որդի Մանասէի . յորմէ և զցեղն զայն կո-
չէ աստ Մաքիր . և զի որդիք Մանասէի մօտ 'ի
Թափոր բնակէին , լուեալ զդիմել բարակայ
'ի վերայ սիսարայ՝ դիմեցին և ինքեանք զկնի
իբր խաղաղականք , զի իբր խրախուսիչք և օգնիչք .
և զի ոչ իմքն չոքան զկնի , այլ զօրաւորքն , վ՚յ
ոչ դնէ սպառազէն ցեղն Մաքիրայ . այլ խօսելով 'ի
դիմաց այնր ցեղի՝ ասէ . յինէն 'ի Մաքիրայ իջին
զկնի նր զօրաւոր խուզարկուք , կմ ըստ եբրայակա-
նին՝ օրէնսդիրք , զի է իշխանք՝ որք դնին 'ի լատ" , որ
'ի նոյն հայի : Այսօր ապա և զզաբուղոնէ ասելով .
Եւ 'ի Զաբուղոնէ զօրացուցիչ : Այս քան զորութն
իմացեալ լինին և Նեփթաղիմեանք . զի բարակ
ըստ հրամանին դեբովրայ տասն հազար ժողովեաց
'ի Նեփթաղիմէ և 'ի Զաբուղոնէ . իսկ թէ յայս
քան միայն զԶաբուղոնեանս յիշէ՝ այսու թերևս
կամի ցուցանել զառաւելութի յօժարութե նց , բա
որում կոչէ զնս զօրացուցիչս , կմ ըստ եբր" և եօթ"
քարոզօղս և ձգօղս կմ մղօղս . որք թէ ասէր . բզմ
հզօրք 'ի Զաբուղոնէ միաբանեցան ընդ բարակայ .
և զօրացուցին և մղեցին զբանակ նր . Այլ առ
ցուցանելոյ զընտիր լինել նց ասէ .

Գաւազանաւ պատմութե դպրէ : Կամի ասել . այսինքն-
որ անձինք էին այնոքիկ զաբուղոնեանք՝ որք կա-
րէին անցանել 'ի գաւազան պատմութե դպրի ,
այսինքն շարադասիլ մի մի 'ի գաւազանագիրս
պատմաբանի , կմ 'ի մատենանս երևելի արանց :
Օ այս յետին բան՝ ոմանք յայլ միտս տարածեն .
իբր թէ ասացեալ էր . բազումք 'ի զաբուղո-
նեանց անտի էին գաւազանակիրք , այսինքն իշխա-
նաւորք կամ դատաւորք . և կամ ըստ լատ" առաջ-
նորդօղք պատերազմի : Իսկ այլք հայելով յա-
սոր" և յարաք" ասեն , թէ էին ատենադպիրք և
վճպք .

վշտացք · իբր թէ այնչափ յաճախեաց զխռովս զմեզ զբա-
բելոնեանք 'ի պատերազմ, մինչև դպրաց նոյ
եւ երաշխաւորեցան 'ի նոյն խրախուսել : Կրկնի ա-
պա և զօգնականութիւն խաքարայ՝ ասելով :

15 · Նա զօրավիգն եղիցի ընդ դեղերայ և ընդ ե-
րախայ · և տարաբերեալ 'ի հովանեաւ պարածեալ ղեզու եւր :
Այսինքն թէ յիջանել դեբորայ և բարակայ զօ-
րօք իւրեանց՝ որք էին 'ի նեփթաղիմայ և 'ի զա-
բուղոնէ՝ հասին առ նա և զօրավարք խաքարայ ·
և 'ի լինել այսր, և յաղթ առնել դեբորայ՝ ար-
ձակեաց բարակ զոտս իւր 'ի հովիտսն, այսինքն
թէ շարժեաց բարակ զոտս իւր, որ է ասել · սկը-
սաւ դիմել 'ի հովիտսն : Իսկ հովիտք ասելով ոչ
իմանայ սոսկ զհովիտս թաբոր լերին, այլ և զայլ
հովիտս, և կամ զդաշտս, կամ զձորս · նոյ դնի
յեբր" և յեօթ" · զի որովհետև լեռնայինն էին
այնորիկ կողմանք, հարկ լինի գնալ և ընդ հովիտսն
և ընդ ձորսն · նոյ և մէջ եղև : Որդ զօգնիչսն բա-
րակայ 'ի մէջ բերեալ դեբորայ՝ առաջին առ-
նէ այժմ և զայնոսիկ՝ որք ոչ օգնեցին յայն մարտ-
և նախ զռուբենէ խօսելով՝ ասէ ·

'Ի բաժինս ռուբենի մեծամեծ ճշդութիւնք սրտի : Կամի
ասել · որք բնակէին 'ի բաժնին ռուբենի, որ են
որդիք ռուբենի, տեսեալ թէ բարակ դնայ 'ի
վերայ սիսարայ, անկան 'ի տագնապ սրտի · երկն-
չելով՝ թէ գուցէ կոտորեսցին իշխեցիք 'ի սիսա-
րայ, և ինքեանք կորիցեն ընդ նոսա · ուստի եղեն 'ի
նոսա մեծամեծ ճշդութիւնք սրտի : Զի 'ի յորդորել սմանց
'ի նոյն գնալ յօգնութիւն բարակայ, այլք ձչդէին
սրտիւք, և ոչ համարձակէին · զի ոչ հաւա-
տային՝ թէ յաղթեսցէ նա · իսկ այլք ձչդելով
ասէին · 'ի յաղթել սիսարայ՝ անձնատուր լիցուք
նմա · իսկ 'ի յաղթել բարակայ՝ նմա հպատա-
կեսց-

կեցուք ։ Յայսպիսի միտս տեսեալ դեբովրայ՝
մեղադրէ զնոսա, և ասէ ։

16. Ընդէ՞ր նստէիր ՚ի մէջ մոսփաթեմայ. լսել շշնջիւնս զարթնողաց. անցանել ՚ի կողմն ռուբենի. մեծամեծ յարուցեալ խոր հետազօտութիւնք սրտից ։

Ցեղն ռուբենի բնակէր յայնկոյս յորդանանու ՚ի մէջ սահմանացն մովաբացւոց և քանանացւոց. յորոց երբեմն տագնապէր. և ունելով զբազմութիւն խաշանց՝ խաշնարածութեան պարապէր ։ Ի լսելոյ՝ (որպէս ասացաք ՚ի նախընթաց համարն) զյարձակիլ բարակայ ՚ի վերայ սիսարայ՝ տագնապեցան ՚ի սիրտս իւրեանց. և փոխ օգնութի մատուցանելոյ՝ ընկճեալք յանձինս՝ մնացին անշարժ ՚ի տեղիս իւրեանց. սորին վ՚ն ասէ ։ Ընդէ՞ր նստէիր ՚ի մէջ մոսփաթեմայ. լսել շշնջիւնս զարթնողաց ։ Այսինքն ասել. ապաքէն վայել էր ռուբէնեանց յօգնութի հասանել մեզ. որովհետև յանդրանկութեան սակի էին. ընդէ՞ր ապա յանհոգս նստէիցին ՚ի մէջ մոսփաթեմայ՝ իմ ՚ի մէջ երկուց սահմանաց. (զի մոսփաթեմ սահմանք թարգմանի). զի՞նչ ունէին առնել անդ. բայց եթէ լսել զառանչմունս արջառոց և զմայել խաշանց (ոչ դնի յայլս), որք տագնապիչ են լսելեաց. եւս և լսել զշշնջիւնս զինուցն մովաբացւոց և քանանացւոց տագնապողաց նոցա ։ Յայս հայելով կրկին եւս ՚ի մեղադրութի առնու զնա և ասէ ։ Անցանել ՚ի կողմն ռուբենի. մեծամեծ յարուցեալ խոր հետազօտութիւնք սրտից ։ Այս այն է՝ զոր եդ ՚ի վերջ նախընթաց համարոյս, իսկ տարբերութիւն է յայսմ, զի անդ եդ ՚ի բաժինս ռուբենի, իսկ աստ դնէ * անցանել ՚ի կողմն ռուբենի ‖. այսինքն յանցանելն ՚ի բաժինս ռուբենի. և զոր անդ եդ * մեծա-

մեծ ճշգութիւնք սրտի ||, կամ ըստ եբր" խիզքէ . տատ գնէ , * մեծամեծ յարուցեալ կան հետազօտութիւնք սրտից ||, կամ ըստ եբր" խիզրաէ . Իսկ զայս կրկնումն գնէ ըստ սովորութեան տաղաչափական երգոց . յորս բանք լինին ՚ի նոյն վերջաւորութի աւարտին ։

Իսկ պատճառ այլ եւ այլ շարադրութ գնելոյ ՚ի մերումս՝ է խրթնութի բանիցն , որ եւ կարէ պարզիլ այսպէս . եթէ կամիցի ոք անցանել ՚ի կողմն ռուբենի . զի եթէ գնասցէ ոք ՚ի սահմանս ռուբենի , գտցէ ՚ի նմ տարակուսանի սրտից . կամ յանցանել բարակայ ՚ի բաժինն ռուբենի՝ եսես զի յարուցեալ են ՚ի սիրտս նց մեծամեծ հետազօտութիւնք կամ քննութիւնք . իբր զի տարակուսեալ տագնապէին՝ թէ զինչ արասցեն . եւ ցեն արդեօք ըն բարակայ ՚ի վր սիսարայ , թէ ոչ . եւ ոչ հրձակեն յայն՝ մնացին յերկրի իւրեանց իբր յապահովի ։

Այսոսի ապա եւ զայլոց ցեղից՝ ասելով ։

17 . Գաղաադ յայնկոյս յորդանանու բնակեաց . եւ դան ընդէ՞ր բնակէր պանդխտեցեալ ՚ի նաւս . ասեր բնակեաց առ ծովեզերբ ծովուց . եւ ՚ի հերձուածս նորա բնակեսցէ ։

Նախատինք մեծ էր այսոցիկ ցեղից քան ռուբենեանց յանհոգս մնալ յայնպիսի ժամանակի , յորում հարկ էր նոցա ինքնայօժար դիմել ՚ի վր թշնամեաց ։ Ասացի քն ռուբենեանց , զինչ թէպէտ եւ չեկին , բայց սիրտք նց ՚ի տագնապի յուզէին . իսկ սք յանհոգութե նստէին . վս ասէ ։

Գաղաադ յայնկոյս յորդանանու բնակեաց . եւ դան ընդէ՞ր բնակէր պանդխտեցեալ ՚ի նաւս . ասեր բնակեաց առ ծովեզերբ ծովուց . եւ ՚ի հերձուածս նորա բնակեսցէ ։ Ի պճառ բաժնին գաղայ էր յայնկոյս յորդանանու ՚ի մասին իմիք երկրին գաղաադու . ըստ որում յեբր" գնի կի

ՀԷ        Nn        լաս ,

լատ, և յայլս գաղաադ, առեալ զբոլորն փոք մասին. ըստ որոյ և յասոր' գադ դնի. և ոչ պա-րապեալ լինէին խաշնարածութե՟ : Իսկ դան բնա-կէր 'ի մէջ երից ցեղից՝ որ յուդայի, շմաւոնի և եփրեմի. և բազում 'ի դանայ իշխանէին 'ի ծով և նաւարկէին յայլ տեղիս, վասնորոյ դնէ զինչէ պանդխ-տիլ 'ի նաւս : Սոյնպէս և ասեր բնակէր առ ծովե-զերբ ասորւոց և փիւնիկեցւոց. և նա ևս նաւար-կէր երբեմն 'ի ծովու. և ունէր զբնակութիւն նաւուց կամ նաւահանգիստ 'ի գոգս ծովու իւր 'ի կիրճս : Դառնայ այժմ դեբորա 'ի գովութիւն երկուց ցե-ղիցն՝ որք գնացին ընդ բարակայ 'ի մարտ. և ասէ :

18. Զաբուղոն ժողովուրդ անձնանախատ 'ի մահ. և նեփթաղիմ 'ի բարձունս ագարակի :

Որպէս յայտ է 'ի գրելոյդ 'ի վերոյ, 'ի հրամայել բարակայ՝ ժողովեցան առ նա 'ի լեառն թաբոր զաբուղոնեանք և նեփթաղիմեանք. և զի ինք-նակամ եղև ժողովելոյ, վասնորիկ ասէ :

Զաբուղոն ժողովուրդ անձնանախատ 'ի մահ. և նեփթա-ղիմ 'ի բարձունս ագարակի : Բառդ անձնանախատ նշա-նակէ աստ քամահօղ զանձն. որպէս եղեն զաբու-ղոնեանք 'ի մատնել զինքեանս 'ի վտանգ մահու. ըստ որոյ յեբր' դնի. * զաբուղոն ժողովուրդ ա-նարգեաց զանձն իւր առ 'ի մեռանիլ ‖. և յասոր' * դիմադրեաց զինքն 'ի մահ ‖. սոյնպէս է և յայլս : Սոցին հանգոյն և նեփթաղիմեանք 'ի նոյն խրա-խուսեցին 'ի սահմանս մերովմայ՝ որ էր առ թաբոր լերամբ. ուր վճարեցաւ պատերազմ բարակայ. և զի մերովմ թարգմանի ագարակ, և է փոքր մի բարձր՝ դնէ 'ի բարձունս ագարակի, որ զնոյն նշանակէ :

'Ի դիմել երկոցունց ցեղիցս այսոցիկ՝ զհետ ելին

և

և եփրեմեանք և բենիամինեանք, մանասեանք և իսաքարեանք. և հարին զզօրսն սիսարայ. և զի կային Ը զօրս սիսարայ և ութ քաջ յօտարաց՝ զայնս ես 'ի մէջ բերել ասելով.

19. Եկին թագաւորք և պատերազմեցան. յայնժամ պատերազմեցան թագաւորք քանանացւոց 'ի Թանաք 'ի վ̄է ջրոց Մակեդդովայ. զպատահումն արծաթոյ ոչ առին.

Այսպիսի քաղաքք՝ զորս յիշէ, որք են Թանաք և Մակեդդով՝ էին քաղաք այլ և այլ թագաւորաց երկրին քանանացւոց. որք ձեռնտու եղեն յաբինայ արքայի. և վանեցան 'ի բարակայ և 'ի զօրաց նր̄. զծաղրելոյն ոչ և զտագնապելոյն սոցին խօսելով՝ ասէ.

Եկին թ̄գրք և պատերազմեցան. յայնժամ պատերազմեցան թ̄գրք քանանացւոց 'ի Թանաք 'ի վ̄է ջրոց Մակեդդովայ: Այս բան հայելով 'ի յետին յաւելուածն՝ ցուցանէ թէ յաբին արքայ լուեալ զպարտութիւն բարակայ՝ 'ի վաղվաղս կալաւ և զայլ թ̄գրս քանանացւոց. որոց զօրագլուխ կարգեցաւ սիսարա. և յիջանել բարակայ 'ի Թաբօր լեռնէ՝ հասին և ն̄ք անդր, և ձակատեցան. և 'ի հայիլ նոցա յերեսս բանակին բարակայ՝ զահի հարան. զի անկաւ ահ 'ի ս̄րտ նէ 'ի վ̄ր ն̄ց. և տագնապեցան յոյժ.

Իսկ զոր յաւելու ասելով՝ 'ի Թանաք 'ի վ̄ր ջուրց Մակեդդովայ, կրկնակի բացատրի. մի՝ 'ի ցուցանել զքաղաքս այնոցիկ Թագաւորաց. ոչ̄ թէ եղեալ էր. այսոքիկ Թգ̄րք էին Թագաւորն Թանաքայ և Թագաւորն Մակեդդովայ. Բ̄ որ անցանէ հեղեղատ ջուրց: Երկրորդ՝ 'ի ցուցանել՝ թէ առ քաղաքօքս այսոքիւք տագնապեցան ն̄ք, և վանեցան 'ի զօրացն բարակայ, որք ինքնակամ յարձակեալ էին 'ի պատերազմ, և ոչ վարձուք, ' ո̄ր եկեալ էին

այնոքիկ թագաւորք · և առ այս յարէ և ասէ ·
Զափահոսն արծաթոյ եւ ոչ առին ։ Զայս ասէ 'ի դիմաց բարբարոսաց և բռնաւորին նր · որպ թէ ասէր · մեք և զօրք մեր ոչ եթէ ագահութեամբ արծաթոյ ցանկանալով՝ վարձս առեալ՝ եկաք ընդդէմ թշնամեաց մերոց, որպ օգնիչք նր առնէին, այլ յանուն ա՛ծոյ մերոյ · վ՛ոյ և նա ինքն պատերազմեցաւ ընդ նմա փոխանակ մեր · իսկ թէ զիա՛րդ ,յայտ առնէ ասելով ։

20 · Յերկնից ճակատեցան աստեղք · յիւրաքանչիւր յօրինուածոյ իւրեանց պատերազմ ընդ Սիսարայ ։

Զայսպիսի ինչ բազում անգամ իրօք ցուցին երկինք մինչ առ ժամօք յեսուայ՝ ոչ միայն 'ի հոսել նց զքարինս կարկտի · ( յեսու · Ժ · 11 ) · այլ և 'ի կալ մնալ նց անշարժ իբր ճակատել ընդդէմ թշնամեաց ,յաւել յեսուայ * կացցէ արեգակն հանդէպ գաբաւոնի ‖ ։ Իսկ թէ և յայս պատերազմ եղեն այսպիսի ինչ՝ ոչ գրէ մ՛ծաշունչն ·
բայց այսու ամի՛ն ասէ ։

Յերկնից ճակատեցան աստեղք յիւրաքանչիւր յօրինուածոց իւրեանց պատերազմ ընդ Սիսարայ ։ Եթէ սոյն այս լեալ իցէ արտաքին ինչ իրօք կամ նշանօք, ցուցանէ՝ թէ 'ի պատերազմին բարբարոսաց ընդ Սիսարայ՝ 'ի զօրութէ աստեղաց երկնից շնչեցին հողմք , հնչեցին կայծակունք , իջին կարկուտք , շփոթեցան օդք , և խռովեցան տարերք միանգամայն · որոց գրեթէ նոքին իսկ աստեղք ճակատեալ ք յերկնից 'ի վերուստ ընդդէմ Սիսարայ՝ ետուն պատերազմ ընդդէմ զօրաց նր , և տապաստ արկին զնս ։
Իսկ եթէ չեղև այսպիսի ինչ , այս բանք 'ի փոխաբերական միտս առեալ լինին , 'ի ցուցանել թէ ա՛ծ վանեաց զնս երկնային զօրութբ · որպ թէ 'ի ձեռս առեալ էր զաստեղս երկնից զիւրաքանչիւր

չէր յիւրեանց տեղեաց . և նորիմբք պատերազ-
մէր ըստ Թշնամեան խորայելի :

Մարթ է աստ աստեղցքս իմանալ և զհրեշտակս . ըստ որում ՚ի յայտ" ժբ . 4 . անուանս աստեղաց յիշեն հրեշտակք յանելն անդ՝ թէ * քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից ‖ : Իսկ ըստ այսմ կամի ասել . հրեշտակք երկնից իւրաքանչիւր յօրինուածովք , որ իւրաքանչիւր իւրեանց զօրութեամբք , կամ ըստ եօթն" իւրեանց դասաւորութ՝ ՚ի բարձանց երկնից նշանօք , կա՞մ այլ ինչ երևելի իրօք պատերազմեցան ըստ նմա . և յերկիւղ անհնարին վարեցին զնա առ հեղեղատաւ կիսոնի ,
զորմէ գրէ ՚ի յաջորդ համարն ասելով :

21 . Հեղեղատն կիսոնի մերժեաց զնոսա . հեղեղատն կադեմիմայ . հեղեղատն կիսոնի . կոխեսցէ զնոսա անձն իմ :

Հեղեղատն կիսոնի է առ Թաբոր լերամբ ՚ի հարաւոյ կողմանէ , և է անուանի յոյժ ՚ի վաղժամանակաց . ըստ որոյ կոչի և հեղեղատ կադեմիմայ . որ հեղեղատ հին կամ՝ ոք . զի յորմէ հետէ աստն սկսեալն էր՝ չէր վերջացեալ . և զի յայս հեղեղատ կորեան բազումք ՚ի զօրացն սիսարայ , վասն այսորիկ ասէ .

Հեղեղատն կիսոնի մերժեաց զնոսա . հեղեղատն կադեմիմայ . հեղեղատն կիսոնի : Կամի ասել . ՚ի պատերազմիլ զօրացն իւր ըստ զօրս սիսարայ առ հեղեղատաւ կիսոնի՝ բազումք ՚ի զօրաց նր թօթափեցան ՚ի հեղեղատ անդր , և հեղձան . և հեղեղատն այն մերժեաց զնոսա , որ վարեաց զնոսա , և առեալ տարաւ զնոսին ՚ի ծով :

Իսկ կրկնումն բանիդ կիսոն , և յաւելուած բառիդ կադեմիմ՝ ցուցանէ զշարաչար վարել հեղեղատին զնոսա . Մարթ է եւս ասել , թէ բառդ կա-

դեսիմ, և կրկնումն բառիդ կիսոն՝ յայտ առ-
նէն զհանգամանս հեղեղատին. զի կադեսիմ
թարգմանի նուիրեալ. և կիսոն՝ խիստ. յոր
մէա կամի ասել. հեղեղատն կիսոնի նուիրեալ
եղև կա՛մ կարգեալ եղև 'ի մերժել և 'ի վարել
խիստ յարձակմամբ զզօրս սիսարայ ։ Իւր առ-
ցուցանելոյ զքաջութիւն նց՝ յարէ զկնի, և ասէ ։
Կոխեսցէ զնոսա անձն իմ ։ Կամի ասել. այնչափ և-
զեն դիակունք զօրացն սիսարայ՝ եթէ 'ի ցամա-
քի, և եթէ 'ի հեղեղատի, մինչև կոխել ինձ
զնոսա և անցանել քայլելով 'ի վ՛ն նց ։ Արդ է
այսու իմանալ փոխաբերութբ իմն և զցնծալ ան-
ձին 'ի վ՛ն յաղթութեան եղելոյ ընդդէմ սիսարայ,
և զայս յաղթութիւն առաւել ևս կամելով մեծ-
ցուցանել՝ յարէ զկնի և ասէ ։

22. Ոտք իմ զօրացոյց զօրութբ. յայնժամ հարթահարք
եղեն գարշապարք երիվարաց մարտարաքեայ. և
հարթեցեն գարշապարք իմ զհզօրութեան զարհուրին նոցա ։

Որքան հպարտութբ ելին զօրք սիսարայ ընդդէմ
բարակայ, այնքան զարհուրանօք պաշարեալ
չարաչար վտանգեցան. վ՛յ ասէ ։
Ոտք իմ զօրացոյց զօրութբ ։ Կամի ասել. այնչափ նը-
վաճեցան զօրք սիսարայ, և նկուն եղեն, մինչև
ոտիւք իսկ մերովք զօրանալ 'ի վ՛ն նց, ա՛յ է խա-
պառ յաղթել նց. և դարձեալ՝ զօրք մեր՝ որք
իբր ոտք համարեալ լինէին 'ի նոցանէ, այնչափ
զօրացան՝ մինչև կոխել զնոսա ։
Եբր" և յայլ թարգմանութիս ոչ դնի այս բան.
ա՛յ է՝ * ոտք իմ զօրացոյ զօրութբ ‖. բայց քանզի
'ի նախընթաց հմրն դնի 'ի նմ 'ի վերջոյ բառդ
զօրութի, յաւելն. * կոխեսցէ անձն իմ զզօրութի
(նց կամ զզօրաւորս նց) ‖, 'ի բացատրութի այսր

յա-

յաւելեալ է 'ի մերս ասել . * ոտք իմ զօրացի զօրութ ‖ ։ Իսկ թէ 'ի լինել այսր՝ զինչ պատահեաց թշնամեաց, առաջի առնէ զայն ասելով։

Յայնժամ հարթեալք եղեն փարշապարք երիվարաց Մադ-դարոթ ։ Այսինքն թէ 'ի զօրանալ զօրացն բարակաց, և 'ի փախչել զօրացն սիսարայ՝ երիվարք նոցա կարթակոտորք եղեն՝ ոչ այնչափ 'ի սրոյ՝ որչափ յառաջարկիցն, այլ յապառաժուտ տեղեաց, ընդ որս փախչէին նոքա տագնապաւ . և առ այս յաւելու զբառդ մադդարոթ, որ նշանակէ տագնապաւ փախուստ . ո՛չ թէ եղեալ էր, 'ի փախչիլ նոցա տագնապաւ՝ խորտակեցան ոտք երիվարաց նոցին . և կորեան անձինք նոցա խոպառ ։ Ապա զի այսոքիւք հարուածովք՝ հպարտութիւն թշնամեացն փոխեցաւ յտնանկութիւն՝ յայն հայելով ասէ ։

Նա հարթեցին փարշապարք իմ ընդ զօրութեան զարհուրանաց նոցա նոցա ։ Կամի ասել . Թշնամիք մեր կամեցան հպարտութեամբ վերանալ քան զմեզ . բայց 'ի բարկութենէն այս զարհուրեալք՝ իջին 'ի վայր ընդ զմեզ . և անկան ընդ ոտիւք մերովք . որով և փարշապարք ոտից մերոց հարթեցին, այլ խոնարհեցուցին և նուաճեցին զնոսա . որ է ասել . 'ի կամիլ նոցա յաղթել մեզ հպարտութեամբ, մեք յաղթեցաք նոցա խոնարհութեամբ . զոր նշանակէ փարշապարն ։

Այս բան կարէ հայիլ և յապագայն . ո՛չ թէ եղեալ էր . որովհետև հպարտութիւն նոցա եղծաւ, և զօրութիւն նոցա նուաճեցաւ, և զարհուրանք նոցին ևս սաստկացաւ 'ի մնացորդս նոցա, այսուհետև փարշապարք իմ կոխեսցեն զնոսա . որ է ասել . դիւրին լինիցի մեզ այսուհետև կոխել զնոսա և նուաճել ։ Օյսպիսի եղեալ Դեբորայ՝ խօսի և զմնորվեայ խստագոյնս, և ասէ ։

23. Անիծեցէ՛ք զՄարովզ, ասէ հրեշտակն Տն. անիծա-
նելով անիծեցէ՛ք զբնակիչս նորա. զի ոչ եկին
յօգնականութե Տն. օգնական Տր 'ի մէջ նահատակաց հզօրն :

Մարովզ կոչ մերոց՝ երևի թէ էր քաղաք և գաւառ առ սահմանօք Թաբօր լերին և առ հեղեղատաւ Կիսոնի. բնակիչք որ տեսեալ՝ թէ բարակ գնայ 'ի վր սիսարայ, փխկ օգնութե տալոյ նմ՝ ազդ արարին սիսարայ, և ցուցին նմ հնարս ըդդէմ բարակայ. յաղագս այսորիկ յաւարտիլ մարտին հրեշտակ Տն՝ որ խօսէր ընդ դեբօրայ, ասաց նզովել զնս : Եւ թէպէտ այս պատմութի ձեռն տալոյ սոցա սիսարայ ոչ գրի յածաշնչի, բայց առաջիկայ բանքդ սիսարայ յայտնի ցուցանեն զսոյն. ապա թէ ոչ՝ ոչ նզովէր զնս՝ առակապէս վս ոչ օգնելոյ նց. քզի թէպէտ և այլք ոչ օգնեցին, բայց ոչ նզովեցան վս այնր. ուրեմն սոքա աւելի ինչ գործելով՝ նզովից գտան արժանի. ուստի և իրաւամբք ասէ :

Անիծեցէ՛ք զՄարովզ, ասէ հրեշտակն Տն. անիծանելով անիծեցէ՛ք զբնակիչս նորա. զի ոչ եկին յօգնականութեան Տն. օգնական Տր 'ի մէջ նահատակաց հզօրն : Զտեղին 'ի մէջ բերելով՝ ոչ զտեղին՝ այլ զբնակիչս տեղւոյն նզովէ, և կամի ասել. որովհետև մարովզացիք 'ի նեղութե մերում ոչ օգնեցին մզ, այլ թշնամեաց մերոց, նզովեցէ՛ք զնոսա հրամանաւ հրեշտակի Տն. և անիծանելով անիծեցէ՛ք զնս. և այս կրկնութիւնս յայտնէ զառաւելութի և զստուգութի անիծիցն՝ մինչև իսպառ ջնջիլ նց, և ոչ մնալ ուրեք յիշատակի նց, և ոչ տեղեկութե տեղւոյ քաղաքին :

Ընթեռլի է և այս՝ զի փխկ ասելոյ յօգնականութե մզ, դնէ յօգնականութե Տն. զի Տն էր այն պա-

տե-

տերացն. ուստի և ոչ գալ նոցա յօգնականութիւն Բարակայ՝ համարեալ լինի ոչ գալ յօգնականութիւն Տն. բայց այսու նմին ասէ՝ մեք ոչ կարօտացաք նոցա. քանզի որ ամենակարօղ Տէրն է, նա ինքն կայր ՚ի մէջ նահատակաց մերոց, նոյն ՚ի մէջ հզօր պատերազմողաց մերոց. և ինքնին պատերազմէր ընդ թշնամիս մեր. և անկարօտ գոլով զօրաց՝ ՚ի ձեռն կնոջ միոյ վճարեաց զպատերազմն։ Իսկ թէ ով էր այն կին՝ խօսի ՚ի յառաջորդ համարումն և ասէ։

24. Օրհնեալ լիցի ՚ի կանանց Յայէլ կին Քաբերայ Կենեցւոյ. օրհնեսցի ՚ի կանանց ՚ի խորանի իւրում։

25. Ջուր խնդրէին, և ետ կաթն. դաշխուրանաւ զօրաւորաց մատոյց կոգի։

26. Զձեռն իւր յահեակ յղեաց ՚ի ցիցն, և զաջ իւր ՚ի սպառապատ ճախճախանն՝ անդէտանդացուցանել, և ճախճախանեցոյց զսիսարա. խոցեաց ընդ ծամելիս նորա. և անցոյց ցից ընդ գլուխ նորա, և ապտակեաց։

27. ՚Ի մէջ ոտից նորա անկաւ ծանրացեալ. և նիրհեցոյց ՚ի մէջ ծնգաց իւրոց. յորում կորացաւ. մինչև ըզգետնեցաւ. անդ անկաւ չուառականն։

Այս նմ յայտնի աւանդի ՚ի գիրս դատ գլ. Ե. զոր և համառօտիւ յառաջ բերաք ՚ի վերոյ. և զի այս գործ յայնկոյս մեծ եղև, վն գովելով զնա ասէ։

Օրհնեալ լիցի ՚ի կանանց Յայէլ կին Քաբերայ Կենեցւոյ. օրհնեսցի ՚ի կանանց ՚ի խորանի իւրում։ Այսինքն թէ օրհնեալ լիցի Յայէլ ՚ի մէջ կանանց վն նախանձախնդիր լինելոյ իւրոյ փառացն Այ։ Իսկ զոր յարէ. * օրհնեսցի ՚ի կանանց ՚ի խորանի իւրում ||, սովին յայտ առնէ՝ թէ ոչ միայն նա ինքն հանդերձեալ է օրհնիլ, այլ և նմ ինչ նր՝ որք գտանին ՚ի

'ի խորանի նորին. 'ի մէջ բերէ ապա՝ զոր արար նա, եւ ասէ.

25. ՋՈՒՐ ԽՆԴՐԵԱՑ, ԵՒ ԵՏ ԿԱԹՆ. Այսինքն 'ի խնդրել սիսարայ զջուր 'ի յայելայ առ ծարաւոյն, նա փոխանակ ջրոյ՝ ետ նմա զկաթն. եւ զի ծանուսցէ՝ թէ այն կաթն զուտ էր եւ պարարտ, յաւելու ասել:

ՏԱՇԽՈՒՐԱՆԱՒ ԶՕՐԱՒՈՐԱՑ ՄԱՏՈՅՑ ԿՈԳԻ: Կոգին է իւղային մասն կաթին եղեալ յերեսս նորա: Իսկ յայել թէպէտ կաթն մատոյց՝ եւ ոչ կոգի, բայց քանզի կոգին եղանի 'ի կաթանէ՝ փոխանունութեամբ խօսելով՝ փոխանակ կաթն դնելոյ՝ կոգի դնէ. առ 'ի ցուցանել, թէ զոր կաթն ասաց՝ էր զուտ եւ պարարտ. (որպէս ասացաք այժմ):

Իսկ զայն մատոյց ասէ ՏԱՇԽՈՒՐԱՆԱՒ ԶՕՐԱՒՈՐԱՑ. իսկ տաշխուրանն է մասնաւոր իմն անօթ ըմպելոյ, որ յայլազգեաց Թաս կոչի: Այլ յաւելլով զբառդ զօրաւորաց, ցուցանէ՝ թէ այն անօթ չէր հասարակ, այլ փառաւոր եւ ընտիր. որպիսի է ամանն այն, որով զօրաւորք եւ իշխանք ըմպեն զջուր կամ զգինի: Իսկ զայս 'ի մէջ բերէ դեբովրա, առ 'ի ցուցանել՝ թէ պատիւ եցոյց սիսարայի կինն իմաստուն՝ այն է յայել, առ 'ի պատրել զնա եւ խորտակել. իսկ թէ զիարդ՝ պատմէ 'ի յաջորդ համարն՝ ասելով:

26. ԶՁԵՌՆ ԻՒՐ ՁԱԽ ՁԳԵԱՑ 'Ի ՑԻՑՆ, ԵՒ ԶԱՋ ԻՒՐ 'Ի ՎԱՍՏԱԿԱՒՈՐԱՑ ՋԱԽՋԱԽԱՆՍ՝ ԱՆՊԻՏԱՆԱՑՈՒՑԱՆԵԼ. ԵՒ ՋԱԽՋԱԽԵՑՈՅՑ ԶՍԻՍԱՐԱ. ՀԱՐԿԱՆԵԱՑ ԸՆԴ ԾԱՄԵԼԻՍ ՆՈՐԱ. ԵՒ ԱՆՑՈՅՑ ՑԻՑ ԸՆԴ ՔՈՒՆՍ ՆՈՐԱ. ԵՒ ՍԱՏԱԿԵԱՑ: Այսինքն թէ յետ արբուցանելոյ յայելայ զկաթն, եւ յետ ընկողմանեցուցանելոյ զսիսարա 'ի խորանի անդ՝ եւ ծածկելոյ զնա փեղկիւք յ̃ կտաւովք վրանին, եղեալ արտաքս՝ կորզեաց զցից մի փոքր, ե̃ որ կա-

կապիւր չուան վզմանին . և առեալ զայն 'ի ձախ ձեռն՝ մատոյց 'ի ծամելիսն սխալոյ . ( այսինքն 'ի չէնեէ սպաշխին ) . և եհար ուռամբն՝ զոր ունէր յաջ ձեռն . և վարսեաց զայլն 'ի գետին . որով և

սպան զնա ։

Օ այս հարկանելս 'ի ձեռն աջոյ՝ Խարտարաբանութիւն իւր առաջի դնէ՝ յասելն . * զաջ իւր 'ի
,, սպառասպուռ ջախջախման՝ անպիտանացուցա
,, նել ։ այսինքն թէ զաջ իւր ձգեաց յայնպիսի քաջագործութիւն , որով խապառ ջախջախեցան ծամելիքն սխալոյ . և այսու գործով անպիտանացոյց զնա , այսինքն յանարգութի դարձոյց , որով և փոխանանեցոյց զնա , և սատակեցոյց առ ոտիւք իւրովք .

որոյ վ(ասն) յաւելու ասել ։

27 . Ի մէջ ոտից նորա անկեալ ծանրացեալ . և նիրհեցոյց 'ի մէջ ծնգաց իւրոց ։ Անկեալ ասելովն ոչ յուցանէ , թէ կանգուն կայր սխալս և անկաւ . այլ թէ 'ի վարսիլն գլխոյ նորա 'ի գետին՝ անկեալ կայր նա , և ծանրացեալ թաւալէր , (այսինքն թաւալգլորէր) ոտիւք և ձեռօք առ ոտամբք յայէլոյ և 'ի մէջ ծնգաց նր(ա) ։ Իսկ ասելովն նիրհեցոյց՝ այս ոչ հայի յայն՝ զոր ասացաք՝ այսինքն թէ ընկողմանեցոյց . այլ յայն՝ թէ սատակեաց զնա . զոր փոխաբերութ(եամբ) նիրհեցուցանելոյ առաջի ածէ , և առ առաւել բացայայտելոյ , և զօրաւոր առնելոյ

զբանն յարէ զկնի , և ասէ ։

Յորում կորացաւ՝ մնաց անփշրանեցաւ . անդ անկաւ չուառացեալն ։ Այսինքն թէ առ ոտիւք կնոջ միոյ զգետնեցաւ . և կորացաւ սխալս . որով և խայտառակեցաւ , այսինքն խայտառակի ըմբիշն 'ի զգետնիլն 'ի տկարէ . վ(ասն)զի չուառական եւս կոչէ զնա . անդ անկաւ ասէ չուառացեալն . այսինքն թէ անդ կորեաւ չուառ

ականն սխալս ։

Յայէլ

Հայել՝ որ թարգմանի ելանող՝ էր օրինակ այն կուսին · զորմէ ասէ փեսայն յերգս երգոց թէ · 5 · * ո՞վ է սա՝ որ ելանէ յնպտ ։ Իսկ սիսարա օրինակէ զսատանայ · զոր ջախջախեաց մեր կոյսն կաթամբ կուսութեն յանապատի ծխս · եւ ոտամբ խոնարհութեն իւրոյ թաւալեցոյց զնա · եւ անպիտանացոյց իսպառ ։

Դարձեալ՝ օրինակ էր յայելոյ եկեղեցւոյ, որպէս եւ դեբորա · իսկ բարակ էր օրինակ սինակողկային ։ Սաթն զոր մատոյց յայելն՝ է տիպ սրբոյն եւ աղօթից, զոր մատոյց ընդդէմ սիսարայ, այս է ընդդէմ սատանայի · եւ ցցովք բեւեռաց խաչին քո խորտակեալ զծանկլիս չար խորհրդոց նր՝ տապալեցոյց զնա ընդ ոտիւք իւրովք, այս է ընդ իշխանու թբ խոնարհամիտ որդւոց իւրոց ։ Զոր տեսեալ մօրն սիսարայ եւ դստերաց նր, այս է դիւաց եւ դիւականաց՝ անկան 'ի տկարութի չուառութե · զորմէ խօսի 'ի յաջորդ համարն՝ 'ի մէջ բերելով զնոյն ինքն զմայրն սիսարայ, եւ ասէ ։

28 · Մայրն սիսարայ հայեցեալ դիտակն առնէր 'ի վանդակապատ պատուհանէն · ձայնէր դիտանէր ընդդարձեալսն 'ի սիսարայ, ընդ էր յամեցան կառք նր 'ի գալոյ · ընդէր յամեցին հետք կառաց նր ։

29 · Աղախնայք իմաստունք իշխանաց նր երեան անդրէն պատասխանի նմա եւ ասեն · եւ ինքնին անձամբ անձին առնէր իւր պատասխանի ։

Զայս դնէ դեբորա՝ առ 'ի ցուցանել զաղէտ թշուառութեն՝ որ պատահեաց 'ի սիսարա եւ 'ի մայրն նր եւ յազգականս նորին · Եւս եւ առ 'ի մեծացուցանել զխիստ արանցն ինչն, 'ի յիշեցն թէ զինչ անցք անցին ընդ սիսարա, եւ ինչ ցաւ ընդ սիրտ մօր նր, որ ակն ունէր դարձի նորին · եւ զայս ադէ-

ղետայլ իւրն նկարել՝ ասելով.

Մայրն սխտորոյ հայեցեալ դէտակն առնէր 'ի վանդակապատ պատուհանէն. բանզի տեսանէր շղարշեալն 'ի սխտորոյ. վասն զի յետինեան հասուհ նր 'ի փողոյ. ընդէր յամեցին հետ կառացն նր։ Զօրաւոր մեկնեցաւ սխտորոյ յադգականաց իւրոց՝ գնալ 'ի մէջ քաղաքոյ՝ մայր նր սպասէր առնուլ լուր քաջի որդւոյն. ուր օրէն է մարց առ հարկ. մեզ դէտակն ունէր առ՝ այնինքն հայէր ուշադրութբ 'ի վանդակապատ պատուհանէ՝ այնինքն 'ի խամբիսլի շահնիշիրէ կամ փենճէրէ, թէ ո՞ գայ. և 'ի հայելն ետես զփախստեայսն 'ի բանակէն սխտորոյ. դիտէր տեսանել և զորդի իւր հանդերձ կառօքն. բայց ոչ զնա ետես և ոչ զկառս նր. զի ինքն մեռեալ էր, և կառք իւր յամեալք լինէին 'ի գալ. մեզ հարցանէր զկանայս իշխանացն. * ընդէր յամեցին հետք կառաց նորա ։

Զայս ասաց և դժոխք մայրն սատանայի. զի 'ի յարձակիլ նր 'ի մէջ քնի՝ սպասէր դժոխք առետարէր դարձի նր. և 'ի յամելն տագնապէր. մինչև լուաւ՝ թէ կործանեցաւ նա. թէպէտ և դեռ սուտ թ. քաջալերէին զնա. զօրմէ խօսի 'ի յաջորդ համարն, 'ի մէջ առեալ զկանայս իշխանացն սխտորոյ, ասելով.

29. Իմաստունք իշխանաց նր Ետուն անդրէն պատասխանի նմա և ասեն։ Ասէ ասել. 'ի տագնապիլ մօրն սխտորոյ՝ թէ զի եղև՝ զի յամեաց սխտորա, իմաստուն կանայք սխտորոյ, ես և կանայք իշխանաց նորա որք ժողովեալ էին առ նա, ըմնի ետուն նմ. այն քաջալերելով զնա՝ խօսէին առ նա, և ասէին.

Ոչ ապաքէն գտցեն աւար բաժանեսցեն.
Այս բան ըստ թարգմանութ մերում և ըստ ասոր"

և

և արար" ցուցանէ ասել կանանց առ մայրն սի-
սարայ . մի ինչ տրտմիր տիկին . քանզի կենդանի է
որդի քո սիսարա . զոր և աչօք ունիս տեսանել ,
և զբանն նր ականջօք լսել . զի նա ինքն խօսեսցի
ընդ քեզ . և ալխնի արասցէ հետաքօտութն քում,
'ի խնդրելդ՝ թէ զի եղև նմա . իսկ թէ յանցելդն
դնի , այդ ցուցանէ զատուգութի ասացելդն :
Ասացի ըն մերում թարգմանութն ևն . քանզի յեբր*
դնի՝ թէ ինքն մայրն սիսարայ ասնէր ինքեան
պխնի , և կին մին յիմաստուն կանանց : Իսկ պա-
տասխանի նր , և կին այն զոր խօսեցան ընդ նմ տիկ-
նայքն , այն է՝ զոր դնէ 'ի յաջորդ համարն ա-
սելով :

30 . Ոչ գտանիցեն զնա աւարաբաժանելով՝ առնել սէր բա-
րեկամաց 'ի գլուխ արանց . և եղեւ շաղէն նր
հանդերձ երանգոյն սիսարայ . հանդերձ երանգոյն գոյնագ-
նկարուց . նարօտ պէսպէս նկարուց . այն էր պարանոցի նր
հանդերձ :

Սոյն և յայտ է՝ 'ի մեռանիլ սպարապետի 'ի մե-
ծի պատերազմի՝ աւարառուքն որոնեն գտանել
զնա 'ի ձեռն նշանաց՝ որ 'ի զգեստու նորա՝ առ 'ի
յաղթանակ կանգնել 'ի վերայ նորա . յայս հայ-
ելով ասէ :

Ոչ գտանիցեն զնա աւարաբաժանելով ևն : Կամի ա-
սել . դու ով մայր սիսարայ տեսանելով զփախս-
տեայն՝ կարծես թէ անկաւ որդի քո . բայց խա-
բիս . զի եթէ անկեալ էր նա , աւարաբաշխք
բարակայ գտանէին զդի նր . և սակայն ոչ գտա-
նիցեն . որովհետև նա չէ մեռեալ . ուստի և ոչ
ունին իսրայէլացիք՝ * առնել սէր բարեկամաց
'ի գլուխ արանց || . այսինքն թէ ոչ ունին առ-
նել խրախութն ընդ բարեկամս 'ի գլուխ արանց*
այս-

այսինքն 'ի պատիւ սիսարայ կամ վ՟ս սիսարայ՝ որ էր գլուխ արանց, այսինքն գլխաւոր և երևելի քան զամ՟ արս ։ Նա սակայն այսպիսի բանիւք ոչ մխիթարիւր մայր Նր ։

Եթէ յեբր՝ և յայլ թարգմանութիս Հայեցուք, այս բան ասի 'ի բերանոյ մօրն սիսարայ . և բառդ ոչ՝ դնի Հարցականապէս . ոչ թէ եղեալ էր . մի 'ի զուր քաջալերէք զիս . ոչ ապաքէն աւարաբաշխք գտանիցեն զնա մեռեալ . որով և արասցեն խրախուճս 'ի մէջ իւրեանց ։ Նա յանէն Նր զայս՝ գեղուլն աղէք Նր . վ՟ս յաւելու ասել ։

Աւար երանգոց Նորա աւար երանգոց սիսարայ . աւար երանգոց գունագունից նկարուց . նկարեալ պէսպէս նկարուց . այն էր պարանոցի Նր աւար ։ Նաաս աւար

Նշանակէ զաւար . և ասա գնի փինկ այնմի զարդու , զոր յաւարէ առացեալ ունէր սիսարա , և նովին զարդարեալ էր զինքն . և ըը այսմ կամի ասել . գեղեցկատեսիլ զարդ զգեստուն սիսարայ՝ գոյնզգոյն երանգօք և նկարուք յօրինեալ՝ ( զոր նա յաւարէ առացեալ ունէր ) գեղմր զաղիս մօր նորա 'ի յիշել նորա զայն , ըը նմին և 'ի յիշել զնարօտ նորա պէսպէս նկարուք հիւսեալ , նոյնպէս և զզարդ պարանոցի նորին . Զայսառիկ գրեթէ առաջի աչաց իւրոց նկարեալ՝ տեսանէր մայրն սիսարայ , և լոյր դառնագին . զի ոչ ևս ակն ունէր տեսանել զնա . Զայս ամենայն եղեալ դեբովրայ , վերջ տայ բանից իւրոց և ասէ ։

31 . Այսպէս կորիցեն ամ՟ թշնամիք քո տր . և որք սիրեն զնա՝ եղիցին որպէս արեգական 'ի զօրութեան Նր ։

Այս բանք ոչ են վրէժխնդրականք , այլ յայտարարականք , 'ի ցուցանել՝ թէ որք թշնամիք են

են այ՝ արժանի են կորստեան : Ըստ այսմ մտաց խօսելով ասէ :

ԱՀ, յողէս հորիցեն զմ բնակեալք են քեր : Բնաւ այսպէս ոչ ցուցանէ զեղանակն՝ այլ զիրն. իբր թէ ասէր. որպէս սիսարա և զօրք նորա ընդէմ դառնալով ժողովրդեան քում՝ կորեան, սոյնպէս և որք թշնամի են քեզ, կամ հակառակ կամ կամաց քոց, կորիցեն յերկրէ. և մատնեսցին 'ի ներքոյ երկրի : Խօսելով ապա և զսիրելեացն այ ասէ.

Եւ որք սիրեսցեն զնա՝ եղիցին իբրեւ զելս արեգական 'ի զօրութե նորա : Այսինքն թէ որք սիրենն զած՝ ոչ կորիցեն. այլ զօրասցին և պայծառասցին իբրև զելս արեգական. որպէս թէ ասէր. զք արեգակն գեղեցիկ և ոսկեփայլ երևի յելսն իւր, և զօրութբ ճառագայթից իւրոց ցրուէ զխաւար երկրի, և փարատէ զտրտմութի սրտի, սոյնպէս և սիրելիքն այ գեղեցիկ երևին յերկրի աստ. և յելանելն աստի՝ զօրագոյն ևս ունին փայլել 'ի կեանսն յաւիտենականս :

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԺԲ.

Կոչնանէ սա ած բերանով տոբիթայ՝ խոստովանել ընծելով ընծընէշխան չարչարանէ նորա և գթութէ. սա նմին և յորդոր աղաչխարանաւն մեղաւորաց: Երջեալ և գովաբանութի տորջի գերութեն Երուսաղեմեայ, և շինութեն երուսաղէմի՝ յօրինակ նորոգութէ աշխի ձարդեան յեկեղեցւոյ ած.

*1. Եւ տոբիթ գրեաց զաղօթս 'ի ցնծութի. և ասէ:*
*( տոբ. ԺԳ. 1 — 23 ):*

Օրհնեալ է ած. որ կենդանի է յաւիտեանս. և արքայութիւն նորա (յամ յաւիտենանս):
2. * Զի նա հարկանէ և ողորմի. իջուցանէ 'ի դժոխս և հանէ. և ոչ ոք է՝ որ փախիցէ 'ի ձեռաց նորա:
3. * Խոստովան եղերուք նմա որդիք իսրայէլի առաջի ազգաց:
4. * Զի նա ցրուեաց զմեզ անդր 'ի նոսա. յայտնեցէք զմեծութի նորա. բարձրացուցէք զնա առաջի ամ կենդանեաց. զի նա ինքն է Տր ած մեր. ած հայր մեր մինչև յաւիտեանս յաւիտենից:
5. * Եւ պատժեսցէ զմեզ յամ յանիրաւութիս. և դարձեալ ողորմեսցի մեզ. և ժողովեսցէ զմեզ յամ ազգաց. յորս և ցրուեցաւ 'ի նոսա:
6. * Եթէ դարձջիք դուք 'ի նա բոլորով սրտիւ ձերով և յամենայն անձնէ, և արասջիք առաջի նորա զճշմարտութի. յայնժամ դարձցի նա առ ձեզ. և ոչ ծածկեսցէ նա զերեսս իւր 'ի ձէնջ:
7. * Եւ տեսանիցէք դուք՝ զոր առնիցէ ընդ ձեզ. և խոստովան եղիջիք դուք նմա ամ բերանովք ձերովք. և օրհնեսջիք զՏր որ արդարն է. և բարձր արասջիք զԹագաւորն յաւիտենից:
8. * Եւ ես 'ի յերկիր գերութեան իմոյ գոհացայց զնմանէ. և ցուցից զզօրութի և զմեծութի նորա ազգաց մեղաւորաց. և արդ դարձարուք մեղաւորք. և արարէք զարդարութի առաջի նորա. զի ով գիտէ՝ հաճեսցի և ողորմեսցի ձեզ:
9. * Ածյլ ես զած իմ օրհնեսցից. և անձն իմ զԹագաւորն երկնից. և ցնծասցի ես 'ի մեծութեան նորա:
10. * Ասասցեն զայս ամենայն ազգք. և խոստովան եղիցին նմա:
11. * Երուսաղէմ 'ի քաղաքդ սրբ. և խրատեսցէ նա զորդիս ձեռագործաց քո. և դարձցի և ողորմեսցի որդւոց արդարոց:
12. * Գոհացիր զՏր զի բարի է բարերարն. և օրհնեսցես զՏր Թագաւորն յաւիտենից. զի դարձեալ շինարանն իւր շինեսցէ 'ի քեզ ուրախութ:
13. * Եւ բերկրեսցին 'ի քեզ՝ որք

[illegible]

14. * [illegible]

(15. * [illegible])

16. * [illegible]

17. * [illegible]

18. * [illegible]

19. * [illegible]

(20. * [illegible])

21. * [illegible]

22. * [illegible]

23. * [illegible]

# Վ Ա Ր Ո Ւ Ք Գ Ի Ր .

Այս պատմութիւն գրեալ ղաղօնս 'ի ցնծութենէ . և այլ ։

Տուբիթ կամ տոբիթ էր 'ի ցեղէն նեփթաղեմի, և բնակէր 'ի բաժնի ցեղին իւրոյ 'ի գալիլեա 'ի քաղաքն Թեզբուէ ։ Սա եղև 'ի գերել նեմեսարայ, այսինքն սաղմանասարայ արքային ասորեստանեայց 'ի հրէաստան, գերի վարեցաւ նա 'ի նինուէ . և գտեալ շնորհս առաջի արքային՝ եղև նմա վաճառական . և գնայր յերկիրն մարաց ։ Սա 'ի միում նուագի 'ի գառնալ իւր անտի՝ եդ 'ի պահեստի առ գաբայէլայ տասն քանքարս արծաթոյ . որ է տասն քսակ ։

Յետ ժամանակաց կուրացեալ աչաց նորա՝ նստաւ

'ի տան

'ի տան իւրում որ 'ի Նինուէ · յորում և աղքա-
տացաւ յոյժ · որոյ վն կամեցաւ առաքել զոր-
դի իւր զտոբիա 'ի մարս՝ առնուլ զարծաթն 'ի
գաբայելայ ։ Իսկ տոբիա եգիտ վարձուոր զռա-
փայէլ հրեշտակն յանծանօթս · և գնացին ընդ
նմա ։ Իսկ 'ի նստիլն նց յեզր տիգրիս գետոյ՝ դի-
մեաց ձուկն մեծ 'ի վր տոբիայ · և հրեշտակն
հրամայեաց նմա՝ ունել զձուկն , և հանել 'ի
փորոյ նր զսիրտն և զլեարդն և զլեղին , և պա-
հել ։ Գնացեալ նց անտի յեկբատանս՝ իջևա-
նեցան 'ի տան հռագուելայ , որ էր հօրեղբայր
տոբիթայ · և էր նր դուստր մի անուն սառա ,
որ առեալ էր եօթն այր · և դև՝ որ ունէր
զաղջիկն՝ խեղդէր զարսն · բայց հրամանաւ
ռափայէլի էառ զնա տոբիա 'ի կնութի · և 'ի ծխ-
ել զսիրտ և զլեարդ ձկանն՝ զորս ունէր առ
իւր , փախեաւ 'ի նմանէ դևն ։ Առեալ ապա
զարծաթն 'ի գաբայելայ՝ դարձան 'ի նինուէ ։
և տոբիա ցանեալ զլեղին յաչս տոբիթայ հօրն
իւրոյ՝ բժշկեաց զնա ։ Յայնժամ յայտնեաց նր
զինքն ռափայէլ · և ասաց օրհնել զած · և եղև
աներևոյթ ։

Օ այս ամ տեսեալ տոբիթայ 'ի խղ ամի դե-
րութե իւրոյ՝ օրհնեաց զած · և 'ի շնորհակալութի
մեծի բարերարութե նր յօրինեաց զօրհնութիս
զայս 'ի ցնծութի , 'ի ցնծութե հոգւոյ իւրոյ , և
յուրախութե եղմի · յորում նախ յորդորէ զա-
մենեսեան օրհնել զած · երկրորդ՝ ազդ առնէ մե-
ղաւորաց՝ դառնալ առ նա · և երրորդ՝ գուշակէ
զշինած զերուսաղեմի , և զնորոգութի եղմի ·
Յասոր և յաջորդ թերթի դասանի այս օրհնութի
'ի քանի մի հատուածս · և առաջին 'ի հատուածն 9 ·
և 10 · խօսէ թէ զիարդ՝ և վասն էր , ու գիտելի ·

Յետոյ" և ՚ի լատ" ամբողջ գտանի ։ Իսկ յեբր" յաւելեալ լինին այլ և այլ բառք և բացատրութիւնք ըստ քաղդէականին մինչ ՚ի վերջն. առեն ինչ ինչ և ՚ի սաղմոսաց. պակասին և առ բնմն 15 համրն. ոմն և 20. այսինքն. * երանելի եղիցին ։ այլ ընդ այն բառք ոչ այլայլեն զմիտս բանին, ոչ ստիպիմք դեգերել ՚ի նոսին ։

## Բ Ա Ն ։

1. Օրհնեալ է տծ. որ կենդանին է յաւիտեանս. և արքայութի նորա յամ յաւիտեանս ։

2. Զի նա հարկանէ և ողորմի. իջուցանէ ՚ի դժոխս և հանէ. և ոչ ոք է՝ որ փախիցէ ՚ի ձեռաց նր ։

## Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն ։

Զ՞ինչ այլ կարէր ասել տոբիթ առ տծ յետ տեսանելոյ ՚ի նմանէ զայսպիսի այցելութի, և զայսքան խնամս, բայց եթէ գերադրանց իմն օրհնութը գոհութի մատուցանել նմա. որ և առնէ իսկ յառաջիկայ բանդ ասելովդ ։

Օրհնեալ է տծ. որ կենդանին է յաւիտեանս. և արքայութի նորա յամ յաւիտեանս ։ Ած կենդանի ասի յինքեան և առ այլս ։ Յինքեան ասի կենդանի, զի է ինքնութի ամենակատար կենդանութե. կմ ինքնագոյ էութի կենաց ։ Առ այլս մտածեալ՝ ասի կենդանի, զի է աղբիւր ամ կենդանութե. տես զայսմանէ ՚ի մեկն. սաղ. լե. 10 ։ Իսկ զի այս կենդանութիւն նորա է անայլայլելի, վսն դնէ յաւիտեանս ։ Այսպէս և արքայութի նր ըստ թագաւորութի նորին յինքեան մտածեալ՝ է մեծվայելչութի փառաց նր. իսկ առ այլս մտածեալ՝ է ինքնազօր իշխանութի նր ՚ի վր այնր ամի՝ որ արտաքոյ իւր է. և այս՝ յամ յաւիտեանս ըստ յամ տևո-

աւտղուեա ։ Նոյն՝ քանզի եգիտ առիթ յոյժ ըղձ-կեանն՝ եթէ զիւր և եթէ զնորոյ իւրոյ , որով և եւս զթագաւորել նմն 'ի վր իւր և 'ի վերայ նմի , վն յորհնելն զնա՝ զերկոսին զայսոսիկ 'ի մէջ բերէ . և ապա հայելով 'ի գործս նախախ-նամութն նր , զորս յայտնի եւս յինքեան՝ ասէ .

2 . Օի նա հարկանէ և ողորմի . իջուցանէ 'ի դժոխս և հանէ . Եւ ով ոք է՝ որ փախիցէ 'ի ձեռաց նորա ։ Օայս դնէ 'ի ցուցանել զքաղցրութն տեսչութեն նր . ոնգ թէ ասէր . ոչ զոք կամի ած մերժել . այլ ամենին խնայէ . զի թէ հարկանիցէ զոք ցաւօք , կամ աղքատութբ , կամ կորստեամբ ընչից , ոչ իս-պառ թողու . այլ ցուցանէ և զողորմութն իւր . և եթէ իջուցանիցէ 'ի դժոխս , յդ եթէ այնպէս հարցէ , մինչև մերձ լինել մարդոյ իջանել 'ի գե-րեզման , խնայէ 'ի նա , և հանէ զնա անտի . և ոչ գտանի ոք՝ որ կարիցէ ասել՝ թէ ոչ կարէ նա հարկանել զիս . կամ թէ ոչ կարէ առնել ընդ-իս զայս ինչ և զայն . զի ոչ ոք է՝ որ կարիցէ փախչել 'ի ձեռաց նր ։

Խորհրդաբար՝ այս բան հայի 'ի հասարակաց հարուածն յայն՝ որով պատժեաց ած զազգ մարդ-կան վն մեղացն ադամայ , և խորհեցաւ իջուցա-նել զնա 'ի դժոխս . բայց ոչ մերժեաց իսպառ . ողորմեցաւ նմ , և փրկեաց զնա , և եհան զնա 'ի պարտաւորութե դժոխոց , կորզեաց նաև զհոգիս արդարոց 'ի դժոխոց ներքնոց ։ Օայս եղեւ առիթայ՝ շարունակէ զօրհնութի գոհութե իւ-րոյ , և ասէ ։

3 . Խոստովան[illegible] եղբարք նմա [illegible] [illegible] աստուծէ [illegible] ։

4 . Օի նա ցրուեաց [illegible] 'ի նա . յայտնեցէք [illegible] [illegible] նր . [illegible] [illegible] աստուծէ [illegible]

Կիւրակէ . ... նախ է մեր Ած մեր . Ած հայր մեր մինչև յամս յաւիտեանս :

Խոստովանն լինիլ, որպ ասացեալ է մեր 'ի սաղ-մոսի՝ Եր որում ասաէն առեալ լինի՝ նշանակէ գոհանալ զնա՝ 'ի մէջ բերելով զբարերարութիւնս նր . որպ առնէ սա և տերին, յորդորելով զոր-դիսն իւր 'ի նոյն յանելն :

Խոստովան եղերուք նմա որդիք Իսրլի առաջի ազգաց :
Օ այս խօսի ուղղակի առ այնոսիկ իսրայելացիս՝ որք 'ի գերիլ տարաբնդեալ՝ էինքեանք և գերեալ էին, և ցրուեալ 'ի մէջ ազգաց . որոց գրեթէ քաջալերս տայ . մի՛ վհատիք ասէ 'ի վերայ գերութե ձերոյ . այլ գոհացարուք զնա առաջի գերչաց ձերոց, և ա-ռաջի այնոցիկ ազգաց, յորս ցրուեցայք . զի լու-եալ նոցա զայսպիսի գոհութի ձեր՝ ցուցցեն ձեզ ըզ-գթութի իւրեանց . և Ած ևս տեսեալ զայս գործ ձեր՝ ողորմեսցի ձեզ : Այս առ զօրացուցանելոյ զքան իւր՝ ասէ :

4 . Օչ նա ցրուեաց զձեզ անդր 'ի նո : Կամի ասել, որ ցրուեայն զձեզ անդր՝ Եր յերկիր օտար 'ի մէջ օտար ազգաց, նա ինքն է Ած մեր . և կարող է որպ ցրուեաց, նոյնպ և պահպանել զձեզ 'ի գե-րութե մերում, և դարձուցանել նաև զգերութի մեր . վզի ոչ է պարտ ձեզ տրտմել, այլ զԱծ փա-ռաւորել . և առ այս յարէ և ասէ :

Յայտնեցէք զմեծութի նր . բարձրացուցէք զնա առաջի ամ կենդանեաց : Մեծութիք իմացեալ լինին ստա մեծամեծ գործք նր . և Եր այսմ կամի ասել . յիշեցէք և յայտնեցէք զայնոսիկ գործս՝ զորս ա-րար Եր մեզ Ած՝ 'ի հարցանամբ մերոց մինչև ցայժմ, և զորս ունի առնել . և զայսոսիկ յայտնելով բարձրացուցէք զնա՝ ոչ միայն առաջի նոցա՝ յորս կայք պանդխտացեալ, այլև առաջի ամ կենդա-նեաց .

նեաց , քն առաջի այն մարդկան . որ որում այս ազգաց միտս 'ի գործ ածել 'ի նոր գիրս ։ Եւ զի ցուցցէ՝ թէ արժանն է նց զայս առնել յորժ զկնի ։

Զի է նա տէր է մեր ած մեր . ած հայր մեր մինչև յամ յաւիտեանս ։ Շաղկապէ զէ յարէ զայս բան ոչ միայն 'ի բարձրացուցանելն , այլ և 'ի ցրուելն . որպ թէ ասէր . ած՝ որ ցրուեաց զմեզ՝ ոչ եթող զմեզ . զի է որ մեր . և մեզ պատրաստ է օրհնել զնա և բարձրացուցանել . զի նա է ած հայր մեր . և այս՝ ոչ եթէ փոքր մի ժամանակ , այլ յամ յաւիտեանս . քն յայն ած գալոց՝ յորս տեսանէ զմեզ լինել իւր ժողովուրդ ։

Յայս բան կարեն պարծիլ եբրայեցիք՝ եթէ մնացեալ էին ժողովուրդ այ . զորմէ գրէ 'ի համարն 6 ։ Եւ յայց քզի մերժեցին նքա զայս երջանիկ վիճակ , 'ի հեթանոսս դարձոյց ած զնոյն ։ Կամեցաւ ապա տոբիթայ հաստատել զբան իւր՝ յարէ զկնի և ասէ ։

5 . Եւ տանջեսցէ զմեզ յամ յանիրաւութիւնս և դարձեալ ողորմեսցէ մեզ . և ժողովեսցէ զմեզ յամ ազգաց , յորս և ցրուեցայք 'ի նա ։

6 . Եթէ դարձջիք դուք 'ի նա բոլոր սրտիւ ձերով և յամ անձինս , և արասջիք դուք առաջի նր ճշմարտութիւն , յայնժամ դարձցի նա առ ձեզ . և ոչ ծածկեսցէ նա զերեսս իւր 'ի ձէնջ ։

Զոր 'ի հասարակի եդ 'ի համարն շ , թէ * նա հարկանէ և ողորմի նր ║ , զնոյն մանաւանդ և առ իւրսն . և քաջալերս տալով սրտից նոցա մխիթարելով ասէ ։

Եւ տանջեսցէ զմեզ յամ յանիրաւութիւնս . և դարձեալ ողորմեսցէ մեզ . և ժողովեսցէ զմեզ յամ ազգաց , յորս և ցրուեցայք 'ի նա ։ Եւ յոլովք 'ի սանձել զմեզ այ , և 'ի մտանել

Նր զմեզ ՚ի վիշտս յայս վն անխրատութեց մերոյ՝ ոչ մոռացի զմեզ, այլ յիշեաց՝ յիշելով զուխտ իւր. եւ վն ուխտին իւրոյ ողորմեացի մեզ. եւ ըզ ցրուեալքս յայլ եւ այլ ազգս հեթանոսաց ժո ղովեաց ՚ի տեղին յայն՝ յորմէ ցրուեաց. այն է երկիրն աւետեաց: ՚Ի միջի եղեւ եւ զգեստն՝ ասէ.

6. [illegible]

Ատամն ասել. աւասիկ զայսպիսի աւե տիս մատուցի ձեզ. եւ ճշմարիտ է՝ զոր ասացի. բայց յաւելում ասել եւ զայս, թէ եթէ ոչ մնաս ջիք ՚ի խստութե սրտից ձերոց, այլ կակղացուցեն զսիրտս ձեր՝ դարձջիք առ ած իմ ոչ ուով, եւ գոր ծեսջիք առաջի Նր եւ ոչ սոսկ առաջի մարդկան զճշմարտութի, այսինքն զայնպիսի գործս՝ որ իցէ հաճոյական կամացն նր, յայնժամ եւ նա ինքն ած դարձցի առ ձեզ, այսինքն այց արասցէ ձեզ, եւ ցուցցէ զհայրագութ խնամս իւր առ ձեզ. եւ մի ծածկեսցէ եւ մի դարձուսցէ զերեսս իւր ՚ի ձէնջ: Ու այսմ հետեւեցուցանէ եւ ասէ.

7. [illegible]

Յերիս եցոյց ած զխնամս իւր առ որդիսն իւր ՚ի գերութե նոցին. առաջինն է՝ զի ոչ պակասեցոյց զմարգարէս՝ առ ՚ի մխիթարել զանձինս նոցա. երկրորդն է՝ զի շարժեաց զսիրտս թագաւորաց եւ դերլշաց՝ խնայել ՚ի նս եւ արձակել ՚ի գերութե. երրորդն է՝ զի ժամանեցուցեալ զնս յերկիր նց՝ յաջողեաց նց շինել զտաճարն: Օ այսոսիկ առաջի

առ

առնելով տօբիթայ՝ քաղցրերգէ զնա , և յօրհնութե
ոչ խափանումն առնելով ։

Ու տեսանիցէք դուք զոր առնիցէ ընդ ձեզ . և խոստովան եղիջիք դուք նմա բերանովք ձերովք . և օրհնեսջիք զՏր՝ որ արդարն է . և բարձր արասջիք ։ Այսինքն առել յուղղել ձեր զսիրտս ձեր առ Ած , այսօք ձեռովք տեսջիք զխնամսն նր՝ զորս ցուցանելոց է նա ձեզ . և յայնժամ ունիք լիաբերան գոհանալ զնմանէ . և զայս այժմէն զխնելով ձեր՝ օրհնեցէք զնա , խոստովան լինելով՝ թէ արդար է նա , և թէ արդարութբ անցայց ընդ ձեզ զոմն . և յայսմ ամի՝ գործոցի՝ բարձր արարէք զԹգրն յաւիտենից զԱծ ։ Այս եղեւ տօբիթայ՝ զամենն առաջի ընծայէ
իբր առարցյց , և այլն ։

8 . Ես յերկրի գերութեան իմում գոհացայց զնմանէ . և
ցուցից զզօրութիւն և զմեծութիւն նր ազգաց մեղաւո-
րաց ։ Դարձարուք մեղաւորք . և արարէք զարդա-
րութիւն առաջի նր . զի ո՞վ գիտէ հաճեսցի և ողորմեսցի ձեզ ։
9 . Զած իմ օրհնեցից . և անձն իմ զթագաւորն
երկնից . և ցնծացայց ես 'ի մեծութեան նր ։
10 . Ասասցեն զայս ամ ազգք . և խոստովան եղիցին նմա

Մեծութիւն պարկեշտութեն տօբիթայ յայտնի երևի յայդոսիկ բանսդ ընդ երից . մի՝ ընդ ընդարձակութե սրտի նր . որով հանգ այն երանելւոյն յոբայ զվիշտ իւր առիթ ածանէ գոհանալոյ զԱյ . երկրդ՝ ընդ առաւելութե զեղման հոգւոյն նր՝ ի ցնծալից օրհնութիւն Այ . երրդ՝ ընդ յօժարամտութե փափագմանց իւրոց 'ի յորդորել զմեզ զամ որս յաշխարհի կենաց ։ Ես զայսոսիկ յետ առաջոյ ընդ 'ի մէջ բերեալ տօբիթայ՝ խոստանալ ընդ առաջնոյն , և այլն ։

Ես եւ յերկրի գերութեան իմում գոհացայց զնմանէ . և ցու-

ցոյց զզօրութիւն և զփրկութիւն նր ազգաց մեղաւորաց ։ Կամի ասել․ զորոց խօսեցայ 'ի սկզբան, և զոր ունիմ խօսել 'ի վերջոյ՝ ես ոչ անսամանեմ․ իսկ զոր տեսանեմս այս է, զի կամ 'ի գերութեան ․ բայց և յայսմ գերութեան տեսանեմ 'ի վերայ իմ զբազում բարերարութիւնս այ՝ գոհանամ զնմանէ և գոհացայց ․ և ոչ այսչափ միայն, այլ և արձանագրութիւն բանից ցուցից ազգաց մեղաւորաց՝ որ Հեթանոսաց, թէ քանի՜ սքանչելի է զօրութիւն նր, և անհասանելի մեծութիւն նորին ։ Խօսի և զՏր երկրորդին՝ ասելով ։

Դարձ արդ դարձարուք մեղաւորք ․ և արարէք զարդարութիւն առաջի նր ․ ով գիտէ , կամեսցի և ողորմեսցի ձեզ ։

Մեղաւորք իմացեալ լինին աստ ազգքն նք՝ որք ասելիք են այ, եթէ՝ հեթանոսք իցեն և եթէ հրեայք ։ Զսոսա տեսեալ տոբիթայ հեռացեալս յարարչէ իւրեանց, և անկեալս յերեսաց նորա՝ տրտմի և մորմոքի 'ի վն նց, և գորովեալ իմն սրտի յորդորէ զնս ․ և արդ ասէ դարձարուք, եթէ ։ Խօսի արդ ասելով՝ յայտ առնէ զխափանս սրտի իւրոյ որ վն դարձի նց ․ ով թէ եղեւ էր ․ ով մեղաւորք որովհետև զայնպիսի տր ունիք, որոյ անչափ է զօրութի, և անբաւ մեծութի, ընդէր 'ի բաց հացեալ էք 'ի նմանէ ․ դարձարուք առ նա ․ և 'ի բացթողեալ զգործս անօրէնութե՝ արարէք զարդարութի առաջի նր ։

Իսկ զոր յարէ զկնի ․ ով գիտէ՝ կամեսցի և ողորմեսցի ձեզ ․ այս բան ոչ զնի իբր երկբայական, այլ իբր հաստատողական ․ որպէս թէ ասէր ․ 'ի դառնալ ձեր առ այ, անտարակոյս դարձցի և նա առ ձեզ, և ողորմեսցի ձեզ ։ Խօսելով և զՏր երկրորդին՝ ասէ ։

9 · Ահա ես յերկրի գերութեան իմոյ օրհնեցից, և ասասցից զզօրութիւն և զմեծութիւն նր ․ 'Ի նախսկզբնութեան հա-

հայելով 'ի բարերարութիւն այյ՝ գոհացաւ զայյ ·
Իսկ աստ զբանն իւր յօրհնութիւն դարձուցանէ հայե-
լով 'ի փառս ածութեան և թագաւորութեան և մեծութեան
նր · և յերկսին ևս յայլև այլ տարազ ոճոյ փո-
փոխելով խօսի ըստ առատութեան լցելոյ սրտի իւրոյ ·
ըստ որոյ ասէ · * այլ ևս զած իմ օրհնեցից ։ · որպ
թէ ասէր · 'ի դառնալ մեղաւորաց առ ած՝ ես
որ ծառայ նր եմ, օրհնեցից զնա · օրհնեսցէ և
անձն իմ, և հոգի իմ · զի նա է թագաւոր երկ-
նից · և ես յօրհնել զնա 'ի մեծութե նր՝ լցայց
ցնծութբ փառաց նր ։ Ապա 'ի նոյն յորդորելով
և զազգս ամ՝ ասէ ։

10 · Աղաղակեսցեն զայս ամ ազգք, և խոստովան եղիցին նմա ։

Այսինքն թէ զայս օրհնութիւն, որով օրհնեցի և
օրհնեմ զած՝ աղաղակեսցեն ոչ միայն երբայեցիք ,
այլև ամ ազգ · և ամ հեթանոսք խոստովան ե-
ղիցին նմա, որպ և խոստովան եղեն երբայեցիք վս
մեծամեծ բարերարութեց նր՝ զորս արար և զորս
հանդերձեալ է ցուցանել յետոյ՛ քրիստոսիւ · յաղագս
որոյ յարէ զկնի և ասէ ։

11 · Յերուսաղէմ 'ի քաղաքն սբ · և հարկանիցէ զոր-
դիս ժողովրդեան քո · և դարձցէ և ողորմեսցի
որդւոցն արդարոց ։

12 · Գոհացիր զտր բարեբարէ · և օրհնեսցես
զթագաւորն յաւիտենից · զի դրձլ խո-
րանն իւր շինեսցի 'ի քեզ ուրախութբ ։

13 · Նա բերկրեսցէ 'ի քեզ՝ որք գերեալքն են · և սի-
րեսցէ զքեզ՝ որք տառապեալքն են յամ ազգս
յաւիտենից ։

Աստի և անդր զոր ինչ խօսի տօբիթ, ամն գու-
շակութիւնք են դարձի գերութեն իւրեանց և նորոգութեն
եղմի , մանաւանդ որ եկեղեցւոյ , զոր 'ի մէջ
բե-

բերել բաւական եղիմ , յաւէտն ։

11 · Յեղն 'ի ծաղկին մր , և խորտակեցէ նա զորդիս ժո-ղովրդեան քո · և դարձցէ և ողորմեսցէ որդւոյն արդարոյ ։

Ի խոնարհութեան զայս՝ դեռ ոչ էր դեռեւս բա-զաքն եղմ , յորում կայր թագաւորութիւն յուդայ․ և չէր այրեալ տաճարն՝ որ 'ի նմ․ ուստի ոչ յայն հայի՝ որ էր , այլ յայն՝ որ լինելոց էր · ըստ որոյ յապառնին դնէ զբանն ասելով · մի ազգդ իմ՝ որ բնակեալդ ես յեղմ 'ի քաղաքիդ դր , գիտասջիր , զի բարկացեալ է ած 'ի վր քաղաքիդ · որոյ մ խրատելոց է , զի պատուհասելոց է զորդիս ժո-ղովրդեան քո , մատնելով զնս 'ի գերութի · սա կայն տամ և զայս աւետիս , զի 'ի գոչել առ նս որդւոց քոց , որք են որդիք արդարոցն աբրահա-մու , իսահակայ և յակոբայ՝ դարձցի ած , և ո-ղորմեսցի նոցա ։

Այլ գիտելի է , զի թէպէտ թէ աստ մոռացեալ է մար-պակ զիրադրաց 'ի բաւդ քաղաք․ զի յերբ"և յայլ բաւդ յեղն կրկնի կոչականամ · յորոյ և բաւդ քաղաք կոչականաբար էր դնելի · ուստի և յա-ւելորդս եդեալ է նախդիրս 'ի , ըստ նմին և գիրս ն , ևս և շաղկապդ և · զի պարտ էր դնել այսպ․ մի եղմ քաղաք դր , գիտասջիր՝ զի խրատելոց է ած զորդիս ժողովրդեան քո · Եւ ։ Յակ թէ յետ այնր զի՞նչ մնայր առնել ազգին իմ՝ խօսի 'ի յա-ջորդ համարն՝ ասելով ։

Դրոշմեսցես զօր զոհն բարերարք և օրհնեսցես զնա · Եւ ։

Այսինքն թէ յողորմիլ այ 'ի վր քո մի՛ լինել , և 'ի դարձուցանել նր զքեզ 'ի գերութենէ , տեսեալ զբարերարութիւնս նր մեծ՝ գոհասցիս զնմանէ իբրև զբարերարէ բումմէ · և ևս երկրպագանես որպէս օրհ-նեսցես զնա · զի նա որ թագն է յաւիտենից , հաճեցաւ թագաւորել 'ի վր քո ։ Ի մէջ բերեալ տողա

և

և զգործ բարերարութեն այ իբրև զնշան թգւրե-
լոյ նր 'ի վր նղ ասէ ․

ՕԷ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ ՆՇԱՆ ԷԱՐ ՆՄԱՆԵԱՑԷ 'Ի ՔԵՂ ՈՒՐԱԽՈՒԹԷ ։
Սիոնեքն թէ 'ի դարձուցանել այ զգերութի քո
ո՛վ երղմ՝ նա ինքն վերստին կանգնեաց զտաճար
իւր 'ի միջի քում, և 'ի նմին զխորան իւր ․ և զայն
հաճոյս կամացն իւրոյ ։ Եւ այսմ հետևեցու-
ցանէ ասելով ։

Եւ ԲԵՐԿՐԵՑԷՆ 'Ի ՔԵՂ ՈՐՔ ԳԵՐԵԱԼՔՆ ԷՆ․ ԽՈՍՏԵՑԵՆ ՊՇԵՂ՝
ՈՐՔ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼՔՆ ԷՆ ՅԱՄ ԱՄԵՆ ՅԱՒԻՏԵՆԻՑ ։ Սիոնեքն
թէ որդիքն քո ով երմ, որք գերի վարեցան, ան-
սեղ զզարդ իւրեանց՝ բերկրեսցին 'ի քեզ ․ և որք
ցրուեալք են յայլևայլ ազգս , և թշուառա-
ցեալք են 'ի նոսին իբրև մերժեալք յայ յաւի-
տեան՝ 'ի դառնալ իւրեանց առ քեզ՝ յարեսցին
'ի քեզ սիրով ։

Այլաբանօրէն, այս բանք հային 'ի սբ եկեղեցի
ընդհանրական առեալ՝ եթէ 'ի հին , և եթէ
'ի նորումս մտածելով ։ Ի հինն մտածել մեկնին
հոգևորական ըստ այնմ՝ զոր եդաք ․ իսկ 'ի նորս
մտածել՝ վերածին յառաջին վիճակ նորին ․ յո-
րում բազմօք խորտակեաց թր զորդիս նր մինչև 'ի
ժմկս կոստանդիանոսի մեծի ․ և ապա ցուցեալ
զմեծամեծս՝ անդորրացոյց զնա ․ և որդիքն նր դա-
հացան զնմանէ ․ զի տեսին զշինուծ եկեղեցեաց
և խորանաց յայտնի ըամ տեղիս ․ և ժողովե-
ցան առ նա գերեալքն 'ի սատանայէ ազգք բա-
զումք, որք չուշառացեալ կային յայլևայլ տե-
ղիս ․ և միացան ընդ նա սիրով ․ զորոց և արտաքին
խօսի՝ ասելով ։

14 · ՈՂՋ ԲԱՐՁՐԱՄԲ 'Ի ՀԵՌԱՍՏԱՆԷ ԵԿԵՍՑԵՆ ՅԱՆՈՒՆ ՏՆ
ԱՅ ․ ԲԱՐՁԵԱԼ ԲԵՐԵՑԵՆ ՉՊԱՏԱՐԱԳՍ ԻՒՐԵԱՆՑ
ՆԵՑԵԱՍ ԻՒՐԵԱՆՑ , ՃԱՌԱԳԱՅԹԵԼ ՂԱՅՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՐԿՆԱ-
ՅՆ-

ազգին, և տացեն ձեզ շնորհաւորութիւն ազգէ մինչև յազգ։

(15). Մանկունք զոհեալ մեծ հռչակեցին 'ի ձեզ։

16. Ս անձնեալ լիցին ամ ատեսէք. և եկեսցեն օրհնութիւնք 'ի վերայ սիրելեաց ձեր։

*Օ յայսմիկ խօսի տորբին ընդ նախագրելոցդ՝ հայելով յեկեղեցի նորա. բայց ոչ ըստ այսմ վիճակի յորում երևեցուցանէր զհնութիւն իւր. այլ ըստ այսմ վիճակի՝ յորում երևեցուցանէր զնորոգիլն. զոր ինքն աչօք տեսանելով՝ աւետաւորէ, և ասէ.*

Ազգք բազումք 'ի հեռաստանէ եկեսցեն յանուն տն այ. բարձեալ բերիցեն պատարագս իւրեանց 'ի ձեռս իւրեանց, մատուցանել զայն թագաւորին երկնաւորին. և տացեն քեզ շնորհաւորութիւն ազգէ մինչև յազգ։ *Սյսոքիւք ազգօք իմացեալ լինին հեթանոսք. ըստ որում ցուցանեն բառքս 'ի հեռաստանէ, և բազումք. զի ոչ դարձեալ այլ և այլ ազինք՝ մանաւանդ թէ ամ ազգ մարդկան 'ի հեռաստանէ, քի 'ի հնդկաց, յարաբացւոց, 'ի պարսից, 'ի հայոց, 'ի յունաց, 'ի հռոմայեցւոց, 'ի սպանիացւոց, և յափրիկեցւոց, ևն, եկին և մտին յեկեղեցի որ քաղաքն է աւետարանին քի յանուն տն այ ամենակալի. և իւրաքանչիւր բարձեալ բերին զպատարագս պէսպէս առաքինութեց. և այն՝ 'ի ձեռս իւրեանց, քի թէ ոչ սոսկ անուամբ, այլ ձեռօք՝ որ է ասել արդեամբք. զոր ցուցանէ ձեռնն։ Իսկ զայսոսիկ պատարագս ասէ բերին մատուցանել քի թագաւորին երկնաւորի. որով և տուեալ եկեղեցւոյ զուրախութիւն մեծ, քի թէ ուրախ արարին զեկեղեցի որ ազգէ յազգ։ Իսկ այսմ ինքն պատճառ 'ի վր բերի 'ի տպագրեալ օրինակի, առեալ 'ի լատին թարգմանութենէ՝ յետագայդ բանն, որ ոչ գոյ 'ի ձեռագիրս մեր. այլ և ոչ յեօթ".*

15.

(15) · Անուանք մեծ կոչեսցեն 'ի քեզ · կմ · * կի
անուն մեծ կարդասցեն 'ի քեզ ։ Այսու ան-
ուամբ նշանակի անուանակոչութիւն եկեղեցւոյ
կենդանւոյ, կամ անուանակոչութիւն քրիստոնէից, կամ
որ նոյն է՝ քրիստոնեայ ։ Զայս մեծ անուն ասէ
կոչեսցեն 'ի քեզ · այն է թէ զայս անուն՝ որ մեծն
է՝ տացեն քեզ · և այսու անուամբ անուանես-
ցեն զքեզ · և 'ի սոյն անուն ժողովեսցին առ քեզ ։
Այլ զի յայսպիսի պատիւ ամբարձեալ եսես
զեկեղեցի՝ հեռանեցուցանէ և ասէ ։

16 · Այլ անիծեալ լիցին ամ ատեցեալք քո · և եղիցին
օրհնեալք 'ի վերայ սիրելեաց քոց ։ Սոյլին յայտնի ցու-
ցանէ տարբեր զգերազոյն վիճակ եկեղեցւոյ այն-
չափ՝ մինչև անիծեալ համարիլ այնմ՝ որ ընդ-
դէմ դառնայցէ նմա բանիւք կամ գործովք · և
օրհնիլ յերկնից 'ի վերուստ այնմ, որ սիրիցէ
զնա, և ցուցանիցէ նմա զհպատակութիւն ։ Այլ
առ հաստատութիւն այսր կրկնէ զսոյն 'ի համարն
17 · և նախ յուրախակցութիւն մատուցեալ եկե-
ղեցւոյ՝ ասէ ։

17 · Ցնծա՛ և ուրախ լեր դու 'ի վերայ որդւոց արդա-
րոց · և ժողովեսցին նոքա 'ի միասին · և օրհնես-
ցեն զՏր արդարոցն 'ի միասին ։

18 · Երանեալք էին՝ որք սիրեցին զքեզ · և ցնծաս-
ցին նոքա 'ի խաղաղութեան քում · և երանի էցէ
այնոցիկ՝ որք տրտմեցան 'ի վերայ հեծման քո · զի անդրէն
'ի քեզ խնդասցեն · 'ի տեսանել նոցա զփառսն քո · և ու-
րախ լիցին մինչև յաւիտեան ։

19 · Անձն իմ օրհնեսցէ զՏր զԹգւորն մեծ ։ (20 · Երա-
նելի եղէց, եթէ եղիցին մնացորդք զաւակի ի-
մոյ առ 'ի տեսանել զԵրուսաղէմ պայծառացեալ ։)

Որպ ասացաք 'ի վերոյ, զայսուհետև խօսի տարբեր
հայե-

հայելով յեկեղեցի իւր · բայց ոչ նիւթապէս զի հին վիճակին նր ՚ի դառնալ անդ յերուսաղէմ, այլ զի նոր վիճակի՝ ՚ի ժողովիլ նորա յեկեղեցի նոր · և զի մեծ իմն էր այս, վ՚ոյ մեծապէս իմն գալոց լեալ՝ գուշակէ առ նա ։

Ցնծա՛ և ուրախ լեր դու ՚ի վերայ որդւոցն արդարոց · և ժողովեսցին նոքա ՚ի միասին · և օրհնեսցեն զՏէր արդարութեանց ՚ի միասին ։ Այսինքն թէ ցնծա՛ մի՛ եղմ, և ուրախացիր ՚ի վր այնոցիկ՝ որք լինելոց են՝ որդիք նորոգութե՛ քո՝ արդարացեալք գալստեամբ որդւոյն այ · քզի եկեսցէ ժմկ, զի ժողովեսցին նք ՚ի միասին ՚ի քեզ՝ ոչ զի այդմ վիճակի յորում ես, այլ զի նորոյ վիճակի · և օրհնեսցեն ՚ի միասին զորդին այ՝ որ հանդերձեալ է արդարացուցանել զնս առաջի հօր իւրոյ · և արդարութ՝ հատուցանել մ՚ն նց ։ Այս այսմ հետևեցուցանէ ։

18 · Երանեալք եղեն՝ որք սիրեսցեն զքեզ և ցնծասցեն նոքա ՚ի խաղաղութե քում ։ Այսինքն թէ նք՝ որք սիրով յարին ՚ի քեզ, ՚ի նորոգիլ քո մի իէ՝ լիցին երանելի · զի լինիցին մասնակից բարեաց քոց · և ցնծասցեն ՚ի քեզ՝ վայելելով զխաղաղութի քո ։

Այս յաւելու ասել ։

Ահա երանի իցէ այնոցիկ, որք տրտմեցանն ՚ի վր բեկման քո · զի տեսցեն ՚ի քեզ բերկրեսցեն, ՚ի տեսանել նոցա զփառս քո · և ուրախ լիցին յաւիտեանս ։ Այս բան ուղղակի հայի ՚ի հինն իէլ իւր յօրինակ նորոյս · զի որոյ երանէ զայնոսիկ՝ որք ՚ի գերելն իէլացւոց ցաւակից եղեն նց · զի վ՚ն այսր հանդերձեալ են ասէ բերկրել ՚ի տեսանել նց զքեզ փառաւորեալ ՚ի դարձին քում · և ուրախ լինել մինչև ցյաւիտեանս ։ Իսկ յաւելլով զյաւիտեանն՝ ցուցանէ՝ թէ ոչ միայն ուրախանալոց են նք ՚ի վր իէլի, սոյնպէս ուրախանալոց են և որդիք նց՝ որդւոց

յորդիս 'ի վր̃ նր̃ 'ի տեսանել նց̃ զնորոգումն նր̃, որով նորոգելոց էր զնա որդին իւր ։ Զայս ե-դեալ յօրհնութի շնորհակալութե մասին և ասէ ։

19․ Անձն իմ օրհնեսցէ զԱծ զԹագաւորն մեծ ։ Կամի ասել․ որովհետև զայս ամ̃ առնելոց է ամենա-մեծ Թագաւորն Ած, այժմէն իսկ օրհնեսցէ զնա անձն իմ ։ 'Ի մէջ բերէ ապա զփափաք սրտի իւ-րոյ, և ասէ ըստ լատին Թարգմանութե, որ չգտա-նի յեբր''․ ոչ և ոչ յեօթ'', և ոչ 'ի ձեռագիրս մեր, այլ յաւելեալ է 'ի տպագրեալ օրինակս-ն այսպէս ։

(20․ Երանելի եղէց, եթէ եղիցին մնացորդք զաւակի ի-մոյ, առ 'ի տեսանել զԵրուսաղէմ պայծառացեալ․ կամ զպայծառութի նէմ) ։ Նմայն մարգարէ երանի տայ այնմ որ ունիցի զաւակ 'ի Սիոն, և ընտանեակք իւրն նր̃ յԵղմ․ (Եսայ․ ԼԱ․ 9․) Իսկ սա յա-ռաւելութե փափաքմանայն քաւակեան համարի առ այս երանութի՝ միայն զտեսութի նորին․ և այն՝ ոչ եթէ ինքնին, այլ մնացորդովք որդւոց իւ-րոց․ գիտեմ ասէ՝ զի հանդերձեալ է պայծա-ռանալ Եղմ, զի եկեղեցի նր․ այլ ես ոչ հասա-նեմ տեսութե նր․ և սակայն եթէ ոմանք 'ի ծը-նընդոց իմոց արժանի լիցին տեսանելոյ զայն, այն և ես երանութի համարեալ լինի ինձ ։

Այս փափաք մր̃ իւր գուշակողական փող հնչէ 'ի ցուցանել՝ թէ սքանչելի յօրինուածով շինե-լոց է եկեղեցի․ իսկ թէ զիարդ, գրէ 'ի յաջորդ-բանիդ ասելով ։

21․ Զի շինեսցի Երուսաղէմ 'ի քարանց պատուակա-նաց, 'ի շափիւղայ և 'ի զմրուխտէ, և այլ ևս պատուականաւ քարամբք․ պարիսպք քո և աշտարակք և մարտ-կոցք քո յոսկւոյ սրբոյ ։

22. Եւ ամ հրապարակքն երուսաղէմի բիւրեղ եւ տա-
հանաւ եւ սարդիոնիւ ակամբք յատակեսցին։

Զոր օրինակ յովհաննէս աւետարանիչ ոչ կարելով յայտնել զգեղեցկութի եւ զազնուութի շինուածոց վերինն եդեմի, զայլ եւ այլ նմանաբանութիւնս առաջի առնէ, սոյնպէս եւ երանելիս այս ոչ կարելով բացատրել զպատուականութի շինուէ սուրբն եդմի՝ քս սէր եկեղեցւոյ՝ զայլապիսի նմանութիւնս ՚ի մէջ բերէ. եւ նախ ասէ։

Զի շինեսցէ երուսաղէմ ՚ի քարանց պատուականաց ՚ի շափիղայ, եւ ՚ի զմրուխտէ, եւ այլ եւս պատուական քարամբք։

Երկոքին սոյսոքիկ ակունք՝ շափիւղա եւ սուտակն՝ առաջի նկարեն զերկուս կատարելութիւնս նոր եկեղեցւոյ. քս զանարատութի ճշմարտութե հաւատոյ, եւ զսրբութի զգաստութե վարուց. զի շափիւղայն՝ որ է երկնագոյն ակն պատուական՝ առ նախնեօք կոչեցաւ գոհար գոհարաց՝ հայի ՚ի ճշմարտութի հաւատոյ. զի որում նմանն ճանաչեմք զերկնայինս։ Իսկ սուտակն՝ որ է հրագոյն ակն պատուական՝ եւ տածիչ զգաստութե, հայի ՚ի սրբութի զգաստութե վարուց։ Ակամբք եւ այլ եւս պատուական քարամբք ասէ, զի պէսպէս սքանչելի առաքինութիք՝ շինեսցի եկեղեցի։

Նաեւ յաւելու եւս ասել։

Պարիսպք քո եւ աշտարակք եւ մարտկոցք քո յոսկւոյ սրբոյ։

Պարսպօք եւ աշտարակօք եւ մարտկոցօք նշանակէին պարսպեալ եւ պահպանեալ եւ պաշտպանեալ գոլն եկեղեցւոյ, գրովք, քարոզութբք, եւ իշխանութբք։ Գրովք՝ իբր պարսպօք. քարոզութեամբք՝ իբր աշտարակօք. իշխանութբք՝ իբր մարտկոցօք՝

Իսկ իշխանութբք իմանամք ոչ միայն զայն՝ որով կարէ

կարէ եկեղեցի կալել և արժանել, և զխոր_
հուրդս կատարել, այլ և զձեռնտուութի օգնութ
աշխարհական իշխանաց՝ առ ՚ի վանել զհակա_
ռակորդս: որպ եղև ՚ի սկզբանն հետէ. ը̃ որում
նաև աշխարհական իշխանք ձեռնտու եղեն և
պաշտպան ՚ի հաստատել և ՚ի տարածել զվար_
դապետութի եկեղեցւոյ:

Արդ այս ա̃մ առէ [illegible] է. այ ՚ի սիրոյ,
և ՚ի ձեռն սիրոյ, և սիրով: ՚Ի սիրոյ յաջողեալ.
՚ի ձեռն սիրոյ կարգեալ. և սիրով օծեալ. յո_
րոյ օրինակ՝ որ ինչ կայր ՚ի ներքս ՚ի տաճարին
սողոմոնի օծեալ էր յուղւոյ. ը̃ որում ասկին
է տարացոյց ճշմարիտ և հաստատուն և գեղե_
ցիկ սիրոյ՝ իւրով անապականութ. և անժամկա_
նութ, և գունաւորութ: Հայեցեալ առա և
՚ի խորհուրդս եկեղեցւոյ՝ առէ:

22. [illegible]: Հրապարակք ա_
ռին այնորիկ տեղիք քաղաքին, յորս կատարին
առևտուրք քաղաքացեացն. և ըստ այսմ խոր_
հուրդք եկեղեցւոյ օրինակին ՚ի հրապարակս.
զի ՚ի նոսին կատարին հոգևորական առևտուրք
եկեղեցւոյ: Արդ այսոքիկ խորհուրդք՝ որք են
եօթն. այ մկրտութի, դրոշմ, հաղորդութի, ապաշ_
խարութի, կարգ, պսակ, և վերջին օծումն. բա_
ժանին նախ յայնս՝ որք ասին խորհուրդ կենդա_
նեաց. որպէս են դրոշմ, հաղորդութի, կարգ,
պսակ, և վերջին օծումն. զի սոքա տուեալ լինին
այնոցիկ՝ որք կենդանացեալ են ՚ի մեռելութէ
մեղաց: Երկրորդ՝ բաժանին յայնս՝ որք ասին
խորհուրդք մեռելոց. որպէս են մկրտութի և ա_
պաշխարութի. զի սոքա մատակարարին այնոցիկ՝
որք համարին հոգւով մեռեալ: ը̃ որում որք

չեն մկրտեալ՝ 'ի մեռելոց սակի են ըստ հոգւոյ , և որք 'ի մեղս գոլով՝ ոչ ապաշխարեն , 'ի նոյն համար դասին :

Ա.ՅԼ գիտելի է և , զի խորհուրդք կենդանեաց յերկուս տրոհին . մի՝ յայնս՝ որք են վ(ասն) ամ(ենեցուն) . որպէս են դրոշմն , հաղորդութին , և վերջին օծումն . երկրորդ յայնս՝ որք ոչ են վ(ասն) ամենեցուն , այլ կամեցողաց . որպէս են կարգն և պսակն : 'Ի սոսին ակնարկեն առաջիկայ նմանութիւնք :

Բիւրեղն՝ որ է սպիտակափայլ ակն , այն է պիւլոռ , կամ ըստ այլ տեսակի իւրում ոսկեգոյն , հայի յայն խորհուրդս՝ որք կենդանացուցանեն զմեռեալ հոգին , կամ նմանութ(եամ)բ խօսելով՝ սպիտակացուցանեն , և ոսկիացուցանեն : Պահանակն՝ որ է կանաչագոյն ակն՝ հայի յայն խորհուրդս՝ որք տուեալ լինին կանաչացելոց հոգւով : Սարդիոնն՝ որ ըստ միոյ տեսակին է ակն կարմրագոյն՝ այն է սէլէան , հայի 'ի խորհուրդ կարգին . և ըստ միւսոյ տեսակին որ է մոծագոյն՝ այն է եէմենի՝ հայի 'ի խորհուրդ պսակին :

Ա.ՅԼ զոր մեք յայտոսիկ իրսդ որոշեցաք զմեկնութի առաջիկայ բնաբանիդ՝ մարթ է և յայլս վերածել . զի անորոշ դնին բառքդ . մանաւանդ զի յեբրայականն այլով կարգաւ դասին . և ա(յլ) մեկնիչքն՝ փոխաբերութ(եամ)բ իմն նկարագրեն զփառաւորիլ եկեղեցւոյ , ոչ 'ի հինն մտածելով , այլ 'ի նորս . յորոյ 'ի բարձրութի վերացուցանելով տոքիմայ զմնմտացս օրհնութեն , վերջ տայ բանից իւրոց , և ասէ :

23 . Ես տառապեալս զՔո ճգնեալս երկրպագեմ , փառաւորեմ . և օրհնեսցեն և ասիցեն . օրհնեալ է Ած . որ բարձրացոյց զՔո աշխարհս յաւիտենս յաւիտենից :

Բառդ

Նուագ ալէլուիա՝ նշանակէ գովեցէք զՏր . զոր
իբրև գոհացողական օրհնութի . մատուցանէին
ի՛յ որդիքն Ի՛լի . որպ և այժմ ամ եկեղեցիք քրիս_
տոնէից . ՚ի սոյնպի գովութիւս ակնարկելով ասէ .
Եւ առաջին յամ ժողովն երուսաղէմի , ալէլուիա . և
օրհնեսցեն , և ասիցեն . օրհնեալ է ա՛ծ . որ ճարշարացոյց
զամ աշխարհս յաւիտեանս յաւիտենից : Օ փողոցս ՚ի
մէջ բերելով՝ ոչ տայ իմանալ զիրական փողոցս
և զճանապարհս եդմի , այլ զյայտնի հրապա_
րակիլ օրհնութեան ի՛յ . յոր միտ կամի ասել : ՚Ի
փոփոխիլ ի՛ւի ՚ի նոր եկեղեցի , ամենեքին յայտ_
նապարեաւ գովեսցեն զա՛ծ . և նմա միայնոյ տա_
ցեն զօրհնութի ասելով , ալէլուիա . և կրկնես_
ցեն գովելով . օրհնեալ է ա՛ծ՝ որ փրկեաց զազգ_
մարդկան հանմօրէն . և ՚ի յետին անարգութէ
և ՚ի գերութէ սատանայի ՚ի վեր եառ՝ առ ՚ի հա_
ղորդս առնելոյ զնա փառաց իւրոց : Յերբ՛՛ առ
եկեղեցի խօսելով ասի . * օրհնեալ (է) տ՛ր՝ որ
,, բարձրացոյց զեղջիւր թագաւորութե քո յա_
,, ւիտեանս յաւիտենից ‖ :

Բարոյակ՝ այս ամ հայի ՚ի նորոգութի հոգևոր
կենաց . յորում հոգի մարդոյ՝ որ օրինակի յե_
րուսաղէմ , յեռանդն զօրբարար ճորհս՝ շինի
պատուական քարամբք . շափիւղայիւ հաւա_
տոյ , սուտակաւ յուսոյ , և ոսկւով սիրոյ . և
յեարձակութե սրտին մի՛ բիւրեղ բարեխառնութե ,
դահանակ արդարութե , և սարդիոնն արիութե ,
ունելով ՚ի միտսն զխոհեմութի իբրև զյակինթ .
որով և յամ արդիւնս գործոց նր հնչէ ուր_
խութի բարբառո՝ ալէլուիա . օրհնեալ է ա՛ծ
յաւիտեան :

Յարմարական մեկնութ՝ ՚ի բժշկել ծանրացեալ_
հիւանդին յախտից իւրոց՝ սիրտ նր կազդուրի

սրբատաշեան քարամբք , շափիւղայիւ հիմնադ-
րեալ նախանձ ոգւոց . սուտակաւ զօրացեալ կարգաւորեալ .
և ոսկւով ուրախութ . 'ի սիրտ նոր բիւրեղ համ-
բերութ , դաշնաւոր զգաստութ , և սարդիոնն
անհոգացողութ . և 'ի հրապարակ բիւրեղեայ նոր
հնչէ ճոխահամբարութ տն մն . և խիղճ մտաց նորա
նորոգեալ 'ի հիմնադրութ անդ՝ գոլ գոհութիւն
տն մն՝ փառաբանել դասել ընդ 'ի հանդեր-
ձեալ կեանս :

Որով զայսոսիկ բանս վերածեմ 'ի վերջին եղբ ,
զի յայտնութ երկնից հանգոյն բանից տեսլեանն
յովհաննու . գլ . իա . որոյ վայելչութեան անձա-
ռելի գոլով 'ի մեջ՝ այսպիսեաց սուրբ եկեղեցի 'ի
ցոյց օրհնելի մեծութե փառաց , և անհատանելի
երանութե նորուն՝ որ մնայ յաւիտեանս :

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԺԱՄ

Սորա զգեստ տն 'ի բերանոյ յաւերժաց յորդորելով
շինել օրհնել զտր . 'ի վերերեւուլ և զխորհրդածութ հոգե-
ւորականաց , վայելչութիւն և շնորհացն տր զոր յա-
ջողէ տն ծառայս իւր :

1 . Ես սկսայ յուղիղ օրհնել զօրհնութեան զայս . և տա՛ լինել
նորոգեալն ընդ նմա . և տաէ յուղիղ :
( Ժզ . 1 = 21 ) :

2 . Արդ [illegible]
[illegible]

3 . * Օ [illegible]

4 . * Եւ [illegible]

5 . * Եւ [illegible]

Ա- ծած-

ծածկեցաւ զնոսա :

6. * Այս տանց հզօրք ամենեւին ... կատարեաց իմ, և զօրութեամբ իմ ընդդիմացաւ հարկանել. և զորս իմ աւար հարկանել, և զնոյն իմ վարել 'ի գերութիւն :

7. * Տէր ամենակալ խորտակեաց զնոսա 'ի ձեռն կնոջ :

8. * Զի ոչ անկաւ հզօրն նոցա յերիտասարդաց. և ոչ որդիք տիտանացն հարին զնա. և ոչ բարձրահասակ սկայք յարեան 'ի վերայ նորա. այլ Յուդիթ դուստր Մերարեայ գեղեցկութեամբ երեսաց իւրոց լուծ զնա :

9. * Զի մերկացաւ զհանդերձս այրութեան իւրոյ 'ի բարձրութիւն այնոցիկ որ աշխատեալ էին յԻսրայէլ :

10. * Եւ օծ զերեսս իւր յանուշ իւղոյ. և յօրինեաց զվարս իւր. և առ զգեստ նրբեղէն 'ի խաբէութիւն նորա :

11. * Եւ 'ի գեղ կօշկաց նորա յափշտակեցան աչք նորա. և գեղեցկութիւն նորա գերեաց զանձն նորա. և եհատ զպարանոց նորա :

12. * Դողացին պարսիկք 'ի համարձակութենէ նորա. և մարք 'ի խառնակութենէ նորա :

13. * Յայնժամ աղաղակեցին խոնարհեալքն իմ, և տկարքն իմ աղաղակեցին. և զարհուրեցան. բարձրացուցին զձայնս իւրեանց և դարձան :

14. * Որդիք աղջկանց խոցոտեցին զնոսա. և որպէս զորդիս փախստէից խոցեցին. և կորեան 'ի պատերազմէ Տեառն իմոյ :

15. * Օրհնեցից զՏէր իմ յօրհնութիւն նոր :

16. * Տէր մեծ ես դու և փառաւորեալ, սքանչելի ես զօրութեամբ անպարտելի :

17. * Քեզ ծառայեսցեն ամենայն արարածք քո. զի ասացեր և եղեն. առաքեցեր զհոգի քո. և հաստատեցան. և ոչ ոք է որ ընդդէմ կայ ձայնի քում :

18. * Լերինք հիմամբք 'ի հիմանց ջրովքն հանդերձ շարժեսցին. և վէմք առաջի երեսաց քոց հալեսցին որպէս մոմ. և երկիւղածաց քոց ողորմեսցիս դու :

19. * Ամենայն պատարագ 'ի հոտ անուշութեան սակաւ է, և ճարպ ամենայն յողջակէզս քո փոքր է. իսկ որ երկնչի 'ի Տեառնէ մեծ է յամենայնի :

20. * Վայ ազգաց որ յարիցեն 'ի վերայ ազգի իմոյ. Տէր ամենակալ խնդրեսցէ 'ի նոցանէ յաւուր դատաստանի :

21. * Եւ տացէ հուր և որդն 'ի մարմինս նոցա. և լացցեն նոքա 'ի զգայութեան իւրեանց յաւիտեան :

# Վ Ա Ր Դ Ո Ւ Գ Ի Ր :

1. Այս պատճառ յաղագս օրհնել զօրհնութիւն Տեառն, և զամ [illegible] նոցա ընդ նմա. և առ յաղագս :

Ի դիմաց Հոգեւորականաց սպասուց [illegible] Հրամանաւ [illegible] արքային բարեկամացուց [illegible] զօրաց 'ի մէջ այլեւայլ ազգաց, և 'ի մասնել նորա յերկիրն քանանացւոց, և 'ի հնա

զանդրեցուցանել զամ ազգս, ինչցիք ոչ կամե_ ցան հպատակիլ նմ · վ՟ղ փակեցին զլեռնային անցս կողմանցն բետեղուայ · զի ընդ այն էին մուտք 'ի հրէաստան ։ Զայս իմացեալ հողեփեռնեայ՝ բարկացաւ յոյժ, և սկսաւ հետաղօտել, թէ զինչ իցէ զօրութի որդւոցն իլի ։ Մատեաւ առ նա իշխան ամնյորդւոցն ամոնայ աքիոր անուն · և ե_ ցոյց նմ՝ թէ ած է պաշտպան նց · և ասաց զանց առնել զնոքօք ։ Իսկ հողեփեռնէս զայրացեալ ընդ նա՝ մերժեաց յերեսաց իւրոց · և հրամայեաց տա_ նել մատնել զնա բետեղուացւոց ։ Իսկ ինքն փու_ թացաւ պաշարեաց զկողմանս բետեղուայ զաւուրս երեսուն և չորս · և եխից զաղբիւրս ջուրց քաղաքին ։ Ընկան յայնժամ բնակիչք քաղաքին 'ի նեղութի մեծ · և գոչեցին առ ած · և յաւաւելին ամբոխիլ ժողովրդեան՝ ողիա իշխան քաղաքին յորդորեաց զնս համբերտիլ այլ ևս աւուրս հինգ · և եթէ ասէ ոչ եկեսցեն 'ի վր մեր օգնութիւ՝ անձնատուր լի_ ցուք հողեփեռնեայ ։

Էր 'ի քաղաքի անդ կին մի յուդիթ անուն դուստր մերարեայ 'ի ցեղէն շմաւոնի · որ յետ մա_ հու առն իւրոյ մանասէի մնացեալ էր այրի · և էր նա երկիւղած յայ, և գեղեցիկ տեսլեամբ յոյժ ։ Սա ժողովեալ զիշխանս քաղաքին՝ խրատ ետ նց ոչ տալ զքաղաքն 'ի ձեռս հողեփեռնեայ · և ինքն խոստացաւ նց՝ անձամբ անձին փրկել զժողովն ։ Իսկ հաւանեցուցեալ զնս՝ և առ հրաման 'ի նցէ՝ գնալ առ հողեփեռնէս ։ Զարդարեցաւ ապա յուդիթ · և առեալ զնաժիշտ իւր չոգաւ 'ի բա_ նակն հողեփեռնեայ · և խօսեցեալ ընդ նմ իմաս_ տութբ՝ խոստացաւ նմա մուծանել զնա ինքն 'ի քաղաքն ։ Ընկալաւ զնա հողեփեռնէս · և յա_ ւուրն չորրի արար կոչունս ծառայից իւրոց · կո_

չեաց

չեացանողը և զյուդիթ . և եարբ Հողեփեռնեա
յաւուր յայնմիկ գինի սաստիկ յոյժ , նոյնպ և

ծառայք նորա :

Իսկ իբրև երեկոյ եղև՝ 'ի մեկնիլ անտի ամենեցուն՝ 'ի
քուն եմուտ Հողեփեռնէս . և էր թմբեալ յոյժ :
Իսկ մնաց յուդիթ 'ի խորանի նր . և 'ի մէջ գի-
շերին յորժամ ամենեքեան ըմբռնեալ էին 'ի խորունկ քնոյ՝
եառ յուդիթ զգաշոյնն Հողեփեռնեայ . և կալա-
ւ զհերաց գլխոյ նր . և ասէ առ ած . * զօրացո՛ զիս
ած իլի յաւուրս յայսմիկ ‖ . և եհար 'ի պարանոց
նր երկիցս , և եհատ զգլուխ նր . և թաւալեցոյց
զմարմին նր, 'ի գահոյից նորին . և ընկէց զգլուխն
'ի մախաղ կերակրոյն իւրոյ , որ էր 'ի ձեռս ա-
ղախնոյն , և ելին անտի երկոքեան 'ի միասին .

և գիշերային հասին 'ի քաղաքն :

Իսկ 'ի ժողովիլ առ նա քաղաքացեացն՝ ասէ ցնոսա .
* որդի՛ք իլի , օրհնեցէք զտր՝ որ ոչ մերժեաց զո-
,, ղորմութի իւր 'ի տանէ իլի, այլ եհար և վանեաց
,, զթշնամիս մեր 'ի ձեռն իմ 'ի գիշերիս յայս-
,, միկ ‖ : Իսկ ցուցեալ նց զգլուխն Հողեփեռնեայ՝
հրամայեաց կոչել զաքիովր՝ զի և նա տեսցէ . և
եղև 'ի տեսանել նր զայն՝ զարհուրեցաւ . և հա-
ւատաց յած յամ սրտէ : Իսկ իբրև առաւօտ եղև՝
կախեցին զգլուխն Հողեփեռնեայ զպարսպէ ան-
տի . և յարձակեցան 'ի բանակն : Դիմեալ զօ-
րացն Հողեփեռնեայ 'ի վրան նորին՝ գտին զդի
նր յերկիր թաւալեալ . ե որ սոսկացեալ՝ 'ի փախ-
չիլ նց՝ պնդեցան բետեղուացեալք զինի նոցին :
Իսկ 'ի լու լինիլ այսր՝ հասին և այլ իլացիք յամ
կողմանց . հարին և կոտորեցին զնս մինչև 'ի դա-
մասկոս . առին ապա և զաւար բանակի նց . և
յուդիթայ ետուն զխորանն Հողեփեռնեայ և որ

ինչ էր 'ի խորանի նր :

Եկին

Եկին յայնժամ 'ի տեսանել զյուդիթ մեծա-
մեծք յե՟ղ՟մէ . ը՟ որս և յովակիմ քահանայապետ,
եւս և այլք յայլոց քաղաքաց . և օրհնեցին զյու-
դիթ , և ասեն . * դու բարձրութիւն ե՟ղ՟մի . դու
,, ցնծութիւն ի՟ղ՟ի . դու պարծանք ազգիս մերոյ . զի
,, արարեր զայս ա՟մ բարու՟թս ձեռօք քովք ի՟ղ՟ի . և
,, օրհնեալ եղիջիր դու յամենակալէն ա՟յ մինչև
,, յաւիտեան . և ասէ ա՟մ ժողովուրդն . եղիցի ‖ .

(յուդիթ . ժե . 10 :)

Հասին և բազմութիւնք կանանց՝ տեսանել զյուդիթ :
Եւ նա առեալ զոստս արմաւենեաց և ձիթե-
նեաց ծաղկօք հանդերձ՝ ետուր նոցա . և երթային
զկնի նոցա բազումք՝ վառեալք և կազմեալք , ու-
նելով 'ի գլուխս իւրեանց պսակս գոյնզգոյն ե-
րանգօք : Եւ յայնժամ սկսաւ յուդիթ երգել
զօրհնութիւս զայս . և ա՟մ ի՟ե՟լ ը՟ նմա :

Յետ կատարման հանդիսի ուրախութեան՝ չոգան
ամենքն յե՟ղ՟մ ը՟ յուդիթայ , և մատուցին 'ի տա-
ճարի ա՟ն զողջակէզս և զզոհս : Եւ յուդիթ ըն-
ծայեաց 'ի տաճարի ա՟ն զա՟մ զկահ և զկարասի
խորանին հողեփեռնեայ . և. դարձաւ 'ի տուն
իւր . և եկաց յայրութեան իւրում անարատութեամբ մա-
րուց . և 'ի գիր անցոյց զօրհնութիւս զայս . և հա-
սեալ 'ի վախճան կենաց իւրոց՝ փոխեցաւ աստի :
Արդ յայսմ օրհնութեան՝ զոր երգեաց յուդիթ , յետ
յորդորելոյ զորդիսն ի՟ղ՟ի՝ օրհնել զա՟ծ՝ առաջի
տանն զանցանսն հողեփեռնեայ և ազգին իւրոյ . և
ապա գովելով զա՟ծ 'ի մէջ մատուցանէ զպաշտ-
պանութիւն նր յերկիւղածս իւր , և զվրէժխնդրութիւն
նորին 'ի դատապարտել զթշնամիսն : Այլ գե-
տեղի է՝ զի յեբր" ոչ գտանի այս օրհնութիւն, և ոչ
յարամ" . այլ 'ի յոյնն , և 'ի լատ" և յասոր" . ում և
'ի մերումս :

ԲԱՆ :

## Բ Ա Ն․

2 · Երգեցէ՛ք տ̃ն թմբկօք․ և օրհնեցէ՛ք զնա ծնծղայ-
իւք․ և ուղղեցէ՛ք նմա երգս և օրհնութիւն․
բարձր արարէ՛ք զնա․ և կարդացէ՛ք զանուն նորա։
3 · Ո՛ է ա̃ծ բարձրագէ զզաւրեայզձաւնս տ̃ր։
4 · Ի՛ս զեղանակս ն̃ր ՚ի ՔՁ ծագուերդոց․ երկեայց զէս ՚ի
յէտայց հալածչաց էՎոց։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ․

Ուրախութ̃ սրտին յուզիթայ ոչ թողու շատա-
նալ սոսկ երգովք օրհնել զա̃ծ, և ոչ սոսկ նուա-
գարանօք, այլ երկօքումբք միանգամայն․ և
այն՝ ոչ եթէ միաւենակ նուագարանօք, և ո՛չ նոյ-
նատարազ նուագօք, այլ պէսպիսեօք՝ վ̃որ ասէ։
Երգեցէ՛ք տ̃ն թմբկօք․ և օրհնեցէ՛ք զնա ծնծղայիւք․ և
ուղղեցէ՛ք նմա երգս և օրհնութիւն․ բարձր արարէ՛ք զնա․
և կարդացէ՛ք զանուն ն̃ր։ Այսինքն, նուագեցէ՛ք ն̃յ
զերգս․ և ի̃ երգոցդ յարմարեցէ՛ք զթմբուկս,
( որ է թէֆ)․ նուագեցէ՛ք և զօրհնութիս․ և ի̃
օրհնութեացն յարմարեցէ՛ք զծնծղայս․ որովք կարէք
ուղղել նմ̃ զերգս և զօրհնութիս․ ա̃պ եթէ կարէք
այսու արժանաւ̃ նուագել նմա զայնպիսի բանս՝
որք իցեն երգք և օրհնութիք․ երգովք պատմեցէ՛ք
զայն զոր արար ը̃ մեզ ա̃ծ, և բարձր արարէ՛ք
զզօրութի ն̃ր․ օրհնութ̃ փառաւորեցէ՛ք զմեծութի
ն̃ր, և կարդացէ՛ք զանուն նորին։

Բարոյապ̃, սովին ցուցանի՝ թէ պարտ է օրհնել
զա̃ծ եթէ բանիւք և եթէ գործովք։ Բանիւք կրկ-
նակի․ ա̃պ գովելով և բարոզելով։ Գործովք ևս
կրկնակի ը̃ կրկին պատուիրանաց ՚ի լրումն սի-
րոյն ա̃յ և սիրոյ ընկերին։ Իսկ թէ չեմք առ այս
բա-

բուսական՝ զի փորձութիք պատերազմին է̃ մեզ , և դեւք հալածեն , նա ինքն ած օգնէ մեզ , և պատերազմի փինկ մեր · և զայսմանէ խօսի 'ի յա_ջորդ համարոդ ասելով ·

3 · Ո՛չ ած խորտակէ զպատերազմունս մր : (4) * Զբա_նակս նր 'ի մէջ ժողովրդոյ · եբերեայ զնա 'ի յերկրայ հա_լածչաց իմոց : Այսինքն թէ 'ի յաւնել թշնամ_եայն 'ի վ[ր] մեր , և 'ի հալածել նր զմեզ՝ ամենա_զօր ձեռն ամենակալին օգնէ մեզ՝ 'ի պաշտպա_նել զմեզ , և 'ի խորտակել զպատերազմունս թշնամեաց մերոց · և եթէ բազմութիւն և զինեալ լիցէ թշնամին , և կարգել լիցէ զբանակ իւր 'ի մէջ ժողովրդոյ՝ այսինքն 'ի մէջ բազմութեան , զնոյն և խորտակէ , որպէս և արար իսկ · զի առա_քեց 'ի նեղել և 'ի հալածել զմեզ հողեփեռ_նեայ՝ նա ինքն ած յապականութիւն դարձոյց զզօ_րութիւն նորա և փրկեաց զմեզ : Այլ թէ փինկ գնելոյ զգերանունդ զմեզ՝ գնէ զիս , այդ ոչ հայի սոսկ յանձն յուդիթայ , այլ յազգն իւր · զի 'ի բերանոյ ազգին խօսելով ասէ զայդ · Ի յոհնականն և 'ի լատ" յետ ասելոյ · * որ խոր_տակէ զպատերազմունս ‖ · յաւելեալ լինի · * տր անուն է նր ‖ · և այս առեալ է յօրհնութեան մովսե_սի · ուր գնի առաջինկայ բանդ · տես յօրհ · ա̃ · 4 · Մատչի ապա յուդիթ պատմել՝ որ եղեւն · և ասէ ·

5 · Եկն ասուր 'ի լերանց հիւսիսոյ · եկն 'ի բիւրաւորս զօրօք իւրովք · որոյ բազմութիւն ծածկեաց զջուրս · և բազմութիւն երիվարաց նր ծածկեաց զբլուրս :

6 · Ասաց՝ հրձիգ առնել զսահմանս իմ · և զերիտասարդս իմ ընդ սուսեր հարկանել և զտղայս իմ_ ար հարկանել · և զկուսանս իմ վարել 'ի գերութիւն :

Ոչ մինչեւ զանուանն հողեփեռնեսի · զի ոչ կամէր

մի-

յիշատակի արժանի առնել զնա . այլ դնէ զա-սուր . իսկ ասուրաւ իմացեալ լինի ազգն ասո-րեստանեայց . որոց իշխէր արքայն Նաբուգոդո-նոսոր , եւ նստէր 'ի բաբելոն . եւ զի նա ինքն հօ-ղեփեռնէս եւս յազգի անդ էր , յանուն ասուրայ յիշատակէ , եւ ասէ .

Եկն ասուր 'ի լերանց հիւսիսոյ . եկն 'ի բիւրաւորս զօրօք իւրովք . որոց բազմութիւն ծածկեաց զձորս . եւ բազմութիւն երիվարաց նր̅ ծածկեաց զբլուրս : Հիւսիսոյ դնէ . զի հօղեփեռնէս նախ յարձակեալ 'ի կողմանս դա-մասկոսի՝ որ է 'ի հիւսիսոյ հրէաստանի , անտի դի-մեաց 'ի հրէաստան՝ անցանելով ընդ լերինս . վասն այսորիկ ասէ , թէ եկն 'ի լերանցն հիւսիսոյ : Ասելով , թէ եկն բիւրաւոր զօրօք . զի արդէն զօրք իւր էին քսան եւ չորս բիւրք , այ̅ հարիւր եւ քսան հզ̅ր հետեւակաց , եւ նոյնչափ հեծելոց . թող զի յաւել 'ի նոսին եւ յայլոց ազգաց զայլս բզ̅մս . որովք եւ մեծացաւ բանակ նր̅ յոյժ . մինչեւ բազ-մութ̅ զօրաց նորին ծածկել զձորս , եւ երիվարաց նր̅ զբլուրս . եւ կամք նր̅ էր՝ այսքան բազմութ̅ կոխելով զազգն իւր՝ ջնջել զնս̅ . վ̅յ յարէ զինի , եւ ասէ :

6 . Այս ասաց հրձիգ առնել զսահմանս իմ . եւ զերիտա-սարդս իմ ընդ սուր հարկանել եւ զտղայս իմ տալ հար-կանել . եւ զկուսանս իմ վարել 'ի գերութե̅ : Այսինքն՝ եդ 'ի մտի եւ ասաց այրել զա̅մ սահմանս հրէաս-տանի . եւ ընդհանուր հարկանել , այ̅ 'ի ներքոյ սրոյ կոխել զերիտասարդս հրէից , եւ յափշտա-կել զտղայս , եւ գերի վարել զկուսանս , թո-ղեալ 'ի բաց զանպիտանսն :

Խորհրդաբար , հողեփեռնէսիւ նշանակի բե-լիար , որ եկն 'ի վ̅ր ազգի մարդկան 'ի լերանցն հիւսիսոյ , այ̅ 'ի հպարտութէ̅ , որով խոստա հիւ-

սի-

ախտացեալ էր, և ցրտացեալ էր ի սիրոյ։ Եւ բազմութեամբ դիւաց ծածկեաց զերկիր, և ասաց կորուսանել զամենայն. այլ որ տէրն էր ազգին մարդկան՝ կորացոյց զգլուխ նորա ի ձեռն յուդիթայ; և սրոյ կուսին. զորմէ խօսի ի յաջորդ համարն; ի մէջ բերեալ զկործանումն նորին իսկ Հոլոփեռնեայ. և ասէ։

7. Տէր ամենակալ խորտակեաց զնոսա ի ձեռն կնոջ։

8. Զի ոչ անկաւ հզօրն նոցա յերիտասարդաց. և ոչ որդիք տիտանացւոց սատակեցին զնա. և ոչ բարձր հսկայք յարեան ի վերայ նորա. այլ յուդիթ դուստր Մերարեայ. գեղեցկութեամբ երեսաց իւրոց լուծեաց զնա։

Բաւական մեծ եղև նախատինքն Հոլոփեռնեսի և ամօթ զօրաց նորա ի կործանիլն քան զպարծիլն. զի ի յոխորտալ նորա խախտել զերկինս՝ խախտեցան իբրև զքարինս. զի նա ինքն տէր խորտակեաց զնոսա ի ձեռն կնոջ միոյ. և զխրոխտումն նորա կործանեաց իսպառ. վասն որոյ ասէ։

Տէր ամենակալ խորտակեաց զնոսա ի ձեռն կնոջ։ Կամի ասել. կարծէին թշնամիք մեր, թէ մեք զօրութեամբ զինուց պատերազմելոց եմք ընդ նոսա, և թէ ոչ ունիմք զոք մեզ պաշտպան; բայց խաբեցան. զի տէր տէր ամենակալ կործանեաց զնոսա՝ ոչ թօթափմամբ կայծականց, ոչ պատառմամբ լերանց և ոչ սասանմամբ երկրի, ոչ հրով և ոչ հեղեղաւ, ոչ բազմութեամբ պատառօղ գազանաց և ոչ ի ձեռն հրեշտակի, այլ ի ձեռն տկարի միոյ. և այն՝ ոչ եթէ առն, այլ՝ կնոջ։ Նա զայս առաւել ևս կամելով բացատրել՝ յարէ զկնի։

8. Զի ոչ անկաւ հզօրն նոցա յերիտասարդաց. և ոչ որդիք տիտանացւոց սատակեցին զնա. և ոչ բարձր հսկայք

ցաբեան 'ի ձեռաց նորա . այլ յուդիթ դուստր մերարեայ :

Գիտելի է, զի քառասուն տիտան ըստ առասպելելոց բանաստեղծից՝ նշանակի ծնունդ երկնի և երկրի, այն է արեգակն . որ 'ի ծագել իւրում՝ երևի ծնանիլ յերկնէ իբր 'ի հօրէ . և յերկրէ՝ իբր 'ի մօրէ, զոր կոչէին տիտանուհի . յորմէ ասէին ծնեալ և այլ վեց որդիք, զորս անուանէին տիտանացիս կամ որդիս տիտանեանս, և յարմարեցուցանէին զնոսին յայլ և այլ իրս . որովք նշանակել կամէին զբարձրահասակ և զանյաղթելի հսկայս : Եւ ահա ըստ այսմ առմանն դնէ աստ զքառասուն որդիս տիտանացւոց . կամի ասել . հզօր էր արդարև թշնամին մեր . որում ոչ ոք կարէր յաղթել, բայց եթէ երիտասարդք ուժեղք, և որդիք տիտանացւոց, այսինքն որդիք հսկայից՝ որք էին մեծամեծ հսկայազունք . բայց ոչ երիտասարդք կործանեցին զնա, այսինքն զհողեփեռնէս, և ոչ բարձրահասակ հսկայք յարեան 'ի վերայ նր . այլ յուդիթ դուստր մերարեայ . և այն՝ ոչ եթէ մենամարտելով, այլ գեղեցկութեամբ . ուստի յարէ և ասէ :

Գեղեցկութե երեսաց յոյժ խաբեաց զնա : Այսու ոչ ցուցանէ՝ թէ գիտեաց յուդիթ գեղեցկութբ իւրով խաբել զնա, այլ թէ ինքն գեղեցիկ գոլով՝ նա 'ի գեղեցկութէ անտի նր խաբեցաւ . և զի յոյժ գեղեցիկ էր, յոյժ խաբեցաւ . որով և գեղեցկութիւնն այն ոչ եթէ գործի եղև յուդիթայ 'ի խաբել, այլ գործի եղև հողեփեռնեայ 'ի խաբիլ և 'ի կորնչիլ :

Խորհրդաբար, յուդիթ եղև օրինակ սր ածածնի, որ 'ի ձեռն գեղեցկութե երեսացն, այսինքն 'ի ձեռն սքանչելի սրբութե հոգւոյ իւրոյ՝ մանաւանդ 'ի ձեռն խոնարհութե և կուսութե խաբեաց զսա-

զսա-

զատաանայ. և խայտառակեաց զհնարս նր̃. և
եհատ զգլուխ նորին, զի զհպարտութի նր̃. ուս_
տի և կարէ՛ ասել. ոչ երիտասարդք և ոչ հս_
կայք, զի ոչ հրեշտակք և ոչ երկրածինք կարա_
ցին նուաճել զնա. այլ յուդիթ՝ զի մարխամ
դուստր դաւթի. և այն գեղեցկութ̃ երեսաց իւ_
րոց. ուր գեղեցկութ̃ մարթ է ևս իմանալ ըզ_
բանն ա̃ծ՝ որ եղև գեղեցկութի երեսաց նր̃, զի
անձին նր̃. զի ոյսում 'ի ձք գիրս քառիցս երեւ՝
ուրեք ուրեք նշանակի անձն: Այլ թէ զինչ_
յաւել յուդիթ 'ի գեղեցկութի իւր, զայնցանէ
խօսի յերկս յաջորդ համարսդ՝ ասելով.

9. Զի մերկացաւ զհանդերձն այրութե̄ն իւրոյ 'ի բարձ_
րութե̄ն այնոցիկ որք նեղեալքն էին յիսրայէլի:
10. Նա օծ զերեսս իւր յանուշ իւղոյ. և յօրինեաց
զգլուխն իւր զարդու իւրով. և առ նա զշշա_
զարեան 'ի խաբէութե̄ն նորա:
11. Նա 'ի գեղ ոտից կօշկաց նորա ճողոպրեցաւ աչք նո_
րա. և գեղեցկութե̄ն նորա գերեաց զանձն նորա.
և էանց դաշոյնն ընդ ծոծս նորա:

Գեղեցկութի մարմնոյ առաւելութք զարդուց
նուազանայ առ տեսողսն. զի յայնժամ տեսա_
նօղքն յաւէտ զզարդն քան զզարդարեալն նկա_
տեն. և առաւել՝ գեղեցկութք զարդուն՝ քան
զզարդարեցելոցն զմայլին: Իսկ եթէ չափաւոր
և յարմար իցէ զարդն՝ պայծառանայ գեղեց_
կութին. ո՛րպ տեսանի 'ի յուդիթ. որ զի առաջի_
կայ բանիդ՝ մեծաւ զարդու ոչ զարդարեցաւ,
այլ չափաւոր և յարմարաւոր. որով կարի իմն
գեղեցիկ երևեցաւ. և զայս արար նա՝ ոչ եթէ
առ 'ի փառաւորութի անձին իւրոյ. այլ նախ՝ վն
բարձրութե փառաց ժողովրդեան ա̃յն. և երկ՝

վ՞ն նուաճումն թշնամեացն ։ Յառաջինն հայելով՝ ասէ ։

Եւ մերկացաւ զհանդերձս այրութեան իւրոյ 'ի բարձրումն այնոցիկ՝ որք նուաճեալքն էին յԻսրայէլէ ։ Որովհետեւ այրի էր մնացեալ յուդիթ՝ զհանդերձս այրիութեան զգեցեալ էր . եւ ախորժելի էր նմա մնալ այնպ . իսկ 'ի կամիլ նր գործել զգործն զայն մեծ՝ զոր գործեաց՝ ոչ հայեցաւ 'ի հաճոյս իւր , այլ 'ի բարձրումն այնոցիկ՝ որք կոփեալ էին յիսրլ . որպ 'ի բարձր առնել եւ յազատել զինչս՝ որք կոփեալ եւ նուաճեալ էին յերեսաց թշնամեացն . եւ վ՞ն մերկացաւ յիւրմէ զհանդերձս այրիութեան իւրոյ . եւ զարդարեցաւ՝ ոչ օտար զարդուք , որպ խենեշ զարդուք , այլ զարդու իւրով , որպ այնպիսի զարդու՝ որ վայել էր անձին իւրոյ . իսկ թէ զիարդ , յայտ առնէ 'ի հետեւեալ բանսդ , հայելով միանգամայն եւ 'ի նուաճումն թշնամեացն ըստ երկրորդ դիտմանն , եւ ասէ ։

10 . Լուօծ զերեսս իւր յանուշ իւղով , եւ յօրինեաց զհերսն իւր զարդարեաց իւրով . եւ առ նա զխոյրն 'ի գլուխն նորա ։ Որպ այլուր ասացաք , սովորութիւն էր 'ի պաղեստին եւ յայլ բազում տեղիս արեւելեայց՝ օծանել զերեսս իւղով . ապա թէ ոչ՝ 'ի չորութէ եւ 'ի ջերմութէ հերձեալ լինէր մորթ երեսացն . իսկ որք 'ի սուգ մնանէին՝ զանց առնէին զայսու 'ի նշան սգաւորութէ ։ Այնպ եւ յուդիթ յայրիութեն անդ իւրում ոչ օծանէր զերեսս իւր . բայց այժմ 'ի ստիպել հարկին եօծ զայն անուշ իւղով . եւ զգլուխս իւր յօրինեաց զարդու իւրով ։ Իւր բառդ խոյր՝ զերկոսս կարէ ցուցանել . մի՝ թէ ոչ զարդուք օտարաց , այլ իւրովքն զարդարեցաւ . եւ մի եւս՝ որպ ասացաք՝ ոչ խենեշ զարդուք զարդարեցաւ , այլ որ պատշաճն էր ։

Առեալ ապա զիւրև զշղաշատեան. այն է փեղ-կոմնի. և ագաւ զագմին կօշիկսն յոտս իւր ։ Եւ զայս ասէր ասէ 'ի խաբէութիւնս. իբր թէ ասէր. զայս առնելով` ինքն ինչ ոչ վնասեցաւ. այլ թշնամին խաբեցաւ, և կորեաւ ։ Եւ յաւելու ասել ։

11. Եւ 'ի գեղ ոտից կօշկաց նր մոլորեցաւ սիրտ նր. և գեղեցկութիւն նր գերեաց զանձն նր. և անց սուսերն ընդ պարանոցն նր ։ Կամի ասել. զխորհուրդն յուդիթայ այս էր. զի 'ի ձեռն զարդու յարդոյ ցուցցէ զանձն առաջի հողեփեռնեայ. ոչ զի բանք իւր աղդուն լիցին. բայց սիրտն հողեփեռնեայ` որ չարն էր, չարաչար մոլորեցաւ. զի հայեցեալ յոտս յուդիթայ, և 'ի գեղեցկութիւն կօշկաց նր, սղոպրեցաւ 'ի միտս. և նայեցեալ 'ի կերպարանս նր, գերեցաւ ոգւով, խորհելով կատարել զչար կամս իւր. բայց յառաջ քան զկատարելն 'ի թմրութեան գինւոյ գոլով, եանց դաշոյն ընդ փողն նր. ընդ որում դաշունաւ նր եհատ յուդիթ զփող նորին. և եհատ զգլուխ նր ։

Խորհրդաբար, այսպիսի զարդարանօք նկարագրին կատարելութիւնք որք ստացանին. նախ այն` զի մերկ 'ի մեղաց` որպէս որք և անարատ ծնեալ 'ի բարձրութեան ազգի մարդկան ։ Եւ օծ անոյշ իւղով շնորհաց հոգւոյն սրբոյ զերեսս իւր, որպէս զբանականն դակուն հոգւոյ իւրոյ. ընդ որում երեւան յանդիմանն առնէ զ[illegible]ակութի մարդոյ ։ Զօրինեաց զգլուխ իւր, որպէս զհոգի իւր ընդ զարդուք առաքինութե` որ վայել էր նմա ։ Առաւ և կրեաց յինքեան զշղաշատեան անեղանելի, արկեալ զիւրև զարեգական արդարութե. որպէս եւտես յովհաննէս 'ի յայտ. ժբ. 2. * կին մի արկեալ զիւրեաւ զարեգակն. և լուսինն 'ի ներքոյ ոտից նր ‖ ։ Ընդ-

որ

որ հայեցեալ բելիարայ՝ յիմարեցաւ. և նկա-
տեալ 'ի գեղ կոչկաց նր՛ն զի 'ի չնորհաւորութիւն ըղ-
գաստութեան մարմնոյն՝ մոլորեցաւ 'ի խորհուրդս
իւր. զի ոչ կարծէր՝ թէ նա կուսութք նուիրեալ
իցէ այ. Իսկ գեղեցկուհին ածամանցրութեան նր՛ն գե-
րեաց իսպառ զանձն սատանայի. զի ոչ խմանա-
լով՝ թէ իցէ ճշմարտին մայր այ՝ գերեցաւ 'ի
խորհրդոց իւրոց. և 'ի մատչիլ նր՛ն յորդի նորին՝
էանց դաշոյն բեեռաց խաչին ը՛ փող նր՛ն, զի ը՛
զօրութեան իշխանութեան նր՛ն. Պոռացեն յայնժամ
սանդարամետականք և պետութիւնք նոյոց չարաց.
զորոց խօսի զկնի, 'ի մէջ բերելով զպարսիկս և
զմարս յասելն.

12. Պոռացան պարսիկք 'ի շաչառարանէ նորա. և մարք
'ի շաչռանէ նորա խռովեցան.

Երկրորդ արուեստ եցոյց յուդիթ 'ի սպանմանն
Հողեփեռնեայ. մին էր արութիւն սրտի. և միւսն
արութիւն ձեռին. զերկուսին ևս զայսոսիկ առաջի
առնէ ասելով.
Պոռացան պարսիկք 'ի շաչառարանէ նորա. և մարք 'ի շա-
չռանէ նորա խռովեցան. Այսինքն, ազգք պարսից
լուեալ զքաջարութիւն յուդիթայ՝ սարսափե-
ցան՝ ասելով. զիարդ կին մի յայսպիսի արութիւն
սրտի վառեցաւ ընդդէմ ահեղախրոխտ մեծին
այնորիկ Հողեփեռնեայ. Այնպէս և ազգք մարաց
լուեալ զարութիւն գործոց նորին՝ խռովեցան 'ի
միտս իւրեանց՝ ասելով. զիարդ կարաց նա հա-
տանել զգլուխ առն այնորիկ հզօրի, և տալ
զզօրս նր՛ն կոխան ոտից ազգին իւրոյ.
Բայց բան հայելով ոմանց համարեցան՝ թէ 'ի
բանակին անդ Հողեփեռնեայ կային և պարսիկք
և մարք. և այս երկի հաւանական. բայց յա-

ւելուն ես՝ թէ նա ինքն Հողեփեռնէս ես էր պարոնիկ. այլ այս չէ յայտ։ Եթէ այսպէս, և եթէ այնպ՝ ամբին առ հասարակ գողացան. առաւել ես գօղային և խռովեին, եթէ 'ի վերայ հասեալ էին՝ թէ ած է՝ որ յաջողեաց զայս գործ. և զի առիթ յաջողելոյն այ եղև աղաղակ և աղօթք իղացւոց, զայն ես 'ի մէջ բերէ, և ասէ.

13. Յայնժամ աղաղակեցին տառապեալքն իմ. և գոչեցին հիւանդքն իմ. և յաղթեցան. բարձրացուցին զձայնս իւրեանց և լքան։

Սոյն այն է՝ զոր եդաք 'ի սկզբան՝ թէ 'ի վտանգիլ անդ իղցւոց յերեսաց Հողեփեռնեայ՝ գոչեցին առ ած. և 'ի յապաղել այցելութն այ՝ լքան և լուծան. և 'ի ծարաւոյ նուաղեցան. յայտնիկ ակնարկելով՝ ասէ.

Յայնժամ աղաղակեցին, ևն։ Բառդ յայսժամ ոչ հայի 'ի բայսդ՝ գողացան և խռովեցան. այլ վերածի 'ի ժամանակ նեղութն իղացւոց, մանաւանդ 'ի ժամանակ ծարաւելոյ նոցա 'ի բետուղուա. և ըստ այսմ կամի ասել. 'ի ժամանակի աստ՝ յորում դիմեցին 'ի վր մեր ասորեստանեայք՝ աղաղակեցին առ ած տառապեալ ազգք իմ, և գոչեցին հիւանդքն իմ։ Հիւանդս կոչէ զնոսա՝ ոչ միայն զի նուաղեալ էին մարմնով 'ի ծարաւոյ և յերկիւղէ, այլ և զի տկարացեալ էին 'ի յուսոյ. որոյ վս լուծան և յաղթեցան 'ի բռնադրօսելոյ կրիցն. և բանս եդին 'ի մէջ իւրեանց՝ անձնատուր լինել 'ի Հողեփեռնէս՝ քան մեռանիլ 'ի ծարաւոյ։ Բայց կրկին ես զօրացեալ՝ բարձրացուցին զձայն իւրեանց առ ած, և չըգտեալ ինչ՝ միւսանգամ լքան և լուծան։ Հայելով 'ի թարգմանութիւն լատինացւոց, աղա-

ղա-

զակերն վերածի աստ առ Թշնամիսն . իսկ գոչերն առ Էլիացիս, բայց հայելով 'ի յունականն, և յասորւոցն՝ հայի յորդիսն Իլի ըստ վերագրելոյդ : Իսկ Թէ ուստի եղև նշ ըմբռնիլ յայսպիսի անձկութիւն՝ յայտ առնէ՝ ասելով :

14. Որդիք աղջկանց խոցոտեցին զնոսա . և որպէս որդիս փախստէից պանդխտաց խոցոտեցին . և կորեան 'ի պատերազմէ Տն Այոյ .

Որդիս աղջկանց կոչէ, իբ պառանկորդիս ( կամ սասացից՝ բիձս ) անուանէ զԹշնամիս ազգին Իլի՝ ոչ այնչափ զատորեսատանեայսն՝ որչափ զմերձակայ ազգսն, մանաւանդ զամմոնացիս և զմովաբացիս՝ որք յԻրաւի աղջկորդիք էին ծնեալք յերկուց աղջկանցն ղովտայ . որք և դրացի գոլով՝ նպաստիչք Թշնամեացն եղեն՝ խնլով զաղբիւրսն . որպ ասացաք 'ի սկզբանն . ուստի և զառնագինս խօսի զնոցանէ ասելով :

Որդիք աղջկանց խոցոտեցին զնոսա . և որպէս որդիս փախստէից պանդխտաց խոցոտեցին : Նայելով խոցոտել և կոտորել փոխանունութե ձևով դնին աստ . 'ի ցուցանել զչար կամս Թշնամեացն, որով իբր աղջկորդիք խորհրդատու եղեն հողոփեռնեայ՝ հարկանել և կոտորել զԻլացիսն իբրև զորդիս տնանկաց . զորս և կոչէ պանդուխտս . զի որում հարքն պանդխտութե բնակեցան յախոսնիկ սահմանս . և ինքեանք իսկ հասեալք անդր՝ իբր պանդուխտք ժառանգեցին զայն . և մինչ տկարանալոյ յօրէնս նն՝ 'ի բազում իրս տնանկացան . և 'ի ժամանակի անդ պաշարման իւրեանց լքան և նուաղեցան :

Մարթ է աստ որդւովք աղջկանց իմանալ զիսրայէլացիս՝ 'ի բարի կողմն առեալ . անուանե-

րով զնա ճշմարտապատմօրէն ՚ի մօրէ քան ՚ի հօրէ. ընդ որում առաջինկայ յաղթութին ՚ի կնոջէ եղև. որով փանեցան թշնամիք նց իսպառ, զորմէ գրի ՚ի մասնաւորի եւ ասելով.

Եւ խորտակէ ՚ի պատերազմէ ամն իմոյ։ Յուդիթ անձամբ անձին վճարեաց զգործն զայն մեծ. այլ քանզի Այն էր՝ որ զօրացոյց զնա, և զորդիսն իւր, և յաջողեաց նց կորուսանել զթշնամիս, վասն այս տայ զգործն համայն. և զպատերազմիլ իւրեանց կոչէ պատերազմ Ան։ Ո այսպիսի յաջողութին Ան տեսեալ յուդիթայ՝ ցնծալից սրտիւ օրհնէ զնա, և ասէ.

15. Օրհնեցից զՏէր Ած իմ յօրհնութի նոր։
16. Տէր մեծ ես դու և փառաւորեալ. սքանչելի ես զօրութբ անպարտելի։
17. Քեզ ծառայեսցեն ամ արարածք քո. զի դու ասացեր. և եղեն. առաքեցեր զհոգի քո, և ստեղծան և շինեցան. և ոչ ոք է՝ որ ընդդէմ կայ ձայնի քո։

Որովհետև նոր իմն էր՝ որ գործեցաւ ՚ի ձեռն յուդիթայ ՚ի յաջողելոյ Ան, վասն նոր օրհնութին մատուցանէ նմա՝ ասելով.

Օրհնեցից զՏէր Ած իմ յօրհնութի նոր։ Մն նոր օրհնութե ասացեալ է մեր յայլ և այլ տեղիս սաղմոսաց. տես ՚ի մեկն. սաղ. լը. 2. լթ. 4. խը. 10. ղե. 1. ղէ. 1. ճխ։ Բայց թուի թէ աստ նորութիւն յաւէտ հայի ՚ի նոր զուարճութի սրտի քան ՚ի նիւթ բանիցն. ըստ որոյ կամի ասել. ՚ի նորոգումն ուրախութն սրտի իմոյ օրհնեցից զՏր. և այն իմ օրհնութի համարեսցի առաջի նր իբր նոր օրհնութիւն։ Եւ առ ՚ի ցուցանել՝ թէ արժան է հանապազ օրհնել այսմ՝ յարէ զկնի, և ասէ։

16. Տէր մեծ ես դու և փառաւորեալ։ Մեծութիւն

այ

ոյ մտածի երրակի. ըստ գոլոյ, ըստ գործելոյ, և ըստ տևելոյ. ըստ գոլոյ է անսահման. ըստ գործելոյ է անհաս. ըստ տևելոյ է անեզր. և այսպիսի գոլով՝ փառաւորեալ է՝ եթէ յինքեան և եթէ առ արտաքս, եւս և սքանչելի 'ի գործս. որոյ մն յաւելու ասել:

Սքանչելի են զօրութք [illegible] : Այսինքն թէ 'ի գործել քում՝ սքանչելի երևի զօրութի քո : Իսկ բառդ [illegible]՝ կարէ հայիլ յերկուս. մի՝ 'ի զօրութիւն, և մի եւս՝ 'ի գործն. ըստ առաջնոյն կամի ասել. 'ի գործելդ ոչ պակասի զօրութի քո. զի դու ինքն անսահման զօրութի ես. ըստ երկրորդին կամի ասել. ամ գործք քո կատարեալ են, և չունին պակասութի 'ի կողմանէ զօրութե քո : Իսկ զի այսպիսի է զօրութին այ, և այսպիսի գործք նր՝ մնկ հետևեցուցանէ և ասէ :

17 . Եւ եղ [illegible] [illegible] . զի [illegible] և եղեն : Ստացուածք ասելով իմանոյ զգործս այ, կամ որ նոյն է՝ զստեղծուածս նր : Ի յոյն գնի գրեալս եօղայիմ . որ նշանակէ արարած . որ է և 'ի լատ". իսկ թարգմանիչք մեր եղային ընթերցեալ՝ եդին աստ ստացուած . որպէս և յայլ բազում տեղիս . բայց քանզի արարածք եւ են ստացուածք այ 'ի ձեռն ստեղծագործութե՝ զնոյն նշանակութի 'ի մէջ բերեն :

Արդ ա՛ք ամենքին ասէ պատրաստական են քեզ ծառայելոյ . զի բանիւդ քո գոյացան . տեսցեր և եղեն : Իսկ զի մի կարծեսցի՝ թէ զայս խօսի զանզգայից և զանշնչից միայն՝ յաւոր" գնի ժողովուրդք յաւելն . * զքեզ պաշտեսցեն ամ ժողովուրդք" : Դարձուցեալ ապա յուղղութեայ զբան իւր առ աղերսանս բանին այ՝ ասէ :

Հաստատեսցես [illegible] . և [illegible] և [illegible] : Հոգ-

ւով իմացեալ լինի աստ զօրութի հրամանին այ , կամ ազդմանն առաքման նր . յոր միտ առն 'ի սաղ . լը . 6 . * բանիւ տն երկինք հաստատեցան , և հոգւով բերանոյ նր ամ զօրութիւնք նց ‖ . Իսկ ըստ այսմ կամի ասել . առաքեցեր զազդեցութի հրամանի քո կամ խոստմանս քո յորդիսն իլի . որով զօրացան նք ընդդէմ թշնամեացն : Սորա է դարձեալ հոգւով իմանալ զհոգեւորիչ զօրութիւն այ . զորմէ գիտելի է , զի այս հոգի կիր այս զօրուն այ միտածի եթէ յինքեան և եթէ 'ի գործս . աստ ըստ ձևոյն առեալ՝ հայի 'ի գործս . ըստ որոյ 'ի գործել հոգւոյն այ՝ գործի և հոգևորուն 'ի ստեղծուածս . որով ստացեալ լինին , ըստ շնչաւորեալ լինին . և շինին՝ ըստ լինելին այն ինչ՝ որ ինչ են : Իսկ եթէ բառդ հոգի այ՝ դիցի աստ ըստ այնմ որ է յինքեան՝ այսու նշանակի հոգին սբ՝ զոր առաքէ հայրն երկնաւոր 'ի բանական ստեղծուածս՝ 'ի ստանալ , այսինքն 'ի կենդանացուցանել հոգւով , կամ 'ի շինել և 'ի զարդարել շնորհօք : Իսկ զի եդ՝ թէ ասացեր և եղեն , կամելով ցուցանել՝ թէ աննահանջելի է զօրութ հրամանի նր , յարէ զկնի , Իսկ ոչ ոք է՝ որ ընդդէմ կայ կամաց քոց : Զայնիւ նշանակի աստ հրամանն այ՝ որ գոլով ամենազօր՝ ամի ազդէ . և ոչ մի ինչ կարէ ընդդէմ ելանել նմ . և առ ստուգելոյ զայս՝ յարէ զկնի , և ասէ ,

18 . Քանզի լերինք 'ի հիմանէ ընդ ջրովքն հանդերձ տատանեսցին . և վէմք առաջի երեսաց քոց իբրեւ զմոմ հալեսցին . և երկիւղածաց քոց քաւիչ լինիս դու նոցա . զի ամ պատարագ չէ 'ի հոտ անուշութեան . և ըն-չէն ճարպն քեզ յողջակէզս է :

Զլերինս 'ի մէջ բերելով՝ տայ ակնարկել 'ի

բարձ

բարձրութ զօրութէ հրամանին այ . և զվէմս յեղե-
լով՝ տայ 'ի միտ առնուլ զաստուածութի՛ նորին . և
առ ահաւոր ցուցանելոյ զայն՝ ահեղս խօսի՝ ա-
սելով :

*Քանզի լերինք 'ի հիմանէ ջրովքն հանդերձ սասանեսցին . ժե :

Դժուարին է որոշել, թէ յոր դիպուածս հային
այս բանք . առաջին հատուածն թուի թէ հայի
յայնս՝ որք եղեն 'ի լերինս սինայի . զի յիջանելն
այ՝ շարժեցան և սասանեցան հիմանք նորեանց,
և 'ի պատառել նց բղխեցին թերևս ջուրք . որ
որոյ ասէ ջրովքն հանդերձ : Կարէ հայիլ այս և
'ի պատառումն կարմիր ծովուն . որ որոյ լերամբք
խմացեալ լինին այն ջուրք՝ որք սասանեալ յերե-
սացն այ՝ հերձան 'ի հիմանէ . և կացին յաջմէ և
յահեկէ իբրև զլերինս :

Նոյնպէս և երկրորդ հատուածն կարէ հայիլ յանցս
սինայ լերին . ուր փուցէ և վէմք հալեցան : Կա-
րէ և ս հայիլ 'ի պատառումն վիմաց, որ եղև եր-
կիցս յանապատին դաւազանաւն մովսէսի . քզի
այն վէմք դրեթէ իբրև զմոմ հալեալ յահեղութէ
հրամանին այ՝ բղխեցին զջուր : Նոյն յայամ և
եթէ յայնմ՝ դիտումն բանին է՝ ոչ ասացաք՝ ցու-
ցանել զազդուութի հրամանին այ :

Խորհրդաբար՝ 'ի տարածիլ քարոզութէ աւետա-
րանին քսի՝ լերինք՝ որ իշխանք ըստ հանդերձ ջր-
ովքն՝ որ հանդերձ ժողովրդովք՝ որք օրինակին
'ի ջուրս՝ սասանեցան 'ի հիմանէ . որ թէ դարձան
յանձնումն՝ յոր իբր 'ի հիմն հաստատեալ կային :
Նոյնպէս և վէմք՝ որ խստասիրտք իբրև զմոմ հա-
լեցան . յորս և տպաւորեցաւ կնիք խորհրդոց և
շնորհաց հոգւոյն սբյ :

Դարձեալ այս բանք ցուցանեն զաստուածն վրէժ-
խնդրութեն այ ընդդէմ լեռնացելոց հպարտութ

և

և վկայեցելոց աներկիւղութ · որոց զամանս կոր-
ծանէ տր , և զամանս խորտակէ · իսկ որք դա-
տանն խնայէ նմ · զորոց խօսի ՚ի յետագայ բանսդ-
տանելով ։

Եւ երկիւղածաց նոցա տայէ լինել դանդաղ · զի տէր ա-
նուանէ նոցա ՚ի նոսա անուանութե · և ընդէն ձայրայն յող-
ջակէզն է ։ Շաղկապդ և՛ դնի աստ փոխ բառուդ-
բուկ՝ կամ սակայն · և դերանունդ նորա դնի իբր
զարդ ըստ ոճոյ եբրայեցւոց · ոչ թէ ասացելէր ·
դու տէր՝ որ ընդ եմ թշնամեաց քոց խստութ դնաս՝
երկիւղածաց քոց բարեխ լինիս , և զգոհս նց՝ թէ
և սակաւ իցեն ՚ի հաստ անուշութեն ընդունիս · և
զընդէն ձայրայն՝ որ յողջակէզ նմ է՝ ոչ արհմրհես ։
Նարոյապէս՝ ցուցանի այսու՝ թէ աղօթք երկիւ-
ղածաց թէև սակաւիկ իմն իցեն՝ ընդունելի են այ
՚ի հաստ անուշից ։ Որպէս և տմ բարեգործու-
թիւք նց , և ընդէն ձայրայն՝ որ ՚ի նմ՝ այսինքն ան-
տարբեր գործք նց՝ իբրև ողջակէզ հաճոյ են այ ։
Իսկ թէ ինքեանք որպիսի իցեն առաջի նր՝ զայն-
մանէ խօսի ՚ի յաջորդ համարն առելով ։

19 · Այլ որ երկիւղածն է՝ նա մեծ է յաւիտեան ։

Բառդ երկիւղած ըստ առման տր. գրոց նշանակէ
զայր կատարեալ · այսինքն զայնպիսի մարդ՝ որ
՚ի ձեռն որդիական երկիւղի զգուշանայ յամի
յորէնանս այ · ոչ զայլ ինչ դիտելով , բայց միայն
զհաճոյսն նր · ըստ այսմ առման ՚ի գործ ածի ՚ի տր.
գիրս և բառս արդար ։ Աստի ասէ ։

Այլ որ երկիւղածն է՝ նա մեծ է յաւիտեան ։ Մեծ ասի
երկիւղածն ըստ բազում իրաց · որ ըստ գերազնցութե ,
ըստ անդորրութե , ըստ պատուականութե , ըստ արժանա-
ւորութե , ըստ արդիւնաւորութե , և տևողութե ։
Ըստ գերազանցութե , զի գերազանցէ քան զամ որ
ինչ

իբրեւ մեծ համարեցեալ լինի յՏն̅է, որք են փառք, փափ-կութիւնք եւ ստացուածք, զորս փոքր վարկանե-լով։ Սա անդորրութ, զի ոչ վրդովի 'ի փորձու-թեանց. որպէս ոչ շարժի նաւ մեծ 'ի փոքր ալեաց։ Սա պատուականութիւն, զի երկիւղածն յաչս Ա̅յ պատուական երեւի եւ յարգոյ. եւ որ առա-ւելն է՝ հաճոյ յաչս նր̅ ։ Սա արժանաւորութիւն, զի արժանի է մեծամեծ վարձուց եւ արքայութեան երկնից։ Սա արդարութիւն. զի գործք նր̅ մեծ են առաջի նր̅ եւ ընդունելի։ Սա տեւողութիւն՝ զի յիշատակ նր̅ եւ փառք նորին մնայ յաւիտեան. վասն զի եւ ահ տեառն, թէ մեծ է նա յաւիտեան։ Օ այս ամ̅ եղեւ յուղղութեան՝ 'ի մէջ բերել եւ զպատուհաս ատելեաց ազգին իւրոյ, եւ ասէ։

20. **Վայ աղխտացն այնոցիկ, որք յարուցեալ էին 'ի վր̅ աղխտ Վերայ. եւ որ ամենեցուն խնդրեցին վրէժ 'ի նոցանէ յասպարէն դատաւորն։**

Որովհետեւ ընտրեաց ամ̅ զազգն իւր՝ լինել իւր ժողովուրդ առ 'ի ծառայել յազգէ անտի՝ պաշտ-պան լինէր նց̅. եւ պատուհասէր զյարուցեալսն 'ի վր̅ նոցին. եւ այս՝ մինչեւ 'ի ժամն յայն՝ յորում կատարեցաւ առաջադրութիւն նց̅. եւ յայնմհետէ ոչ եւս եցոյց նց̅ զայն պաշտպանութի. ուստի այս վայ առ թշնամիս՝ ոչ հայի յայժմու վիճակ հրէից, այլ յայն՝ որ էր յառաջ քն̅ զդաւաճանելն. ըստ որոյ եւ ասէ։ Վայ աղխտացն այնոցիկ՝ որք յարուցեալ էին 'ի վր̅ աղխտ Վերայ։ Ասխնքն թէ վայ է ամենեցուն ազգի եւ ժո-ղովրդեան՝ որք կամեցին յառնել 'ի վր̅ մեր 'ի նե-ղաձել զմեզ։ Որ յաւելլով զազգն եւ ատելով 'ի վր̅ աղխտ Վերայ, կամի խրատել ցուցանել զնոյն. ըստ որում պաշտպանութիւն նց̅ յազգն հայեր, եւ ոչ յայս օք կամ յայն ոք։ 'Ի մէջ բերեալ սոյս եւ զպաշտ-

զպաշտպանութիւն զայն՝ ասէ :

Այս տր ամենակալ խնդրեսցէ վրէժ 'ի նոցանէ յաւուրն դատաստանի : Շաղկապս և դնի աստ փոխել պատ_ճառական շաղկապին քէ . որպէս թէ ասէր . վայ է նց՝ զի տր ամենակալ պաշտպան լինելով մեզ խնդրեսցէ վրէժ 'ի նցէ՝ ոչ միայն 'ի ժամկի յայս_միկ , այլև յաւուրն դատաստանի : Նուաջի աս_նէ և զպատիժն ասելով :

21 . Եւ տալ հուր և զորդանան 'ի մարմինս նոցա . և լացցեն նոքա 'ի զգալ մինչև յաւիտեան :

Նոյն այն է՝ զոր քարոզեն գիրք առ հսրկ վսմ մեղաւորաց . ( Եսայի . կզ . 24 . ) * և ելցեն „ (ասէ) և տեսցեն զոսկերս մրդկան առ ի յան_„ ցուցելոց . զի որդն նց ոչ վախճանեսցի , և „ հուր նց ոչ շիջցի . և եղիցին 'ի տեսիլ ամ մարմնեղ_„ եաց ‖ . զոր և յայտնի բառիւք աւանդէ տր մեր ասելով ( մարկ . թ . 43 . և 45 . և 47 . ) * ուր որդն նց ոչ մեռանի . և հուրն ոչ շիջանի ‖ : Որդ՝ որ հասարակ է ամ մեղաւորաց՝ յուդիթ վերածէ առ թշնամիս ազգին իւր՝ ասելով :

Եւ տալ զհուր և զորդանսն 'ի մարմինս նոցա . և լացցեն նոքա 'ի զգալ մինչև յաւիտեան : Սոյն հրով զբ վրդպու_թեն եկեղեցւոյ իմացեալ լինի նախ տարրական հուր՝ տանջող մարմնոց դատապարտելոց 'ի դժոխս և կաշկանդող հոգւոց նց : Որդն իմացեալ լինի յուսահատութի չար , որ խեղդէ և տոչորէ յաւի_տեան զդատապարտեալսն : Իսկ որդամբք իմա_ցեալ լինին նախ որդունք դժոխոց՝ զի են դևք որք ոչ մեռանին . երկրդ այլև այլ պատիժք մարմնոց դատապարտելոցն . երրդ՝ խիղճն մտաց տագնա_պիչ հոգւոց , զորչափ կեան՝ յաւիտեանս յաւի_տենից : Օսուրին զգալով՝ սոքիմբք ունին ասէ

տան_

տանջիլ Թշնամիք մեր .

Իսկ զի այսմ բառդ 'ի սկզբան՝ դնի փոխկ բառիս 'ի զգածման . զի նշանակէ և զգացումն . որպէս յայտ է 'ի եօթ" և լատ" և ասոր" . զի յեօթ" դնի . 'ի զգածման . 'ի լատ" դնի , * և զգայցեն մինչև 'ի յաւիտեան ‖ . յասոր" դնի . * և զգայցեն զպարգև ցումն վն անօրէնութե մինչև յաւիտեան ‖ ։ Իսկ թէ փոխկ ՚ դնելոյ՝ ։ դնի 'ի մերումս , այդ է վն ընթրդատառութե . զի որոյ բազմ ուրեք 'ի ձե-ռագիրս մեր փոխկ դնելոյ զգալ . զգայութի , զըն ըդգալ , ըդգայութի , որպէս և յայլ բանի մի բառս . զորմէ տես 'ի բառարանի , 'ի գիրդ զ . Իսկ այս զգածումն հայինախ 'ի պատիժ զրկման . և երկրդ , 'ի պատիժ զգայութե . զի տեսեալ նոյ թէ զրկե-ցան յոյ , և մատնեցան 'ի հուր և յորդունս յանհը-նարինն ցաւ և յանբերելի տագնապ ըմբռնեալ լայցեն և կոծեսցեն . և ոչ գոյ վախճան կոծոյ նոյ մինչև յաւիտեան .

---

# Ս. Դ. Օ. Խ. Ի.

## Մանասէի Խաղաղութե .

Զայն գովման ամենայն տարաշխարհեան բերանով մանասէի , յայտարարութե ածայեն ամենակարողութե և մեծվայել-չութե .

1. Տէ ամենակալ , Աջ արդա-ռոց , Աբրահամու և Իսահակայ և Յա-կոբայ , և զաւակի նոցա արդա-րոց . ( ամենակալ Տր Աղ հրց մե մե ) .

2. * Որ արարեր զերկինս և զեր-կիր և զամ զարդ նոցա .

3. * Որ կապեցեր զծով բանիւ հրամանաւ քով . փակեցեր զանդունդս . կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով .

4. * Որ ամ իրք սարսեն և դողան յերեսաց անտի զօրութե քո .

5. * Անհնար է մեծվայելչութե

Որ փա-

փառաց զօրութեան քո . անտանելի է
բարկութիւն սպառնալեաց քոց ՚ի վեր
մեղաւորաց . անչափ և անքննելի
են ողորմութիւնք աւետեաց քոց :
6 . * Դու Տէր բարձրեալ , գթած ,
երկայնամիտ , բազմողորմ . և
զղջանաս ՚ի վերայ չարեաց մարդկան :
7 . * Դու [illegible] ապաշ_
խարութիւն [illegible] [illegible]
[illegible] , [illegible] և [illegible] ,
որք [illegible] մեղան քեզ :
8 . * Այլ եդիր ապաշխարութի
վասն իմ մեղաւորիս . զի մեղայ
առաւել քան զաւազ ծովու . և
բազմացան անօրէնութիւնք իմ ,
9 . * Ոչ եմ արժանի հայել և տե_
սանել զբարձրութիւն երկնից ՚ի
բազմանալ անօրէնութեան իմոյ :
10 . * Կորացեալ եմ ես ՚ի բեռ_
նութենէ կապանաց երկաթեաց . և
ոչ գոյ ինձ հանգիստ :
11 . * Բարկացուցի [illegible] .
և չար առաջի քո արարի . [illegible]
[illegible] գործեր . և բազմացուցի
գայթագղութիւնս :
12 . * Եւ արդ Տէր խոնարհեցու_
ցանեմ զծունր սրտի իմոյ . և
հայցեմ ՚ի քաղցրութենէ քումմէ :
13 . * Մեղայ Տէր , մեղայ . և զա_
նօրէնութիւնս իմ ես գիտեմ :
14 . * Աղաչեմ և խնդրեմ ՚ի
քէն , թո՛ղ ինձ Տէր , թո՛ղ ինձ . և
մի կորուսաներ զիս ընդ անօրէ_
նութեան իմոյ :
15 . * Մի յաւիտեան բարկանար
ինձ Տէր . և մի յիշեր զչարիս իմ .
և մի դատապարտեր զիս ընդ ի_
ջուցեալս ՚ի ներքոյ երկրի յարկս :
16 . * Զի դու ես Աստուած ապաշ_
խարողաց ես [illegible]
[illegible] [illegible] :
17 . * Կեցուսցես զիս ըստ բա_
զում ողորմութեան քում . և ես օրհ_
նեցից զքեզ զամենայն աւուրս կենաց
իմոց :
18 . * Զի քեզ Տէր օրհնեն ամենայն
զօրութիւնք երկնից . և քո են
փառք յաւիտեանս . ամէն :
( Փառք Հօր և Որդւոյ և Հոգ_
ւոյն սրբոյ . այժմ և միշտ և յա_
ւիտեանս յաւիտենից . ամէն : )

## Յաւելուած .

1 . Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն
Տէր , թո՛ղ ինձ զմեղս իմ :
2 . * Բազմողորմ Տէր , ողոր_
մեա՛ ինձ .
3 . * Ած քաւեա՛ զիս զմեղա_
ւորս :
4 . * [illegible] եմ և յոյս իմ՝
գթա՛ յիս ՚ի մեղաւորութեան ծառայս .
և ողորմեա՛ ինձ բազմամեղիս :
5 . * Ամենօրհնեալ [illegible] և
մայր լուսոյ Աստուածածին Մարիամ . բա_
րեխօսեա՛ առ Տէր վասն իմ մե_
ղաւորիս :
6 . * Ամենայն սուրբք [illegible] բարեխօ_
սեցէք առ հայր յերկինս վասն
իմ մեղաւորիս :
7 . * [illegible]
[illegible]
[illegible]
8 . * [illegible]
[illegible]
[illegible]
9 . * [illegible]
[illegible]
[illegible]
[illegible] :
10 . * [illegible]
[illegible]
[illegible] , և ողոր_
մեա՛ ինձ :

# Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր ։

## Աղօթք Մանասէի Թագաւորի ։

( կամ ը̅ ա̅ծաշնչի եղեալ 'ի վերջոյ )

Աղօթք Մանասէի արքային յուդայ , յորժամ գերեալ կալա-նաւորեալ 'ի Բաբելոն ։

Ի Թագաւորս ի̃ղի և յուդայ ժ̃է զ̃նմանէն չար գտաւ Մանասէ . որ Թ̃գ̃րեաց յամի աշխարհի 3306 . կամ 4505 ։ Երկոտասան ամաց էր 'ի Թագ̃ել իւրում . և յիսունևհինգ ամ Թագ̃եաց յեղ̃մ ։ Ա̃յլ Թէպէտ մեծամեծ չարիս գործեաց սա , գրի 'ի դ̃ Թագ . իա̃ . 3 = 16 . ուր ասի .
* դարձաւ և շինեաց ( Մանասէ ) զբարձունսն զոր
,, կործանեաց եզեկիա հայր նորա . և կանգնեաց
,, զսեղանն բահաղու . և արար անտառս . որպ̃
,, արար աքաաբ արքայ ի̃ղի . և երկիր եպագ ամ̃
,, զօրուն երկնից . և ծառայեաց նց̃ . և շինեաց
,, սեղան 'ի տանն տ̃ն , որպ̃ ասաց . յեղ̃մ եդից զա-
,, Թոռ իմ , և շինեաց սեղան ամ̃ զօրուն երկ-
,, նից յամ̃ սրահս տանն տ̃ն . և անցոյց զորդիս
,, իւր ը̅ հուր . և հմայէր , և հաւահարց լինէր .
,, և արար վհուկս և գէտս . և յաճախեաց առ-
,, նել զչար առաջի տ̃ն առ 'ի բարկացուցանելոյ
,, զնա . եդ զդրօշեալն անտառաց 'ի տանն տ̃ն .
,, ( կմ̃ որպ̃ դնի 'ի բ̃ մնաց . լգ̃ . 7 . դրօշեալ , և
,, ձուլածու , և պատկեր՝ զոր արար 'ի տանն տ̃ն )
,, ... և մոլորեցոյց Մանասէ (զազգն ի̃ղի) առնել
,, չար առաջի տ̃ն առաւել ք̃ զամ̃ ազգսն , զորս
,, ապականեաց տ̃ր յերեսաց որդւոցն ի̃ղի . . .
,, նաև զարիւն անպարտ եհեղ Մանասէ բազ̃
,, յոյժ . մինչև ելից զեղ̃մ ծայրէ 'ի ծայր . Թող

,, ըզ-

,, զմեղս իւր ( զգայթակղութիւն ) որովք մեղոյցն
,, զժողովուրդ` առնել չար առաջի Տն̃ ‖ . տես և 'ի
Բ . Մնաց . ԼԶ . 3= 9 ։ տես գիրս 'ի Նարեկն . բան.
ծա̃ ։ Յառաւելուլ նր̃ 'ի չարիս , և յխսպառ յետս
կալ յԱյ̃` * էած Տր 'ի վր̃ նց̃ զիշխանս զօրու ար_
,, քային ասորեստանեայց ( ասորդանայ ) . կա_
,, լան զնա , և կապեցին զնա կապանօք . և տա_
,, րան 'ի բաբիլոն ‖ . 'ի քսանևերկուերորդ ամի
թագաւորութե նր̃ ( . Բ . Մնաց . ԼԶ . 11 . )
Եւ յԼ Ը̃ վկայելոյ Նք գրոց` * իբրև վտանգեցաւ,
,, խնդրեաց զերեսս Տն̃ Այ̃ իւրոյ . և խոնարհե_
,, ցաւ յոյժ յերեսաց Այ̃ հարցն իւրոց . յաղօթս
,, եկաց առ նա . և լուաւ գոչման նր̃ . և դար_
,, ձոյց զնա յերուս̃ 'ի թագաւորութի իւր . և ծա_
,, նեաւ մանասէ , եթէ Տր նա է Ած . . . և 'ի
,, բաց եբարձ զա̃ծսն օտարս , և զդրօշեալսն 'ի
,, տանէ Տն̃ . և զա̃մ սեղանս` զորս շինեաց 'ի լե_
,, րինն Տն̃ ( յամորիա ) և յերուս̃ և արտաքոյ քա_
,, ղաքին . և ուղղեաց զսեղանն Տն̃ . և զոհեաց
,, 'ի վր̃ նր̃ զոհս փրկութե և օրհնութե . և ասաց
ցյուդաս` ծառայել Տն̃ Այ̃ ‖ ( . Բ . Մնաց . ԼԶ . 12 . 16 . )
Եւ յԼ թէ երբ յօրինեաց մանասէ զաղօթս իւր ,
գիտելի է . զի ոչ հաւանական երևի , 'ի շղթայսն
անդ ասաց , և զոր ասացն` գրեաց անդէն . և կի̃
'ի շղթայս գոլով ասաց , և յետ ազատելոյ անաի
'ի գիր արձանացոյց եբրայական լեզուաւ . յորմէ
թարգմանեցին յոյնք , և 'ի յունաց հայք ։ Նա_
սակոյն յայժմուս առ եբրայեցիս ոչ գտանի այդ .
որովհետև ոչ հմարել լինի բանք գրոց կի̃ բան
Ածաշունչ պատմագրաց ։ Ի յոյնս և ս ուրեք ուրեք
այլայլեալ տեսանի Ը̃ այլևայլ օրինակաց . որոց
չունիմք ինչ պէտս ։
Եւ թէ այսոք և եթէ այնոք` զայս մի ինչ յայտնի
ԼԹ առ_

տեսանեմք՝ զի սոյն այս աղօթք մանասէի՝ զարմանալի իմն ունի ազդուութիւն : Եւ զոր օրինակ սաղմոսք դաւթի և օրհնութիւնք այլոց՝ տուան արդարոց իբրև նուագ փառաւորելոյ զԱծ , սոյնպէս և այս աղօթք որ եղեն ապաշխարողաց նիւթ պաղատելոյ առ Ած , մանաւանդ յեկեղեցիս Հայոց . ուր յամ աւուրս աղուհացից բերանով քահանայից առաջի Այ տարածանի սա 'ի գիմաց ամենցն՝ 'ի խնդրել զթողութիւն մեղաց , և զքաւութիւն յանցանաց : Յաւելեալ 'ի վերջ իւրաքանչիւր համարոյ զայս բան . * ամենակալդ տէր՝ թող ըզմեղս իմ || . զի այս ասացուած ոչ է մանասէի , այլ եկեղեցւոյ մերոյ . որ և յաւել յաւարտ այսր աղօթից նաև զայլ հայցուածս առ 'ի քաջալերութիւն ոգւոյ ապաշխարողի :

Բայց գիտելի է , զի այս աղօթք մանասէի ունի զերիս մասունս . առաջինն կարգի 'ի մեծացուցանել զԱծ՝ մինչև 'ի համարն 7 . երկրորդն 'ի խոստովանիլ զմեղս՝ մինչև 'ի համարն 11 . երրորդն 'ի խնդրել զթողութիւն մեղաց՝ մինչև 'ի վերջն :

## Բ Ա Ն :

1 . Տէր ամենակալ՝ Աստուած աբրահամու , իսահակայ , յակոբայ , և զաւակի նոցա արդարոյ :

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ :

Նաւ քանի և մեծ իցէ՝ յորժամ 'ի ծովու է՝ ոչ ճանաչի՝ թէ որչափ ծանր իցէ . իսկ յորժամ հանեալ լինի պարանօք 'ի ցամաք՝ յայտնի լինի ծանրութիւն նր . զի զոր մի մարդ կարէր շարժել 'ի ծովու , տասն ոգիք ոչ կարեն դրդուեցուցանել 'ի ցամաքի : Սոյնպէս և մանասէ մինչդեռ 'ի ծովու մեղաց դեգերէր , ոչ ճանաչէր , թէ քանի ծանր-

ցեղ, իցէ մեղօք . իսկ յորժամ ձգեալ եղև կապանօք 'ի ցամաք ծվ 'ի բաբելոն , և արկաւ 'ի բանտ , զգաց զանբաւնալի ծանրութի իւր . որով և գիտաց՝ թէ այնքան աւելի են մեղք իւր քն զարութե՛ որքան մեծ է նա՝ առ որ մեղաւ . յայտնի ևս ետես՝ թէ որոյ ընդդէմ զինեցաւ , նա ինքն շարժեալ է զձեռն վրէժխնդրութե 'ի վր իւր : Ո՞ւ ո՞ ապա ունէր ապաստանիլ այնուհետև , եթէ ոչ առ նա միայն՝ ասելով :

Տէր ամենակալ : Ոչ համարձակի մնասէ 'ի սկզբան աղօթից զանձն առաջի այ տարածել իբր յանցաւոր . զի հայեցեալ յանհաւորութի նր , և յանարգութի իւր՝ վհատէր : Ոչ համարձակի ևս դիմել առ նա իբր առ հր իւր . զի հայեցեալ 'ի բարերարութի նր , և յապերախտութի իւր՝ յերեսաց նր ամաչէր : Ոչ համարձակի դրձ մատչել առ նա իբր առ ած իւր . զի հայեցեալ 'ի սրբութի նր , և յաղտեղութի հոգւոյ իւրոյ՝ վարանէր և կասկածէր . և 'ի սրտի իւրում հեծէր և ասէր . որով դիմօք երևեցայց առաջի այ՝ զոր 'ի ցասումն շարժեցի . որպիսի բանիւք մերձեցայց առ նա , յորմէ կամաւ հեռացայ . զիարդ առից 'ի բերան իմ զանուն նր , զոր անարգեցի :

Յայսպիսի խորհուրդս տագնապեալ՝ հայի նախ յայն՝ որով չարաչար մեղաւ . այն է՝ թողուլ նր զօր՝ իբրև զակար , և յարել 'ի կուռս՝ իբրև 'ի հզօրս . ապա խոնարհէր 'ի հոգի իւր՝ տր ած և իշխող ամցն խոստովանի զնա , կարդայ , և ասէ տր ամենակալ . որպ թէ ասացեալ էր . ամ արարածք իւրք իւրք քեզ ծառայելով՝ տր ինքեանց ճանաչէին զքեզ . իսկ ես ամ իրօք յամենայն ապստամբելով 'ի քէն՝ ոչ համարձակիմ ծառայ համարելով զիս ինձ տր անուանել զքեզ , այլ տր ածի , և ամենակալ՝

էու՝ քս իշխօղ և կալնօղ ամենեցուն ։ Վ՛ս զի ա՛մ ինչ
քանի՛ և անպարգ իցեն, ունիմ ինչ կալեալ լինելոյ,
քս իշխեալ լինելոյ 'ի քէն ։ իսկ ես չունիմ ինչ
բաց յանօրէն մեղաց իմոց ։ նա զի յա՛ծութենէ քո
անօրինելով՝ ոչ կարեմ և ոչ իբրև քո արարած
կարդալ զքեզ և ասել, ած իմ. այլ ած այնոցիկ,
որք քոյովք քեզ հաճոյացան ։ իսկ թէ ոյք էին նք՝
յայտ առնէ ասելով ։

Ա՛Ծ աբրահամու, իսահակայ, յակոբայ, և զաւակի նոցա
արդարոց ։ Հաստատեալ էր առ եբրայեցիս՝ կոչել
զած այսու յորջորջմամբ ։ քս է ած աբրահամու,
իսահակայ, և յակոբայ ։ և զայս ուսան 'ի նմէ
յասել նր առ մովսէս ։ * Ես եմ ած աբրահամու,
և ած իսահակայ և ած յակոբայ ‖ ։ ( Ելից ։ Գ ։
6 ։ ) Արդարև փառք մեծ էր աբրահամու, իսա-
հակայ և յակոբայ այս յորջորջումն, որով գրեթէ
պարծէր ած՝ կոչիլ ած այնպիսեաց ։ բայց որչափ
փառք էր նց այս, այնչափ նախատինք համարիւր
մանաւանդ յոչ համարձակիլ նր՝ իւր կոչել զած ։
Սակայն նա զայս ես յանձն առնուլ ոչ հրաժարի ։
Այլ առ առաւել ցուցանելոյ զնախատելի գոլ
իւր՝ յաւելու և զորդիս նց ասելով ։ և զաւակի
նոցա արդարոց ։ ով թէ ասէր ։ դու տր՝ որ ամե-
նակալդ ես՝ դու ինքն կոչեցար և կոչիս և ես ած
ոչ միայն աբրահամու, իսահակայ և յակոբայ,
այլ և որդւոց նց արդարոց ։ այո ես եւս յորդւոց
նց եմ, և ծնունդ եղեկեայ քում հաւատարիմ
ծառայի ։ բայց անօրէնութիւք իմ ոչ թողուն զիս՝
իմ խոստովանիլ զածդ նց ։ և սակայն ճանաչե-
լով զքեզ ած ճշմարիտ, զքեզ խոստովանիմ տէր
արարօղ, տէր տր, և տէր խնամօղ ։ ով և դաւա-
նի 'ի յաջորդ համարսդ՝ որով և քաջալերի ։
Այլ աստ գիտելի է, զի ը որում եդաք 'ի բր-

կշռան, 'ի վերջ այսր համարոյ, նոյնպէս և 'ի վերջ իւրաքանչիւր համարոյ այսորիկ աղօթից յաւել ուր եկեղեցի և զայլ հատուած մաղթողական բանից. որ է այս ։

ԱՄԵՆԱԿԱԼ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԻՆՁ ։ Զայս եդ եկեղեցի 'ի բերանոյ ապաշխարողի. զի 'ի մատչիլ նորա առ Աստուած այսու աղօթիւք՝ խնդրեսցէ ըստ Մանասէի գտանել զընդունելութիւն ապաշխարութեան թողութիւն մեղաց. թերևս ասելով. դու տէր՝ որ ոչ մերժեցեր զդարձ Մանասէի, այլ թողեր նմա զմեղս նորա, ընկալ և զիմս ապաշխարութիւն, և թող զամենայն զմեղս իմ, որ ըստ նմին տէր ամենակալ զքեզ դաւանիմ ։

Այլ թէ յորժամ երևեր տէր ամենակալ լինելոյն Աստուծոյ, յայտ առնէ Մանասէ 'ի յաջորդ համարսդ՝ 'ի բազում գլխոց. նախ՝ յարարչութենէ նորա. երկրորդ՝ յիշխանութենէ նորա. երրորդ՝ յահեղութենէ նորա. չորրորդ՝ 'ի մեծվայելչութենէ նորա. հինգերորդ՝ յարդար վրէժխնդրութենէ նորա ։ Ըստ առաջնոյն ասէ ։

2. ՈՐ ԱՐԱՐԵՐ ԶԵՐԿԻՆՍ ԵՒ ԶԵՐԿԻՐ ԵՒ ԶԱՄԵՆԱՅՆ ԶԱՐԴ ՆՈՑԱ ։

Մովսէս մարգարէ 'ի խօսելն զարարչութենէ, նախ ասէ. *'ի սկզբանէ արար Աստուած զերկինս և զերկիր‖. և զայս եդեալ՝ սկիզբն առնէ պատմել զզարդուցն. ըստ սմին դնէ և աստ Մանասէ՝ ասելով ։ ՈՐ ԱՐԱՐԵՐ ԶԵՐԿԻՆՍ ԵՒ ԶԵՐԿԻՐ ԵՒ ԶԱՄԵՆԱՅՆ ԶԱՐԴ ՆՈՑԱ ։ Կամի ասել. Ճշմարտապէս գիտեմ, և անկեղծ խոստովանիմ, զի դու ես տէր ամենակալ. վասն զի դու արարեր զերկինս և զերկիր, և զամենայն որ 'ի նոսա. և զայս այսպէս ճանաչելով՝ ափշիմ և հիանամ, սարսափիմ և դողամ՝ թէ զիարդ ժպրհեցայ ընդդէմ այդպիսի արարչիդ մեղանչել. և սակայն որովհետև այդպիսի ամենակարող արարիչ ես ,

ես, որ միով բանիւ գոյացուցեր զայս ամ, կա-
րող ես և զիս միով բանիւ նորոգ արարչագործել,
եթէ ոչ իբրև զերկին՝ գէթ իբրև զերկիր, և
զարդարել ևս պարգևօք զօրութն քո, ոպ զար-
դարեցեր զերկիր և զերկինս ։

Զորս են յերկինս և յերկրի՝ կոչէ մանաւանդ
զարդ նց ․ որովհետև առաջի առնել զխոնարհութի
իւր ․ իբրև թէ ասէր ․ զոր ինչ արարեր որ յերկինս
և յերկրի՝ ամքն զարդ եղեն նց ․ Ըստ որս և ինձ
պարտ էր զարդ լինել նոցին ․ բայց անօրէնութիք
իմ եղծին զզարդ պտկն իմ, և արարին զիս նա-
խատինք երկնից և տգեղութն երկրի ։ Եւ դրձլ
զոր ինչ արարեր անձին իմոյ, զարդքն էին հոգւոյս
իբր երկնի, և զարդք մարմնոյս իբր երկրի ․ և
սակայն ես ինքն յապականութն դարձուցի զամ ․
և այժմ ակն ունիմ նորոգութես յամենաբաւակն
ձեռաց քոց ։ Խօսելով ապա ընդ երկրդին՝ ասէ ։

3 · Որ շաղեցեր զհող բանիւ հրամանի քո · շնչեցեր
զշնորհս · նկարեցեր պատկեր և հաստատեցեալ ա-
նուանք հող սրբով ։

Այս այն է՝ զոր ասաց ած ցյոբ · (ԼԸ · 8 ·) * փա-
„ կեցի զծով դրամբք ․ ․ ․ եդի նմա սահմանս,
„ եդեալ փականս և դրունս ․ ասացի ցայդ վայր
„ եկեսցես ․ և այլ մի անցանիցես ․ այլ այդրէն
„ 'ի քեզ խորտակեսցին ալիք քո ‖ ։ Այս կապ
ծովու և փականք խորոց է այն, զի ած բարձր
գործելով զերկիրս քան զծով, և զջրոյ բնութն լու-
ծական ստեղծելով՝ արար՝ զի ծով յինքեան ամ-
փոփեալ մնասցէ՝ շուրջ պատեալ 'ի ցամաքէ ․ ո-
րով և խորք ծովու, ոպ անդունդք՝ իբր փականօք
ամրացեալ կայցեն 'ի հրամանէ իշխանութն նր ․
վասն որոյ ասէ ։

Որ չաղեցեր զծով բանիւ հրամանի քո . փակեցեր զխորս :
Կամի ասել . որովհետեւ դու ստեղծեր զծով եւ զանդունդս ծովու , դու միայն իշխես նմա . եւ իշխանութի քո այդ ցուցանի այսու , զի միայն հրամայելովդ կապեցեր զայն յամ կողմանց . եւ զանդունդս ծովու իբրեւ զջրհորս շրջափակեցեր :

Զայս իշխանութի առաւել ես կամելով սքանչելի ցուցանել՝ յարէ զկնի եւ ասէ :

Կնքեցեր ահաւոր եւ փառաւորեալ անուամբ քով սրբով :
Յասելն 'ի վերոյ՝ կապեցեր , որոշեաց զծով . եւ յասելն փակեցեր , եդ առաջի զխորս . իսկ յասելն աստ կնքեցեր՝ որոշակի ինչ ոչ դնէ . որով ցուցանէ՝ թէ այս կնքելս հայի յամ էս :

Զօրդ կնքելն յերիս կարգի . մի՝ 'ի տպաւորել զիմն յայլ ինչ . որպ 'ի հարկանել զփորագրեալ մատանի 'ի վր մոմոյ՝ տպաւորի 'ի մոմն օրինակ փորագրեալ կայ 'ի նմ : Երկր՝ 'ի ցուցանել զհաստատութի բանից . որպ լինի 'ի գիրս . կմ 'ի յայտնել զորոշումն իրիք . որպ լինի յանօթս եւ յայլ իրս : Երրդ՝ 'ի վերջ տալ իմիք եւ 'ի փակել՝ որպ լինի 'ի ծրարս , 'ի քսակս , յարկեղս եւ . եւ ըստ այսմ բառդ կնքել՝ երբեմն 'ի գործ ածի փոխ վերջ տալոյ՝ 'ի ցուցանել զաւարտումն իրին . յոր մտ փոխ ասելոյ , աւարտեաց զգործն , մարթ է այլաբանութբ իմն ասել՝ կնքեաց զգործն . ըստ երիցս ըստ այսորիկ դնի աստ բայդ կնքեցեր :

Ըստ առաջնոյն բառս անուն՝ առեալ լինի աստ փոխ զօրութե անուանն այ . զի որպ յասելն՝ անուամբ իւն արար , կմ յանուն այ կենդանւոյ գործեաց , բառդ անուն՝ նշանակէ զզօրութի անուանն այ , սոյնպ եւ աստ յասելն * կնքեցեր ահաւոր եւ փառաւորեալ անուամբ քով սրբով ‖ , բառդ անուն՝ ըստ առաջին նշանակութե կնքել բային՝ դնի փոխ

զօ-

զօրութե անուանն նր . զի որում տպաւորեալ կայ
այն զօրութի յամ էակս 'ի պահել զնոսին յէութե
և 'ի գոյութե իւրեանց : Նաև յայս միտ կոչէ զայն
անուանր . 'ի ցուցանել՝ թէ ամ էակք ամենեքին զի
կարգադրութե զօրութեն այ կան , եթէ 'ի գոլն և
եթէ 'ի գործելն . ոչ թէ սարսելով 'ի նմանէ՝
ոչ կարել նց այլազգ գոլ և գործել. որում կամի
հետևեցուցանել , թէ ես միայն անսասան գտայ :
Ըստ երկրդին գիտելի է , զի ամ էակք կրեն յին-
քեանս զանունն այ իբրև զկնիք . որովհետև յայ
են , և յայ պահին , և այ ասին . և այսու ան-
ուամբ , որով ասին լինիլ այ , հաստատի թէ չեն
այլոց , այլ այնմ՝ որոյ անունն է որէն , կմ ըստ
եբրայեցւոց եօվա . որով և հաչակեն զփառս ա-
նուան նր . յոր միտ ջատագովեալ կոչէ զայն . և ոչ-
բայ՝ թէ զկարգ ինքն կամակար յետս եկաց 'ի
լինելոյ այ :

Ըստ երրդին գիտելի է , զի ած տուեր է ամ էիցս
որք են յերկինս և յերկրի , 'ի ծովու և 'ի ցամաքի ,
զվերջին գոլ տեսակի իւրեանց՝ պարագրելով զնս
յայս ինչ և յայն ինչ գոլ . զր յայս ինչ ծառ , յայն
ինչ կենդանի ևա . և բովանդակեալ է զամ տե-
սակս գոլոյ , մինչև ոչ ևս առնել զայլ նոր տե-
սակս . զի որոյ ասի . * հանգեաւ ած յամ գոր-
ծոց իւրոց ‖ . սմին իրի կնքեալ և պարագրեալ
ասին անուամբն այ՝ այսպիսի լինիլ և այսքան .
որոյ ազգաւ և անուն նր ասի աբ լինիլ 'ի նս ,
զի ամենևին կատարեալ և կատարիչ ամի . յորմէ
վրիպեալ տեսանէր զինքն մանասէ : Նաև վն ա-
նուանն այ և վն աղաւորութե նր , և վն փառաւո-
րեն գոլոյ նորին , նոյնպէս և վն նր. լինելոյն՝ տես
'ի մեկնութե սաղմոսին , հայելով 'ի ցանկ նորին :
Օ այսոսիկ 'ի մէջ բերելով մանաւանդ գիտէ ցու-

ցանել նախ, թէ մեծ եղև անօրէնութիւն իւր . որովհետև ընդդէմ այսպիսի ամենատեառն մեղաւ . դիտէ ցուցանել երկրորդ՝ թէ որովհետև այսպիսի է նա իշխող ամենայնի, կարող է իշխել և ինքեան, որպէս առնել իւր և զինքն, և իբր բարի տէր տիրել, և ոչ ՚ի բաց մերժել . բայց հայելով և յահեղութիւն զօրութեան նորա՝ սարսի . որում և տայ օրինակ ՚ի յաջորդ համարն :

4 . Որ ամենայն ինչ սարսէ և դողայ յերեսաց անճառ զօրութեան քո :

Սարսիլ և դողալ գործք են երկիւղի . և դնին փոխանակ սաստկութեան նորին . զի որում յաւելուլ երկիւղի՝ ՚ի ներքս ամփոփելով ջերմութիւն արեանն՝ սկսանի մարդ արտաքուստ դողալ, և երբեմն սարսիլ, որ է ուժգին դողալ . յորմէ սովորութիւն եղև ճարտասանից՝ փոխանակ ասելոյ երկեաւ յոյժ՝ ասել փոխանունութեան ձևով, դողացաւ, կամ սարսեցաւ . որպէս է տեսանել և ՚ի շարականս մեր . ուր ասի . * դողացաւ թշնամին || : Սոյն այս ընծայի և անզգայից ևս . զի որում և նոքա թէպէտ և չունին զկիրս երկիւղի, բայց ունելով զգործ նորին՝ որպէս զդողալն, փոխանակ ասելոյ զնոյն՝ թէ երկնչին, ասեմք, դողան, կամ սարսին : ՚Ի սոյն ակնարկէ և առաջիկայ բանդ՝ զոր ասէ :

Որ ամենայն ինչ սարսէ և դողայ յերեսաց անճառ զօրութեան քո : Այս բան ոչ միայն ՚ի բանաւորս հայի, այլ և յանբանս և յանզգայ արարածս . իսկ սարսիլ ամենեցուն յերեսացն Աստուծոյ՝ է ցուցանել զահաւորութիւն նորա՝ չիշխելով բնաւ ընդդէմ ելանել հրամանի նորուն, որպէս թէ երկնչելով ՚ի նմանէ . և ըստ այսմ կամի ասել . ամենայն արարածք, եթէ բանաւորք և եթէ անբանք, եթէ զգայունք և եթէ անզգայք՝ սարսեն դողան յահաւորութենէ զօրութեան քո . իսկ ես ոչ

միայն

միայն ոչ դողացայ յահէ քումմէ, այլ և բնաւ ոչ երկեայ. մանաւանդ թէ ընդդէմ ես զինեցայ, և ապստամբ գտայ:

Քննել արժան է, զի ոչ ասէ պարզ յահէ զօրութեան քո, այլ յերեսաց ահի զօրութեան քո. և այս ես թէպէտ զնոյն նշանակէ ըստ ոճոյ եբրայեցւոց, բայց զայս այսպէս դնելով՝ լռելեայն իմն գիտէ սաստիկ ցուցանել զմեծութիւն անզգամութեան իւրոյ. զի թէ 'ի մէջ մարդկան երեսք յերեսաց ամաչեն և պատկառեն, քանի՛ ես պարտ է մարդոյ ամաչել յերեսաց ահաւոր զօրութեան Աստուծոյ, և երկնչել 'ի նմանէ. մանաւանդ զի ըստ ահաւորութեան նորա մեծ է և վայելչութիւն փառաց նորա, ըստ նմին և վրէժխնդրութիւն նորա. զորոց խօսի 'ի յաջորդ համարն ըստ չորրորդին, և ըստ հինգերորդին՝ ասելով:

5. ԱՆԲԱՒ Է ՄԵԾԱՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՑ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔՈ. ՍԱՍՏԻԿ Է ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՊԱՌՆԱԼԵԱՑ ՔՈՑ 'Ի ՎԵՐԱՅ ՄԵՂԱՒՈՐԱՑ. ԱՆՉԱՓ ԵՒ ԱՆՔՆՆԵԼԻ ԵՆ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՔ ԱՒԵՏԵԱՑ ՔՈՑ:

Մեծվայելչութիւն Աստուծոյ է նոյն իսկ Աստուածութիւն նորա յանհասանելի փառս ինքնութեան իւրոյ. և որչափ մեծ է վայելչութիւն նորա, այնչափ սաստիկ է և բարկութիւն նորին, այն է վրէժխնդրութիւն նորա. 'ի սոսա հայելով՝ պատկառանօք իմն առաջի դնէ զբանն իւր և ասէ:

ԱՆԲԱՒ Է ՄԵԾԱՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՑ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔՈ. ՍԱՍՏԻԿ Է ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՊԱՌՆԱԼԵԱՑ ՔՈՑ 'Ի ՎԵՐԱՅ ՄԵՂԱՒՈՐԱՑ: Անբաւ ասելով՝ տայ իմանալ զանսահմանութիւն և զանճառութիւն մեծվայելչութեան Աստուծոյ. և զի վայելչութիւն իւրն 'ի փառսն փայլի, վասն յաւելու ասել. ՓԱՌԱՑ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՔՈ: Զայս եդեալ՝ հայի և 'ի բարկութիւն նորա, և կոչէ զայն ՍԱՍՏԻԿ: Բայց բարկութիւն ասելով ոչ է պարտ իմանալ զկիրս բարկութեան,

այլ

այլ զվրէժխնդրութի արդարութե․ և յաւելլով զբաւդ սպառնալեաց՝ ցուցանէ զներգործութի այնր վրէժխնդրութե :

Օ սովին այսու կարգաւ յառաջ բերելով՝ կամի ասել․ ոչ յանբաւ վայելչութե փառաց սրբութե քո պատկառեցայ, և ոչ ՚ի սաստիկ սպառնալեաց վրէժխնդրութե քո երկեայ․ այլ յամի անսաստ գոսայ, չարաչար յանդգնելով ընդդէմ հրամանաց քոց․ և դու այսու ամի ոչ սուզեր զիս յանդունդս դժոխոց․ և սովին երկայնմըտութե յայտնի ցուցեր՝ թէ քանի՛ մեծ է և ողորմութի քո․ և առ այս յարէ և ասէ :

Անչափք և անքննին են ողորմութիւնք առաւելեալ քոյ : Անչափ ասի ողորմութին ած՝ ոչ միայն յինքեան, այլ և ՚ի գործս իւր՝ կրկին օրինակաւ․ մի՝ յաձախ ողորմելով՝ յամի յանբաւս ցանբաւս․ իբր զի որքանիցս ողորմի՝ այնքանիցս բարձր և անըսպառ ցուցանի ողորմութի նր․ և մի ևս՝ անբաւութե չարեաց ներելով ամի և յամի․ իբր զի քանի՛ և բազում իցեն չարիք, և քանի՛ ևս մեծ, ողորմութի նր գերազանցէ զամ անչափապէս :

Սոյնպէս անքննին ասի նոյն ողորմութի ած՝ ոչ միայն յինքեան վս անսահման գոլոյն, այլ և ՚ի գործս իւր ըս երկուց․ մի՝ ըս անհասանելի եղանակին․ որով ՚ի վեր քան զհասողութի մեր ողորմի՝ որոց ողորմի․ և մի ևս՝ ըստ ներհակ երևելոյ մեզ․ քանզի յետ գիտելոյ մեր՝ թէ * եկեսցէ ժամ զի լցցի չափ մեղաց անօրինին, և չափ շնորհացն ած առ նա, տեսանեմք՝ զի ՚ի դատանաւ նր առ ած՝ ողորմութի նր ներհակ այսր ճանաչման հնարաւորէ զելս թողութե․ որպ և խոստացեալ է ՚ի ձեռն ծառայից իւրոց, և որոշակի ևս ՚ի ձեռն եզեկիէլի մարգարէի յասելն․ եթէ

* դարձցի (անօրէնն) 'ի մեղաց իւրոց , և արա-
,, ցէ իրաւունս և զարդարութի ... ամ̃ մեղք իւր՝
,, զոր մեղաւ , մի՛ յիշեսցին ‖ . (Եզեկ . լգ . 14 . և 19) :
Օ այսպիսի խոստմունս ո՞չ աւետիս անուանէ
մեղաւորաց . որով և ինքն քաջալերս առնու ,
և ասէ . գիտեմ Տր՝ զի սաստիկ է բարկութի քո
'ի վ͞ր մեղաւորաց . գիտեմ ես՝ զի մեղք իմ ան-
ցեալ են ը͞ն չափ . և զայսոսիկ գիտելով՝ զիա՛րդ
կարեմ ակնունիլ թողութի գտանելոյ և փրկութե
ժամանելոյ . մանաւանդ զի և վճիռ դատապար-
տութե իմոյ արդէն հատեալ տեսանի 'ի վ͞ր իմ .
և սակայն որովհետև անչափ և անքննինս է ողոր-
մութի քո , որով ետուր մեղաւորաց զաւետիս
փրկութե՝ յայդ ողորմութի քո ապաւինիմ . եթէ
անը͞նդունակ ես իցեմ , անքննութի նորին կարէ
ը͞նդունակ առնել զիս : Եթէ ը͞նդունակ եղելոց ողոր-
միս՝ որչափ և բազում իցեն , սոսկ անչափութի
ողորմութեդ յայտնի . իսկ եթէ այսպիսումս ո-
ղորմեսցիս՝ անքննութի նորին քարոզի : Եւ զի
յառնել քո զայս՝ կրկին հանդիսացի մեծութի
ողորմութե քո . զի ո͞պ դու ինքն բարկութբ զս-
պառնալիս եդեր մեղաւորաց 'ի դատապարտել ,
սոյնպէս դու ինքն ողորմութբ զաւետիս ետուր նց
'ի քաւել և 'ի փրկել . և դու ինքնդ՝ որ զայսո-
սիկ յայտնեցեր մեզ , նոյն ինքնդ ցուցեր՝ թէ
առաւել կամիս ողորմիլ մեղաւորաց քան դատապար-
տել զնս . յասելդ . * ոչ կամիմ զմահ ամպարշ-
,, տին , որպէս զդառնալ ամպարշտին 'ի չար
,, ճանապարհէ իւրմէ և կեալ ‖ . (Եզեկ . լգ .
11) . այլ արդ զայսպիսի աւետիս փրկութե խոս-
տանալով՝ մի թէ խաբել կամեցար զմեղաւորս .
կամ թէ սոսկ ասել հաճեցար , և առնել ո՛չ
յօժարեցար . եթէ առնել ոչ կամէիր , և ոչ
իսկ

իսկ ասել հաճելի : Զայսպիսիս խորհէր մանա-
սէ 'ի մտի, և թղ այսոցիկ խօսէր. բայց քղի մե-
ծութեան և բազմութեան մեղաց իւրոց ձգէր զնա 'ի
յուսահատութիւն, մատչի միւսանգամ առ ողոր-
մութիւն Տյ, և ասէ :

6. Դու Տէր բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազում-
ողորմ. և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան :

Այս այն է՝ զոր ասաց մովսէս. (ելից. լդ. 6).
* Տէր Տծ գթած և ողորմած, երկայնամիտ և
,, բազումողորմ, և ճշմարիտ, որ պահէ զար-
,, դարութիւն, և առնէ զողորմութիւն 'ի հազար ազ-
,, գըս. բառնայ զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս
,, և զմեղս || : Սոյն այս կրկնի և 'ի սաղ. ճխդ.
8 : Իսկ աստ յաւելեալ լինի և բառդ բարձ-
րեալ՝ յասելն :

Դու Տէր բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ. և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան : Կամի ասել. այո՛ Տէր, այո՛ բարձրեալ ես դու և ահաւոր, և ո՛ կարէ կալ առաջի քո, մանաւանդ եթէ իցէ մեղաւոր. քանի՞ ապա ես, որ ընկղմեալ եմ յանօրէնութիւնս. բայց խոստովանիմ ես՝ զի յանբաւս գթած ես և ողորմած, երկայնամիտ և բազումողորմ. մինչ զի 'ի սպառնալիս 'ի վր մեղաւորաց՝ ոչ այնչափ 'ի մեղս նց հայիս, որչափ յողորմութիւն քո. որով և զղջանաս չածել 'ի վր նց զսպառնացեալ չարիսն. և յայս իսկ սահմանեալ ես ապաշխարութիւն կենաց : Եւ զայս կամելով 'ի մասնաւորի ցուցանել, յարէ զկնի :

7. Դու Տծ ոչ եդիր ապաշխարութիւն վասն արդարոց աբրահամու, իսահակայ և յակոբայ, որք ոչ մե-
ղան քեզ :

Ար-

Արդարութիւն աբրահամու, իսահակայ և յակոբայ վկայեալ է յԱստուծոյ 'ի սուրբ գիրս, նոյնպէս և անմեղութիւն նոցա. և զի ապաշխարութիւնն է 'ի վերայ մեղաց, և ոչ 'ի վերայ արդարութեան, վասն այնորիկ ասէ ։

Դու Աստուած ոչ եդիր ապաշխարութիւն վասն արդարոց Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ ։

Ասացեալ արդար՝ առանձինն առեալ՝ նշանակէ զայնպիսի ոք, որ տայ իւրաքանչիւր ումեք զիւրն. բայց 'ի սուրբ գիրս յորժամ վասն գովութեան մարդոյ առանձինն դնի, որպէս և աստ, 'ի գործ ածի 'ի նշանակել զայն՝ որ կատարեալն է յառաքինութիւնս ըստ կշռոյ արդարութեան՝ եթէ առ Աստուած, եթէ առ ընկերն, և եթէ առ ինքն ։ Առ Աստուած, ճանաչելով զնա, և յամենայն սրտէ սիրելով, և զհաճոյս նորա կատարելով ։ Առ ընկերն՝ կամելով նմա զբարի և ոչ զչար՝ ոչ խորհրդով, ոչ բանիւ, և ոչ գործով ։ Առ ինքն՝ սուրբ պահելով զանձն 'ի մեղաց. և յայս միտ դնի աստ բառդ արդար ։

Իսկ բառիւդ ապաշխարութիւն՝ նշանակի նախ դարձումն 'ի մեղաց հանդերձ զղջմամբ և առաջադրութեամբ՝ առ 'ի գտանել յԱստուծոյ զթողութիւն. նշանակի երկրորդ պատիժն ապաշխարութեան, զոր Աստուած առաքէ 'ի վերայ մարդոյ. և զայն՝ կամ վասն այնորիկ՝ զի ապաշխարեալ է, որպէս արար դաւիթ. և կամ վասն այնորիկ՝ զի ապաշխարեսցէ. ըստ այսոցիկ դնի աստ յերկուս համարսդ ևս բառդ ապաշխարութիւն. ըստ որոյ կամի ասել. որովհետև արդար էին աբրահամ, իսահակ և յակոբ, և ոչ մեղան ընդդէմ քո, դու որ տէրդ էիր այնպիսի արդարոց, ոչ եդիր նոցա ապաշխարութիւն, այլ պատիւ և պարծանս առ 'ի վարձ արդարութեան նոցա. իսկ թէ որոց եդ զապաշխարութիւն, յայտ առնէ ասելով ։

8. Դու եդիր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս, զի

մե-

Մեղայ առաւել քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ :

Աստանօր սկիզբն առնէ Մանասէ երկրորդ մասին աղօթից իւրոց. որով խոստովանի զմեղս իւր առաջի այ̃, եւ նախ ասէ.

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս : Ըստ կարգի նախընթացոյ բանիցդ պարտ էր դնել. այլ եդիր ապաշխարութիւն վս̃ մեղաւորաց. զի յետ ասելոյ. ոչ եդեր ապաշխարութիւն վս̃ արդարոց, ը̃ պատշաճի հետեւէր ասել, այլ վս̃ մեղաւորաց. բայց ոչ դնէ այսպէս, այլ՝ վասն իմ մեղաւորիս. եւ պատճառն է, զի յայսպիսի զրոյցս յորժամ գլուխն յիշի բազմաց, յիշին եւ նք̃ որք են ը̃ նմ. ը̃ որոյ եւ աստ ՚ի յիշել Մանասէի զինքն միայն եւ ոչ զայլ մեղաւորս, ասելն իսկ խոստովանի զինքն լինել գլուխ մեղաւորաց, եւ չար ք̃ զա̃մ չարս. եւ ը̃ իւրեւ տայ իմանալ նաեւ զայլ մեղաւորս. եւ կամի ասել. եթէ վս̃ մեղաւորաց եդեր ապաշխարութիւն, քանզի ես վս̃ իմ մեղաւորիս, որ չար գտայ ք̃ զա̃մ մեղաւորս. ապաքէն առաւել պիտոյ է՝ դեղ դարմանի մատուցանել ծանր հիւանդի իբր առաւել կարօտի՝ ք̃ այլոց. եւ ՚ի լինել այսր՝ մեծասցին եւ փառք ողորմութեան քո : Զի որպ̃ առաւել մեծ համարի ճարտարութիւն բժշկի յառողջութիւն յուսահատելի հիւանդի քան այլոց հիւանդաց, սոյնպ̃ առաւել մեծ երեւի ողորմութիւն այ̃ յապաշխարութիւն յուսահատելի մեղաւորի՝ ք̃ այլոց մեղաւորաց : Իսկ թէ յիրաւի ք̃ զա̃մ մեղաւորս չար ճանաչէր զինքն Մանասէ, յայտ առնէ ՚ի յաջորդ բանդ, ասելով :

Զի մեղայ առաւել քան զաւազ ծովու. եւ բազմացան անօրէնութիւնք իմ : Քան զաւազ ասելով՝ ոչ ցուցանէ զորոշումն թուոյ մեղաց, այլ զառաւելութիւն նոցին

յին է բազմութեան ․ զոր և բացատրէ 'ի յարելն զկնի՝ թէ բազմացան անօրէնութիւնք իմ ․ ոչ թէ ասէր ․ եթէ հնար էր թուել զմեղս իմ՝ բազմութիւն նոցա անցանէր քան զբազմութիւն աւազոյ՝ որ 'ի ծովու ․ զի յոյժ բազում են ․ զորս եթէ ծածկել կամիցիմ, նոքին փութան ծածկել զիս և ընկղմել ․ իսկ եթէ յայտնել կամիցիմ, յամօթոյ նոցին պաշարիմ և շուարիմ ։ Յայսմ տմէ յանհնարին պատկառանս յափշտակեալ մանասէի՝ առաջի առնէ զանարժանութիւն անձին իւրոյ յամե և յամ կողմանց՝ ասելով ։

9 ․ Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւն երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ ։

Որչափ խոնարհեցաւ մանասէ 'ի ճանաչել զանօրէնութիւն իւր, այնչափ դերամբարձ 'ի վեր ետես զմեծափայլելութիւն այ ․ և քանզի աթոռ փառացն այ է երկինք՝ զայն ևս բարձր տեսանելով՝ ոչ համարձակէր զնոյն նշմարել ․ և եթէ յօժարէր ևս, բազմութիւն անօրէնութեանցն ծանրանալով 'ի վր նր՝ յերկիր տապալէր զնա, և նուաճէր զգլուխ նր ․ մինչև ոչ ևս կարել նմա ամբառնալ զաչս իւր 'ի նոյն ․ սմին իրի ասէ ։
Չեմ արժանի հայել և տեսանել զբարձրութիւն երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ ։ Կամի ասել ․ արարածք այ եթէ բանաւորք և եթէ անբանք համարձակ ամբառնան զաչս իւրեանց յերկինս ․ Ես միայն անարժան գտայ հայելոյ 'ի նոյն վս բազմութեան անօրէնութեան իմոյ ։ Այս բազմութիւն անօրէնութեան մանասէի ոչ միայն ըստ թուոյն է մտածելի, այլ և ըստ տեսակին ․ իբր զի ոչ միայն իւրաքանչիւր մեղք նր բազում եղեն, այլ և բազմազգի և բազմատեսակ ․ յորոց իսպառ ընկճեցաւ ․

ցաւ․ որ է տեսանել 'ի յաջորդ բանսդ՝ զոր ասէ ։

10․ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԵՄ ԵՍ 'Ի ԲԱՆՏՈՒՄ ԿԱՊԱՆԱՑ ԵՐԿԱԹԵԱՑ․ ԵՒ ՈՉ ԳՈՅ ԻՆՁ ՀԱՆԳԻՍՏ ։

Որպ̃ յայտ է 'ի գրելոց անտի՝ զորս եդաք 'ի սկզբան, տարրդան արքայն տարբեստանեայց կալեալ զմանասէ՝ եած կապանօք 'ի բաբելոն․ և մանասէի տեսեալ զինքն 'ի կապանս շղթայից ծանրացեալ, 'ի կապանաց անտի ծանեաւ զծանրութիւն կապանաց մեղաց իւրոց, յորս չարաչար կապեալ էր հոգի նր̃․ յայս ակնարկելով ասէ ։ Կորուսեալ եմ ես 'ի բանտումն կապանաց երկաթեաց․ (կամ երկաթից)․ և ոչ գոյ ինձ հանգիստ ։ Այս կապանք նիւթական առեալ՝ շղթայք էին երկաթիք, յորս կապեցաւ մանասէ ։ Առ նախնիս սովորութիւն էր զթագաւորս գերեալս կապել 'ի շղթայս արծաթիս, երբեմն և յոսկիս․ իսկ մանասէին էին շղթայք երկաթիք․ ըստ որում և ասէ․ կապանաց երկաթեաց․ ևս և էին ոք̃ ծանր․ ը̃ որովք հեծէր․ վ̃այ ասէ՝ թէ կորուսեալ եմ ես․ և զի ցուցցէ թէ խստագոյնս կապեալ էր 'ի նոսին՝ յաւելու և զբանտն կապանացն․ որպ̃ թէ ասէր․ ընկղմեալ և 'ի կոր կորուսեալ եմ 'ի ծանր և 'ի խիստ շղթայս յայս երկաթեայս․ և տոչորիմ 'ի նոսին ։ Ոչ արծաթի են, զի գոնէ տեսութ̃ նոցին մխիթարեցայց․ ոչ թեթև, զի փոքր մի ափոփեցայց․ ոչ թոյլ՝ զի առ սակաւ մի կարացից ը̃ հանգչել․ յայսպիսի շղթայս կաշկանդեալ գոլով՝ բնաւ երբեք հանգիստ ինչ ոչ գտանեմ ։

Իսկ տեսականապ̃ առեալ՝ այսու կապանօք նշանակի կապանք մեղաց․ յորս որպ̃ ասացի՝ կապեալ էր հոգի մանասէի, և տագնապէր 'ի նմին․ և կոր 'ի գլուխ լեալ՝ ոչ իշխէր 'ի վեր ամբառ-

նաւ զաչս ։ Յանձկութիւն սատի կապանաց ոչ գոյ ինձ ասէ՝ ոչ հանգիստ ՚ի խղճէ մտաց, ոչ խաղաղութի ՚ի դայթակղութէ տարաց, և ոչ անդորրութի յահէ պարկուեն այ ։ Զայս երգեաց՝ առաջի առնէ և զչարութի մեղաց իւրոց, և ասէ ։

11 . Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քո արարի .
Կանգնեցի պատկեր, և բազմացուցի զպղծութիւնս ։

Աւելին օրինակաւ շարժեաց մանասէ զբարկութին այ ՚ի վրէ իւր . մի՝ հասարակական մեղօք . և մի և՛ս մասնաւոր անօրէնութբ, զի չար կռապաշտութբ . և յերկուսին ևս չարաչար յանցեաւ քան զայլ ամ թագաւորս յուդայ ։ Յառաջինն հայելով ասէ ։

Բարկացուցի զսրտմտութն, և չար առաջի քո արարի ։ Այսմի ասել . չարաչար գրգռեցի զսրտմտութի քո ՚ի վրէ իմ . վն զի չար արարի առաջի քո . և զի այսմ շաղկապդ և՝ դնի աստ փոխ պտճառական շաղկապին զի՝ ըստ ոճոյ ՚նբ գրոց . որպ թէ ասէր . բզմք բարկացուցին զքեզ . իսկ ես քան զբազումս առաւելեօք բարկացուցի . զի ժպրհեցայ յամ չարիս . և զայն՝ ոչ եթէ առ ՚ի քէն գաղտ գործելով, այլ առաջի մեծվայելչութե փառաց քոց յանդգնելով ։ Նայելով և յերկրորդն ասէ ։

Կանգնեցի պատկեր, և բազմացուցի զպղծութիւնս ։ Նայայն է, որ գրի ՚ի դ . թագ . իա . 3 = 16 . զի որում եդաք ՚ի սկզբան այսր աղօթից . զի է թէ կանգնեաց մանասէ զբագինս կռոց յամ սրահս տանն տն . զոր աստ կոչէ պատկեր զի է արձան, և զոհեաց նոցին, ևն ։ Զայս թէպէտ և բազումք արարին, բայց մանասէին ծանր եղև քան զնոցայն . մի՝ զի ՚ի տան՝ Ճշմարտին այ կանգնեաց զայնս . երկրորդ՝ որ չարագոյնն է, գիտելով՝

թէ անարգանք մեծ է այս ա՟յ ամենակալի , ի՛-
դէմ նո՟ր յանդգնեցաւ գործել . երրորդ՝ զի գի-
տէր՝ թէ ինքն մինչև էր ծնեալ՝ ուխտիւք նուի-
րեալ էր ա՟յ 'ի հօրէ իւրմէ՝ պաշտել զնա սրբու՟թ
և արդարու՟թ . և զայս գիտելով՝ կամակար մի-
տօք եղծեաց զուխտ հօր իւրոյ . թող զայլև այլ
զապիրատ հանգամանս պաշտաման նո՟ր , և զան-
պարտ արիւնսն , զորս եհեղ 'ի տաճարին 'ի պատ-
ճառս իւրոյ կռապաշտու՟ե . և 'ի նոյն պատճառս
աղօթեաց զեստոյի մարգարէ . վ՟ոյ յետ ասելոյ ,
կանգնեցի զպատկեր՝ դնէ թէ * բազմացուցի
զցասումն ‖ . այ՟ թէ գործեցի զբազում գործս
դրդուիչս ցասմանն ա՟յ . զի բառդ ցասումն դնի
աստ փոխ գործոց ցասուցանողաց , այ՟ դրդուա-
ղաց 'ի բարկութի :

Աստանօր գրեթէ վերջ տայ մանասէ երկրորդ
մասին աղօթից իւրոց , յորում խոստովան է-
ղև զմեղս իւր . և սկիզբն առնէ խնդրելոյ յա՟յ
զայնր ո՟ղ զթողութի . և նախ՝ խոնարհու՟թ սրտի
մատուցեալ առաջի քաղցրու՟ե նր՝ ասէ :

12 . Եւ արդ Տ՟ր խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ .
և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ :

Ծունրն է առաջին կողմն ծնկան ( և կամ՝ նոյն
իսկ ծունկն ), յոր յենու բովանդակ ծանրութի
մարմնոյ 'ի ծնրադրութե . որով և բերի յօրինակ
անձնիշխանական զօրութե կամաց . յոր յենու
ծանրութի բանական բնութե մարդոյ . արդ քանզի
յանհնարին խոնարհութի էջ հոգի մանասէի ,
զանձնիշխանութի իւր ևս խոնարհեցուցեալ յան-
դիման քաղցրութեն ա՟յ՝ հայցէ 'ի նմանէ , և ասէ :
Եւ արդ Տ՟ր խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ . և հայ-
ցեմ 'ի քաղցրութենէ քումմէ : Նախ ասել . որպէս և

յայս-

յայսքանս յանդգնեցայ ընդդէմ քաղցրութեան քո, և անսաստ գթոյ, որով և յայսպիսի անարգութիւն մատնեցայ և նուաստացայ, ուստի խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, զի զանձնիշխանական զօրութիւն հոգւոյս խոպան. և սոյին խոնարհութբ յառաջ մատուցեալ հայցեմ 'ի քաղցրութէ քումմէ ։

Մարթ է պարզագոյն ևս բացատրել զայս բան. իբր թէ ասել. ահա այսուհետև խոնարհիմ բոլորով սրտիւ իմով ։ Այլ այս բացատրութիւն հիմնի յայն՝ զի որովհետև ծունր խոնարհեցուցանել այլում՝ է խոնարհիլ նմա, և տալ նշան յարգանաց, նոյն լինի ասելն՝ խոնարհիմ սրտիւ իմով, և ասելն՝ խոնարհեցուցանեմ զծունր սըրտի իմոյ. բայց քանզի այս փոխաբերութիւն սաստկացուցանէ զզօրութիւն բանիցն ասացելոց, յայնակս փոխէ այնմ խօսելոյ՝ այսմ խօսի՝ առ 'ի դիւրաւ համարձակելոյ դիմել առ քաղցրութիւն այ ։ Այլ քննել արժան է՝ թէ ընդէր փոխէ դիմելոյ յողորմութիւն այ՝ դիմէ 'ի քաղցրութիւն նր. մարթ է ասել, թէ թէպէտ երկոքին ևս զնոյն նշանակեն առ ած, բայց քանզի քաղցրութիւն այ՝ առ արտաքս մատուցեալ 'ի մէջ բերէ զխանդաղատական տարածումն ողորմութե նր՝ յայն ձգէ զհայցուածս իւր ։ Նաև զոր հայցելն կամի՝ է հաշտութիւն երեսացն այ. և զոր գտանել հայցէ՝ է թողութիւն մեղաց իւրոց. և սակայն յաճախորութէ երեսաց նր պատկառեալ, և 'ի բազմութէ մեղաց իւրոց ծանրացեալ՝ ամաչէ հայցել, զոր փափաքի խնդրել. բայց ձանձրացելով ևս զներողամտութիւն այ՝ իբր 'ի հեռուստ 'ի նոյն աչս արձակէ. և առ 'ի ժամանել այնմ, զբարբառ մեղայի 'ի մէջ մատուցանէ, և ասէ ։

13 . Մեղայ Տր՝ մեղայ , և շնորհեա ինձ ես ինձէն գէթեմ :

Ահա քանի՛ յարգոյ և պանծալի իցէ զօրութի մեղայի՝ տես 'ի Նարեկն . բան . ի՛է . ուր զքանչելիս խօսի զամենէ Նարեկացին . և կարի յիրաւունս , զի կարող է սա յինքնին միայնակ զամենակալ ձեռին այ զսրտմտութի նահանջել և դադարեցուցանել . ո՛պ տեսանի 'ի մի միայն մեղայն դաւթի արքայի : Նոյն քանզի Մանասէ արքայ կրկին օրինակաւ առաւելապէս մեղուցեալ Ճանաչէր զինքն , ո՛պ ասացաք 'ի Համարին 11 , ոչ 'ի մին , այլ 'ի կրկինն պատուհասէ զնոյն՝ ասելով : Մեղայ Տր՝ մեղայ . և շնորհեա ինձ ես ինձէն գէթեմ : Կամի ասել . չիշխեմ զայլ ինչ ասել , բայց եթէ մեղա՛յ գոչել , և զնոյն կրկնել , մեղա՛յ Տր մեղայ . մեղայ՝ 'ի Ճշմարիտ այդ հեռանալով , մեղայ՝ և 'ի սուտ ածս յարելով . մեղայ՝ զքեզ արհամարհելով , մեղայ՝ և զմնոտիս պաշտելով . մեղայ քեզ՝ մեղայ և քոյոցդ . մեղայ՝ ըդդէմ քո զինելով , մեղայ՝ և զայլս 'ի նոյն գրգռելով :

Նոյն քննել արժան է՝ զի յասելն զառաջինն մեղայն՝ յարէ 'ի նոյն զբառդ տէր . իսկ 'ի կրկնելն զմեղայն՝ ոչ յաւելու զՏրն . վն զի յառաջինումն յիշելով զնա՝ ցուցանէ թէ ամի Տր Ճանաչէ զնա . ըն որում արձակումն գտնէ զՏրն . բայց քզի ոչ իշխէր՝ իւր եւս Տր անուանել զնա՝ ոչ համարձակի և յերկրորդումն կրկնել :

Դրձեալ արժան է դիտել և զայն , զի յասելն զմեղայն՝ ոչ որոշէ ըստ որոշելոյ մեր՝ թէ ում մեղաւ , և յորում մեղաւ . զի սարսափէր զայս դնել . քզի որչափ իջեալ էր հոգի նր 'ի խոնարհութի , այնչափ ըմբռնեալ էր յահ և յերկիւղ բարկութեն այ .

նոյ՛ մինչև չիշխել և զայն ասել՝ թէ քեզ մեղայ ։
և ՚ք՚ղի սարսափէր ես թէ գուցէ ած յանդիման
հարկանիցէ ՚նմ զորս գործեաց, ինքն ամաչա-
րէ առաջի դնել զնոյն ․ ուստի ասէ ։

Զի զանօրէնութիւն իմ ես ինքնին գիտեմ ։ Կամի ասել ․ ամենիրօք յայտնի են ինձ մեղք իմ․ զի թէպէտ և բազում են ՚ք՚ զաւաղ ծովու, բայց ՚ք՚ղի ամենքին մեծ են և սաստիկ, զոմանս ես առաջի աչաց իմոց նկարեալ ունիմ․ ոչ կարօտիմ՝ թէ այլ ոք ցուցցէ ինձ զնոսին ․ զի ես ինձէն գիտեմ․ և զոր գիտեմ՝ մեղայ գործեմ․ և ակն ունիմ թէ ՚ի գիտելս իմ և ՚ի խոստովանիլս զնոսին՝ դու Տէր անդէտ լինելով զնոցանէ՝ ոչ ցուցցես ինձ զնս, յանդիմանելով զիս վ՚ն՚ց և յերեսս իմ հարկանելով զնոսին ․ այլ մանաւանդ թողցես և ջնջեսցես զայնոսիկ ։ Յայս ապաստան լեալ՝ մատչի յաղաչանս և ասէ ։

14 ․ Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն ․ Թո՛ղ ինձ որ՝ Թո՛ղ ինձ ․ և մի՛ հեռացուցաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ ։

Աղաչելն ՚ի խնքեան առեր՝ նշանակէ առաջի դնել զբանս մաղթողականս վ՚ն իւրեք խնդրուածոյ՝ զոր յայտնէ և որոշէ բայս խնդրել ․ վ՚ն՚յ նախ զաղաչելն դնէ, և զկնի զխնդրելն յաւել՝ ասելով ։

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն ։ Կամի ասել ․ որովհետև քեզ մեղայ, և ընդդէմ քո անօրինեցայ, զքեզ աղաչեմ ․ և որոյ վ՚ն աղաչեմ՝ զնոյն առ ՚ի քէն խնդրեմ և ոչ յայլոց ։ Իսկ թէ զի՞նչ էր զոր խնդրէր, յայտ առնէ ՚ի յաջորդ բանսդ, զերկուս ՚ի մէջ բերելով ․ մի՝ զթողութի մեղաց ․ և մի ևս՝ զքաւութի պարտաւորութեն նոցին ․ վ՚ն առաջնոյն ասէ ։

Թո՛ղ ինձ որ, թո՛ղ ինձ ։ Ոչ հայցեմ ասէ շնորհել ինձ զթագաւորութիւն իմ՝ յորմէ անկայ ․ ոչ ա-

զերբեմն տալ ինձ տեսանել զընտանիս իմ՝ յորոց հեռացայ . ոչ խնդրեմ զազատութի 'ի շղթայից՝ յորս կապեցայ . այլ զոր աղօթանօք համարձակիմ խնդրել՝ այս է . Թո՛ղ ինձ Տր՝ Թո՛ղ ինձ . Թո՛ղ աղչեմ, Թո՛ղ զմեղս իմ, որով յանդգնեցայ՝ ընդդէմ ելանել հրամանի քում . Թո՛ղ զանօրէնութիս իմ, որով յանցեայ 'ի տաճար տն քո՝ պղծելով զայն գարշելի կռովք . Թո՛ղ զբազմապատիկ գայթակղութիս իմ, որով ապստամբեցուցի 'ի տն պաշտամանց զժառանգութի քո . Թո՛ղ և զայլ ամ չարիս իմ, Թո՛ղ ինձ Տր :

Այս կրկնումն կարգի՛ նախ 'ի զօրաւոր առնել զխնդրուածս . զի կրկնումն բառից սաստկացուցանէ զնշանակութի ասացելոցն . կարգի՛ երկդ՝ 'ի ցուցանել զյաճախութի այնր՝ որոյ վն կրկնի . զի որոյ կամի ասել . ոչ մի է անօրէնութի իմ, և ոչ սակաւ . այլ բազում յոյժ և սաստիկ . զորոյ խնդրեցից զԹողութի . որոց վն ասացից՝ Թո՛ղ . զո՛րս եդից առաջի 'ի Թողուլ . այլ քզի անբաւ է ողորմութի քո, և անճառ քաղցրութի քո, յայդ ապաւինեալ՝ աղաչեմ և խնդրեմ . Թո՛ղ ինձ Տր Թո՛ղ ինձ ; խօսելով ապա և վն երկդին ասէ :

Եւ մի՛ կորուսաներ զիս ընդ անօրէնութե իմոյ : Այսինքն Թէ մի՛ կորստեան մատներ զիս զի պարտաւորելոյ անօրէնութե իմոյ . մի՛ հայիր յայն՝ որում ես արժանաւորիմ, այլ յայն՝ որ արժան է քաղցրութե քում . մի՛ զի բարկացուցանելոյս իմ զքեզ վրէժխնդիր լինիր ինձ , այլ զի հեզութե քում զիջի՛ր և ներեա՛ յանցանաց իմոց . մի՛ վն անօրէն ժպրհութե իմոյ մերժեր զիս իսպառ, այլ վն ողորմութե քո քաւեա՛ զիս յանտանելի պարտաւորութէս :

Եւ զայսոսիկ կամելով որոշակի ևս բացատրել՝ յաւել :

15 . Մ՛ի յաւիտեան բարկանար ինձ տր . և մի՛ յիշեր զչարիսն իմ . և մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալս 'ի ներքոյ երկրի չարեօք :

Արկնակի կարէ ասել զայս՝ բարկանալ յաւիտեան . մի՝ զի սաստ կենաց ( որ է յաւիտեան մի ) . յորժամ ոչ ևս զղջանի 'ի բարկութէ , և ոչ ևս ներէ . այլ երկնեցոյց առ սասուել , առ անտիրօքս , և առ այլս բզից : Երկրորդ՝ զի հանդերձելոյն . յորժամ զի յաւիտենականն արդարութէն իւրոյ մերժէ զոք յաւիտեանս յաւիտենից . արդ այս բան թէպէտ և կարէ հայիլ յառաջինն , բայց տիրաբար հայի յերկրորդն յաւելըն :

Մ՛ի յաւիտեան բարկանար ինձ տր : Այսմ ասել . այս՝ որ պարտական եմ ես յաւիտենական քումդ ցասման , այլ դու որ անհաստ ես 'ի հեզութէ , և անձառ 'ի քաղցրութէ՝ մի ցուցցես ինձ զբարկութի քո յաւիտեան . այլ փոքր բարկութէ՝ ցոյց զխրատականս ողորմութէ : Նայլ քզի պատճառ յաւիտեան բարկանալոյն այն է չարութիւն մեղաց , կասկածէր մանաւանդ՝ թէ գուցէ յոչ մոռանալ այն զայնս՝ բարկութիւնն տևեսցէ մինչև իսպառ . վասն և ասէ :

Եւ մի՛ յիշեր զչարիսն իմ : Նայս յայտնի աստուածային ոչ 'ի մէջ բերէ՝ թէ զոյ յանց մոռացութի . և զի հակառակն զի մոռացութեն և յիշատակութի . այլ յայտ առնէ զցուցանելն այն զգործ մոռացողի և յիշողի . Իբր զի յորժամ առնէ զայնպիսի գործ՝ զոր առնեն մոռացողք կամ ոչ յիշողք , ասի մոռանալ կամ ոչ յիշել . Իսկ յորժամ առնէ զայնպիսի ինչ՝ զոր առնեն յիշողք , ասի յիշել : Նորդ յորժամ այն թողու ումեք զմեղս՝ յայտ է թէ ոչ ևս ցուցանէ զինքն իբրև յիշող , այլ իբրև մոռացող , վասնորոյ յորժամ թողու և զպատիժն մեղաց .

ղաց. և է՛ հակառակն յորժամ ոչ թողու՝ յե-
րևոյ ցուցանէ զնոքն մեղաց։ Աստուծ նոյն լինի առ-
ած՝ թողուլն զմեղս, և ոչ յիշելն զայնս. բայց
քանզի մեք ըստ եղանակի մարդկան խօսիմք առ ած՝
զոչ յիշելն նմ և մարդկաբար ինն ՚ի մասնաւորի
առաջի ածնեմք. որպ ասնէ աստ և մանաւանդ. զի
յետ ասելոյ՝ թող ինձ՝ յաւելու ևս ասել. մի
յիշեր զմեղս իմ. և զի ոչ յիշելոյն զհետ դայ
ներումն դատապարտուն՝ զայն ևս ՚ի մէջ բերէ,
և ասէ ։

Նա՛ մի պարտաւորեր զիս ընդ իջելոցս ՚ի ներքոյ երկրի չար-
եաց։ Ամ որ մեղանչէ՝ պարտաւորի իջանել ՚ի
դժոխս, և կալ ը՛ այնոսիկ՝ որք են անդ։ Այս
պարտաւորութիւն ը՛ երկուց մասանց. մի ըստ փո-
փոխումն, և մի ևս՝ ը՛ անփոփոխումն վճռոյ. որպ
է տեսանել ՚ի դաւիթ և ՚ի սաւուղ. զի երկոքին
ևս ՚ի մեղանչելն պարտաւորեցան ՚ի դատապար-
տութի. բայց դաւթին ը՛ փոփոխումն, իսկ սաւու-
ղայն ը՛ անփոփոխումն. զի պարտաւորութիւն դաւ-
թի յապաշխարելն փոփոխեցաւ, իսկ սաւուղայն
մնաց անփոփոխ. ուստի նա զերծաւ, և սա կոր-
եաւ։ Զայս քաջ գիտէր մանասէ. վ՛սյ աղաչէ,
զի և պարտաւորութի իւր փոփոխեսցի, և մի մնաս-
ցէ անփոփոխ. որով հարկ լիցի նմա իջանել առ
իջելոցս ՚ի ներքոյ երկրի չարեաց։ Իսկ այսորիկ
իջելովք խնայեսցէ լինին նքե՝ որք ՚ի չարիս իբ ՚ի մեղս
մեռանին, և գնան ՚ի ներքոյ երկրի. իբ ՚ի գե-
րեզմանս ը՛ մարմնոյ, և ՚ի սանդարամետս անդն-
դոց ը՛ հոգւոյ։

Իսկ որդ քանզի երկիւղ աղետալի վճռակի նզա-
հաբեկէր զսիրտ մանասէի, անին իրի ոչ այնչափ
յանձկութէ տառապանաց իւրոց աղաւիլ մաղ-
թէր, որչափ ՚ի պարտաւորութէ այսպիսի թշուա-
ռուէ

ռուն տալիլ . և ձանձրացեալ թէ ապաշխարութբ կարէ զերծ գտանիլ անտի՝ 'ի նոյն հարկ զյոյս իւր իբրև զխարխափս ակնկածեալ նաւու , ապա է նեալ յողորմութիւն այ՝ որ առաւել կամի ձեռն կալ կարել փրկանելոյ՝ քան ունհար լինել զլորելոց- ապա 'ի այն բուռն հարկանելով՝ պաղատի առ նա , և ասէ .

16 . Ո՛է դու ած՝ ած ապաշխարողաց ես . և յիս ցո՛յց զհամբերութիւն քո . զի անարժան եմ .

Ած ոչ է ած մեռելոց՝ այլ կենդանեաց , ասաց տէրն մեր . ( մարկ . ժբ . 27 . ) և զի մեղաւորք 'ի մեռելոց համարին են , իսկ ապաշխարողք 'ի կենդանեաց ասին , ած ոչ ասի ած մեղաւորաց , այլ ապաշխարողաց , ոչ ըստ արդարչութեն և ըստ համբերական տեսչութե . զի այս հաստատակաց է՝ եթէ բարեաց և եթէ չարաց , եթէ անբան կենդանեաց և եթէ անզգայ տարերաց . այլ նախ՝ ըստ առանձին իւն խնամոց և բարերարութեց , և երկիր ըստ մասնաւոր իւն կոչման և խոստման իւրոյ .

Ըստ առաջնոյն՝ էր ըստ առանձին խնամոց և բարերարութեց՝ յայտ է , զի որք միանգամ դարձան 'ի մեղաց յապաշխարութի , եցոյց նոցա ած զխնամս և զբարերարութիւն իւր հայրական գթով . և իբրև զիւր սիրելեաց զնոսա , և պաշտպանեաց 'ի չարեաց . զի որովհետև գիտէ՝ թէ միտք մարդոյ հաստատեալ են 'ի խնամս չարի , յանկանիլ մարդոյ 'ի մեղս՝ թէպէտ և ատէ զնա , բայց միանգամայն ձգէ և առ ինքն ապաշխարութի . ըստ այնմ * քաղցրութին այ զքեզ յապաշխարութի ածէ ‖ . ( հռովմ . բ . 4 . ) և յածիլն անդ և 'ի դառնալ մեղաւորի՝ ոչ 'ի մեղսն հայի՝ այլ 'ի դարձն , ոչ 'ի կորուստն , այլ 'ի գիւտն . ոչ 'ի պարտաւորութի

թէ գտելոյն՝ այլ յողորմութե իւր . մինչ գրեթէ առաւել ուրախանալ նմա 'ի վր նր քն 'ի վր այլոց՝ որք մնացին անկորուստ ։

